Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format
Adapt — remix, transform, and build upon the material

ՄաԳ.
2563

1999

Դ. Ա.ՆԱ.ՆՈՒՆ

13329

ՌՈՒՍԱՀԱՅԵՐԻ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ
XIX ԳԱՐՈՒՄ
(1800—1870)

ՀԱՏՈՐ ԱՌԱՋԻՆ

Հրատարակության
Տիգրան Բուդաղեանցի

Д. Ананунъ

Общественное развитіе Армянъ
въ XIX в.

ՍԱԳ
2563

...ոգու, տպարանը „ՏՐՈՒԴ“, Ս. Գ. Բերդադիրի և Ընկ.

Баку, тип. „ТРУДЪ“, С. Г. Бердадира и К°.

1916

9(47.925)
Ա 57

Գ. ԱՆԱՆՈՒՆ

ՌՈՒՍԱՀԱՅԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ XIX ԴԱՐՈՒՄ

(1800—1870)

ՀԱՏՈՐ ԱՌԱՋԻՆ

Հրատարակութիւն
Տիգրան Բուդաղեանցի

ԱՆԱՀԵՄԻԿՈՆ
ՀԱԿՈԲ Հ. ՄԱՆԱՆԴՅԱՆ

Բաքու, տպարան „ՏՐՈՒԴ“, Ս. Գ. Բերլադիրի եւ Ընկ.

Баку, тип. „ТРУДЪ“, С. Г. Берладира и К°.

1916

ՀՀԱՀ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ՀՀԱՀ-Արմ.ССР
Ա. ԱԲԵԼՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ

Ն.Ֆ 2544

2563-

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Նրկայ աշխատութեան մէջ մենք ջանացել ենք քաղաքակիցել հայ հասարակական կեանքի խորքը, հասկանալ և լուսաբանել այն բոլոր երևոյթները, որոնց պատմական դասաւորումով կառուցել է մեր ինքնօրինակ գոյութեան պատմանդանը: Այսօր մենք պատմական անցուդարձերի և դէպքերի նկարագրութեամբ չենք զբաղուել: Չեն գրաղեցրել մեզ նաև պատմական գործիչների երևոյթ կատարած գործերով: Մեր նպատակն է եղել գտնել մասսայական կեանքը, բմբռնել հասարակական հաստատութիւնների իմաստը, հետևել նրանց ծագման, զարգացման և անկման ընթացքին, խնդրառու լինել ժամանակի սկզբի և պայքարի գաղափարականութեանը, ստեղծարար ուսումնասիրել մեր քաղաքացիական զարգացման գործօնները: Անցեալի պատմական անցուդարձերն այն չափով են բնական երևոյթ մեր ուշադրութիւնը, որ չափով վճռական դեր են խաղացել լուծելու հասունացած հասարակական փոխյարաբերութիւնների երկունքը:

Մեր աշխատութիւնը գրելիս մենք ջանացել ենք հայ հասարակական կեանքի զարգացման գրգռապատճառները գտնել բուն հայ կեանքի, նրան իր զգն ամփոփել այս կամ այն պատմաշրջանի մէջ: Մենք անպէտք ենք համարել այն տեսակէտը, որ մեր զարգացման գործը կապում է գրի ազդեցութիւնների, գլխաւորապէս հայ գաղութների գործունէութեան և ներշնչումների հետ: Եւ դա այն պճառով, որ մեր խոսքին համոզմունքով պիտի գոյանայ, եթէ նա գրից է գալիս, չի կարող մասսայական գործ ծնիլ գառնալ, երբ բացակայում են համապատասխան հասարակական-անհատական պայմանները՝ այդ գաղափարի ընդունելութեան և արգասաւորման համար: Իսկ եթէ տեսնում պայմանները գոյութիւն ունին՝ նրանք ինքնին

II

կազմում են յուսաջնաղացման կարևորագոյն գործօնը և դրան զաղափարի դերն իջնում է սպասաւորական աստիճանի: Մեզ ասելի շատ շահագրգռել է եղածը և ոչ թէ այն, որ նեղմաձ-ուել էր:

Հայ հասարակական կեանքը մենք դիտել ենք, սրտէս տարրեր խաւերի խոչաձեռ շահերի և ձգտումների մի ամրոջութիւն: Մենք բոլոր հայերին միատեսակ կացութեան մէջ էականեր չենք համարել: Եւ անցեալի ուսումնասիրութիւնն էլ այդ է մատնանշել մեզ: Հասարական հայութիւնը մեր պրոլետարների մէջ, այնքան, որքան հարցը վերաբերում է մեր ուսումնասիրութեան ներկայ ժամանակաշրջանին, իր բաժանումներն է ունեցել. պիղպիղութիւն, պղնուական դաս, հոգևոր դաս և առևտրա-արդիւնաբերական դաս: Այդ բոլոր խաւերի հասարակական կեանքի նկարագրին, իրաւական կացութեանը մենք մօտիկել ենք պատմարանի կշռաչափով և մեր կանխակալ համակրութիւններն ու հակակրութիւնները չեն շեղել մեզ անկիսանալու մի խոչ սրտէն կամ բոլոր մեր բնահաճոյքի գունաւորիլ նրա սրտի խմաստը: Այսէս՝ սկզբից մենք որոշումներ չենք ունեցել և սուեալներ չենք փնտրել նրանց հիմնաւորելու համար: Մենք միայն մեզ ուղեցոյց ենք ունեցել պատմական մատերիալիզմի սկզբունքը. նախ հասկանալ իրերի ընթացքը, ապա հետևել զաղափարների ընթացքին:

Ցաւելով պիտի ասենք, որ մեզ առաջադրած նպատակին այնպէս չէրագործեցինք, ինչպէս կը կամենայինք: Այսուհ հետաքրքիր է, որ մեզ պակասում էր: Մեր ճիգն ու չանքը շատ յաճախ հանդիպում էին անյաղթելի արգելքների: Մի ժողովրդի քաղաքակիական կեանքի ուսումնասիրութեան համար անհրաժեշտ են բազմազան նիւթեր և տպիւրներ: Այդ նիւթերն ու տպիւրները կը լուսաբանէին ասելու ժողովրդի մտաւորական և հասարակական կեանքի զանազան մասերը, իսկ պատմարանին կը մնար ընդհանրացումներ անել և որոշ եզրակացութիւններ յանգել: Դժբախտաբար այդպէս չէ դրութիւնը հայերի նկատմամբ: Մեզ մօտ ամեն բան վերապրուած է անցյալութեան քօղով: Ոչ հայ պատրիարական մամուլն և ոչ հայ գրականութեան մէջ արժէքաւոր նիւթեր չկան մեր անցեալի ուսումնասիրու-

III

թիան համար։ Անվերապահ յայտարարութիւններ շատ կան, բայց փաստական գործեր խիստ սակաւ։ Եւ զարմանալի չըպիտի թուայ, եթէ ասենք, որ մեր անցեալը հասկանալու համար պէտք օտար աղբիւրների դիմենք։

Մի հակատեղէն, մի ծոպէն այսօր մեզ շատ բան են տալիս մեր անցեալի էական պահերը վերարտադրելու համար, քան թէ ուսումնասիրողին և պետականի հաշիւ վայելող այս կամ այն հայ մարդը։ Այդ ուղղութեամբ վիթխարի գործ ունի կատարած ռուսական Կովկասի վարչութիւնը։ Նա ահագին նիւթեր ունի մթերած դանազան արխիւներում և ուսումնասիրողն այդտեղ պիտի դիմէ։ Իհարկէ, այդ նիւթերը կարող են մատչելի լինել նրանց, որոնք դիրք, հնարաւորութիւն և միջոցներ ունին մօտենալու այդ գանձերին։ Մեզ պակասում էր այդ բոլորը։ Մեզ միայն մնում էր օգտուել այն աղբիւրներից (ոչ բոլոր), որոնք հրատարակութեան միջոցով մատչելի էին դարձել ընդհանրութեանը։ Եւ դրանք բաղկացած էին զանազան պաշտօնաթղթերի ժողովածուներից, օրէնքներից, պաշտօնական մեկնաբութիւններից, զեկուցումներից, հատուածութիւնների հրատարակութիւններից և այլն։ Այսպէս՝ եթէ մեր այս աշխատութեան մէջ թերի լինի գծագրուած պատկեր հատուածութեան կամ հատուածական խաւի պատկեր, պարզ չըլինի նկարագրուած պետէ նրա ծագումը, ապա այդ պիտի վերագրել մեր ձեռքի տակ եղած նիւթերի անբաւարարութեան։

Մեր աշխատութեան մէջ պատմութեան թեզը մենք հասցրել ենք մինչև նախորդ դարի 70-ական թուականների սկիզբը։ Եւ դա այն կանխամտածուած պատճառով, որ այդ ժամանակից յետոյ մեր հասարակական կեանքը զարգացումը սկսում է ընթանալ նոր հունով։

Մինչև 70-ական թուականները Անդրկովկասի ժողովուրդների և մանաւանդ հայ ժողովրդի քաղաքական կեանքը դեռ կայուն դրութիւն չէր ստացել. նա կաղապարման մէջ էր։ Այդ ժամանակ է, որ կեանք են առնում մի շարք օրէնքներ և հատուածութիւններ (վիճակական օրէնք, հայ գաղթական օրէնք, քաղաքային ինքնավարութիւն և այլն), որոնք իրենց հետքն են դնում ապագայ կեանքի վրայ։ Ապա այդ օրերին

սկսում է յեզուչջուել և երկրի դրամագլուխների գործառնութեան ընթացքը. առևտրական դրամագլուխը անդունդներ է ցոյց տալիս արդիւնաբերական դառնալու: Մեր կողմից երկրի նոր դասաւորումը հանդէս է բերում նոր հայ հրապարակագրութեան և գրականութեան: Հարիւր, այսպիսի երեսփոխների հանդէպ վերջանում էր կեանքի մի փուլը և սկսում էր միւսը: Մենք նոր աշխատութեան մէջ պարտուցինք վերջացող փուլի նկարագրման և լուսաբանման գործով, յետագային թողնելով դարի վերջին երիք տասնամեակի պատմութիւնը:

Գ. Ա.

Բաքու
1913 *թ. նոյեմբեր* 8:

ԱԿԱԴԵՄԻԿՈՍ
ՀԱԿՈԲ Հ. ՄԱՆԱՆԴՅԱՆ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍ

ՌՈՒՍԱԿԱՆ ՏԻՐԱՊԵՏՈՒԹԻՒՆԻՑ ԱՌԱՋ

ԳԼՈՒԽ I

ՏԱՐԲԵՐ ԿՈՒԼՏՈՒՐԱՆԵՐԻ ԲԱՂԱՌՈՒՄ

Հայութեան վերապոյն պժբախտութիւնը կայացել է նրա մէջ, որ նա, որպէս մարդկային ցեղի մի հատուած, զրկուած է եղել հնարաւորութիւնից՝ ապրել և զարգանալ ազատ օտարի բիրտ ազդեցութիւնից, լինի դա քաղաքական թէ կուլտուրական: Անհատական ինքնամփոփ հասարակական կեանք գոյութիւն չունի, բայց այլ բան է սովորել հարևանից և առաջատուրից, այլ բան է ակամայից վիզը ճկել օտարի լծի տակ և դառնալ ստրատա մի միջավայր, որի իւրաքանչիւր շարժումն ու քայլը յարմարեցրուած պիտի լինի վերադաս և տիրող խաւի համքին ու ցանկութեանը: Այստեղ մէկը կորցնում է իր ինքնութիւնը և մնում ակնածոյն դերում, միան իր ամբողջութեամբ, բայց, իհարկէ, քանակական տարբերութիւններով իր դանագան ճալքերում, ընդգրկում է արտօնեալի իրաւունքը, ամբողջովին համակւում դրանով և իր տիրական կացութեան հետ անլուծելի կապում հպկատակի վիճակ: Այդպէս չէր մերթ հայութիւնը պարսկական տիրապետութեան ժամանակ: Հայութեան վրայ վերից վար էր նայում ոչ միայն թուրք ազայութիւնն ու բէկութիւնը, որոնք ուռճանում էին հայ ժողովրդի հիւթերով, այլ հայութեան վրայ իր բռունցքն էր փորձում և հասարակ թուրքը, այն թուրքը, որ պակաս կրակով չէր այրում անվնաս արտօնեալ դասերի ճիրաններում: Տիրող դասերի առանձնայատուկ

դրութիւնից բղխած վերաբերմունքը և հոգեբանութիւնը պատուաստում էր և հասարակ ժողովրդի մէջ ու առաջացում էր մի կացութիւն, ուր ոչ միայն կան արտօնեալ դասեր, այլ կայ և արտօնեալ ժողովուրդ, որքան որ այդ վերջինի արտօնութիւնները չնչին լինէին և որքան որ իր հերթին նա արտօնեալ չը լինէր հարեւան ցեղի ծռմում հանդէս եկած խմբակցութիւնների դիմաց: Ինչով պիտի բացատրել այս հանդամանքը, այնինքն այն դրութիւնը, որ միևնոյն պետականութեան ներքին նեթարկուող ժողովուրդներից մէկը համարում է առաջնակարգ համայնք, միւսը՝ առարակարգ, որ պետութեան սահմաններում ապրող ժողովուրդները չեն առարքերժանում քան հասարակական դրութեան, այլ նախ բաժան-բաժան են լինում քան ծագման և ապա հարեւան համայնքն ծռմում նոր միայն չհրաժարւում քան հասարակականից: Այս երևոյթի բացատրութիւնը պիտի փնտրել նրա մէջ, որ մի ազգ ժխրախտութիւն ունենալով կորցնելու իր քաղաքական անկախութիւնը՝ միևնոյն ժամանակ առարկում է իրենից կուլտուրապէս բարձր կամ ցածր նուաճողին: Տարբեր քաղաքակրթութիւնները դպցնել են առանձին իրենց:

Ձիշտ է, հասարակ քաղաքակրթական մակարդակի վրայ կանգնած ազգութիւնները ևս յաճախ հաշտ կեանքով չեն ապրում միևնոյն պետականութեան հովանու տակ, բայց այսպէս ազգային հակամարտութիւնը չի ընդունում օտարական բնոյթ և, վերջապէս, այսպէս տարբեր ազգերի, ասենք ճիշտը՝ այդ ազգերի մերթ դասակարգերի հակամարտութիւնը դառնում է հակադիր այժ նրանց ծագից եկած վարի դիտակից խաւերի մէջ: Այս չկար հայութեան պատմական անցեալում:

Այժ, եթէ գերագոյն ժխրախտութիւն է, որ հայութիւնը չկարողացաւ ապրել և պարպանել ինքնուրոյն կեանքով, ապա այդ գերագոյն ժխրախտութիւնն ունի ևս իւրայատ, երբ նրան վիճակուեց ենթարկուել կուլտուրապէս իրենից ցածր մի նուաճողի:

Զարմանալի բան: Այրուրինական ճշմարտութիւն է համարում, որ քաղաքակրթութիւնն ամենուրեք յարմանակող է: Սակայն, ինչպէս երևում է, այդ ճշմարտութիւնն էլ, բոլոր

ճշմարտութիւնների պէս, յաւերժական հասկացողութիւն է և իր արժէքն ու իմաստն ունի ժամանակի ու տարածութեան մէջ։ Իսկապէս։ Եթէ վերցնենք պատմական հայեն և պատմական թուրքին և մի համեմատական ակնարկ ձգենք այդ երկու ժողովուրդների կուլտուրական ստեղծների վրայ, տես կը տեսնենք, որ մեր օրերի ըմբռնումով կուլտուրա առած բանը հայերի մօտ էր և թուրքերից չատ հետու։ Հայը նոսակեաց ապրում էր քաղաքներում և գիւղերում, նա ունէր արհեստ և վաճառականութիւն, նա ունէր ազգային պրականութիւն, ունէր օրէնքների ժողովածու, մի խօսքով՝ չատ ու քիչ բաւարար միջոցներ բնութեան հարստութիւններին հնչա կերպով տիրելու և մարդկային բարձր հատարակարգ ստեղծելու։ Կուլտուրան էլ դա է։ Բայց նկատ թուրքը, որը ոչ միայն քաղաքի բնակիչ չէր, այլ ոչ իսկ հատարակ նոսակեաց գիւղացի, նկատ անասունների այդ թափառականը, այդ ատամնդական հոմիւը և իր բառնցքի տակ փշրելով բարձր կուլտուրան, ոտնահարել խոստութիւն հասարակաց ճշմարտութիւնը, թէ կուլտուրան յաղթանակ է և չատ ատեց պատմութեան անիւը։ Ինչով բացատրել։ Միմիայն նրանով, որ յաղթանակ է այն կուլտուրան, որ իր շուրջն օդակում և համախմբում է հոծ մարդկային զանգուածներ, որ յաղթանակ է այն կուլտուրան, որը ստեղծում է արժէքներ ոչ թէ հատարակութեան մի չնչին խաւի, այլ նրա մեծամասնութեան համար։ Այդպիսի մի կուլտուրա նրա՛ որ յաղթանակ կարող է լինել. կուլտուրա ատածդ ոչ թէ պիտի բաժանէ, այլ միացնէ։ Այդպէս էր արդեօք պատմական հայի կուլտուրան։ Ո՛չ։ Ամեն գառատակ իր աչքին ու չահն ունէր, ամեն գառ իր ձգտումները։ Հայը վերապանգատէս երկրագործ ժողովուրդ էր, թէև ունէր և գոված քաղաքներ։ Եւ որպէս գիւղացի-երկրագործ ժողովուրդ, այն էլ զանազան մանր ու մանր ակերի կենտրոնական ձգտումներին ենթակայ, նա չէր կարող մասսայական գործ կրող հանդիսանալ։ Նրա դժբախտութիւնն իր քաղաքակրթութեան մէջ չէր, այլ դրա նուազ զարգացման։ Եթէ հայութիւնը միջին դարերում ունենար զարգացած և ուժեղ քաղաքներ, նա անտարակոյս կարող կլինէր՝ կտրելով մանր իշխանների անջատողական ոտանդը՝ ստեղծել

*կնոջ ընտրության մի պետություն, որը պատասխանատու էր Թախտամանների առաջ և հայ-հայրենիքը չէր ծառայել նրանց գիշատիչ ձգտումներին: Սակայն ակնարկածս հանգամանքը պայմանական չունէր: Տոհմական և համայնական խնամ ընտրության ապրուստի Թախտամանի հարցումն էր հանում իր պատկառած ազգային գիմագրությունը: Եւ համայնական գրոհն ամբողջ ընկճուց: Հոյսասանում կատարում էր միևնոյն բանը, ինչ որ տեղի ունեցավ Հռոմում և Բյուզանդիայում: Հռոմն ընկավ գերմանական մարկոյի (համայնքի) հարձակման առաջ, Բյուզանդիան—Տաճիկների տոհմական կազմակերպության: Ոչ մի բերան չի կարող զօրել ասելու, թէ Հռոմի կամ Բյուզանդիայի քաղաքակրթությունը սորա ստանձնելի մի առաջադէմ էր համեմատած Գերման ցեղերի կամ Տաճիկների քաղաքակրթության հետ: Ընդհակառակը, գերմանացին և տաճիկը շատ բան ունէին սովորելու Հռոմից և Բյուզանդիայից: Եւ այնուամենայնիվ քաղաքակրթական տոր ստանձնելու վայր կանգնած ցեղերը յաղթեցին և շուտ ասին պատմության անիւը: Այս մի փաստաւոր ապացոյց է, որ քաղաքակրթությունն ամենաբնիկ յաղթանակող այժ չէ: Քաղաքակրթությունն այդպիսի մի այժ է այն ժամանակ, երբ, ինչպէս ասացինք վերը, նա չահագրգռում է իր յարատևության մէջ մասնակցելին, իսկ երբ նա ծառայում է ընտրեալներին, երբ նա ընտրեալների ձեռքին մի միջոց է հպատակեցնելու և չահագրծելու մասսաները, այն ժամանակ նա կորստական է մասսայական թևեի դրոհից: Հռոմն և Բյուզանդիան ընկան իրենց պատակագրային խնամ չհետաքրքրման հետևից: Գերմանական ցեղերն ու տաճիկները յաղթեցին իրենց մէջ պահպանած համայնական և տոհմական կազմակերպության և բնազդների օգնությամբ: Արդ՝ հոյսասանն էլ ընկաւ Հռոմն ու Բյուզանդիան կործանող միևնոյն պայմանների հետևից: Շուտ կամ մեր պատմության անիւը: Օտարի լուծն երկար դարեր կամ ապանելու համար քաղաքակրթական նուաճումներն անգամ: Հայն այլևս իր վիճակի անօրինողը չէր: Նա ատելուած էր համակերպելու տիրոջ կարգերին, վար իջնել քաղաքակրթական առաջնակարգ և ակտիվող ցեղի հետ նորից վերապրել քաղաքակրթական

ՀՊՏ
ՀՍՍՀ Ա. Մ յանովիկյանի անվան Պետ. հանր. Գրադարանի
հատուկ պրակտիկության ֆոնդ

Տոմս 15 № 6102 ամսաթիվ 30 մայիս 78
Билет число
Ազգանուն, անուն Հ. Բարսեղ
Фамилия, имя читателя
Հեղինակ Աղայան Ե. Բ.
Автор
Վերնագիր Ռուսերեն հոդվածներ
Заглавие
Հրատ. տեղը և թիվը Թիֆլիս-Ղուճ. 1916-1922
Место и год изд.
Շիֆր 13 329 Ինվենտ. № 1 մաս 2
Шифр Инвент.

Գրադարանում չկա	Զբաղված է	Չի տրվում	Կազմատանն է
Нет в биб-ке	Занято	Не выдается	В переплете

1970

5

կամ ոչ մասին մեկ ծանոթ ա-
տա պիտի ասի իրան մեջ: Իրան միշտ
վանական մեջ ամենամեծ ուրախության
տան ու ճաշ: Ամենամեծ ուրախության
տան վանքի միաբանքն ու նոր
տան վանքի միաբանքն ու նոր
ուշ քահանան ու քահանան
տան վանքի միաբանքն ու նոր
տան վանքի միաբանքն ու նոր
տան վանքի միաբանքն ու նոր

ընտրանայ
թանձրաւոր
նրանց պիշ
դոյութիւն
առաքեալ
էր համոզ
համոզուակ
ւսամ էր մի
դիտայում։ Հ
հարուածնե
ամենքդ
Հռոմի կամ
նի մի առա
ճիկնների քր
ցին և առաջ
դիտից։ Ե
ճանի վրայ
մարմնոյ ա
կրճատելին
թիւնն այդ
ցինք վերը,
առնելին, բայ
ընտրեալների ձեռքին մի միջոց է հպատակեցնելու և չահագործելու մասամբները, այն ժամանակ նա կորսնցնում է մասնայական թիւից պրոհից։ Հռոմն և Բիւզանդիան ընկան իրենց պատակարգային խիստ շերտաւորման շնորհիւ։ Եկեղեցական յիերին ու առաջինները յաղթեցին իրենց մէջ պահպանած համայնական և առհասարակ կառավարչական և բնաւորների օգնութեամբ։ Արդ՝ Հայաստանն էլ ընկաւ Հռոմն ու Բիւզանդիան կործանող միևնոյն պայմանների շնորհիւ։ Ձուռ նկատ մեր պատմաբանն անիւր։ Օտարի լուծն երկար դարեր նկատ ապանիւ նրա քաղաքակրթական նուաճումներն անգամ։ Հայն այլևս իր վիճակի տնօրինողը չէր։ Նա ստիպուած էր համակերպուել տիրոջ կարգերին, վար իջնել քաղաքակրթական առնուելքից և սերտակուող ցեղի հետ նորից վերապրել քաղաքակրթական

այսպիսին: Հայոց թեան այն մասը, որն անկախող էր հանդուժել նրանց ոտքայնությը, թողել իրենց ընտանեկան հարկերը և օտար հարկանների տակ վնասել իր կենդանությունը: Այդպիսով ազատ եկան այն մեծ գաղթականությունները, որոնցից հետո չնչին բնակություններ են մնացել Աստղիայում, Հունգարիայում և այլն:

Հաստատվելն այդ գաղթականությունները գլխավորապես պայմանում էին բարեբախտ բնակության: Գաստությունն էլ մեզ ասում է ի միջի այլոց, որ գաղթողներն անցկենային էին, այսինքն հայոց մայր բարեբի բնակիչները: Դա արդարանում է և պատմության արամարանության ազատ: Քաղաքների փոխադարձությունների, նրա ու կացին ազատ բնակության տեղ չունէր խաչնարածների և հետազոտների պետության մեջ: Եւ այդպիսով հայ քաղաքները դառնալուն, նրանց բնակությունը ընդմիշտ կորուսեց հարկերից և այդ հարկերը մնաց բաժին միմիայն հայ պետականության, որի մի մասը՝ ամրանալով լեռնականներում՝ յարաճան պայքար վարեց բնության և դրսի թշնամիների արհավիրքների դեմ, իսկ մյուս մասը ենթարկեց բանաստ ներքին քմահաճ կարգերին և դարձավ նրան կերակրող զրասը:

Հայ դիւղացին անկարող էր քաղաքացու պես հեշտությամբ բաժանվել հարկերից: Նա հողի մարդ էր, մի առանձնակ հարկան ճանաչող: Եւ, միջնադար, ներքին թուրք ցեղը խիստ ատելություններ չէր մտցնում նրա անհատական և հասարակական կյանքի մեջ: Եթե արհեստներով և վաճառականությամբ պարապող քաղաքացին՝ շահ չունենալով հետազոտությամբ և իր հասկի արդյունքներով ապրող քաղաքանից՝ միմիայն կորուստ և կեղեքում էր նրանից, ապա իր փակ անհատության մեջ պարփակուած դիւղացին, որն ապրում էր ինքն իրանով և իր համայնքով, որը կարիք չէր զգում առանձնապես գործ ունենալու դրսի աշխարհի հետ, ապա այդ դիւղացին ունի հնարավորություններ ունէր համակերպուելու նուաճողին: Նա առաջ էլ ապրում էր իշխանության բռնի տակ: Նոր իշխանությը չէր խանդում նրա ներքին համայնական գործերին: Այդ իշխանությն անգոր էր ամեն ձակ

ու ծուկ չօշափող պետական մեխանիզմ ստեղծելու։ Նա կամ կողոպտում էր կամ հարկ պահանջում, իսկ մնացածի մէջ հպատակին տգառ էր։ Այդպիսով պետական գործառնութիւնը—պետական համայնքը—տգառ էր մնում ղրկի տպեցութիւններից։ Այդ հանգամանքը չափազանց նպաստաւոր էր հայ պետական հայրենի հողին կպած պահելու համար։ Իր տնտեսական նա խիստ յետաշխարհ այժմ չէր պատահել, իր ինքնամփոփ համայնքի մէջ նա տգառ էր։ Եւ այդ պայմանների շնորհիւ նա դարեր շարունակ համբերատար կրեց օտարի լուծը։

ԳԼՈՒԽ II

ՀԱՅԵՐԸ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ.—ՆՐԱՆՑ ՔԱՆԱԿՆ ՈՒ ԻՐԱԻԱԿԱՆ ԿԱՑՈՒԹԻՒՆԸ։

Մենք նպատակ չունենք տալու մեր հետաքրքիր անցեալի պատմութիւնը։ Կամենանք միայն ընդծել, թէ ինչ հանգամանքներ առիթ տուին հայութեան համար՝ օտարի սիրտպատմութեան շնորհիւ. կամենանք տալ, որ հայութեան անարգել զարգացումը կանգ առաւ այդ սիրտպատմութեան պատճառով, որ այնուհետև նրա պատմութիւնն ընթացաւ նոր տնտեսական և հասարակական միջավայրում։ Ի՞նչ միջավայր է դա, որ դարերից յետոյ տնտես-տնտես վերստեղծութիւն կրելով, XIX դարի սկզբում կորցրեց իր քաղաքական գերիշխանութիւնը հայերի վրայ և սիրտական գիրքը դիջեց ուրս պետականութեանը։ Ծանօթանանք այդ իրարայտուկ միջավայրի հետ, քննենք և յուսարանենք, թէ ինչ գաղ Անդրկովկասում նուաճող պետականութիւնը։

Այժմեան Անդրկովկասն իր հարթնակ գաւառներով միանգամից չանցաւ ռուսների ձեռքը,—այլ մաս-մաս։ 1801 թ. յունուարի 18-ի հրովարտակով Վրաստանը յայտարարուեց միացած Ռուսաստանին։ Մեր նպատակից դուրս է բացատրել, թէ ինչ հանգամանքների պատճառով Վրաստանը կորցրեց իր ստուերային անկախութիւնը։ Արձանագրում ենք միայն փաստը։ Վրաստանի յեղյեղուկ և անապահով կեանքը վտանգեց ռուսաց

ախրախուսություն էր հետ բերից հատատ կարգ ու կանոն։ Ո՛վ ասելի օգտուց այդ հատատ կարգ ու կանոնից,—դա ուրիշ խնդիր է, բայց յամենայն դէպս երկիրն ազատուց ներքին անվերջ խռովութիւններից և արտաքին ասպատակութիւններից ու վերնվարութիւններից։ Վրաստանում միայն վրացիները չէին ապրում, այլ և հայեր, որոնք բնակութիւն ունէին կամ բուն Վրաստանում, այսինքն գլխաւորապէս քարթլիում, կամ թէ հին հայկական գաւառներում, որոնք այժմ Վրաստանին էին պատկանում և ռուսական սերտակից կեանք էին վարում էին թեմատական գիտառնիներ. Բոլշալու (Լոռի), Ղազախ, Ջամշադիլ, Ջորագետ։ Այս գաւառներում հայերը գլխաւոր բնակիչներ էին։

Երկար պատերազմելուց յետոյ՝ 1813 թ. հոկտեմբերի 12-ին Գյուլիստանի պայմանագրով Պարսկաստանը զիջից Ռուսաստանին Ելիզ (Նոխի), Ջիրուանի (Ջարախի), Ղարաբաղի, Թալիշի, Բաքուի, Ղուբայի և Դերբենտի խանութիւնները։ Իսկ Գանձակի խանութիւնը ռուսական գաւառ էր ճանաչուած դեռ 1804 թ.։ Այս խանութիւնների մէջ հայերը նշանաւոր տեղ էին բռնում Գանձակում, Ելիզում, Ջիրուանում և Ղարաբաղում, որպէս հայ բնաւորաններում։

Պատերազմը նորից սոխից Պարսկաստանին 1828 թ. փետրուարի 10-ի Թուրքմենչայի պայմանագրով զիջել Ռուսաստանին Երեւանի, Նախիջեւանի խանութիւնները և Օրդուբադի գաւառը։ Այս գաւառներում հայ բնիկները մեծացան Պարսկաստանից և Թուրքիայից եկած գաղթականներ։ Դարձեալ պատերազմը սոխից Թուրքիային 1829 թ. սեպտեմբերի 2-ին Ադրիանոպոլսի պայմանագրով Ռուսաստանին զիջել Ախալցխայի վիլայեթները, որը բնակեցրուց Թուրքիայից եկած հայ գաղթականութեամբ։

Այսպէս՝ սահմանագրաւ հին հայկական գաւառները անցան Ռուսաստանին և տարբեր գաւառ-խանութիւններում տարբեր տարբեր կարգերին փոխարինից ռուսական միօրինակ իշխանութիւնը։ Թէ ինչ փոփոխութիւններ մտցրից ռուսական իշխանութիւնը,—դա կը բացատրուի յետագայում։ Այժմ մեզ անհրաժեշտ է ծանօթանալ այն կարգերին, որոնք կային ռուս-

ներից առաջ, որոնք մի չափով մնացին և առաջին միլիցիոներության ինից յետոյ և որոնց հետքերն պահպանել են նոյնիսկ մինչև մեր օրերը: Ռուսական պետականության նուաճումները, ինչպէս տեսանք, սկսեց Պետրոսից: Այդտեղից էլ մենք սկսենք մեր հետազոտությունները:

Պետրոսը վերազնչեցրեց ռուսական և Ճորտատիրական կրկին կրկին էր: Փոքրիկ կրկինն իր փոքրիկ ժողովրդով բաժանում էր բազմաթիվ իշխանների և պետականների մէջ: Պետրոսական կոալիցիաներ, Թագաւորի իշխանություններ, Թոյլ էր և անօգնական: Առանձին իշխաններ պատրաստ էին օգնել Թագաւորին նրա պատերազմական ձեռնարկությունների ժամանակ, բայց իրանք դա տնի չէր անում: Պետրոսին Թշնամիների, պատերների և ընդհանրապէս, յարաճուն պրշտանքների պատճառով կրկինը միշտ պատրաստ էր նրան վտանգի մէջ: Այդ պատճառն էր, որ անդադար համայնակենցաղի մէջ էր պահում ճորտին և պարտնին, որպէսզի ճորտությունն իր խոչոտակ էությամբ այնպես ծանր վիճակի էր յանգել, որ հազիւ Թէ այլ պայմանների մէջ հանդուրժելի լիներ: «Ճորտերն պրծնելու համար տէրերի վրայ ժողովրդական նամակներ էին և մասնագանում էին հարուածների բազմաթիվ ծանրություններ, որոնց մէջ հնձած հացի 1/6 և շինած գինու 1/4 մաս սովնամշանուածներն էին: Գերագիտական հարցաքննիչ հարերի համեմատական առաջադիման չնորհիւ բանական խաչոր էր: Երեք անդամներից բաղկացած անդամական մեծ ընտանիքը ստանում էր տարեկան 106 դեսեատին: Ճորտերի առանց հողի և նոյնիսկ ընտանիքների անդամների դաստ վաճառումն չէր արգելում օրինքով և գործադրում էր յաճախ: Ճորտատերն իրաւունք ունէր պատժելու իր գիւղացիներին դրամական տուգանքներով և խորտակելու հարուածներով: Նրան էր պատկանում և դատաստանական իշխանությունը բոլոր յանցանքների համար, բացի նշանաւորներից: Տէրերի և գիւղացիների փոխ-յարաբերությունները կանոնաւորում էին ոչ այլոց օրէնքով, որքան ազգությունը»): Բնականական*

*) В. Н. Иваненко. „Гражданское управленіе Закавказьемъ отъ присоединенія Грузіи до Намѣстничества Вел. Князя Михаила Нико-

չքնաղ տպրող երկրում սէրն ու ճարտը հարիւր մեծ պահանջներ չունէին։ Արուեստականները դիւտարարէս տպրում էին դիւղերում, անաչխատ կեանք էին վարում և ապահովութեան մասին մտահոգում։ Ճարտն էլ իր վաստակից տուտ բաժին էր հանում նրան և հարկը պահանջած պարագայում դինուած ուղեկցում նրան արշաւանքների մէջ։ Դրամը մեծ դեր չէր խաղում այդ միջավայրում. բնական տուրքերը հաւաքում էին տեղն ու տեղը ապառիկ հաշիւ։ Բայց նիթէ սէրը դրամի պէտք էր դպում որև է քահանայութիւն բաւարարելու համար, այն ժամանակ նահապետական իշխանուերը փոխում էր դիչատիչ ճարտասէրի։ Սովորական երեսյթ էր այդ ժամանակաշրջանում արուեստի շուկաները լցուած տեսնել վրացի—տպոյ և ազգիկ—ապրանքներով։ Վաճառքի այդ ապրանքը ձեռք էր բերում ոչ միայն խզդի և պարսիկ դիշատիչների ձանրերով, այլ և վրացի կառավարութիւնների աչքում։ Այդ արուեստ դասերը ոչ միայն ապրում էին ծանրանալով ժողովրդի դիների, այլ և առևտրականի, պատուի և յարգանքի անվերջ հարցեր ու վէճեր յարուցանելով՝ ինամացած միմեանց հետ՝ բերում էին հարստահարիչներին ու ժողովրդին։ Պարի խաւի տակն էլ անձ պարտատեր

лаевича", Тифлисъ, 1901 г. էջ 8. Մի բացատրութիւն Որովհետև մեր պրիսրներդ որոնք պիտի իշխեն, չատ կրում են, ինչպէս տեսնում է ընթերցողը հինգ առաջին օրինակից՝ երբեմն վերնագիրներ, ուստի մենք պարտ ենք համարում յայտնել, որ հետևելու ենք այս կարգին. առաջին անգամ իշխանական դրքի և հեղինակի անունն ամբողջովին, յետագային միայն հեղինակի անունը կամ դրքի կարճ վերնագիրը և էջը։

էր ճանապարհ տալ և պատշաճ յարգանք մատուցանել բարձր խաւերի անձերին: Այդպէս էր Վրաստանը վրացիների համար:

Բայց Վրաստանում միայն վրացիներ չէին ապրում այլ և հայեր, Թուրքեր, օսեր և հրէաներ: Հայերը պիտատրապէս քաղաքների բնակիչներն էին և մեծ մասամբ ճարտարան դասից էին ծագում: Իսկ նրանք, որոնք ապրում էին գիւղերում, եթէ վարչական և դատաստանական գործերում ենթարկւում էին իրենց մելիքներին և Թագը տալարաններին, բայց վերջիններս ոչ հողերի սեփականատէր էին, ոչ էլ իրաւունք ունէին վճռաւոր գիւղացիներին, դնել և այլն: Վրաստանում XIX դարի սկզբում տարածուած էին գոյ ժողովրդի մի մասով վարանդայի մելիք Ջումշուդ Մելիք-Զահնազարեանը և Գիւլիստանի մելիքները Ազով և Գրիգոր Մելիք-Բէգլարեանները, որոնց Պաւել կայսեր հրամանով հողեր էին յատկացրուած Քարչալում և որոնք կառավարում էին ժողովուրդը Վրաստանի սովորութիւններով պարտաւորուած դինուորական օգնութիւն տալու Վրաստանի Թագաւորներին: Ճարտարութիւն և այլ ծանր արհեստներ գոյ գիւղերի և մելիքների մէջ գոյութիւն չունէր *): Այդ մելիքներն էլ՝ Վրաստանի վրայ ռուսական հովանաւորութեան տարածումից յետոյ (1805 թ.)՝ Թողին Վրաստանը և իրենց ժողովրդով վերադարձան հայրենիք: Եւ այսպէս հայերը պիտատրապէս Վրաստանի քաղաքային բնակչութիւնն էին, նրա առևտրական և արհեստաւոր ժողովուրդը: Մի անհատար վիճակագրութիւն կազմուած 1821 թ. հոգեոր առաջնորդների ձեռքով տալիս է մեզ Վրաստանի (Քարթալինիա և Թեմերական գաւառներից ու Ղանձակի շրջան) քրիստոնեայ ժողովուրդների բնակավայրի հետևեալ պատկերը. վեց քաղաքներում և 975 գիւղերում ապրում էին 34 հազար տուն քրիստոնեաներ, որոնք ըստ դաւանութեան և ազգի տարբերւում էին հետևեալ կերպով **).

---

*) Մելիքների և գոյ գիւղացիների տնտեսական դրութեան մասին մենք ստիպ կունենանք խօսելու յետագայում. այստեղ ընդհանուր գրութիւն ենք շնչում:

**) Ա. Երիցեանց՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսութիւնը և նրա հայք XIX դ.», մաս I. Թիֆլիս, 1894 թ., էջ 139—141.

Ծ Ո Խ ա ե Ր

	Վրաց և ռուս	Հայ	Ընդամենը
Թիֆլիս քաղաքում	417	2951	3348
Գալի »	121	331	452
Անանուր »	24	123	147
Թելաւ »	74	236	310
Սղնախ »	12	377	389
Գանձակ »	28	828	856
Ընդամենը քաղաքացիներ՝	679	4826	5502

Քաղաքներում ապրող ժողովրդի այս թուերը պարզորոշ ցույց են տալիս, որ Վրաստանում քաղաքների բնակչութիւնը ճիշտ որ նոր է հայկական։ Եթէ այս թուերից հանենք Գանձակի բնակչութիւնը, որովհետև Վրաստանի հետ նա կապւում էր 1804 թուականից, այնինքն առաւել մի քանի տասնեակ տարի առաջ, և եթէ ի նկատի ունենանք, որ առաւել թիւն քան տարին այն հետևանքն էր ունեցել, որ պատմական Վրաստանի քաղաքներում այժմ ոչ միայն առանձին բնակւում, որ անցեալում չկային, այլև այդպես նոր դրութեան շնորհիւ կենտրոնանում էր վաչ ազնւականութիւնը՝ խոշոր հողատէր պաշտօնեների և ազնւութեան, ապա կըտեսնենք, որ Վրաստանի անկախութեան ժամանակ իսկապէս հայերն էին այդ երկրի քաղաքների գերիշխող բնակչութիւնը։

*Թիֆլիսի, Գորիի, Անանուրի, Թէլաւի, Սղնախի, Օսէթիայի, Բորչալուի, Փամբակի, Ղազախի, Ջաւշատիլի և Գանձակի գիւղական բնակչութիւնը հաւասար էր 27,540 ծուխի, որից վրացի —20,486 ծ., հայ—7054 ծ.**)*։ Թուերը չափազանց պարզ են խօսում։ 7054 ծ. հայերի մեծագոյն մասը հաւանօրէն ապրում էր Գանձակի շրջանում և ապա Բորչալուում, Ղազախ-Ջաւշատիլում։ Նորից կրկնում ենք, եթէ այսանց դուրս հանենք Գանձակի գիւղերի բնակչութիւնը, ապա բուն Վրաստանի համար կըստանանք չափազանց չնչին թիւ։ Երիցեանը գրում է, որ «գիւղական համայնքի մօտ 12 հոգուց ծուխը արբունի տուրք-*

*) Երիցեանց, էջ 139—141.

ներ էին, մօտ տասը հազար կոլուածատէրերին կամ պարոններին էին պատկանում և չորս հազարից ավելի համարւում էին նկինդեցիաց սեպհականութիւն (որոնց մէջ մօտ երկու հարիւր ծուխ տրուկ էին էջմիածնի վանքին)։ 730 ծուխ պետարնակ ազնուականներից 611 տուն վրացի էին և 119 ծուխ հայք»։ Այսպէս «արքունի տրուկ» պետացիներին իսկապէս չի կարելի ճորտ անուանել. դրանք սակ պետական գիւղացիներ էին։ Հետաքրքրականն այն է, որ էջմիածինն էլ ճորտեր ունէր վրացական և այն էլ հայ*)։ Պատկածից դուրս պիտի համարել այն, որ հայ ճորտեր կային նաև հայ ու վրացի ազնուականներին նեմակայ։ Բայց ինչպէս անհաղ էր էջմիածնի բաժինը, նոյնպէս անհաղ էր հատուցքն և ազնուականներինը։ Հայերը պետապատկէս կառավարւում էին հայերի միջոցով. որ՝ անհաղ էր հայ ազնուականների թիւը, անհաղ պիտի լինէր և նրանց տարբաղա պետացիութիւնը։ Սակայն այսպէս պետ չի տուած, թէ 119 ազնուական ընտանիքներից ճորտատէր էին. նրանք միայն ազնուականներ էին, իսկ այդպիսին համարւում էին ոչ միայն վրացական իրաւունքով ճանաչուած հայերը, այլ և մելիքներն ու բէկերը։ Այս վերջիններս Դանձակի շրջանում, Դարալագում, Ջամշաղբւում և Բորչալուում, դասային և կալուածային իրաւունքներով միանգամայն զանազանւում էին վրաց ազնուականութիւնից։ Ապացուցուած պիտի համարել, որ հայերը վրացականից պետացիներ, անհաղ տէր էին բնում։ Նրանց բանակական և տնտեսական ոյժը բաղաքների մէջ էր։ Հէնց բաղաքներին էլ դիմենք։

Վրացական բաղաքներն այդ ժամանակշրջանում խոշոր ամրացուած պետեր էին։ Այն պարագաները, որ մենք այժմ կապում ենք բաղաքների բնակչութեան հետ, այն է հաւմ նիւթերի մշակման և ապրանքների բաշխման, ապա մի շարք պարագաներ՝ կապուած վարչական և դատաստանական հիմնարկութիւնների հետ և այլն, նրանց մէջ սաղմնային դրութեան մէջ էին։ Այդ խոշոր պետերը բաղաքներ էին անուանում, բայց նրանց բնակիչները բաղաքացուն պարտա-

*) Այդ մասին ի միջի այլոց տես «Ջամբռ» Սիմէոն կաթուղիկոսի, Վաղարշապատ, 1873, էջ 209.

մանքներ չունէին, կային առևտրականներ, արհեստաւորներ, բայց և խաչար թուով նրկրագործներ և անասնապահներ: Վրաստանի քաղաքներն իրենց այդ կերպարանքը պահպանեցին շատ երկար: Ռուսական տէրապետութենից յետոյ էլ, նոյնիսկ XIX դարու 60 թ., նրանք քաղաքներ էին համարւում միմիայն այն պատճառով, որ վարչական հիմնարկներ էին և նրանց մէջ խմբուած վարչական հաստատութիւնները զօրքի հետ միասին կազմում էին քաղաքների կենդանի ջիղը:*) Պիտի ընդունել ուրեմն, որ Վրաստանում քաղաքներն իրենց զարգացման առաջին շրջանումն էին, մի չափով նրանք կտրուել էին գիւղի արտաւորութիւնից, բայց մեծ չափով դեռ անմիջական մշակումն էր հայթհայթում նրանց ապրուստը:

Վրաստանի քաղաքների բնակչութիւնը տարբերւում էր՝ վաճառականների, արհեստաւորների և նրկրագործների: Իհարկէ, այդ քաղաքներում ապրում էին և պետական ու

*) Այսօրէն աւելորդ չեն համարում մի քանի տեղեկութիւններ տալ Թիֆլիսի նահանգի 1865 թ. քաղաքային բնակչութեան մասին: Թիֆլիսում հաշւում էր այդ թուականին—67,770 բնակիչ, Գանձակում—15,439, Սղնախում—9,687, Թէլաւում—7,300, Գորիում—5,054, Դուշէթում—2,525, ընդամէնը=107,755, որ կազմում էր նահանգի բնակչութեան 1/6 (նահանգում հաշւում էր 602,954 բնակիչ): Հետաքրքրական է տեսնել և այդ բնակչութեան տարբերութիւնը ըստ դաւանանքի. հարիւր մարդուն գալիս էր—Գորիում՝ ուղղափառ (այսինքն վրացի և ռուս) 54,5, հայ-լուս.—36,5, հայ-կաթ.—4,4, հրէայ—4, պարսկաստան—1,6, Գանձակում՝ ուղղափ.—1,6, հայ լուս.—40, մահմեդ.—58,4, Սղնախում՝—ուղղափ.—40, հայ-լուս.—60, Թէլաւում—ուղղափ.—64,4, հայ-լուս —35,6, Դուշէթում՝ ուղղափ.—68,5, հայ-լուս.—31,5, Թիֆլիսում—ուղղափ.—46,5, հայ-լուս.—41,5, մահմ.—2,1, հայ-կաթ.—7,1, բողոք.—1,7, հրէայ—0,6, պարսկաստան—1: Գիւղերում հայերը կազմում էին Գորիի գաւառում—4,8, Գանձակի—30,2, Սղնախի—6,5, Թիֆլիսի (Լօռի)—21,3, Թիոնէթի—1,2. Հայերը չեն ընդունում ոչ Թէլաւի գաւառում, ոչ լեռնային շրջանում (տես „Сборникъ статистическихъ свѣдѣній о Кавказѣ“ т. I. Тифлисъ, 1869 г. էջ 44 և 46—47). Այս թուերը ցոյց են տալիս, որ 60 թթ. անդամ հայերը Վրաստանում քաղաքների ժողովուրդ էին գերազանցապէս: Նրանք գերակշռող տարր էին Թիֆլիսում (48.6 լուսաւորչական և կաթոլիկ միասին), այն ինչ ռուս և վրացի կազմում են 47.5: Սղնախում հայերի տոկոսը հասնում էր 60-ի: Հայերը գիւղացիներ էին Լօռում և Գանձակում, ուր չէր հասնում վրացական հարստահարութեան թաթը:

հոգևորականները, բայց մենք ուշադրություն ենք դարձնում դխատրատէս այն տարրերի վրայ, որոնք անմիջապես դեր էին խաղում անհատական բարքերի արտադրման, մշակման և բաշխման մէջ: Վրաստանի ժողովուրդը բաժանուած էր դասային կարգերով: Դասային առարքաժանումներն էլ արմատացած էին նաև քաղաքների բնակչութեան մէջ: Այդ առարքաժանումները տեղի էին ունենում ըստ պարապմունքի. նրկրագործ—քաղաքաբնակիները կազմում էին առանձին հարկատուական և վարչական համայնք, արհեստաւորները խմբուած էին առանձին միութիւնների մէջ, ապա համախմբուած ընդհանուր համքարական վարչութեան շուրջը, որ ունէր վարչական—կրթադաստիական, դատաստանական և ֆինանսական ֆունկցիաներ. նոյնպիսի միութիւնների մէջ էին խմբուած և վաճառականները, որոնցից կազմուած էր և մաքալաքների դասը: Մաքալաք նշանակում է քաղաքացի, բայց այդ կոչումը Վրաստանում կրում էին հին քաղաքացի անները, որոնք ունէին պատիւ ու յարդ ունէին, քանի էէ մնացածները: Նրանք մի քանի առանձնաների էին բաժանում համեմատ այն հարկերի, որ վճարում էին կառավարութեան:

Առաջնութիւնը ժառանգական չէր. առաջնակարգ մաքալաքը, եթէ միջոցները չէին ներում նախկին առանձնի վրայ մնալ, կարող էր պատուէն անցնել երկրորդ կարգի քաղաքացիների շարքը, երրորդ կարգի և ընդհակառակը: Նիմնական զօրութիւնն էր այդ կարգերի կանոնաւորող օրէնքը: «Նրանք (այսինքն մաքալաքները—Դ. Ա.) վրաց թագաւորների ժամանակ մեծ յարգանք էին վայելում և չէին կամենում լինել ապնաւականներ, թէև կարող էին առանալ նոյնիսկ իշխանական կոչում: Իշխաններն իրարց բարեկամանում էին նրանց հետ: Որևէ վրացիների մէջ արտադրութիւն չկար տարրեր քաղաքներում, ապա Վախթանգ Գուրգասլան թագաւորը հրաւիրեց հայերին բնակուելու նորաշէն Թիֆլիս քաղաքում, սիրաշահելով նրանց ամեն միջոցներով: Այդ առաջին հայ բնակիչներն էլ կոչուում էին մաքալաք: Նրանց միացան Թամար թագուհու իշխանութեան ժամանակ Թիֆլիս վերաբնակուած հայերը: Ահա ինչու մաքալաքների դասն այժմ էլ (XIX դ. 30-ական թ.թ.—Դ.

ը.) կոչում են բայատապէո հայերը, թացի մի վրաց ընտանիքից, որն այդ դասի մէջ է ընդունուած մեր (այսինքն ռուս) կառավարութեան ժամանակ: Միայն Գորիում կային մոբալաքներ, որոնք միշտ էլ առաքանով ցած էլ են եղել թիֆլիսեցիներից. ուրիշ քաղաքներում նրանցից չի եղել:

«Մոբալաքները կարող էին պիւտացիներ ունենալ. քրէական յանցանքի համար մահուան չէին դատապարտում, ինչպէս մնացած դասերը, այլ դրամական տուգանքով էր լուծում պատիժը: Իսկ երբ պարսկական շահերին ապջիկների և տղաների հարկ էր ուղարկում Վրաստանից, որ կոչում էր «արբար», սոցա մոբալաքները՝ դրամ տալով՝ ազատում էին դրանից: Նրանք առաւելապէս զբաղում էին առևտրով, վճարում էին Թաքաւորին որոշ հարկ-մախտա, ամանք քաղաքացիական պաշտօններ էին կատարում, բայց հարուստէպ էր նրանց մասնակցութիւնը պետական գործի մէջ»*): Հարկաւ, ինքն ըստ ինքեան հարց է ծագում, թէ ինչու մոբալաքները խուսափում էին պետականների շարքում դասուելու: Դրա բացատրութիւնը պիտի փնտրել նրա մէջ, որ վրացի պետականը միևնոյն ժամանակ բնական պետար էր. նա ապրում էր ժողովրդի հաշուին և իր պարտքիւնն արդարացնում էր նրանով, որ պիւտացիներին ընձեռում է որոշ ապահովութիւն: Այն ինչ մոբալաքը կարող էր պիւտացիներ ունենալ և մոբալաք մնալով, այսինքն պետական չծառայով, ազատ լինել պետական-պետարական պարտաւորութիւնից: Որ մոբալաքն առհասարակ չէր արհամարհում պետական ծառայութիւնը, դա երևում է նրանից, որ նա քաղաքացիական պաշտօններ առանձնիլը չէր մերժում. Քաղաքացիական պաշտօնները պատմական Վրաստանում գերազանցէս երկրի ֆինանսների հետ էին կապուած և նման պաշտօնեան նաև պատուական էր: Վարչութիւնը և դատաստանը կուսակալների կամ քաղաքային մուրճիներին ձեռքին էր. պետական կազմը ոչ բարդութիւն ունէր, ոչ զարգացած պաշտօնէութիւն: Երկրի ֆինանսները նախ և առաջ ծառայում էին Թագաւորին, նա առաջին կալուածատէրն էր, ապա մեծ ազ-

*) „Обозрѣніе Россійскихъ владѣній за Кавказомъ“ ч. I., С.-Петербургъ, 1836 г., էջ 210—212.

յուկը կամ ծախսում էր պատերազմական նպատակներով կամ վճարում էր, որպէս հարկ Պարսկաստանին կամ Թուրքիային, որոնցից երկիրը հաճախ միշտ կռիւների մէջ էր։ Այսպէս արդէն մարտերի տևողութեան և յաճախ էլ դիւանագիտական հմտութիւնն անհրաժեշտ էին և նա յորդած էր։ Մարքարի արժանապատուութիւնն ու յորդը կամայական վերաբերմունքի առարկայ չէր. նա արշաւած էր օրէնքով։ Պետք նկատել, որ Վրաստանում քրէական յանցագործութեան դէմ պատուհասն ինքը հանդէս չէր գալիս, որպէս հատուցական կամք և այժ. այդ կարգի յանցագործութիւնը, ինչպէս և քաղաքացիական դատը, կրում էր մասնաւոր իրաւական բնոյթ։ Նոյնիսկ դատապարտելի բան էր համարւում կատարողական ատեանին մատնել յանցագործին։ Թէ քրէական և թէ քաղաքացիական դատերն իրար մէջ վերջացնում էին սովորութի իրաւունքով։ Եթէ վրէժխնդրութեամբ չէր լուծուել հարցը, ապա հրապարակ էր գալիս վրիպանքը։ Օրէնքի մէջ խօսում էր միայն այդ վերջանքի չափի մասին։ Ոտարկէ, կողմերը կարող էին դիմել և իշխանութեան ներկայացուցչին, բայց դա պարտադիր չէր, և յետոյ՝ դատավարողն այդտեղ պիտի վարձատրուէր կողմերից։ Հասկանալի է, որ ճորտատէր կալուածատէրն ատանց կողմերի դիմումին և ցուցմունքին էլ խոնարհում էր իր ատրպետների վէճերի և գործառնութիւնների մէջ։ Մեր խօսքն ազատ բնակչութեան մասին է։ Սրանց նկատմամբ պիտի ասել, որ սրհատուսն և վաճառականը սմինն էլ առանձին-առանձին ունէին իրենց համքարական դատարանը։ Միայն երբ ունայն էր անցնում այդ դատարանի չանքերը, ապա տրապարակ էր գալիս վրիպանքը։ Օրէնքի մէջ խօսում էր միայն այդ վերջանքի չափի մասին։ Ոտարկէ, կողմերը կարող էին դիմել և իշխանութեան ներկայացուցչին, բայց դա պարտադիր չէր, և յետոյ՝ դատավարողն այդտեղ պիտի վարձատրուէր կողմերից։ Հասկանալի է, որ ճորտատէր կալուածատէրն առանց կողմերի դիմումին և ցուցմունքին էլ խոնարհում էր իր ատրպետների վէճերի և գործառնութիւնների մէջ։ Մեր խօսքն ազատ բնակչութեան մասին է։ Սրանց նկատմամբ պիտի ասել, որ սրհատուսն և վաճառականը սմինն էլ առանձին-առանձին ունէին իրենց համքարական դատարանը։ Միայն երբ ունայն էր անցնում այդ դատարանի չանքերը, ապա այն ժամանակ գործի դատավարութիւնը յանձնում էր համքարների պետին, որ յետ ճախ մինուոյն ժամանակ լինում էր և քաղաքի պետը (մելիք-մամասախլիս)։

Հետ տեսնենք, թէ վրացական օրէնքն ինչ արժան վերջանք էր ընդունում այս կամ այն գործի համար։ Վախթանգ Թագաւորի օրէնքն այդ մասին հետևեալն է սահմանում. առաջնակարգ իշխանի և արքեպիսկոպոսի արժան վինը հատուցը 15,360 դ. միտրոպոլիտինը—12,288 դ., մէջին իշխանի, եպիսկոպոսի և առաջնակարգ իշխանի բարեկամների արժան վինը—

7,680 ր., երգարվեստի իշխանի և վարդապետի—3,840 բար., առաջնակարգ աղնուականի և վանահօր—1,920 ր., երկրորդական աղնուականի, արհեստի, հարուստ առևտրական մարդկանց —960 ր., իսկ հասարակ արհեստի—768 ր., երգարվեստական աղնուականի, քահանայի և երկրորդական մարդկանց—480 բար., վանքական ծառայի, ասիլատի և երրորդական մարդկանց—240 ր., վիպասու և չորրորդական մարդկանց—120 ր.: Թուրքի այս վարկը ցոյց է տալիս, թէ Վրաստանում հասարակական անդամների վրայ ինչ տեղ էր բռնում այս կամ այն դասը: Եւ այստեղից էլ պարզում է, որ առաջնակարգ և երկրորդական մարդկանց նոյն իրաւունքների տէրն էին, ինչ որ երկրորդական և երրորդական աղնուականները: Հարկաւ, քանի որ օրէնքն այս տարբերութիւնն ունէր, հայ մարդկանց ևս պիտի ամփոփուէին իրենց դասային կազմակերպութիւնների մէջ: Եւ այդ էլ տեղի էր ունենում իրականութեան մէջ. համախմբուում էին միևնոյն շահերի շուրջը, կղերացումն տարբեր պարագաների չջնջում,—մի խօսքով հասարակական (դնեթային) կազմակերպութիւն թէ տնտեսական կեանքի մէջ և թէ օրէնքի առաջ: Հարքարակական ոգին այնքան խորն էր արմատացել հայերի մէջ, որ հոգևորականները անգամ նրա կանոններին էին հետևում: Եթէ վարպետի որդին վարպետ էր, ապա քահանայի որդին էլ քահանայ էր անպայման: Վրաստանի բարեքարեակ հայութիւնն այս պայմաններում էր ապրում, երբ նրանց հետըհետէ երկիրը ասիական նահանգ դարձաւ:

Այսպէս առանձնապէս չըլիսի խօսենք Վրաստանում բնակուող հայ ճարտարպետների մասին, նրանք վրացիների հետ հաւասար առաջադէմ էին միևնոյն ճարտարական թեև ասկ: Միևնոյնը նա էր, որ առկաւութիւն էին հայ ճարտարը: Մենք արդէն քանի անգամ չեշտել ենք, որ հայ պետականը բուն Վրաստանում քիչ կային, որ նրանք պետականապէս ապրում էին Բարձրայում (Լոռի). իսկ այստեղ սերտաճում էին համարեա այն կարգերը, որոնք գոյութիւն ունէին Անդրկովկասի պարսկական խանութիւններում: Երբ կըջննենք և կը լուսաբանենք վերջին երկրների քաղաքական պայմանները, ապա դրանով բաւարարած կըլինենք և ընթերցողի հետաքրքրութեանը: Մեր խօսքն առ այժմ վաճենք Վրաստանի հայութեան մասին:

ՀԱՅԿ. ԼԵՐԻՆԳՐԱԴԻ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՍ. ՏՈՒՆ, ԵՐԵՒԱՆ ՈՒՆԻՎԵՐՍԻՏԵՏ ՀԱՅԿ. ՍՍՀ

ԳԼՈՒԽ III

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԷՈՒԹԻՒՆԸ

Վրաստանից դուրս հայերը պարսիկներին և Թուրքերի հպատակներն էին: Ոմանները Վրաստանի սահմաններից ինչով նախ և առաջ ընդհարուելին պարսիկներին հետ և, վերջապէս, նրանց նոր գրաւած երկրների մեծագոյն մասը պարսկական տոգ էր համարում: Մեզ էլ մնում է ծանօթանալ պարսկական գաւառներում տիրող հասարակական վերաբերութիւններին և կարգ ու կանոնին, որոնց ենթակայ էին նաև հոյ հպատակները:

XIX դարու առաջին քառորդի Պարսկաստանը մի բռնապետական երկիր էր: Պետականութեան կապն ու պատյանը շահապանց Թոյլ էր նրա մէջ: Պետութիւնը—դա «արքայից արքան» էր, ինքնակալ և անզօր մի խրտուիլակ հարևանների առաջ: Եւ սակայն դրսում անզօր այդ խրտուիլակը կարող էր երկրի ներսում սարսափելի ոյժ դառնալ, երբ նա խուժանի հետ լինում էր պատժելու որևէ ըմբոստ կուսակալի, որը չանպնում էր երկրի կենտրոնից եկած կարգադրութեան դէմ դնալ: Ինչպէս «արքայից արքան» ողջ երկիրը համարում էր սեփական կալուածք և իրեն տգետ էր զգում կառավարելու իր պատյանի պէս, այնպէս էլ նրանից նշանակուած կուսակալները էին կալուածք համարում իրենց յանձնուած երկրամասերը, կալուածք՝ տգիտօրէն կառավարելու և շահագործելու, որովհետև այդ պաշտօնը ձեռք էր բերուած դրամով և ընծայութիւններով, որովհետև այդ՝ կարգ ու կանոնի տեսակէտից անհասկանալի երկրում անհրաժեշտ էր չափել մի սեկլյուկով հա առանց ծախսածը: Այդ ժամանակաշրջանի (ինչպէս և մեր օրերի) Պարսկաստանը գիտակցութեան երկիր էր, որի ժողովրդի մի խոշոր մասն էլ ընակացած չէր նահապետ կեանքի: Այդ մասը պետութեան գլխաւոր ապրանքն էր: Թափառական ցեղերը պատերազմի զօրք էին, որոնցից հրամանները կազմելով՝ երկրի վարիչները ապրանքի մէջ էին պահում խաղաղ երկրագործներին: Իսկ վերջիններս էլ իրենց միայն նրա հա-

մաբ, որ իրարից մեկուսացած և կղզիացած գիտացիներ էին, անկարող էին զգացնել տալ իրենց կամքը և ուղղություն տալ իշխանության վերաբերմունքին: Ճանաչենք գիտացուն: Գ. Մարքսը մեզ տուել է գիտացիության քաղաքական արժէքի նկարագիրը: Ճիշտ է, նա խօսում է ֆրանսիական գիտացիների մասին, բայց գիտացին ամեն տեղ էլ գիտացի է և այն, ինչ արդարացի է ֆրանսացու նկատմամբ, թեթև տարբերություններով համապատասխանում է և հայ, պարսիկ և այլ գիտացիների նկարագրին: «Մանր հողատէր գիտացինները, ասում է Մարքս, ներկայացնում են մի ոհագին մասսա, որի անդամները ապրում են նոյնանման պայմաններում և չեն մտնում իրար հետ և ոչ մի նուազ թէ շատ բազմազան յարաբերութիւնների և կապերի մէջ: Նրանց արտադրութիւնը փոխադարձ յարաբերութիւններ և փոխանակութիւն առաջացնելու փոխարէն, սահմանափակում, առանձնացնում է իրարից և այդ մեկուսացման նպաստում են նոյնպէս հաղորդակցութեան միջոցների վատ կացութիւնը Ֆրանսիայում (խնդիրը XIX դարի չինական ճանապարհների Ֆրանսիայի մասին է, իսկ մեզ հետաքրքրող ժամանակաշրջանի. Պարսկաստանի հաղորդակցութեան միջոցների մասին խօսք անգամ լինել չի կարող, այնքան նրանք անմխիթար դրութեան մէջ էին—Դ. Ա.) և գիտացիների տգիտութիւնը: Նրանց արդիւնաբերական ամբողջը ամենամսակուած է փոքրիկ հողակտորով, տգիտութով, իսկ այդ հողակտորի մշակումն անհնար է դարձնում ոչ աշխատանքի բաժանման որև է դրսեւորում, ոչ էլ գիտութեան տեսակարար կիրառում: Ոտար և այդպիսի տգիտական անտեսութեան հետ չեն կապուած ոչ մատաղ դարպասման և տոգանդի բազմակողմանիութիւն, ոչ էլ հասարակական յարաբերութիւնների բազմազանութիւն: Իւրաքանչիւր առանձին տգիտ, իւրաքանչիւր գիտացիական ընտանիք գրեթէ լիովին պահպանում է ինքն իրեն, անկախ և անմիջական կերպով արտադրելով իր համար կարևոր գործածական առարկաների մեծ մասը, ուրեմն և տգիտը (այնինչ ընտանեկան համայնքը) ձեռք է բերում իր գոյութեան միջոցների աւելի արագ փոխանակութեան ճանապարհով բնութեան հետ, քան հասարակական փոխանակութեան ճանապարհով: Մի գիտացիա-

կան ապարակի, ծուխի, ընտանիքի կոչին տիպատարում է մի ուրիշ ապարակ, ծուխ, ընտանիք. մի քանի առանձնակ նման տարրակումի բնից կազմում է ֆրանսիական գյուղատամնոտը (նահանգ): Այսպես, նույնանիշ միջուկ բնների պարզ գումարումից կազմում է ֆրանսիական ազգի մասան, ճիշտ այնպես, ինչպես, օրինակ, մի ապրանքի մեջ ածած դաս-դաս գնանախանձարները կազմում են մի շարք, այսինքն՝ մի ապրանք կարոտֆել: Ուրեմն այն չափով, ինչ չափով միլիոնաւոր այդ ընտանիքները ապրում են այնպիսի տնտեսական պայմաններում, որոնք կենցաղի, շահերի և կրթութեան տեսակէտով առանձնացնում են նրանց մնացած դասակարգերից և նրանց հակադրում են թշնամօրէն այդ դասակարգերին,—ընտանիքները այդ մասան կազմում է իր ուրոյն դասակարգը: Բայց միա նրանից, ինչ չափով գիւղացիները կապուած են իրար հետ միայն տեղական շուկայի համ տեղի կապերով և ինչ չափով նրանց շահերի միասնականութիւնը համ նոյնութիւնը չի առիթ է տալիս նրանց միջև համայնական կապ և ազգային համերաշխութիւն, սրա է ազգային կամ և քաղաքական կազմակերպութիւն, նոյն չափով գիւղացիները այդ մասան չի կազմում մի խնկական դասակարգ: Այդ պատճառով էլ նրանք իրենց անունից ոչ պարլամենտ և ոչ ազգային ժողովի (Կոնվենտ) միջոցով անընդունակ են պաշտպանել իրենց դասակարգային շահերը: Նրանք չեն կարող ունենալ և անխնայ ներկայացուցիչներ (պատգամաւոր) և հետևաբար պիտի մնային իրենց համար ներկայացուցիչներ ուրիշ դասակարգի մէջ, պրոտ: Բայց այդ նրանց ներկայացուցիչն անդրաժեշտորեն միևնոյն ժամանակ պիտի լինի նրանց իշխանութեան, իշխողում անսահմանափակ կառավարական իշխանութեամբ, որպէս զի հնարաւորութիւն ունենայ պաշտպանել նրանց մնացած դասակարգերից և ուղարկած ամբոխ նրանց վերևից և՛ արև և անձրև: Հետևաբար պարտիաէր-գիւղացիների քաղաքական գերն ի վերջոյ միշտ արտայայտում է նրանով, որ գործադիր իշխանութիւնն անմիջապես հպատակեցնում է իրեն այդ հասարակութեանը»):

*) К. Марксъ. „18-е Брюмера Луи Бонапарта“, էջ 115—116. Հրատ. „Молотъ“-ի։

Մեզ կառավկին, թէ ֆրանսիայի և պարսկի դիւպացուն անհնար է համեմատել իրար հետ, թէ նրանք, որքան էլ դիւպագի լինին, այնուամենայնիւ տարբեր քաղաքակրթական մակարդակների վրայ կանգնած ժողովուրդներ են։ Սակայն որքան էլ նրանց անհատական-հոգեբանական կեանքը տարբեր կողմեր ունենայ,—այդ տարբերութիւնը չի կարող հերքել այն փաստը, որ նրանք՝ թէ ֆրանսիացին և թէ պարսիկը, երկուց արտապրակարգի չնորհիւ փոխադարձ բարդ յարաբերութիւնների և փոխառնակութեան մէջ չեն մտնում, այլ միևնոյնում, առանձնանում են իրարից։ Այդպիսով նրանք անօգտ են դառնում կողմակերպուած այժերով հրապարակ գալու և նպաստում են այն հանգամանքին, որ դիւպագիական երկրներում գործադիր իշխանութիւնը հանդում է ճնշող և հոգեբանական այժերը փոշիացնող այժ. սրբի՝ դիւպագինները պատասխանատու են ծառայում ռամիկանական-բռնապետական բնաժիներին։ Այդ մարդիկ, ինչպէս նկատել է Գլ. Ռասինակին, բնութեան բերած երևոյթները կենտրոնացնում են Աստուծոյ մէջ, քաղաքականութեան ասպարէզ պատահականութիւնները՝ թագաւորն։ Դիւպացին հեղինակութեան գոհ է. ճիշտ է ասում Մարքսը, թէ նրա ներկայացուցչը մինոյն ժամանակ պիտի լինի և նրա իշխանաւորը, հովանաւորողը։ Եւ քանի որ նրա իշխանաւորը երևն պատասխանատուութեան հրաւիրող այժ չի նշմարում դրսից, քանի որ ընդհակառակն այդ փոշիացած զանգուածի մի մասը նա հեշտութեամբ կարող է հրապարակ հանել ճնշելու մեա մասին,—ապա և այսոհետ հնարաւոր են դառնում այնպիսի երևոյթներ և պատահականութիւններ, որոնց համար դժուար է պատմական օրինաչափութիւն գտնել։ Միակ լուսաբանող օրինաչափութիւնը մնում է այն, որ դիւպագիական երկրում գործադիր իշխանութիւնը հնարաւորութիւն ունի ինքն իր համքը թելադրելու հպատակներին, ստանց հաշուի նստելու այդ հպատակների համքի հետ։ Այդպիսի երկրների գարգացման ուղին քաղաքների, բուրժուազիայի բարգաւաճման մէջ պիտի փնտրել, իսկ մինչև այդ նրանք կարող են յայտնագործել շատ հակասական անցուդարձեր։ Արդիօք հակասական անցուդարձ չէ, որ 1848 թ. Ֆրանսիական յեղափոխութիւնից յետոյ, նախ հիմնւում է հան-

բանեսուքիւն, ապա այդ պետական կարգը պահպանելի հնչուքեամբ փոխում է կայսրութեան և գահը պրաում մի բանտախնդիր: Ֆրանսական դիւցացին թև ու թիկունք դարձաւ Նապոլէոն III-ին, նա էր, որ հանրապետութեան գործադիր իշխանութեան նախկայացուցչին իրեն կայսր հռչակեց: Եթէ XIX դարու սասլին կիսի Ֆրանսիայում դիւցազութեան չնորհիւ կարող է տեղի ունենալ նման ապշեցնող երևոյթ, ապա ինչքեր չէին կարող հրապարակ գալ դրանից առաջ այնքան յետամնաց Պարսկաստանում: Այժմ մեզ համար պարզ պիտի լինի պարսիկ բանակալութիւնը անդ այժը. դա դիմադարձ գործաց դիւցազութիւնն էր: Պարսկաստանում ժողովրդական մասսայի մէջ միայն նոմադական կենդանով ապրող ցեղերն էին դեռ իրենց ազատ, բայց նրանք էլ ինչպես վերը յիշեցինք, մեծ ու փոքր բանակալների դիմադարձական այժն էին կազմում. օրինակ, Երևանի խանութեան սահմաններում գտնվող քրդերը սարդարի հնազանդքն էին համարում: Այսպէս թէ այնպէս, ամեն երկիր, ինչպէս ասում է, արժանի է իր կառավարութեան: Պարսկաստանն էլ արժանացել էր իր բանտախական կառավարութեանը—բանտախական թէ կենտրոնում և թէ ծայրերում: Մեզ հետաքրքրում է ծայրերի կացութիւնը, ասած ընդհանուր հիմնատրամաբանական դիմանք պետու իրականութիւնը, ինչպէս որ նա կար:

ԳԼՈՒԽ IV

ԽԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆ.—ՈՍՏԻԿԱՆՈՒԹԻՒՆ, ԴԱՏԱՐԱՆ ԵՒ ՋՕՐՔ

Ինչպէս և աշխատութեան սկզբում յիշեցինք Ռուսաստանին դիմած պարսկական երկրներում հայերը բնակչութեան մէջ խաշար տեղ էին բռնում Ղարաբաղի, Գանձակի, Շնքիի, Երևանի և Նախիջևանի խանութիւններում: Այդ խանութիւնները կառավարում էին կամ Պարսկաստանի կենտրոնական կառավարութիւնից նշանակուած պաշտօնեաներով (Երևան և Նախիջևան) կամ թէ Պարսկաստանի դերիշխանութիւնը ճանա-

չոլ ժառանգական խաներով (Ղարաբաղ, Գանձակ և այլն)։ Այս վիրջին հանգամանքը չէր կարէ սխալ մեկնել, թէ ժառանգական խաների իրաւունքները սրբապղծուած էին։ Ո՛չ։ Եւ պաշտօնեան և ժառանգական խանն այնքան էին մեռա՛ մի, որքան պա՛ էր «արքայից արքայ» վիրջինս սրբաշահուած էր կամ թէ թոյլ էր պղա՛ փոխհարաբերութիւնների դիմելու։ Խաները Պարսկաստանի կենտրոնական իշխանութեան հետ իրենց կապերը պահպանում էին հարկերով և պատանդներով. հարկը հպատակութեան ապացոյցն էր, իսկ պատանդը—հաւատարմութեան։ Եւ որովհետև «արքայից արքայ» երկրում ոչինչ հաստատ բան չէրկար, որովհետև այսօրուայ խանը կարող էր վաղը իր աչքերը փակել կախաղանի վրայ կամ իր կեանքի մնացորդն անցկացնել անյայտութեան մէջ, ապա և նրանք իրենց իշխանութեան օրերին գլխաւորապէս գանձ ժողովելն էին դարձնում հոգսերի առարկայ։ Գանձով նրանք հնարաւորութիւն ունէին քաղցրացնելու կենտրոնական իշխանութեան քիմքը և լծկացնելու միտի պայրայթը, վերջապէս, գանձն ինքնին ապահովութիւն և վերին օրութիւն էր նոյն իսկ այն խաւար ժամանակներում։ Այս պատճառով էլ խաների կառավարութիւնը շատ միակողմանի էր. նա գլխաւորապէս հարկերի և տուրքերի, մի բան կորզելու շահջն էր պարտում։ Վարչութեան գլխաւոր կշռումը հարկերի գանձման մէջ էր կայանում։ Եւ խանական բազմազան հարկերը լուսաբանում են թէ նրանց վարչութեան էութիւնը և թէ վճարող ժողովրդի հասարակական կազմը։ Սակայն մինչև հարկերի քննութեան դիմելը՝ մի քանի խօսք ասենք խանութիւնների վարչական և դատաստանական կառուցուածքի մասին, որ նոյնպէս հետաքրքրութեան արժանի է։

Խանութիւնները բաժանւում էին իրենց հերթին մահալների։ Մահալը կազմում էր, գլխաւորապէս, որևէ գետի աւազանից։ Հարը Անդրկովկասում բացառիկ տեղ ունի վիրջապետութեան մէջ և միայն նրա կանոնաւորումն ինքնին պահանջում է որոշ կազմակերպութիւն։ Այսպիսով առաջին կանոնաւորումն սկսում է դառնում ապագայում ունենալ բարդ կազմակերպութիւն, որի կոչումն այժմ էրի և առուների վրայ հսկելը

չէ միայն, այլ և որ գոհացում տայ հատարակական մնացած պահանջներին։ Երևանի խանութիւնը բաժանուած էր 13 մասնաներն, որոնք կրում էին իրենց միջով տտող փողոցի անուններն, օրինակ, Զանգի-բազար, Գառնի-բազար և այլն, այսինքն Զանգուից և Գառնիից չրակող, նրանց չրերով առատ։ Քաղաքացի պարզ անհատական արժէք, մասնաներ կազմելու մէջ գերակշռող դեր էր խաղում և մնացած խանութիւնների մէջ, որովհետև Գանձակը, Ջերն, Ջիրուանն ու Ղարաբաղն իրենց խոշոր մասերով առանց չրի, առանց առատ ապրանքների անարժէք են հատատան կուլտուրայի համար։ Ցամաքային դէպս խանութիւններում մասնաներ կազմելու մէջ աչքաթող չէին անում չրջանի պատմական անցեալին առնչուած անհատական և ազգային առանձնայատկութիւնները։ Ղարաբաղի խանութեան մէջ հինգ չրջաններ (Դիզակ Վարանդա, Խաչէն, Ջրաբերդ և Գիւլստան) շնորհիւ միատարր բնակչութեան և աշխարհագրական առանձնայատուկ դերի ինքնուրոյն մասաներ էին կազմում։ Երևանի խանութեան մէջ մասաի կառավարումը յանձնում էր խաներին և բէկերին։ Նրանք միրզեիբ կոչումն էին կրում և օժտուած էին աւելի կամ պակաս իշխանութեամբ։ Թաղատական գլուխն այդ կառավարում էին իրենց ցեղապետներով։ Քաղաքի կառավարիչն էր Գարդաճ կամ սահիկոմատոսը, իսկ վերջինիս նեթարկում էին իզբաշիներր (տարերապետ) և չաուշերր (սահապետ)*)։ Ուրիշ խանութիւններում մասաի պետը միրզայք կոչման փոխարէն կրում էր զանազան անուններ, ինչպէս մասաի բէկ, մելիք կամ նայիբ**)։ Խանական այդ պաշտօնաները ժողովրդի անմիջական իշխանաւորներն էին։ Նրանք նշանակում էին պատուաւոր սահմերից և կամ այդ երկրներն նախկին իշխանաւորների սերունդներից։ Վերջին տեսակի մասաների պետեր էին Ղարաբաղի հինգ գաւառակների հայ մելիքները։ Մասաի պետն այնքան ժամանակով էր մնում իր պաշտօնի մէջ, որքան դա հաճելի էր խաներին, մեկ ընդհանրացած

*) И. Шопенъ. „Историческій памятникъ состоянія Армянской Области въ эпоху ея присоединенія къ Россійской Имперіи“ С. П. Б. 1852 г. էջ 457—458.

**) Иваненко, էջ 137.

կանան էր պաշտօնի ժառանգական լինելը: Սակայն ամեն նոր վախճանութիւն պահանջում էր բարձր իշխանութեան հաստատութիւնը: Նման հաստատութեան մի վաւերագիր է իշխ. Մատթեոսի նախահայրերից մեկի տուցած ֆերմանը չ՚ունէր, որ մենք, նմուշի համար, բերում ենք այստեղ). «Ի նշան մեր արքայական պարծանութեան ու մեր Բաղի՝ 1651 թ. 1-ի օրից վարանդա երկրի մելիքութիւնը մենք յանձնել և շնորհել ենք մելիք Բաղոն, որ նա ամենայն արգարութեամբ և ճշմարտութեամբ գործէ և պահպանէ հաւատարմութիւնը: Հպատակները, որ ապրում էք այդ երկրում, վերոյիշեալ Բաղոն ճանաչեցէք ձեզ վրայ մելիք: Ձեր բոլոր կացութեան վերաբերեալ՝ նրա ուղիղ խօսքերից և խորհուրդներից դուրս չգնաք և առանց նրա գիտութեան ժողովրդի վրայ ոչ մի հարկ կամ ծառայութիւն մի դնէք և ճանաչեցէք մելիքի պաշտօնը յանձնուած միայն նրան: Իսկ այդ պաշտօնին պատշաճ նկատուածը, ինչպէս առաջուայ մելիքին տուել էք, նոյնպէս և նրան պարտաւոր էք տալ և այս մելիքը պարտաւոր է ժողովրդի հետ վարուել այնպիսի նկատկամ, որ նա գոհ մնայ նրանից: Էլ մի ապատէք այս մասին ուրիշ հրամաններ»: Մահալի բնակիչը տարբեր իրաւունքներ էր վայելում տարբեր իրաւունքներ, բայց ընդհանրապէս նրանց պարտաւորութիւնները հետևեալներն էին՝ 1) իրանի կողմից ողջ մահալի համար որոշուած տուրքերը բաժանել գիւղերի վրայ, 2) տեղական բնակիչներին անվնաս մտցնել հարկերը, 3) պահպանել սահմանապահ մահալները պետական չարագործներից, 4) քննել բնակիչների և գիւղերի մէջ ծագած վէճերը, պաշտօնեաների

*) Իշխ. Մատթեոսի համար բաժին («Մամասի մելիքութիւնների մէջ) ասում է, որ նա ամենեին պետական ծագում չունէր, այլ Վարանդայի Մելիք-Շահնազարի կողմից Մելիք-Ջումշուդի տուած վաւերագրով, թէ նա պետական է և այլն: Մեր այստեղ առաջ բերած վաւերագիրն Իշխ. Մատթեոսը ներկայացրել էր դեռ, Երմոլովին, որպէս հաստատութիւն, թէ նա Վարանդայի ժառանգական տէրն է և խնդրում էր իր վրայ հաստատել Մեհամի-Ղալի իրանի «վերապարգևած» գիւղերն ու հողերը: Մենք չգիտենք, թէ որքան է արդարացի բաժինը. յամենայն դէպս այդ ժամանակ կարող էր դիւրք գրաւել ամեն մի աչքաթաց բախտախնդիր:

դէմ եղած գանգատները, օրինակ մերսողների դէմ, որոնք Ջրի բաշխման վրայ էին հսկում, 5) ի կատար ածել գատարանական որոշումները, 6) դատել և պատժել մի քանի թեթև յանցանքների համար, որոնք չէին ենթարկում հոգևոր դատաստանին, օրինակ, պարտապանութիւն, խուռափուռն բնական ծառայութիւններից, գողութիւններ, 7) փնտրել, ձերբակալել և պատշաճ դատարանին յանձնել աւազակներին և այլ վնասակար ճանապարհած յանցագործներին և այլն: Բէկերին շնորհած վիճակում այդ պարտաւորութիւններից սմանք անցնում էին անձնապէս նրանց կամ նրանց նշանակած կառավարիչներին: Վարչական անդուխքը վերջանում էր խանից նշանակուած տանուտէրով, որ կոչւում էր իւղրաչի, քեթխուդա, մելիք կամ քեօղխա: Սրան էին հպատակում մի քանի տանուտէրներ կամ համայնքներ: Տանուտէրն ազատ էր հարկերից և բացի այդ ունէր և մի քանի եկամուտներ: Այդ պաշտօնին նշանակւում էին և բէկերը: Բէկերին յանձնուած վիճակում նրանք էին սովորաբար կատարում և տանուտէրի պաշտօնը, որովհետև բէկը նոյն վիճակին էր, միայն մի չափով աւելի ունեցը: Սկզբունքով տանուտէրութիւնը ժամանակաւոր էր, բայց յաճախ նա պահում էր և ժառանգական արտօնութիւն:

Խանական պաշտօնեաներից ոչ ոք ռոճիկ չէր ստանում: Նրանք ծառայութեան համար կամ ստանում էին իրենց ձեռքով անցնող գանձարանի եկամուտների մի մասը կամ թէ բաւարարւում էին յատուկ իրենց շնորհած վիճակի եկամուտներով: Այդ վիճակը նրանց ժառանգական սեփականութիւնը չէր համարւում. նրանք միայն եկամուտների մի մասի տէրն էին: Վերջապէս՝ նրանց շնորհւում էր առանձին պարապ հողամասեր, որոնք բնակիչներից դուրս հղումած ժողովրդով: Այսպէս բէկ-պաշտօնեան օգտւում էր առանձին իրաւունքներով, գլխաւորապէս բարձր եկամուտներով: Խանի բոլոր շնորհները լինում էին առանձին թարատ կամ թալիկ կոչուած թղթերով *): Ի՞նչ խօսք, որ պաշտօնեաները միայն օրինաւոր ճանաչուած տուրքերով չէ, որ բաւարարւում էին: Անպատասխանատու ժողովրդի առաջ, մի ժողովրդի, որն ան-

*) Иваненко, էջ 138—139.

պամ չէր մտածում սանձ դնելու իր վատաիկը պիշատողների երեսին՝ նրանք պէտք էին այնքան, որքան կարող էին և հնարաւոր էր։ Նրանց վախը բարձրից էր, իսկից։ Ահա ինչպէս էր պատժում Երևանի խանն իր չափազանց ագահ պաշտօնեաներին. «Նրանց գործակիցներին նա նայում էր մատների արանքով և կարիք էլ չունէր երկիւղ քաշելու. նրա պաշտօնեաները կողոպտում էին, բայց՝ ասկարների մեծամասնութեան յատուկ ագահութեան չնորհիւ՝ չէին ծախում կողոպտած ապրանքներն (ինչի վրայ պիտի ծախէին բնաւ անհատական չէին ունենում այդ պիշատիչները—Դ. Ա.), այլ իսկոյն ձեռք էին բերում գինի, անկ, այծեներ և այլն։ Երբ ապրանքը նկատում էր, որ գինովութեան չափն անցել է, ծանր տարուածով սատում էր պիշատիչին. նրա բոլոր կարողութիւնը մտնում էր ապրանքի մէջ, իսկ կալուածքները դառնում էին արքունի, այսինքն ապրանքական։ Մէկ-երկու տարի դատապարտեալը մաշում էր ապրանքի չէմքը, պաշտօնեաներ էր անում նրա սիրելիներին և, վերջապէս, երբ նա արդէն հասնում էր ծայրայեղ անկման, ապա նրանից պահանջում էր պարտութեան։ Նրան հնարաւորութիւն էին տալիս նորից շահուելու, որ յետագայում նորից աղքատ դարձնեն յօդուտ սերոջ»)։*

Ապահովութեան մասին մտահոգող, կարգապահութեան վրայ հսկող վարչական կազմակերպութիւնը սա էր, որ, ինչպէս տեսանք էլ նախորդիվ, ունէր յատկապէս մի պարտաւոր էր ժողովրդի հետքերը ծծելու, քան թէ որևէ է ծառայութիւն մատուցանելու նրան։ Ունէր բարձր կազմակերպութիւն չունէր դատաստանական մասը։ Նախ պէտք ասենք, որ Վրաստանի պէս, պարսկական խանութիւններին մէջ ևս ոչ մի յանցանք չէր համարում ընդհանուր հասարակական բնոյթ ունեցող երեւոյթ։ Անձի և սեփականութեան դէմ գործուած յանցանքը համարում էր մասնաւոր-իրաւական հարց։ Տուժած կողմը կարող էր վրիժանք սատնարով նեղել յանցաւորին, կարող էր և պատժել սալ սուրանքով, ծեծով կամ անդամալուծութեամբ։ Արիւնն արիւնով էր լուացում կամ թէ արնապով լուծում։ Դատաւորութիւնը վերաբերում էր հոգևորականութեան պատկանութիւնն էր։ Իսկամ

*) Шопенъ, էջ 458.

ժողովուրդների ըմբռնումով Ղուրանը ոչ միայն նորին կրօնական համոզմունքի և առաւօտեան յայտնութեան միրք էր այլ և պարունակում էր համակենցաղի համար անհրաժեշտ բոլոր կանոնները: Ղուրանը մի նահապետական պարզ կենցաղի ապրող ժողովրդի համար խնամքն և առանձին կեանքի օրինադիրք էր: Իսկ ութ Ղուրանը, կեանքի և յարաբերութիւնների բարդացման շնորհիւ, չունէր իր պարզ ենթադրանքը — այնտեղ հրապարակ էին գալիս աշխարհային իրաւունքը, իմամների և յայտնի հոգևոր դիտակների արձակած վճիռները, բացատրութիւնների ժողովածուները, որոնց առանձնահատկութիւնն էլ պահպանողները բացառապէս հոգևորականներն էին: Հասկանալի է սրանից, թէ ինչու դատաւորութիւնը և դատաստանը կենտրոնացած էր հոգևորականութեան ձեռքին: Շարիաթն այսօր իր մէջ պարփակում էր դատաստանական ամբողջ դիտութիւնը, իսկ նրա բանալին յանձնուած էր կրօնի ներկայացուցիչներին: Ճաճանչ հոգևոր դատարաններին ենթարկում էին բոլոր քաղաքացիական պահանջները ու վէճերը *), ինամակալական և նահապետական գործերը, այն բռէական գործերը, որոնք առնչվանգում էին մահուան, քան թէ հասարակական շահեր, ինչպէս օրինակ, արիշի անփոփոխութեան բանի սրբացում, շնութիւն, նշանածի առևանգում, վերք հասցնել և հաշմացում, սպանութիւն: Գողութիւնը, ստոպանութիւնը, ահաբեկիչների խարդախութիւնները, դինասրակութիւնն էլ և վարչական անձերի յանցանքները դատում էին խանի կամ նրա լիազօրած աշխարհի դատաւորների ձեռքով: Դատավարութիւնը տեղի էր ունենում առանց ձևակերպութիւնների: Եթէ որևէ մէկը մեղադրանք էր ներկայացնում, ապա նրանից պահանջ էր արվում, որ մեղադրուողը խոստովանէր դատարանից: Դատարանն էլ տեղն ու տեղը հարց ու փորձ ենթարկելով կողմերին, վկաներին, եթէ այդպիսիները կային գործի մէջ, առանց երդումների արշում էր հանում և առաջարկում մեղադրեալ կողմին դատապարտել ինքնասպանութեան: Ապացուցման կարգը կարող էր

*) Иваненко էջ 141.

դիմել խանին և խնդրել նրա դատաստանը: Մեղաւորն ու արդարը չսկսել ամենալաւ միջոցը համարւում էր երդումը, որին դատաւորը կարող էր ենթարկել երկու կողմերին էլ. համ երդուելով մաքրուլը կամ թէ հատատաւը: Ինարկէ, դա դատաւորութեան բնականոն դրութիւնն էր, բայց պատմական փոքրիկ բռնաւորները յաճախ տակն ու վրայ էին անում ամեն կարգ ու կանոն և այն ժամանակ թագաւորում էր խանի կամքն և քմահաճոյքը: Չոպէնը, որ Երևանի ուեսական դրութեան անմիջապէս յետոյ կազմել է այդ նահանգի նկարագրութիւնը, հետևեալ տեղեկութիւններն է տալիս խանի դատաստանի մասին. «Գործերը իշխանութեան պատկանող քրէական դատաստանը դեկավարում էր չափազանց պարզ օրէնքներով. արիւնն արեան փոխարէն—նրանց հիմքն էր կազմում. մարդասպանին տալիս էին պատանածի մերձաւոր ազգականներին և նրանք իրաւունք ունէին վերցնել նրանից վրէժանք—արեան գինը կամ նրան կեանքից զրկել: Գործակատարութեան համար գոյութիւն ունէր շատ հատարակ տանձական կարգ. ոչ յուզականներ էին ճանաչում, ոչ օրագրութիւններ: Սարդարը (խանը) ընդունում էր դեկուցումներ կամ դանգատներ, յաում էր գործի հանգամանքները և վճիռ արձակում, որը տեղն ու տեղը ի կատար էր ածւում: Եթէ պատժել էր պէտք, ապա սարդարի նշանով դուրս էին յաակում փերրաշները և մի ակնթարթում մեղապարտը պատկինցնում էր մէջքի վրայ. երկու փերրաշ բարձրացնում էին նրա փալախկին կապած ոտքերը, իսկ այդ ժամանակ երկու ուրիշը կակուղ մասուլէ ճիպոտով հարուածներ էին իջեցնում յանցաւորի պարշապարներին: Երբեմն, բայց խիստ տակաւ, զայրացած սարդարը հրամայում էր լուռամարդ վայր գցել թշուառին Չանգալի ձորը, իսկ երբեմն էլ նրա հրամանով կարում էին պատապարանոցի բակում, ոտքը, մէկ կամ երկու ականջները, քիթն, դուրս էին հանում մէկ կամ երկու աչքերը և այդ բոլորը կատարւում էր կայծակի արագութեամբ: Եթէ պահանջւում էր արիւ կարդադրութիւն կամ դրաւոր հրաման,—այդ դէպքում տանանի գրագիրներից մէկը գոտուց հանում էր թանաքամանը, բանում մի թևերի թուղթ, և պատրաստ հրամանին մնում էր միայն ատրադրութեան փոխարէն դնել սարդա-

բի անուանական կնիքը։ Երբեմն գործը հեշտացնելու դիտումով պատրաստում էին կնքած թղթեր և պրոպիլեների յաջողում էր այդ բանից իրենց համար խիստ շահաբեր գործ անել։ Երբեմն էլ կնիքը յանձնում էր վեպիին, որ այդպիսի դէպքում լիազօրւում էր գործելու սորդարի անունից» *)։

*Մենք արդէն ծանօթացանք խանութիւններում մերող վաչկատուն-կորպորատիական և տոտոտեանական միտումների հետ։ Պետական, նեղ կարելի է այսպէս անուանել, այդ բանաւոր կարգերը պատուանդան ունէին որոշ պատրաստի դիմադրական ոյժ։ Դա մաճիների դասն էր։ Մաճիները պատկանէին հարկերից և պարտաւոր ամեն ժամ զինուած և ձիաւորուած կառավարել խանի հրամանները, մասնակցելու նրա արշաւանքներին։ Մաճիների մի անշան մասը միշտ ապրում էր խանի դռան, սպասում էր նրանից հացուսա և անուն և կատարում էր տօրինակ վաչկատուն կորպորացիւնները։ Միւս խոշորագոյն մասը հանդէս էր գալիս միայն պատերազմական ժամանակներում։ Մաճիութիւնը ժառանգական արտօնութիւն էր։ Նա արում էր այն անձերին, որոնց մասին բէկերն այդ կամ այն նպաստակից ու հանգամանքից դրդուած բարեխօսում էին խանների առաջ։ Խանների զինուորական ոյժը կազմում էր այդ մաճիներից և մահալի բէկերի հատկած ռազմիկներից։ Դրանք ծառայութեան մէջ մնում էին այնքան ժամանակ, որքան պահանջում էր որևէ ձեռնարկութիւն իր վախճանին հասցնելու։ Նրանք երկար ժամանակով երբէք չէին կտրւում տոլից և ընտանեսական պարտականութիւններից։ Իրենց վարձատրութիւնն էլ պահում էին կորպորատի և մանր-մունր խանական նաւէրների մէջ։ Ընդհի խանութեան մէջ մաճիներ հաշւում էին 700 մարդ, որոնք իրենց ընտանիքների անդամների հետ կազմում էին 3400 հոգի։ Մաճիների հետ միասին Ղարաբաղի խանը կարող էր դուրս հանել մինչև 5000 զինուոր, Ջրաւանի և Ընդհի խաները իւրաքանչիւրը մինչև 3000 **)։ Դրանք էին կազմում այն դումարտակները, որոնք իրականութիւն էին դարձնում խանների և նրանց համհարզների կամքի ընդդիմութիւնները։ Ապա կար և վաչկատուն ցեղերի աջակցութիւնը։*

*) Шопенъ, էջ 456—457.
**) Иваненко, էջ 134 և 139.

ԳԼՈՒԽ V

ԽԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆ. — ՀԱՑ ՄԵԼԻՔՆԵՐ, ՀԱՑ ԳԻՇՂԱԿԱՆ ՀԱՄԱՑՆՔ.—ՄԵԼԻՔՆԵՐԻ ԵՒ ԳԻՇՂԱՑԻՆԵՐԻ ՓՈԽ-ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ.—ՔԱՂԱՔԻ ՀԱՅՈՒԹԻՒՆԸ

*Մենք մի անգամ արդէն ակնարկել ենք, որ խանութիւններում մահմնների կառավարիչ նշանակելու իրաւքը ունէր և ազգապրական սարքը: Առհասարակ ընդունուած կանոն էր հայաբնակ գաւառակների վարչական գործը յանձնել հայերին: Իսկ հայ գիւղերում բոլոր սարին վարչական պաշտօնեաները հայերից էին լինում բաղկացած: Մահմնների հայ կառավարիչներին մեծ պատուանուն էր տրւում, թէև քիչ չէին նաև մելիքները, որոնց իրաւասութիւնները մի գիւղի սահմաններից չէին անցնում. դրանք պարզ առուտէրներ էին: Այսպէս մելիքները երկու կարգի էին: Առաջին կարգի մելիքները իրենց ծագման և տոհմի հնութեան մասին մեծ համարում ունէին: Այս աչքով էր նայում նրանց վրայ և ժողովուրդը: Նրանց մելիքութիւնը ճանաչուած էր պարսկական սրքունքից և շահի սուած հրովարտակներով: Այդ կարգի մելիքներ էին, օրինակ, Ղարաբաղի հինգ գաւառակների—Դիզակի, Վարանդայի Խաչէնի, Ջրաբերդի և Գիւլստանի—ժառանգական հայ կառավարիչները: Նրանք՝ այդ երկրների ժառանգական իշխաններ համարելով իրենց՝ միշտ պայքարում էին Ղարաբաղի խանի դէմ, չէին կամենում իրենց և պարսկական սրքունքի միջև տեսնել նրա իշխանական կոպը: Նրանց մէջ այնքան էր արմատացած իրենց եթէ ոչ անկախութեան, գոնէ կիսանկախութեան զգացումը, որ սահմանակ սարերներ չէին թողնում խաների կերիշխանութեան տարածման խորհուրդը: Այդ մտքով էլ նրանք անդադար պիտոյքներ էին անում Ռուսաստանին, հպատակութիւն էին առաջարկում, օգնութիւն խնդրում: XVIII դարի վերջում մենք տեսնում ենք, որ նրանցից մէկը, Ջրաբերդի մելիք Մելքումը, այլևս երես է դարձրել Ռուսաստանից և արա դաշնակից վրայ սրքայ հերակլից ու գործում է նոյն իսկ պարսկական աջակցութեամբ, որ՝ տարածել պարսկական սրքունքի տհա-

ճանաչելը պրպտած Վարաղայի խանին՝ վերադարձնել մելիքնե-
րին նրանց հին արտօնութիւնները, այսինքն ազատութիւն ժո-
ղովրդին կառավարելու առանց խանի միջամտութեան և իրա-
ւունք՝ պարսկական արքունիքի հետ ուղղակի յարաբերութեան
մէջ մնալու*): Մեզ շահագրգռող ժամանակաշրջանում, այսինքն
XIX դարի սկզբում, այս մելիքներն այլևս քաղաքական լայն
ծրագրերն չէին անուցանում իրենց առաջ: Նրանք խնամարկ-
ում էին խաների առաջ և նրանց պաշտօնեաների շրջանում
էին դառնում: Դրա պարզ ապացոյցը մենք տեսնում ենք մի
կալուածային խնդրից, որ ծագել էր XIX դ. քառասնական թուա-
կաններին: Բանը նրա մէջն է, որ Գիւլստանի մելիքական տո-
մի (Մելիք-Բէգլարեանների) մէջ հարց էր ծագել բաժանելու
մելիքների վարչութեան տակ գտնուող քառն գիւղեր: Բաժին
պահանջող տոհմի անդամները վերադարձել էին Հոկտեմբերից
Պարսկաստանից և Վրաստանից, ուր առաջ նրանք գաղթած
էին: Նրանք դիմել էին Կովկասի ժամանակակից կուսակալ
Երմոլովին և նրա աջակցութիւնը խնդրել, իսկ վերջինս առա-
ջարկել էր դառնալուն պաշտօն վերցնել Ներսէս Աշտարակեցուն:
Գործն այսպիսի ընթացք էր ընդունել արդէն, երբ միջամտում
է Վարաղայի Մհոմի-Ղուլի խանը և արշ պատճառաբանու-
թիւններով պահանջում գաղթականին բաժանման ողջ գործը
խանը գտնում էր, որ յիշեալ քառն գիւղերը Մելիք-Բէգլա-
րեանների սեփականութիւնը չեն, ուստի և այդ տոհմի անդամ-
ներն իրաւունք չունեն բաժանման խնդիր յարուցանելու: Ներ-
պաշտպանում էր այն տեսակէտը, որ գիւղերը իր կողմից յան-
ձնուած են մելիքին միայն արշ տասնեակ կառավարելու հա-
մար, որ Մելիք-Բէգլարեանների տոհմն իրաւունք ունի իր մէ
բաժանելու միմիայն շարժական կայքն և փողը և որ, վերջապէ
գիւղերը յանձնուած է կառավարելու Վրաստանից վերադար-
ձած և խանի առաջ ղէջացած մելիք Փրիդոնին: Պետք ասելու
նել, որ խանը բողբոջում էր ոչ միայն հողերի սեփականացման
դադարեցրի, այլ և ճորտատիրական այն ձգտումների դէմ, ո

*) П. Б. Бутковъ. „Матеріалы для новой исторіи Кавказа с
1722 по 1803 годъ". С.П.Б. 1869 ч. I. էջ 116, 385—387. ч. II. էջ 28
—283, 338.

ունէին և իրենց հետ վրաստանից նեղմուծել էին յիշեալ տոհմի անդամները): *Կրկնում ենք, առաջին կարգի մելիքները XIX դարի սկզբում այլևս աչնչով չէին դանազանում խանական մնացած պաշտօնեաներից և ռուսական իշխանութեան կողմից նրանց արտօնութիւնները ճանաչւում էին այն չափով, որ չափով դա վկայուած էր խաների կողմից: Աւելին: Այնքան էր նեղմացած նրանց քաղաքական կշիռը, որ իրենք, մելիքները, անվերջ դիմումներ էին անում Լազարեան տոհմին և նրանց ապրելիք միջնորդութիւնը հայցում կարուածք, պաշտօն կամ պատիւ տանելու համար:*

Երկրորդ կարգի մելիքները, որոնց մենք պարզ տանուտէրներ անուանեցինք, չունէին առաջիններին տոհմական հնութեան բարեմասնութիւնը: Նրանց չէր ճանաչում և պարսկական արքունիքը: Դրանք ժողովրդի առաջ և նրա միջից առաջացած ականաւոր անհատներ էին, նպաստուկ իշխանաւորներ, որոնց հօրէ պորտը յայտնի էր ամենին: Այդ կարգի մելիքներն իրենց կոչումը առացել էին խաներից, որ շատ էլ յարգ ունեցող մեծութիւններ չէին համարւում: Ժողովրդի աչքում ոչ միայն մեծ յարգ չունէր կոչում առող մեծաւորը, այլ և այդ կոչումն ունեցողը կորցնում էր իր համարքը, երբ նա առացում էր առաքութեամբ և հաճոյակատարութեամբ, իսկ երկրորդ կարգի մելիքները պետաւորապէս այդ ուղով էին հասնում իրենց դիրքին: Արդէն ասացինք, որ մելիքական և խանական իշխանութիւնների մէջ, մանաւանդ Ղարաբաղում, երկար ժամանակ պայքար էր մղում գերիշխանութեան խնդրի շուրջը: Այդ պայքարի ընթացքում խաները կուսակիցներ էին փնտրում հէնց հայ ժողովրդի ծոցում և յաճախ էր պատահում, որ նրանք յաջողութիւն էին գտնում: Խաների ձեռքին գործիք դարձող անհատներն էլ նրանցից մեծարւում էին մելիքական տիտղոսով:

Առաջին և երկրորդ կարգի մելիքների երևելիութիւնը տակաւին այլևս պատմական չտեսարժանութիւն ունէր XIX դարի սկզբում, որովհետև այդ ժամանակ երկրի ճանաչուած տէրերը խաներն էին: Աւելին: Խանական իրաւունքով բարձրացած մե-

*) Акты Кавказской Археографической Ком, т. VI а, № 1320, Всеподданѣйшій рапортъ ген. Ермолова, отъ 7 сентября 1824 г.

լիքները, որպէս հաւատարիմներ, ապրել էին ընդունած, քան թէ հին սոհմերի չառաւիղները:

Մելիքները հայ գաւառներն ու գիւղերը կառավարում էին նոյն կարգ ու կանոնով, որ ակտում էր խանութիւնների մնացած վայրերում, սակայն մի տարբերութեամբ: Այդ տարբերութիւնը կայանում էր այն հանգամանքի մէջ, որ հայ գաւառի և գիւղի իշխանաւորն ու հպատակն այնուամենայնիւ երկրորդական ճանաչուած ժողովրդի ներկայացուցիչներ էին: Դա մի հանգամանք էր, որ իշխանաւորին և հպատակին մօտ զօրում էր իրար հետ: Շահերի ներքին հակամարտութիւնն այսպէս տեղի էր տալիս արտաքին ճնշման և հալածանքի առաջ: Իշխանաւորն իր հպատակի մէջ էր վնասում այն զօրութիւնը, որ կարող էր աջակից լինել նրան՝ պաշտպանելու բռնաւորի առաջ սեփական արժանապատուութիւնը: Հպատակն էլ իր իշխանաւորից էր ապաւում յուսմունք և գնահատութիւն ամօթ պահպանելու իր ներքին ինքնօրինութիւնը և առանձնայատկութիւնները: Առածս ապացոյց է ծառայում այն հանգամանքը, որ խանների ձեռքից հալածուող պարթական մելիքների հետ պարթում էին և նրանց ժողովուրդները: Ժողովրդի համար միևնոյն էր, թէ հալածական մելիքն ուր է ուղում իր քայլերը. Վրաստան, թէ Ղարաբաղի խանութիւնից Գանձակի խանութիւնը, Ղնքի, Ղրսաման, թէ Կոլկասեան լեռների առասկան կիծը: Հոծ բազմութիւններով, հարստատ ընտանիքներով նա դուրս էր գալիս իր ծննդավայրից, շատերին մահն ստիպում էր անապարհին, շատերին էլ գերի տալիս գիշատիչ լեզգիների և այլ թափառականների ձեռքը, բայց այնուամենայնիւ մի որևէ հետաքրքրական բանով նրանց պատմութիւնը միշտ էր ունենում ժողովրդի համակրանքին. ժողովուրդը նրանց այժմ չէր անուանում և հետևում նրանց այդ այժմ պատճառով, այլ կար այն պարզ իրողութիւնը, որ հայ մելիքի ձեռքը տակ ունի ապահովութիւն և կարգ կար, քան թէ խոնական թուրք պաշտօնեայի: Այդ հանգամանքը մեզ ստիպում է ունի նկատողին

և չօշափելի կերպով պարզաբանել մեխքների և ժողովրդի փոխյարաբերությունը, իսկ մինչև այդ մեզ անհրաժեշտ է ծանոթանալ հայ պետական համայնքի օրենսության հետ, որովհետև համայնքն էր այն պատասխանատուն, որի վրայ խարսխում էր մեխքների իշխանությունը:

Հայ պետական համայնքն իրենից ներկայացնում էր մի անհատական և վարչական միասին: Նրա անհատության հիմքը երկրագործությունն էր: Որևէ հողի նկատմամբ այստեղ պիտի որոշ և ընդունուած վերաբերմունք լիներ: Եթե ասենք, որ հողը համարում էր համայնական սեփականություն և միայն այդքանը, —ապա անորոշ կմնայ այն հանգամանքը, թե ինչպես էր կանոնաւորում համայնքի շրջանակներում հողից օգտուելը: Այստեղ պիտի ասել, որ հայ պետիում ամենուրեք մեհնայն կարգը չէր պահպանում: Որոշ ընդունուած և արտադրծուած կանոն էշխում էր միայն այն վայրերում, ուր ժողովուրդը նստակեաց դարձած էր երկար ժամանակներից ի վեր և ուր հողի միասնականությունը կոր և յարաբերական ամբողջություն: Խանութիւնների ժամանակ երկիրն ամառատեղ բնակեցուած էր խոտաճոխ, հայութիւնն էլ իրեն բնակավայր էր ընտրել սարերի լանջերն ու հովիտները, անասունների ծաղկուած անկիւնները, մի խօսքով այնպիսի վայրեր, որոնց բնական ամրութիւններն ու անմատչելիութիւնը խոտոր կարևոր հանգամանք էր ապահովութեան համար: Այսպիսի վայրերում գետինը միատեսակ կերպարանք և յարմարութիւններ չունի: Եթե հնարաւոր է հեշտութեամբ համայնքով մեծ համայնքից առանձնանալ, ապա չափազանց դժուար է մեհնայն համայնքի մէջ իրագործել ընդհանուր սեփականութիւն համարուած տների արդարացի և կանոնաւոր առաքումնուքը: Դա այն պատճառով, որ հողն արդիւնաւորելու համար նախ և առաջ պահանջւում էր մաքրել մացառներից, ծառերից, քարերից, ճանապարհներ անցկացնել ապա երեւելութեան համար և այլն: Իսկ դա կատարւում էր համայնքի անդամների ջան-ջանք ջանքերով: Գետական համայնքն իր հերթին բաժանւում էր բնաւորական համայնքների, որոնք իրենց անդամների քանակով և բանաւորական ոյժով տարբեր մեծութիւններ էին պահանջների տարբեր քանակով: Այսպէս

արդէն բանաւորական այժի զարծադրութեան տարբեր քանակը նոր տասկացողութիւն էր մացնում համայնական կեանքի մէջ. հարկաւ, գեաղինը նրանն էր, ով իր ջանքով այն պատրաստել էր մշակման համար: Այսպիսով բանաւորական այժի տարբեր քանակի և արտի կիրառումը գալիս էր զանազանութիւն մղելու տարատեսակ (օգտակար իմաստով) կրաւորի մէջ: Իսկ այնտեղ, ուր բնութիւնը մնում էր նախնական տեսքի մէջ, ուր նա արօտատեղի էր, անասո, ջուր՝ — մառչելի և տարիատար բոլորի համար, այնտեղ նա համայնական էր և բոլոր բոլորի առաջ: Բայց տարածական անկիւնները միայն խոտ ու բոլոր վայրերը չէին: Կային և շատ տեղեր, ուր գեաղինը միատեսակ մակերեսոյթ և յատկութիւն ունէր: Նա միայն պատում էր մշակողի և մարդման ու գիւրացման տեսակէտից արեւ նախնական աշխատանքի պահանջ չէր դնում: Այստեղ ահա իշխում էր համայնական հատատատուն կանոնը, համերայ—չարիքի տարբերութիւնը: Ի՞նչ էր ներկայացնում իրենից համերայ—չարիքը:

Ամեն մի համայնք բաղկացած է որոշ Բիւ համիսանիքից, երիք-պճեղներից, կիսաններից և պճեղներից: Հինօրեայ տարբերութիւն էր տարաբաժիններն որոշել հինգ կարգի. համերայական կամ մի ամբողջ միատար, երիք-պճեղական կամ ուշ-չարիքական (երիք-չորրորդական), կիսան կամ եռերմ-համերայական (այսինքն համերայական բաժնի կէսը կազմող), պճեղական կամ չարիքական (չորրորդական բաժին ունեցող) և կէս-պճեղական կամ եռերմ-չարիքական (կէս-չորրորդական): Այդ տարբեր տարածութիւն ունեցող տարաբաժիններն էլ համապատասխան կոչումներ էին տալիս իրենց տէրերին. համերայ, երիք-պճեղ, կիսան, պճեղ, կէս-պճեղ: Վերջին կարգի տարաբաժինները արտ էին կամ երիտասարդ բնութիւնների կամ էլ մնուատների և բայի այդ նրանք ծառայում էին. որպէս տարաբաժնութեան տատատացնող չափ: Տարերի այս չափերով բաժանումը նաև հիմք և ուղեցոյց էր ծառայում տարիների, կամ ու բերքի կանոնաւոր բաշխման համար. համերան ասելի էր տարի տալիս և բնական ծառայութիւններ կատարում, քան էլ նրանից մի տարբանով ցածր երիք-պճեղը: Համերայ-չարիքային տարաբաժնութեան, տարիարաշխութեան գործում չէր և ամեն

մի համայնական չէր կարող բան ցանկութեան մի առիճանից մեա առիճանը բարձրանալ: Միասնմը խարխլում էր ընտանեքի իրական չնչերի քանակի վրայ. համփան նա էր, որի ընտանեքը բաղկացած էր 16 հոգուց, երեք-պճեղն արդէն ունէր— 12 չնչանոց ընտանեք, կիսանը—8, պճեղը—4, իսկ կէս-պճեղը —2: Հաւանօրէն դոյզ թուերի այդ չափերն ընդունուած էին նրա համար, որ պիւղացին աւելի հեշտ կարող էր թուաբանական գործողութիւններ կատարել դոյզ թուերի վրայ, քան թէ կնոա: Բայց ընտանեքները միշտ էլ նման դոյզ թիւ անդամներից չեն բաղկանում: Ահա այդպիսի դէպքում դեր էր խաղում կէս-պճեղնոց հաղարաժինը: Նա գալիս էր, որպէս կոտորակ, վերականգնելու հաւասարութիւնը: Իսկ եթէ, ասենք, որևէ ընտանեք բաղկացած էր լինում 7 հոգուց, որեմն իր կազմի մէջ չէր ունենում մի չունչ ևս, որ հաւասարուի կիսանին, ապա այդպիսի դէպքում համայնքը այդ ընտանեքին աւելացնում էր մի դոյութիւն չունեցող չունչ և նրան հաւասարացնում կիսանին: Դա է տալիս, կիրառում էր այն վայրերում, ուր հողն ու չուրն առատ էին և լի ու լի բաւարարում էին բոլորին: Իսկ այնտեղ, ուր մի թիզ հողը, մի կաթիլ չուրը բարձր արժէք ունէր և դրանց դիջումն արեւ համայնականի կարող էր միասին անդրադառնալ միւսի կացութեան վրայ,—այդտեղ համայնքը հրապարակ էր գալիս արդէն ընկերակցութիւնների կազմակերպող: Համայնքը ամրապում էր իր անդամներին յարաբաութեան մէջ մտնել և այդպիսով կազմել համփայ-չարնքային միասնմի պահանջած միաւորները: Դա չափազանց նպատակայարմար միջոց էր վարելու, նուազ բանուրակաև այժ և արտադրողական միջոցներ ունեցող բնտանեքներից կազմելու ամրողջացած անտեսական միաւորներ: Մի նոմ, մի կտոր հողով գիւղացին հարկաւ անկարող էր ոչ ժամանակին հերկել գետինը, ոչ էլ ցանել ու բուացնել գանազան տեսակ բերքեր: Բայց այդպիսի գիւղացիների միութիւնը հնարաւորութիւն ունէր անելու և՛ մէկը և՛ միւսը: Օրինակ, յարաբաչութիւնը կէս-պճեղ կոտրակի հետ միանգամայն յաջող կերպով լուծում էին համայնականների հողի չուրջը ծագած պահանջները ու տարաձայնութիւնները: Համփայ-չարնքային միասնմը թէ անտեսական և թէ վարչա-

կան նպատակներով ճանաչում էր նաև համայնքի տանցակցերի առաքաժանումը: Տանակի մէջ մանում էին հատասար չափով համփանները, երէք-պճեղները, կիսաններ և այլն: Դա անում էր համայնական հոգաբաժանութեան, հարկու, և չրաբաշխութեան գործը դիւրացնելու համար: Համայնքը սկզբում այդ բոլորը (հող, հարկ, ջուր) բաժանում էր բուն տոհմակների, որոնք յաճախ բախտացած էին լինում ազգակից ծուխներից, ապա թողնում էր, որ տոհմակն ինքն արդէն նոր առաքաժանումներ կատարէ իր մէջ: Դա էլ համայնակցութեան տեսակէտից չափազանց նպատակայարմար միջոց էր: Գիւղական մեծ համայնքը բարդութեան չնարհիւ անկարող էր գիւղացիներից պահանջատոր բնական ծառայութիւններին, զանազան տուրքերի, ջրից օգտուելու հերթերի և նման բաների ցուցակներ պահել: Այդ պատճառով նա հեշտացնում էր իր գործը. մի քանի տոհմակների վրայ բաժանելով ամեն բան՝ թողնում էր, որ այդ փոքրիկ միութիւնները, յաճախ մօտ ազգական, բարի դրացի, ինամի և հարևան, իրենք կարգադրեն և կատարեն պահանջող գործը*): Եւ ահաւէք, թէ դրանից ինչ գործնական օգուտ էր առացւում. նախ այսօր ջուրը կապելու, դիշերապահութիւն անելու կամ արևի ծառայութեան գնալու հերթը վարդանինն է, իսկ սա հիւանդ է, ապա սրան կարևկցելով և չանաչելով փոխարինում է նրա մերձաւոր Գրիգորը և ընդհակառակը: Էլ չեն ապատում, որ գիւղը իրարանցման մէջ ընկնի, հարց ու փորձ կատարուի, գլխի ու տանուտէր ոտքի կանգնեն, ցուցակներ քրքրեն, որ վարդանին մի փոխանորդ գտնեն: Գիւղական համայնքի անդամներն անջատուած և մեկուսացած չեն ապրում, մի նեղ հոգիների տակ նրանք ճանաչում են որչ փոխադարձ պարտականութիւններ և այսպէս ամեն մի անհատ իր բախտին չի թողնուած: Այսպէսով էլ բխում է այն, որ հարկի, կոռի և բնգեսի համար պատասխանատու է ճանաչում ոչ թէ անհատը, այլ նրա տունը, նրա տոհմակը:

---

*) Сводъ матеріаловъ по изученію экономическаго быта государственныхъ крестьянъ Закавказскаго края, т. I. Тифлисъ, 1887. С. А. Егіазаровъ „Административно-Экономическій строй сельской общины въ Эриванской губерніи", էջ 17—18 և 31—36.

Հասկանալի պիտի համարել, որ բնականաբար չէր կարող ապրող և համիթայ-չարների միջոցով իր հարատև յարաբերութիւնները կանանոցում մի ժողովուրդ չէր կարող ունենալ մի արատավորելուց, ուր բաժանուած լինէր պիղծականութիւնը սրբութիւնից:

Հայ պիղակեան համայնքը մի փակ անհատական ամբողջացած միաւոր էր, որի անդամների ջանքերովն էին առացում այն բոլոր բարիքները, լինի դա անուն թէ հոգուստ, որոնք անհրաժեշտութիւն էին կազմում գոյութեան համար: Անառարկելի, հայ պիղակեան համայնքը ճանաչում էր և պատասխանների որոշ մասնագիտացում, բայց դա այն չափով, որ չափով նրա անդամները կարիք էին զգում արհեստի և մասնագիտութեամբ մի բանական կեանք թեթև կերպով խոհական պարզելու: Հայ պիղն իր քահանան ունէր, որ թէ հոգևոր հայր էր, թէ պրոց և չարի առաջն առնող, ապա նա ունէր իր սահմանը, որ մինչև ժամանակ նրա բժիշկն էր ու վիրաբոյժը, նա պարզապէս դարերի ակն էր և դրանով էլ վակում էր ներառնած մասնագէտների ցուցակը: Մնացած արհեստներին, թէ թէ վառ, հնուց էին թէ պիղացին և թէ նրա կինը: Նրանք մի չափով հետաքրքիր, որովհետև չարչախ և այդպիսով ապրում էին իրենք իրենցով, գոհ իրենց հանդ ու գաշտի, իրենց անասունների մասին բերքերով: Աշխարհից կտրուած, աշխարհին անծանօթ այդ մարդիկ՝ իրենք հետաքրքիր չէին դրսի անցուդարձերին և գոհ կը լինէին, որ դրսի աշխարհն էլ, գիտառպէս իշխանութիւնը, մոռանար նրանց գոյութեան մասին և իր թաթը չմեկնէր մատանին ու ախտին:

Այս անհատակերպի մէջ ապրող հայ պիղացին, անառարկելի, կարիք չէր զգում վարչական և դատաստանական բարդ կազմակերպութեան: Հարևանների մէջ ծագած թեթև անհամաձայնութիւնները կարող էին քննել և լուծել պիղի յարգուած ծերերը, իսկ ասն յարկի տակ պատահած տարաձայնութիւնների առիթով գաւառճեռ էր արձակում ասն գլուխը: XIX դ. քահանական թուականներին Անդրկովկասում ճանապարհորդած բարեն Հակատատուղինը հետևեալ վկայութիւնն է տալիս հայ ընտանեկան կազմի մասին. «Հայոց ազգի նահապետական

կանքը երեւում է ժողովրդի փոքր հասարակութեան, այսինքն՝ ընտանեաց մէջ: Ինձ յայտնի չէ մի ազգ, որի մէջ ընտանեական կապերը մօտ լինէին և ամուր, ինչպէս հայերի մէջ: Մինչեւ կնոջ ամուսնի են ընտանեաց պարտքերը, հայրը և մայրը, նրա բոլոր անդամները ապրում են միասին, չբաժանելով կալուածները և միանգամայն հնազանդ մնում են: Ըստ անգամ ութսուն տարեկան նահապետը ունի երեք սերունդ, չորս կամ հինգ ամուսնացած որդիներ՝ իւրաքանչիւր տարեկան, իսկ նրա որդիները: Միայ բաժանումն, ոչ որ չէ աշխատում իր համար, աշխատանքն ու չահը ամբողջ ընտանեաց օգտին է: Կան անիր, որ ընտանիքը բաղկանում է քառասուն-յիսուն մարդից: Մինչև անգամ հարսները չօժտութեամբ չեն բաժանում. ամենաքաղց ծնողների մահից յետոյ միայ հարսը առանում է հօր իրաւունքները: Բաժանումն սկսում է միայն թոռների մէջ»*): Գիւղական ընտանեկան համայնքի այս ամրութիւնը և ինքնամփոփ դայութիւնը, ինչպէս նկատեցինք, կարիք չէր զգում ունենալու բարդ վարչական և դատաստանական կազմակերպութիւններ: Եւ գիր ու տանուտէր էլ ընտրելիս նա չէր առաջնորդում այն մտքով, թէ դրանք կարևոր անհրաժեշտութիւն են իր ներքին կեանքի համար, ոչ. այլ որ նրանք անհրաժեշտ էին գրի աշխարհի հետ յարաբերութիւն պահպանելու համար, այսինքն իշխանութեան ներկայացուցին բնդունելու և ճամբելու, տարի ժողովելու, ծառայութեան գալս բերելու և այլն: Տանուտէրն ու գիրն իրենց անձի վրայ բնեռում էին ամբողջ համայնքի գործերն ու առաքելութիւնը: Հակառուսական Արտևանից առաջած մի գրութեան հեղինակ տողերն է գրում գիւղական գրի մասին. «Հայոց իրարանչիւր գիւղում ընտրւում է մի այսպիսի գիւղական պաշտօնեայ: Նա պարտաւոր է միշտ մեծատուն մօտ լինել, նրա հրամաններն առնելու և կատարելու համար: Մեծ

*) Баронъ Августъ Фонъ-Гакстгаузенъ „Закавказскій край“ ч. I, С.П.Б., 1857 г. էջ 189—190. *Բերած հատուածի մէջ մենք աննշան բնագրական փոփոխութիւններ մտցրինք: Հատուածը վերցրուած է «Կռունկից», թէև մենք մեր ձեռքի տակ ունէինք նաև Հակառուսական աղբերէն քաղուածքներ Հակառուսական ճանապարհորդութեան մասին տես. «Կռունկ Հայոց Աշխարհին» ամսագրի 1862 թ. յունուարի և փետրուարի տետրերը:*

*գիտեին նրանք երկուսն են լինում։ Նրանք ապատ են հարկաւորութիւնից և միայն են առանում բնութիւն, սակայն պաշտօնավարելու մէջ անկախ են միանգամայն և խոտանելուկ պարձած ոչ գիտի համար. ամեն մարդ փախչում է նրանցից և թաղնուում, որովհետև գիտէ, որ նրա երեսը կապ ունի պոհանչի և պատժի հետ։ Միայն ցածը կարգի մարդիկ էին համաձայնում ընդունել այս պաշտօնը»։ Հատանական ոխի համար, որ առնուտէրն ու գիրքն այս նկարագրի պաշտօնեաներ էին այն շրջաններում, որոնց կառավարիչները ծառայում տարբերում էին սեպհական ժողովրդից կամ թէ այդ գիրքին էին տալել քաղաքացիութեամբ։ Այնտեղ, ուր կառավարում էր տհմական միտքը, որ անդադրում անհչում էր տգաւոսել իսկի անհրեա պոհանչներից և այդ պատճառով միշտ ձգտում էր հաչտ լինել ժողովրդի հետ և ապահոված ունենալ նրա համակրութիւնը և աջակցութիւնը,—այնտեղ անկարելի բան էր, որ նա իր առօրեայ գործերում այնպես գործեցնէ ցոյց տար, որ ժողովուրդը փախչէր նրան անհանգիստ։ Մենք պէտք համանակիցների վկայութիւններ չունենք միքների և նրանց առօրեայ ժողովրդի փոխ-յարաբերութիւնների մասին։ Որ նրանք սոսկ իսկական պաշտօնեաներ չէին, դա պարզ է։ Պարզ է հէնց նրանից, որ նրանք անդադար քաղաքականութեամբ էին զբաղում և ջանում էին թօթափել իսկական լուծը։ Այս հանգամանքը, կրկնում ենք, այլ կերպ պէտք դատելէր նրանց և ժողովրդի փոխ-յարաբերութիւններն։ Դրանք պէտք է լինէին մեծ չափով մանրամասն և թեթև։ ձիշտ է, այդ մասին մենք չունենք, ինչպէս ասացինք, ժամանակակիցների վկայութիւնը, բայց մեզ միանգամայն հասկանալի են թուում այն սենեկութիւնները, որ միքների և ժողովրդի փոխադարձ վերաբերմանքի մասին հաւաքել է հայ ազգագրոց պ. Եր. Լալայեանը *)։*

Միքների իշխանութիւնն ըստ պ. Եր. Լալայեանի տարածւում էր ժողովրդի ոչ միայն մարմնաւոր, այլ և հոգևոր գործերի վրայ. նրանք էին պահլի թագուհութիւն տալիս կամ

*) Եր. Լալայեան՝ «Դանձակի գաւառ», հ. I, Թիֆլիս, 1900 թ. էջ 41—50.

ամուսնության յուծում, նրանց բարեհաճությամբ էին բահանաներ ձեռնադրում: Չորս կարգի էր նրանց մարմնաւոր իշխանության գործառնութիւնք. 1) հարկ հաւաքել, 2) պինաւոր առնել, 3) դատ կռիւ և 4) կարգ պահպանել: Դրանք այն իրաւունքներն են, որ ունէին նաև խառնական միրոյթները կամ նոյներնները: Սակայն մելիքներն իրենց պինաւորական այժը, որ ժողովրդական միլիցիա էր, իսկ խառնական բանակի համար չէին պատրաստում, այլ և յաճախ խառնական առաջնութիւնների դէմ: Մելիքներին առարկելու իշխանութիւնք մեզ արդէն ծանօթ առնուաէրն ու պղիրն էին: Նրանք կամ ընտրում էին ժողովրդից և հաստատում մելիքից կամ թէ վերջինս իր իշխանութեամբ էր նշանակում նրանց: Տանուտէրի և պղիրի պարտականութիւնները էին. կարգ պահպանել, մանր գործեր տեսնել, հարկ գանձել և պինաւոր հաւաքելով՝ նրանց առաջնորդել մելիքի մօտ: Տանուտէրն իր ծառայութիւնների փոխարէն բանաւորական օգնութիւն էր առնում ժողովրդից:

Հետաքրքրական է մելիքների գատական իշխանութեան չափն ու եղանակը: Այդ իշխանութիւնը գործադրում էր կամ ինքը մելիքը կամ առնուաէրը: Վերջինս, ինչպէս ասացինք, յատկացրուած էր քննելու և գատելու մանր գործերը: Տանուտէրի գատից դժգոհ մնացողը բողոք էր մելիքին, որի գատավճիռը վերջնականն էր արդէն: Ինքը մելիքը քննում էր ծանր յանցանքները: Թէև նրա վճիռը վերջնական էր համարում, բայց սակաւ չէր պատահում, որ չհաւատացած կողմը՝ թշնամանալով նրան՝ գնայէր մի ուրիշ մելիքի հատանաւորութիւն կամ թէ հայցէր խաների արդարադատութիւնը: Հարկաւ այդպիսի անձը թողնում էր իր բնակատեղին և այլոս մելիքի թշնամին էր:

Գատին անմիջապէս հետևում էր վճռի գործադրութիւնը՝ գիրքի կամ մելիքի գատաւորի ձեռքով: «Վճռին անձանոթացուած չէր յանձնում ծառային, այլ միայն մի թղթի վրայ խփուած մելիքի կնիքը և կամ նրա համրիչը: Վճռի էութիւնը բերանացի բացատրում էին ծառային, նա էլ՝ գատապարտուածին և իրը հաստատութիւն իր առածին՝ ցոյց էր տալիս մելիքի կնիքը կամ համրիչը»:

Դատաստանական օրէնքներ չկային։ Դրանց փոխարինում էր սովորութային իրաւունքը կամ մելիքի բարեհայեցողութիւնը։ Դատավարութիւն մելիքը անանում էր ամեն անգ. առնը, փողոցում, առհասարակ ուր որ նրան հանդիպէին և դատ խընդրէին։ Առաւելապէս ընդունուած էր դատեր անանել կիրակինները, երբ ժողովուրդը ազատում էր աշխատանքներից։ Արդարն ու մեղաւորը չսկսու պէսաւոր միջոցը համարում էր երդումը։ Պատիժներից ամենատարածականը և ամենադրծածականը ձեռն էր և տուգանքը։ Վերջինս մելիքի օգտին էր։ Հարկաւ, առաջադրքային պահանջը լրիւ բաւարարում էր մեղաւորի կողմից*)։

Ամենահետաքրքրականը և մելիքների իսկական նկարագրի բացատրութիւնը մենք պահում ենք այն առանձին յարաբերութիւնների մէջ, որ կային մելիքի և գիւղացիների մէջ։ Մելիքի խոհանոցից ճաշ էր առանում ամեն մի գանգատի եկած գիւղացի և պատահական հիւր։ Գանգատուորը չէր կարող գալ մելիքի առանը և վերադառնալ առանց ճաշելու։ Մելիքին ամեն տեղ ընդունում էին ուրախ կանդնելով. նա բոլորին էլ «երեխայք» էր անուանում, անգամ ծերերին։ Նա, որպէս մելիք, ամենի հայրն էր համարում։ Մելիքը մանակից էր ժողովրդի ուրախութեանն ու սխրութեանը։ «Հարսանիքի ժամանակ հարսնքաոերը գալով գալիս էր մելիքի դուռը, մի ոչխար կամ գառ, 2—3 հատ հաց, մի շիշ գինի նուէր բերում և խընդրում նորեկ գանուել հարսանիքին։

Մելիքը գրամ էր նախրում հաց բերողին, որ հացթուխ կողմից էր լինում։ Ցնաց գաւել-գաւառի առաջնորդութեամբ գնում էին հարսնատուն, ուր բոլոր հանդիսականները վեր էին կենում և թագուոը գալիս համբուրում էր մելիքի ձեռքը։ Պարզ

*) Գ. Լալայեանը յիշում է և մահուան պատժի իրաւունք կախաղանի և այլ միջոցներով (այրուելը, ձիու պոչից կապելն ու քարշ տալը), սակայն մենք դժուարանում ենք ընդունել, որ մելիքները օժտուած լինէին այդ իշխանութեամբ։ Նրանք հաւանօրէն ի կատար էին ածում ժողովրդի բուռն պահանջը վերացնելու արատաւոր անպատիժներին (պռոնիկ, լրտես, գաւառան), բայց իրենք այդ նահապետները (մենք այդ կը տեսանենք) հազիւ թէ մահուան պատժի իրաւունքն ունենային։

է, որ առաջին տեղը, առաջին բաժինը, առաջին բաժակը սրան էր պատկանում։

Ոչ միայն առաջին բաժակը նրա կենացն էին խմում, այլ և բոլոր միւս կենացների ժամանակ կրկնում էին «Մելիքի մին օրը հազար» դարձուածքը։

Երբ նորապսակները պատրաստւում էին հարսի տնից փեսայի տուն գնալ, նախ և առաջ դաւոլ-դուռնի առաջնորդութեամբ գնում էին մելիքի տունը և դռան առաջ կանգնում։ Մելիքը հանդիսաւոր կերպով դուրս էր գալիս, մակարները ուրախութեան ազազակ էին արձակում, նորապսակները համբուրում էին մելիքի ձեռքը և սա մի «խալաթ» (նուէր) էր տալիս նրանց։

Նաւասարդին բոլոր ժողովուրդը խնձոր, ընկոյզ, պինդ առած՝ գալիս էր շնորհաւորելու մելիքի նոր տարին և հիւրասիրւում մելիքից ճաշով։ Նոյնն էր լինում և միւս տօներին, բայց աւելի պարզ կերպով։

Ինչպէս որ մելիքը մասնակից էր ժողովրդի ուրախութեան և սխրութեան՝ այնպէս էլ ժողովուրդը բաժանում էր մելիքի ուրախութիւնն ու սխրութիւնը։ Երբ մելիքը պատերազմ էր իր որդուն կամ աղջկան՝ ամբողջ ժողովուրդը հօրեն օր հօր պիշեր քէֆ էր անում և բազմաթիւ աշխարներ ու գառներ նուէր բերում»։

Մելիքի մահը սուգ էր բոլորի համար։ Նրա մահուան քառասունքը տարւոյ յիսոյ ժառանգը հրաւէր էր անում և շնորհաւորանքներ ընդունում իր նոր պատուաւորութեանների շէմքին։

Մելիքները առհասարակ խնամիանում էին իրար հետ, բայց պատահում էր, որ պետական աղջիկ էլ էին տալիս կամ աղջիկ առնում։ Ժողովուրդն առհասարակ չէր խրախուսում այդ, նոյնիսկ վատասերում էր համարում։ Մելիքը նրա աչքին այնքան էր յարգի, որքան քաջ, յաւ պինդուրի և կռուողի հաշակ ունէր։ Մելիքներից շատ քչերն էին պրպէտ լինում։

Մելիքների առանին կնանքն այս նկատառքից մեր անհանգամանք ենք, որ նրանք ժողովրդի համար պարզ նահապետներ էին։ Ինքը ժողովուրդն էլ ձգտում նրանց մէջ տեսնել որպէս

հեղինակութիւն։ Դրան ապացոյց այն երեոյթը, որ նա խէթ աչքով էր նայում մելիքի և հասարակ գիւղացու բարեկամութեան։ Օրքան էլ նախնական կենցաղի տէր լինէր հայ գիւղական համայնքը, այնուամենայնիւ՝ ներքին որոշ կարգապահութեան և դրսի թշնամիների դէմ առաջնորդ ունենալու համար՝ նրան անհրաժեշտ էր որոշ հեղինակաւոր և միջձաւոր իշխանութիւն։ Մելիքները նրա խորհրդատուն և գիւղական առաջնորդներն էին։ Նրանք աւելի էին համայք ունենում, երբ բարեկամ էին լինում դրբք և օրութիւն անեցող հարևան մելիքներին։ Ջ որ այդպիսով համայքն ապահովութիւն էր գտնում։ Ցեղապետների այդ մերձութիւնը միանգամայն անհրաժեշտ էր այդ յեղյեղուկ և վտանգալից ժամանակներում. դա իրօրինակ ռազմական մի դաշնակցութիւն էր։ Հասկանալի է ուրեմն, թէ ինչու էր ժողովուրդը դժգոհում, երբ մելիքը ամուսնութեամբ չէր նպաստում ապահովութեան, մի բան, որ անկարող էր տալ հասարակ գիւղացին։

Հարկաւ, մելիքը, որ մատակարում էր ժողովրդի ապահովութեան մասին, որ վարում էր նրա կարգապահական և դատական գործերը, չէր կարող անել այդ բոլորը, եթէ նա միանգամայն ազատ չլիներ անհատական հոգսերից։ Ժողովուրդն էլ՝ հոգալով նրա նիւթական պահանջները՝ գիտէր, որ ինքը մի պրոլետար արարած չէր կերակրում, այլ հասարակութեան մի պետական անդամ։ Մելիքի նիւթական պահանջները մեծ չէին կարող լինել այդ ժամանակաշրջանում։ Ձախ կողքը հասկացում էր լաւ անունդ, մի բան, որ բնական բերքերով լուսի կարող էր բաւարարել գիւղացի ժողովուրդը։ Եւ եթէ անգամ մելիքն ագահ լինէր, աւելի պահանջէր ժողովրդից,—դա աննպատակ մի բան կը լինէր, որովհետև հարկն ու տուրքը լատ մեծ մասին առնում էին բերքերով, որոնք հնչուն դրամի չէին վերածում, ապա ուրեմն և պետք մնային ու վեր էին մելիքի մտածումներում։ Ցետոյ և նկատի ունենալով, որ մելիքը ժողովրդի հետ մերձական յարաբերութիւնների մէջ էր, պետք ընդունել, որ նրա մատանի ունեցածը ոչնչ ժամանակ նորից վերադարձում էր ժողովրդին։ Այդ հանգամանքն ինքնին բաւական էր, որ ժողովուրդը չդժգոհէր մելիքի պահանջների դէմ. նա

տալիս էր, բայց գիտէր, որ պիտի նաև առանձայ կարիքի ժամանակ։ Հարկի ու տուրքի անասինների ու չափերի վրայ մենք այստեղ չենք անդրադառնում, որովհետև այդ մասին խոսք լինելու է յետագայում, խառնվածների մէջ ասլրող հարկային սիստեմի մասին ընդհանրապէս խօսելիս։

Եւ այսպէս, այժմ մենք ծանօթ ենք այն վարչական ու դատական կարգերի հետ, որոնց մէջ ապրում էր խառնվածների գիւղական հայ ժողովուրդը։ Սակայն հայերն ապրում էին նաև քաղաքներում, ուստի և պահանջւում է իմանալ, թէ ինչ վարչական—դատական տարբերութիւն էր մտցնում քաղաքը նրանց կեանքի մէջ։

Անտարակոյս պիտի լինի նկատել, թէ խառնակեան քաղաքները—Գանձակը, Նուխին, Շուշին, Շամախին, Երևանն ու Նախիջևանը—խիստ տարբերւում էին մեծ գիւղերից։ Նրանք նախ և առաջ ռազմական և ապահովութեան տեսակէտից պարիսպներով և այլ միջոցներով ամրացրած վարչական կենտրոններ էին։ Այդ քաղաքների բնակիչներն ըստ մեծի մասին նոյն պարապմունքն ունէին, ինչ որ և գիւղացիները։ Նրանք նոյն երկրագործներն էին, նոյն այգեպաններն ու անասնապահները։ Քաղաքների բնակչութեան միայն մի աննշան մասն էր կարուած հողից և զբաղուած վաճառականութեամբ ու արհեստներով։ Եւ նկատելի տարբերութիւն կար վարչական և դատական տեսակէտից,—դա կայանում էր նրա մէջ, որ վաճառական և արհեստաւոր խաւերը ճանաչում էին առանձին-առանձին համայքներ, նախ հարկատուութեան, ապա նրանց ներքին ինքնավարութեան տեսակէտից։ Մի անգամ արդէն ասել ենք, որ քաղաքային բնակչութիւնը վարչական կողմից նկատում էր առանձնապէսներին, որ գլխով էր կոչւում Գանձակում և Երևանում, դալարէկ—Շամախում և այլն։ Առանձնապէս առանձին պաշտօնեաներն էին հարիւրապետներն ու առանձնապետները (լուրջի և չաուշ), որոնք գանդան էին կատարում հրամանների կատարման և ապահովութեան վրայ։ Սակայն նրանք չէին խառնւում վաճառական և արհեստաւոր բնակիչների դատական և հարկատուական գործերին։ Այստեղ էր ահա գլխաւոր տարբերութիւնը, որ կար գիւղացու և քաղաքացու մէջ։

Քոպտքացի վաճառականը և արհեստաւորը կազմակերպուած էին համքարութիւնների մէջ։ Նրանք ունէին իրանց յատուկ պետերը. ընդհանուր համքարական կառավարիչ (մելիք), առանձին համքարական դրան (ատաբաշի), նրա օգնականները (ագաախիալ), պանձապահ և աւրհանդակ (իքիմ-բաշի)։ Իրենց վէճերն ու տարաձայնութիւնները նրանք կարող էին վերջացնել առանց դիմելու խառնական վարչութեան, իսկ իրենց պաշտպանների աջակցութեամբ և միջամտութեամբ։ Խառնական իշխանութիւնը՝ պատասխանատուութեան և տարկի տեսակէտից՝ վաճառական և արհեստաւոր անհատներ չէր ճանաչում, այլ նրանց մութիւնները՝ յանձին ընդհանուր կամ առանձին համքարական պետերի*)։

ԳԼՈՒԽ VI

ԽԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆ.— ՀՈԳԱՑԻՆ ՊԱՑՄԱՆՆԵՐԸ. —ԴԱՍԵՐԻ ՓՈԽ-ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՀՈԳՒ ՇՈՒՐՋԸ.— ԴԻՒՂԱՑԻՈՒԹԵԱՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆ ԸՍՏ ԿԱՐԳԵՐԻ։

Քանի անգամ արդէն ասուել է, որ խառնական կառավարութիւնն իր պետական ուշադրութիւնը կենտրոնացնում էր հարկ և տուրք հաւաքելու վրայ։

Սակայն մինչև հարկերի և նրանց ժողովման եղանակի քննութեան դիմելը մեզ անհրաժեշտ է ուսումնասիրել նաև խառնութիւններում տիրող հողային պայմանները, հողի սեփականութեան դրութիւնը կամ նրանից օգտուելու իրաւունքները։ Այդ անհրաժեշտ է այն պատճառով, որ հողն էր տալիս խառնին նրանց նկամտանների խոշորագոյն մասը, որ նրանից օգտուելու եղանակն էր որոշում խառնութիւնների արտօնեալ և ոչ-արտօնեալ դասերի փոխ-յարաբերութիւնները։

---

*) Համքարական կազմակերպութիւնների մանրամասնութիւնները մենք թողնում ենք դարձեալ ցետագայում։ Այդ անում ենք այն պատճառով, որ պարսկական տիրապետութեան ժամանակ եղած համքարական կազմակերպութիւններն իրենց դոյութիւնը անփոփոխ պահպանեցին և առաւել նուաճումից ցետոյ։

Հողի մասնաւոր սեփականութիւն չկար պարսկական խառնակութիւններուն։ Չկար զա և Վրաստանին պատկանող Թրքական չրջաններուն (Բոլչալու, Ղազախ և Ջամշադիլ) և Ախալցխայի փաշայութեան մէջ։ Հողը համարուած էր «Աստուծոյ պարգեւ» և պետական, ասկէ ճիշտ, Թագաւորի սեփականութիւն։ Այդ կանոնից դուրս էին համարուած անասունները, պարէնները ու այգինները։ Դրանց մասնաւոր սեփականութիւնը ճանաչուած իրողութիւն էր։ Մնացածը—վարելատող, խառատաբք, անասուն, արօտատեղի և ջուր—մասնաւոր ոչ էին ճանաչում. նրանցից օգտւում էին գիւղական համայքները և Թափառական ցեղերը։ Ընդհ. երկրի չափազանց նօսր բնակչութեան և ազատ հողերի առատութեան՝ ժողովուրդների տեղափոխութիւնն ընդհանրացած երեւոյթ էր։ Հողը որևէ շահ տալիս էր այն ժամանակ, երբ նրա վրայ հաստատ բնակութիւն կար։ Մեր օրերի կալուածատիրութիւնը, երբ հնարաւոր է յայն տարածութիւններ ունենալ և այն մշակել վարձու ձեռքերով կամ կապալային եղանակով, անհնարին բան էր խանութիւններում։ Այս պատճառով հողն ինքնին արժէք չունէր, եթէ նա բնակեցուած չէր նամակից ժողովրդով։ Այդ ժողովուրդն էլ, ինչպէս ասացինք, միշտ շարժման մէջ էր։ Նա կամ վրանարնակ խաշնարած էր, որ հէնց իր արտադրեակներովն ընդհ. ոչ մի կայուն և հաստատ բնակութիւն չէր առնում, կամ թէ երկրագործ-գիւղացի էր, որ քաղաքական յեղյեղուկ և մշտափոխ դրութիւնն պատճառով ստիպուած էր մի աչքը միշտ յառած պահել երկրի անասնակ խլշների կամ հարեւանների ագահով անկիւնների վրայ։ Պէտք է մոռանալ, որ այդ ժամանակ պատերազմը, արշաւանքն ու կողոպուտը նոյնպէս արտադրեակներից էին։ Ահա ի նկատի ունենալով այս հանգամանքները՝ կարելի է հասկանալ, թէ ինչու խանութիւններում արմատ չէր գցում հողի մասնաւոր սեփականութիւնը, թէ ինչու գիրք և արօտութիւն կարելի էր ձեռք բերել ոչ թէ հողի շահագործմամբ և հողային կալուածներով, այլ ժողովրդին կառավարելով։ Այդ կառավարիչներն էլ երկու կարգի էին. խաներից նշանակուած պաշտօնեաներ և նրանցից ճանաչուած ցեղապետներ։ Վերջին կարգի պաշտօնեաներ էին քրդերի և բազմաթիւ Թափառական ցեղերի պետերը,

ինչպէս նաև, մեր կարծիքով, հայ ասհմանական մելիքները, թև վերջիններս կառավարում էին հոգատարծութեան սակաւ մի ժողովուրդ: Պարզ է, որ մի տեղ, ուր չկար հողի մասնաւոր սեփականութիւն, ուր ժողովուրդն ըստ մեծի մասին դեռ չէր նաևել հողի վրայ,—այնտեղ չէր կարող լինել ճգնաւորութիւն կամ նման որևէ ուրիշ ծանր կախեալ դրութիւն:

Խանութիւնների հետազօտողներն այդ են չէշտում: Սակայն ճգնաւորների բացակայութիւնը նրանք բացատրում են նրանով, որ իսլամը, որպէս կրօն, արգիլում էր այդ: Բայց մեծ քրիստոնէութիւնը խրախուսում էր ճգնաւորութիւնը կամ թէ նրա անխորտակ կերպով ընդունած իմաստը հաշուում էր այդ դրութեան հետ: Ո՛չ: Եւ սակայն, չնայած դրան, քրիստոնեայ վանականները ճգնաւորական երկիր էր, այն էլ ամենախստաշունչ և ծանր կարգերով: Չէ, հետաքրքիր անկարող էր անօրինել երկրի անհետաքրքիրը: Իսլամը Թափառական ժողովրդի կրօն էր հէնց իր ծագման սկզբից: Հասկանալի է, որ նա չէր կարող դրական պատմական տալ հոգային մասնաւոր սեփականութեանը, մի բան, որ չկար: Քրիստոնէութիւնը, որ հրապարակ եկաւ որպէս լումպէն-պրոլետարիատի կրօն, նոյնպէս դէմ էր մասնաւոր սեփականութեանը: Նա նոյնիսկ կոմմունիզմ էր քարոզում, սակայն ոչ թէ արտադրական, այլ միայն սպառողական: Քրիստոնէութեան և մահմեդականութեան ծագումից յետոյ անցան շատ տարիներ, փոխուեցին այդ կրօնների ծագման պատճառները հանդիսացող տնտեսական յարաբերութիւնները և փոխուեց նաև նրանց վերաբերմունքը դէպի սեփականութիւնը: Բայց նախորդ դարի սկզբում Անդրկովկասի պարսկական գաւառները դեռ ևս ապրում էին մի այնպիսի կենցաղով, որ նրանց պահանջները և կրօնի թելադրանքները չէին կորցրել իրենց նախկին նշանակութիւնը: Չէ, իսլամը չէր ճգնաւորութեան բացատրը. անհատական պայմաններն էին, որ արգելք էին հանդիսանում նրա տարածմանը: Որ իսլամը պատրաստ չէր կանգնում մարդը մարդուն ատելութեան և նիւթակիւ պատերազմին,—դրա փառաւոր ապացոյցը կարող է ծառայել սուրբ Թեան ինախոտուրը, որ համառօտած երևոյթ էր մուսուլմանական երկրներում: Ուրեմն, այդ ինչպէս է պատահում, որ

ճշտասիրությունը բացատրող խլամը հանդուրժում էր, որ իր չուխանների վրան ատլասե մակիավճառները և ցուցադրին իրենց «ապրանքները՝» բաղկացած ոչ միայն «անհատաններից», այլ և ջհրմևառնդ «հատատագնաններից»: Պրինում ենք, մեն-միայն այս հանգամանքը ջրում է խլամին վերագրած բարձր արժանիքները:

Պարսկական խանությիւններում ճշտասիրություն չկար, որովհետև ժողովրդի նատակնացություն, կայուն քաղաքացիական կեանք և հոդի մասնատար սեփականություն չկար: Այդ խանությիւնների նոր բնակչության չնորհիւ ունկի գնահատական էր մարդը, քան թէ հողը: Խանները միմիանցից ժողովուրդներ էին գերում, խստասիրտ հսծ բազմությիւններ էին զուր տեղ թափում հին ծննդավայրերից և նրանով բնակեցնում իրենց երկիրները: Պարզ է, որ այսպես ամեն-մի չնդունած պայման և նոր ծանրություն առաջ կբերէր արտագրի, իսկ դա ձեռնտու չէր խաներին:

Այժմ տեսնենք, թէ ժամանակից վերաբերմունքներն ինչպէս են նկարագրում հողային պայմանները պարսկական խանությիւններում:

«Ամբողջ Պարսկաստանում ճշտական դրության չկայ,— ասում է Ղարաթաղը հետազոտող Ձուբարիևը*),—ապա և Ղարաբաղում, որ կազմում է Պարսկաստանի մի նահանգը, մինչև վերջին խան Մեհտի-Ղուլին չկար և դրա տուները: Այս խանը, յանձնելով իրեն ամենայն մեղսության և ճշտության, աչքաթող էր անում իր երկրի գործերը, թողնելով, որ գիւղերը կառավարեն իր աբեղիները, որոնց մեծարել էր բէկ անուանով: Բէկերն էլ, կառավարելով գիւղերը կողոպտում և բռնության իրաւունքով, պարտաւոր էին խանին տալու հողի և գլխի տուրքեր, թէ նրա սպրուստի և թէ Թեհրանի հարկ վճարելու համար, որ հաւասար էր ութ հազար ռուբլու (червонецъ): Սակայն՝ ինչպէս երևում է խանի բոլոր թղթերից՝ նա գիւղերը տալիս էր ոչ իրրև ժառանգական սեփականություն, այլ ամենի փոխարէն արուշ անձի և այն էլ այնքան ժամանակով, որքան գիւղի առաջին ծառայության մէջ էր. այդ դէպքում էլ տալիս

*) Акты, т. VII, № 411, отъ 20 апрѣля 1830 г.

էին ոչ թէ բնակիչները, այլ նրանց մշակած հողի նկամուտները։ Խանների իշխանութեան ժամանակ,—ասում է մի այլ պաշտօնական թուղթ *),—մատուցմանական գառները բաժանուած էին մահալներին։ Ամեն մահալ իր կառավարիչն ունէր, նրա բնակութեան տեղում մահալխանում յաճախ լինում էին մի քանիսը։ Մահալի կառավարիչների քանակը կապուած էր այն ապրուստների և նշանակութեան հետ, որ ունէին խանի վրայ նրա մերձաւորները։ Այդ դարում, նայիբ, նայիսկ իշխանի կոչուած կառավարիչները, որոնց կառավարութեանն էին յանձնում մահալներ և գիւղեր, երբեմն (ընդգծումը մերն է. Գ. Ա.) իրենց օգտին առանում էին բոլոր նկամուտների մասնաւոր մասը, ծառայ՝ կարիքի համեմատ, կենսական պաշար՝ ընտանիքի համար և նրանց հետևին էլ ընդունում ու հիւրասիրում էին ժողովրդի հաշուին։ Ժողովուրդը երբեմն պարտաւոր էր բանեցուր համաձայնութեամբ հերկել նրանց համար հողը, կամ թէ նա այդ անում էր խանի կամքով, ապա օգնում էր հնձել ու կալսել թէ գիւղացիների ձեռքով ցանած հացը և թէ առչպարներին։ Մի քանի գիւղեր տալիս էին նրանց նաև խանից որոշած քանակով առչպարներ։ Կառավարիչները առանում էին հարստանիրատուժին (քօյ-փայի) և առանձին տասանորդ գառական նեղութիւնների համար. օրինակ, երբ կողմերը հաշուում էին՝ վէճի նիւթ դարձած առարկայի արժէքի տասնորդ բաժինը։ Այդ նոյն չափով վարձատրութիւն նրանք առնում էին գողերի հետապնդումից կամ թէ աւազանքով պատժածներից, որ կոչում էր ջերմա։ Թոյլատրելի էին նաև գրամական նուէրներ (իմա կաշառք Գ. Ա.)։ Հարկահաւաքութեան ժամանակ, եթէ ժողովուրդը կանխօրէն համաձայնութեան էր գալիս, ապա նայիբի կամ դարոգայի օգտին հատքում էր որոշ գրամական ընծայ, որ կոչում էր տան-փող (օթաղ-խարջի)։ Պաշտօնական մի այլ թուղթ **), որ վերաբերում է այժմ Գանձակի նահանգի Գանձակի և Ջուանշիրի գաւառներում ընդարձակ կալուածներ ունեցող հայազգի Մելիք-Բէգլարեաններին, այն մերն է որ-

*) Акты, т. VII № 412, отъ 22 апрѣля 1830 г.

**) Акты, т. VI а, № 1320 Всеподданѣйшій рапортъ ген. Ермолова, отъ 7 сентября 1824 г.

ծաթծում, որ նախորդ դարի 20-ական թուականներին, այդ տոհմը 20 գիւղերի ժառանգական տէրց բարձրացնելով իր անդամների մէջ՝ նոր սկզբունք է մտցնում Ղարաբաղի հոգեւորական պայմաններում: Կալիսաի կուսակալ գնելով Երմոլով հաղորդում է Պարսկր, որ Ջաւշուայ դատարանի քննութիւնը և խանի հին պաշտօնեաների վկայութիւնն ապացուցանում են, որ Ղարաբաղում Վրաստանի նման ճորտութիւն չի եղել, որ գիւղերն էլ արուեստս են եղել մելիքին, որպէս վարչական անձի, և ոչ թէ նրա ազգականներին եւս: Նա մատնաշում է նաև, որ Մելիք-Բէգլարեանները ոչ մի տաւտամ կալուածպատիր չունեն, որ կան միայն մի քանի թոթիր այն մասին, թէ նրանք դեռեւան ժամանակներում արքիներից առել են ջրատպեներ, այգիներ և այլ արքեւտատեղիներ: Երմոլովն ապացուցում է, որ ինքը գտնում է նպատակայարմար և արդարացի միջոց այդ տոհմի գանազան անդամների պատիժները և 20 գիւղերը, որպէս արքատութիւն, շնորհել վերջին մելիքի՝ Փրկոնի, ժառանգներին, բայց միայն մի պայմանով, որ այդ գիւղերի բնակիչները երբէք ճորտ չեն համարուիլ: (Փակագծի մէջ ասենք, որ Մելիք-Բէգլարեանները յետ գանգատով Վրաստանից, որ նրանք ազատուած էին գանձ Ղարաբաղի Իրտհիմ-խանի տարածանքներից, ապարժան ունէին՝ յիշեալով առանձին ուժին՝ հայ գիւղացիներին ճորտական չի նիմարիլ): Ղարաբաղում այս կերպ էր գաղափարում տարածուած և բէկի տարբեր վարչական իրաւունքները, որով ոչ առաջինը ճորտ էր, ոչ երկրորդը-անվանաւէր: Տեղի ունէր այն, ինչ եղել է բոլոր յետամնաց երկրներում, երբ պետական պաշտօնեան իր ամենամանր գաղափարական ծառայութիւններին գիմաց վարձատրուել է բնակչի բերքերով և ժողովրդական ծառայութեամբ՝ նրա անհատական մէջ: Որ այս գրութիւնը վերջ ի վերջոյ պիտի բերէր տալի մասնաւոր անկախանութեան, ինչպէս այդ կատարուել է միջնադարեան Եւրոպայում, —դա գուցէ և կասկածից դուրս լինի, բայց յամենայն դէպս նախորդ դարի սկզբում Խանութիւններում տալի մասնաւոր անկախանութիւն իր կայուն գրութեամբ գոյութիւն չունէր, այլ նկատում էր նրա անկախացման պրոցէսի սկիզբը:

Այժմ տեսանենք ինչ կարգեր էին ախտում Ջիրաան-Ջամախխում: Վասիլիյ Լեոպոլբաուվը հաղորդում է*) «Խանական վարչության ժամանակ բէկերը կազմում էին բարձր դասակարգի մարդիկ, մի չափով նման մեր (այսինքն՝ ռուս. Դ. Ա.) ազնվականության, բայց այն դանազանությամբ, որ խանը, չը զբաղվելով նրանց բէկական կոչումից, կարող էր մարմնական պատիժ տալ և յետ առնել կալուածքը: Բէկերն երկու կարգի էին. ոմանք տոհմական ու հին և իրենց ասպիճանը ստացած պարսկական շահերից, մյուսներն իրենց ասպիճանը պարտական էին խաների շնորհին: Առաջիններն յարգուած էին ժողովրդից և յաճախ չէին խոնարհում խաներին, բայց միշտ մնում էին նոյն իրաւունքների և արտօնութիւնների մէջ, ինչպէս և վերջիններն: Բէկերի իրաւունքների մէջ դրականութիւն չկար. դրանք պարզում են անչափ կալուածների չափը ստիպուած յարաբերութիւններից և վիճերի կառավարութիւնից: Այդպիսի վիճեր երկու տեսակի էին. ոմանք, որպէս հասարակ կայք (арешда), շնորհում էին շահերից և խաններից, մյուսները կազմում էին գաղթականութեան միջոցով, ուրի ճիշտ ասած նրանց ժողովուրդները շողմիով գալս էին հանում հարևան խանութիւններից. գաւառներից կամ արտաքսմանից: Վերջին վիճերը կոչում էին խալխ, այսինքն իրր թէ անվտանգութիւն: Բէկն իրաւունք չունի վաճառելու շինականներին, բայց կարող է կամայական կարգադրել իր տոհերը բոլոր շինութիւններով հանդերձ, բայց դա միայն խալխ վիճերում. Մնացած վիճերում նա այդ իրաւունքը չունի, որովհետև այդտեղ հողը նրան չէ պատկանում, այլ համայնքին, և այդ հողից բաժին է հանում բէկի ցանքի համար, որը մշակում է ևվրեզով, այսինքն վիճական համայնքի օգնութեամբ:

Բէկ կոչման հետ կապուած էին անձնական ծառայութիւններ դէպի խանը կամ ուրիշ առաւելութիւններ: Նրանց ծառայութիւնների վերաց, որպէս վարձատրութիւն, կառավարելու համար արում էին վիճեր արդ եկամուտներով: Քանի բէկը վայելում էր խանի պարմանութիւնը, այնքան էլ նա օգտում

*) Обозрѣніе Россійскихъ владѣній за Кавказомъ, ч. III С.П.Б. 1836 г. ¼ 63—65.

էր այդ իրաւունքներից. հակառակ դէպքում կորցնում էր բոլորը: Շատ սակաւ էր պատահում, որ այդ իրաւունքները ատրճանէին նրանց սեռունդների վրայ: Ինչպէս առաջ, նոյնպէս և նոքին ժամանակ բէկերը սովորեն չէին զանազանում հասարակ ժողովրդից. մեռնում կենդանում՝ նրանց յատուկ էր մեռնոյն ապիրատութիւնը: Գիւղերի կառավարութիւնից զրկուած հարստութիւնն էր նրանց միակ առաւելութիւնը:

Այս յատկանիշները, որ կայ են սկսում Զարեհից, Գանձակից, Ընթի և Շիրուանի իշխանութիւններում առնուած դասային և հարկային յարաբերութիւնների վրայ, մեզանում ժամանակ մատնանշում են, որ ասատական դասը այդ միջոցին կերպարանափոխում էր երկու ուղղութեամբ: Առաջինը հասարակական շերտաւորման ուղին էր, երբ հասկերի ծայրում, հենց կեանքի զարգացման և բարդացման շնորհիւ, հանդէս էր գալիս իշխանաւորը, որպէս ռազմական ոյժի և համայնքի ապահովութեան ներկայացուցիչ: Երկրորդ ոյժը, իշխանական իշխանութիւնն էր, որ արհեստական միջոցներով, եթէ կարելի է այդպէս արտայայտել, առնձում և բաղմացնում էր մի արտօնեալ դաս: Մեր բերած վկայութիւնները ցոյց են տալիս, որ ժողովուրդը յարգում էր ասմական բէկերին: Դա հասկանալի բան է: Ասմական բէկերն իրենց ծագումը առացել էին հասարակական անհրաժեշտութիւնից: Նրանք, ինչպէս հայ ասմական մելիքները, շարունակում էին մնալ նահապետների դերում: Այդպէս չէին խանական բէկերը: Դրանք օտար մարդիկ էին, որոնք քծնութեամբ հասել էին բարձր աստիճանի և իշխանաւոր կարգուել ժողովրդի վրայ: Գիւղերի կառավարութիւնից զրկուած հարստութիւնն էր նրանց միակ առաւելութիւնը,—սակայն Լեռնապատը: Հասկանալի է, որ նրանք պիտի ձգտէին որքան հնարաւոր է խաչաթ պահպանելու այդ հարստութիւնը, իսկ դա կարելի էր ժողովրդի ճնշման դնով: Այս պայմաններում, հարկաւ, ժողովուրդը չէր կարող առանձին յարգանք առաջ գալ դէպի նրանց: Այսպէս թէ այնպէս, նախորդ դարի սկզբում երկու կարգի բէկերն էլ օժտուած էին միևնոյն իրաւունքներով և արտօնութիւններով. նրանք խանութիւնների կազապարող աստուածութիւնն էին:

Ընդհանրապէս խանութիւններում պետական մասան

բաժանում էր երկու կարգի. **ռայեաթ** եւ **ռաբպար***): Բայեաթ կոչում էր սեփական անասնութիւն ունեցող գիւղացիութիւնը, բաշտաբնները սեփական անասնութիւնից զուրկ էին: Նրանք բոլորն էլ անձամբ ազատ էին և ճորտութիւն չէին ճանաչում: Բայեաթները բաժանում էին մի քանի կարգի. 1) սեփական հողի վրայ ապրողներ, այսինքն այնպիսի հողի, որին սեփական էին նրանց նախնիքները կամ թէ իրենք «առաջին սեփականողի» իրաւունքով: Դրանք ազատ երկրագործներ էին, որոնք հողի դիմաց ոչինչ չէին վճարում, այլ տալիս էին, որպէս պետական տուրք, հնձած հացի $^1/_{10}$ և այլն: 2) կալուածատէրերի հողի վրայ ժառանգական կապով ապրող բայեաթներ, որոնք առաջին կարգի բայեաթների պէս վճարում էին միևնոյն պետական տուրքերը և բացի այդ առանձնապէս կալուածատէրին հացի $^1/_{10}$, առուտուր մեսաքի $^1/_5$ և յիսով փայտ, պտուղ և այլն**): 3) Բայեաթներ, որոնք ապրում էին իրենց սեփական հողի վրայ, բայց այնպիսի դիրքերում, որոնք խաններից չնորհուած էին բէկերին և հոգևորականներին: Վերջիններս այս դիրքերում, որպէս պետական պաշտօնեայ, առնչի փոխարէն առնում էին պետական տուրքերի որոշ մասը: 4) Հարկատու կարգի բայեաթներ էին վաչկատունները, որոնք արօտատեղիներ ունէին երկրի զանազան մասերում և իրենց խաչներով թափառում էին անվերջ անկիւն: Նրանք տուրքեր էին վճարում իրենց անասունների դլխահամարի համեմատ: Տուրքը հասնում էր խանին, երբ արօտատեղին արքունի էր, բէկին, երբ նա չնորհուած էր նրան:

Բայեաթները կազմում էին դիւղացիութեան ճնշող մեծամասնութիւնը:

Բաշտաբնները սեփական անասնութիւն չունէին: Նրանք օտարների հողի վրայ իրենց ընտանիքներով ապրող մշակներ էին***): Հողերի տատասութեան չնորհիւ, ինչպէս ասել ենք քա-

*) Иваненко. 134—135.

**) Այդ կարգի բայեաթները չնչին քանակ էին կազմում. Շեքիի խանութեան մէջ, օրինակ, 700 ընտանիքը

***) Շեքիի խանութեան մէջ հաշուում էին (քառնակոն քատուկաններին) 10 հազար հոգի բաշտաբ (երկտեղ):

նի անգամ, խաները ու բէկերը չորսմիով դուրս էին հանում հարևան երկրներից պետացիներ և նրանցով բնակեցնում ազատ տղերը: Այդ սեռակ պետացին խանից կամ բէկից առանում էր պետականական անհրաժեշտ գործերները և միջոցները, իր աշխատանքով մշակում էր տղը և՝ նայած պայմանին՝ տուրքերը բաժանում հողատիրոջ հետ: Բաշտարն առհասարակ առնում էր բերքի 1/4 մինչև 1/2: Նա ազատ էր պետական բոլոր տուրքերից. նրա փոխարէն վճարում էր տղատէրը: Բաշտարին վռնտելու կամ դրա դնել իրաւունք չկար, թէև բէկերը յաճախ նրանց վերցնում էին ամեն ծառայութիւնների համար կամ զրկում ու նոխրում էին իրանց: Բաշտար պահելու իրաւունք ունէր ամեն ոք, ով կարողութեան ակր էր և բանտարկեան ձիաքերի կարիք էր զգում: Մանկ պարտապաններին թոյլատրւում էր բաշտարութեան ընդունել: Նահապետ բաշտարներին իրաւունք չկար իրենց զրկել կամ նոխրել. դա թոյլատրելի էր միայն տղի վրայ չնայած բաշտարների նկատմամբ:

Պետացիներ էին՝ իրենց ազատուած հայթհայթման եղանակով նաև մասֆնները, որոնց մասին մենք առիթ ենք ունեցել խօսելու: Սակայն նրանք հողի սեփականատէրը էին և պետական տուրքերից ազատ: Նրանց համար հարկ եղած միջոցին միայն պարտադիր էր զինուորական ծառայութիւնը:

Այսպէս անհրաժեշտ ենք համարում չեշտել, որ բաշտարութիւնն առաջ գոյութիւն չունէր Վրաստանի թերակղզիացիների մէջ: Ասենք, բաշտարութիւնը զինուորական տարածուած էր Չիքիլի խանութեան մէջ, բայց նա կար և մնացած խանութիւններում: Յամենայն դէպս Վրաստանի (Բորչալու, Ղազախ, Ջամշադիլ), հայ և թուրք պետացիները բաշտարութիւն չէին ճանաչում: Նրանց մելիքները ու պարտքերը վրաց թագաւորների պաշտօնեաներն էին: Ստանում էին հարկի 1/10 և օգտում պետացիների մանր-մունր ծառայութիւններից: Ուրիշ կախում չկար: Մասֆնելը պէս այսպէս կոչին բարեացիեր, ազատ պետացիներ, պարտաւոր միայն զէնք կրելու:

Տարբեր կերպով էին դասաւորուած հողային և դասային յարաբերութիւնները Երևանի և Նախիջևանի խանութիւններում: Բարձր դասը—բէկ, պարտք և մելիք—այսպէս էր դէրքն ու

աստիճանը համարեա թէ բացառապէս պարտական էր իանեբին։ Երևանն ու Նախիջևանը ավելի էին կապուած Պարսկաստանին. այստեղ իաները ամենայն իրաւունքներ չունէին երկրի վրայ. նրանք պարզ պաշտօնեաներ էին։ Երկու իանութիւններում էլ պարսկական իշխանութիւնը անբաժանորէն կարողացել էր բոլոր անկիւններում, ուղղակի պատուիրանները ու պաշտօնեաները չունէին։ Ղարաբաղի կամ Ջրաւանի իաները կիսանկախ էին իրենց գործառնութիւնների մէջ։—Երևանն ու Նախիջևանը վարչական տուգմունքներ առանում էին պարսկական կենտրոններից՝ Թեհրանից կամ Թաւրիզից։ Պարսկական յարդարող բանակութիւնն այս երկրներում ամեն բան դրել էր կամքի մէջ։ Դիրք ու աստիճան ունէր նա, ով պետական ասպարէզից օրժանի էր դառում։ Այդ օրժանները, ի տարիէ, նախ և առաջ ճարում էր իանական պաշտօնեաների և հպատակների մէջ։ Իրենց ծառայութեան համար նրանք ռոճիկ չէին առանում, այլ վարձատրում էին գիւղերի հասոյթներով։ Երևանում և Նախիջևանում հողը (բացի անասնակից, այգիներից և պարտէզներից) ոչ մի ժառանգական սեփականութիւն չէր ճանաչում։ Հողի և գիւղացիների վրայ կային անմիջական կարգադրիչներ՝ բան մեծի մասին Թուրք և նատող չափով հայ բէկ ու մելիք, սակայն նրանք հողի հսմատուններից օգտուողներ էին և ոչ հողատէր։ Այդ հսմատուները նրանցն էր, քանի պաշտօնի մէջ էին։ Պաշտօնազրկութեանը հետևում էր հսմատունների վերացումն։ Այսպէս գիւղացիներից կտրած տուրքերով (գլխաւորապէս բնական) ուռճացող իաները կշտում էին միւքսաղար եւ բիուլիս*)։ Մելը համարում էր պետական հսմատուի որշ մասը—3/30։ Դա ռոճիկ էր բնական բերքերով։ Եթէ պաշտօնեային ժառանգում էր որդին,—ապա հօր մելքը տրում էր որդուն։ Եթէ միւքսաղարը համնար մշակել իրեն յանձնուած գիւղում առանձին հողատարածին, ապա այդ մասին պետք էր նրան իաի թոյլտուութիւն։ Նա պաշտում գիւղացիները պարտաւոր չէին ձրի աշխատելու. նա պետք նրանց վարձէր բան համաձայնութեան։ Եթէ մելքատերը յանկանար տալ գիւղում,—կարող էր գիւղացիների

*) Шопенъ 926—932.

հետ հատուած բաժին առանալ հոդից: Միլքսպարն իրաւունք չունէր անմիջապէս ապրիլ պիւպցինների վրայ:

Այլ էր Թխուխոսի իրաւունքը: Թխուը սովորաբար արւում էր ցկեանս, այսինքն մինչև Թխուխոսի վախճանը նրա այս կամ այն խոշոր ծառայութեան համար: Թխուլ համարուող պիւղից խանի պանձարանն այլևս ոչինչ չէր առանում: Բոլոր պետական տարկերն ու տուրքերը առանում էր Թխուխոսը*): Թխուը չէր կարելի ոչ պրաւ դնել, ոչ էլ վաճառել: Պատահում էին պիւղեր, ուր մերը մեկի սեփականութիւնն էր համարւում, Թխուը—միւսի: Թխուը կարող էր անցնել Թխուխոսի ժառանգին, եթէ վերջինս առանում էր հօր պաշտօնը: Սովորաբար, Թխուխոսի իրաւունքները վերանում էին նրա մահուամբ:

Երևանի խանութիւնում պիւղերն ընդհանրապէս բաժանուում էին չորս կարգի. 1. բահրաքեար, 2. նարիքեար, 3. բաշպարական և 4. կապալային **):

1. Բահրաքեար համարւում էին յաւ աշխարհագրական դիրք ունեցող պիւղերը, որոնց բնակիչները՝ համեմատաբար նւազ աշխատանք գործադրելով՝ կարողանում էին չօշափելի հարստ ունենալ թէ երկրագործութիւնից և թէ անասնապահութիւնից: Այսպիսի պիւղերից խանը մի բինաչայից (տարիական միաւոր, բաղկացած 10 ծուխից. բինաչան նաև ինքնաւոր անասնական միաւոր էր նման հայ պիւղերի տանգակից) պանձում էր դրամով 10 թուման և երկրի բոլոր բնդքերի մէկ երրորդը: Ուրեմն բահրաքեար պիւղերի առանձնայատկութիւնը համարւում էր այն դիֆֆերենցիալ բնաման, որ ունէին նրանք հոդի յատկութեան, ջրի առատութեան կամ անդաստութեան չնորհիւ:

2. Նարիքեար (կիսով աշխատող) պիւղերը կազմուած էին պրից հրաւիրած գաղթականներից: Ազատ հոդերի առատութիւն էր. բնակչութիւնը նօսր: Երկիրը չմշակելու համար պար-

---

*) Աշանջևնաւոր Թխուլ էին և էջմիածնի հինգ պիւղերը—Գառդարշապատ, Օշական, Մաղնի, Մաստարա և Եղվարդ, բայց պահ խանը վանքից դրա պիւղը տպօրինարար առանում էր տարեկան 400 թուման:

**) Шопенъ, 988—990.

Թականներն ու թափառականները ցանկալի հատառներ էին. Խանը նրանց տալիս էր կենդանիներ, երկրագործական գործիքներ, սերմեր և այլն: Իր ծախքերի դիմաց նա, ի տարկէ, մուրհակ էր: Հունձը վերջանալուց յետոյ գիւղացուն նոր տարուայ համար բերքից տրւում էր սերմացու, իսկ մնացածը հատասը բաժանում նրա և խանի մէջ:

3. Բացարառկաց գիւղերի բնակիչները խանի մշակներն էին: Խանը տանում էր բերքի $^2/_3$-ը, բայց դրա փոխարէն նա հոգում էր բաշտօնների կենսական պահանջները:

4. Կապալառ գիւղ վերցնում էր թէ ինքը խանը և թէ տալիս էր իր համհարցներին: Եղվարդն, օրինակ, էջմիածնի գիւղն էր, բայց կապալով պահում էր խանի ձեռքին: Նա Եղվարդի հաշակուած տարինից չնչին բաժին էր հանում վանքին, այն էլ նշխարի համար:

Այդ բոլոր շորս կարգի գիւղերը կամ արքունի էին (խասիլ) կամ միւլքատարական: Արքունի գիւղերի բոլոր հնդամուհները մտնում էին խանի պանձարանը: Բահրամեան միւլքատարական գիւղերում հունձը վերջանալուց յետոյ պարզում էին հնդամուհ քանակը, այն բաժանում երեսուն մասի, որից քսան բաժինը տրւում էր գիւղացուն, իսկ տասը բաժինը մտնում գիւղական արքունի ամբարը: Ամբողջ տուրքը ժողովուց յետոյ ամբարի պարունակութիւնը բաժանում էր խանի և միւլքատարի մէջ: Խանը վերցնում էր հօթը բաժին, իսկ միւլքատարը— երեք: Եարլեամբ միւլքատարական գիւղերում նախ ընդհանուր հնդամուհից վերցնում էր սերմացուն, ապա մնացածը գործում բաժանում է երեսուն մասի: 15 բաժին տանում էր գիւղացին, իսկ մնացած 15 բաժնից՝ 12 խանը, երեքը՝—միւլքատարը: Հին սովորութիւն էր, որ տուրքի $^1/_{30}$, չիլիակ կոչուած, տանում էր Տարկոնատանը (marfbarhi): Երևանի վերջին խանը այդ սովորութիւնը չէր պահպանում: Նրա կարգադրութեամբ արքեպին վարձատրի պարտաւոր էին գիւղացիները: Չիլիակն այսպիսով խանը իրացնում էր: Տարբեպիներն առհասարակ նշանակում էին խանի կողմից: Սակայն պատահում էր, որ նա այդ իրաւունքը զիջում էր միւլքատարին: Վերջինս նման դէպքում տանում էր նաև չիլիակը:

Մեզ մնում է ծանօթանալ Աբլյխայի փուշայութեան (այժմ Թիֆլիսի նահանգի Ախալցխայի և Ախալքալաքի գաւառները) մէջ տեղի հողային կարգերին։ Բնակչութեան բարձր դասն այստեղ իր ծագումն առնում էր պետութիւնից։ Դրանք նոյն բէկերն էին, որոնց պետութիւնը յանձնում էր հսկելու կարգապահութեան վրայ և կառավարիչ փաշայի հետ հոգ տանելու երկրի ապահովութեան մասին։ Դրամական վարձատրութեան փոխարէն բէկերը առանում էին իրենց յատկացրուած գիւղերի հասոյթների որոշ մասը։ Հարաբերութիւնն այստեղ երկու կարգի էր. ախչա և տալի։ Թիւրքիան՝ XVI դարում տիրապետելով Ախալցխային՝ պարզել էր գիւղերի եկամուտները և վերածել դրամի (ախչա), կանոն դնելով, որ գիւղի եկամուտի 1/5 պատկանում է պետութեանը*)։ Պաշտօնի հրաւիրելով որևէ անձի՝ պետութիւնը նրան բարաթ էր տալիս առանալու որևէ գիւղի ախչան, որը կարելի էր վաճառել կամ գիջել ուրիշին, միայն այն պայմանով, որ նոր տէրն իր վրայ վերցնէ հին պարտաւորութիւնները կարգապահութեան և ապահովութեան նկատմամբ։ Այդպիսի ախչան իսկական էր համարւում, եթէ տացում էր նրան հաստատող և տալթանական նոր բարաթը։ Ախչան կարող էր անցնել ժառանգաբար, եթէ օրրին ժառանգում էր հօր պաշտօնը։ Այդ փոփոխութիւնը դարձեալ պահանջում էր տալթանական նոր բարաթ։ Առհասարակ աւելորդութիւն էր առանց շօշափելի պատճառների չդրկել ախչատէրը ժառանգներին հօր վայելած արտօնութիւններից։ Սակայն տալթանը փաշայի յուշմունքով պաշտօնազրկելու անընդունակ ճանաչուած ժառանգին անմիջապէս դրկում էր ախչայի իրաւունքից։ Ախչայի իրաւունքից զատ տերը ձեռք էին բերում չինականների և այլ անձերի կողմից տալի իրաւունքով։ Տալը հողատէրը տալիս էր բահրա բերքի 1/5-ը։ Տափաստէրն ըստ իր հայեցողութեան կարող էր չինութիւններ կատարանել հողի վրայ, մշակել այն, գիջել ուրի-

*) Сводъ матеріаловъ по изученію экономич. быта государств. крестьянъ Закавказскаго края, т. I, Тифлисъ, 1887 г. ч. II. М. Н. Кучаевъ „Поземельное устройство государственныхъ крестьянъ, водворенныхъ на владѣльческихъ земляхъ въ Закавказскихъ губерніяхъ". էջ 3—4.

չին և այլն: Տաճի ժառանգաբար առանալը կամ ուրիշին գիջելը պիտի գրաւոր կերպով վկայուէր տեղական իշխանութենից (կասթամէ):

Անգլիական հայ-թուրքական գաւառների հողային կարգերի մասին բերած մեր այս բոլոր տեղեկութիւնները գալիս են հաստատելու այն, որ, ինչպէս ասել ենք վերը, հողը այդ երկրներում մասնաւոր կայուն սեփականութիւն չէր համարւում: Հողի նկամտաններից օգտուողը կալուածատէր չէր նկատւում, այլ միայ պարտաւորութիւններ ունեցող պաշտօնեայ: Պաշտօնը կապուած էր անձի հետ, ուրեմն և հողային իրաւունքը նոյնպէս անձնական արտօնութիւն էր: Ժողովրդի աչքում նման հողատէրն իզուր տեղից չէր առանում և վայելում նրա վաստակի արդիւնքները: Լաւ թէ վատ նա հասարակական պարծ էր կատարում, մի բան, որ չէր կարող ձրիարար լինել: Հողն ու հողագործը իրանութիւններում ոչ միայն ապրեցնում էին պետական պաշտօնեաներին, այլ և նրանք էին յղնում իրանների պահանջները: Այսպէս արդէն մենք ասխսուած ենք ժանօթանալ իրանական հարկերի հետ, որոնց բաշխումն ու պահանջումը պետական պէտքեր գործառնութիւն էր:

ԳԼՈՒԽ VII

ԽԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆ.—ԽԱՆԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹԵԱՆ ՏՆԱՅԻՆ ԲՆՈՅԹԸ.—ԴՐԱՄԻ ՊԱՇՏԱՄՈՒՆԸ ԵՒ ԴԷՊԻ ՎԱՃԱՌԱԿԱՆՆԵՐՆ ՈՒ ԱՐՀԵՍՏԱՒՈՐՆԵՐՆ ԵՂԱԾ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆԸ.—ԱՆՈՒՂՂԱԿԻ ՀԱՐԿԵՐ ՄԱՔՍԱՅԻՆ ՓԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆ, ՄԵՆԱՇՆՈՐՀՆԵՐ ԵՒ ԿԱՊԱԼՆԵՐ.—ՈՒՂՂԱԿԻ ՀԱՐԿԵՐ ԲԵՐՔԵՐՈՎ ՈՒ ԴՐԱՄՈՎ.—ՀԱՐԿԱՀԱՒԱՔՈՒԹԻՒՆ:

Պարսկական խանութիւնները՝ բայի Նախիջեանի խանութիւնից և Օրդուբաթի շրջանից, որոնք ներկայացնում էին թուրքի իշխանութեանը, ունէին իրենց առանձին մաքսային սեռակներըը, դրամն ու չափերը: Նրանց հկամտանները կազմում էին մաքսից, խանական մենաշնորհը համարուող ապրանքներից և հարկերից՝ բնական ու դրամական:

Խանական կառավարությունը, ժողովրդից արժէքներ գըձելու համար առնդուած այդ ցանցը՝ չէր կնտրանում բացատրելս խանների ձեռքում։ Նրանք անգօր էին անձամբ և մեն-մենակ հսկելու ամեն բանի վրայ և վերահսում լինելու բոլոր գործերին։ Ճիշտ է, նրանց կառավարութիւնը մի անսյին կազմակերպուած մեծ անհատութիւն էր, բայց հէնց այն պատճառով, որ այդ անհատութիւնը խոշոր չափեր ունէր, նրա գոյութեան համար խանին իրենց մօտ չէին պահում և պահում էին համապատասխան պաշտօնեաներ, որոնք այդ մասերի հսկիչներն ու հաշուարարներն էին։ Այսպէս կային՝ խոշոր-ատաման (պռնձապետ), անդրխոսոր-ատաման (մասակարար), սմբատրար-ատաման (մատնապետ) և այլն։ Դրանք էին այն պաշտօնեաներն, որոնց հսկողութեան տակ գանձում և ծախսում էին խանութեան հարկերը։ Դրանց պետութիւնն էին ճանաչում մահալների կառավարիչները իրենց հաշիւների մէջ։ Հարկաւ, խանների խոշոր անհատութիւնը պահանջում էր նաև այլ, ասենք համեմատաբար ստորին պաշտօնեաներ. օրինակ, գրագիրներ, հարկահաւաքներ և հսկիչներ։ Եւ այդպիսիների թիւը չատ մի քանի հարիւրի էր հասնում։ Պաշտօնեաների անուները պահում էր վիճերով կամ նաղերով, որ արդէն խանի պետութ խորհրդատուն և առաջին մարդն էր։ Խանի դատն այդ պաշտօնեաների մեծամասնութիւնը մանկութիւնից էր սկսում իր ծառայութիւնը, չատ նրա համար չէրուէ պատրաստութիւնից կամ անցեալ ստաժութիւնից *)։

Խանական կառավարութիւնն իր հարկային համակարգութիւնները սկսում էր վարչական կնտրոնից։ Նա ասենք քանի աշխատիր էր ելել վաճառականի ու արհեստաւորը, որպեսզի պետութիւնը դրանց մօտ կարելի էր հնչուն դրամ դանել, մի բան, որ պետացիների մասն բնական բերքերից ասելի էր յարմար։ Վերը խօսելով խանների դատական ատեարանների մասին՝ մենք տեսանք նաև, որ վաճառականների դէմ դատական (խորհրդարանական) նրանք անձամբ էին գործում։ Դա անելը իր ներքին խորհուրդը. վաճառականը դրամի տէր էր և խանները չէին կամենում ձեռքից սոյ այդ խոշոր գործառը։ Որպէսզի

*) Иваненко, 137, Гакстгаузенъ, ч. I, 185—187.

վաճառականն ու արհեստաւորն անկարող լինէին թագնելու իրենց չքաւորութիւնը և օգուտը, իսկական կառավարութիւնը նրանց հնարաւորացնում էր որոշ չափերում և թոյլ չէր տալիս ցրուել քաղաքի այլ և այլ անկիւններում։ Դա դանձարանի տեսակէտից հետաքրքրում էր հարստութիւնը, ապա ունէր նաև այն օգուտը, որ արժան էր նկատելում պահպանութիւնը։ Ընդհանրացած երևոյթ էր, որ շուկայի խանութներն պատկանում էին խաներին։ Քաղաքը մուծ տուն-մի տպրանք և բերք պիտի վաճառուէր չուկայում, որ կապուած էր տրամ*)։ Այսքան խիստ հետզրութեան տակ մտնելով վաճառականութիւնը և արհեստ՝ խաները գլուխ չէին յաջողում պրպտելու նրանցով պարապողների ներքին հասարակական մանր ու մանր խնդիրներով։ Դա թողուած էր ինքնաւար համաքարութեանը։ Համքարութիւնն էլ, ինչպէս ասացինք, հարկադրական միութիւն էր։ Սակայն իսկական կառավարութիւնը համքարութիւններին միայն պատիժ, հարկերի, ներքին բարեկարգութեան և կարգապահութեան համար ամենամուծ համարներ չէր ճանաչում։ Ա՛չ, նա ընդունում էր, որ այդ միութիւնները, որպէս հասարակական մարմիններ, կարող են դիմումներ անել իշխանութեանը, խնդրել թեթևացնելու հարկերի ծանրութիւնը կամ դիջնալու նրանց մի մասը, բողոքել վարչական անձերի անիրաւութիւնների դէմ և այլն**)։ Համքարութիւնները էլ որևէ առանձնաշնորհութիւններ չունէին։ Նրանց անդամները քրէական յանցանքների համար այն պատիժներն էին կրում, ինչ որ ընդունուած էր մնացած ժողովրդի համար։ Նրանք նոյնպէս պարտաւոր էին դուրս գալու բնական ծառայութիւններին, այսինքն պարտադիր կերպով և անվարձ օգնելու կառավարական շէնքերի, բերդերի և ճանապարհների կառուցմանը, չանցքների անցկացնելու գրաձին և այլն։ Վաճառական դասն էր նաև մարդային գնումների գործերում թարգման։

Մարդային գնումը, որ կոչում էր **rahsar**, ամեն մի խանութի դարձած էր ինքնուրոյն մեծութիւն։ Միևնոյն

*) Шопенъ, էջ 878.

**) С. А. Егіазаровъ. „Изслѣдованія по исторіи учрежденій въ Закавказіи“ ч. II. Городскіе Цехи. Казань 1891, էջ 252—253.

ապրանքներից մաքս էին վերցնում թէ արտահանման ու ներմուծման ժամանակ և թէ փոխադրման: Մաքսի չափը փոփոխական էր, նայած թէ նաև ինչ յարաբերութիւնների մէջ էր հարևան նահանգների հետ կամ թէ ինչ վերաբերմունք ունէր դէպի իր երկրի այս կամ այն մասը: Մաքսից ազատ չէր և ոչ մի ապրանք, որքան էլ նա աննշան արժէք ունենար: Նահանգի ազատութիւնը շատ չէր ճանաչում և դրամ ժողովելը նրանց մասնաւորութեան գերագոյն առարկան էր: Ձիքի նահանգութեան մէջ, օրինակ, մաքս պահանջում էր ոչ միայն այդ երկրի պատուական բերքից՝ մետաքսից, այլ և այնպիսի ցածրարժէք երկրից, ինչպիսին էին հասարակ թոկերը, մանկական օրօրոցները, սեղաններն և այլն: Մետաքսից այդ նահանգի մէջ վերցնում էին մի շարք տուրքեր. նախ բնական տուրք 1/5-ի չափով, ապա դրամական տուրք մանուածապատներից. յետոյ մետանի տուրք՝ մի բամբակի (20 ֆ.) վաճառից 1 ր. 40 կոպ. (նահանգական), նոյն այդ քաշի իւղատանիւթ նոր վաճառից 2 ր. 40 կ., արտահանման դէպքում—25 կ., ամեն-մի կշռակից —20 կոպ., բախտաթի տուրք՝ իւղատանիւթ բերից 2 ր. 50 կ. մինչև 3 ր. 50 կ., դարպայի տուրք՝—բերից 40 կոպ.:

Ղարաբաղի նահանգի մէջ կային ուրիշ չափեր: Այսպէս բախտաթը տալիս էր՝ մէկ բեռն մետաքսից 6 ր. 20 կ. նահանգի (նահանգի 6 ր. 30 կ. հաւասար էր ռուսական 1 բուդուն), տոպրակի բերից—5 ր. 20 կ. նահ., բամբակի բերից—5 ր. 20 կ. ճամելէնից—5 ր. 20 կ. նրիամից և պոպպասից—5 ր. 20 կ., սրանց թելի և բերից—2 ր. 60 կ., պղնձից—5 ր., պղնձի թելի և բերից—2 ր. 60 կ., կաշուց բերից—5 ր. 20 կ., թելի և բերից—2 ր. 60 կ., նաւթընջու, մահուդի, պղակցու մոմի թելերի բերից—5 ր. 20 կ. սրանց թելի և բերից—2 ր. 60 կ., չիթից —3 ր. 20 կ., նաւթից—1 ր. 60 կ., նահանգի և այլն: Այս մանրամասնութիւններից յետոյ պարզ է միանգամայն, որ նահանգի վարչութիւնն աչքաթող չէր անում և ոչ մի իր ու շարժուն, որից հնարաւոր էր մի բան պոկել: Անապահովութեան տեսակէտից այդ աննախանձելի ժամանակներում ապրանքատէրն իր գլխին տարածած ունէր ոչ միայն մեծ ճանապարհի վրայ շահատակութիւններ անող աւազակի սուրը, այլ և նրա

գրպանին վտանգ էր սպառնում խանի պաշտօնեայի ձանրագոյնչ բաղուկը։ Եւ ապրանքատէրը հնարաւորութիւն չունէր մանաւանդ ապառուելու վերջինիս պահանջներից։ Երկրի մէջ շարժուել կարելի էր միայն թղթաւարներով։ Նրանց պահակ էր սալեր ինքը խանը։ Դա և ապահովութիւն էր գրսի կոզապահներից և մի լաւ միջոց անկոտրում գանձելու խնամարի տուրքը*)։

Խանական նիստատեղիի երիցսր տրիբը կազմում էին մի շարք առևտրա-արդիւնաբերական ձեռնարկութիւններ, որոնք մնաչնորհի բնոյթ ունէին։ Ղարաբաղում այդպիսին էին համարում պանդոկները, տրոնի առևտուրը, նիկարանը, սապնի և կաշուի գործարանները. Երևանում՝ Կղզի պահանջը, նիկարանները, պանդոկները, արքունի այգիներն ու չրատուները, բամիքները, քարաւանսարանները և այլն։ Սակայն խանների ամենի բարուք էին համարում հասոյթաբեր տրիբները չիենարանալ իրենց ձեռքում, այլ նրանց կապալով տալ իրենց մերձաւորներին և կոմիսակի անձանց։ Նոյնիսկ մնաչնորհ համարում ձեռնարկութիւնները չահագործում էին կապալին տալուելով։ Կապալառուն տալով որոշուած գումարը խանի գանձարանին՝ ազատ էր գործ իրեն որոշ սահմաններում ունենալու։ Սովորական երևոյթ էր, որ կապալառուն իր հերթին գիջում էր վերցրած կապալը մի ուրիշին։ Դա գլխաւորապէս ծագում էր այն տարբերութիւնից, որ կար երկրի երկու պետական հասուածների—Թուրքերի և հայերի—իրաւական կացութեան մէջ։ Թուրք մի չափով արտօնեալ էր. շահուելու տրիբն էլ նախ և առաջ նրան էր յանձնում, բայց նա յաճախ ձեռնառու էր համարում իր գլուխն ազատ պահել մանր-մունր հոգսերից և աշխատանքներից՝ ու ստացած կապալը մի ուրիշ-

*) Խանական հարկային քաղաքականութեան մասին գրելիս գլխաւորապէս օգտուել ենք հետեւեալ աղբիւրներից. 1) „Сводъ матеріаловъ по изученію Экон. быта госуд. кр. Закавк. края", т. I, ч. II, Тифлисъ, 1887 г. էջ 33—34, 2) Акты Кавк. Арх. К. т. VI а, № 1305. 3) Обозрѣніе Рос. влад. и пр., ч. I, С.П.Б., 1836 г. էջ 86—88, 4) Шопенъ, էջ 878, 967—986, 1131—1136, 5) Сводъ матеріаловъ и пр. т. I, ч. III, И. Л. Бахтадзе „Податное обложеніе государственныхъ крестьянъ Закавк. края" էջ 23—32, 6) С. А. Егіазаровъ. „Городскіе Цехи", էջ 260 և այլն և այլն։

ցանկով դիջել հային։ Ղարաթաղում, օրինակ, շիրախանէն (գինեհատը), գիրթարխանէն (փողերանոցը) կապալով վերցնում էին Թուրքերը, բայց անմիջապէս չահագործում էին հայերը։ Կապալային սիստեմը համապատասխանում էր խանական պարզ վարչական մեխանիզմին։ Այդ սիստեմը նրանց ազատում էր պետական ծախսերից և ծախսերից։ Ուրիշ տարց է, ինչպէս էր նա անդրադառնում երկրի տնտեսական վրայ, բայց դա այնքան էլ մտահոգութիւն չէր պատճառում խանին, որ երկրից միայն առնում էր և ոչինչ յետ չէր դարձնում։ Կապալը նրան ապահով էր հնչուն և կանխիկ դրամ և դա էլ ֆինանսական գիտութեան վերջին ընդունած խօսքն էր նրա համար։

Հետաքրքրական է այժմ իմանալ, թէ ինչ տատկութիւն կապային հայի խանութիւններում։ Ահա դրանք. բախտախանէ (մաքսատուն), ապանդանոց, գռիան (կշռատ), գարպատարար (տուրք) Տրապիզոնի առևտրից) *), տարան, չիմիկէն տպրանքներ, նեղկատաններ, կաշուէ գործարաններ, առևտրական գործարաններ, ծխախոտ, գինեվաճառութիւն, փողերանոց, ապահանք, խանութներ, այգիներ, Տրապիզոնի, քարտուհատրաններ, բաղնիքներ, ձկնորսարաններ և այլն և այլն։ Այս ամենն

*) Ղարաթաղում այդ տուրքերը հետևեալներն էին. միմի հատ՝ անիվ, ձմերուկի, խոխոի, թիների, կարասների, փարաւնդի, ձկան բեռների, մոլեռած անասուններից—20 կ., մի բեռ փայտից—2 կոպ և այլն։ Երևանում Տրապիզոնի տուրքերը սրանք էին. ամեն մի բեռ շինութեան փայտից, յարդից և նրնդնից 1 շայի (2 կոպ.), ալի բեռից—2 շ., ածուխի և բոյաների բեռներից—4 շ., մի մեծ ախոռ կռվի կամ աչխարի խոլից—5 շ., արտասահմանից բերած խոլի ախոռից—1/4 թաթման (թաթմանը 12 ֆունտ), խնոցիների բեռից—12 շ.։ Մնացած տուրքերը, ապրանք և նաւերի մասին, Տրապիզոնի հետ նոյնն էին, ինչ որ Ղարաթաղում։

**) Ղարաթաղում այդ տուրքերը հետևեալներն էին. միմի հատ՝ անիվ, ձմերուկի, խոխոի, թիների, կարասների, փարաւնդի, ձկան բեռներից, մոլեռած անասուններից—20 կ., մի բեռ փայտից—2 կոպ և այլն։ Երևանում Տրապիզոնի տուրքերը սրանք էին. ամեն մի բեռ շինութեան փայտից, յարդից և նրնդնից 1 շայի (2 կոպ.), ալի բեռից—2 շ., ածուխի և բոյաների բեռներից—4 շ., մի մեծ ախոռ կռվի կամ աչխարի խոլից—5 շ., արտասահմանից բերած խոլի ախոռից—1/4 թաթման (թաթմանը 12 ֆունտ), խնոցիների բեռից—12 շ.։ Մնացած տուրքերը, ապրանք և նաւերի մասին, Տրապիզոնի հետ նոյնն էին, ինչ որ Ղարաթաղում։

կարգի ձեռնարկութիւններն ունէին իրենց խանութները։ Հարկաւ, դրանք պիտոյտակս քաղաքների աչքի ընկնող առևտրականներից էին գլխ։ Առևտրական դասի մէջ հարստութիւն գիտցողն այսպիսով անպատ կոպ ունէր պետական ֆինանսական գործառնութիւնների հետ։ Կապալներից առաջանում նկատելի մասը խանութիւնների, եթէ կարելի այսպէս ասել, անուղղակի հարկերն էին։

Ուղղակի հարկերը խանութիւններում ամիջապէս գանձում էին խանական պաշտօնեաների, այդ նպատների, մկրտների, տարբերների, առնուագների ձեռքով։ Այդ հարկերը բազմազան էին։ Նրանք վճարում էին եթէ բնական բերքերով և եթէ դրամով։ Ղարաղոյի, Գանձակի, Շիրակի և Շիրուանի խանութիւններում բնական տուրք էր ընդունուած հացահատիկների $^1/_{10}$, բամբակի և մետաքսի—$^1/_5$։ (Հացահատիկներ ասելով՝ մենք հասկանում ենք ցորեն, գարի և կորեկ)։ Բրինձից նոյնպէս առնում էր $^1/_{10}$։ Բնական տուրք ժողովում էր նաև խաղից, դրամներից և կենդանիներից։ Թափառական ցեղերից խանը առանում էր իւղ, պանիր, գորգեր, բուրդ և այլն։ Նրա համար հատկում էին հաւ և ձու։ Ժողովուրդը պարտաւոր էր նոյնիսկ փայտ առանձ խանի դուռը։ Նախիջևանի խանութիւնում և Օրդուբադի գաւառում հացահատիկներից բնական տուրք առնում էր 10 խուրմայից $3^1/_2$ խուրմայ։ Դէպ խուրմայն այսպէս ընդունուած էր յատկացնել հարկահաւաքներին (ամբարներին), սակայն խանական ագահութիւնը խրոցնում էր այն և ժողովուրդը ստիպուած էր ինքը վարձատրել հարկահաւաքներին։ $3^1/_2$ խուրմայի չափը պարտաւորեցուցիչ էր թէ արքունի և թէ մետքատարական գիւղերում։ Այս վերջին կարգի գիւղերում $3^1/_2$ խուրմայից երկուսը արքունի պահանջներն էր, $1^1/_2$ խուրմայը մետքատարի։ Ցորեն տուրքը հաւասար էր առնուած հացահատիկների չափին, այնինքն խրոցանիկը ցորենի և գարու խուրմայի դիմաց տրում էր մէկ խուրմայ յարդ։ Առուտրից և մետաքսից առնում էր $^1/_5$։ Երկաթի խանութներում բնական տուրք առնում էր բահրաքիսը գիւղերի բոլոր տարածքներից—$^1/_3$-ը, իսկ եարլիքսար գիւղերից—$^1/_2$-ը։ Մետքատրական հանգստում գիւղերի արքունական տուրքը $^3/_{10}$

պատկանում էր միլքատարին, $^{7}/_{10}$—խանին։ Թխուկան վիճակում տուրքն ամրողջովին գնում էր թխուխաի օգտին։ Ընդունուած էր վարոց, որ տրքունական տուրքի $^{1}/_{10}$-ը յատկացուի հարկահատաքին, սակայն խանն իրեն էր յատկացրել նաև այդ $^{1}/_{10}$-ը և վիտացիներին էր պարտաւորեցնում իր պաշտօնեային։ Այս խանութեան մէջ հնձոցին բաժին էր հանում ցորեն և գարի $^{1}/_{10}$, բամբակի և բրինձի $^{1}/_{20}$։ Դա սրբագործուած կանոն էր, եթէ անգամ հնձողը լինէր ինքը գիւղացին, անտանութեան սէրը։ Խանն առանց տուրքի չէր թողնում նաև հնձոցի բաժինը։ Նա առանում էր այդ բաժնի $^{1}/_{10}$ կամ 34 շայի (68 կոպ.) արդուց, որ նաև նպաստում էր նրան առուզել բերքի քանակը։ Երևանի խանութեան մէջ բնական տուրք առացում էր նոյնպէս բոլոր և բոլէ գործուածքներից, ինչպէս և իւղ, փայտ, ածուխ, հաւ և ձու։

Գրամական արուեստ հարկիր կային բոլոր խանութիւններում։ Դրանք բազմատեսակ էին և բազմանպատակ, թէև բոլորն էլ վերջ ի վերջոյ մտնում էին խանի կամ նրա մերձաւորների գրպանը։ Գրամական հարկերի հետ միասին հաւաքում էին նաև արուեստ հարկեր բնական բերքերով։ Դա հաւանօրէն տեղի ունէր այն պատճառով, որ այդ ժամանակ հնչուն դրամը դեռ չէր սերտում ամեն ծակ ու ծուկում։ Արուեստ դրամական հարկի գէթ մի բան էր և պարտադիր անձնական աշխատանքը խանական անտանութեան մէջ։ Մանրամասնելով մեր խօսքն այդ հարկերի մասին՝ տեսնում ենք նրանց հետևեալ պատկերը. Ջերի խանութեան մէջ կային այս հարկերը՝ բոլջի—դրամական հարկ, որի գումարն էր 15,483 ր., մուսամիր—338 փութ ցորեն և 311 փութ գարի, վեճջի-դալամ—անձնական ծառայութիւն, որով պահանջւում էր աշխատանքի հանել 500 արօր, 2484 հնձող և 2812 հղ՝ ծանրութիւններ տեղափոխելու համար, բայրամլըղ—գանազան տեսակի և քանակի ընծաներ բայրամի առթիւ, կուլուխ-դրեւալըղ (հարուստ փարթամութեամբ՝ հռանգներից, այծերից առնելի վարձ)—$7^{1}/_{2}$ կոպէկ հարկի իւրաքանչիւր բարդուց յօդուտ հարկահաւաքների, դարդայի փող—յօդուտ խանական պաշտօնեաների։ Դարդայի փողը գոյանում էր երկու տարբերներից. դըրնալըղ—25 կոպ., իւրաքանչիւր արօրից

և դարպալըղ—դրամական և բնական տուրք յատկապէս գիւղերի կառավարիչների օգտին։ Ձեքիի խանութեան մէջ ընդհանուր առմամբ իւրաքանչիւր ծուխ երեք տարի էր վճարում խանին։ Այստեղ չպէտք է մոռանալ, որ բէկերին յանձնուած գիւղերում հարկերի մի մասը, բացի թաղջիից, գնում էր նրանց օգտին։ Ինչպէս և նրանց օգտին էր գնում մալջհաթը կամ բահրան, որ բնական բերքերի 1/10-նէր հացահատիկներից և 1/5-ը մեռաքից ու բամբակից։ Ընդունի գիւղերում մալջհաթը տրւում էր խանին։

Ձերտաւնի խանութեան մէջ ընդունուած էին հետևեալ հարկերը. թովջի—6000 ռսկի, խառաջ—յատուկ հարկ հայերից կրօնական պատուութեան համար, ջուբ-բաշի—60 կ. իւրաքանչիւր արօրից, բաղ-բաշի—այգիների եկամտի 1/10-ը, 60 կոպ. իւրաքանչիւր մեռաքս ոլորող մեքենայից և 1 ր. 20 կ. չիրամապահական արտից, հուկեզ—համայնական օգնութիւն երեք օր մի տարուայ ընթացքում։ Մալջհաթի չափը և նրա պատկանելութիւնը տեղանեան էր Ձեքիի խանութեան մէջ տարբեր պրութեան։ Խանական պաշտօնեաների համար որոշուած էին յատուկ տուրքեր. կուլուխ—դրամական հարկի 4%-ը, 60 կ. իւրաքանչիւր թաղար մալջհաթից բերքերի հաշուարարի օգտին, դարպալըղ և այլն։

Հետեանեան հարկեր ընդունուած էին նաև Ղարաբաղի ու Գանձակի խանութիւններում։ Ի. Բախտաձէն Գանձակի խանութեան համար առանձնապէս յիշում է տալ և աղջիկ պատանիների հարկ, որ տալիս էին հայերը։ Մենք չգիտենք, ինչ աղբիւրից է առել Բախտաձէն այդ անդրադարձը, սրքան է տալդ նրա տրբերը, սակայն պիտի ասենք, որ այդ հարկը, եթէ նոյնիսկ նա օրինաւոր և տաւտառ երեւոյթ չէր, բայց այնուամենայնիւ բոլոր խանութիւններում տեղական, յատկապէս մեծ ազգով տարածուած սովորութիւն էր։ Գոնէ այդ են մեզ պատկառացնում խանական ընտանիքների տեղադրութիւնները (տես այդ մասին Акты Кавк. Арх. Ком.)։ Բոլոր խաներն էլ հայտնի կիներ ունէին։ Անկարելի է պնդել, թէ նրանք իրենց ջոջաբ կամքով էին մտել խանների հարեմները։ Պարզ է, որ բռնութիւնն էր նրանց իւրացնել և տալճ գործել։ Կրկնում ենք,

եթէ անգամ մարդկային հոգի, որպէս բնականոն երեսք, պայմանի չունէր, նա կար առևանդման միջոցով։ Եսկ դա ինքը բնականոն գործած երեսք էր բոլոր խոնարհութեամբ։

Զարտարոցում սկզբում հոգիների մասին այդ երկրի բնիկները 1847 թ. մի հետաքրքրական ցուցմունք են տուել կառավարութեանը։ Բանը նրանումն է, որ բնիկները՝ 1846 թ. դեկտեմբերի 6-ի գրուածքից և 1847 թ. ապրիլի 20-ի օրինքից յետոյ էլ դժգոհ էին մնացել կառավարութենից, որ այդ օրէնքներով նրանց հոգիի սեփականատէրը էր ճանաչել և գիւղացիներին դրել կէս-ճորտական դրութեան մէջ. նրանք գանում էին, որ իրանց արտօնութիւնները բաւարար չափով չեն ճանաչուել օրինքի կողմից։ Նրանց ցուցմունքով այդ արտօնութիւնները հետևեալներն էին. 1) գրամական հարկի իրաւունք իւրաքանչիւր ծուխից—գիւղում՝ 4—5 ր., քաղաքում՝ 5—12 ր., նայած հարկատուի գործողութեանը, 2) մալչհամբ, գարդալըղ և միրզայեանո—գարդալըղի կէսին։ (Գարդալըղը մեր ծանօթ հարկ է. միրզայեանցս նշանակում է՝ գրագրի համար)։ 3) Մանդըլըքաշի, մեռած որդու մեքենայից 30 կոպ. և մէկ ամէլ (գրուանքայ) մեռաքս։ 4) Ձորքաշի, գրօսասիրութիւնների համար, բէկի և գիւղացիների վարարգրի համաձայնութեամբ. սեռահասութեան մէջ անդրաժիշտ լծան կենդանիներից գիւղացիները չորքաշի չէին վճարում։ 5) Բաղ-բաշի կամ մալչհամբ ամեն կարգի այգիներից։ 6) Ձան-բաշի, առաք բրինձի հնձաններից—իւրաքանչիւրից մէկ բաթման չալթուկ կամ 15 կոպ. 7) Ման-փուլի, 30 կոպ. ամեն մի գրօսից։ 8) Թայանա, ընծայ հարուստների առիթով, որ պիտի 1 ր. 20 կոպ. պակաս արժէք չունենար։ 9) Հալ, համայնական օրինութիւն 6 օրով տարուայ ընթացքում։ Գիւղացիները պարտաւոր էին հերկել, ցանել և հնձել բէկի դաշտերը։ Դանանց հոգը կայանում էր նրա մէջ, որ մարդում էին չալթուկը, մանում բուրդը, գործում գորգեր և այլն։ 10) Մեղրեր, ծառայ ատլ. վաշկատուններից պահու էին տալիներ, իսկ նաւակեցիները—բաշլար և այլեայլ։ Պատասխան իր ծառայութեան ընթացքում պատուում էր բէկական տուրքերից։

Բաշտարն ու այգեպանը առանում էին եկամտի 1/4, իսկ հովիւ-ները—չոր և մանր: Բացի այս բոլորից բնակչութիւնը պար-տաւոր էր տալ. ա) փայտ, յարդ և խոտ, բ) պահանջի դէպ-քում՝ սայլ, մշակ և պահապան, գ) վարչատուներըը—ոչխար-ներ, իւղ, բուրդ, չուխա, թոկեր, թափքներ, պարաններ, նըր-ատակներըը—վարտիկներ ծառաների համար, ճուտ և ձու, դ) Ջրատուներից, ձիթհանքերից, դիներից եկամտի որոշ մասը և ե) վերջապէս, բնակչութիւնը պարտաւոր էր հերթապահել բէ-կին և նրա ծառաներին, երբ նա գալիս էր գալիս այցելու իր կալուածները *):

Ելատեղակ հարկեր կային Նախիջևանի խանութեան մէջ և Օրդուբադի շրջանում: Նրանք տարբերւում էին հետե-ւեալ տեսակներից. 1) բաշ-փուլի—վերահարկ արտերի տեր բոլոր անդամներից, որոնք տարիքով բարձր էին 15 տարեկա-նից. վերահարկ հայերը վճարում էին 4 ր., թուրքերը 2 ր. 20 կ., 2) էվ-փուլի—տան հարկ. հայերից—4 ր. 20 կ., թուրքերից —4 ր., 3) քարոքների բնակչութիւնից տանից կրծնի և տղի խարութեան—1410 թուման 9 մինաթիւն. (Թումանը հաւասար էր 4 ր., մինաթիւնը—40 կ.) 4) Դարբասպետի վաշխատուն-նե-րից 2000 թուման, 5) Մալ-փուլի և օթլեն-փուլի (տաւարի վրայ և ոչխարի վրայ). իւրաքանչիւր ոչխարից տանում էր մէկ փունա-րատ (20 կոպ.), տաւարից (բացառութիւն էին կազմում գոմէշ-ները, որոնք անհրաժեշտ հոգատարծին էր պահում Փոխուկ էին ժամանակները և մի չնչին խումբ պաշտօնեաների իրաւունք-ները հաշւում էին արտօնութիւններ ամբողջ բէկական գաս-

*) Сводъ матеріаловъ и пр., т. I. ч. II. М. Н. Кучаевъ „Поземель-ное устройство госуд. кр. и пр., էջ 33—34): Գարդարի բէկերը ան-ունում էին, որ այս տերերը նրանք տանում էին վարչական և դատական ծառայութիւններ համար և վեր նրանցից միայն նա, ով խնդրում էր նոյնական ծառայութեան մէջ էր գտնում Փոխուկ էին ժամանակները և մի չնչին խումբ պաշտօնեաների իրաւունք-ները հաշւում էին արտօնութիւններ ամբողջ բէկական գաս-

10) Քիմիական նիկելյիններից—16 ր. 11) Քարտանատրաների, բաղնիքների և խանութների նկամաի 1/5, ընդամենը մինչև 80 թուման տարեկան, 12) վճար յոզուտ քաղաքային պահապանների, 13) վճար զբոսավայրերից 1%-ի չափով, որ կազմում էր 400 թուման տարեկան, 14) վճար յոզուտ հարկային պաշտոնեաների՝ նավթների և տնտեսությունների: Այդ վճարն երկու տեսակի էր. ա) «կուլուխ-փուլի» և բ) «պարզա-փուլի»: Կուլուխ-փուլին վճարում էր բնական տուրքերի դանձման ժամանակ, իսկ պարզա-փուլին—դրամական: Պարզա-փուլին հաշում էր 20 կոպ. հարկի ընթացիկ թուման: 15) վճար արքունի և ամրական կշռաչափերի տարեկան ստիմով—1 ր. խալվարից: Այգիներից և վարելահողերից առնում էր ոչ միայն տուրք բնական բերքով, այլ և դրամական հարկ: Պղպաու և խոզդի այգիներից դանձում էր նրանց նկամաի 1/5: Ձարտուկի, վուշի և բամբակի խալվարաչափ պաշտոնից առնում էր 8 ր.: Սրանք էին նախկինան խանութների և Օլդուրաթի շրջանի գլխաւոր հարկերը: Բնական տուրքերի մասին մենք արդէն խօսել ենք:

Երևանի խանութեան մէջ դրամական հարկերի ենթակայ էին 1) Երևանի հասարակութիւնը, 2) էջմիածնի վանքը (400 թուման.), 3) Մակուի խանը, 4) վաչկատունները, 5) գիւղացիները—բինաչան (տաւնակ)—10 թուման (40 ր.), 6) պարտադիր դարձած ընծաներ տուգում էին զանազան հիմնարկութիւններից և անձերից (էջմիածինը Նովրուզ-բայրամին (նոր-տարի) վեցքեզ էր տալիս խանին 150 թուման. կամ 600 ր.), 7) վճարներ հայերին պատկանող այգիներից, 8) զանազան վճարներ ա) մահալների կառավարիչների, բ) նրանց գրագիրների և գ) մերաների առճի համար, դ) կուլուխ-փուլի՝ բնական տուրքերը հաւաքողներին խրախուսելու համար, 9) վճարներ պահապանների համար. ա) Երևանի հասարակութիւնից վճարներ շուկայի ապահովութեան նպատակով և բ) հնձողներից: Պահապաններ տալը խանի պարտաւորութիւնն էր: Այս տրիբներից խանը տանում էր ուղղակի հարկեր 23.076 թուման 7 մինալթիւն 12 1/2 չայի: Պապաները նրան տալիս էին 16.632 թուման 5 մին.: Ուղղակի և անուղղակի հարկերով խանը դրամով տանում էր 39.709 թ.

2 մին. 12½ չայի կամ ռուսական դրամով 158.837 ր. 5 կոպ.։ Եթէ այս գումարին ուելացնենք և բնական բերքերով ապրուած տուրքերը—հոգեհատիկ, խոտ և այլն—Երևանի խանութեան հարկերի քանակը կըհասնի 653.150 ր.։

Խանութիւնների մէջ ամբող հարկերին և տուրքերին մինք ծանօթացանք։ Նորից յիշինք, որ խանական կառավարական մեխանիզմը պիտուրապէս յարմարեցուած էր այդ հարկերի ժողովման համար։ Քաղաքներում հարկատու միաւորներ էին համքարութիւնները, որոնք խոշոր պատասխանատուութիւն էին տալիս իրենց վարչական անձերի միջոցով։ Գիւղական շրջաններում—հարկատու միաւոր էր գիւղական համայնքը, իսկ հարկաժողովն այստեղ կատարում էր մահալի կառավարչի, ամնուսէրի և գլխի միջոցով։ Բնական տուրքերի ժողովման համար կային առանձին պաշտօնեաներ,—սահրքիաները։ Ամվոդանց հետաքրքրական է ծանօթանալ նրանց պարծանութիւնների հետ և առհասարակ բնական տուրքերի ժողովման եղանակին։ Այդ մասին Երևանի խանութեան համար մինք ունինք Զոլէնի և Հակոտասուլէնի վկայութիւնները։

Սահրքիաները երկու կարգի էին լինում—խանական և մահալի կառավարչի կողմից նշանակուած։ Առաջիններն թիւն Երևանի խանութեան մէջ հասնում էր 50-ի, վերջիններինը—150-ի *)։ Խանական սահրքիաը, նայած պիտի բնակչութեան, առնում էր ամսական 5—8 ր., իսկ քաղաքներում 1 թաթման հոգեհատիկ և 1 թաթման պարի ձիու համար, տպա պետականներից հերթով լու ճաշ։ Նա պետերում մնում էր վեց ամիս։ Կառավարչական սահրքիաը առնում էր 2—4 ր. ամսական, երեք թաթման կալից և սովորական նուէր պետականներից։ Գիւղի հաշուով սրա ձին իրաւունք չէր կերակրելու։ Գործի օգտի և ժրաջանութեան համար խանը և մահալի կառավարիչը յաճախ փոխում էին սահրքիաների տեղերը, անում փոխարինում խանական սահրքիաը կառավարչականով և ընդհակառակը։ Չէնց որ բացում էր գարունը և դաշտերը սկսում էին հագնուել կանաչով՝ սահրքիաները շտապում էին պետերը։ Նրանց առաջին գործն էր լինում տուրկել և յայտնի

*) Шопенъ, 1131—1136, Гакстгаузенъ, ч. I, 185—187.

պարձնել իւրաքանչիւր պիղծոյ ցանքսին չափը։ Խնկական գործը սնարքիարներն սեանում էին հունձի ժամանակ։ Երանք պատուհասի պէս ծանրանում էին պիղծոյինների գլխին։ Այս Աբուվանն այսպէս է նրանց նկարագրել Հակառուսուլէնին. «Սնարքիարը հոգիդ պետութեան մասը հատուցելու համար ամեն տարի ամառը գալիս էր մեր պիղծը (Քանաքիա)։ Այդ տուրքի համար, որ տևող ժամանակ է պահանջում, նա պիղծում մնում էր երեք-չորս ամիս։ (Ըստ Զոզէնի վեց ամիս, Դ. Ա.)։ Այդ ժամանակաւոյ ընթացքում նրան յաճախացնում էին յատկոյն ընակարանը. նա պահանջում էր ժիր սպասաւորութիւն և լաւ սնունդ իր ծառաների և ձիերի համար. նրա ընակարանն էին տանում ամեն օր լաւագոյն պաշարը՝ հաւ, ձու, իւղ, միս և այլն, մինչև իսկ գինի, որովհետև բոլորը չէին սրտանձնում այս բնակիչը։ Պիղծոյի գլխին ամեն օր պատում էր սնկատուն խնդրելու և պահանջելու ինչ որ հարկաւոր էր։ Նրա հետ մտնում էին ամենայն անհրաժեշտութիւնը։ Պիղծոյինները խուսափում էին նրան հանդիպելու։ Երբ նա խօսում էր՝ պատասխանում էին խոնարհութեամբ և ակնածանքով. օրինակ, «իմ իշխան, իմ աչքի լոյս»։ Այլ թէ նա բարկանայ. մտրակ, թուր, դաշոյն, բոլորը, ինչ ընկնէր ձեռքը—պատժի գործիք էր նրա համար։ Նոյն իսկ նրա ծառան, որ այլ բան չէր, քան իր սիրոյ երեսի չուր տալը կամ ծխախոտի մատղատը, նա էլ էր պահանջում նման վերաբերմունք և ակնածանք» *)։

*) «Հասունք Հայոց Աշխարհին», 1862 թ., յունուար, էջ 27—29։

Հունձը վերջանալուց յետոյ սեաբլեաբը հաշւում էր խուրձերը և չսկում հնձողի բաժինը, որ սովորաբար լինում էր տասը խուրձերից մէկը: Հացը կալսելու ժամանակ նա նախօրէն արձագում էր կալսելի մանրամասնութիւնները, հետևում էր, որ նրանք կննդրանացած լինեն միևնոյն վայրում և բաւականաչափ հեռու գետնից: Կալսատեղին կննդրանում բարձրանում էր նրա գլխից, որովհետև նա հսկում էր, որ բնակիչները առն չը տանեն դեռ չափած տաւիղը: Ամեն երեկոյ, կալի վերջանալուց և տաւիղը քանդելուց յետոյ, նա իջնում էր իր գիտությունից, ինքում շողջը և նշան դնում վրան:

Ագռնավութեան համար կային նաև գիշերապահներ: Առաւօտեան սեաբլեաբը առաւում էր նշանները և նորից թառում իր գիտարանի վրայ: Գողութիւնը հազուագիւտ բան էր: Եթէ այնուամենայնիւ պատահում էր դա,—սեաբլեաբն այդ մասին տեղեկացնում էր մահալի կառավարչին և նրան էր յանձնում գողին գտնելու ու պատժելու գործը: Երբ վերջանում էր կալսելը՝ գիւղացու նեղկայութեամբ չափում էր ամբողջ բերքը, տալիս գիւղացուն նրա բաժինը, իսկ գանձարանի և մելքատարական գիւղում նաև մելքատարի նեղկայութեամբ բանում էր ամբարը, նորից չափում, ջոկում մելքատարի բաժինը, իսկ մնացածի համար կազմակերպում գիւղացիներին իրենց կենդանիներով հասցնելու իրանի ցանկացած տեղը: Եարիքեաբ, փարաքեաբ (կային գիւղեր, ուր իրանի համար յատուկ դաշտ էին ցանում) և բաշպարական գիւղերում սերմացուն մնում էր գիւղում առնուազն հնգամսեայ ագռնավարչի կամ նրա գլխաւորի կամ թէ իրանից լիազօրուած մի ուրիշ անձնաբերքի, գիւղական առնուազի, քահանայի կամ մոլլայի, իսկ մելքատարական գիւղերում նաև մելքատարի ներկայութեամբ բանում էր ամբարը, նորից չափում, ջոկում մելքատարի բաժինը, իսկ մնացածի համար կազմակերպում գիւղացիներին իրենց կենդանիներով հասցնելու իրանի ցանկացած տեղը: Եարիքեաբ, փարաքեաբ (կային գիւղեր, ուր իրանի համար յատուկ դաշտ էին ցանում) և բաշպարական գիւղերում սերմացուն մնում էր գիւղում առնուազն հնգամսեայ հսկողութեան տակ: Մահալի կառավարիչը հսկում էր, որ այդ քանակն էլ անպայման ցանուի:

Բամբակի և ծխախոտի քանակը սեաբլեաբը որոշում էր դաշտում, սրմատի վրայ: Այդ բանը նա կատարում էր պատուաւոր բնակիչների ներկայութեամբ: Բնակիչներից առաջարու-

Թին էր առնում, որ նրանցից ապաւում է տուրք այս կամ այն քանակութեամբ, որ և ժողովում էր մաքրելուց յետոյ: Սովորաբար մի խալվար (27 փ. 32 գր. 48 մոխալ) մաքուր բամբակի վրայ պահանջւում էր և 2 խալվար սերմ: Բամբակը սերմից զատ բանուարնիի (չղբխչի) վարձը (մաքրածի 1/15) հանւում էր բնակիչների մասից:

Տուրքերը ժողովելուց և հաշիւները վերջացրելուց յետոյ՝ բերքերը սեփականների թղթով յանձնում էին խանական ամբարապանների (ամբարապետ), որոնցից ամեն-մի վերի համար առացում էր առանձին բարաթ (ընկալագիր): Այդ բարաթները յանձնում էին մահալի կառավարչին, որը՝ նրանց նորից ներկայացնելով ամբարապետին՝ առանում էր իր գաւառի համար մէկ ընդհանուր բարաթ: Ապա խանական վերերի միջոցով գաւառի բարաթը, որ միևնոյն ժամանակ կառավարչի գործակատարութեան վկայականն էր, ներկայացում էր խանին: Վերջինս առում էր հաշիւները, համեմատում էր նոր բերքի քանակը նախորդ տարուայ եկամտի հետ և արժանաւոր ու անարժան պաշտօնեաներին չափում իր տառանձին բարեացակամութեամբ և խրախուսանքով: Այսպէս էր վարւում նա և մաւոր տարին:

ԳԼՈՒԽ VIII

ԱՋԳԱՑԻՆ ԵԿԵՂԵՑԻՆ.—ՊԱՏՄԱԿԱՆ ԴԵՐԻ ՄԱՍԻՆ.—ՆՐԱ ԱՆՄԻԹԱՐ ԴՐՈՒԹԻՒՆԸ ԴԱՐԻ ՍԿԶԲՈՒՄ.—ԷՋՄԻԱԾԻՆԸ ՀԱՍՈՑԹի ԱՂԲԻՒՐ ԽԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ.—ՆՐԱ ՀԵՂԻՆԱԿՈՒԹԵԱՆ ԵՒ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ ՇԱՀԱԳՈՐԾՈՒՄԸ.—ՆՈՒԻՐԱԿՈՒԹԻՒՆ.—ՆԻՒԹԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ.—ԻՐԱԻԱԿԱՆ ԴՐՈՒԹԻՒՆԸ.—ԿՐԹԱԿԱՆ ԴԵՐԸ:

Մինչ քայլ առ քայլ ծանօթացանք Անդրիավկասում մինչ ռուսական նուաճումը տերող պետական, վարչական, դատաստանական, դասային, հողային և հարկային կարգերի հետ: Հայ ժողովուրդը—քաղաքներում և գիւղերում—մեր նկատմամբ միջակ վերաբերմունք էր ապրում: Քաղաքներում այդ ժողովրդի

պատկները—վաճառական և արհեստաւոր—պարփակուած էին քառ մեծ մասին համքարութիւնների մէջ։ Գիւղերում նրանց վարչական և անհատական միաւորը գիւղական համայնքն էր։ Թէ համքարութիւնը և թէ համայնքն իրենց ներքին կեանքի մէջ ազատ էին իշխանութեան ձանձրացուցիչ միջամտութիւնից։ Դա էր այն հանգամանքը, որ որոշ չափով թեթևացնում էր բռնատէրի լուծը։ Դա էր գլխաւորապէս այն պատճառը, որ հայ ժողովուրդը՝ գարերի ընթացքում համրնթաց հաւ և աւել՝ այնուամենայնիւ չկորչեց (համեմատարար ենք ասում) իր ազգային դէմքը։ Սակայն հայ ժողովրդի ներքին կազմութեան իրագիտ լինելու համար մեզ անհրաժեշտ է նաև ծանօթանալ հայ եկեղեցու և եկեղեցականութեան հետ։ Այդ մասին, երկրի և ժողովրդի քաղաքական կեանքը նկարագրելիս, մենք գիտմամբ լռութիւն պահպանեցինք։ Արդ՝ լուսաբանենք և այդ կողմը։

Այն ժամանակ, երբ հայ ժողովուրդը քաղաքական կեանքի մէջ ճանաչում էր մի շարք աշխարհիկ անհատ կամ կեանքից պետական միաւորներ, իր տարեր պահանջների համար նա Անդրկովկասի չրջանակներում ունէր երկու եկեղեցական նահապետութիւն, էջմիածնի Մայր Աթոռը համապետական պատրիարք-կաթուղիկոսով և համարեա թէ անկախ Աղուանից կաթուղիկոսութիւնը։ Առաջին իրաւասութիւնը տարածւում էր Երևանի, Նախիջևանի խանութիւնների, Վրաստանի և Ռուսաստանի վրայ, երկրորդինը Ղարաբաղի, Գանձակի, Շեքիի և Շիրուանի խանութիւնների։ Երկրորդ կաթուղիկոսութեան աթոռանիստ վայրն էր Գանձասարի վանքը (Խաչէնում)։

Հայ եկեղեցու այդ երկու բարձր պետերն էին իրենց առաջարկել եկեղեցական գասով հարում ժողովրդի հարեր պէտքերը, չանում բաւարարելու նրա մասար պահանջները։ Եւ ոչ միայն այդ։ Եկեղեցական գասն էր մելիքների և տանուտէրների հետ միասին կազմում հայ ժողովրդի ներկայացուցչութիւնը, թէ երկրի մէջ՝ թագաւորների և խանների առաջ, և թէ դուրսը—քաղաքական հարիւրների վրայ երևացող Ռուսաստանի աչքում։ Ժամանակաշրջանի պաշտօնական թղթերն այդ են ապացուցանում։ Նրանք բոլորը պրսում են հայութեան համար։ Բայց կաթուղիկոսների, մելիքների և տանուտէրների անունով։ Մենք

արդէն վաճանք, որ մելիքներն ու տանուտէրերն իրական այժ էին երկրի մէջ. նրանք ժողովրդի անմիջական իշխանաւորներն էին, ուստի և կարող էին որոշ նկատելի քաղաքական դեր խաղալ: Իսկ ինչ էր ներկայացնում եկեղեցականութիւնը:

Հայոց եկեղեցին մի բացառիկ պատմական դեր է վերցրել իր ուսերի վրայ,—լինել ոչ միայն հաւատացեալների կազմակերպութիւն, այլ և ներկայացնել ազգն օտար աշխարհակալների առջև: «Քրիստոնեական ճշմարտութիւն է,—ասում է Օրմանեանը,—որ ուր քաղաքական կապակցութեան կապը կը պակսի, եկեղեցական կապակցութեան կապն է, որ դարն կրկնակէ, և միութեան ու զօրութեան պէտք եղած այժը կրնձեռէ: Այս կերպով Ազգային եկեղեցին կրլինի դարպարեալ հայրենիքին տալին ներկայացնող երեսի նշանը, և սրան վերադարձ ձգտումներուն պահպանութիւն բաշխողը)»: *Ընդհանուր պատմութիւնը մեզ տալիս է Օրմանեանի ներկայ մտքին հակառակ պատասխան: Գաղտնիք չէ, որ եւրոպական միջնադարն ազգային պետութիւն չէր ճանաչում, որ թագ քաղաքական միութիւնների հանդէպ ծաղած էր կաթոլիկ եկեղեցու կուռ և բյնածաւալ կազմակերպութիւնը: Այն էլ գաղտնիք չէ, որ հայրենիքի և ազգային պետութեան ուժեղացումը, որ միաժամանակ քաղաքներում կենտրոնացող բուրժուազիայի պահանջն էր, իր սկզբնաւորութեան մէջ նախ և առաջ ընդհարուեց եկեղեցու հետ: Բողոքականութիւնը Հռոմի պերիշխանութեան դէմ պայքար էր ինքնամփոփ հայրենիքի պահանջը: Ուրեմն այստեղ ոչ թէ եկեղեցին է դալիս «դարպարեալ հայրենիքին» նշանը դաստնալու, այլ անկախ հայրենիքի պահանջն է, որ կրծանում է եկեղեցու վերացնող, յարդարող և դիմազուրկ դարձնող այժը: Եթէ հաշտունք Օրմանեանի տեսակէտի հետ, այն ժամանակ պիտի ընդունենք, որ Հայոց եկեղեցին միանգամայն տարբերում էր իր սերտական ձգտումներով մնացած քրիստոնեայ եկեղեցիներից: Արդեօք այդպէս է:*

Քրիստոնէութիւնը տարածուել է Հայաստանում երկու երկրներից. Ասորիքից (Եդեսիա) և Յունաստանից (Կեսարիա):

*) Մ. արքեպ. Օրմանեան՝ «Հայոց եկեղեցին», կ.-Պօլիս, 1911 էջ 246.

Մի հայ բանաստէր իր գրքում հաստատում է*), որ այդ հանգամանքը զարկ չարունակ Հայաստանի քրիստոնեայ նոխրապետութիւնը բաժանում էր երկու կատակցութիւնն—յունաստէր Գրիգոր Լուսաւորչի և նրա սերունդների և ևկեղեցու ինքնագլխութեան ձգտող Ազիանոսի՝ իր սերունդներով: Վերջ ի վերջոյ այս վերջին ուղղութիւնն էլ յաղթանակում է և հայոց կաթուղիկոսները օծման համար այլևս գտղտրում են գնալ Կեսարիայի յոյն եպիսկոպոսին: Ի՞նչ էր նշանակում այդ: Որ հայ կղերը, անջատուելով յունական ևկեղեցու ներմարկումից, կամենում էր հայ քաղաքական կազմակերպութեան հետ զուգահեռաբար իր ինքնուրոյն կազմակերպութիւնը հաստատել: Դա նպատակայարմար մի ազգակերտնացում էր: Ազգակերտնացում ընդհանուր ևկեղեցու տեսակէտից, կերտնացում հայ ևկեղեցու համար: Եւ այնուհետև կերտնացած հայոց ևկեղեցին, մեր երկրի մէջ, որ բաժանուած էր նախարարութիւնների, սկսեց կատարել մի արտակարգ դեր: Նրա պետին հարևան երկրների կաթուղիկոսները մեծ էին հաւատում, քան Հայաստանի թագաւորներին: ԵՒկեղեցու պետը հանդէս էր գալիս հաշտեցնողի դերում, նա ատրում էր օգնութիւն խնդրելու, դաշն կապելու: Մինչ այս բոլորը պետք բացատրել նրանով որ հայ կղերն իր վարք ու բարքով աւելի էր և վայելում էր ժողովրդի մէջ երկրի ներսում և մէջ երկրից դուրս ամենքի յարգանքը: Ա՛չ: Հայ կղերի հետ հաշուի էին նստում, որովհետև նա այժ էր: Նոյն հայ բանաստէրն ասում է, որ հայոց ևկեղեցին էլ ենթարկուեց նախարարացման, այնինքն նա էլ բաժան-բաժան եղաւ ըստ նախարարական կարգերի և տոհմանների: Մեզ թւում է, թէ դա տեղի ունեցաւ իսկ վարչական գործը դիւրացնելու համար: Յամենայն դէպս մեսր յայն տրիզոնների տէր նախարար-կղերն այն չէր, ինչ աշխարհական նախարարը, որ յաճախ մի տոհմանափակ ցեղապետ էր, փակուած իր ծննդավայրի մի անկիւնում և տարուած զուտ տեղական շահերով: Շատ է մոռանալ, որ առաջին քրիստոնեաները դրսից Հայաստան բերին և կազմակերպչական անգին փորձառութիւն: Նրանք գալիս էին Հռոմի ենթակայ երկրներից, իսկ Հռոմի քաղաքացիա-

*) Адонцъ. „Арменія въ эпоху Юстиніана“.

կան և պետական կեանքը նման չէր Հայաստանի յետմիսյոնեթեան։ Հայաստան եկող քրիստոնեաները նման էին մեր ժամանակների միսիոներներին, որոնք հեղափոխի դիմակով մտնում են որևէ նահապետական երկիր և սպա՝ այժ կոպիտով մի պատուհաս դառնում այդ երկրի դէմին։ Ինչ և իցէ։ Հայոց եկեղեցին երկրի մէջ այնքան զօրեղացաւ, որ Ներսէս Պարթևը ձգտում էր ամբողջ երկրի բնակչութիւնը վերածել կրօնական միաբանութիւններէ։ Պաղ Բագրատը, որ չէր հաշտւում այդ ձգտումների հետ, կղերի զօրի սակ դարձաւ անհնազանդը հայ արքաներից։ Յաճախ պատահում է, որ հայոց եկեղեցին ձգտում էր վերիշխանութեան և՝ պետերով աշխարհական իշխանութեան դէմ՝ Բագրատից նրան։ Եւ երբ նորին ու արտաքին պատճառներով ընկաւ այդ իշխանութիւնը, հայոց եկեղեցին իր կազմակերպչական վարձառութեան, իր նիւթական այժ չնորհիւ դարձրեց ընդհանուր ուսումնարանից, ինչպէս Ֆիլիկոսը մանրներից։ Եկեղեցու բախտին էլ այնպէս դուրս եկաւ, որ հայ երկրին սերտող Բագրատական ժողովուրդներ, որոնք անկարող էին վարչական բարդ մեխանիզմներ առնչել և որոնց հասարակական կեանքի մէջ կրօնը բռնում էր առաջնակարգ տեղ։ Եւթամ կրօնը, որքան էլ հակառակ լինէր քրիստոնէութեան, այնուամենայնիւ ճանաչեց նրան և նրա պատասխանները յատկացրեց պատուար տեղ։ Այդ պատասխանները իսկապէս համար լոկ կրօնական չէին, այլ և ազգայինները, որովհետև իսկապէս կրօնական նաև ազգային էր։ Այդ նոյն չափի կերտումը խիստ շահեկան եղաւ հայոց հոգևորականութեան համար և եկեղեցին դարձաւ ազգը ներկայացնող կազմակերպութիւն, որ հիմնուելց և մշտապնդց հայ կղերականների այն դատանքը, թէ հայասանեայց առաքելական եկեղեցուց դուրս հայութիւն չկայ։

Ահա միայն այս պատճառով հայ եկեղեցին դարձաւ «ազգապարիսպ հայրենիքին տալին ներկայացնող երևելի նշանը»։

Նախորդ դարի սկզբում հայ եկեղեցականութիւնն այնքան էլ մեծ վարկ չունէր մահմեդական աշխարհի աչքում։ Էջմիածնի ամբողջ շուրջը տեղի ունէր մի դաղնիլի պայքար Բաւիթ-Դանիէլ կաթուղիկոսների մէջ. կաթուղիկոսութիւնը դարձել էր

դիւանագիտական միջոցներով, խաղերի ու չահագործման առարկայ: Այդ միևնոյն ժամանակ Արտանից ամուսի համար Դանձակում օծուած եպիսկոպոս նպատական էր դարձ Վրաստանի թեմում, իսկ Ամարասի տաճարը եկեղեցին կոչ պիտի դարձնել Ղարաբաղի խանի ձեռքում: Դրութիւնն այնպէս էր, որ այդ միջոցին եկեղեցու բարձր պաշտօնեաներն իրենց հօտի կամքին հակառակ, իսկ անձնական փառասիրական ձգտումներին յագուրդ տալու համար,—ջանում էին նիւթի և անունի միջոցներով ձեռք դնել եկեղեցու գլխի: Այդ նպատակին հասնելու համար նրանք պիտի վայելէին խանական բարեացակամութիւնը, որ տրւում էր քաւներին և հաճոյացողներին: Պակաս դեր չէր խաղում և կաշառքը: Հարկաւ, նման պայմաններում եկեղեցու պետը չէր կարող յարգանք պահանջել դէպի իր սահմանը. նա չէր կարող պատուար կանգնել խանական իշխանութեան բռնութիւնների: Իր այժն ու կշիռն այդպիսի պետը առանում էր ոչ թէ հաւատացեալների ճանաչութիւնից, այլ նրանց ճնշողից: Այդ ճնշողները լաւ գիտէին, թէ ում են թարգման կարգում ժողովրդի համար: Պարզ է, որ նրանք առանձնապէս կարիք չէին զգում հաշուի նստելու նրանց հետ: Այսպիսով հայրենիքը վտանգուած կազմակերպութեան ներկայացուցիչներն ամենևին չէին մտահոգում ինքնուրոյնութեան և ընդհանութեան մասին. բաւական էր, որ նրանք իրենք անձամ պատճառ կացութեան մէջ էին: Սա, հարկէ, ընդհանրացած չէր հայ բարձր եկեղեցականութեան համար: Հայոց եկեղեցին քիչ չէ տուել արժանաւոր հովիւներ, որոնք լաւ թէ վատ, մեր պատմական անցեալում բան չունու կարողութեան աչքառու են հայութեան առաջ ունեցա չնչին բացառիկ դէպքի մէջ: Սակայն դրանք եղել են անհատներ, իսկ եկեղեցին, որպէս կազմակերպութիւն, միշտ էլ յարմարուել է տիրող կարգերին և յաճախ այդ կարգերի մէջ է փնտրել իր այժը: Պատահական չէ, որ հայ կաթոլիկներին ու բողոքականներին նա առաջուց էր օտարանան զէնքով. պատահական չէ, որ նա ամենևին չէր մտահոգւում, թէ իր հօտի հաւատացեալները կորցնում են ազգային լեզուն: Բաւ էր, որ նա հօտ ունենայ. այդ հօտի ինքնուրոյնութիւնը, ազատասիրութիւնը եկեղեցական խնդիրներ էին:

Աելին։ Այդ հօտի ազգային գոյութեան խնդիրները նա զրաւուհց այն ժամանակ, երբ օտար ևկեղեցիները սկսեցին արտել և խորթացնել նրա անդամներին։ Այսուհետ արդէն խախտւում էր նրա նիւթական այժմ պատասխանատու լինա կամաց-սկամայ պիտի դիմէր ինքնապաշտպանութեան։ Դա մի միջոց էր, որ թելադիմում, օրինակ, համապատասխանում էր երկրի կառավարութեան ներքին ձգտումներին, այն է ունենալ այնպիսի հպատակներ, որոնք հաւատակիցներ չունենան պետութեան սահմաններից դուրս, մի հանգամանք, որ ամէն էլ սովոր եղ պետական պետութիւնների պատասխանատու լսունել նրա ներքին գործերի մէջ և մի բան պէտք նրանից։ Եւ այդ հանգամանքն ասելի էր նշանակելից գործում հայ ևկեղեցականութեան արժէքը։ Այս՝ և միջի այլոց։

Էջմիածնի կաթուղիկոսութիւնը պարսկական կառավարութեան և խանական անմիջական իշխանութեան առկ պակաս նշանակութիւն չունէր պետութեան մէջ։ Հայոց հոգևորական գլխին վրայ ևրևցել էր Ռուսաստանը, որ առաջ էր խաղում քրիստոնէութեան պաշտպանի դրօշակով։ Պարսկաստէր կաթուղիկոսն արհամարհելի այժ չէր։ Վերջապէս, կար և մի շօշափելի հանգամանք, որ մանաւանդ Երևանի խանութեան համար էջմիածինը գործում էր շատ գնահատելի տատասութիւն. դա այն էր, որ այդ վանքն ու Մայր Աթոռը շահագէտ գործիք էին խանի համար։ Պաշտօնապէս նա չնչին տուրք էր առնում էջմիածնից. 400 թուման հինգ գիւղերի համար և 150 թուման նոր-ստրուկ ընծայ։ Սակայն գործը անուան առկ և պահպանի առանձնաշնորհներով նրան յաջողւում էր վանքն ևկամոի խաշտրապէն մասը գցել իր ձեռքը*)։

Էջմիածնի քաղաքական արժէքը նոր երևոյթ էր։ Դա նոր միայն պետ առկէր գործիք կառավարութեանը առնչելու այնպիսի վոխ-յարաբերութիւններ էր և էջմիածնի մէջ, որ շահէր վերջինս հատատարմութիւնը։ Ընդհակառակն էջմիածնի նիւթական և շահարեր արժէքը հին բան էր. նա աշխարհի բոլոր անկիւններից, ուր ցրուած էին հայերը, կարողանում էր նախարարութիւններ առանել, որոնք յուրայ անգամ ենթարկում էին

*) Шопенъ, էջ 678, 682.

հանական անդամները։ Այս պատճառով էջմիածնի դպրութիւնը, անդամ մը չափով նրա բարգաւաճումը, նրա հաչակն ու համբաւը, —անտարակի կերպով գալիս էին ծառայելու պարսկական ընչասիրութեանը։ Սակայն այդ երկու հանգամանքները մինչ մինուին բաւական չէին անխախտ պահելու եկեղեցականութեան դերը։ Կար ուրիշ։ Նրանց անդամների ձեռքին էր ժողովրդի դաստիարակութեան և լուսաւորութեան գործը. նրանք էին մարդկանց ընկերական խորհրդատուն, հոգու համար ուղի յայտնողը, մարմնի համար բարեխօսողը։ Այս բոլորը չէր կարող լինել, եթէ ինչպէս վերն ասացինք, ինքը, երկրի հասարակական կացութիւնը անհրաժեշտ չդարձնէր, որ ընկերական կեանքի որոշ պահանջներին բաւարարութիւն տալը յանձնուէր կրօնի ներկայացուցիչներին։ Դա այսպէս ասած կազմում էր հայոց եկեղեցու հասարակարանական անհրաժեշտութեան հիմքը։ Թէ ինչպէս էր նա բաւարարում ընկերական կեանքի առաջադրած կարիքներին, —դա այլ խնդիր է. դրա հետ մենք կը ծանօթանանք յետագայում։ Այժմ խնդամուտ լինենք այն բանին, թէ ինչպէս էր նա հաւաքում իր նիւթական ոյժը, որով քաղաքացնում էր թէ պարսկական իշխանութեան քիմքը, թէ իր ազատութիւնների անաչխատ գոյութիւնը պահպանում և թէ հասարակական գործերի վրայ ծախում։

Հայոց եկեղեցին նախորդ դարի սկզբում, ինչպէս և այժմ, իր պէտքերը հոգում էր հաւատացեալների կամաւոր նուէրներից գոյացած միջոցներով։ Նա պարտադիր տուրքահաւաքութեան իրաւունք չունէր։ Այդ հանգամանքն անզգալում ստիպում էր եկեղեցական դասին լուրջ ուշադրութիւն դարձնել եկեղեցու նիւթական գործերի վրայ և օրինքուն մտահոգել նրանց ընթացքին մասին։ Սակայն գրքան էլ եկեղեցական դասը յոյնեցնէր իր ուղին, ծրագիրներ յօրինէր, քակէր ու կապէր, այնուամենայնիւ նա վերջ ի վերջոյ պիտի դար այն եզրակացութեան, որ իր ներկայացրած կարմակերպութեան և իր դասի անվտանգ գոյութիւնը խարխլում են այն բարոյական արժէքների վրայ, որ ցուցադրում էր հայ ժողովրդի առաջ։ Եթէ պահ մի վերանար այն բարոյական կապը, որ կար եկեղեցու և ժողովրդի մէջ, եկեղեցական դասն անկարող կը լինէր յարատևել

իր գոյութիւնը: Նրան պաշտպան չէր կանգնած աշխարհական իշխանութիւնը, որքան էլ նա ճանաչած լինէր եկեղեցականութեան ներկայացուցչական իրաւունքը: Աշխարհական իշխանութիւնը բնդհանրապէս չէր ներթափանց եկեղեցականութեան և ժողովրդի ներքին փոխ-յարաբերութիւնները, բայց այդ չէր նշանակում, թէ նա անտարբեր իրաւունքը էր տալիս նրան պարտադիր դրութիւններ առնելու կամ թէ ընդունում էր որ եկեղեցականութեան դիմումով ինքը պարտաւոր է այնտեղ ուր չի ներթափանց խօսքը, հրապարակ հանել իշխանութեան կչիռը: Ո՛չ, այդպիսի բան չկար: Հայոց եկեղեցականութիւնը մնում էր չարժուել այնպիսի եղանակով և ճկուն գործելակերպով, որ առանց մարմնաւոր իշխանութեան էլ, շահէր ժողովրդի համակրանքն ու աջակցութիւնը: Դա այնքան էլ դժուար բան չէր այդ խաւար ժամանակներում, երբ ուսումն ու կրթութիւնը եկեղեցական դասի անխախտ մենաշնորհն էին:

Եկեղեցին միակ հիմնարկութիւնն էր հայկական ցրուած իրականութեան մէջ, որ դեռ պահպանում էր որոշ կազմակերպական կապ իր ճիւղերի և կենտրոնի մէջ: Ամենուրեք նա ունէր իր ապաստարանները, որոնք իրարից էին այն ներքին կապին, որ կար իրենց և կենտրոնի մէջ: Ինքն բուն ինքնին այդ կազմակերպութիւնը, որ ունէր գործաւոր էր իր բարոյական ընոյթի շնորհիւ, մի քաշող և ոգեկոչիկ հնարնութիւն էր և եկեղեցական դասին ընձեռում էր իշխանաւորի իրաւունք: Այդ դասի կենտրոնը, Էջմիածինը, առնում էր իր ցրուած հայութեան մէջ մեծ հաղորդակցութիւն: Դա համար նա ունէր իր նախարարները, որոնց առաջ հաղորդակցական միջոցների և ապահովութեան բարդութիւնն արդէն չէին հանդիսանում ճանապարհ կտրել Էջմիածնից մինչև Երուսաղէմ, Լեհաստան և այլն և այլն, ուր կար հայկական գաղութ և բարեկեցութիւն: Նախարարները Մօտից առաքում էին հաւատացեալների, բանութիւնների, լոյս ու հաստաչանքների նախարարութիւններ էին անում հայկական գիտապարտեզին. արտաճմլիկ կերպով պահպանում էին Մայր Աթոռի առաքելական պահանջներից և յորդորում էին վրկել ազգային արժէքները, նախարարութիւններ անել նրա օգտին

չմոռանալ նրա ողառատութիւնները, որոնք հրաժարուած երկրային վայելքներից՝ դիշեր-ցերեկ ազօթքներ են հնչեցնում ազգային-ների երկրային բարեկեցութեան և նրանց մեղքերի քաւութեան համար։ Նուիրուածութեան միջոցով ցրուած հայութեան հետ կապ պահպանելը և նրա աջակցութիւնն առանալը հատուկէն հին ավանդութիւն էր։ Դա պիտի ծագած լինէր այն ժամանակներից, երբ հայ-հայրենիքը սկսուց զատորկուել հայութիւնից։ Գնացողը չէմոռացաւ իր ցրուած հօտին։ Նուիրատուութիւն դրկելը ընդհանրացած երեւոյթ էր։ Այդ մասին հին ժամանակների համար մենք ունենք նաև օտարների վկայութիւնը։

Լեմբերգում բնակուած կաթոլիկ պատմիչը, օրինակ, գրում է՝. «Յառաջ քան զաւուրս գայոսին ի 11-րդ աւուր յուլիսի 1665 ամի ժամանեաց այսր նուիրակ կաթուղիկոսին Հայոց, Պօղոս եպիսկոպոս Թոխատցի հանդերձ այլով կրօնաւորաւ Հայոց Ցուլհաննու և սուրբ Գարապետ վարդանաւ, զան ժողովելոյ զնուիրակ կաթուղիկոսին ի ժողովրդենէն, որպէս առնէ երբեմն կաթուղիկոս, առաքելով զնուիրակս իւր ժողովել աւուրս զան հաւատացեալոյ գհարկս Տաճկաց և Պարսից»)։*

Այսուհետ պարզ յիշուած է, թէ ինչ նպատակի պիտի ծառայէր նուիրակի հաւաքած դրամը։ Հայը երես դարձնելով հայրենիքից՝ էլի ազատ չէր կարգադրելու իր վաստակը. դրանից նա բաժին պիտի հանէր տաճկին և պարսկին։ Սրանց ձեռքը յաճախ չէր հասնում նրան, բայց կար հայութեան ծոցում իր շրջափակները ստրուծած ազգային մի կազմակերպութիւն, որին, որ անուղղակի կերպով պարսկի համար գաստարկում էր հարկ դրամը։

Մ. Թոխատցիի վկայութեամբ նուիրակը հաւաքում էր հետեւեալ կամաւոր տուրքերը. 1) երեք տարին մի անգամ ամեն մի շինից 40 փարայ, 2) քառասնից. մի տեսակ ողորմութիւն, որ արում էր մեռելի մահուան 40-րդ օրը կամ նոյն իսկ 40-րդ տարեդարձին, 3) յիշատակի. արծաթի կամ ոսկի եկեղեցական անօթներ կամ զգեստներ, որոնց վրայ գրում էր նուիրատուների անունը և ուղարկում էջմիածին, 4) խոստ-

*) «Ոմանք միաբանք Հայոց Լեհաստանի ընդ եկեղեցւոյն Հռոմայ», հրատ. Ղ. Ալիշանի, ս. գ., 1884, էջ 44։

*մանք—որևէ խոտաոյած տուրք, 5) հոգևրաժին—տուրք ննջեցեալների անունով, 6) խաչահամբոյր—որում էր նախկինում որ նա էջմիածին գարձած պահուն նախրատուն փոխարէն համբուրել Իջման տեղը, 7) աջահամբոյր—նախրատուն փոխարէն համբուրելիսն աջը համբուրելու համար, ինչպէս և «գէկու հատուածն» պատճառով («Եկու հատու» կոնդակ էր, որ հաղորդում էր նախրատուին, թէ նրա ընծայաբերութիւնը հասել է էջմիածնի միաբանութեանը—Դ. Ա.) 8) մատաղ—ոչխար, եղ կամ նոցա գինը էջմիածնի միաբանութեան անունով համար, 9) պատարագապատուէր—հանում էր նախրակին, որ քարոզի ժամանակ պատարագ էր անում ձեռքը (?), 10) փոքրատուր—նախրակի սպասաւորների համար, 11) ժամուց—երկու կարգի տուրք մէկը համբուրիկոսի համար, միւսը—նախրակի՝ պատարագ մատուցանելու համար, 12) պաշտօնէից—ընդհանրապէս եկեղեցական դասի համար *):*

*Պատմական մի վաւերագիր ևս ևս պարզ է պատկերացնում նախրակի պաշտօնը: Նա պարտաւոր էր մխիթարել և քրիստոնեական ուղիղ կեանքի կոչել ցրտած հօտին՝ առանց խտրութեան ազգային հոգևոր պաշտօնէութեան իրաւասութեանը: Նրա պարտականութեան մէջ էր մտնում նաև «ընդունել շնորհակալութեամբ և օրհնութեամբ գնաէրս և պրնծայս, զոր ջերմեռանդութեամբ սիրոյ արդիւնքն իրեանց՝ յանուն բուն ծին ծնողի իրեանց արոյ Կաթուղիկէ էջմիածնի, կամ ի վայելումն անձին իւր խակ նախրակին, նուիրել ունեցին 'ի ձեռս իւրեանց հարուստք և աղքատք ծնունդք հարազատք արոյ Կաթուղիկէ էջմիածնի ծնողաւէր և Առաւածատէր ազգն մեր Հայոց»**):*

Մի այլ պատմական վաւերագիր յիշատակում է այն տուրքերի կոնկրետական հասք եւ տուրք. 1) նախրակութեան դրամ երիք տասին մի անգամ, 2) գանձանակ յանուն ս. Աթոռի, 3) հոգեբաժին, 4) խոտամուխք, 5) քառասնից, 6) կտակ, 7) բազմաւանական յիշատակներ և 8) բոլոր առաջնորդների կող-

---

*) Մ. Թաղիադեանց. «Ճանապարհորդութիւն ի Հայս». Կալկաթա. 1847. էջ 240—241:

**) Վրան Հայոց Պատմութեան. գիրք Դ. Թիֆլիս 1894. էջ 808—824:

պատը, հոգևրաժինը, յատուկ եկեղեցական դպատն ու ձին *): Այս աստքերից սմանք յիշատած են նաև Մ. Թաղիադեանցի կողմից: Պէտք է նկատել, որ կամուղիկոսական աստքերը պանձատ էին նախարարների ձեռքով: Այս վերջին վաճառքերը ցուցակագրած ունի նաև առաջնորդական ու հաճացեայական աստքերի անունները: Առաջնորդների աստքերը ունին տան և հող անուն, իսկ քահանաներինը՝ տան և հինգ:

Կամուղիկոսական նախարարները ճանապարհ էին բռնում ոչ միայն վատահացած իրենց ճարտարախոսութեան վրայ **): Նրանք իրենց հետ առնում էին նաև մխուան: Էջմիածինն էր այդ մասնակարտում հայ համայնքներին: Միաոնարաշխութիւնը նրա նկատանների աղբիւրներից մէկն էր: Նոյն կամուղիկ պատմիչներն այդ առիթով գրում են. «Եկեղեցականք Հայոց ոչ ունին իւրեանց ստացուածս, այլ կեան արիւք ժողովրդեանն. նաև ինքն կամուղիկոսն գրեթ ամի ամի ստաքէ ի գաւառն, որ ինչ իւրն՝ այս նախարար ի ժողովել նուէրս և ի վաճառել զխուռնն: Զայս ոչ կամովին գայցեն իր նախարարութիւն կամ յանձինս գրաւիցեն գնասս կամուղիկոսին՝ առիսին գնասս սպառնալիօք նզովից, և բանի հանեն ի բաց իրս, զայս ոչ ասեն նոքա»***):

Հակառակորդ եկեղեցին վարկաբեկելու անդը թևադրել է կամուղիկ պատմին գրելու, որ նախարարը անպատառաճանաչ պարծակալից բանութեամբ էր առանում նրա ժողոված աստքը: Մենք չենք ընդունում, թէ կամուղիկոսական նախարարներն օտար երկրներում բանանալու հնարաւորութիւններ ունեցային. նրանց այժմ իրենց բարոյական հեղինակութեան մէջ էր: Նրանց դէնքը հէնց այն նզովքն էր, որի մասին յիշում է Եմարեցին հատուածը: Այն էլ ասենք, որ անգամ նզովքի կիրառութիւնը մենք վերապահութեամբ ենք ընդունում: Նախարարների համար եկեղեցի կամուղիկոսի հրամանով կազմած հրահանգների մէջ ուշադրութեան է արժանի, որ նախարարը պարկեշտ լինի, չքնա-

*) Անդ, էջ 826։
**) Սմբէոն կամ. երևանցին յիշատ է, որ ինքը մի ճառերի գիրք կազմել նախարարների համար («Ջամբռ»)։
***) Բանի մխուքեան, էջ 146—147։

հայնաց, համնաա, պոյշ, պուրս չըպայ վայելչութեան սահմանները, ապահ ու պարտաւոյծ չըլինի և այլն։ Նախրակի հաւաքած տուրքերը կամաւոր են և նա իրաւունք չունի պահանջկոտ լինել։ «Աւ որ պարտին պոյշ լինել բերանոյ իրնանց՝ մի և մի երէք արտառանել պրան անիծից և նզովից, կամ պրան անարգ և ապիկ, որպիսին են հայհոյութիւնք, ամօթալի բառք, անարգական անուանց անուանմունք ի վերայ մեծի և փոքրի, հարսաի կամ աղքատի, բամբասանք զմիւսոյն ընդ միւսոյ, և զայլս առնելս և անախորժելս Աստուծոյ և արանց իմաստնոց՝ որք արդիւնաբեր են ի գործ արքայ»*)։ Այսպիսով պարզ է, որ նախրակութիւնը չանում էր վերցնել և առանց բարոյական հեղինակութեամբ։ Եւ դառն այն է, որ էջմիածնի նկամաւանների կարևոր պրերն էին նախրակութիւնը և միւս առաքելութիւնը։ Այդ մասին վկայում է նաև Զաքէոսը **)։ Հնդկաստանը վերջնիս վկայութեամբ նախրակութիւններով առնաստաա գաղութն էր։ Այստեղից առաքում էին խաչքարեր և թանկագին քարեր։

Նախրակները մեն-մենակ կամաւոր տուրքեր չէին հաւաքում կամ պանձանակ պառնում։ Նրանք հրաւիրում էին քրիստոնէական բարեգործութիւն անելու. պատճառ էին դառնում կառնելը կազմելու յոգուտ եկեղեցու։ Միւս կողմից էլ հրաւիրում էին ուխտագնացութեան։ Հայրենի արտավայրերն այցելելը բարձր առաքելութիւն էր համարում ոչ միայն հոգևորականների, այլ և աշխարհականների համար։ Տան և հօր պարվելիքում մեր երկրին այցելած ճանապարհորդ Զաքէոսը հաղորդում է, որ պարսից արքունիքը որոշել էր Յակոբ Ջուղայեցի կաթուղիկոսի (1655—1680) պարտքերի դիմաց վաճառել էջմիածնի թանգագին իրերը և զարդերը, սակայն հայերը հաւաքեցին արքունիքին, որ այդպիսով վանքը կամայական և անգամայն կրկտալէ ուխտագնացութիւնը, մի սովորութիւն որ առատ գրամ է մտցնում Պարսկաստան։ Հայերի այդ պատճառանութիւնը համարուեց խելոյի և արքունիքը վախեցաւ որոշումը՝ հրամայեց հայ ժողովրդից հարկապարտար հաւ-

*) Տիւան, գիրք Գ. էջ 814.

**) Шопенъ, 677.

քել կաթուղիկոսի պարտքի գումարը *): Անտագնապությունը մանավանդ խոշոր չարժման բնաւորութիւն էր առանում միւսանց ժամանակ: Անտաւորները գալիս էին ամենախոշոր չափով միջնաւոր դասակներից**): Նրանք պատրաստ էին պատրաստ, ապա ճոչ տալիս միջամտութեանը և անտաւորներին: Անտի ընդունելութեան համար դա բաւական չէր համարում. անհրաժեշտ էին նաև նախապատրաստութիւններ յոգուս վանքի և միաբանների: Աջատարը առանում էին բոլոր միաբաններից, մինչև կրտսերը, անգամ ինքը կաթուղիկոսը: Խնդիրը չափի մէջ էր. բարձր առաքելի հոգեորականն ունի էր առանում, քան սովորական միաբանը կամ սպասաւորը:

Այսպէս՝ նախապատրաստութիւն, միաձայնութիւն և անտաւորական նախապատրաստութիւններ,—ահա այն պարտականութիւնները, որոնք նպաստում էին Էջմիածնին պահելու իր կենտրոնի վարկը: Նկատենք այստեղ, որ նախապատրաստութիւն առանալը, այսինքն կաթուղիկոսից լիազօրութիւնը ստանալու օտար երկրներ, համարում էր խոշոր պատասխանատուութիւն, որովհետև նախապատրաստողը մնում էր ոչ միայն յոգուս վանքի, այլ և իր անձի: Գալինը խոսլ կերպով ակնարկում է, որ յաճախ նախապատրաստների բոլոր ժողովածը վանքի գանձարանը չէր մանում: Դրամն ստացող առաջուանձք չէր նայն իսկ աշխարհիկ կեանքից հրաժարուած հոգեորականի համար, մանաւանդ եթէ նա ապրուած էր եկեղեցական նախապատրաստութեան մէջ բարձր առաքելի տանելու մինչեւ: Այդ դրամով նա կարող էր իր կողմը չահել ընտրող միաբաններին, աշխարհական մելիքներին ու տանուտէրներին և, վերջապէս, պարսիկ իշխանութեան բարեացակամութիւնը: Ընդունուած կարգ էր, որ Էջմիածնի միաբանի մահից յետոյ նրա ունեցածը մնում էր եկեղեցուն: Բայց քանի այդ միաբանը կենդանի էր, նա պատասխանատու էր իր յանկարծեանների համեմատ կարգադրելու իր առաջադրը, գիտակցելէ կանխիկ դրամը: Այդ հանգամանքից հետևում է այն, որ աշքի ընկնող հոգեո-

*) „Путешествіе Шардена по Закавказью въ 1672—1673 г.г.“. Тифлисъ, 1902 էջ 296.

**) Гакстгаузенъ, 195—200. «Чтенія Х. Общ.», 1862, кн. IV, 98—100.

բակոնների աշխարհական ազգականներն ու սերիլիները անուղ
դակի կերպով սերտանում էին եկեղեցու օգտին արած նախըր
բնդունթիւններին։ Ազգային ազգական ունենալը հոգևորականու
թեան մէջ,—արդէն դուռն էր բարեկեցութեան։ Եկեղեցական
հասոյթներին խէթ էին նայում ոչ միայն եկեղեցու հասարակ
ներկայացուցիչները, այլ անգամ կաթուղիկոսները։ Եւ դա այն
պատճառով, որ լսա մեծ մասին եկեղեցուն ծառայելը նպա
տակ չէր, այլ միջոց։

Կաթուղիկոսը, որպէս եկեղեցու մարմնի պետ և ներկայա
ցուցիչ, ունէր եկամուտի և մի այլ տրիթը. դա թեմակալներից
ստացած ընծայարկութիւնն էր։ Ինչպէս երևում է երկրի
պարսկօրէն կառավարելու եղանակը արմատ էր գցել և եկեղե
ցական նախրապետութեան մէջ։ Ինչպէս որ պարսկական պե
տութիւնը երկրի մասերը կապալով կառավարելու էր տալիս այն
կամ այն ազդեցիկ խաներին, նոյնպէս էլ հայ թեմերն էին տա
նում թեմակալներ։ Միայն այստեղ թեմակալութիւնն աճուրդի
էր հանում ընծայարկութեան անուան տակ։ Ծար ու նման
պարսկական կառավարչական սովորութիւններին՝ թեմակալ
ները նոյնպէս խալաթներ էին ստանում կաթուղիկոսից։ Եւ այդ
փոխադարձ սերտաշահութիւնը նորից ապացուցանում է, որ եկե
ղեցին միջոց էր անձնական բարեկեցութեան և փառասիրու
թեան հասնելու համար։

Շարդէնը հետևեալն է պատմում հայ եկեղեցական կարգերի
մասին. «Երեմն եպիսկոպոսները նշանակում են և ոչ—կաթո
ղիկոս հոգևորականներից, նոյնիսկ թէ սրբան են նրանք փառա
սէր և հարուստ, որովհետև պէտք է նկատել, որ եպիսկոպոսի
աստիճան կարելի է ստանալ միմիայն պրսից օգնութեամբ։
Որովհետև անկարգութեան մէջ է գտնում այժմ հին արևելեան
եկեղեցին։ Պատրիարքը իր տեղը առնում է մահմեդականներից
և ապա հոգևոր տեղերը վաճառում նրանց, որոնք նրան ա
վելում»*)։

Հարկաւ, ինչպէս որ կաթուղիկոսն էր վերաբերում իր
ստորադրեալ թեմակալներին, նոյն չափն էին կիրառում և թե
մակալներն իրենց իրաւասութեան ներքոյ եկեղեցականների

*) Шарденъ, էջ 250, 278.

նկատմամբ: Ակնյայտնի սխմնականութիւնը, պարզ խօսինք— կաշառակերութիւնը, եկեղեցական առաքինութիւնների չարքն էր անցել: Ինչպէս որ աշխարհի իշխանութիւնը կողոպտում էր ժողովրդին իր դրծակալների բանի այժ մէջտղով,—այդ նոյնն էր անում և եկեղեցականութիւնը, բայց միայն այլ դրծելակերպով. իր հեղինակութեամբ, նզովքի սպառնալիքով և այլն: Ժողովուրդն ամենաւրեք ոչխա էր և նախապաշարուած, իսկ եկեղեցականութիւնը դարձել էր շամանականութիւն, որ երկիւղ էր ազդում:

Ինքն քահանան հասկանալի է, որ հայոց եկեղեցին իր նիւթական բարեկեցութիւնը չէր հիմնում միայն կամաւոր ուրքների և նուիրաբերութիւնների վրայ: Այդ ալբիւրը չափազանց յոյժ նուազ էր և անհաստատ: Դա այսպէս ասած եկեղեցու եկամուտների օժանդակիչ ալբիւրն էր, թէև յաճախ նա գերակշռող արժէք ունէր:

Հայոց եկեղեցին ունէր նաև անշարժ կալուածներ: Դրանք երկու տեսակի էին. հողային սեփականութիւն—վարելահողեր, արօտատեղիներ, խոտհարքեր, այգիներ և պարտէզներ: Ապա արդիւնաւէտներ—ջրաղաց, գինի և ձիթհան: Անշարժ կալուածների շարքում պիտի յիշել ջուրն և քաղաքների կրպակները: Եկեղեցու սեփականութեան իրաւունքը կամ տարածում էր սրուշ միաւորի վրայ ամբողջապէս (օրինակ՝ գիւղի եկամուտների սեփականութիւն) կամ թէ ցրուած կամ-կամար արդիւնաւէտների և այլն. օրինակ, մի կրպակ թիֆլիսում կամ մի այգի Երևանում: Դրանք կամներով կամ եկեղեցական միջոցներով ստեղծած հասոյթաբեր ալբիւրներ էին: Եկեղեցու գիւղերը շնորհուած էին պարսից շահերից: Սմբէօն կաթուղիկոսի «Ջամբռ» գիրքը հետաքրքրական տեղեկութիւններ է պարունակում եկեղեցու կալուածական իրաւունքների մասին: Վարդապետական գիւղը, օրինակ, առանձին անգամ առանձին շնորհի առարկայ էր դարձել շահերի կողմից: Շնորհած ղրան այդ գիւղը առանձին անգամ էլ սեփականատիրական վէճի նիւթ էր եղել վանքի և այս կամ այն ազնուական ընտանիքի միջև: Ամեն անգամ վանքը կանխիկ ղրամով կամ մահմեդական կրօնական դատարանով շահել է վէճը, հաստատ կալուածագիրը ստացել Շէյխ-ուլ-իսլամներից,

դաղինների և երևելի թուրքերի առաջադրութեամբ: Այդպիսի կարուածագիրներն անգամ վաւերացուել են շահերի կողմից, սակայն նոր դառական վէճերը յարուցանողները դաւճեալ անպակաս են եղել: Եկեղեցին կթի կով էր և հաանողը մի բան էր գլուխ նրանից, թէև թղթի վրայ, հանդիսաւոր երդմամբ հրամայում էր ձեռք չտալ եկեղեցիներին, եկեղեցական դասին և նրանց եկամուտներին: Եկեղեցականութիւնը մահաֆ էր համարում, այսինքն ազատ տուրքից ու հարկից: Տուրք ու հարկից ազատ էին հռչակուած նաև եկեղեցու անշարժ և շարժական առարկաները: Հրովարտակների մէջ յատկապէս յիշողութիւններ էին լինում այդ մասին, օրինակ, մահաֆութիւն դաւթաններին, ոչխարների համար և այլն:

Եկեղեցու կալուածները շահագործւում էին յաճախ վանականների ձեռքով: Վանքն ամեն մի մթարան ուսումնական չէր: Նրանց մէջ կային շատ անպրպէտներ, որոնց գործն ու պարտաւորութիւնը, անասնապահութիւն և երկրագործութիւն էր*): Սեփական անասնութիւնից առաջ բերքին էջմիածինը մեացնում էր և այն համարը բնական տուրքերը, որ ժողովում էին պետականներից մթարանները կամ եկեղեցու գործակալները: Այդ տուրքերը դանազան տեսակների էին և դանազան տոկոսներով առհմանուած: Ամենուրեք նրանք էջմիածնին չէին տալիս, այլ և այս կամ այն վանքին, եկեղեցուն կամ եկեղեցականին:

Էջմիածնի օգտին ընդհանրապէս ժողովում էր՝ հարկաժին (դա ամենի յաճախ դրամական տուրք էր, որ անուանում էր և չնչադրամ) տարբեր տարբեր չափերով, լուծգին, դաւազանապատուղ և այլն: Այս վերջիններն արդէն բնական բերքերով էին նուիրաբերւում: Լուծգինը—լծկան կենդանիների համեմատ էր տալիս—1/4 կոտ ցորեն և 1/4 կոտ գարի իւրաքանչիւր զոյգ լծկաններից. դաւազանապատուղ—1/2 կոտ ցորեն ծանրից: Վերջին նուիրաբերութիւնը հատուցվել հատատուած

*) Ընթերցողի ուշադրութիւնն ենք հրաւիրում Արարատեանի ինքնակենսագրութեան վրայ: Այդ գրքի մէջ կարելի է գտնել էջմիածնական տնտեսութեան նկարագիրը (Յար. Արարատեանի կենսագր. Թիֆլիս, 1892):

էր չլինի քարոզիչ—վարպետների վատաբի դիմաց: Մենք պիտենք, որ խանական պաշտօնեաները առանում էին դըրնալըղ, այնինքն նզուդների փող, որովհետև նրանք ի պաշտօնէ կատարած չըջապայլթիւնների շնորհիւ մաշում էին իրենց քունքուշ ոտները: Հայ վարպետների համար երևի չըչինը ծանր բան չէր, միայն մաշում էին նրանց գաւազանները... Սովորութիւն էր էջմիածնին տալ իւղ, պանիր և այլն: Դա, ի հարկէ, սրանից ծագած նուէրատուութիւններ էին՝ ըստ կամեցողութեան և ունևորութեան*): Տեղն է այստեղ ասել, որ իւրաքանչիւր համայնք իր միջոցներով հայթհայթում էր նաև ծխատէր քահանայի, համայնքի եկեղեցու և նրա միւս ապառաւորների պէտքերը: Դրանք նայնպէս տարբեր տուրքեր էին, որ կամաւոր կերպով հաւատացեալներն իրենց վրայ էին առել: Համայնքի եկեղեցին կենարանից օժանդակութիւն չէր առնում: Միւռոն առնելն էր գլխաւոր կապը: Քահանայական կարգ առնելը մեն-մենակ էջմիածնից չէր կախուած, ուստի և համայնքի եկեղեցին այդ կողմից էլ հարկադրութիւն չունէր կենարանի հետ:

Այսպիսով կենարանն իր առաջած գրամական օժանդակութիւնը, բնական բերքերի նկատմամբ ծախում էր լոկ իր վրայ և իր ներկայացուցչութեան առթիւ: Նա առաջող էր, բայց ոչ աւուր: Նրա տալը կայանում էր գալ նրա մէջ, որ ուխտաւոր հերձիկը կամ ձանձրացնող թուրք պաշտօնեաները լայն հիւրասիրութիւն էին գտնում:

Պարսկական տիրապետութեան ժամանակ միայն հայոց եկեղեցին չէր արտօնուած նուիրաբերութիւններ ժողովելու: Իսլամի կրօնասիրութիւնն ունի հատուած իրաւունքներ ունէր տուրքեր առնելու հաւատացեալներից: Նրա պահանջները պարտիր բնաւորութիւն ունէին և աշխարհական իշխանութիւնը կարիք եղած դէպքում այժ էր գործադրում նոյնիսկ: Իսլամի պաշտօնեաները սովորաբար առնում էին դէրհամ և խումս, այսինքն բնական բերքերի տասանորդ, քառասներորդ մասը

*) „Матеріалы для изученія эконом. быта государств. кр. Закавк. края“, т. I, С. П. Зелинскій „Эконом. быть госуд. кр. въ Шорагялъ, Александр. у. Эриванск. губ.“, Тифлисъ, 1885, §§ 59.

թանկագին քարերից, որոշ բաժին անասուններից և այլն։ Տերտոզ ցկղը իր կրօնի համար առնղծել էր և սիրական դիրք։ Այլակրօններին նա համբերում էր, քանի նրանք ուղղամտութեամբ հարկ էին վճարում։ Հարկի վճարումը գլխաւոր արդարացուցիչ հանգամանքն էր այլակրօնի գոյութեան համար։ Նրա եկեղեցին էլ համբերում էր իր մուրացկանութեամբ հանդերձ։

Սիմէօն կաթուղիկոսը՝ (1763—1780) մանրամասնօրէն խօսելով եկեղեցու կառուածական և եկեղեցականների իրաւական դրութեան մասին՝ մատնացոյց է անում մի վաւերագրի վրայ, որի մէջ նա համախմբած և ճշտած է տեսնում եկեղեցու իրաւունքները*)։ Ծանօթանանք այդ վաւերագրի հետ, որովհետև նա իսկապէս լոյս է սփռում մեզ շահագրգռող խնդիրների վրայ։

Ըստ այդ վաւերագրի, որ տուել է Երեանի խանը՝ հիմնուելով պարսիկ թագաւորների հրովարտակների վրայ, հայոց եկեղեցու իրաւունքները տասնեչորս կարգի էին. 1) Էջմիածնի կաթուղիկոսը, միաբանները և բոլոր ազատութիւնները, նոյնպէս և նրա մուլքերն ազատ են հարկերից. ոչ ոք իշխանութիւն չունի պահանջներ անելու, չափելու նրա արտերը, եկամուտները և այլն։ 2) Երեանի երկրի թէ հայը և թէ թուրքը, եթէ օգտուելու լինեն Էջմիածնի հողերից, պարտաւոր են, ինչպէս օրէնքն է, մուլքը տալ կաթուղիկոսին։ 3) Զանգակ ծեծելը, մեռելաթաղը և ժամասացութիւնը կատարւում է հրապարակով և անարգել. այդպէս է եղել հնուց թագաւորական հրամաններով։ 4) Էջմիածնի մուլքերը (վակուֆ-եկեղեցական) և դրամով գնած գոյքերը, եթէ որև է մէկն իզուր դրաւել է, պարտաւոր է վերադարձնել։ 5) Կաթուղիկոսի գործերին և կարգադրութիւններին վարդապետ, քահանայ, աշխարհական, հայ և թուրք, իրաւունք չունեն հակառակուելու։ 6) Անապատով և յուզումնալից ժամանակներին բնակչութիւնը բերում է և առնում թողնում վանքում իր գոյքը, որը կամ կողոպտւում է կամ վչանում, իսկ յետագայում տէրերը գալիս են և պահանջներ անում. կարգադրւում է, որ նման պահանջներ չլինեն։ 7) Եթէ որև է մէկը ծախում է իր մուլքը կամ կտակում այն Էջմիածնին, ապա նրա

*) «Ջամբռ», էջ 232—233.

մահից յետոյ ժառանգներն իրաւունք չունեն պահանջներ ներ-
լու կամ վէճ բանալու: 8) Եթէ թուրքերը պարտամուրհակով
պարտ են վնաս էջմիածնին, իշխանութիւնը պարտաւոր է
նպաստելու նրա պահանջը: 9) Թուրքերը բռնութեամբ իրա-
ւունք չունեն իսլամացնելու հայերին: 10) Մաքսատեղիներն ու
պահապաններն իրաւունքն չունեն որևէ բան պահանջելու էջ-
միածնի նուիրակներից և միաբաններից կամ խուզարկելու
նրանց պայքը: Նոյնպէս պահանջներից ազատ են և էջմիածնի
ուխտաւորները: 11) Ռուսիական գործակալներն իշխանու-
թիւն չունեն պրատա պահանջելու էջմիածնի մարդկանցից: 12)
Հայ և թուրք իրաւունք չունեն յափշտակելու կամ ինքնագլուխ
տիրելու, հերկելու և մշակելու էջմիածնի հանդերն ու այգինե-
րը: 13) Օշական գետի ջրի կէսը էջմիածնին է պատկանում,
կէսը մեւս գիւղերին: 14) Նորից յիշեցնում է, որ էջմիածնի
միաբանութիւնը Թագաւորական հրովարտակներով միշտ ճա-
նաչուել է ազատ և հրահանգւում է կառավարիչներին, պրակու-
ներին և կառավարական մնացած գործակալներին խոտել պահ-
պանել և կատարել վեհրապրի այս բովանդակութիւնը:

Սիմէոն կաթուղիկոսի վկայութեամբ էջմիածնական իրա-
ւունքները բացայայտող այս վաւերագրից մենք տեսնում ենք,
որ XVIII դարում հայոց եկեղեցականութեան մասին չի յիշւում,
թէ նա լծորդում է մահմեդական հոգևորականութեան նման
պրպտել նաև աշխարհականների քաղաքացիական գործերի
քննութեամբ և դատավարութեամբ: Աւելին: Այդ վաւերագիրը
չի ճանաչում ճիզուիտուած մի եկեղեցի, այլ յատկապէս էջ-
միածնի վանքը և նրա կաթուղիկոսին, որպէս վանահօր: Իրա-
կանութեան մէջ դա առաջացնում էր այն երևոյթը, որ Սիմէոն
կաթուղիկոսի պահանջն՝ Ադուանից հակաթոռ Իսրայէլ կաթու-
ղիկոսից գալ էջմիածին՝ մնում էր անկատար և նա Գանձակի
խանից սառնում էր պատասխան, թէ Իսրայէլն էլ քիչ պէս
կաթուղիկոս է և ինչ կարիք կայ, որ նա ներկայանայ քո հրա-
մանին: Այս պարագայում արդէն պիտի ներգործէր էջմիածնի
կաթուղիկոսների բարոյական կշիռը և էջմիածինը կենարան
ճանաչող հօտի թելադրանքը: Բայց դրանք կային այդհօք:

Ցամենայն դէպս, պարզ է, որ պարսիկ աշխարհական իշ-

խանութ-ինը հետու էր էջմիածնի իրատարութիւններն ծանրանալուց։ Եւ նրա տուած վաւերագիրը ընդհանուր մի կէտ էր ճանաչում—կրօնական պաշտամունքի ազատութիւն։

Սիմէօն կաթուղիկոսի «Ճամբան» յիշատակում է նաև թատրական մի հրավարտակ, որով թոյլատրւում է հայերին իրենց դատական խնդիրներում դիմել կաթուղիկոսին և կարգադրիչներին (էջ 212) և արգելում է թուրքերին չընդհատել և չխանգարել դրան։ Աչքառական իշխանութիւն այստեղ ինչպէս երևում է կամեցել է երկրի մէջ մերթ ընդհանուր կարգը՝ կրօնաւորների դատավարութիւնը—դարձնել ընդհանուր հատատութիւն։ Սակայն, ինչպէս ասացինք վերը, Սիմէօն կաթուղիկոսի յիշած վաւերագիրը, որ իր մէջ ամփոփում էր XVIII դարում եկեղեցու վայելած արտօնութիւնները, այլևս խօսք չի պարունակում եկեղեցականութեան դատավարական իրաւունքի մասին։ Դա էլ մի հանգամանք էր, որ նորից գալիս էր հրահրելու եկեղեցականներին աղեցութեան տէր դառնալ ոչ թէ կրճնած աշխարհական իշխանութեան այժին, այլ զօսնպղուած իր կրօնական և բարոյական հեղինակութեամբ։ Թէ այդ գրծելակերպը որքան էր յաջողւում ժամանակի ոգէտ և նախապաշարմունքներին գերի հոգևորականութեանը,—դա այլ խնդիր է։ Բայց որ ճիշն քաղաքականութիւնը և բարոյական հեղինակութիւնն անհրաժեշտ առաքինութիւններ էին համարւում, դա երևում է հէնց Սիմէօն կաթուղիկոսի խօսքերից, որ ասում է, թէ էջմիածինն անունով իշխող է բազմութիւնների վրայ, բայց գործով ոչ մէկի, թէ ընդունած կարծիքով նա բոլոր բարեքներին ունեցողն է, բայց կարօտ ամեն ինչի, թէ գանելով գանձարան և խառնակող յաւիտականների իշխանութեան տակ, նա անօգնական է և անուսր, որ նա բուռն և ամենակիրթ պահանջների առարկայ է իրարից և այլոց կողմից, բայց ինքը կամաւոր և երկիւղած մուրացող, որ այսպիսի պարագաներում նրա պետին և գործակալներին միանգամայն անհրաժեշտ է պարապել անցեալով, լինել հնարագէտ և փորձառու):

---

*) «Ճամբա» էջ 2։

«Յիշատակութեան արժանի է այն հանգամանքը, որ Սիմէօնի օրօք էջմիածինը մի տեսակ կենդրոնական դրամատուն է եղել և

Ի՞նչ միջոցներով և ձեռնարկութիւններով կարելի էր հասնել այդ նպատակին, այսինքն առանց աշխարհական իշխանութեան աջակցութեան անխախտ պահել եկեղեցու միացնող յատկութիւնը, նրա իշխանական հեղինակութիւնը: Դրա համար եկեղեցին կրօնական հիմնարկութիւն լինելուց զատ ալեաի հանդիսանար և ուսումնականութեան նկրտայացուցիչ: Եւ նա հէնց այդպիսին էր, ուսումնականութիւնը նրա մենաշնորհն էր: Տիանիանք, թէ ինչ ուսումնականութիւն էր դա և ինչպէս էր նա ստացում նրա գործակալների միջոցով:

Կազմակերպուած կրթական գործ հայոց եկեղեցին չէր կարող ունենալ և չունէր: Կրթութիւն ստացածը եկեղեցական դասի կամաւոր գործն էր, որ թէ նիւթական բարեկեցութեան աղբիւր էր և թէ բարի գործ, «հոգու վարձ»: Ամեն մի կրթական և դաստիարակչական ձիրք ունեցող վարդապետ կամ քահանայ իր ժամը կամքով աշակերտներ էր հաւաքում և իր դիւցածը հաղորդում նրանց: Այդ աշակերտները միևնոյն ժամանակ իրենց ուսուցչի տղաներն էին: Վարդապետները առանձնապէս կարիք չունէին դրամական միջոցների, որովհետև նրանց աշակերտները իրանց ուսուցչին ամենայն ինչով ապահովում էին: Սակայն թէ էջմիածնի հոգևորական և աշխարհական գործակալները, նկատի ունենալով այդ դրամական բաժանումները, որոնց միջոցով ամեն մի հայ թէ օտարազգի վոլիցայով (վոխանակագրով) դրամներ է ուղարկում ցանկացած տեղեր և այսպիսով էջմիածինը, բացի իր կատարած շատ գործերից, ժողովրդի տնտեսական կեանքի համար եղել է նաև ինչպէս մի մեծ ընդհանուր բանկային հաստատութիւն, («Դիտան Հայոց Պատմութեան» գիրք Ը. Թիֆլիս, 1908. Յառաջաբան):

ուսումնարանը, թէ վարդապետների և քահանաների վարժողները շատ աննախանձելի ուսումնական արժէք ունէին։ Աշակերտին հարկաւոր էր այն, ինչ գիտէին ուսուցիչները։ Սրանց գիտցածն էլ հասարակ պրպիտութիւն և նախապաշարումներով պատատած կրօնապիտութիւն էր։ Անգլին գոյութիւն չունէր և չէր էլ պահանջւում։ Աշակերտները իրենք կրօնաւորացուներ էին։ Աշխարհական իմաստով և աշխարհի համար այդ կրթութիւնից անհրաժեշտ էր պրպիտութիւնը և դուրէ այն տղեթարական և կէս-բժշկական-կախարդական գիտելիքները, որ պրպէտը քաղում էր ձեռագիրներից և գրքերից։ Դիմենք այն տակաւին վիպասիրութիւններին, որ մենք ունենք ժամանակի կրթական գործի մասին։

Մ. Թաղիադեանցն իր «Ճանապարհորդութիւն ի Հայս» գրքի մէջ հաղորդում է*).—«ուսման եղանակը էջմիածնի մէջ (խօսքը վերաբերում է 1813—1823 թ. թ.) երկու տեսակի էր՝ նոյն և վարժատան։ Նա որ նոյն աշակերտ էր, միանգամայն և պատուոր էր, տեսնում էր ինչ գիտէր իր վարդապետը, քան մեծի մասին փոխեր, երգեր, Սաղմոս և Շարական։ Սակայն այդ վարդապետներից ունի մարդասէրները, թէև իրենք անտեղեակ էին աղատական արուեստներին (հասկնալէն աշխարհի գիտութիւններին. Դ. Ա.), բայց նթէ գտնում էին մէկ մարդ, որ գիտէր այն, խնայողութիւն չէին անում և մանուկներին ուղարկում էին նրա մօտ տղերքու։ Եւ այսպիսով նրանցից ամեն ուսումը լինում էր շատերին նախանձելի և տկարներին ու աղքատներին յուսահատութեան հասատի պատճառ։ Վարժատան ուսումն ընթանում էր մէկ ձևրանի վարդապետի հսկողութեան ներքոյ։ Վարժատունը պարունակում էր հարիւրաւոր մեծ ու փոքր երեխաներ, հինգ տարեկանից մինչև քսան տարեկան հասակ ունեցող։ Վարժապետը չէր յոգնեցնում իրեն տանձնած պէս հարց ու փորձ անելու այս կամ այն աշակերտին. նա տեսնում էր իր մտաւոր պաշարը, իսկ աշակերտները քաղում էին միմիանցից, ինչ իրացնում էին։ Գիշերուայ ժամի երեքին, հաւախօսից առաջ, բարձրանում էին նրանցից մեծերը և տղա-

*) Մ. Դ. Թաղիադեանց. «Ճանապարհորդութիւն ի Հայս». Կալկաթա. 1847. էջ 111—113.

բարում աղօթքի կանգնելու: Եթէ մանուկները դժուարանում կամ յապաղում էին, ապա նրանց թիկունքներին իջնում էին ցուպերի հարուածները: Ժամերգութիւնը շարունակւում էր չափազանց երկար: Անպրաճանաչ մանուկները, քնամօթախ և վաստակած, ատելացած էին լինում երկնի երկը—շարս ժամ աքի վրայ կանգնել: Եւ չէին դիմանում. յաղթահարած քնից ընկնում էին մէջքի վրայ, քաշւում էին մի ապահով անկիւն կամ անդանաման մի խորշը և թաց ու ցուրտ սալայատակի վրայ խռոմփում: Եւ ահա վրայ էր հասնում բարեպաշտ վարժապետը և իր աքացիով հարածում նրա քունը և իրեն էլ քաշում ապաշխարելու սաղմանները: Բայց ինչ էին սովրում այդ դաժան պայմանների մէջ. վախը և անկեղծ շարականները, Նարեկի աղօթքներ, մանաւանդ աղօթքներ առ Մարիամ կոյս և այն սուրբը, որի անունը աշակերտը կրում էր իր վրայ»:

Թադեոսեանցի թողած նկարագրութիւնն ինքը բարբառում է իր մասին. բացատրութիւններն ասելոյղ են: Անցնենք Թիֆլիս և տեսնենք, թէ այդ նոյն ժամանակաշրջանում ինչ կացութեան մէջ էր ազգի կրթական գործը:

*«Ամբողջ քսաներկու մէջ,—գրում է Ալ. Երիցեանցը *),—քանի հայերէն լեզուդը համարւում էր միմիայն Նորաշէն եկեղեցւոյ երկու ոտքով կոպ ժամիկ Եղիազար Գալստեանը, որ իր կաղութեան պատճառով մնացել էր ատանց ձեռնադրութեան: Եկեղեցւոյ ոչ հետու, խարազխանոցում, (հօշխակարների շարքը —Գ. Ա.) ատ վարձած ունէր մի դուքան, ուր գնանի վրայ չորս էին 13 հոգի մանչեր—ազգապատ քահանայութիւնը և ատենի ասկրէ թիակի վրայ՝ ընճի անուանեալ, գրում և կարդում էին բարձրաձայն: Ուսուցանողն էր նոյն ժամիկ Եղիազարը վարձակալով հանդերձ: Դուքանը գոներ չունէր, բաց էր, և փողոցում անց ու դարձ անողները կանգնում նայում էին արձանների խմաստութեան ուսանելուն, նոյնպէս նայող փոլոխայ ատելիս—«վայ վայ» գոռալուն: Դասատութիւնն էլ կանոնաւոր չէր: Շարականը երկու անգամ այդ գալոցում խալիֆայ Եղիազարը թանաք էր եփում և կաւեղէն ամանների ուղարկում էր*

*) Ալ. Երիցեանց՝ «Ամենայն Հայոց կաթուղիկոսութիւնը և հոգևոր Հայք XIX դ.», մաս I, Թիֆլիս, 1894, էջ 78—79.

մանթևին ծախելու վտանգէ փոդոց։ Օր չէր անցնիլ, ժամ չէր անցնիլ, որ ծանօթնները, բարեկամները և աշհատասիրակ խալխֆայլ պատիւը ճանաչողները չգային խնդրելու մէկը թէ «մեռանիք (վերպատասխանը) այսօր բաղանիք են գնում ամբողջ օրով մի կամ երկու մանթիս բաց տուր՝ լուացքի բոշչիքը առնեն ու բերեն», միւսը խնդրում էր թէ՝ «կաուրս կաթում է, թող մանթիից մէկը պայ ծլծի երեխային օրօրելու» և այլն։ Եւ մեծատոգի խալխֆան վհատանձնաբար բաւականութիւն էր տալիս ամենքին՝ ում «խաթրը» որ ունէր, ուզակիով մանթիների լուացքը բաղանիք առնելու, կամ որ կաուրները առնելու և կամ երեխային օրօր կարդալու»։ Գալատեանի գպրոցը գոյութիւն ունէր 1795 թ.։

Նման կրթարաններում աւարտելուց յետոյ նրանց առնելը չատապում էին տգիտ կոչում առնել։ Նրանք այնչափ տգէտ էին լինում, որ յաճախ չէին խմանում մայրենի լեզուի պրագիտութիւնը. բաւ էր, որ բերան առած կարող էին անգիր ասել ժամերգութիւնը։ Երեցականը յիշում է, որ նախորդ դարի քառնախի Բաւականների Թիֆլիսում կային քահանաներ, որոնք միայն պիտէին առերեսով իրենց անուն-ազգանունները, այն էլ վրացերէն։ Եւ այդ ախտ, ծոյլ ու պղերգ, մերացկանութեան առիճանին հասած դասը ծանրացած էր ժողովրդի ուսերին։ Այդ ժամանակ Վրաստանի տայերն ունին 140 եկեղեցի և 737 կղեր. իրաքանչիւր եկեղեցի ունէր 85 ծուխ, իրաքանչիւր քահանայ—16 ծուխ։ Հետաքրքիր բան էր, որ 16 ծուխի համար մի քահանայ իր ընտանիքով վայելուչ ապրուստ ունենար. հետաքրքիր բան էր, որ նման պայմաններում այդ քահանան կարողանար մուտքի իր մասերի ընդլայնման մասին։ Սակայն չնայած դրան, հոգևորականութիւնը հեղինակութիւն էր։ Հաւանօրէն այն պատճառով, որ նրէ ապէտ էր հովիւը ուսի և ապէտ և կոչը էր հօտը։ Թէ չէ առնելի բան չէր լինի, որ հօտը կանգնած լինէր մատաղ ուսի բարձր մակարդակի վրայ և հանդուրժէր իր ներկայացուցչին ունենալու պարմանի մարդկանց մի դաս։

Մեզ համար հետաքրքրական պիտի լինի տայոց եկեղեցու նե-

թական և բարոյական կարողութեան նկարագիրը: Մենք տեսանք, որ թէև նա հայ էրականութեան մէջ միակ ճիւղը, կապը, ներկայացուցիչնը և զրծակալնը ունեցող հիմնարկութիւն էր, այնուամենայնիւ, որպէս կազմակերպուած այժ, մի կազմուածուած դիակ էր: Եւ եթէ նրա հետ հաշուի էին նստում, դա այն պատճառով, որ հայութեան մնացած խաւերը չունէին այդ թէև աննշան, բայց համաստուած կազմակերպութեան թոյլ տուէլի այժն անգամ:

ԳԼՈՒԽ IX

ՀԱՒԱՔԱԿԱՆ ՀԱՅՈՒԹԻՒՆԸ

Արդ՝ մենք պիտինք հայութիւնը ներկայացնող խաւերի նկարագիրը: Մենք ծանօթացանք հայ մելիքներին ու տանուտէրներին*), հայ պետացուն իր համայնքի մէջ, հայ վաճառականներին և արհեստաւորներին իրենց համքարութիւններում և հայ հոգեորականին իր ստեղծած կազմակերպութեամբ: Հետ ինքնին տրոյ է ծագում, այդ դասակարգ խաւերը ներկայացնում էին արդիօք մի հաւաքական անհատականութիւն, մէկ հանուր կամքով և գործելակերպով շարժուող մարմին, արդիօք նրանք գիտակցում էին իրենց մէկ հանրութեան պատկանելիութիւնը, ձգտում էր ստեղծելու այդ հանրութիւնը:

Այս հարցերին պիտի պատասխաննենք բացասաբար: Եւ դա հետևեալ պատճառներով:

Մէկ հանրութեան, հաւաքական անհատականութեան գոյութիւնը կարող էր գոյութիւն ունենալ հայերի մէջ այն ժա-

*) Ս. ուս հետազօտ' (В. Г. „Статистическое описаніе Нахичеванской провинціи", С.П.Б. 1833 г.) խօսելով Բրքական գաւառների բարձր դասի—բէկերի և տզաբարների—մասին՝ ասում է, որ խանական իշխանութեան աչքում հայ մելիքներն ու տանուտէրները համապատճան չէին թուրք բէկերին, թէև նրանք հայերի կողմից նոյն յարգանքն էին վայելում, ինչ և թուրք բէկերը: Որովհետև մենք խօսում ենք հայութեան ծոցում առեղծուած փոխ-յարաբերութիւնների մասին, ուստի ուս հեղինակի այս նկատողութիւնն ինքնին չի ներհակում հայութեան առաջադիմանման խնդրին:

մանակ, երբ նրանք իրենց բնական երկրներն ամբողջ տարած
ծությամբ կամ գոնե նրա մի խոշոր մասի վրայ ապրելին փոխա-
դարձ անհատական-հասարակական շատ ու քիչ նկատելի տար
յատկություններով: Այդ հանգամանքը պայմանավորում էր
Ամեն մի խառնության կամ էլ խառնության ընդհատման մի միա-
սը էր. նրանք բոլորը ներհատկության մեջ էին իրար հետ
Տնտեսական և հասարակական տարբ յատկություններ չկային
նրանց մեջ և չէին էլ կարող լինել, որովհետև այդ երկրները
գերազանցապես գիշատչական էին՝ ապրուստը իրենց տեղա-
կան և ամեմանական չահերով: Այդ մանր տերությունների
այժը կը խորտակուէր, եթե երկրում նկատելի չափով զոյա-
թյուն ունենար տնտես-արդիւնաբերական մի դասակարգ, եթե
քաղաքային բնակչությունն իր քանակով շոշափելի մեծություն
լիներ: Սակայն ոչ առաջինը կար, ոչ վերջինը: Երկուսն էլ տար-
նային գրության մեջ էին և նրան գիշատչական ձայի մեջ:
Տանուտեր անունն էր տալիս թե իր խառնական քաղաքներում
(Երևան, Նախիջևան, Զամախի, Նուխի և այլն): Ի՞նչ էր այդ քա-
ղաքների արհեստագործությունը. ներկարարություն, կաշեգոր-
ծություն, օճառի արդիւնաբերություն, մետաղագործական մե-
տաքսագործություն, բրուտություն, ձիթհանք, գինի, չրագոց
և այլ այսպիսի անուշ արհեստներ ու արդիւնահանություններ: Ար-
դիւնաբերական այդ ճյուղերն էլ զարգանալու հնարավորութ-
յուն ոչ մի էին, որովհետև կենտրոնացած էին կաղաքաների
ձեռքում և ծանրաբեռնուած հարկերի ու մաքսերի պատճառ-
ով: Այսպիսով արդիւնաբերությունը և առևտուրը, որ սովո-
րական մտնում են կենդանություն, շարժում, բոլոր յատկ-
ությունները ու բաղադրիչները, մեր քննության ենթակա երկրը
ներում զրկում էին անհրաժեշտ սոր մակարդակի վրայ
հարկաւ, նման պայմաններում ոչ առևտրականը և ոչ արդի-
նաբերողը չէին կարող մասնել առանձնաւ կազմակերպուած և
իրենց կամքն ու հաշուի նստող հասարակական-քաղաքական
մարմիններ: Այդ մասնագիտությունը մանուկ հետ էր հայ առև-
րականի և արհեստաւորական դասերից: Հանուր հայկական ան-
հասանելիանում խոչընդոտը չէր յուրում նրանց իմքում ա
ճշուած մասերը:

Եթե քաղաքների առևտրականներն ու արհեստավորներն անկարող էին տալով այդ զոհափարներով, ապա ունի նա այդ մեջն անմասնչի էր հայ պետականության: Համայնական և նահապետական կենցաղով ապրող պետականությունը հեղինակության պետի է, նա ինքն անկարող է առնծիլ իր քաղաքական նեկայացուցչությունը: Նրա անջատված և մեկուսացած գյուղերը պարարտ հող չէ քաղաքական զոհափարների տնտեսման համար: Հայ պետական չէր կարող իր վրայ առնել հայության հատաքման գործը: Դրա համար նա չունէր և ոչ մի առնում:

Դույլ այդ մասին մտահոգում էին հայ մելիքները ու տանուտէրները: Մենք գիտենք, որ Ղարաբաղի մելիքական դասը երկար ժամանակ բանակցություն էր վարում ռուսական արքունիքի հետ: Սակայն նախորդ դարի սկզբում մելիքների այժը միանգամայն չլսուած էր. նրանք միայն խանական պաշտոնեաների պես էին և նրանց կարգությամբ ու թուով էլ չշափելի մեծություն չէին կազմում: Ցհաս, ապէս, նոյն գիւղացիները համարեա,—նրանք իրենց մէջ չէին փայփայում որևէ քաղաքական-վատասերական ձգտում, այլ միայն չնորհներ ու դիրքներ էին հայցում հրապարակի տիրոջներից: Հատաքական հայության գաղափարը նրանց համար գոյություն չունէր նոյնպէս:

Մենք է հայ ևկեղեցականությունը: Մենք տեսանք, որ նա էր միայն հայ ճիզուսուրուած կազմակերպությունը, որ հենց դրա համար էլ ճանաչում էր, որպէս ապրի ներկայացուցչության: Սակայն տեսանք նաև, որ այդ դասի անդամները զբաղուում էին գիտական և բարոյական ամենատարբ ասպիճանի վրայ, որ ևկեղեցին, չնայած իր համաստատած գործակալներին, որպէս կենդանի ապարատ գոյություն չունէր: Կազմալուծուած մարմինն անկարող էր մարդկության ներթափել իր այժը և պատրաստ կանգնել իր հօտի համար: Որպէս ամբողջություն նա աննշան մի կազմակերպություն էր, սակայն իր մէջ ունէր անդամներ, որոնք ջանում էին շունչ փչել նրա ընդարմացած գոյությանը, դուրս բերել նրան գարնար ներքից և գործնել քաղաքական գործ: Բայց այդ անհատների ջանքերը զբաղուում էին ևկեղեցական դասի մասյլ անտարբերությանը և նրանք

էլ կամայ-ակամայ դառնում էին գործիք օտար քաղաքակրթության ճանկերում:

Արդ՝ այսպիսի հատարակական կոչմ ունեցող մի ցեղի համար կարելի է ասել, որ նա ներկայացնում էր մի կուռ հասարակական մարմին, որ նա ունէր իր ամրողջականութիւնը, գէթ իր մի խուռն ամրողջութիւնը յուզող ինքնապաշտման գաղափարը Ո՛չ: Հայութիւնն ազգութիւն չէր իր մէջ և իր համար, նա իր ազգութիւն լինելը չէր գիտակցում: Նա ազգութիւն էր ուրիշների, ազգների աչքում, նա ազգութիւն էր, որպէս ուրոյն շահագործման առարկայ, որպէս տարբեր, կաշկանդիչ պայմանների մէջ ապրող հպատակների մի մասսա: Այդ տարբերիչ հանգամանքներն էին, որ անդադար կերպով խթանում էին այդ անկազմակերպ ժողովրդին զգալու իր բացառիկ դրութիւնը: Սակայն զգացումը նրա հոգին լցնում էր լոկ անորոշ յուսացումներով և ապաւումներով: Այդ զգացումը գործ չէր դառնում: Շատ-շատ նա սկսում էր մտրտել, գիմումներ անել, պերճախոսել և էլի ապաել: Իր բացառիկ դրութեան զգացումը, կրկնում ենք, հայ ժողովրդին գործի չէր կոչում, այն գործին, որ իր վաղուան, յայն և ապատապրական հեռանկարներով ծառացնէր ամենին, մեծին և փոքրին, արտօնեալին և զրկուածին: Այդպիսի մի գործ, մի յայն չարժում կարող կլիներ սթափեցնել հայերին և նրանց միացնել ու հաւաքել, նա կարող կլիներ ծնունդ հերոսական առաքինութիւններ, նա կլինէր համակրէր հայի բարոյական աշխարհը, ատրուկ և գծուծ արարածից նրան կը դարձներ յայնելու և յայնախոհ, սակայն, ինչպէս ասացինք, ազգութեան կազմելու տեսլականը հայերը չունէին: Պարսկական լծի տակ նրանք բաժան-բաժան եղած անմասունչ և անկազմ հօտ էին: Ուստ նուաճողներին նրանք դիմեցին, որպէս մարդիկներ, որպէս հատարակական յայն բնապրներից զուրկ արարածներ, որպէս շահախնդրութեան և գծուծութեան մոլի երկրպագուներ: Եւ զարմանալի չէ, որ դա այդպէս էր: Մի ազգ, որ դեռ մէջքին զարերում արատքին ճնշումների չնորհիւ սանդ էր իր համար այս բարոյական ուղեցոյցը, թէ՝

Գ'ուզես որ յաղիր կենաս որ ամեն մարդ ղքեզ սիրէ,
Դուն հոգուն նման կեցիր որ ամեն մարդ ղքեզ կոխէ,

(Նահապետ Քուչակ)

այդ ազգը չէր կարող բարձր առաքինութիւններ անուցանել իր ծոցում։

Այսօր մեր մաքին խորթ է թւում հայերի բնաւորութեան այն նկարագիրը, որ թողել են նախորդ դարի առաջին կէսի հեղինակները։ Նախկինանի գաւառը հետազօտող Վ. Գ.*) գրում է, որ հայերը առատիկ երկչոտ են, զծուծ, քծնող, սրիկատոպի, որ խօսքով նրանք ուսական սէրտպատութեան վերայ կողմնակիցներ են, բայց գործով չեն կամենում որևէ դոհաբերութիւն անել, որ նրանք երբևց հոգևորականութեան հետ թշտուած են նախապաշարմունքների մէջ և այլն։ Վ. Հերդերտսը Ջամախիի հայերի մասին ամենաանպատում կարծիքն է յայտնում։ Ըստ այդ հեղինակի հայերի շահասիրութիւնը առման չի ճանաչում։ Նրա ասելով թուրքերն իրենց բարոյականով շատ ու շատ բարձր են հայերից**)։

Թիֆլիսի հայերի մասին մենք պտում ենք հետևեալ վկայութիւնը. նա վիմագրուկ է և կամոպոլիտ, նրա հայրենիքն այն երկիրն է, ուր նա շահաւէտութեամբ և ապահովութեամբ կարող է գործադրել իր ճկուն ուղղը։ Այսոսիկ էլ նրա ոգին երկչոտ է. անդադարձ է խիստ ակնյայտնի, խիստ վտանգաւոր, որ հայի մէջ գտնել որևէ կարևոր առևտրական շրջանառութեան ազգակ, սակայն նոյնիսկ այս դէպքում ունեցածը կորցնելու վախը հէնց սկզբից չքացնում է գործը։ Խորամանկութիւնը, ննջասիրութիւնը հայերի յատկանիշն է. խաբէութիւնը, շահատակութեան բոլոր միջոցները նրանք օրինաւոր են գտնում։ Շահասիրութիւնը նրանց բոլոր խորհուրդների և վարմունքների շարժիչն է***)։

Հակառակորդները բոլոր հայերին վատ և արատաւոր չի համարում։ Հայ վիպագրութեան մասին նա խօսում է չափ սիրով և բարեացակամութեամբ։ Սակայն քաղաքային բնակչութեան մասին, չնայած իր բոլոր համակրանքներին դէպի հա-

*) В. Г. „Статистическое описаніе Нахичеванской провинціи“ С.П.Б. 1833 г.

**) Обозрѣніе россійскихъ владѣній за Кавказомъ, ч. III С.П.Б. 1836 г.

***) *Նոյն տեղ*, ч. I, էջ 197—199

յները, գոյծ է ածում կշռամբիչ արտայայտութիւններ։ Նրա ասելով հայերը չափազանց շահասէր և անյուսալի առևտրականներ են *)։ Բոլոր յիշատած հետևանքները հայերի յատկութիւնները, ի հարկէ, բնածին առևտրներ չեն համարում։ Նրանց կարծիքով հայի արտաուսութիւնն արդիւնք է նրա նախկին ծանր քաղաքական վիճակի։ Անշուշտ, դա արդարացի տեսակէտ է։ Այդ մասին տարակութիւններ չեն կարող լինել։ Եւ այդ է հենց մեզ հետաքրքրողը։ Այլ այն, որ նման արտահայտի մի ցեղ չէր կարող ընդդիմանալ հատարտական մի բարձր զարգացման։

Այդ չէր կարող նա անել և այն պատճառով, որ չունէր հատարտական յատկութիւնների համար անհրաժեշտ հատկութիւնները, զարգացած լեզու։ Գիրն ու գրականութիւնն անշուշտ ունէր և գրուած էր մի հին ժանգոտած և անհասկանալի լեզուով։ Եղած գրականութիւնն էլ իր բովանդակութեամբ չունէր աշխարհիկ շահերի հետ. նա հոգու վրայ էր խոսում, այնինչ մարմինը գալարում էր տանջանքների մէջ և բորբոսում տգիտութիւնների մէջ։ Հոգին էլ իր գոյծածական լեզուն ունէր, բայց այնպիսի լեզու, որ մի հատուածի բերանի խօսքը դժուարամատչելի էր մեսի համար։ Նրա բաժան-բաժան մնկուսացած գրութիւնները աաջ էր բերել զանազան բորբոսներ։ Լեզուն նրա անմխիթարականութեան մի բնկերն էր։ Նա չնչմացնող բան չէր տալիս նրա տրտին։ Հակառակութիւնը նկատում է, որ հայերը մեծ գրականութեամբ են ոգեորում լեզուները. վրացու հետ նրանք խոսում են վրացերէն, թուրքի հետ—թուրքերէն և այլն։ Լեզուն միջոց է բարեկեցութիւն ստեղծելու համար։ Տկար լեզուները միջոց էր հնարաւոր հասնելու դրան։ Եւ հայերը ընտրում էին տկար լեզուների զէնքը։ Նրանց համար իրենց լեզուն չհա-

*) Гакстгаузенъ, ч. II, §§ 37.

որ այդ հայերը երբեմն են թուրքերէն, վրացերէն և այլն, բայց հայերէն—երբէք *): Այդ տարօրինակ երեւոյթի բացատրութիւնը մենք գտնում ենք մի այլ հնդինակի մօտ: Դուրս է գալիս, որ պրմտատացած կարծիք է եղել, թէ հայ լեզուն էն պէսից նշանակուած է փառաբանելու Աստծուն և սրբերին, որ ժողովրդի «մարմնապաշտ և մեղսասէր» յանկութիւններին նա արձագանքելու իրաւունք չունի **): Հայ լեզուի այդ թշուառութեան, հայ ժողովրդի պատմութեան այդ ներքինացման մասին ծանրութիւնը, տարակոյս, ընկնում է հայ հնդիցեակեան դասի չինքին: Այդ դասը պէտք եղած նման հասկացողութեան տարածողը, որպէսեան նա էր լեզուի և գրականութեան խնամակալը: Ինքը կարուած աշխարհից, թէև ծանրացած այդ աշխարհի վրայ, նա կամեցել է ունենալ և իր ապրումներով շարժուող մի հօտ, մի ժողովուրդ, որ ապրէ աղօթքի, քաւութեան և ապաշխարութեան համար: Իսկ թէ գրանով նա հային տանում էր դէպի ապշութիւն, դէպի բուսական մի կեանք,—այդ նրա հոգը չէր: Այսպիսով մենք տեսնում ենք, որ հայի կենտրոնախոյս յատկութիւններին աւելանում է և մի նոր արատ, հարստատում լեզուի տանտարումը կամայ թէ ակամայ:

Ահա՝ ծանօթանալով նախորդ դարի սկզբում գոյութիւն ունեցող հայ հասարակական կառուցուածքի նիւթական և բարոյական մանրամասնութիւնների հետ՝ մենք նորից կրկնում ենք. կարող էր հայութիւնը թեկը իր մէջ համարուել հաւաքական անհատականութիւն, կարող էր նա ունենալ հաւաքական անհատականութեան պատշաճ ձգտումներ և իդէալներ, կարող էր նա հաւաքական գործ կատարել: Դրա պատասխանը պիտի լինի, ոչ, չէր կարող:

Եւ երբ ընդհարուեցին երկու քաղաքական միաւորները—պետական և բուռնութիւն բռնապետական Ռուսաստանը և տատական-կղերապետական Պարսկաստանը—հայութիւնն իր սեփական քաղաքականութիւնից զուրկ էր, նա միայն գործիք էր տաճկի ձեռքում: Ռուսաստանի տիրապետութիւնը հայերի

*) Гакстгаузенъ, ч. II, էջ 51—52.

**) Սալեմի-Նովայ—լուս ցցած աշխատասիրութեամբ Գէորգ Ալվերդեան, Մոսկվա, 1852, էջ Դ.

համար ձեռնտու էր ինքնահինքեան: Սակայն մեր խօսքն այդ մասին չէ: Մենք կամենում ենք ընդունել, թէ հայութիւնն այդ պատմական մոմենտին պլխակորոյս հօտ էր և չունէր որևէ առանձին նպատակ: Նա մերացիկ էր և նրան «վրկում էին» Մխայն այդքանը:

Մի լուսաբանութիւն ևս: Հետաքրքրական է իմանալ, թէ ինչ քանակական մեծութիւն էր ասասկան հպատակութեան տակ մնող հայութիւնը: Դա ասելով չէ, ասած ծանօթանանք առաջ դրած թուերի հետ: Պետք ասել, որ այդ թուերն էլ վերաբերում են զանազան տարիների, սակայն բոլորը մեծաւոր ժամանակամիջոցի, նախորդ դարի 20—30-ական թուականներին: Վրաստանի համար (բուն Վրաստան, Թաթարական դիստանցիանները,—Բորչալօ, Ղազախ, Ջամշադիլ և Ջորագետ ստա Գանձակի նախկին խանութիւնը) Երիցեանցը տալիս է հետևեալ թուերը. քաղաքային հայեր—4.826 ծուխ, գիւղական—7.054 ծուխ, ընդամենը—11.880 ծուխ: Այդ բնակչութեան զասային պատկանելութեան մասին Երիցեանցը յիշում է, որ հայերի մէջ կային 119 ծուխ գիւղական ազնուականներ և 737 կղեր): Երիցեանցն այստեղ հայերի քանակը տալիս է ծուխներով: Եթէ ընդունենք, որ իւրաքանչիւր ծուխ բաղկացած էր 8—10 հոգուց, մի թիւ, որ չափազանց չափաւոր է նահապետական ժամանակների համար, տալ XIX դարի քրիստոնեական թուականներին վրաստանում կունենանք 100.000 հոգուց բաղկացած մի հայութիւն:*

*Ջնքիի խանութեան մէջ հայերի թիւը 1824 թ. հասնում էր 15.300 հոգու, որոնցից ազնուական դասին պատկանող 51 հոգի, եկեղեցական—75 ընտանիք կամ 315 հ.**): Ջիլասանի խանութեան մէջ 1831 թ. հայերի թիւը 11 հազար էր, Ղարաբաղում (1823 թ.)—30 հազար***): Ղարաբաղում 1832 թ. բոլոր ազգերից բաղկացած բնակչութեան թիւը հասնում էր*

---

*) Երիցեանց՝ «Ամենայն Հայոց կաթուղիկոսութիւնը և այլն» էջ 139—141.

**) Иваненко, էջ 130, 132 և 133.

***) Иваненко, էջ 144 և 146.

20.456 ընտանիքի. բնիկը կազմում էին 1.190 ընտանիք: Դրանց մեծամասնութիւնը թրքական էր, բայց նշանաւոր էր և հայ բնիկի քանակը: Երևանի խանութեան մէջ 1829—1832 թ.թ. հաշուում հայերը կազմում էին 20.073 բնիկներ և 45.000 նոսկ պաղթականներ Պարսկաստանից և Թուրքիայից: Նախիջևանում—2.690 բնիկներ և 10.670 պաղթ.: Օղուրլուի չորջանում—2.388 բնիկներ և 1.340 պաղթ.: Բնակչութեան այդ քանակի մէջ հաշուում էին հայ ազնուականներ—48 ընտանիք կամ 434 հոգի, հիմնականները—135 հ. կուսակրօն, ոչ-կուսակրօն—261 ընտանիք կամ 1.894 հոգի *): Մահամեդականների թիւն էլ հասնում էր 133 հոգու:

Մնում է մեզ յիշանալ այն հայերի քանակը, որոնք՝ պաղթելով Թուրքիայից՝ տեղաւորուեցին նախկին Ախալցխայի փաշայութեան մէջ: Ախալցխայի բնիկ հայերի մասին մենք տեղեկութիւններ չունենք: Գիտենք միայն, որ Ախալցխայի և Ախալքալաքի գաւառները թրքահայ պաղթականներից նշանաւոր բնակութիւն սացան: Թրքահայ պաղթականութիւնը հասնում էր 80 հազարի: Այդ քանակից 22 հազար հոգի տեղաւորուեցին Երևանի և Նախիջևանի խանութիւններում: Ուրիշ 58 հազար հոգին տեղ պիտի գար Ախալցխայի փաշայութեան մէջ և Անդրկովկասի ուրիշ վայրերում, գլխաւորապէս թամթական նախկին դիւանագիւղերում:

Ի մի դումարելով թուական բոլոր տուեալները, որոնք, հարկաւ, շատ անկատար և թերի են, այն էլ վերաբերեալ պատմական տարիներին, մենք Անդրկովկասի բնիկ և պաղթական հայերի քանակը գտնում ենք 300 հազար: Որ այս քանակը պէտք է համապատասխան համարել իրականութեան՝ դրա համար մենք ունենք մի ուրիշ վկայութիւն: Կալկաթայում հրատարակած Մ. Թաղիադեանցի «Ազգաբեր Արարատեան» պարբերականի մէջ **) տպագրուած է մի վիճակագրական աղիւսակ, որից ի միջի այլոց երևում է, որ 1841 թ. հայերի թիւը Ռուսաստանում հասել է. Բեսարաբիայի թեմում—24.521 հոգի (երկուս), Վրաստանի թ.—105.567 հոգի, Ատրպատականի թ.—

*) Шопенъ, էջ 539—642, 690—693.

**) «Ազգաբեր Արարատեան», 1850 թ. № 45, էջ 360.

18.349 հ., Երևանի թ.—113.237 հ., Գյումրիի թ.—62.287 հ., և Շամախիի թ.—12.847 հ., ընդամենը՝ 336.808 հ. (երկու հոգ): Ըստ թեմերի վիճակագրիլը ցույց է տալիս, որ «Ազգային Ազգաժողովի» ակնարկը կազմուած է հայ բարձր հոգևոր իշխանութեան ձեռքով: Յամենայն դէպս 1841 թ. վերաբերեալ թուերը կազմելուն ապացոյց են, որ այդ թուականից 10 տարի առաջ հայերը կարող էին կազմել 300 հազարանոց մի ժողովուրդ: Եւ այսպէս՝ ռուսական ակնարկութիւնն իր հետ 300 հազար հայերի համար բերում էր քաղաքական կեանքի նոր պայմաններ: Այդ 300 հազարանոց բազմութիւնը սկսում էր զարգանալ մինուոյն հասարակական և քաղաքական կարգերի տակ, մի առաւելութիւն, որ գոյութիւն չունէր հին՝ իրարից բաժան-բաժան և իրար բղկտող մանր-մունր իշխանութիւնների մէջ:

Հայերի համար առնծուած նոր դրութեան հետ մենք կը ծանօթանանք այս աշխատութեան երկրորդ մասում:

ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ

ՌՈՒՍԱԿԱՆ ՏԻՐԱՊԵՏՈՒԹԻՒՆԻՑ ՅԵՏՈՑ

ԳԼՈՒԽ I

ՆՈՐ ՏԻՐՈՂԸ ԵՒ ՆՐԱ ՅԵՂԱՓՈԽԻՉ ԴԵՐԸ

1801 *թ. յունուարի* 18-*ին Պօլսոյ Պայլերլեան հրամատարութեամբ Վլասսանը յայտարարուեց ռուսական նահանգ։ Դա ռուսական նուաճողական քաղաքականութեան առաջին քայլն էր, որ հրաւիրեց իրեն քրիստոնեական առաքելութիւն։ Այսօր միայն պատմիչ քաղաքագէտներն են հաւատում այդ յայտարարութեան, իսկ բոլոր շատ ու քիչ հմուտ ուղղափառ համար պարզ էր, որ քրիստոնեաներին պատրաստակամ էր ռուսական քաղաքականութեան հետ, որ նրա բուն նպատակը կայանում էր Ռուսաստանի ընդարձակման մէջ։ Ռուսաստանը Մոսկուայի հին հմայքն էր իր կապը Արեւելքի հետ պահպանում էր Բիւզանդիոնի միջոցով։ Այդ քաղաքից նա ստանում էր փարիսեցութեան իրեր, պերճասէր արեւելեան միտքի գործուածքներ։ Բիւզանդիոնի անկումից յետոյ առեւտրական այդ ուղին այլեւս փակուած էր Ռուսաստանի համար։ Արեւելքի հետ կապ հաստատուեց նոր գծով. Վոլգայի և Կասպիական ծովի վրայով մինչեւ Դուբա, Բաքու և Շամախի։ Վերջին քաղաքը Անդրկովկասի միտքաստղծութեան և միտքաւաճառութեան հռչակուած կենտրոնն էր։ Նա խաչեր առեւտուր էր Ռուսաստանի հետ։ Գեռ ևս Իօհան Ահեղի ժամանակ հրահանգուած էր պահել և ուսումնասիրել Շամախին ու նրա արդիւնաբերութիւնը։ Շամախիի և նրա միջոցով Անդրկովկասի առեւտրական գործառնու-*

թիւններն ունէր զարգացած Միքայել Ֆէօդորովիչ Բօմանովի թագաւորութեան օրերին և մանաւանդ Պետրոս Մեծի արշաւանքից յետոյ *): Պետրոս Մեծն ունէր լայն փոխադրական գաղափարներ. նրան պրաւում էր ոչ միայն Անդրկովկասը, այլ և Հնդկաստանը, որի ճանապարհը նա տեսնում էր ընկած Անդրկովկասով: «Պարսկական հարուստ նահանգների միացումը Ռուսաստանին, գրում է պատմաբանը Պետրոս Մեծի 1723 թ. արշաւանքի առիթով, մի նպատակ ունէր՝ հարստացումն և ռուսական առևտրի ծաւալումն մինչև Հնդկաստան և սրան կցորդ Ասիայի լայնածաւալ մասը» **): Սակայն Ռուսաստանի գաղափարները պրաւել Անդրկովկասը, անմիջապէս հարթրպակցութիւն ունենալ Արևելքի հետ՝ երկար ժամանակ մնում էին անկատար իղձեր: Նա դեռ այնքան հզօր և պատրաստ չէր այդ նուաճողական քայլերի համար, բայց և չէր նայում իր կապն այն տարրերի հետ, որոնք կարող էին ապագայում գործիք դառնալ նրա ձեռքին: Նա յարաբերում էր Պարսկաստանի հպատակ քրիստոնեաներին, վրացիներին և հայերին, թելադրում էր նրանց պատրաստուել ապագայի համար, խոստանում էր նրանց անկախութիւն ու հովանաւորութիւն և այլն:

Պետրոս Մեծի օրով Ռուսաստանը սերից Պարսկաստանի մերձ-կասպիական նահանգներին (Դերբենտ, Բագու և այլն), սակայն 10 տարուց յետոյ, 1735 թ. մարտի 10-ի դաշնագրով նա հրաժարուեց այդ նահանգներից: Ռուսների առաջխաղացումը Անդրկովկասի քրիստոնեաների (հայ և վրացի) կողմից նկատում էր յոգուտ իրենց կատարած մի գործ: Պետրոս Մեծի օրով այդ գործը յաջողութեամբ չպսակուեց: Վրաց թագաւորը սխալուած եղաւ վախչել Ռուսաստան, իսկ հայերը հրաւէր ստացան գաղթել և վերաբնակուել ռուսական հողերի վրայ:

*) Сводъ матеріаловъ по изуч. эк. быта госуд. кр. Закавк. кр., т. IV, Тифлисъ, 1888 г., ч. II, Н. Н. Шавровъ. „Очеркъ шелководства въ Закавказіи".

Հետաքրքիր է իմանալ թէ Ղարաբաղի մելիքները ու Գանձասարի կաթուղիկոսը նոյն ընդհանրի վրայով էին պահպանում իրանց յարաբերութիւնները ռուսական արքունիքի հետ: Այդ ճանապարհով գնաց Խաչէն Օրբն Պարսկաստան և այլն:

**) Бутковъ, ч. I, էջ 146.

Հարկաւ, այդ հրաւէրից օգտուողնիը եղան, բայց հայութեան ճնշող մեծամասնութիւնը հրաժարուեց լքել իր հայրենիքը։ Պետրոս Մեծի քաղաքականութիւնը այն արդիւնքն ունեցաւ, որ հայերի միջոցով սերտ առևտրական յարաբերութիւններ սկսուեցին Ռուսաստանի և Պարսկաստանի մէջ, այսինքն առաջ մղուեց նաև պատմական յիշած «հարստացման» գործը։ Այդ նոյն պատմական ուսած տեղեկութիւններով Ռուսաստանի առևտուրը Պարսկաստանի հետ 1737—1745 թուականների ընթացքում արտայայտում է հետևեալ թուերով.

Ռուսաստանից ներմուծուել է Պարսկաստան

Ռուսների ձեռքով—	416.005 ր.	44 կ.	ապրանք
Հայերի » —	2.484.024 ր.	51 1/2 կ.	»
Անգլիացիների » —	698.133 ր.	92 1/2 կ.	»
Ընդամենը	3.598.163 ր.	88 կ.	»

Պարսկաստանից արտահանուել է Ռուսաստան

Ռուսների ձեռքով—	631.510 ր.	31 3/4 կ.	ապրանք
Հայերի » —	1.597.943 ր.	5/8 կ.	»
Անգլիացիների » —	200.460 ր.	2 3/4 կ.	»
Ընդամենը	2.429.913 ր.	35 1/8 կ.*)	»

Թուերի լեզուն պերճախօս է և ապացուցանում է, թէ ինչու էին հայերը սկզբում խօսքիր լսում Պետրոս Մեծից։

Սկզբում խօսքերի մի ամբողջ շրջան բացուեց կայսրուհի Ռաստրինէ II օրով։ Նոյն ձգտումը դէպի Արևելք, դէպի Հնդկաստան։ Նոյն ծրագիրները հայերից և վրացիներից առաջադրեցին առևտրական պետութեան ծաւալման համար**)։

1783 թ. Վրաստանը, որ պայմաններով, ընդունեց Ռուսաստանի քաղաքական հովանաւորութիւնը։ 18 տարուց յետոյ նա ուսական նահանգ էր։ Ամրացնելով իր դիրքը Վրաստանում Ռուսաստանը կամաց-կամաց սկսեց իրագործել իր հին

*) Бутковъ, ч. I, էջ 222.
**) Անդ, ч. II, էջ 424—425.

քաղաքական ծրագիրը։ 30 տարուայ ընթացքում այժմեան Անդրկովկասի խոշտրագոյն մասը նրա սեփականութիւնը դարձաւ։

Տիրելով Վրաստանին՝ Ռուսաստանն անմիջապէս մտքից իր վարչութիւնը։ Նա ամեն կերպ ջանում էր արմատախիլ անել անկախ Վրաստանի յիշողութիւնը։ Իր անմիջական վարչութիւնը մտցրեց նա և Գանձակի խանութեան գրաւումից յետոյ։ Ապա այդ գործակալութեան դիմից երեանի և նախիջեանի խանութիւններում, երբ վերջիններս թիւրքմէնչայի դաշնագրից յետոյ ճանաչուեցին ռուսական նկիրներս։ Պարսկական խանութիւններից Ղարաբաղը, Շեքին և Շիրուանը որոշ ժամանակ, մօտ 15 տարի, պահպանեցին իրենց առանձնական անկախութիւնը, սակայն 20-ական թուականներին նրանք էլ հաշտուեցին ռուսական գաւառներ։ Բանը նրանում է, որ այդ խանութիւնները 1805 թ. առանձին-առանձին պայմաններով ընդունեցին Ռուսաստանի գերիշխանութիւնը։ Ռուսները մեծ նրկիւղ չունէին խաններից։ նրանք կամենում էին իրենց նուաճման գործն առաջ տանել խաղաղութեամբ և ժամանակ շահելով։ Այդ պատճառով նրանք խաների նկատմամբ գործադրում էին իրենց այժմ նրկիւղը, պատուէրներ էին կարդում և դիջողաբար վարւում այդ մանրիկ բռնակալների թուլութիւնների հանդէպ։ Այդ տեսակէտից չափազանց հետաքրքրական է Վրաստանի կուսակալ իշխ. Ցիցիանովի վերաբերմունքը դէպի Ղարաբաղի Իբրահիմ-խանը։ Իր նամակների մէջ նա Իբրահիմ-խանի հասցէին գրե է ածում ամենանուաստացուցիչ պարձուածքներ. ննդ պարսկական հոգի, որի հաւատարմութիւնը նման է քամուն, վախկոտ և ծառի տերեի պէս դողացող, երիչտա նապաստակ և կնոջաւոր պատէր, ճանճ, որ համբերում է այծուի հետ բանակցութիւններ վարել և այլն։ Նա պատուում է խանին տալ այն հաւատացումը, որ ուղղակի Գանձակի Հատուկ-խանը, այսինքն «հոգը կրծել տալ», պահել*)։ Հարկաւ, որ պարծենկոտ պատէրներ չէին։ Պարսկական խանութիւնները չափազանց անզօր էին յաղթական Ռուսաստանի առաջն առնելու համար։ Եւ նրանք

*) Акты, т. II, № 1417, письмо кн. Циціанова къ Ибрагимъ-хану, отъ 4 февраля 1804 г. № 79.

Ինչպէս ասացինք, 1805 թ. ընդունեցին ռուսական պերիշխանութիւնը։ Ղարաբաղի խանութիւնը, օրինակ այդ քայլին դիմեց հետևեալ պայմաններով. Ջուչին առանում է ռուս բերդապահ զօրք, 500 հոգուց բաղկացած մի զօրամաս իր ապանովով. Ղարաբաղը համաձայում է Իբրահիմ-խանի և նրա տոհմի ժառանգական սեպհականութիւնը. նրանք ներքին վարչական կառավարութիւնը, դատն ու դատաստանն, ինչպէս և հկամուտների դանձումը մնում են խանի իրաւունքին, ռուսաց զօրքին նա տալիս է բնակարան, հոգնում է հացը որոշ վարձատրութեամբ, չինում է անհրաժեշտ ճանապարհները և բացի այդ պարտաւորւում է տալ 8 հազար ոսկի (червонецъ) տարեկան հարկ և պատանի)։ Համանման դաշնագրեր կռնքին նաև Շեքիի ու Շիրուանի խանութիւնները։*

*Խանութիւններն իրենց կիսանկախ դոյութիւնը պահպանեցին մինչև 20-ական թուականները։ 1819 թ. յուլիսի 24-ին Շեքիի Համայիլ-խանի մահից յետոյ կուսակալ Երմոլովը Շեքին տոչակեց ռուսական գաւառ և խանի սեփականներին զրկեց իշխանական իրաւունքներից։ Այդ միևնոյնն արաւ նա 1820 թ. օգոստոսի 19-ին Շիրուանի և 1822 թ. նոյեմբերի 21-ին Ղարաբաղի նկատմամբ, երբ Շիրուանի Մուստաֆա-խանը և Ղարաբաղի Մեհտի-Ղուլի-խանը փախան Պարսկաստան**)։ Խաներն իրենց այդ քայլը յետոյ բացատրում էին նրանով, որ ռուսները պրոմեհամբ չէին պահպանում 1805 թ. դաշնագրութիւնները, որ նրանք պատիւ-անպատիւ խառնւում էին նրանց ներքին վարչական, դատական և հարկային գործերին, որ ռուսական կամնդանտները նսեմացնում էին խանների իշխանութիւնը և այլն։ Պարսկաստանին դիմելով՝ նրանք յոյս ունէին նրա զօրութեամբ յետ գրաւել ռուսներից Անդրկովկասը և սերտանալ իրենց իրաւունքներին։ Յայտնի է, որ վերջին ռուս-պարսկական պատերազմը վերջացաւ պարսիկների պարտութեամբ և 1828 թ. փետրուարի 10-ին Թուրքմէնչայում կռած հաշտութեան դաշնագիրը խորտակեց փախած խանների ինկատութիւնները։ Նրանք*

*) Նոյն տեղ, № 1436, Всеподданѣйшій рапортъ кн. Циціанова, отъ 22 мая 1805 г. № 19.

**) Иваненко, էջ 129.

Պայմանական ազդանշանի միջոցին և նեղում առայան, բայց չըմերհասաստատուցին իրենց հին իշխանական արտօնութիւններն ի մէջ։ Նրանք ճանաչուցին, որպէս արտօնում բարձր դասի անդամներ, որպէս սպնուականներ և հարստերեր և միայն այդքանը։ Այսքով 20-ական թուականներին Անգլիայում ամրողջացած ռուսական երկրամաս էր և ներքին վարուցանի կառավարին։ Դատարաններում դեռ մերում էին հին օրէնքները ու սովորութիւնները, հարկերը խոշոր չափով մնում էին հինները, նոյնիսկ վարչական անձնատրութիւնները մնում էին նախկին մարդիկ՝—վրացի իշխաններ, թուրք բէկեր և ազալարներ, հայ մելիքներ, սակայն ամենուրեք նկատում էր, որ երկիրն ապրում է անցողական շրջան, որ քայլ առ քայլ հրապարակ է գալիս նոր ուժ, որ քայլ առ քայլ հրապարակ է գալիս նոր պետականութիւնը, որ բոլորովին առհամարները՝ նա այլևս դիմադրութիւն չի ունենում իր զարգացման մէջ։

Անգլիայի պատմութեան և տնտեսական փոխ-յարաբերութիւնների հին շրջանը փակում էր։ Ռուսները հէնց թողնում էին այն, ինչ համապատասխանում էր իրենց պետականութեան ոգուն*). մնացած մասնում էր անուշադրութեան։ Նրանք իրենց նուաճած զինքի հետ բերում էին «նոր վարք ու նոր բարք», որը յեղափոխականացնում էր հին լճացած իրականութիւնը և շարժման մէջ դնում բոլոր խաւերին։ Երկրի կառավարութեան մէջ առաջացած յեղափոխութիւնն այն էր, որ նախ սմենուրեք ձգտում կար առնդելու միօրինակ կարգեր և յեղոյ իրարանչիր բնակիչ իր և պետութեան յարաբերութիւնների մէջ նկատում էր գրած օրենքի ներկայութիւնը։ Անգլիական սովը էր իր դիմին տեսնել մարդուն, որը բաղկացած էր իր արտայայտութիւնների մէջ։ Համաստան օրէնքի այժմ

*) Մեր Թաղիադեանցը մի սար նկատողութիւն է անում առանձին պետականութեան մասին՝ նկարագրելով այն ծանր վիճակը, որի մէջ գտնում էին վրացի և հայ ճորտերը Վրաստանում՝ նա ասում է, որ առաջ պետութիւնը չառաջով լինելով իր երկրի ապրուստին՝ չի կանում թեթևացնելու Վրաստանի ճորտերի կացութիւնը և առհասարակ վերջ տալու մերող անկարգութիւններին։ Թաղիադեանցի ասելով ժողովուրդն ունի վատ էր տալիս պարգևներին, քան թէ «Բրիտանիայում պետական պերչաց» (էջ 314)։

նրան անծանոթ էր, իսկ օրէնքն իր ձէնք գործածելու մասին ուղիւմէնթ չունէր։ Այդ պատճառն նոր կարգերի ամենաչփութենէնով կողմն էր, որ մինչդեռ ժամանակ հնարաւորութիւն էր տալու պետութեան պաշտօնեաներին և չարը գործադրել օրէնքը, դնդումներ անել, կողոպտել ժողովրդին։ Ձեղափոխող դիր էր կառարում և հարկային նոր քաղաքականութիւնը, որը կամայ-կամայ բնական տուրերի փոխարէն պահանջում էր հարկերի դրամական հատուցումը։ Բայց ոչ դէխատուն է, ուսանելի նատճումն Անդրկովկասեան զանազան հատարկական խաւերին խթանից դուշել իրենց տեղը նոր պետական կարգերի մէջ։ Այդպիսով նրանք ընդառաջ էին գնում պետութեան պահանջներին, որ ձգտում էր մեր ծայրագաւառում ունենալ երկրի կենտրոնին համապատասխան հատարկական փոխյարաբերութիւններ, մի բան, որ բխում էր պետութեան յարդարող քաղաքականութիւնից։ Ռուսները յեղափոխական դիր կառարեցին ունեւ չատ այսոկ.—նրանք մի հարուածով խախտեցին ընաշրջման կանոնը և հաստատած ճանաչեցին այն, ինչ որ ապրանքի դրութեան մէջ էր և չէր կիրարատուրուել դեռ ևս։ Այդպէս վարուեցին նրանք, օրինակ, տոկի մասնաւոր սեփականութեան խնդրում։ Այդպէս վերաբերուեցին դէպի զանազան ցեղախումբեր՝ ճանաչելով նրանց սովորութիւնները և ճարտասանքը։ Այսոկ խօսում էր ինքը Ռուսաստանը, սովուական, ճարտասանական, լուսաւորիչ ինքնակալութեան թելադրած օրէնքներով կառավարուող Ռուսաստանը։ Իր դասային-պետական կեանքը նա պատուաստեց և Անդրկովկասին։ Հին Արևելեան դէմոկրատիզմը, ուր բոլորը հաւասար էին իրենց իրաւունքների և յոյլտուկ կեանքի մէջ, սկսեց տեղի տալ հաստատուն դասային տիմնարկութիւնների. նահապետականութեան փոխարէն՝ սկսուեց պատուաստուել «սլեման ոսկրի» պաշտամունքը, Հիսոպութիւնը։

Մեզ մնում է նոյնպէս չափ-չափ ծանօթանալ ասիզուած նոր դրութեան և հասարակական դասերի նոր հիերարխանութեան հետ։

ԳԼՈՒԽ II

ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՀՈՂԻ ՇՈՒՐՋԸ

(Ագուռականութիւն եւ գիւղացիութիւն)

Առաւել ապրելագրութիւնը հասարակական կեանքի մէջ սկսաւ տարածուիլ Վրաստանից: Այդ երկիրը հոգի չուրջը առնչած իր փոխ-յարաբերութիւններով շատ նման էր Ռուսաստանին: Աւելին. ճորտական դրութիւնը Վրաստանում աւելի ծանր էր և դժնդակ, քան թէ Ռուսաստանում: Եւ հէնց որ այդ դժբախտ երկիրն անցաւ նուաճողների ձեռքը՝ վրաց ազնուականութիւնը սկսեց մոլեգնօրէն հետապնդել իր իրաւունքների ու արտօնութիւնների: Երկրի նոր տէրերն ազնուականութեան առաջ բացին փառասիրական հեռանկարներ. նրա անդամները կարող էին դիւրքի, աստիճանների, կենսաթոշակների և անունի մէջ դառնալ քաղաքական և դինուորական ծառայութիւնների մէջ: Դրա համար պահանջւում էր ուսման տէր լինել. ծագումն արդէն ինքնին տալիս էր դժուարութիւնների խուշտպոյմատը: Ազնուականները նոր դրութիւն ստեղծելու բարիքները վայելելու համար սկսեցին թողնել իրենց պետական օջախները և կենտրոնանալ քաղաքներում: Այդ հանգամանքն ունեցաւ այն հետեւանքը, որ վրաց ազնուականութեան ապրուստի և վայելքի պահանջները մեծացան, իսկ բաւարարելը պիտի լինէր դիւրագիւտութիւն: Հարկաւ, անհնար բան էր պահպանել հին նահապետականութիւնը և անվնաս քամել ու մղել դիւղացիներին: Այժմ խորանում էր դասերին բաժնող անջրպետը: Վրաց ազնուականութիւնը դնաց իր դասային նեղ շահերի դծով նաև ուրացաւ իր շահագործման չափը, նրա պահանջկոտութիւնը սահման չունէր: Իսկ ռուսական իշխանութիւնն իր կարգի ու պարտաւոր ազգական այժմ պահանջած դէպքում կանգնում էր նրա թիկունքին և զգացնել տալիս կալուածատիրոջ անհրաժեշտ կշիռը: Այսպիսով վրաց անկախութեան կորուստը չէր խոչոտում հին արտօնեալ դասի—ազնուականութեան—դիրքը: Ընդհակառակը, նոր կենսաձևական իշխանութիւնը, որ ունի էր

ուժեղ, պակաս էր այն ամրացնելու և պնդելու հատուտ հիմքերի վրայ։ Աղնուական լինելը նշանակում էր նոր սերտակցության օրով—յարդանք, իրաւունք՝ անդ բռնելու պետական մեխանիզմի մէջ, որ ամրողջովին բաղկացած էր ազնուականներից, ապահովութիւն՝ մարդկանցով բնակեցրած կալուածների տէր լինելու և այլն։ Զարմանալի չէ, որ ասոնցից սերտակցութիւնն ձեռք բերելու մի համաճարակ։ Վրաստանի ամեն-մի աչքաթող բնակիչ առատապէս էր ազնուական դառնալու մարմաջից։ Սկսուեց ապրուծուել վաներտպերը կիզծելու, նորերը հնարելու սերտ։ Ամրողջ կատմակերպութիւններ էին առնծուում դրա շուրջը, կատմակերպութիւններ, որ կեղծում ու վաճառում էին ազնուականութեան արտօնագրեր։ Իսկ պաշտօնական առհասները լցուում էին այդ նորելուկ ազնուականների պահանջներով։ Եւ չկարծէք թէ կեղծարարները մանր աֆերիստներ էին։ Ո՛չ։ Գործի գլուխը յաճախ դառնում էր անուանի նշխանների ձեռքում։ Ժամանակի թելադրանքն էր այդպէս։

Ազնուականութիւնը և ճորտերը Վրաստանում դիւրական դասեր էին։ Հայերն այդ դասերի մէջ աննշան տեղ էին բռնում։ Նրանք կենտրոնացած էին Վրաստանի քաղաքներում, ուր ճորտեր կային, բայց ճորտութիւն չկար։ Բուն Վրաստանից դուրս՝ հայերն ապրում էին այդ թագաւորութեան պատկանող թրքական համարուած գաւառներում՝ Բոլչալում և Ղազախում։ Այստեղի սերտ դասն էր թուրք սղալարութիւնը և հայ մելիքութիւնը։ Դրանց և դիւղացութեան փոխ-յարաբերութիւնների մասին մենք ծանօթացանք այս աշխատութեան առաջին մասում։ Ռուսական սերտակցութիւնն ևս հատուտ, գրաւոր օրէնքների վերածելու հին, սովորոյթի վրայ խարխուլած յարաբերութիւնները։ Պետք ասել, որ ճորտատիրական Վրաստանի մերձաւորութիւնը հրահրում էր սղալարներին և մելիքներին նմանուելու վրաց ազնուականութեան։ Նրանք լոկ վարչական անձեր էին, բայց ձգտում էին կալուածատէր և ճորտատէր դառնալու։ Վրաց պետութեան թուլութիւնն այդ կողմից խիստ նպաստաւոր էր։ Ռուսական սերտակցութեան օրերից, երբ ազնուական լինելը վիճելի բան էր, սղալարներն ու մելիքները չէին կարող բաւականանալ հին արտօնութիւններով։ Նրանք ձգտում

էին ամրացնելու իրենց արտօնեալ կացութիւնը, յարատև պահ-
նելու իրենց անկախութիւնը: Ռուսական իշխանութեան
ընդառաջ գնաց այդ ձգտումներին և 1818 թ. հրատարակեց
ազատներին վերաբերեալ կանոնները*):

Ազատը (կամ մելիքը) ժողովրդի պետն է, որ ապրում է
իրեն կառավարելու շնորհած դիւղում: Նա գիւղի բոլոր վար-
ու բարքի և կարգի պահպանողն է: Նա խրախուսում է մնա-
ներին պարապելու երկրագործութեամբ և շրջահայեցութեամբ
և առհասարակ այն բոլոր աշխատանքներով, որոնք կարող են
բարգաւաճել նրանց դրութիւնը: Նա պաշտպանում է գիւղը արտա-
սահմանից խուժած կամ ուրիշ կարգի գիշատիչներից, հսկում
է նրանց իր ազգականների և հպատակ մարդկանց գիտու-
մով: Նա պատասխանատու է գիւղի ասիլիանական կարգա-
պահութեան համար և իշխանութեանն է յանձնում ապստամբ
զօրաց առաջնորդներին և վախճանականներին: Պատերազմի մէջ-
ն նա հաւաքում է հարկաւոր մարդկանց և իշխանութեան
պահանջով գնում է կռուի: Նա անաչառ դատաստանում է պա-
հանջները, վէճերն և մանր յանցանքները, ինչպէս՝ գողութիւն,
վէրք պատճառելը և հրամայում է անմիջապէս բաստարել, իսկ
ծանր յանցանքների դէպքում, ինչպէս կոպտութ, ապստամ-
բութիւն, սպանութիւն և այլն, տեղեկացնում է գլխաւոր կառա-
վարական պրիստաւին: Հաստատական կարգը խանգարողնե-
րին, ծոյլերին, անբարոյականներին, ծառայութեան և հար-
կատուութեան մէջ թերացողներին նա՝ առաջնորդում գրծած-
ով գրամական տուգանքի վճարելն՝ նեղտարկում է մարմնա-
կան պատժի: Ազատի հետանցութեան կամ բացակայութեան
ժամանակ նրա պարտաւորութիւնները անցնում են իր նշանա-
կած ազգականին: Գողերին և աւազակներին հետապնդելու
գիշատիչներին չընդառաջելու և դէպի հպատակները անցած
անարգար և դաժան վերաբերմունքի համար ազատը նեղտարկ-
ւում է նկատողութեան կամ գրկւում է պաշտօնից: Այդպէս
պարապում նրա իրաւունքների մէջ հաստատում է ազգակա-
նների մէկը: Նոր ազատին ընտրում է գլխաւոր պրիստաւը
իսկ հաստատում գլխաւորի կառավարը: Իր ծառայութեան

*) Иваненко, էջ 120—121.

համար ապահարը բնակչութիւնից առանում է հացի և դրամի տուրք, որ հաւաքւում է առնուէրի միջոցով և պետական հարկերի հետ՝ կազմելով դրանց 1/10: Ամեն ծուխ իր գութանով և արօրով մի օր հերկում է ապահարի, մի օր էլ նրա բոլոր աղքատների համար: Հունձը և հացի տեղափոխելը նոյնպէս բնակիչների պարտականութիւնն է: Բնակիչները կատարում են ապահարի համար անհրաժեշտ շինութիւնները, պրատ են տալիս նրա տեղափոխութիւնների ժամանակ: Նաև տալիս են յատուկ ցուցակներով ծառայ: Պատերազմի ատենից ապահարը առանում է 1/10: Ուրիշ բան ապահարին բնակիչները պարտաւոր չեն տալու: Բայց դատապարտելի չի համարւում, այլ խրախուսանքի արժանի, եթէ ամուսնութեան ժամանակ կամ նոր տան ինքնաօժար բնծաներ մատուցին նրան: Զատուիկներն իշխանութեան աչքում վատ համարում պիտի ունենան:

Ամեն գիւղ իր միջից ընտրում է առնուէրը և մի քանի առանապետներ (նաում): Ասիկանակաո ծառայութեան մէջ նրանք ենթարկւում են ապահարին, իսկ հարկատուութեան, բնական ծառայութիւնների, ապահարին օգնելու աշխատանքի մէջ կրծում են համայնքի պատասխանների համեմատ, ապահով հարկից ու ծառայութիւններից ապահարի ազգականներին և հոգևորականներին:

Ռուսական ներքաղաքականութեան արշալոյսին այս կարգերը սանձելու էին գիւղական ժողովրդի համար: Հայ և Թուրք գիւղացին գրուելու ապահարի կամ մեծերի խնամակալութեան տակ: Նրանց անուշադրութիւնը ճանաչուեց օրինաւոր: Ռուսներն այդպէս վարուելին ոչ միայն Բարչալուում և Ղազախում, այլ և հեռուներում նուաճած բոլոր հայ-Թուրքական գաւառներում: Խանական իշխանութիւնը վերացուեց, բայց խանական պաշտօնեաները մնացին իրենց տեղը. Խանի տեղը բռնեց ռուս պաշտօնեան, որը չնչուում էր նոյն մահալ-նայիբների վրայ: Նոր իշխանաւորն իր կարգադրութիւններով չատ չէր մնում խանից: Փոդովսրդը կողոպտում և կեղեքում էր: Երկրի հոգային անվտանգութիւնն անարդիլ անցնում էր շատ ու քիչ գործ և կապուտիւն ունեցող անհատների ձեռքը, որոնք մի չտեսնուած եռանդով հետամուտ էին լինում գաւառի բնիկների և մեկնելների

չարքում։ Եւ այդ չարժումը դիմադրութիւն չէր դանում։ Ռուսներն այն համոզմունքին էին, որ հայ մելիքներն ու թուրք բէկերը ուս և վրացի ազնուական դասն էին ներկայացնում խաղնաթիւններում։ Ապա հնարկիւ այն հանգամանքի, որ ուս պարտաւորուած չէր կարող անմիջական հարկադրութեան մէջ մտնել ժողովրդի հետ, որովհետև անտեղեակ էր նրա լեզուին ու բարքին, բարուք էր դասում տալին վարչական կազմը թողնել հինը, ժողովուրդը կառավարել սեղական մարդկանցով։ Իսկ սրբերը էին սեղական մարդիկ. բէկերն ու մելիքները։ Նրանք պարտ սեսնում էին, որ իրենց արտօնութիւնները ժամանակաւոր է։ Նրանք դիտէին, որ իրենց արտօնութիւնները կապուած են վարչական և դատական ծառայութիւնների հետ։ Արդ՝ վաղ թէ ուշ այդ ծառայութիւնների համար հրապարակ պիտի կուգային նոր մարդիկ, այն էլ նոր պայմաններով։ Բնական տարրերին և ծառայութիւններին պիտի փոխարինէր ուճիկը։ Դրան նոյ պիտի խղուէր այն կապը, որը հողի և մարդկանց նկատմամբ նրանց արտաքուստ իրաւասէր էր դարձնում։ Մինչ կողմից նրանք իրական էին Վրաստանի հողային պայմաններին։ Երկրի նոր տէրերն էլ այդ կարգերն ունէին տանը, բուն Ռուսաստանում, և իրենց վարչական քայլերի մէջ առաջնորդում էին ճարտասիրական հասարակութեան պատշաճ հասկացողութիւններով։ Այս բոլորից յետոյ դժուար չէր խելամուտ լինելու ժամանակի թելադրանքին։ Եւ ահա թուրք բէկերն ու հայ մելիքները սկսեցին մտահոգել ամրացնելու իրենց իշխանութեան յարատեւութիւնը։ Քաղաքականապէս դա անհնարին էր. մնում էր տնտեսական ճանապարհը։ Ժողովրդի կառավարութիւնն իրենց ձեռքին էր, իրենք էլ տվոր հարստահարութեան։ Կարողանում էին ձեռք բերելու մի ուղին դա էր։ Միտը հողերի սեփականացման և գրաւման միջոցն էր, մանաւանդ, որ ուս իշխանութիւնը չէր արգելում, այլ նոյն իսկ կարուածներ ընծայելով պատուաստում էր նոր սկզբունք, հողերի մասնաւոր սեփականութեան սկզբունքը։ Կրկնում ենք, այդ բոլորը չէր լինի, եթէ ուսները տեղեակ լինէին երկրի նախկին կարգերին և անմիջական չապէս իրենց ձեռքն առնէին վարչութեան մանրամասնները։ Բայց այդ կարևոր էր, որ նուաճողն առաջնորդուէր առանձին

ակրանքներով, մի բան, որ նայնպէս գոյութիւն չունէր եւ առնծուկ այն դրութիւնը, որ առաւօտ այժմ և հնդինակութեամբ երեկոյ առաջնորդին վիճակի մէջ նիրհած յարութիւնները մի երկու տասնեակ տարիների ընթացքում գնացին, մեռա և սրբոյ առաջնորդութեան և պրիճան տասարակութեան կեանքին մեծ ուժով հանդամանքներ: Բայց ժողովուրդը, նոյն իսկ Թուրք ժողովուրդը առաւելից այդ չէր տպատում: Առաւելի հետ նա կապում էր այլ սկզբնակութիւններ, այն, որ նրանք՝ վերացնելով խառնակութիւնը՝ պիտի հնթակացնէին ժողովրդի կացութիւնը: Ահա ինչ էին պրում նոյնի բնակիչները Վրաստանի կառավարին. «Եթէ ծովերը Թանաք դառնան, ծառերը—գրիչ, իսկ մարդիկ գրագիրներ, էլի անկարելի կը լինի նկարագրել այն վիրաւորանքները ու անկարգութիւնները, որ մեզ պատճառել են խոյեցիները» (Նոյեմբեր խոնը ծագումով Պարսկաստանի Խոյ քաղաքից էր)*): Բայց խոյեցիները վերացան, իսկ նրանց տեղը բազմեց բնիկական դասը: Թէ ինչ շահատակութիւններով նա կապրուկ՝ այդ մասին արժէ քիչ երկար խօսել:

Բնիկական դասի շահատակութիւնների պետուր վայրերը Դանձակի, Ջևքիի, Ջիրուանի և մանաւանդ Ղարաբաղի նահանգներն էին: Հոգերի յափշտակութիւն այս մասնաւորական հատկութեան շրջանում սկսուց դեռ խանների ժամանակ: Պէտք է ասել, որ բնիկները կալուածատէր դառնալու առաջին օրինակը տուց հայոցի իշխ. Մատթեոսը: Այդ մարդը, որ, ինչպէս ասում են, մի հասարակ գիւղացու որդի էր, իր գինուորական ծառայութեան շնորհիւ մեծ պետութիւն ունէր Գանձակի կառավարչի երեսին վրայ և այդ ժամանակաշրջանում հայ-Թուրքական նահանգի շրջանային կառավարիչն էր: Նա գրկից, ունալի ճիշտը սպառնալիքներով հանդերձ Ղարաբաղի Մեհտի-Ղուլի խանին, շնորհելու իրեն մի շարք գիւղեր, իրր Թէ դրանք առաջ Մատթեոսի նախնիքների սեփական ժառանգութիւնն են եղել և անիրաւացի կերպով խլուել են Իբրահիմ խանի (Մեհտի-Ղուլի խանի հայրը) կողմից և այժմ նոր խանը յօժարակամ վերադարձնում է այն: Պէտք էր այդ բանն օրինական դարձնել առ

*) Акты, т. VI a, № 1084, отъ января 1818 г.

կառավարության աչքում և ոչ Մադաթեանը սկսել վատաբանել, թէ հայ-թուրքական նահանգում հողը լաւ չէ և էկիների մասնաւոր անփափկանութիւնն է, թէ պետացինները նրանց ճորտերն են և այլն*): Ուստի կառավարութիւնը ճանաչել Մադաթեանի, այդ «մոլի ընչասէրի» (Պասկևիչի արտայայտութիւնը) իրաւունքը վէճեր և պետացիներ ունենալու: Խանի նուէրը հաստատուեց նրա վրայ: Օրինակը վարակիչ էր և ամեն ոք ձգտում էր կալուածների և պետացիների տէր դառնալ: Ժամանակակից հեղինակները զարմանքով են խօսում այդ մասին:

«Մեհմէդ-Ղուլի խանի Գարսկաստան անցնելուց յետոյ,— գրում է Զուբարեվը,— վրաստանի գլխաւոր կառավարչի կողմից Ղարաբաղ էին ուղարկուել իսկական պետ. խորհրդական Մոզիևսկին և գնդապետ Երմոլովը, որպէս զի յուցակագրեն Ղարաբաղի գէղերը և պարզեն խանի նկամտանները: Բէկերն՝ օգտուելով ռուս կառավարութեան անգիտութիւնից և խլեան Մադաթեանի օրինակից՝ յուցակագրութեան ժամանակ անփանութիւն են ցոյց տալիս իրենց երբէք չվճարած գիւղերը, իսկ Ղարաբաղը յուցակագրող պաշտօնեաները՝ չըննելով նրանց ապացոյցները, վաստհանալով միայն նրանց խօսքերին՝ այդ գիւղերը գրել են նրանց վրայ: Եւ այդ անհիմն յուցակագրումը մինչև այժմ բէկերի համար իրաւունք է ծառայում անշարժ կալուածներ ունենալու: Այս յուցակագրումից յետոյ Ղարաբաղի վնասուցա-շէջանային իշխանութիւնը և կոմենդանտները, համաձայնելով իրենց լաւագոյ սիրտակիցների, բաժանում էին գանձարանի բաժին մնացած գիւղերը ոչ միայն իրենց բէկ սերնդին, այլ նոյնիսկ թարգմաններին, նաւաբներին, վաճառականներին և մնացած ամենքին, որոնք մեջտեղ էին գալիս հասնելու նրանց բարեացակամութիւնը: Արքունի գիւղերի տասնից մէկ իշխանութեան վճռի բաժինը կատարում է և այժմ: Այդ չարիքն այնպէս է զօրացել, որ այժմ Ղարաբաղում հազ քիչ նուազ արքունի գիւղեր են մնացել» **):

---

*) Акты, т. VI a, № 1078 и 1081 отъ 1817 г.

**) Акты, т. VII, № 411 отъ 20 апрѣля 1830 г.

Չարիքի առաջն առնելու համար Զաբարիօվն առաջարկում է յաւուն յանձնաժողով կազմել քննելու թէ բէկերի դատային իրաւունքները և թէ նրանց պահպանելը հարկ վնասակար համար: Նա ապացուցում է, որ բէկերի կալուածային վաւերագրերը պիտի քննուին խիստ մեծ զգուշութեամբ, «որովհետև հանի Պարսկաստան փախչելուց յետոյ կինքը մնացել է նրա սիրելի Բասամ-բէկի մօտ, որը դէպքից օգտուելով պարզապէս յափշտակել է նրան, թէ ուրիշ բէկերի, սակայն այդ թղթերը կեղծած են այնպիսի կատարեալութեամբ, որ պարզապէս տարբերութիւնը թղթի չինուած առաջ կանուխ է դրուած»: Սակայն ուս վարչութիւնը չհամարձակ եղաւ թէ չհարուցաւ չարիքն իր բնում խնդրել: Նա, ինչպէս անուանք, 1818 թ. Բարչալուի և Ղազախի թուրք ազատներին համարեայ թէ կալուածատէր էր ճանաչել, որոշելով, որ պետականները հասուցանեն ոչ միայն սահմանուլ բնական բերքերից, այլ և հատուցումն նրանց, որպէս պետական սահմանական և դատաստանական պաշտօնեաներին: Բէկերին երկրի մի մասում ժողովրդի գլխին խնամակալ կարգելով նա ցոյց էր տուել ազնուականի իր խորհրդի պին: Այդ նոյնը կրկնեց և մնացած հայ-թուրքական գաւառներում: Աչք գոյելով երկրի կողոպտուի վրայ, նա ժողովրդին բռնկելու տուեց անհաշտ կռանքով ազգով բէկերին:

Ռուսական վարչութիւնը հողերի յափշտակման խնդրում լոկ հանդիսատեսի դերով չէր բաւականանում: Ցիշեցինք արդէն Զաբարիօվի վկայութիւնը, թէ ինչ անբարոյութիւններ էին կատարում դինուորա-շրջանային պետերն և կոմենդանտները: Սակայն նոյն այդ ուղիովն էր ընթանում և երկրի գլխաւոր կառավարիչը, կուռակալը: Ընդհակառակ միջնորդութեամբ հատուցուն Մափաթեանի տացած ընծայութիւնը: Այդ նոյն ընդհակառակ միջնորդում էր Կայսեր առաջ, որ նա Գիւլիստանի նախկին մելիքութեան (այժմ Ջևանջիրի և Գանձակի գաւառների մէջ) 24 գիւղերը շնորհէ Մելիք-Բէգլարեաններին, թէև ինքը վաստակի հեման վրայ եկել էր այն եզրակացութեան, որ Զաբարեմ հողերի մասնաւոր սեփականութիւն չի եղել և որ մասնաւորապէս Մելիք-Բէգլարեաններն այդ բանը հաստատող

ոչ մի վաւերագիր չունին*): Երմոլովն այդ միջոցի նպատակայարմարութիւնը պատճառաբանում է նրանով, որ «վոլխա ժողովուրդը» (խօսքը հարկաւ բէկների մասին է. Դ. Ա.) առիթ չունենալ արտնջալու, թէ ռուսները չեն յարգում նրանց սովորութիւնները և որ դրանով կարելի է ապահովել կառավարութեան հաւատարիմ ծառաներին: Ապահովելու այդ ձգտումն այնքան էր արմատացել ռուս իշխանաւորների մէջ, որ նա խոշոր չափով արտայայտուեց և պարսկական պատերազմից յետոյ:

Պատերազմից առաջ Թուրք բէկների խոշոր մասը դաւաճանեց ռուսներին և անցաւ պարսիկների կողմը: Զարթարտում նրանք կատրեցին նոյն իսկ ռուսական գինուորների մի դասակ: Ռուսական իշխանութիւնը յարքունիս գրուեց դաւաճանների կալուածները: Պարսկաստանի պարտութիւնից յետոյ թէ փախած խաները և թէ բէկները նորից խնդրեցին: Եւ նրանք ոչ միայն նորման արժանացան, այլ և յետ ստացան իրենց յափշտակուած կալուածները: Ցիշեալ Զուբարեօվն այդ մասին խօսում է նրանց վրդովմունքով**): Նա պարզ տուժ է, որ նահանգի կառավարիչ իլա. Արևապոլը կաշառք է վերցրել թուրքմենական մի աշխատ մարտկ և այժմ Ջանում է բարձր իշխանութեանը համոզել վերադարձնելու դաւաճան Բուռնմ-բէկին 25 հազար լուբլի տարեկան նկամուտ բերող վիւղերը: «Եթէ դաւաճան Բուռնէմ-բէկը, տուժ է նա, երկու ամիս պատերազմին մասնակցելու համար ստացել է մոլխոլի տասնեակ, ս. Աննայի երկրորդ կարգի շքանշան, իսկ այժմ էլ ձգտում է ստանալ 25 հազար նկամուտ բերող վիւղերին, ապա ինչ պիտի տալ ռուսական պետութեան, որն անցել է Սուլանդուզը կամ Բալիանները և դաղտար է արել Ասիան և Թուրքիայի մայրաքաղաքը», նա յիշում է նաև, որ Բուռնէմ-բէկի վիւղերում արտաքոյ սպառում են նրա վերադարձին, որ այդ Թշուառների շահերն ոչ ոք չի պաշտպանում:

Զուբարեօվը մտայղէր է նաև մանաւանդ հայ վի-

---

*) Акты, т. VI a, Всеподданѣйшій рапортъ генерала Ермолова, отъ 7 сентября 1824 г. № 231.

**) Актъ, т. VII a, № 413, отъ 10 іюня 1830 г.

պացինների դրութեան*): Թուրք բէկերը, ասում է նա, գազանաբար են վարւում հայերի հետ. անդթաբար ծեծում են նրանց, խլում են ամեն դոյք, ծանր աուպանքներ են վերցնում: Ծանր է մանաւանդ Պարսկաստանից գաղթած հայերի դրութիւնը: Նրանց թոյլ չեն տալիս բարձրանալու հոգեւոր աստիճանները, իսկ Ղարաբաղի Չելմ ու մեծ ունեցող տափաստաններում նրանք մահանում են անխնայ: Չելմն առաջացրել է այնպիսի կատաղած, որ երեք ամսուայ ընթացքում մեռել է գաղթականների $^{1}/_{3}$, 1.012 հոգի: Թուրքերը թալանում են նրանց ապրանքը, ոմի ոտք տալիս ցանքսերը: Գանգատն ու բողոքը մնում է անհետեանք: Ղարաբաղը յիշում է, որ տեղական վարչութիւնը խիթ աչքով է նայում հայերին. հալածում է և նեղութիւններ պատճառում նրանց: Նա մանրամասն պատմում է այն դէպքը, որի ինքն է ականատես եղել Վարանդայի գիւղում: Գալիս է այդտեղ մահալի նայիբ մեծ խուզադարը և պահում իր չարագործութիւնները. արբեցութիւն է անում, կաշառք պոկում, ծեծում, բռնաբարում մի հայուհու, ընդվզմանում մի ամուսնութեան և պահանջում, որ հարսն առաջին գիշերը իրեն պատկանի և այլն և այլն: Այդ նոյնն անում են նրա զրպիրն ու ծառաները: Ղարաբաղն ուշադրութիւն է դարձնում այն հանգամանքի վրայ, որ Չուշում գործը անդադրուած է հայերի աններում, որ այդ ծառայութիւնից ազատ են ոչ միայն թուրք բէկերն, այլ և թուրք հասարակ ժողովուրդը, այն ինչ քան օրէնքի ազատ պիտի համարուի միայն դիտնական դասը:

Այս բոլորը չափազանցութիւն չէ: Հոգեւոր կոդմակատարը, ժողովրդի հարատահարութիւնն այնպիսի չափեր էր ընդունել, որ 30-ական թուականներին լուրջ կերպով զբաղեցնում էր Պատկիչին: Այդ ժամանակ էլ Ղարաբաղի նախկին խանից, Մեհտի-Ղուլիից, նա ստացաւ մահրմական նամակ, որով խանը խնդրում էր վերադարձնել իրեն գոնէ գոհ խանական իշխանութիւնը և դրա դիմաց խոստանում էր խոպան աշնշացնել նորելուկ կալուածատէրերին: Պատկիչը պատասխանից, որ ռուսական հասարակ օրէնքը չի կարող փոփոխուել ըստ քմահաճոյքի և որ ռուսները

*) Акты, т. VII, № 411 և 413, տես նաև № 412 (գնդապետ Վիկտաշևսկու յայտարարութիւնը Պատկիչին):

չին կամենալ վիրաւորել հաւատարիմ հպատակներին *): Այս պատրուակին ինքին վատաւոր ապացոյց է, թէ ինչ արժէք ունէին բէկերի դասային և հպատակական պահանջները և որքան հիմնաւոր էին նրանք:

Այսպէս թէ այնպէս հոգի մանաւոր անփափանութեան սկզբունքն ընդունուած էր: Բէկերը ճանաչուած էին ժողովրդի վարիչները և նրանք ամրացնում էին իրենց անսահման դրութիւնը:

1845 թ. Մեհմէտ-Ղուլի խանը նորից փորձեց առնել իշխանութեան ուշադրութիւնը դարձնել Ղարաբաղի կողմանի վրայ: Խանական իշխանութիւնից զրկուած այդ փոքրիկ բանակը տնանում էր, որ ինքը կառավարութեան աչքում հետաքրքրուած է մնացած բէկերին և վերջիններս էլ առանձնապէս գլուխ չեն թեքում իրենց նախկին տիրոջ առաջ: Խոսված իր նախկին արբանեակներից՝ նա գրում էր բարձր իշխանութեանը, որ ինքը շատերին կալուածներ չի բաժանել, որ նրանք այդ կալուածներին տիրացել են կեղծ թղթերով և այլն: Գրաժանավակին Մեհմէտ-Ղուլիի այդ գրութեան պատճառով առած իր զեկուցման մէջ առում է, որ նախկին խանն իրաւացի է իր պնդումների մէջ, որ կեղծ վաւերագրերով ամբողջ Ղարաբաղն անցել է բէկերի ձեռքը, այն բէկերի, որոնք 1826—1827 թ.թ. դաւաճանեցին առաններին, իսկ այսօր՝ նորում ապացած՝ կալուածների տէր են և հարստահարում են հաւատարիմ հայ ժողովրդին և որ, վերջապէս, ինքը Մեհմէտ-Ղուլին իր պղպականներով նոյնպէս ապօրինաբար տիրացել է շատ հոգերի: Գրաժանավակին իր զեկուցման մէջ մատնանշում է մի ապշեցուցիչ հանգամանքի վրայ: Նա առում է, որ այժմ խան ու բէկերը կեղծ պարգևագրերով չեն գրաւում իրենց գործերը, այլ առաջին դատարանի միջոցով, օրինական ճանապարհով: Եթէ մէկն ուզում է տիրել իր կալուածի սահմանակից հողամասին, պատում է նա, ապա համաձայնութիւն է կապում տերտեր հետ և վճռ բանում դատարանում, վճռ վկաներով, քննութիւններով և այլն: Երկար ու բարակ դատավարութիւնից յետոյ մէկը յաժողովում դիջում է միւսին և այդ հանգամանքն էլ ապացուցում միւս

*) Иваненко, էջ 216.

կողմի դիրքը։ Դատարանը ճանաչում է հողամասը նրա սեփականութիւն։ Ոչնչից սեփականատէր դարձածը, իհարկէ, չի մոռանում բաժին հանել իր չինծու հակառակորդին*)։

Հողերի յափշտակումը միայն Ղարաբաղում չէր սահմանափակուում։ Դա ընդհանրացած երեւոյթ էր բոլոր հայ-թուրքական գաւառներում։

Երեանի և Նախիջեանի խանութիւններին սերիալ ժամանակ առանձին արդէն բաւականաչափ ծանօթ էին Անդրկովկասի հողային պայմաններին և այս հանգամանքն անեցաւ իր նպաստաւոր հետեւանքները։ Տեղական բէկերը նոյնպէս կամեցան դիմել յափշտակութիւնների և սահմանների մասին իրենց եկամուտների չափերը։ Օրինակ, Նախիջեանի էքսան-խանը կամենում էր՝ խաթրով նորակարգ ռուս վարչութիւնը՝ միւքը, այսինքն մելքատարի բաժինն ընդունել տալ բերքի 1/5 **)։ Սակայն նա որոշ չափով անյաջողութեան հանդիպեց։ Երեանի սարդարի վեզիր Մելոմ-Եամալին թոյլ էր մանրամասն ցուցմունք, որոնք պարզում էին մելքատարների և թիւլեաների հողային իրաւունքները։ Չաթիկու հնար չէր մնում։ Ռուսական իշխանութիւնը սրտագրծից հին կարգը։ Դեռ սահմանները, մելքատարներին նա ժառանգական հողատէր ճանաչից և առաջուայ 3/30 եկամտաբերից սահմանեց 1/30։ Թիւլեաների համար որոշուեց եկամտաների նոր չափ—բնական բերքի 1/5։ Այսպիսով նրանք զրկուեցին գանձարանի եկամտաների և բնական մի շարք ծառայութիւնների իրաւունքներից։ Հարկաւ, այդ հանգամանքն առանց բողոքների չանցաւ, սակայն Պասկեիչը չղջից։ Ռուսներն այնքան էին ուժեղացել Անդրկովկասում, որ մի քանի տասնեակ արտօնեալների դժգոհութիւնը կարող էին ուշադրութեան չառնել։ Երեանի սահմից յետոյ կալուածական սեփականութեան ձգտից և հայոց եկեղեցին յանձին ներսէս Աշտարակեցու։ Պասկեիչը չղջից և այսուհետ։ Նա թշնամացաւ ներսէսի հետ և իր հակառակութեան դրդապատճառներից մէկը

*) Акты, т. X, № 295, Докладъ Генеральнаго штаба кап. Пружановскаго по доносу ген.-м. Мехти-Кули-хана, что многія въ Карабагѣ незаконно владѣютъ землями, отъ 4 марта 1845 г., № 17.

**) Шопенъ, 42 928.

համարում էր Ներսէսի ձգտումը սխրանալու անշուշտ կասուածննելու էջմիածնի կասուածային իրաւունքը 1836 թ. ճանաչուել միայն նրա 5 դիւղերի նկատմամբ։ Ներսէսի մնացած կասուածային պահանջները չբաւարարուեցին։

Թիւրքմէնչայի և Ադրիանապօլսի հաշտութիւններից յետոյ ռուսական Անդրկովկասը մտաւ կայուն սահմանների մէջ։ Պահպանման գործողութիւնները խանգարում էին երկրի բարկաբութեան գործին։ Երբ այլևս պարարիլ էր նուաճողական քաղաքականութիւնը, անյապաձգելի պահանջ էր դրսպուել նուաճած երկրների բարեկարգութեան և շինութեան խնդիրների։ Այսուհետև ռուս իշխանութիւնն սկսի շատ մտահոգել զարգացման—բէկութեան—տղայնի և զուտային իրաւունքների։ Մի պատահական հանգամանք նկատ արագացնել այդ մտահոգութիւնը։

Նիկոլայ I կայսրը 1837 թ. այցելեց Կովկաս։ Զարմանի հայ պետականները նրան գանգատ մատուցին այն խստասով, թէ իրենք առաջ կողոպտում էին թուրք պաշտօնեաներից, իսկ հիմա տանջում են նրանց կառավարութեան տակ *)։ Զարմանելի դիմումն արժանացաւ ուշադրութեան։ Նրանց մտքին ռուսական իշխանութիւնը լաւ համարում սկսէր, քանի որ պարսկական և թիւրքական պատերազմների ժամանակ այդ պետականները Մանուչարեան Գրիգոր արքեպիսկոպոսի առաջնորդութեամբ առանձել էին երկրկրի և առանձուկ պաշտօնեաներին և կամաւոր խմբերով մասնակցել պատերազմներին։ Հայերի կատարած ծառայութիւնների փոխարէն նրա Երևանին էր խոստացել պահել նրանց պաշտօնների իշխանութիւնից և կախումից։ Այժմ Երևանի խոստումն իրականացաւ։ Հայերը հրամանով։ Զարմանի հայերն ընդմիշտ պահանջին թուրք պաշտօնների կախումից։

Հայերի գանգատը խթան դարձաւ հրապարակի վրայ գնալու Անդրկովկասեան բէկութեան և պետականութեան փոխյարաբերութիւնների հարցը։ Անհատը Հանին հրամայուեց ուսումնասիրել Անդրկովկասի կացութիւնը և մշակել նոր վարչական ու դատաստանական հաստատութիւնների ծրագիրը։ Հանը, լաւ թէ վատ, փութկոտութեամբ կատարեց իր վրայ դրած պար-

*) Иваненко, էջ 338.

ականությունը։ Նրա ծրագրի աչքի ընկնող կողմերից մեկն այն էր, որ ազատներն ու բեկիրն ընդմիշտ հրաժարեցնւում էին վարչական գործերից։ Հանը հաշուեց, որ միայն Թուրքման կան համարուած գաւառներում (Ընբի, Զատրատ, Ջիրուան) 248 հազար արական անձն պատկանող բնակչութեան մէջ 10.750 բեկ և մելիք կայ, որոնց կիրակում են 83 հազար շինականներ՝ չհաշուած դանձարանին և ոչ մի կոպեկ*)։ Հանը և նրա հետ կուսակալ Գոլովինն արդարացի էին գտնում խլած հողացնել վարչական գործերից այդ բեկերին և մելիքներին։ Բայց այդ ընդունում էր միայն խոշոր չափերով անհատների և տոհմական բեկերի համար, որոնք հազարից աւելի հոգեկան տրամադրութիւն ունէին։ Երեսի թխուլիաների և մելքադարների մասին Հանն այն կարծիքին էր, որ աւելորդ են պետութեան ժամանակաւոր չնչին վերջիններս ժառանգական սեփականատէրեր են։ Դժուար չէր իրագործել Հանի առաջարկած բիլարը, սակայն կառավարութեանը մտադրութիւն էր պատճառում այդ հանգամանքը, որ ձրիակերութեան և անաշխատ կեանքի սովոր բեկութիւնը կարող էր պատուհաս դառնալ երկրի գլխին, քանի որ անընդունակ լինելով որևէ արդիւնաւէտ կեանքի՝ նա սիրտ պարապէր գողութեամբ և աւազակութեամբ։ Այդ չարիքից խուսափելու համար սկզբունքով որոշուեց բեկերին թոշակ կապել դանձարանից։

Հանի ծրագրի իրագործումը սկսուեց 1840 թուականից։ 1841 թ. մայիսի 28-ին բարձրագոյն բարեհաճութիւն առաջուց պաշտօններից հեռացնելու Ղազախի և Բարչալուի ազալարներին։ 11 հայ գիւղերից ազալարներն ու մելիքները հեռացուած էին դեռ 1840 թ.։ Նոր կարգադրութեան ենթարկուում էին 59 ազալար և նրանց ազգականների 170 ընտանիքները։ Նրանց կախումից ազատում էին 102 թուրքական գիւղեր 15.245 ծուխ բնակչութեամբ։ Ազալարների կիսամեան ընդունուց համապար 26.889 րուբլի։ Այդ գումարը նրանք ցմահ պե-

*) Иваненко, էջ 342—343, Сводъ матеріаловъ и пр. т. I, ч. II, М. Н. Кучаевъ „Поземельное устройство госуд. кр. водворенныхъ на владѣльческихъ земляхъ въ Закавк. губерніяхъ", էջ 7—8.

ան առանձին պետական գանձարանից, որ իր հերթին պետական հարկի հետ գանձում էր գիւղացիներից:

1841 թ. մարտի 24-ին Անդրկովկասի Գլխաւոր Վարչութեան Խորհուրդը որոշից ազատարների համար ապաւոյտ օրէնքը տարածել և մնացած էկիւմենան վրայ: Գլխաւոր Վարչութեան Խորհուրդն այն համոզմունքին էր, որ էկիները նաև եղել են վարչական անձինք, որ նրանք կալուածատէրը չեն, որ ժողովրդի և պետութեան շահերը պահանջում են նրանց խստատ հետեւումը վարչական տարրէից: Մինչեւ ժամանակ ընդունուց, որ անհրաժեշտ է էկիներին վարձատրել ֆռշակներով: Եւ դրա հիմքը պիտի կազմէր նրանց եկամուտների արժէքը:

*Ազատներին հետացնելու փոխան և էկիներին ապահովելու վտանգը ամբի հանից Անդրկովկասի այդ տրամնում էկիներն սկսեցին յուզուել, տրմիլ և բարդութիւններ յարուցանել: Էկիների ցուցարարութիւնն ընդունից այնպիսի չափեր, որ Վալկաս եկաւ իշն. Շինըշոլը, Վալկասեան Կոմիտեի նախագահը *): Շինըշոլը կարգադրից էկիներին ետ դարձնել իրենց հին իրաւունքների և դրութեան մէջ, իսկ ազատներին ապահովելու համար նոր միջոցներ փնտրել **):*

) Վալկասեան Կոմիտեան այն գլխաւոր վարչական հաստատութիւնն էր, որ Պետերբուրգից ուղղութիւն էր տալիս Վալկասի իշխանութեան գործառնութիւններին:

**) *Մեր այս աշխատութիւնը իրրև ձեռագիր պատրաստ էր և նրա մի մասն էլ տպագրուած «Նոր Հառանք» ամսագրի 1914 թ. №№-ում, երբ յոյս տեսաւ հայ վաստակաւոր պատմաբան Լէօ նոր աշխատութիւնը՝ «Պատմութիւն Վարդանի Հայոց Պետական հարցի» (Թիֆլիս 1915 թ.): Լէօն իր այդ աշխատութեան սկզբում և մի քանի այլոց խօսում է նաև Վարդանի հատուկտիկան գործի մասին և հաղորդում է հետեւեալ ուշագրաւ տեղեկութիւնները. «1842 թուականի ամառը տէրտերի նորաւ Վարդանի հայ գիւղացիութեան համար Ըստ երեւոյթին, թուրք էկիների քեհյաներից էր, որ յուր տարածուից աւելն տեղ քէ պարսից գօրքերը մտել էր Վարդանի Մարտունեան հայ տղաքնակութիւնը, քաղելով իր տուներն, իր գոյքի մեծ մասը, անասունից տպաւորան գոնել իր համար: Մի մասը փախուստ տուաւ Եուշի բերդը, մի մասն էլ լեռները ամրութիւններն քաշուեց: Եուսով յայտնի դարձաւ քէ լուրը տա-*

1842 թ. Թիֆլիսում կազմուեցին երեք յանձնաժողով։ Մէկի պարտականների առաջին էր որոշել բէկերի իրաւունքները։ Միւս երկուսը պարտուած էին ազատների իրաւունքների ճշման, նրանց քանակի որոշման և ապահովագման խնդիրներով։ Այդ յանձնաժողովները եկան այն եզրակացութեան, որ 1) բէկերը երանց ձեռքին պահում պնակուած կալուածների ժառանգական սէրնն են, որ 2) ազատներն այդ իրաւունքը չունեն, սակայն դիւղերի ժառանգական կառավարիչներ լինելով որոշ նկամտների իրաւատէր են և որ 3) առաջին օրէնսդրութեան մէջ նոյն ճորտական կարգը պահպանուած չի ունեցել Թուրքական պատերում։ Այս կէտերն էլ ալեկ կազմէին ազատական-բէկական ծրագրով օրէնքի հիմունքները։ Յանձնաժողովները պահում էին, որ հնարաւոր է բէկերին և ազատներին իրաւահաւասար ճանաչել, որովհետև ժողովրդի մէջ նրանք օգտում են միևնոյն առաւելութիւններով և իրաւունքներով։ Այսպիսով բէկերի և ազատների ինքնատիրապետութիւնն առանց հետևանքի չըմնաց։ Նրանց ձայնը լսուեց։ Եւ այնուհետ, ուր մի քանի տարի առաջ բացառում էր նրանց կալուածատիրական իրաւունքները, այժմ հրապարակով ճանաչում էր այն։ Այժի պայութիւնը և երևան գալն այսքան փոփոխական էր դարձնում օրէնքի նժարը։ Բէկական-ազատական

էր բայց հարուածն արդէն լքել էր դիւզացու տնտեսութեան վրայ». (էջ 78)։

Ահա այսպէս էր պատասխանում բէկութիւնը իր դէմ պատրաստուող օրէնդրական հարուածին։ Մի հետաքրքրական քաղուածք էլ բերենք Ն.Էօի աշխատութիւնից, երբ նոյնչ այն պայմաններին, որ ստեղծուել էր բէկերի և գիւղացիների միջև. «1842 թուին երևոյթ կալուածատէր գնդապետ Ջաֆար-Ղուլի ազալի դէմ ժառանգում են Բանդազօր գիւղի (այժմեան Կարնոպինի գաւառում) բնակիչները։ Նրանք պահանջում էին թևթևացնել հողատերութեան պայմանները։ Գիւղի քահանայ Մինաս Մխրտաբէկեանը, ժողովրդի վճիռը կատարելով, փոխն ծածկած ներկայանում է Ջաֆար-Ղուլի ազալին, բայց առ կատարած՝ հրամայում է իր ծառաներին վերցնել փոխանը և գցել շան վրայ, իսկ քահանային հետ եղած գիւղացիներին հրամայում է կրկնապատիկ փոխան ծածկած շանը». (էջ 79)։

Հարկ չկայ այս չափազանց պարզ պատկերին նոր ներկեր ա՛ելացնել

հարցն այս դրության մեջ էր, երբ Գոլիցին համար Փոխարքայ նշանակուեց իշխ. Վարոնցովը:

Իշխ. Վարոնցովն իր փոխարքայութեան առաջին օրերում իսկ խորին ուշադրութիւն դարձրեց բէկական-ազալարական հարցին: Նիկոլայ I նրան հրահանգել էր լուծել այդ հարցը: Հարցի լուծման եղանակին էլ համաձայն թէ թելադրել էր նրան, որ ազալարների հողերի գրաւումը պետք միջոց է եղել և որ պէտք է հողերը վերադարձնել նրանց *): Վարոնցովը առաջարկից իր օգնական գնդապետ Լազինսկուն զեկուցում ներկայացնել հարցի մասին: Լազինսկին 1845 թ. յունիսի 6-ին ներկայացրեց իր պատրաստած զեկուցումը: Նրա կարծիքով ազալարներն ու բէկերն ըստ էութեան իրենց վարչութեանը յանձնուած զեղերում ժառանգական կալուածատէրեր են եղել: Նրանք իրը թէ ունեցել են վրայ կալուածատէրերի իրաւունքները, միայն ժառանգական սեփականութեան սկզբունքն անվիճելի չի եղել: Եւ դա այն պատճառով, որ խլումն արգելում է սակութիւնը: Ազա դրան չի նպաստել և պետական կարգը, պահանջելով, որ պետութեան գլխի և զեղի կառավարչի վախճանով՝ փոխանցին և արտօնագրերը: Այդ երկու հանգամանքները, որ բնորոշ են մասնական պետական իրաւունքի համար, յատուկ չեն եղել Թուրք բէկական դասին: Երկարօրէն չխօսել է իրար հետ իրաւունքի արտադրութիւններն և իրականութիւնը: Նա ըստ քմահաճոյքի առհասարակում էր ազալարների հողատէրական իրաւունքները, նրանց պաշտօնից հեռացնում էր անվերջանական և նրանին էր կարգում: Ազալարները խոնարհւում էին այժմ առաջ, բայց չէին դադարում արտնջալ և ապաստել, որ կառավարութիւնը գլխի ճանաչէ իրենց իրաւունքները: Հանը և Գոլովինն ասելի հետաքրքիր գնացին: Նրանք ձեռնամուխ եղան գրաւել նաև բէկերի հողերը և հետացնել նրանց

---

*) Իշխ. Վարոնցովի ժամանակի հողային քաղաքականութեան հետ ծանոթանալու համար մատնացոյց ենք անում հետևեալ աղբիւրները՝ Иваненко, էջ 351—356, Кучаевъ, էջ 9—20, Акты, т. X, էջ VII և VIII, տար № 15 և այլն: Նոյնպէս ժամանակի օրէնսդրութիւնը՝ որ կարևոր է, տրված յատուած, գոնե Сводъ матеріаловъ по изученію экон. быта госуд. кр. Зак. края դրքի I հատորում

պետերի կառավարությունից։ Այդ բոլորը, վաստատում է Լաղինակին, եղել է իրերի անճանաչության պատճառը։ Պէտք է վերականգնել խանգարած արդարությունը։ Եւ որովհետև դարերը փոքր ցոյց է տալիս, որ մուսուլման ամրոնն ունի հնչակ է կառավարել իր խոկ սէրերի ձևերով, ապա անհրաժեշտ է, որ պատարների և բէկերի վոկատար և ժառանգական սեփականութիւն ճանաչուին այն բոլոր անթնակ և բնակեցած տները, որոնք ուսանելի Ադրիանոպոլսին մերելու ժամանակ վաճառպերով կամ վաստակի սերտութեամբ նրանց ձեռքին են եղել։ Լաղինակին բացատրութիւն ընդունում է միայն այն բէկերի համար, որոնց տները գրաւել են յանցանքի պատճառով։ Գերդաստանների իրաւական կացութեան համար նա ատելիում է ճանաչել նրանց պետական, բայց թողնել այն կարգման մէջ դեպի բէկերը, որ գոյութիւն է ունեցել։ Ունենալով այս տեսակէտը՝ Լաղինակին գտնում է, որ պատարներին էլ պէտք է վերադարձնել նախկին գերները, իսկ նրանց պղպականներին տալ յատկացնել այլ գերիներ։ Իսկ ռուս իշխանութեան ժամանակ կալուածատէր դարձած պատարների և բէկերի համար նա առաջարկում է ճանաչել նրանց իրաւունքը ժամանակաւորապէս, այն է մինչև նրանց մահը։ Բէկերի, մելիքների և պատարների անձնական իրաւունքների համար իրաւացի է գրում, որ խանական ծառում ունեցողներին արուի իշխանական պատիւ, իսկ մնացածները ճանաչուին ռուս պետութեան իրաւունքներով օժտուած, պարտադիր դարձնելով նրանց համար պետական ծառայութիւնը*)։

Համաձայնելով Լաղինակու գնդապետի հիմնական կէտերի հետ՝ Վրոնցովը բէկութեան շահերի ջերմ պաշտպանը հանդիսացաւ։ Նա սկսեց Պետերբուրգի իշխանութեան առջև վաստանալ, որ բէկութիւնը ռուս պետութեան պատճառ կունենայ մի դաս է և որ պէտք է օրէնսդրական միջոցով պահել գերդաստանների և այլ դասի փոխ-յարաբերութիւնները։

*) Նրանով Վրոնցովին գրած մի նամակի մէջ ասում է, որ Լաղինակին «լաւ» լինելու շատ ապացոյց կայ։ Նա գտնում է, որ Վրոնցովը խարեբայութեան գոհ է դարձել, ընդունելով Լաղինակուն և այլն (Акты, т. X, յառաջաբան)։

Իսկ վերջին պերատան նա ահմանատրում էր այնպիսի շրջանակների մէջ, որ մինչ այդ ազատ պետացիներին կացութիւնը վտանգում էր կէս-ճորտականի:

Վարանցովի ծրագիրը Պետերբուրգում թէեև պիմադրութիւան և առարկութիւններին հանդիպեց: Դիմադրում և առարկում էին նորին գործերի նախարար կոմս Բլուդովը, արտաքսութեան նախ. կոմս Պանինը և պետական կայքերի նախ. կոմս Կիսելեօվը: Խիստ հետաքրքրական է ծանօթանալ նախարարների տեսակէտների հետ:

Նորին գործերի նախարար Բլուդովն այն կարծիքին էր, որ Վարանցովի ծրագիրն անարդարացի է հէնց իր հիմքերի մէջ, որովհետև նա բնակչութեան մի դասակարգը զոհ է բերում մեսին: Այն հանգամանքը, որ պետացիներն անարատ մինչև օրս տարել են բէկերի լուծը, պետ բարոյական իրաւունք չի տալիս նորերգործելու այդ կարգը: Պետացիների խնամարկութեան գործերը պետի մնային միայն նրանց համար, որոնք ստրկական հպատակներ են: Նրանք, այդ օրինակելի հպատակները, արժանի են մեծ ուշադրութեան և կարեկցութեան: Պետացիների կախումը բէկերից, ստրկում է Բլուդովը, ճորտական չէ նոր անցեալում: Դրան ապացոյց կարող է ծառայել այն փաստը, որ Ղարաբաղի հայ պետացիները՝ պետութեան ցոյց տուած հաւատարմութեան համար՝ ստանց բարդութիւնների ազատուեցին թուրք ազատներից: Վարանցովի ծրագիրը ստեղծում է ծանր յարաբերութիւններ, որովհետև նրա մարդիկ սովորութիւնները փոխարինում է դրական օրէնքի: Բլուդովը դէմ չէ, որ բէկերին և ազատներին հողը յատկացնուին: Նա միայն գտնում է, որ դա բացարձակ և անխախտ մի մեջոց չպետք լինի: Հողը պետք էնարհել նրանց, որոնց հետաքրքրութիւնը և ծառայութիւնները խրախուսանքի արժանի են: Եւ որովհետև նոյնիսկ Վարանցովի խոստովանութեամբ բէկերին և ազատներին կարուածներ յատկացնելը բարձրագոյն մի շնորհ է, ապա այդ շնորհն անպետք չպետք անել և ժողովրդին. պետք է թեթեացնել պետացիների դրութիւնը և ազատութիւն չտալ բէկերի հետագայական ձգտումներին: Միևնոյն ժամանակ աչքաթող չպետք անել և մի

այլ հանգամանք: Վարանցումը ծրագրում է բնիկների սեփականութիւնն ճանաչել և առա կառավարութեան չնպհած հողերը: Ինչպէս հասկանալ կառավարութիւն խօսքը: Եթէ դա հասկացւում է բարձրագոյն կառավարութեան իմաստով, ապա պիտի ասել, որ նրա ապած չնորհների քանակը չափազանց աննշան է: Եթէ կառավարութեան չնորհն է հասկացւում և տեղական կոմիսարների ու չրջանային կառավարիչների անհատիս ապած տղտրամժանութիւնը, ապա այդ մասին պիտի պարզ չխոսել: Եւ միայ անհրաժեշտ է, որ բնիկների և պատերների անցնող վիճակների հետ հաշտութիւնների և ծառայութիւնների մէջ հատուկ լինին պետական պիտոյքներին: Այդ հանգամանքի բացակայութիւնը, ասում է Բուդդը, կունենայ այն հետևանքը, որ պիտոյքների մի հատուածը պարզ կմնայ, թէ ինքը դրուած է ասելի վաճառ պայմանների մէջ:

Արդարադատութեան նախարար Պանինն իր առաքելութիւնները պատճառաբանում է այսպէս. պէտք է խուսափել չանկարծակի յեղաշրջումներից. եթէ կառավարութիւնն անարդարութիւն է գործել պրաւիլով ազատների հողերը, ապա պիտի ծանոթ, որ նրանք իրենց իրաւունքները հաստատեն օրինական ճանապարհով, դատարանի միջոցով: Կառավարութեան վարկը մինեին չի կորցրել, եթէ այդ ճանապարհով վերահաստատուի անհատական արդարութիւնը: Ապա չպէտք է մոռացութեան տալ ամենագլխաւորը: Բոլոր լուսաւոր երկիրներում կառավարութիւնն աշխատում է բարձրացնել ժողովրդի նիւթական և բարոյական կացութիւնը, ժողովրդի, որը կազմում է հարստութեան արիւնն և պետական ոյժի հիմքը: Վրանցովն առաջարկում է անել դրա հակառակը: Անժամանակ ազատելով դիւղացիներին ազատների չահատակութիւններից և նրանց վերադարձնելով նրանց նախկին վիճակին,—կառավարութիւնն արտօնում դառն հատը դուրն է բանում գանձելու կոպեյկը, որ նշանակում է զրկոտութիւններ յարուցանել ժողովրդի մէջ: «Հետևաբար, վերջացնում է Պանինը, կառավարութիւնը մօտենալով ժողովրդի վրայ ազդեցութիւն ունեցող մի գործ,—այդ ազդեցութիւնն իր համար վնասակար կըդարձնի, եթէ նա հետևողութեան և արդարութեան չըսահմանա-

փակէ պետպիններին անձնական ծառայութեան և տուրքերի չափը»:

Այս աշխատութեան «Յարաբերութիւնները հողի հարցը» վերաբերեալ մենք գլխաւորապէս խօսելիք ենք առնչական և տարաբնական փոխ-յարաբերութիւնների մասին, որ առիթ տուեց պետական գոյի առաջնութեան յայտարարութեամբ և պահպանութեամբ։ Տեսանք արդէն, որ հայ գիւղացիութեան 24% տարածութեան պետական գոյին։ Նշանակում է, որ մեր գիւղացիութեան 76% (1886 թ. վիճակագրութեամբ 551 հազար արական հոգի) մնաց արքունի, այսինքն հողային հարցում ճանաչուեց կախեալ բացառապէս պետութիւնից։ Իհարկէ, արքունի հողերի վրայ նստած գիւղացիութիւնը իր կացութեամբ արդէն պիտի դասակարգուէր կալուածատիրական գիւղացիութիւնից, քանի որ պետութիւնը, իբրև ընդհանրական կալուածատէր, չէր կարող տարբերուած լինել մասնաւոր կալուածատիրոջ մասնութեամբ, բայց այստեղ էլ խօսում էր ամբողջ պետական գոյի մասին, որ պիտէր խնամակալել գիւղացուն և նրա ուսերին դնել հարկերի ծանրութիւնը։ Մեր աշխատութեան այս մասում մենք չպիտի խօսենք արքունի գիւղացիութեան հողային

*) Матеріалы и пр. т. VI, ч. II, էէ 386—387.

վիճակի մասին, մանաւանդ որ հոգի խոտո անձնութիւն դեռ չէր նկատում 70-ական թուականներից առաջ։ Սակայն անհրաժեշտ ենք գտնում, որ ընթերցողը մօտաւոր պատկերացում ունենայ այն դատական կառավարութեան մասին, որին ենթակում էր Անդրկովկասի վիրացիութիւնը ռուսական ներխուժելուց յետոյ։

Վիրացին Ռուսաստանում, թէ ներքին նահանգներում թէ ծայրագաւառներում, ապրում է և գործում դատական կարգերի շրջանակներում։ Իր իրաւունքներով նա պատկանում էր հասարակ չէ մեծ դասերին (արիստոկրատիայի, հոգևորականութեան և այլն)։ Նրա համար էլ առանձին կառավարական յատուկ մարմիններ։ Այդ մարմինների առաջին մեծագոյնը ներքին Ռուսաստանում գիւղախորհուրդն է (մօօա)։ Գիւղացիութեան վերաբերեալ օրէնքների մէջ ասուած է. «Գիւղացիները մանաւանդ գործերի համար կազմում են գիւղական հասարակութիւններ, իսկ մեծաւորական կառավարչութեան և դատաստանի համար միանում են գիւղխորհրդի մէջ»։ (Ներքին Ռուսաստանում այս օրէնքը հիմք է առել 1861 թ. փետրուարի 19-ին, երբ վերացրած հաշակուից ճորտական վիճակը)։ Օրէնքը այսպէս պարզ ասում է, որ գիւղական հասարակութիւնը մանանական միաւոր է այնպէս մի կազմակերպութիւն, որ իրաւասու է կարգադրելու գիւղական համայնքին վերաբերեալ մանանական խնդիրները։ Որպէս գիւղացիական վարչական առաջին միաւոր՝ օրէնքը ճանաչում է գիւղխորհուրդը, որը կարող է ամփոփել իր մէջ մի քանի գիւղական հասարակութիւն կամ մի քանի մանր գիւղեր։ Ներքին Ռուսաստանում գիւղխորհուրդը ունի իր գիւղխորհրդային տանուտէրը և դատաւորները, գիւղական հասարակութիւնները ունին իրենց ատաղները (старосты)։ Բոլոր վարչական գործերը կենտրոնանում են գիւղխորհրդի ժողովի (սխօդ) և նրանից ընտրուած տանուտէրի ձեռքում։ Գիւղխորհրդային ժողովն էլ կազմուած է ոչ թէ տէր անուանէրից, այլ ընտրուած ներկայացուցիչներից, քան որում տանուտէրը (ծուխ) տալիս է մի ներկայացուցիչ։

Իսկ ինչ կարգի էր առնդուածքն Անդրկովկասի գիւղական համայնքի վարչական կարգերի մասին օրէնք հրատա-

տակուց 1865 թ. և գործադրութիւնը՝ իբրև թէ գրաւոր պայմանների մէջ. չըկար ներքին Ռուսաստանի երկաթեղեան պետական կազմակերպութիւնը—պետական հասարակութիւնը՝ իբրև անհատական միաւոր և պետախումբը՝ իբրև սահմին վարչական միաւոր. Անդրկովկասում գոյութիւն ստացաւ միմիայն պետական հասարակութիւնը, որը իր մէջ ամփոփում էր և՛ անհատական միաւորի գործառնութիւնները և՛ վարչական: Այդպէս էր ըստ օրէնքի, բայց այդպէս չըմնաց իրականութեան մէջ: Գիւղացիական օրէնդրութեան որոշ կէտերը թոյլ են տալիս, որ մի պետական հասարակութեան մէջ մտնեն իրարից ոչ հեռու գտնուող մանր պետերը, պետական գաղութները (отселки և այլն): Եւ ահա օրէնքի այս կէտերը հնարաւորութիւն տուին Անդրկովկասի նահանգապետներին, իրենց իսկ իրաւունքով և նոյն օրէնքի որոն հակառակ, առեղծել նոյն վիճակը, ինչ գոյութիւն ունէր ներքին Ռուսաստանում, սակայն այն դանագանութեամբ, որ Անդրկովկասի պետախումբը կրում է ընկալական հասարակութեան, իսկ մի պետի շրջանակներում ամփոփուած չինական հասարակութեան, ընդհանուրից տարբերելու համար, կոչուել է «մանուր հասարակութիւն» յորջորջումը: Այսպիսով ըստ էութեան Անդրկովկասը ստացաւ այն, ինչ ներքին Ռուսաստանը: Զանազանութիւնը կոչումների և երկորդական կարգերի մէջ էր: Մեզ մօտ, օրինակ, չինական հասարակութիւնը ունի իր ընդհանուր ժանուէրը, իսկ այդ հասարակութեան անդամ-պետերը ժանուէրի օրնականներ (փոխարէն ռուսական սահրոսաս-ուսդնների): Ձարդի ժանուէրներ, հնուս պրոպիներ և վայելուչ պետանաններ ունենալու համար՝ Անդրկովկասի նահանգապետները իրենց նախաձեռնութեամբ կարողացան փոփոխել չինական հասարակութիւնների ծաւալը, խաչուր վարչական չինական միաւորներ առեղծել, որ նրանք կարող լինեն կրելու յիշեալ պաշտօնեաների և հասարակութեան ծախքերը:

Զանազանութիւնը մեր չինական հասարակութեան և ռուսական պետախմբի մէջ այն է, որ մեզ մօտ չինական ժողովրդի մեծ մասը բաղկացած է բոլոր ցուցակագրուած ծխերի ներկայացուցիչներից, այսինքն մի քանի հարիւր, անգամ հազար մարդ-

*կանոնից, այն ինչ առաւելան պիւղախմբի ժողովին մասնակցու-
ին ընտրուած ներկայացուցիչներ։ Ընդհանուր ժողովը միշ մեծ
պառնում է անկարգ և աղմկոտ բազմութեան մի հաւաքում, երբ
մանաւանդ քննւում է մի կարեւոր խնդիր և լարուած են պիւղա-
կան կուսակցութիւնների կրքերը։ Հարկաւ, այս անմիջական
ներկայացուցչութիւնը արդիւնաւէտութիւն չի ցոյց տալիս։ Նրա
որոշումները միշտ առիթ են տուել դանդաղների ու արատնե-
ների։ Եւ դա հասկանալի է. չնորհիւ մասնակցելու իրաւունքի
անկազմների շատութեան, որ նշանակում է, թէ բացակայող-
ների քանակը յաճախ գերազանցում է ներկայ եղողներին՝ ընդ-
հանուր ժողովները դառնում են հիւ կամակատար պիւղախմբի
ուժեղ խմբերի ձեռքում։ Վերջիններս հնարաւորութիւն են ստա-
նում ընդհանուր ժողովի անունից կայացնել որոշումներ, իրենց
օրէնքով պահանջուած աստիճանաւորութիւնները հաստատել՝ թող-
պատմութիւններով գիւղերում և անհատապէս ազդեցութիւն գոր-
ծելով ճնշուած ընդհանուրների վրայ։*

*1865 թ. օրէնսդրութեամբ՝ ընդհանուր ժողովը, որ բաղկա-
ցած է բոլոր տնտէրերից և գեկավարում է տանուտէրի ձեռ-
քով, իրաւասութիւն ունի ընտրել գիւղական պաշտօնեաներ,
որոշումներ կայացնել հետացնելու համայնքից վնասակար
տրամաւոր անդամներին, նշանակել խնամակալներ և հոգաբար-
ձուներ, քննել նրանց գործունէութիւնը, վերահսկող լինել ընդ-
հանրական բաժանումներին, կարգադրել հասարակական հողերը
խորհրդակցել հասարակութեան կալերի մասին, դրամի,
արքունի և այլ տուրքերի բաշխման գործով և այլն։ Ընդհանուր
ժողովի որոշումը օրինաւոր է, երբ հարցը քննուել է տանուտե-
րի ներկայութեամբ և ընդունուել տնտէրերի մեծամասնու-
թեան կողմից (պահանջւում է ձայների կէսից աւելին)։ Հաս-
րակ գործերը որոշում են ձայների հասարակ մեծամասնու-
թեամբ, իսկ կարևոր դէպքերում (արտաուր անդամի հեռաց-
ում, հասարակական դրամագլխի գործադրում և այլն) պա-
հանջւում է ձայների 2/3-ը։ Տանուտէրի վրայ դրուած են ոչ
միայն հասարակական, այլ և ոստիկանական պարտականութիւն-
ներ։ Ընդհանուր դատարանը դրաւում է պիւղացիների մանր վէ-
ճերով ու գանգատներով։ Նրանց վերջնական որոշմանը նե-*

ում են այն վէճերը, որոնց արժէքը չի անցնում 100 րուբլուց, սակայն վիճողների համաձայնութեամբ չինական դատարանը կարող է ձեռնամուխ լինել քննելու նաև աւելի արժէքաւոր գործեր։ Եթէ քննուող գործին մասնակից է այնպիսի կողմը, որ անդամ չէ չինական հասարակութեան, ապա կողմերից մէկի պահանջով գործը կարող է անցնել ընդհանուր դատաստանական հաստատութիւններին։ Չինական դատարանը ունի նաև պատիժների իրաւունք. աւելագոյնը՝ մինչև 3 ր., բանտ՝ մինչև 7 օր և հասարակական աշխատանքի հարկադրում՝ մինչև 6 օր։ Չինական պաշտօնեաները ընտրւում են երեք տարով, պիտի հասակային անհրաժեշտութիւն ունենան և 25 տարեկանից բարձր հասակ։ Նրանք իրենց պաշտօններում հաստատւում են նահանգապետի կողմից։ Բարձր իշխանութիւնը արտօնւած է անհրաժեշտ դէպքերում չընդհատել աստուածների ընդհանութեան, այլ նշանակել նրանց (հարկաւ, իրրև պատիժ)։

1865 թ. օրէնսդրութեամբ չինական հասարակութիւնը ճանաչուց իրրև նոր դասային կազմակերպութիւն։ Գիւղերում ապրող արտօնեալները (աղնուականներ և հոգևորականներ) զուրկ մնացին այդ կազմակերպութիւնից, թէև օգտւում էին նրա ընձեռած բարիմատուցութիւններից։ Չէ որ ճանապարհները չինւում էին բոլորի համար, ջրի հոսքը նոյնպէս բոլորի համար է, վերջապէս, չինական պաշտօնեաները գործ էին կատարում և արտօնեալների համար, հոգում էին նրանց ապահովութիւնը և այլն։ Բայց չընայած այս հանգամանքներին՝ չինական կազմակերպութիւնը համապատասխան բնոյթ չունէր և նրա իրաւունքներից զուրկ էին մնում ունևոր տարրերը, որ կարող էին իրենց մասնակցութեամբ նպաստել նրան գործելու ճկունութեան և ընդունակ արդիանալու հասարակական գործառնութիւններին։ Այս պարագայում խօսում էր պետութեան ազնուական էութիւնը, որ խորհրդանշ էր մացնում նաև չինական կազմակերպութեան մէջ, չբթոյլատրելով տեղական շահերի ու կողմնակիների շուրջը իրար հանդիպելու և միասին աշխատանքի կանգնելու արտօնեալին և ոչ—արտօնեալին։ Չինական կազմակերպութեան մի վերատուր կողմն էլ այն էր, որ նրա գլխաւոր ընտրովի պաշտօնեան (մանդարէն) նաև տեղական տարբեր

գործակալ էր։ Եւ այդ հանգամանքը իրաւունքի ու պատուի ժանուքների անդ չէր թողնում տանուտէրի համար։ Նա այլևս պատասխանության հրու կամակատարը պիտի դառնար, որ հնարաւորութիւն ունենար հատուցա վարել իր պաշտօնը և պնդ մնալ դանատան «օրդայթնևրից»։ Այսպիսով կարելի է ասել, որ չինական դասային ինքնավարութիւնը մի մարդարան չէր, ուր բնակիչը ինքնագործ քաղաքացի էր դառնում։ Նա ընդհակառակը խնամակալութեան մէջ նոյնպէս չնչող հատուածութիւն էր, որ դիմադրելի էր դարձնում իր անդամներին և ներշնչում էր նրանց եկիւղած ու խոնարհ դառնալ պատասխանների դիմաց։

Այժմ մեզ մնում է եզրափակել մեր դիտողութիւնները և քան կարելոյն պատասխանել մի հարցի. ինչ գոյն են առել մեր հատարակական զարգացմանը հայ դիւղացին և հայ բնակիչ։ Հայ դիւղացու հատարակական դէմքի մասին եզակար կարծիք չկայ խօսելու։ Մենք տեսանք, որ նա գոհ էր պատասխանել դասի ձևացին, որ տասնեակ տարիներ ճնշում էր նրա ինքնագործունէութիւնը։ Հատարակական այդ խաւը՝ տհատարակ ընդունակ չէ կազմակերպուած և նախամտածուած չարժումների, մանաւանդ երբ դեռ տերում է յետամնաց պայմաններում։ Հայ դիւղացիութիւնը, որ տգէտ խաշնարածն և ճնշող մեծամասնութիւնն է կազմում, իր պատիւ, համբերող, չարմարուող գոյութեան շնորհիւ՝ առաջացրել մեր հատարակական կեանքում այն գործերը կերպը, թէ հատարակական գործի կատարումը չի պահանջում ժողովրդի մասնակցութեան անհրաժեշտութիւնը։ Դա պատասխանել և միևոյն դասերին հնարաւորութիւն էր տալիս պաշտպանելու իրենց տնտեսական շահերը, ձեռնարկելն մեծով ժողովրդի բարեկամների և ծառաների դերում։ Դա մի գործակերպ էր, որ յարձրձում էր իրրև հատարակական ոչնութիւն ժողովրդի համար առանց ժողովրդի մասնակցութեան, իրրև նոյնիսկ պետական քաղաքականութիւն, սակայն որ պակաս էր խնամակալելու ժողովրդին, նրան դարձնելու հեղինակութեան դերի և անզօր տնտեսական ոյժերով անօրինելու իր իսկ գործերը։

Իսկ ինչ գոյն էր տալիս մեր հատարակական կեանքին հայ ազատականութիւնը։

Հայ ազնուականութիւնը—այդ պիտի չնշանել—իր քանակով աննշան մեծութիւն է եղել: Մենք տեսանք, որ պարսկական տիրապետութեան ժամանակ այդ աննշան խումբն ապրում էր մակարդուած ժողովրդի հետ ձիշտ է, նա ապրում էր ժողովրդի հաշուին և դա մի հանգամանք էր, որ չէր կարող ճնշել նրա և ժողովրդի միջև, սակայն արտաքին օտարոտի բռնած ճնշումները գալիս էին կոծկելու այդ ճեղքը: Պարսկական տիրապետութեան ժամանակ հայ արտօնեալն այդպիսին էր առաւելապես հայ ժողովրդի աչքում: Թուրք արտօնեալի հետ համեմատած նա մի առանձին բարձր դիրք չունէր: Նրան համբերում էին, բայց նա ճանաչուած մեծութիւն չէր: Նա մեծութիւն էր այն չափով, որ չափով իր հետ կապուած ունէր ժողովրդի համակրանքը: Դրութիւնը փոխուեց, երբ Անդրկովկասին տիրացաւ Ռուսաստանը: Երկրի նոր տէրը թեան սկիզբ մեծից: Թուրք բէկը և հայ մելիքը ճանաչուեցին իրաւահաւասար: ձիշտ է, թուրք բէկութիւնն իր այժմ չնորհիւ և քաղաքական նկատումներով ունի էր արժանանում ուշադրութեան և գուրգուրանքի, սակայն հիմնական խնդիրներում իրաւահաւասարութեան սկզբունքը չէր խախտում: Ռուսական տիրապետութեան հետ հայ ազնուականութեան համար հնարաւորութիւն առնչծուեց առաջադիմելու պետական ասպարէզում: Միևնոյն ժամից նա ազատուեց մի ծանր մտահոգութիւնից. նրա արտօնութիւններին վերից, կառավարութեան կողմից, վտանգ չէր սպառնում, սպա ժողովրդի համակրանքը և ձեռնհասութիւնը պարտաւոր էր լինել այն անհրաժեշտ պայմանը, որ նրան բարձրացնում էր տիրոջ աչքում: Ընդհակառակը, նոր տիրոջ այժմ թե ու թիկունք էր տալիս նրան անդիմադրելի ժողովրդի կարծիքը: Նա ի հաշիւ ժողովրդի ամբոցրից իր տեսակէտների պատուանդանը: Մենք այդ տեսանք նախընթաց էջերից: Երկրի նոր կարգերի հետ համընթաց սկսեց բացուել հին կոծկուած ճեղքը: Հայ ազնուականութիւնն իրեն, որպէս հասարակական խաւի, տիրապետեց մնացած ժողովրդից: Սակայն նա քանակով աննշան էր, սպա կարողանայ սոր ստեղծանի վրայ կանգնած: Եւ որքան էլ արտաքին ու ներքին հանգամանքները նպաստաւոր էին, այնուամենայնիւ այդ պայմաններն արդիւնքի հան-

*դիտացան, որ նա հրապարակ պայ, պահանջներ առաջադրէ կամ ազդեցութիւն գործէ, որպէս կազմակերպուած ինքնաճանաչ այժ: Նրա այժը իր խաւի մէջ չէր ամփոփուած, այլ բխում էր պետական ձևնաւորութիւնից: Միւս կողմից բուն հայկական կեանքը չափազանց ճղճիմ և անհրապոյր էր, այդտեղ «ինքնաբուխ թևան առաջընթաց» չկար, ինչպէս արտայայտում էր Սո. Նազարեանցը: Եւ դա պատճառներից մէկն էր, որ չէր հրահրում հայ ազնուականներին համախմբուելու և իրենց դասային դրօշմը դնելու հայ կեանքի վրայ: Բայց նրէ դրութիւնն այնպէս էր, որ հայ ազնուականութիւնը, կազմակերպուած այժի չգոյութեան պատճառով, իր կամքը չէր կարողանում թելադրել հայ հասարակական կեանքին, դա պետ չէր նշանակում թէ այդ չէին անում կամ անկարող էին անել նրա տոհմին ներկայացուցիչները: Ոչ: Հայ ազնուականութիւնից տոհմեր և անհատներ իրենց կամքն էին թելադրում հայ հասարակական գործերում: Եւ նրանց ձայնն այնքան էր լսելի լինում, որքան բարձր էր լինում նրանց դիրքը կառավարութեան աչքում: Բայց այդպիսի մի ազդեցութիւն չէր բխում հայ ազնուականութեան հասարակական կամքից: Դա մի երևոյթ էր, որ չէր հրահրում հայ ազնուականներին համախմբուելու և իրենց դասային դրօշմը դնելու հայ կեանքի վրայ: Բայց նրէ դրութիւնն այնպէս էր, որ հայ ազնուականութիւնը, կազմակերպուած այժի չգոյութեան պատճառով, իր կամքը չէր կարողանում թելադրել հայ հասարակական կեանքին, դա պետ չէր նշանակում թէ այդ չէին անում կամ անկարող էին անել նրա տոհմին ներկայացուցիչները: Ոչ: Հայ ազնուականութիւնից տոհմեր և անհատներ իրենց կամքն էին թելադրում հայ հասարակական գործերում: Եւ նրանց ձայնն այնքան էր լսելի լինում, որքան բարձր էր լինում նրանց դիրքը կառավարութեան աչքում: Բայց այդպիսի մի ազդեցութիւն չէր բխում հայ ազնուականութեան հասարակական կամքից: Դա մի երևոյթ էր, որ հայ ազնուականն իր ծագումն և դիրքը շահագործում էր առաջ մղելու ուսս կառավարութեան հայեցակէտը: Եւ լաւ ընդունում էր, որ այդ հայեցակէտը միանգամայն համապատասխան է հայերի շահերին և ձևնաւորում նրանց բարգաւաճմանը: Այսպիսով ոչ թէ հայ ազնուականութիւնն ամբողջովին, այլ նրա ընտրեալ մասը, նրա ակնառու ներկայացուցիչները գործիք էին դառնում պետութեան ձեռքում և այնքան, որքան նրանք միջամտում էին ազգային գործերին—այդ կատարում էին իրենց վրայ դրած պարտականութիւնները, իրրև չատապատութիւն կառավարական տեսակէտներին, նպատակներն և այլն: Եսկ այդ նպատակները կայանում էին մի ազնուական-ասիկանական պետութեան ձգտումների մէջ չլսաել ամեն-մի ինքնագործունէութիւն, ամեն-մի հասարակական աշխատանք, լինի դա ազգային թէ դասակարգային հոդի վրայ: Այսեղից պարզ է, որ նման տեսակի ազգային գործիքով հետաքրքրուող հայ ազնուականը մեր միջավայրում առնչում էր ազնուական գաղափարականութեան միջնորդը:

եւ դա այնքան էր յայտնւում, որքան դիմադրութիւն չէր գտնում հայ ժողովրդի մնայուն խաւերի կողմից, որոնք ընկղմուած էին խոր թմբութեան մէջ, անտարբեր էին դէպի հասարակական կրծքերը և պատրաստ ընթանալու հեղինակաւոր առմի կամ անձի յուզմունքներով։ Առանց այս դիտողութիւնների դժուար է հասկանալ այն երեւոյթը, որ հայ ազգի քանակով աննշան պետականութիւնը կարողացել է նախորդ դարի գոնէ առաջին կէսում իր դրօշը պնել մեր հասարակական կեանքի վրայ։

Յիշատակենք մի քանի փաստեր, որոնք պետք են լուսաբանեն մեր դաստղութիւնները։

XIX դարու առաջին կէսում հայ մտածող մարդկանց հայեացքները ուղղուած էին Լազարեաններին վրայ։ Այդ ճարպիկ վաճառականները լաւ էին ըմբռնել և դասաւորել քաղաքականութեան կապը նիւթական բարգաւաճման ու շահաւետութեան հետ։ Տեսնելով որ XVIII դարի Ռուսաստանում ազդեցիկ խօսքը պատկանում է պետականներին՝ նրանք հայոց կաթուղիկոսի վիճականով իրենց պետական ճանաչել տուին։ Ապա նրանք պահեցին էջմիածնի նկատողութիւնը և իրենց ձեռքը հաստեցին հայկական դիմումների գործը։ Ռուսական արքունիքում, դեռ XVIII դարի վերջում, Լազարեանները Արեւելքի նկատմամբ կատարում էին իրական մարդկանց դեր. հայ եկեղեցականներից, մելիքներից և վաճառականներից նրանք տեղեկութիւններ էին առնում և հաղորդում նուաճողական ձգտումներով տարուած ռուս կառավարութեանը։ Աչքարաց հայերը նրանց ճանաչում էին որպէս բարեխօսներ ազգի համար. նրանց առաջարկները, դիմումները կատարում էին առանց տարակուսելու։ Մի խօսքով հայերի քաղաքական տեսութեան պատճառով Լազարեաններն դարձել էին նրանց ուղղութիւն տուողը, դեկավարողը։ Նրանց այս կարգի գործունէութիւնը հայերի մէջ ծնեցնում էր անբարոյական սովորութիւններ. հայասաանի անկախութեան վերականգնումն և այլն։ Հայերի տգիտութիւնը նպաստեց միայն մի բանի—Անդրկովկասի նուաճմանը ռուսների ձեռքով։ Սակայն նրանց նենգարկումը Լազարեաններին վերջիններիս համար անպատասխանում էր որպէս պատիւ, նիւթական վարձատրութիւն։ Կառավարութիւնը չէր անդրադառնում նրանց մատուցած ծառա-

յուֆիւններըւ Իրենք Լազարեաններն էլ լաւ էին տակտիկա, թէ ովքեր են և ինչ են անում։ Մի բնորոշ փաստ նրանց ազգասիրական գործունէութեան։ Վերջին ռուս - պարսկական պատերազմից յետոյ նպատակայարմար գտնուեց գաղթեցնել պարսկահայերին և նրանցով բնակեցնել նոր տիմանուպլիսը։ Այդ մտադրութեան իրագործումը յանձնուեց գնդապետ Լազարեանին։ Վերջինիս յաջողուեց տեղահան անել 40.000 հայերի և ուղղել նրանց ռուսական նոր երկիրը։ Գաղթականներին արուեց ամեն մի խոստում. տուտ և բերրի հող, ազատութիւն հարկերից և այլն։ Մենք տեսանք, թէ ինչպէս այդ գաղթականներից մարդկեղինները կատարում էին Ղարսքարի տափաստանում։ Սակայն մնաց մարդկեղիններին չվճռակուց քամել դառնութեան բաժակը։ Գաղթական պարսկահայերի մի նշանաւոր մասը մահացաւ ամէից և անյարմարութիւններից։ Իսկ դա այնքան էլ մտահոգութիւն չէր պատճառում հայ քաղաքագէտներին և մանաւանդ Լազարեանին։ Այդ մնձ հանճարում էր վայ դրած պարտաւորութիւնը արտերամբ կատարած։ Նա գրպարութեան մէջ էր Պասկեվիչի հետ և նրանից պարզև էր պահանջում իր անձին։ Զարմանալին այն էր, որ Լազարեանը հաւատացնում էր նրան, թէ հայերը գաղթել են Լազարեան տհմի պղեցութեան և հրաւէրի չնորհիւ, որ նրանց համարէն է գաղթականներին տեղահան անողը և ոչ թէ ռուսների պղեցութիւնը։ Պասկեվիչն քննութեան նշանակեց այդ մասին։ Լազարեանը ոչինչ չտատյաւ, նրա ինքնապահպանութիւնը հերքուեց քծնող պաշտօնեաների բերանով, սակայն մերկ փաստը մնում է, որ հայերի «բարերարները» պիտէին օգուտ քաղել իրենց ծառայութիւններից, պիտէին ամ հարկն է յիշեցնել այդ մասին։ Եւ նրանց բարձրացումը հայ մտածողների դիմադրութիւնն էր նշանակում։ Լազարեանների անձնան բարեգործութիւնը, որ հայերի քաղաքական տհասութեան չահագործման փոխարէն մատուցանում էր ազգին, մի հատարակական մրձաւանջ էր։ Այդ հանգամանքը ճնշում էր բոլորի գիտակցութիւնը։ Հայ գործիչներն ազգի վիճակը տագտում էին Լազարեաններից կամ նման բարերարներից։ Լազարեան տհմի ուրախութիւնը ժամ էր քաղում առաջատար հայերից։ Նրանց վիշտը արձագանք էր

պանում նոյն տայերի մէջ։ Դարձեալ մի բնորոշ փաստ։ Վախճանում է Խաչ. Լազարեանի մանուկ Յովհաննէս որդին։ Բոլոր հայ եկեղեցիներում հոգեհանգիստներ են կատարում։ Յաւակեան ուղերձներ և նամականիներ են յղում ազատ հօրը։ Թամանուկի հայ Թևերը—Դարբիել քահ. Պատկանեանի «Արարատը» —նոյնպէս պրում է այդ մասին*)։ Խմբագրի որդին, բանասիրդ Ռաֆայէլ Պատկանեանը մի պրպտուն ուսումնասիրի մէջ մանուկ Լազարեանի մահը համարում է՝ կոկիծ, պատմելոյ բօթ, լոյս և աուգ։ Հայկ ու Արամին նա դուրս է բերում զերեզմաններից և նրանց բերանով սրում ազգային մեծ կարուսաը։ Այդ նոյն համարում Գր. Զաղիկեանցի՝ ծանուցանելով խմբագրին այդ մահուան մասին՝ գրում է. «Բօթալի լուրս այս պրուշմեցի և Թևերս «Արարատայ», որպէս չարժուիմ, որոյ ազգասէր Աստ և Փոքր Մասիս՝ բազում արուսաուաց աուսս հանդերձեալ են հետոյ յայսմ հետէ, ցորքան Ազգ Հայոց կոյ և վերայ աշխարհի»։ Սիրել կարելի է ասել խղճալի դրութիւն երևակայել, քան այն, որ սահեցել էին հաչակուած Լազարեաններբը։ Նրանց համար խանգարում էին հայ զիւցազների ներկը, նրանց համար արուսասել էին սալիս աուգ ու փոքր Մասիսներին։ Լազարեանները մի սուն էին, բայց այսքան ազգեցութեան տէր։ Եթէ հայ պետական դասը զոյութիւն չունենար անդամ—նրանք միևնոյն բաւական էին մի դասի գոյն կատարելու համար։

Մի ուրիշ հայ պետական, որ նկատ սուսալի պէս, բայց չափազանց նշանակալից հետք թողեց։ Մենք ակնարկում ենք Իշխ. Մադաթեանին։ Այդ մարդը մի չափով հաչակուեց հայ կամաւորների անձնուէր ջանքերով։ Իսկ ինչ շահեց նրանից Հայաստը։ ձգտումը։ Նա նրա հոգին կազդուրելու սասին օրինակ սուսղը։ Ազատ վարանդեցուն նա դրաւ ճշմարիտ

*) «Արարատ», Ա. տարի, № 16. 1850 թ., Լազարեանների դիմադրուկ գործնոյ ազգեցութիւնն սեր քան գոյուն է հետևեալ Աբելից. 1) «Յիշատակարան կենաց և գործոց մեծանուն պատգամաց Լազարեան սոհմի», հեղինակ Սեր Մելիքեանց. Մոսկուա, 1856 թ. և 2) «Յիշատակարան բազմերախտ հոգաբարձուի Յովհաննու Լազարեանց», Մոսկուա, 1859 թ.։ Այս նեղրոլ- գրքերը մի-մի ազգագրի են մեր պետական և սրուսկ անցեալի։

*դրութեան մէջ: Իր ճորտական փաստաբանութեան մէջ այնքան առաջ գնաց, որ առանձակ տաբինեը Վարանդայից հետացած և նախին մէջ հաստատուած հայերին նորից վերադարձնել առաւ նախկին ծննդավայրը և հպատակներ նրանց, որպէս ճորտաւոր կալուածատէրը**):

Ցիշենք այստեղ Բեհրատեաններին: Նրանք Աշտարակեցին նրանց հպատակութեանից յետոյ պայքարով միայն ազատեց Թիֆլիսի հոգևորականներին: Այդ ատեն նրանց ներկայացուցիչ Վ. Բեհրատեան էր, որ հրաժարեցաւ Պատկերչի ձեռքին: Նա յաջողեցրեց Յովհաննէս Կարբեցու կաթուղիկոսութիւնը: Զոհաբերութեամբ իր հայկական ծագումը և պաշտօնական դիրքը՝ նա էջմիածնի աթոռի վրայ մի չափազանց փափուկ շրջանում բազմեցրեց ապիկար, ապաշնորհ, երկչոտ և ոչէտ Կարբեցուն:

*Մենք չենք երկարեցնում նման փաստեր բերելով: Մեծ ու փոքր Լազարեան, Մազաթեան և Բեհրատեան էին այդ բոլոր Արղութեաննները, Մելիք-Բէգլարեաննները, Լոռիս-Մելիքեաննները և այլն և այլն: Կաւասարական հայոցակէտի մարդիկ՝ նրանք այն ժամանակ էին հայութիւն անում, երբ անհրաժեշտ էր դառնում մի որոշ յանկութեամբ կարգադրելու այս կամ այն ազգային գործը: Նրանք օտար ազդեցութիւնների հաղորդիչներ էին և իրենց օրինակով ուղղում էին առաջատար հայերի հասարակական կարծիքը: Թուով աննշան՝ նրանք կառավարում էին մի պաշտօնեայ դասի գործ և առնչում էին այդ դասի շահերին համապատասխան միջնորդել: Հնազանդական մանրամասնութիւն: 1854 թ. վոխտերքայ Վարանցովը հետանալով Կովկասից թողնում է իր տեղապահին մի հրահանգ, որի մէջ յիշելով հայ ազդեցիկ և ակնառու պետականներին՝ նրանց անուանում է միանգամայն ուսուցած և խիստ պիտանի կառավարութեան նպատակներին ծառայելու համար***):

Պետական կառավարութիւնն առհասարակ և հայ պետականները մանաւանդ նախորդ դարի 60-ական թ.թ. մեր միջավայրին այնպիսի գոյն էին տուել, որ հայ վաճառականն անգամ մտահոգում էր պետական և տնտեսական սերտելի

---

*) Акты, т. VIa №№ 1078 և 1081.

**) Акты, т. X, № 71.

համար: «Վաճառականը» թերթն այդ մասին հետևյալ խորհրդածություններն է անում. «Էն վատ էր, որ արհեստները և վաճառականությունը չէին պատում, ինչպէս պէտք էր և վաճառականը իր անպատեհությունը իր սրտակեցոյց վերացնելու համար աշխատում էր ուժեմ առ իր գործն և առաքինաւոր չինել--իր գործից հետացնելով և իրանից խորթացնելով նրան: Ամենից լաւերը և հարուստները թողնում էին վաճառականությունը, վաքրիքը և խեղճերը անպատեհ վոխում էին և էգուց-ասվ գործը յետ էր մնում և բոլորովին չէր պատահում տեսնել տեսակ տեսակ ասն 100 տարով շարունակ գործունեություն: Բայց հիմի, երբ որ վաճառականների համար պատրաստած է մի պժանաւոր վարձատրություն—պատուաւոր հաղաքացուքիւնը և կառավարություն իր կողմից ամեն միջոց պատճ է դնում առևտրական գործունեությունը յառկելու և պատուելու, յայանի բան է վարպետան բանները չեն կրկնուել: Պատուաւոր քաղաքային էնքան տեղը պատուած է, ինչպէս և ատենաւորը»*): Այսոհետև պարզ է, որ տղնուականության առանձնահատկությունը պետական դիրքը պրուիշ էր նաև վաճառականության համար, որ այդ դասի ներկայացուցիչները բուն ձգտում էին ընդունելու պատվանունների շարքում: Այդ երևույթը պէտք է որ չափազանց յայտուն լինի եղած, որովհետև վաճառականը իր վերը յիշած հրահանգի մէջ խորհուրդ է տալիս հոգատարին հայերի տղնուական դասակարգին ներհակել: Նա ասում է, որ տղնուականի պետական իրաւունքը ճանաչ անհնարաւ մէջն է: Եթէ հայերն անհնան այդ իրաւունքը, ապա վրայ տղնուականության հոգին ու ճարտարը կարճ ժամանակում նրանց ձեռքը կանցնեն, քանի որ հայն չահասկրության դէմ պարզ վրային անկարող է մաքառել:

Ի՞նչ են ապացուցանում այս փաստերը: Որ տղնուականության տղեցությունը մեր առևտրականության ներհակ չէրնում խիստ ուժեղ էր: Այնքան ուժեղ, որ անցեալով չնչող այդ դասը իր դարավորականության համար վարակում էր և ծայր աստ բարձրացնում: Թէև հայ տղնուականությունը, որպէս դաս հայկական դաս, աննշան էր իր քանակով, բայց նա հա-

*) «Վաճառական», № 23—1866 թ.

մասնաւական նոյն գերիշխող դասի մի հատուածն էր և որպէս այդպիսին, ողջակէզ կամ անուղղակի ներգործութեամբ աւատական ոգի էր ներարկում հայ մշակոյթին: Եւ այդ մշակոյթի վերածնութեան պահանջ առաջադրողը իր հակառակորդների բանակում պիտի նշմարէր նաև հայ ազնուականի դէմքը:

ԳԼՈՒԽ III

ՔԱՂԱՔԱՑԻՆ ԴԱՍԵՐ՝ ԱՐՀԵՍՏԱՒՈՐ ԵՒ ԱՒԵՏՐԱՍ-ԱՐԴԻՒՆԱԲԵՐԱԿԱՆ

*Քաղաքների և քաղաքային դասերի մասին մենք այս աշխատութեան առաջին մասում համառօտ խօսել ենք: Վերածնութեան ժամանակ և պարսկական սերտ տիրապետութեան օրերին քաղաքը Անդրկովկասում տնտեսական գերակշռող դիր չէր խաղում: Այդ դրութիւնը երկար ժամանակ անխախտ մնաց և ռուսական սերտ տիրապետութիւնից յետոյ: Գոնէ մեր ուսումնասիրութեան ենթակայ ժամանակամիջոցում հին կացութիւնը խորը փոփոխութեան չէր ենթարկուել, թէև քաղաքների դարպասն ընդունել էր չոշափելի չափեր: Այդ ժամանակաշրջանում քաղաքային բնակչութիւնն ամբողջովին չի կարուած երկրագործութիւնից. քաղաքացին պարապում է նաև գիւղատնտեսութեամբ: Նա վար ու ցանքս է անում, խաշնար ունի և այլն: Նախորդ դարի երեւնական թուականների համար Դարբաղին ուսումնասիրող Զուբարեօվը յիշում է, որ Շուշիի բնակիչներից շատերը զբաղւում են հողագործութեամբ: Եւ սակայն Շուշին բերդ էր. նա իր շուրջը յարմար վարելահողեր չունէր: Ապա նա նկատում էր, որպէս մեսաքսագործութեան, կտաւագործութեան և կաշեգործութեան ծաղկած կենտրոն. նրա մէջ կային 42 մեսաքսագործարաններ, որոնք 1829 թ. արտադրել էին 14 հազարից աւելի կտորներ և թաշկինակներ, զբաղեցնում էին 132 ոստաններ վրայ 324 ջուլհակ և բանուոր, կային 28 կտաւագործարաններ 80 ոստանով և 8 հազար կտաւի արտադրութեամբ, վերջապէս, 20 կաշեգործարաններ, որոնք զբաղեցնում էին 40 մարդ և արտադրում էին 5 հազար

կաշի*)։ Այստեղից մենք տեսնում ենք, որ շուշեցին դուռ քաղաքային պարտապանների հետ գործում է նաև հողի անմիջական մշակութեամբ։ Նոյն այդ երևոյթը տեսնում է Ալէքսանդրապոլում։ 1837 թ. դեկտեմբերի 6-ին ալէքսանդրապօլցիները հարթապոյն անունով խնդրեր են մատուցանում, ուր նկարագրում են իրենց անմխիթար կացութիւնը։ Այդ խնդիրքը մինչեւյն ժամանակ լուսաբանում է նրանց պարտապանքները։ Ծանօթանանք այդ հետաքրքրական թղթի բովանդակութեան հետ**)։ «Թող յայտնի լինի Ք. Կայսերական Մեծութեանդ, գրում են մեամիտ առնով ալէքսանդրապօլցիները, որ մենք Գիւմրիի բնիկներս Ցկցխանովի ժամանակ մեծոգի և մարդասէր ընդունել ենք Ք. պետութեան հպատակութիւնը։ Այդ ժամանակից յետոյ մեր գրութիւնն այնպէս է, որ կարծես մենք գերուած ենք և քշուած Թէհրան. մեր մեռելները մնում են անթաղ, որովհետև գինուորի հետ գինուորութիւն ենք անում, կապակի հետ—կապակութիւն (Ալէքսանդրապօլցիները կամենում են ասել, որ իրենց տեխում են գինուորական ծառայութիւն անել—Դ. Ա.)։ Ապա Թող յայտնի լինի Ք. Կայսերական Մեծութեանդ, որ մինչև օրս Գիւմրին գիւղ էր, իսկ այժմ քաղաք է դարձուել, ուստի մենք կառաւում ենք թէ գիւղական և թէ քաղաքային ծառայութիւններ։ Մեր գլխաւոր ցաւը նրա մէջն է, որ Ք. նշանակած գլխաւորի համար հերկում ենք, հնձում, կալսում և հատիկը չամարան հասցնում։ Բացի դրանից նրան իւրաքանչիւր տարի վճարում ենք 40 չեմելեա ցորեն։ Հացից զատ նրան իւրաքանչիւր տարի տալիս ենք 6 փութ ձէթ և 6 փութ կովի իւղ։ Գլխաւորի համար կառաւած այդ ծառայութիւնները մնացած տուրքերից ծանր են. նա նոյնիսկ մեզ վարչական բանը չի թողնում։ Մենք մինչև հիմա չենք իմացել, որ Ք. այդքան ողորմած ես. այժմ ենք միայն իմացել, որ Ք. բարերարութիւնը անսահման է։ Առաջոյ փառքի համար և

*) Обозрѣніе Россійскихъ владѣній за Кавказомъ, ч. III, С.П.Б., 1836 г., էջ 311—313.

**) С. А. Егіазаровъ. „Изслѣдованія по исторіи учрежденій въ Закавказьи ч. II Городскіе цехи", Казань, 1891 г., էջ 254, (ծանօթութիւնը)։

յանուն Քրիստոսի անհանգիստ մի թողնել մեր խնդիրը—բաղաքը: Իմացիր այժմ, որ մենք ամբողջ Գերմանիայի բնիկ ժողովուրդս սոցիալիստների մէջ ենք գանւում սոցիալիստների ձեռքին: Տգիտութեան պատճառով մենք քիչ գլուխներ, բայց Դուշաս հասկացիր»: Այս գրութիւնը բացի այն, որ պատկերաւոր կերպով պարզում է ալբանդրատօրյինների կրած նեղութիւնները սոցիալական շահատակութիւնների չնորհիւ, միևնոյն ժամանակ ցոյց է տալիս, որ այդ քաղաքի բնակիչները քաղաքական թուին դեռ ամուր կապուած էին երկրագործութեան հետ, հերկում էին, ցանում, հնձում և կալսում: Քաղաքային բնակչութիւնը խոշոր չափով գերազանցութեամբ էր պարզում և 60 թ. թ.: 1865 թ. Երևանի նահանգի քաղաքային բնակչութիւնը կազմում էր նահանգի բնակչութեան 9,61%: Այդ քաղաքացիների մեծամասնութիւնն իր նիստ ու կացով և պարապմունքներով—չինական էր, երկրագործ կամ այգեպան: Այդպէս էր Նոր-Բայազէդի ողջ բնակչութիւնը: Նոյն էին Ալեքսանդրապօլի, Նախիջևանի և Օրդուբադի արուարձանների բնակիչները: Երևանի մէջ նրա 2ումակէի թաղի բնակիչները (700 ընտանիք) զբաղում էին երկրագործութեամբ, իսկ Թափարաչ թաղի բնակիչները — այգեպանութեամբ և պարտիզպանութեամբ*): Այս վկայութիւններն ու փաստերը ցոյց են տալիս, որ մեր ուսումնասիրութեան նիմակայ ժամանակաշրջանում Անդրկովկասի քաղաքների բնակչութիւնը ամբողջովին չէր պարապում քաղաքին պատշաճ պարապմունքներով—արհեստով, արդիւնաբերութեամբ և առևտրով: Քաղաքացին լաւ մեծ մասին գլխաւոր զանազանում էր նրանով, որ նա զբաղում էր վարչական կենտրոնացումով: Քաղաքը գիտի հետ համեմատած ունէր այն տարբերութիւնը, որ նա ունէր մեծ էր իր չափերով և բացի այդ նրա բնակչութեան մի մասը կերուած էր հողից: Այդ մասն էր, որ չնչում էր քաղաքի գարգացման ուղին: Այդ մասի հասարակական դերն էլ այսուհետև պիտի լինի մեր զբաղմունքի առարկան: Սակայն երկու խօսք էլ ասենք քաղաքների գարգացման մասին ընդհանրապէս:

*) „Сборникъ статистическ. свѣдѣній о Кавказѣ“, Тифлисъ, 1869 г. էջ 12.

Անդրկովկասի քաղաքների զարդացման պատկերը ցայտուն կերպով բնութագրում է նրանց բնչչն: Այդ քաղաքների հաշմատանքը 1843 թ. եղել են*) (մենք վերցնում ենք հայ բնակչութեան ունեցող քաղաքները).—

Թիֆլիս	. . . . .	78.016	ր. 5½ կ.
Ջամախի	. . . . .	14.946	ր. 63 կ.
Գանձակ	. . . . .	7.695	ր. 55¾ կ.
Շուշի	. . . . .	7.367	ր. 45½ կ.
Երևան	. . . . .	6.898	ր. 34½ կ.
Նուխի	. . . . .	5.759	ր. 57 կ.
Ախալցխա	. . . . .	5.390	ր. 13 կ.
Ալէքսանդրապօլ	. . .	5.217	ր. 63 կ.
Բագու	. . . . .	5.149	ր. 78¼ կ.
Գոլի	. . . . .	4.832	ր. 90 կ.
Թէլաւ	. . . . .	4.144	ր. 63 կ.
Նախիջևան	. . . . .	4.024	ր. 74½ կ.
Օրդուբադ	. . . . .	2.844	ր. 2½ կ.
Սղնախ	. . . . .	2.824	ր. 23½ կ.
Դուշէթ	. . . . .	1.284	ր. 20 կ.
Ջաքաթալա	. . . .	1.202	ր. 53 կ.

Այս թուերը չափազանց պերճախոս կերպով պատկերացնում են մեզ քաղաքների զարգացման սաոր աստիճանը: Անկի հետաքրքրական է իմանալ, թէ ինչ ազգութիններից էին գոյանում քաղաքների միջոցները և ինչ քանակով: Անդրկովկասի բոլոր քաղաքները 1843 թ. ունէին նկատառանելի հետևեալ ազգութիները.

1)	Վկատ քաղաք. հանրական գույքերից	4.377	ր. 63½ կ.
2)	» քաղաքներին պատկանող կալուածներից և վարձու տրուքից .	32.413	ր. 63½ կ.
3)	Տնտեսական վճար անշարժ կայքերից .	75.940	ր. 51 կ.
4)	Վճար արդիւնաբերական ձեռնարկներից և արդիւնաբերողներից . .	9.593	ր. 89 կ.
5)	» տեսակ անելու իրաւունքի համար	31.164	ր. 61½ կ.

*) Акты, т. IX, ч. II № 520.

6) Վճար արհեստաւորներից . . . . . 9.882 ր. 1 կ.
7) 2%-ական վճար մաքսային նկամուտներից . . . . . 2.076 ր. 83½ կ.
8) 20%-ական վճար акцизային նկամուտներից . . . . . 4.803 ր. 86 կ.
9) ¼%-ական վճար բողոքի արուած մատհաններից և պարտաթղթերից . 3.838 ր. 87½ կ.
10) Պատահական նկամուտներ՝ տուգանքներ, աճուրդներից և այլն . . 2·855 ր. 97 կ.

Այսեղից մենք տեսնում ենք, որ Անդրկովկասի քաղաքները միասին 1843 թ. տուել են 176.947 ր. 83½ կ. նկամուտ: Այդ գումարից 50.640 ր. 51½ կ. կամ 30% գոյացել է արդիւնաբերողներից, առևտրականներից և արհեստաւորների անմիջական վճարներից: Այս հանգամանքն անուղղակի կերպով ցոյց է տալիս, որ արհեստաւոր և առևտրա-արդիւնաբերական խաւերն իրենցով չէին ներկայացնում «քաղաքի բնակիչ» հասկացողութիւնը:

70 թ.թ. Անդրկովկասի քաղաքների զարգացումը բաւականաչափ աստիճան էր գնացել: Այդ մենք տեսնում ենք թէ քաղաքների բնակչութեան աւելացումից և թէ նրանց բիւջէների խոշորացումից: Այսպէս, նրանք ունին բնակչութեան քանակի հետևեալ պատկերը) (տեղեկութիւններ տալիս ենք հայ բնակչութիւն ունեցող քաղաքների մասին).

Քաղաքներ	1862 թ.	1872 թ.
Թիֆլիս	60.776	67.770
Բաքու	13.392	15.604
Երևան	12.170	15.040
Գանձակ	15.191	16.167
Գորի	4.482	5.183
Թէլաւ	7.003	6.109
Ախալցխա	9.008	10.320
Ախալքալաք . . .	1.339	2.260
Ջաւախի	25.148	24.502

*) Отчетъ по Главному Управленію Намѣстника Кавказскаго за десятилѣтіе 1862—1872 г., Тифлисъ, 1873 г.

Ալէքսանդրապօլ . .	14.933	20.600
Նախիջևան . . .	6.189	8.772
Նոր-Բայազէտ . . .	4.160	4.870
Օլդուբաթ . . .	4.001	4.321
Ջուլի	20.297	19.945
Ախալցխա	14.722	13.775
Դուշէթ	2.320	2.525
Նուխի	20.533	24.994

Քաղաքների բնակիչները հետևեալ պատկերն էին ցուցադրում.

	1862 թ.		1872 թ.	
Քաղաքներ	մուսք	ելք	մուսք	ելք
Թիֆլիս . .	277.993	235.042	366.029	368.998
Բաքու . . .	32.041	23.293	60.587	54.310
Բքիան . . .	26.498	19.878	52.240	35.305
Գանձակ . .	8.761	10.687	38.045	33.045
Ախալցխա . .	14.592	9.062	15.308	17.120
Ջամախի . .	24.631	22.134	22.784	18.562
Ալէքսանդրապօլ	15.103	10.002	19.891	11.843
Նոր-Բայազէտ .	2.099	1.538	5.144	1.606
Ջուլի . . .	16.483	11.755	29.972	29.395
Նուխի . . .	12.374	12.648	33.437	33.437

Եթէ թիւեր կիրառով համեմատենք 1862 և 1872 թ. թ. բնակչները 1843 թ. քաղաքների ունեցած նկատմանների հետ, ապա ակնյայտնի կըլինի նոյն իսկ փոխոխութիւնը. մի քանի հազար բնակիչների դիմաց այժմ մենք ունենք հարիւր և աւելիկ հազարներ։ Դա նշանակում է, որ քաղաքները մեծացել էին, որ բարգաւել և զանազանակերպ էր դարձել նրանց տնտեսական և հասարակական կեանքը։

Այժմ դառնանք քաղաքների բնակչութեան այն մասի ճանաչողութեան գործին, որ դեռ մինչև առաջին Անդրկովկասեան տիրելը իր մէջ կրում էր քաղաքների զարգացման ամբողջ այնքան զգալուն արհեստատոր և առևտրա-արդիւնաբերական խաւերի առաջնահերթութեամբ։

Ի՞նչ արհեստներ էին տիրում Անդրկովկասում և ինչպէս

էր կայանում նրա առևտուրն ու արդյունաբերությունը։ Վրաստանի անկախության օրերին և Պարսկաստանի տիրապետության ժամանակ երկրի բնակչությունը մեծ պահանջներ ավ չէր. ճոխությունն ու վարքհամությունն տիրող խաւի բաժինն էր այն ինչ ժողովրդական խաւերն իրենց պահանջները բաւարարում էին սեփական անասունքներից գոյացած միջոցներով սեփական աշխատությամբ։

Արհեստաւորի կամ վաճառականի միջնորդի աշակերտները նրանք դիմում էին ծայրահեղ դէպքերում, շատ կարևոր պակաս ու տխմար։ Հարկաւ, այսպիսի հանգամանքներում արհեստը առևտուրը չէին կարող ծաղկած ու զարգացած լինել։ Երկրի անապահով և յիրեղուկ քաղաքական կացությունն էլ պակաս էր ազդի զարգացնելու նրանց բարգաւաճումը։ Արհեստն ու առևտուրը բաւարարում էին միանգամայն անհրաժեշտ նկատուած պահանջները. նրանք իրենք նոր պահանջներ չէին առաջ։ Նրանք ընդունել էին մի կայուն վիճակ և ընդարմացել այդ տեղի վրայ։

Հետաքրքրական է իմանալ թէ ինչ արհեստներ էին մուտ, քանի մարդ էին զբաղեցնում նրանք, ո՞րն էր երկրի արդիւնաբերությունը և այլն։ Դժբախտաբար այդ մասին մենք տեղեկություններ ունենք սկսած նախորդ դարի 30-կան թուականներից։ Այսպիսով բուն վրացական և պարսկական ժամանակաշրջանի մասին փաստերը բացակայում են։ Սակայն ի նկատի ունենալով, որ 30-ական թուականներին վրացական և պարսկական իրականությունները մեծ երկի հանգամանք չունէին, մենք վստահանում ենք ասել, որ ինչ կար այդ ժամանակաշրջանում, դա մեծ պակասով կողմերով գոյություն էր ունեցել դրանից առաջ։ Դիմենք այժմ փաստերին։

Նախորդ դարի 30-ական թուականներին Անդրկովկասի մայրաքաղաք Թիֆլիսի արհեստաւոր դասը քանակի և արտադրանքի տեսակետից չերտաւորումն ունէր*). մուշտակագործ — 24

*) Обозрѣніе Россійскихъ владѣній за Кавказомъ, С.П.Б., ч. I, 1836 г., ԼԼ 213—214.

հագի, վերձակ—136, ժամապահ—5, մեռածը ոտքով—42, թամբապահ—34, կօշիկակար—104, նկարիչ և նիվկով—16, արծաթագործ—54, հրացանագործ—21, մաշիկագործ—43, կաշեվաճառ—66, մոմապահ—59, դրամագործ—84, ասիլիչ—40, գործուածքներ գալոպանկարով—11, հացթուխ—58, լապտերագործ—2, դարբին—74, վահանագործ—33, հիւան—63, արմնաղիր—80, թոկ ոտքով—8, տիկ չինող—14, ջուլհակ—45, բրուտ—19, կաթսայագործ—14, թաղիքագործ—18, սաապձագործ—60, անագող—11, թրեր պատրաստող—12, հրացանի փողը նորից գծուտող—11. Այս ժամանակակից վկայութիւնից մենք տեսնում ենք, որ Թիֆլիսում գոյութիւն ունի 32 տեսակի արհեստ, իսկ արհեստաւորների թիւը հաւասար է 1161 հոգու: Ցիշուած արհեստների մէջ մի քանիսը նորաժուժ են երեւում, օրինակ, ժամագործութիւնը, լապտերագործութիւնը և սապոժագործութիւնը: Ժամացոյցը, լապտերը և սան կահաւորութիւնը հին անպիտանութեան համար ասելով, անմատչելի և չտեսնուած հայելութիւններ էին: Նկատում է, որ արհեստների և պատրաստանքների ցուցակում չեն յիշուած մի քանիսը. օրինակ, մատցութեան են տրուած նկարագրները, մոմագործները, պատրաստողները և այլն: Ապա խօսք չկայ առևտրականների մասին, այն ինչ այդ շրջանում արհեստաւորը և առևտրականը կազմակերպուած էին համքարութիւնների մէջ. ամեն-մի արհեստ և առևտուր սահմանագծուած էր միւսից և ամիոփուած որոշ շրջանակներում, այնպէս որ ուսումնասիրողը հեշտութեամբ կարող էր տեղեկանալ նրանց գործի մանրամասնութեան: Չնայած այս պակասներին՝ այնուամենայնիւ պարզ է, որ կենտրոնական Թիֆլիսն իր արհեստով կանգնած էր անհամեմատելի աստիճանի վրայ:

Նոյն 30 տան թուականներին Ջուլին 5079 հոգի արական սեռին պատկանող բնակչութիւն ունէր: Ջուլի բնակիչների 762 ընտանիքը հայ էր, 936 թուրք· Այդ բանակի բնակիչներից արհեստով և առևտրով զբաղող քաղաքացիները տարբաժանւում էին. ճամիկների առևտրական—94 հոգի, բանջարեղէնի, ուտելիքի և զանազան մանրուքների վաճառող—44, դերձակ և նեղկերի—30, բուրդ ձեծող—6, կաուապործ—28,

արծաթապոյծ—12, դարբին—25, պղնձապործ—6, անագող—3, թամբապործ—15, պզակապործ—24, դերձակ—30, կօշկակար—44, ձեռնոցապործ—4, հլուն—4, համեստապործ—10, թաղքապործ—2, չուլապործ—1, դայթան պատրաստող—2, գինապործ—22, սափրիչ—3, հացթուխ—6, տրխառլար—2*): Ջուլֆի առևտրականների և արհեստաւորների քանակն այսպիսով հաշուում էր 417 հոգի: Առանց պիտի յիշել, որ Ջուլֆին ունէր և մատաքսագործարաններ, կտաւագործարաններ ու կաշեգործարաններ: Յամենայն դէպս Ջուլֆի առևտուրն, արհեստը և արդիւնաբերութիւնը տեղական կարիքներին բաւարարող պարագաներ էին: Արհեստաւորը գործում էր պատուէրով, վաճառականը գիտէր, թէ որ տարածքից ինչ քանակի պահանջ կայ հրապարակում և անդամ ով պիտի լինի նրա պահանջողը:

Հայկական շրջանի (նախկին Երևանի և Նախիջևանի խանութիններ և Օրդուբադի գաւառ) առևտրի և արհեստի մասին հետաքրքրական և լրիւ տեղեկութիւններ տալիս է Շոպէնը **): Նա վաճառականներին բաժանում է չորս կարգի. 1) սովդաքիաներ, որոնք առևտրով զբաղւում են Թաւրեզում և տանց խանութներին, 2) բէնեախաներ, որոնք առևտրով զբաղւում են Թաւրեզում և խանութներում, 3) բազազ—մանր խանութպաններ և 4) չարչի—վերջիկ, որ շրջիկ առևտրական է և իր ապրանքներով պտրտում է տուն և տեղէ տեղ: Շոպէնը Հայկական շրջանում հաշուում է 895 վաճառական, որոնցից 708 հոգի, այսինքն խոշոր մեծամասնութիւնը, բէնեախաներ և բազազ: Գլխաւոր սովդաքիաները, ասում է նա, գտնել են Պարսկաստան: Նշանակում է նրանք գլխաւորապէս Թուրքիայում են եղել, որ չեն կամեցել ընդունել Ռուսաստանի սերտագնութիւնը: Մնացած վաճառականները առտրտւում են հետևեալ կարգով. մինորսներ—27 հոգի, նպարավաճառ—22, մանր խանութպան—85, վերջիկ—51, հետաքաղ—2: Գրողը գտնում է, որ նրանցից ամեն մէկը միջին հաշուով տարին 300 թուման (1200 ր.) շրջանառութիւն կունենայ, որից գոյ-

*) Обозрѣніе Россійскихъ владѣній за Кавказомъ, ч. III, С.П.Б 1836 г. էջ 308—309.

**) Шопенъ. էջ 843—850, 856—867, 876—877.

օպում ընդունում է 240 տուբլի։ Ամբողջ Հայկական շրջանի առևտրական շրջանառութիւնը նա հաշւում է մօտ 4 միլ. տուբլի։ Նրա կարծիքով բնիկ հայերից ամենահարուստ վաճառականները գտնում են Ադուլիսում։ Այդ վաճառականներից ոմանք, Զոպէնի պես, ամեն ժամանակ կարող էին հրապարակ բերել 20 հազար ոսկի։ Պարսկաստանից գալիս հայերի մէջ նա հարուստ չի ճանաչում։ Թուրքիայից գաղթածների մէջ այդպիսիները գտնում է և յիշում է նրանցից մէկին, Մկրտիչ տէր Արծրունեան, որ շրջանառութեան մէջ ունէր 10 հազար թումանից աւելի գումար։

Գործարանային արդիւնաբերութիւնը գտնում էր սորին և նախնական վիճակի մէջ։ Հայկական շրջանում գործարանային արդիւնաբերութիւնը բաժանում էր հետևեալ ճիւղերի. օճառի արդիւնագործութիւն, որը քաղաքներում գտնում էր կապալառուների ձեռքին, այնինչ պետական շահառուցութեան տրիբիւնը էր, կաուչգործութիւն. ամբողջ շրջանում կային այդ կարգի 45 գործարաններ, ձիրահանքեր—285 ձեռնարկութիւն, չրուդաց—1618, դինգ—138։ Գործարանային արդիւնաբերութեան մէջ Զոպէնը յիշում է նաև բաղնիքները, բրուտներին և նիվկատարներին։ Հայկական շրջանի արդիւնագործական այս պատկերը կարօտ չէ լուսաբանութեան։ Պարզ պիտի լինի, որ չրուդացն ու դինգն առնչութիւն չունեն իսկական արդիւնագործութեան հետ, որ նրանք չէին կարող խոշոր եկամուտների աղբիւրներ լինել։ Հայկական շրջանի արդիւնաբերութիւնը կենտրոնացած էր ոչ թէ գործարանների մէջ, այլ մանր արհեստի։ Շրջանը 96 տեսակի արհեստներ ու պարապմունքներ էր ճանաչում, որոնց մէջ մանր արհեստը խոշորագոյն տեղ էր բռնում։ Երևան քաղաքում արհեստի և առևտրի մէջ զբաղուած էին 2349 հոգի, որոնցից թուրք—1625, հայ—724, (բնիկներից—397 հոգի, գաղթականներից—327)։ Երևանի գաւառներում արհեստաւորների և առևտրականների թիւը հասնում էր 4743 հոգու, որոնցից 96 թուրք, իսկ հայ—4647 (բնիկ—1192 հ., գաղթ.—3455)։ Գաւառական արհեստաւորների մէջ հաշուի են առնուած գիւղական ատրճիշները, պայտառները, հիւանները և այլն։ Նախիջևանի քաղաքում առևտրական և արհեստաւոր հաշւում էր

715 հոգի, որոնցից 363 հոգի թուրք, իսկ 352 հայ (բնիկ—111, գաղթ.—241)։ Նախիջևանի գաւառում նրանց թիւը հասնում էր—1316 հ., որոնցից թուրք—69, հայ—1247 (բնիկ—126, գաղթ.—1121)։ Օլդուբաթի քաղաքում առևտրական և արհեստաւոր կային 608 հոգի, որոնցից 569 թուրք, իսկ 39 հայ (բոլորն էլ գաղթականներից)։ Օլդուբաթի գաւառում նրանց թիւը հասնում էր 417 հ., որոնցից թուրք 137, հայ 280 (բնիկ—208, գաղթ.—72)։ Այս թուերից մենք տեսնում ենք, որ քաղաքներում կային 3672 առևտրական և արհեստաւոր, որոնցից 2557 հոգի թուրք, իսկ 1115 հայ (բնիկ 508, գաղթ.—607)։ Գաւառների համար ստացում է հետևեալ թիւը. առևտրական և արհեստաւոր—6476 հոգի, որոնցից թուրք—302, իսկ հայ—6174 (բնիկ—1526, գաղթ.—4648)։ Ուրեմն հայկական չէջանի առևտուրը և արդիւնաբերութիւնը պահում էր 10.148 հոգու ձեռքում, որոնցից թուրք—2858 հոգի, իսկ հայ—7289։ Հայերի այդ թիւը, ինչպէս տեսանք, տարբերւում էր 1115 քաղաքացիների և 6174 գաւառացիների։ Բացի այդ նրանք տարբերւում էին բնիկների և գաղթականների վերջիններս բնիկների հետ համեմատած թւով ասելի շատ էին։ Այսպէս քաղաքացի առևտրական և արհեստաւոր հայերից 508 հոգի բնիկ էին, իսկ 607 հ. գաղթականներ։ Գաւառացիների մէջ բնիկների թիւը հասնում էր 1526 հոգու, գաղթականները—4648։ Այդ հանգամանքն անուղղակի կերպով պէտք է մատնանշելու, որ առհասարակ հայերի առևտուրը և արհեստը չէր կարող բարգաւաճ վիճակի մէջ լինել, որովհետև գաղթականները նոր էին միայն գործ կտրում իրենց նոր հայրենիքում։ Տեղահան լինելով իրենց ազգական միջավայրից՝ նրանք կորցրել էին մի հասարակ շուկայ և այժմ պետք չունէին նորը նուաճելու համար։

Չպէտք է աչքաթող անել մէջ ոչ միայն անհատները և տալիս ընդհանուր առևտրի և արհեստի մասին, այլ և թողել է պարապմունքների և արհեստների, նրանց մէջ գործածած մարդկանց քանակների ցուցակը։ Անկարող չենք համարում առաջ բերել այստեղ վերոյիշեալ պարապմունքների և արհեստների մի քանի յատկանիշ տեսակներ։ Հայկական ամբողջ չէջանի մէջ կային.

Պարապմունք և արհեստ	Թուրք	Հայ	Ընդամենը
Մանր նպարավաճառ . . .	177	32	209
Մաշիկագործ	164	112	276
Սանր շինող	14	94	108
Երաժիշտ (զուռնա ևն) . .	11	85	96
Ոսկերափիր	33	80	113
Դաշնագործ (զարդող) . . .	73	39	112
Դարբին և պայտառ	48	275	323
Առևտրական	304	404	708
Չրագացական	36	94	130
Մանր խանութպան	53	32	85
Լուսմայափոխ	14	6	20
Մսագործ	71	32	103
Ջինագործ	1	69	70
Դերձակ	44	136	180
Այգեպան	629	90	719
Արծաթագործ	12	143	155
Ատաղձագործ	13	476	489
Չուխակ	323	3883	4206
Սափրիչ	142	101	243
Գլաքագործ	135	18	153
Բուրդ զզող	53	359	414
Մեսաքաղաճառ	31	48	79
Ձիւա գործող	4	87	91

և այլն.

Մենք այսպես թուական տեղեկութիւններ տուինք 23 տանձին պարապմունքների և արհեստների մասին: Հետաքրքրականն այդ տեղեկութիւնների մէջ այն է, որ բոլոր բարդ արհեստները գլխաւորապէս կազմում են հայերի պարապմունքները: Այդօրինակ արհեստների մէջ հայերը միանգամայն գերիշխող են. նրանք են զբաղում ըստ մեծի մասին դարբնութեամբ, ջինագործութեամբ, դերձակութեամբ, արծաթագործութեամբ, չուխակութեամբ և այլն: Թուրքերի գերիշխող պարապմունքն այգեպանութիւնն է, նպարավաճառութիւնը, գրա-

կապծութիւնը: Այդ պարտքերն էլ մինչև այսօր նրանց սիրած զբաղմունքներ են:

Այժմ մենք միջամտը զաղափար ունենք, թէ մինչև առևտրի նուաճումն ինչպիսի տեսարան և արհեստներ կային Անգլիայում: Այդ ժամանակ երկրի տնտեսա-արդիւնաբերական զարգացումը գտնում էր նախնական սահմանի վրայ: Առևտուրը և արհեստը մի նպատակ ունէին դիտաւորեալ՝ բաւարարել տեղական բնակչութեան տարեկան պահանջները: Առևտրի և արհեստի առաջ չկայ և բաց ասպարէզ չկար: Ներքին խանութի մի ինքնամփոփ մաքսային միաւոր էր, որ խոչընդոտներ էր առաջացնում տեսարի զարգացման համար: Էլ չենք ասում, որ երկրի չկղզուած կացութիւնը հիմնովին բացառում էր տեղն-ու կուլտուրական և յարաբերութիւն:

Դրութիւնը փոխուեց, երբ երկրին անցան առևտրի նախ վերացին բոլոր խանական մինչդատական տուրքերը, որ դժուարացնում էին տեղ մի փոխադրութիւն: Ապա Անգլիայում մասնական յարաբերութիւնների մէջ մի կայնածաւալ և համեմատաբար բարձր կուլտուրա ունեցող երկրի հետ, ինչպիսին էր Ռուսաստանը: Երբոր՝ Անգլիայում մշտական բնակութիւն հաստատեց մի առևտրական դասը—ուժ պաշտօնէութիւնը և զօրքերը, որպէս ապառող, նոր պահանջներ առաջադրեց երկրի առևտրին և արհեստին: Եւ ի նկատի ունենք, որ այդ դասերը, որպէս ապառող, նման չէր նախկին պետական կարգի պաշտօնէութեան. նա միայն բաժին չէր առնում երկրի արտադրած բարիքներից, այլ և վճարում էր ստացած բաժնի արժէքը: Առևտրը խոշոր քանակութեամբ դրամ մտցրին Անգլիա: Մշտական պատերազմները խոշոր ծախքերի դուռն էին բանում: Ծախքերի խոշոր մասը կատարում էր Անգլիայում: Բնակչութիւնն այդպիսով հնարաւորութիւն ունէր հնչուն դրամի վերածել իր մթերքները և արհեստի արդիւնքները: Իսկ դա նշանակում էր, որ հին կայուն դրութիւնը սկսել է տալու, երկրի բնական անհատութեան հիմքերը խախտում են, որ ծայր է տալիս և յաղթական արշաւով հրապարակ գալու ապրանքներ արտադրող, ապրանքներով փոխյարաբերութիւններ սկսող հասարակակարգը:

Ռուսական սերտակցութիւնն Անգլիայի անհատական կեանքի համար ունեցաւ յեղաշրջող նշանակութիւն: Երկրի ար-

Տարին	Ներմուծուած է (բուր.)			Արտահանուած (բուր.)			Ընդամենը		
	Ապրանքով	Դրամով	Բոլորը	Ապրանքով	Դրամով	Բոլորը	Ապրանքով	Դրամով	Ընդամենը
1822	825985	—	825985	463123	—	463123	1289108	—	1289108
1830	2518303	—	2518303	584680	—	584680	3092983	—	3092983
1840	3406735	2587	3409322	1019989	1513687	2533676	4426724	1515274	5941998
1850	3741211	68782	3809993	1005996	2829354	3835350	4747207	2898136	7645443
1860	5049758	82236	5131994	2318326	2006454	4324780	7368084	2088690	6456774
1870	11461384	1029820	12491204	3927344	504847	4432181	15388718	1534667	16323385
1875	8096141	877719	8973860	5887358	374794	6262152	13983499	1252513	15236012

հետ և ներկայացնում մեր կարծիքով ամենահետաքրքրական տուեալները: Դա մեզ թոյլ կտայ, որ ընդհանուր գծերով հետևենք Անդրկովկասի տնտեսական զարգացման ընթացքին: Մենք ելնում ենք այն համոզումից, որ ներկայումս մեր երկրի տնտեսական կեանքում ամենակարևոր դերը խաղում է ապրանքային տնտեսութիւնը, ուստի և մեր ուշադրութեան կենտրոնում կը լինի հենց այդ տնտեսութեան զարգացման ուսումնասիրութիւնը: Այդ նպատակով մենք կը դիտենք ներմուծութեան և արտահանութեան ապրանքային մասը, ինչպէս նաև ներմուծութեան դրամական մասը, որ ցոյց է տալիս, թէ ինչ չափով է մեր երկրի տնտեսական կեանքը կապուած համաշխարհային տնտեսութեան հետ:

(*) Н. Шавровъ. „Обзоръ производительныхъ силъ Кавказскаго

Այս թուերի համեմատութիւնը մեզ ցոյց է տալիս, որ 50 տարուայ և դեռ աւելի ժամանակամիջոցում Անդրկովկասը շատ նեղմուծել է, պակաս արտահանել։ Սակայն Անդրկովկասն աւելի շատ առևտրական կապեր ունէր Ռուսաստանի հետ։ Ինչպէս էին դասաւորուել այսուհետ յարաբերութիւնները։ Մենք թուեր չունենք այդ մասին, բայց առանց սխալուելու կարող ենք ասել, որ յար և նման արտահանման առևտրին։ Անդրկովկասը դարձեալ ստանում էր պատրաստի ապրանքներ և դրա փոխարէնը տալիս հում, անմշակ նիւթեր կամ դրամ, նա դարձեալ աւելի շատ ներմուծում էր, պակաս արտահանում։ Անդրկովկասը տակաւին չուկայ էր. նա այնպիսի անհատական միաձուլիչ չէր, որ իր գործարանային արդիւնաբերութեամբ պահանջ կանդնէր դրսի արշաւի դէմ։ Այդ հանգամանքն Անդրկովկասի համար անհամար չարունակական նշանակութիւն։ Նրա արդիւնաբերական կեանքը յարմարուել դրսի պահանջներին. արդիւնաբերել և արտահանել այն, ինչ որ երկրի բնական կամ հանքային թագաւորութիւնները տարերային հանգամանք են տնօրինել և Անդրկովկասը դրել առանձնայատուկ պայմանների մէջ։ Այս պատճառով Անդրկովկասի արդիւնաբերութիւնը ձեռնամուխ չեղաւ երկրի մէջ տնօրինելու Եւրոպայի կամ Ռուսաստանի արդիւնաբերութեան այլ և այլ ճիւղերը։ Այսպէս նա հատասար մրցակից չէր։ Նա գոհացաւ փարելով երկրի առանձնայատկութիւններին, որոնք մեծաշնորհ նշանակութիւն ունէին։ Որպէս մայր արդիւնաբերութիւն՝ նրա փրկութիւնը մեծաշնորհի մէջ էր։

Ասացինք, որ Անդրկովկասն աւելի շատ առևտրական կապեր ունէր բան Ռուսաստանի հետ։ Թէ տարբեր ժամանակ-

---

Намѣстничества за 1879 годъ. Тифлисъ 1880. էէ 342—345. Եաւրով այստեղ տալիս է թուեր սկսած 1822 թ. մինչև 1877 թ.։ Մենք այդ բոլոր թուերն անօգուտ համարեցինք առաջ բերել։ Մենք տուինք միայն տասնապատիկների թուերը Դրամական շրջանառութեան մասին առաջին տարիների համար թուական տեղեկութիւններ պակասում են։

նկատում ինչ մեծութիւն էր ներկայացնում նրա այդ կարգի առևտուրը՝ մենք դժբախտաբար այդ մասին կանոնաւոր և ճիշտ թուեր չունինք: Անդրկովկասի Գլխաւոր Գաւառատետեան 1843 թ. տարեկան հաշուէտուութեան մէջ այդ մասին կան մի քանի տեղեկութիւններ, որ մենք ներկայացնում ենք ընթերցողին: Անդրկովկասի առևտրական կենտրոնը, ասւած է այդ հաշուէտուութեան մէջ, ամենայն իրաւամբ կարելի է համարել Թիֆլիս քաղաքը: Թիֆլիսի առևտուրով զբաղուող քաղաքացիների թիւը հասնում է 400-ի, իսկ նրանց տարեկան առևտրական շրջանառութիւնը չի գերազանցում 4 միլ. ր: Առևտրի գլխաւոր առարկաներն են այսպէս ասւական ճանճենիները և գազութային ապրանքները: Անդրկովկասի երկրորդ առևտրական կէտը Զամախին է, մանաւանդ շրջանային կենտրոնական քաղաք դառնալուց յետոյ: Գաւառական քաղաքներից իր միաքի առևտրով աչքի է ընկնում նախին, որը վճարում է պետութեանը տարեկան 16 հազար բուրլի ակցիզ: Ապա նշանաւոր են Վլադիկաւկազը և Նուխին-Ագուլիս գիւղերը: Կայսրութեան ներքին նահանգների հետ Անդրկովկասն առևտրի մէջ է մտնում Մոսկուայի և Նիժնի-Նովգորոդի միջոցով *):

Մի ուրիշ վաւերագիր գալիս է այդ երկու քաղաքների միջոցով կատարուած առևտուրը թուերի վերածելու: Այդ վաւերագիրը թուագրուած է 1846 թ. փետրուարի 28-ից և մատնանշում է, որ նախ՝ Անդրկովկասի առևտուրը Ռուսաստանի հետ՝ գնում է բացառապէս հայերի ձեռքին, երկրորդ՝ թէ այդ առևտուրը տարեկան հասնում է 5,534,600 ր.: Այդ վաւերագիրը տալիս է առևտրի տարբեր եղող ապրանքների անունն ու արժէքը, այն է՝ բամբակէ գործուածքներ—2,390,800 ր., բրդէ—1,380,800 ր., մետաքսէ—308,000 վուշէ—150,000 ր., մետաղ—90,000 ր., մետաղէ իրեր—399,000 ր., յաղճապակէ և կաւէ անօթներ—60,000 ր., գինեզան ապրանքներ—505,000 ր., Լեհաստանի մահուդ—50,000 ր., թէյ—200,000 ր. **):

*) Акты, т. IX, ч. II, № 520.

**) Акты, т. X. № 184. Отношеніе ст.—секр. Вронченки къ кн.

60-ական թուականներին Անդրկովկասը միանգամայն մանր էր խաղաղ զարգացման ուղին։ Սահմանակից պետին թիւրք պետութիւնների հետ պատմական հաշիւները փակուել էին. բախտամների նոր առիթներ առայժմ աչքի առաջ չկային։ Անդրկովկասի ներքին թշնամին էլ—ըմբոստ Դաղստանը—խոնարհուել էր ռուսական զէնքի առաջ և հրոսակների փախարէն 40—60 հազար բանուր էր տալիս տարուն մշակութեան հա-

---

Воронцову, отъ 28 февраля 1846 г. № 3545. Անդրկովկասի առևտրական պատմութիւնից մի հետաքրքրական միջնադէպ Կովկասի փորձարարէրն է։ Վորոնցովն ամեն կերպ աշխատում էր, որ ռուս գործարարները և առևտրականները անմիջական առևտրական հարաբերութեան մէջ մտնեն Անդրկովկասի հետ։ Դրանով նա ցանկանում էր վերջ տալ հայերի միջնորդ պարապմունքին, որով նրանք իրենց կամքն էին թելադրում ամբողջ առևտրին և թանգացնում էին ապրանքները, ապա կամենում էր նաև իսկական ռուսների համար բնատնի դարձնել նոր նուաճած երկրամասը, առևտրի միջոցով Անդրկովկասում բազմացնել և ամրացնել ռուսական տարրը և այլն։ Վորոնցով գործում էր, որպէս խելօք կառավարիչ։ Նա պիտէր սիրաշահել տեղական ուժեղ տարրերին, բայց միևնոյն ժամանակ երբէք աչքաթող չէր անում գուտ ռուսական շահերը։ Վերի տեղեկութիւնները ժողուած են նրա ցանկութեամբ։ Նա կամենում էր իմանալ Անդրկովկասի առևտրի արգանութիւնը Ռուսաստանի հետ, ապա ձայրագոյն հրաւիրել Մոսկուայի ռուս գործարանատէրերին։ Վորոնցովի ցանկութիւնն իրագործուեց 1847 թ.։ Այդ թուականին Թիֆլիսում բացուեց «Ռուսական ապրանքների դէպօ», որի բաժնետէրերն էին ի միջի այլոց՝ Բարանով, Գուչկով, Պրոխորով, Զեռվերիկով և Մոսկուայի քաղաքագլուխ Վիսիօշկին։ Ռուս գործարանատէրերի թիֆլիսում հաստատուելը ուրի հանեց հայ վաճառականներին։ 30 առաջնակարգ առևտրականների ստորագրութեամբ նրանք խնդրագիր մատուցին իշխ. Վորոնցովին (Акты, т. X № 193, отъ 26 мая 1847.)։ Իրենց խնդրագրի մէջ նրանք ասում էին, որ իրենք կարծել են, թէ Մոսկուայի գործարանատէրերը Անդրկովկասում պիտի առևտուր անեն միայն թոմառով (оптомъ), այն ինչ նրանք զբաղում են և մանուածոյով (розничная торговля)։ Վերջին հանգամանքը միանգամայն կործանիչ հետևանք պիտի ունենայ թիֆլիսցիների համար, քանի որ դէպօն վաճառում է ոչ միայն գործարանային ցածր գնով, այլ և Անդրկովկաս ներմուծուող ապրանքների համար առանձնակի պրեմիա (նպաստ)։ Դա կդրդէ տեղական վաճառականներին գնելու դէպօից, իսկ թիֆլիսցիների ապրանքը կը մնայ առանց

մաս: Նպպիները ղինքի փոխարէն ձուկ էին առել բահն է թոխրը: („О прикаспійской маренѣ“, Тифлисъ. 1863 г.): Եւ Կովկասի խաղաղացումը նշանակում էր առևտրի ու արդիւնաբերութեան բարգաւաճում, ասկի առաջին, քան երբևէ: Ռուսական արդիւնաբերութիւնը և դեռևս Անդրկովկասի այժմ ունէր մի պատկառելի չուկայ: Սկզբում այդ չուկան շատ էլ չէր արժանանում առանձին ուշադրութեան: 1821 թ. կուսակալ Երմոլովի միջնորդութեամբ 10 տարուայ

առնողների Թիֆլիսի առևտրականները խնդրում են Վորոնցովից, որ նա կարգադրէ դէպքին իր գործառնութիւնները բանալու երկու տարուց յետոյ, երբ իրենք վաճառած կը լինեն իրենց բոլոր ապրանքները Նրանք աւելացնում են, որ ջնաս պիտի կրեն և քանանոցների ու խանութների տէրերը, քանի որ իրենց գործերի վարումով անասէրները զրկւում են եկամուտներից և այդ պարապան իր հերթին ծանր ազդեցութիւն պիտի անէ քաղաքի բիւջէի վրայ, քաղաքին, որ պահպանում է ասիկանութիւն, բնակարան է տալիս պրբերին և կատարում է ուրիշ քաղաքային պարտաւորութիւններ Թիֆլիսցիները խնդրագրի մէջ Վորոնցովի ուշադրութիւնն են հրաւիրում և մի այլ հանգամանքի վրայ Նրանք ասում են, որ դէպքի հիմնադիրները մեզ մխիթարում են նրանով, թէ տեղական արդիւնքների առևտուրը կրճատ մեր ձեռքին, այսինքն մեզ բաժին կընկնի մետաքսի, բամբակի, տորոնի, բրդի և այլ առևտուրը, սակայն, աւելացնում են նրանք, դա մեզ համար առևտրի նոր ճիւղ չէ: Մենք այդ արդիւնքները վաճառել ենք հանում շատ վաղուց և դա միշտ կենդանացրել է երկրի առևտուրը Տեղական վաճառականները իրենց ոներում չեն բաղմել և միայն վայրենի լեռնականների հետ չեն վարել իրենց գործառնութիւնները, այլ ուղևորուել են Ռուսաստան և այլ աշխարհներ տարածելու տեղական արդիւնքները, որով և վարժուել ու կրթուել են առևտրի մէջ, որի հաստատութեան համար շատ պատճառներ կան: Դրա վրայ իր ուշադրութիւնն է դարձրել և կառավարութիւնը: Թիֆլիսցիները ի վերջոյ խնդրում են, որ նրանք չըլսարկուի իրենց խնդիրքը, գոնէ Վորոնցովը ասիկ դէպքի տէրերին չետ վերցնելու նպատ ապրանքները, որոնք գնուած են նոյն այդ Մոսկուայի գործարանատէրերից:

Իշխ. Վորոնցովը Թիֆլիսի հայ վաճառականների խնդիրքը քոդից առանց հետևանքի (Акты, т. X, № 194): Նա պատասխանում է. «Ռուսական ապրանքների դէպքի հատատումով հայ վաճառականները պիտի շահեին, քանի որ ասիկացած չեն լինել գնալ Մոսկուա

ժամանակամիջոցով բացառիկ արտօնութիւն չնորհուեց ներսիսեան ապրանքներն Անդրկովկաս ներմուծող առևտրականներին. նրանք վճարում էին մաքս միայն 5% ապրանքների յայտարարած գնից: 1832 թ. այդ արտօնութիւնը չնչուեց և Անդրկովկասն էլ համայն Ռուսաստանի հետ ցանցուեց պաշտպանողական մաքսով: Դա, ի հարկէ, չէր անում յօգուտ Անդրկովկասի ներքին դործարանային արդիւնաբերութեան, որով

և նիժնի-նովգորոդ և իրենց առևտրական պատուէրներով կրկին Թիֆլիսի բաժանմունքին: Ապա իր պատասխանի մէջ նա գրում է. «Ձեմ կարողանում հասկանալ, թէ ինչպէս Թիֆլիսի հայ վաճառական դասը և շատ պատուաւոր անձեր, որոնց անուններն ես կարդում եմ խնդրագիրը առարքրողների մեջ, որոնք այնքան ծանօթ են առևտրական գործի հետ և ընդհանրապէս պիտանի առևտրական օրէնքներ՝ կարող էին կարծել, թէ ես իրաւունք ունեմ իրագործել վերջնական միջոցներից որևէ մէկը Արդեօք անձնաւորութեան կամ ընկերութեան խանութի բանալ և վաճառել իրենց ցանկացածը՝ պա վերջ ամեն մի վարչութեան իշխանութիւնից: Սակ առնել բնակութեան տանել այն, ինչ նա չի կամենում, դա ոչ միայն վեր է այդ իշխանութիւնից, այլ և կըլինէր իսկական անտրտարութիւն, քանի որ նշանակում է առնել տանելու այնպիսի իրեր, որոնք ճնացել են ընկած վաճառականների մօտ և ոչ ոք չի կամենում ձեռք բերել: Ինչպէս տասներ, Թիֆլիսի հայ վաճառականութեան դիմումը միայն տանից հետևանքի: Հայ վաճառականներն իրաւունք ունէին վախենալու նոր դրդակիցից: Նրանց գործերն իսկապէս սկսեցին վատանալ: Այդ հաստատում է իշխ. Ե.ևրդեւանեան մի նկատողութիւնը վաճառականների հրապարակ հանած հարցի առիթով (Акты, т. X, № 200, отъ 20 мая 1848.): Ե.ևրդեւանեան ասում է, որ Վասկուսի գործարանատէրերի ձեռնարկութիւնը նպաստակ չունի նպաստելու տեղական ժողովրդի առևտրին, այլ գրգռած է տեղացիների հետ, իսկ այդ գրգռութիւնը ուժեղների պարքար է թոյլերի դէմ, ասած հայերն իրենց անբաւարար միջոցներով չեն կարող մրցել Վասկուսի գործարանատէրերի հետ: Վասկուսցիները չարդարացրին իշխ. Վարոնցովի ապատամիները նրանց Թիֆլիսում հաստատուելուց չորս տարի անց (Акты, т. X, № 207, отъ 2 мая 1850) նա գրում է դէպի հիմնադիրներին, որ ռուս գործարանատէրերը Անդրկովկասում իրենց ապրանքները վաճառում են, բայց տեղական արդիւնքները չեն առնում Ռուսաստանն արտահանելու համար: Նա ասում է, որ առանձին հաստատակ վերաբերութիւնից բարձր խելք և ընդունակութիւն չը ցուցադրելին, որ հայերն իրաւացի էին իրենց տրտունջների մէջ և որ

Նաև այդպիսին գոյութիւն չունէր։ Այդ մի պարզ միջոց էր, որով Անդրկովկասը, որպէս չուկայ, պատում էր պետութեան ներքին նահանգների արդիւնաբերողներին։ 1846 թ. Փոխարքայ Վորոնցովը իջեցրեց Անդրկովկաս ներմուծուող ապրանքների մաքսերի չափերը։ Հինգ տարուց յետոյ, 1850 թ., նորից սկսեց մաքսային դրութիւնը*)։ Մաքսային այդ վարկածների քաղաքականութիւնը մի նպատակ ունէր. նախապատրաստել Անդրկովկասը դուռ առւսական արդիւնագործութեան համար։

Ռուսների Անդրկովկաս մտնելուց յետոյ Թիֆլիսին վիճակուց դառնալ երկրի կենտրոնական քաղաքը։ Սկզբում նա ոսկ վաչկատուն կենտրոն էր, սակայն ժամանակի ընթացքում դէպի այդ քաղաքը թերուց և անասնական կեանքի նժարը։ Թիֆլիսը՝ վաչկատուն կենտրոն լինելուց դառ դարձաւ և անասնական կենտրոն. 60-ական թուականներին նա իր մէջ էր կենտրոնացնում երկրի ողջ անասնական կեանքի թափը։ Ծանոթանանք ուրեմն այդ քաղաքի առևտրին և արդիւնաբերութեանը**)։

Թիֆլիսի առևտուրն այդ ժամանակ բաժանւում էր չորս ճիւղի. 1) ներմուծական և արտահանական առևտուր Եւրոպայի հետ, 2) նոյնը կայսրութեան հետ, 3) ասիական երկրների հետ և 4) ներքին, դուռ քաղաքային առևտուր։ Առաջին ճիւղի մէջ ներմուծւում էր շաքար, գինի, սուրճ, նկրկիր, մետաքս, բրդէ և բամբակէ գործուածքներ, ապա վարձատրութեան դանազան իրեր։ Ներմուծուած ապրանքների արժէքը հասնում էր 2 միլիոն

պետական առանձնաց բարոյական իրաւունք չունին իրենից աջակցութիւն սպասելու և այլն.

Նախորդ տարի 40-ական թուականներին կատարուած այս անցուդարձերը մենք հրապարակ ենք հանում, որպէս հայ վաճառական դասի կազմակերպուած ձիգերութեան մի փորձերի ուժով կապիտալի արշաւի դէմ։ Այդ ձիգերութիւնը յաջողակով չի վերջացաւ, որովհետև արշաւողը սիրող սպրութեան բարձրագիտակ կապիտալն էր։ Հարատակ սղոի բարձրագիտան, որպիսին էր հայկականը, տեղացուց խոնարհուեր։

*) П. Шавровъ. էջ 334—335.

**) Сборникъ статист. свѣдѣній о Кавказѣ, т. I. Тифлисъ, 1869 г. отдѣл. IV, էջ 85—92.

բուլու։ Թիֆլիսը կամ Թիֆլիսի միջոցով Անդրկովկասը արտահանում էր Եւրոպա հում մետաքս, չերամի սերմ, բամբակ, բուրդ, խաւխաթ և անմշակ կաշիներ։ Արտահանում էր 2½ մլն. ր. ապրանք։ Այդ գումարից Թիֆլիսին բաժին էր ընկնում 900 հազար բուբլի։ Մնացած 1 մլն. 600 հազար բուբլու ապրանքը արտահանում էին Անդրկովկասի մնացած վայրերը։ Երկրորդ ճիւղի մէջ ներմուծական առևտրի առարկաներն էին ապխտած օղի, թէյ, ճարպամոմ, անմշակ երկաթ և երկաթէ իրեր, պղնձէ, յաղճապակէ, կաւէ և ապակէ անօթներ, կաշուէ ապրանքներ, բամբակէ, վուշէ և բրդէ գործուածքներ։ Թիֆլիսի և նրա միջով Անդրկովկասի ու Պարսկաստանի համար ներմուծուող ապրանքների արժէքը հասնում էր 3½ մլն. բուբլու։ Դրա մեծ մասը Թիֆլիսից արտահանում էր 1 մլն. ր. ապրանք, որը բաղկացած էր լինում հում մետաքսից, բամբակից, գործերից և այլն։ Երրորդ ճիւղի առևտրի ներմուծական բաժինը հասնում էր 2 մլն. 800 հազար բուբլու, որից 2 մլն. Անդրկովկասի համար, իսկ 800 հազարը՝ Թիֆլիսի։ Այս ճիւղի մէջ ներմուծուող ապրանքները էին ձեռնոցներ, կնդրուկներ, գործեր և թաղիքներ, մետաքսէ և բամբակէ գործուածքներ, անագեղէն իրեր և շոր մրգեր։ Այս բաժնի արտահանական մասի արժէքը հասնում էր 1 մլն. 300 հազար բուբլու։ Արտահանում էին առևտրական գործարանների արդիւնքները։ Երեք առևտրական ճիւղերի շրջանառութիւնն այսպիսով հասնում էր 11 մլն. ր.։ Այս գումարից 1861 թ. Թիֆլիսում առևտուր անցկացնողների և առևտրագործարանների իրենց շրջանառութեան մասը կազմում էին 2 մլն. ր., մնացեալ Թիֆլիսցիներին մնում է 9 մլն. ր. առևտուր։ Թիֆլիսի առևտրի չորրորդ ճիւղը կազմում էր գումարային առաջխաղը։ Այսպէս ծախսում էր առօրեայ պիտոյքների առևտուրը, քանի որ բաղարը 100 հազար ազգաբնակութիւն էր։ Այդ ազգաբնակները տարեկան ծախսում էին 3½ մինչև 5½ մլն. բուբլի։ Ասա Թիֆլիսի անուաէրները տարեկան 300 հազար բնակչանովարձ։ Քաղաքի մէջ էր շրջանառութեան մանում և վարձով ծառայողների 1½ մլն. անձինք և մօտ 500 հազար հասարակական պէտքերի վրայ ծախսող գրամագլուխը։ Այս բոլոր գործարանները Թիֆլիսին տա-

ին էին վաճառաշահ քաղաքի բնակութիւն. նա Անդրկովկասի թէ վարչական և թէ առևտրական կենտրոնն էր: 1861 թ. քաղաքային տուրքերի և վարկի պատճառով տեղական առևտրական դրամագլուխները հաշիւներ են հաւասար 1,988,200 ր., որից 200 հազար բուրլի ունեցող—2 հոգի, 120 հազար ունեցող 2 հոգի, 100 հ.—1, 70 հ.—1, 60 հ.—2, 50 հ.—2, 30 հ.—4, 25 հ.—2, 20 հ.—6, 10 հ. մինչև 20 հ.—30, 5—10 հ.—27, 1—5 հ.—43: Դրամատէրերի այս ցուցակի մէջ միլիոնատէրեր չկան: Հաւանօրէն Թիֆլիսում այդ ժամանակ եղած են աւելի խոշոր դրամագլուխներ ունեցող բնակիչներ, սակայն նրանք աւելորդ տուրքերից և խօսք ու զրոյցից զգուշանալու համար թարուք են համարել հաճոյս տալ իրենց կարողութիւնը: Այդպիսի զգուշակութիւնն էին վաճառականութեան պատմին առաքինութիւններից մէկն էր: Յամենայն դէպս եղած դրամագլուխներն էլ բաւական են ցոյց տալու, որ Թիֆլիսի մէջ արդէն գոյութիւն ունէր կապիտալի որոշ կուտակում, որը պիտի դուրս գար առևտրի անձուկ շրջանակներից և դառնար արդիւնաբերական:

60-ական թուականներին Թիֆլիսի զբաղմունքին արդիւնաբերութիւնը հետևեալ պատկերն ունէր. մէկ արքունի թրաշող և քարա-կարմօնային գործարան, որը տարեկան արտադրում էր 12 հազար բուրլու ապրանք, մէկ թուջէ ձուլարան Ջրապայի հետ՝ 40 հազարի արտադրութեամբ, մէկ շոգեշարժ ունեցող առագաստերի արհեստանոց 15 հազարի արտադրութեամբ, 1 պղնձէ ամանեղէնի գործարան—4,500 ր., *) բամբակէ գործուածքների 1 գործարան—24,500 ր., 1 մետաքսի փուռ—3000 ր., 4 գաւիջի գործ.—3000 ր., 2 ճարտարմամի գործ.—2000 ր., 19 ապրանքներ—27,500 ր., 1 փականագործի արհեստանոց—11,000 ր., 10 հաշկագործարան—68,000 ր., 8 օճառի գործ.—17,000 ր., 5 բուտանոց—2000 ր., 60 աղիւսագործարան—228,000 ր., 11 կոմինարի գործ.—11,000 ր., 1 կիր պատրաստող գործարան—1000 ր., 7 ծխա-

*) Այս և յետագայ գումարները ցոյց են տալիս արտադրական հասի չափը

խոտապուծարան —21,000 ր., 4 կարէթի արհեստանոց—17,000 ր.: Ընդամենը 138 գործարան և արհեստանոց տարեկան 507 հազարի արտադրութեամբ: Գործարանների և արհեստանոցների այս ցուցակը պարզ ցոյց է տալիս, որ Թիֆլիսի ամբողջ արդիւնագործութիւնը նպատակ ունի բաւարարել տեղական պահանջները, որ նա մի բարգաւաճող քաղաքի զարգացման հետ համընթաց առեղծուած արդիւնաբերութիւն էր՝ թոյլ և անկատար:

Հետաքրքրական է այժմ իմանալ, թէ ինչ էր նախկին արհեստաւոր դասը: Արհեստաւորների խոշորագոյն մասը կազմակերպուած էր համքարութիւնների մէջ: Նրանց մասին կարելի է հասկացողութիւն կազմել հետևեալ ապիւսակից.

Համքարութիւն	Վարպետ	Վարպետացու
Ջինապուծ	38	16
Արծաթապուծ	120	20
Դերձակ (աս. և հրոպ. հագուստի) .	142	121
Մուշտակապուծ	21	9
Հացթուխ	200	—
Նպարավաճառ	193	—
Մսապուծ	86	—
Կոշկակար	201	100
Դարբին	128	71
Փականապուծ	27	6
Ընդամենը՝ . . .	1156	344

Բացի արհեստաւորներից այս համքերը Թիֆլիսում աշխատում էին 10 ժամագործ, 6 ոսկերիչ և ակնագործ, 12 հացագործ, 6 կահագործ, 8 կարկեռագործ, 3 թամբագործ, 7 վիճականագործ և դարբին, 4 պատուոգ, 8 կազմարար, 2 քինագործ, 6 դերձակ, 12 կոշկակար, 3 խառատ, 8 վարսավիրայ, 10 լուսանկարիչ, 9 ոսկով կար անող, 57 ծխախոտ պատրաստող: Հարկաւ, մեր ազբիւրի մատնանշած տեղեկութիւններով չէր սպառում Թիֆլիսի արհեստաւոր դասի քանակը, որ ընդհանուր առմամբ հասնում էր 5,668 հոգու:

Այդ ազբիւրը չի յիշում արմատներին, հետևներին, ապր-

վիշնեվին, պղակոպոծնեվին և այլն։ Մոռացած են նաև ջուլհակինելը, որոնց արհեստը հատանօվն վերացել էր գործարանային ժամանակների հնորհիւ։ Այսակ նկատանք, որ թիֆլիսի արհեստաւոր դասի խոշորագոյն մասը բակացած էր հայկից։ Հայերն աննշան տեղ էին բռնում միայն նոր, եւրոպական նիստ ու կացի հնորհիւ յառաջացած արհեստների մէջ (կաբէթագործ, ժամագործ և այլն)։

Այժմ ծանօթանանք հայաշատ Երևանի նահանգի քաղաքային առևտրին, արհեստին և արդիւնաբերութեանը։ *) 60-ական թուականներին (ճիշտ՝ 1865 թ.) Երևան քաղաքի առևտուրը հինգտանասած էր վից կարգի վաճառականների ձեռքում։ Առաջին կարգի վաճառականները կոչում էին բազազ։ Նրանց առևտրի ապրանքը ճոթեղէնն էր, որը առացում էր Մոսկուայից, Նիժնի-Նովգորոդից, մասամբ Պարսկաստանից և շատ քիչ թուրքիայից։ Բազազները 223 հոգի էին. 133 հայ, 90 թուրք։ Թուրք բազազի տարեկան առևտրական շրջանառութիւնը 100 ր. միչև 10 հազար ր. էր հասնում։ Ընդհանուր առմամբ նրանց առևտրական շրջանառութիւնը տարեկան 60 հազարից ր. չէր անցնում։ Հայ բազազների առևտրական շրջանառութիւնն ունէր խոշոր և շօշափելի էր։ Ամենից նուազ առևտրական շրջանառութիւն ունեցող հայ բազազը վաճառում էր տարեկան 2 հազար ռուբլու, միջին բազազը—5 հազարի, ունէր բարձրը՝ 25 հազարից միչև 40 հազար։ Վերջին կարգի բազազները 5 հոգի էին։ Հայերի առևտրական շրջանառութիւնը հասնում էր 250 հազարի։

Երկրորդ կարգի վաճառականները եւրոպական արդուզարդի խանութների տէրերն էին, 30 հոգի և բացառապէս հայեր։ Նրանցից երեքը տարեկան շրջանառութիւն ունէին մօտ 8 հազարի։ Մնացածների շրջանառութիւնը 500—1500 ր. էր։ Ընդհանրապէս այդ կարգի վաճառականների տարեկան առևտուրը հասնում էր 43 հազար ր.։

Երրորդ կարգի վաճառականները տեղական արդուզարդի ապրանքներով առևտուր անողներն էին, որոնք կոչում էին

*) „Сборникъ," էջ, 28-59.

Նրանք 52 հոգի էին, որոնցից 50 թուրք։ Նրանց տեւողական շրջանառութիւնը լինում էր 20 ր. մինչեւ 3000 ր.։ Ընդհանուր տարեկան շրջանառութիւնը 20 հազար էր։

Հոլերդոլդ կարգի վաճառականների տեւողութիւնը բաղկացած էր լինում պետրոնեւսական մթերքներից։ Յայտնի էին նրանք ալաճի անունով։ Նրանց թիւը 67 էր, 30 թուրք և 37 հայ։ Ալաճի տեւողութիւնը տարեկան 500 ր. չէր անցնում։ Միայն 4 հոգի ունէին 2 հազարից մինչեւ 3 հազար շրջանառութիւն։ Ընդհանրապէս ալաճների շրջանառութիւնը հասնում էր 16 հազարի։

Հինգերորդ կարգի վաճառականները չոր մերգ և ուռկէններ ծախողներն էին՝ բաղկաց անունով։ Բաղկալները 42 հոգի էին՝ երկու հայ, քառասուն թուրք։ Նրանց տարեկան շրջանառութիւնը լինում էր 30 ր. մինչեւ 300 ր.։ 10 հոգի ունէին տարեկան մինչեւ 2,500 ր. շրջանառութիւն։ Բոլորի տեւողութիւնը հասնում էր 14 հազարի։

Վեցերորդ կարգի վաճառականները օղի և գինի ծախող դուքանչիներն էին։ Նրանք բոլորովին հայեր էին, 63 հոգի։ Նրանցից 20-ի շրջանառութիւնը 300-ական րուբլի էր, 35-ի 500-ական։ Բոլորի տեւողութիւնը հասնում էր 34 հազարի։

Այսպիսով երեւում էին 477 վաճառականներ (թուրք 210, հայ 267), որոնք միասին 437 հազար րուբլու տեւողութիւն ունէին։ Բայց աննշան թուով բազմոններից՝ մնացած վաճառականների տեւողական շրջանառութիւնը կատարում էր քաղաքի շրջանակներում։ Բազմոններից նշանաւորները (դրանց մէջ Խուդաբաշեան տունը) տեւողութիւն ունէին և նահանգի գաւառների տարաձգման հետ։ Նրանք գաւառներին մատակարարում էին ճաթեկէն, իսկ դրա փոխարէն առնում բամբակ, ցորեն, բրինձ, քունջութի, իւղ, կաշիներ և օղի։ Այդ ապրանքները մեծ մասամբ Թիֆլիսի շուկան (բամբակ, բրինձ և այլն) կամ Թիւրքիան (կաշի) կամ թէ նահանգի Ալէքսանդրապոլ և Նոր-Բայազէդ քաղաքները (օղի)։ Երեւանի բազմոնները բամբակ առնում էին ոչ միայն նահանգից, այլ և Պարսկաստանի Մակուի խանութիւններից։

Այդ ապրանքից ներմուծւում էր տարեկան մինչեւ 30 հազար փութ 80 հազար արժողութեամբ։ Բազմոնների գաւառական

և արտասահմանեան առևտուրը հասնում էր տարեկան մինչև 280 հազարի։ Այդ գումարից թուրք բազարներին բաժին էր ընկնում 40 հազար։ Մնացած 240 հազարի առևտուրը կենտրոնացած էր հայերի ձեռքին։

Երևանի թէ առևտրական և թէ արհեստաւոր դասը լաւ ձևի մասին կազմակերպուած էր համքարութիւնների մէջ։ Համքարութիւնները մանաւանդ ուժեղ էին հայերի մօտ։ Թուրքերից շատերը դուրս էին մնում այդ կազմակերպութիւններից։ Երևանի համքարութիւնները լաւ պարապմունքի, արհեստի և կազմակերպուած անդամների ունէին հետևեալ պատկերը.

Համքարութիւն	Վարպետ	Վարպետացու	Աշակերտ
Բազազ	233	117	—
Օղեվաճառ (դուքանչի) .	63	45	—
Դաշնագործ	8	30	—
Գինձագործ և անագող .	27	—	—
Դարբին	20	—	45
Ալաֆ	6	42	—
Բուտա	11	23	19
Արծաթագործ . . .	6	8	21
Չիւան և առաջնագործ .	49	90	150
Դերձակ եւրոպական . .	11	25	30
» ասիական .	18	55	20
Կաշկակար	60	90	150
Ծխախոտագործ . . .	18	30	50
Մամագործ	9	—	14
Նրնագործ	4	—	9
Դպակագործ . . .	40	—	10
Փականագործ . . .	40	—	3
Թամբագործ . . .	8	12	19
Ոսմնատիր	25	60	70
Մաշիկագործ . . .	10	5	15
Պայտառ	12	5	10
Սափրիչ	12	—	25
Հացթուխ	18	50	—

Համքարութիւն	Վարպետ	Վարպետուհի	Աշակերտ
Թաւ չինող . . .	4	—	7
Բուրդ ծեծող . . .	10	10	—
Ընդամենը՝ . .	722	697	667*)

Համքարութիւններից դուրս դանւում էին դանազան պարսամունքի և արհեստի ամէն 143 վարպետ, 84 վարպետուհի և 43 աշակերտ: Դրանք բացառապէս Թուրքիր էին: Այսպիսով Երևանի առևտրական և արհեստաւոր դասի մէջ հաշւում էին 2356 մարդ:

Երևանի գործարանային արդիւնաբերութիւնը հաշւում էր 86 գործարան, որոնցից ճարպի—3, օճառի—1, կաշեգործարան—29, ներկարարի արհեստանոց—46, գինու—3, բուտի—1: Այդ գործարանները միայն անունով էին գործարան հաշւում: Նրանք մանր-մունր ձեռնարկութիւններ էին, յաճախ բնակարաններին կից չինուած: Հարկաւ, նման գործարանների արտրական չափը չէր կարող համեստ չըլինել. նրանք ծառայում էին զլխաւորապէս տեղական պէտքերին: Ներկարարի արհեստանոցից ամենամեծը տարեկան 700 ր. եկամուտ: Կաշեգործարանի մէջն այդքան էլ չունէր: Ամենանպաստաւոր պայմանների մէջ էին գտնւում գինու գործարանի տէրերը: Այդ գործարանները տարեկան 10 հազար ր. տպրանք էին արտահանում Ալէքսանդրոպոլ և Նոր-Բայազէտ:

Այժմ տեսնենք, թէ 1865 թ. որքան պատկեր ունէր Ալէքսանդրոպոլի առևտուրը, արհեստն ու արդիւնաբերութիւնը: Ալ քաղաքի, որի բնակչութիւնը բացառապէս բաղկացած էր հայերից: Ալէքսանդրոպոլի առևտրականները շատ կարդի էին բաժանւում. բազազ, աթթար, բակալ և դուքանչի: Բազազները, ինչպէս յայտնի է, զբաղւում էին ճաթիղէնի առևտրով: Ալէքսանդրոպոլում նրանք 300 հոգի էին:

*) Մեր աղբիւրը՝ բերելով համքարութիւնների մէջ կարգված վաճառականների և արհեստաւորների թուերը՝ գումարի մէջ ցոյց է տալիս 745 վարպետ, 692 վարպետուհի և 763 աշակերտ: Մեր գումարումը տուաւ ուրիշ թուեր: Հաւանօրէն տպագրական վրիպակներ կան, բայց թէ որ թուերի մէջ են նրանք տպրուել—անկարող եղանք տեսնելու:

Բազաներէն առևտուրը 290 հազարէն պակաս չէր։ Իրենց առևտրի մեծութեան համեմատ բազաներին կարելի էր բաժանել չորս կարգի. առևտուր ունեցող 300 ր. մինչև 2000 ր., 2 հազարէն մինչև 7—8 հազար, 10 հազարէն մինչև 15 հազար, 50 հազարէն մինչև 70 հազար։ Վերջին կարգի առևտրականները երկու-երեք հոգի էին։ Արտաքրդի (Երզրումի և Աղնական) վաճառականներն արբար անունով մօտ 150 հոգի էին։ Նրանց առևտրի գումարը հասնում էր 55 հազարի։ Բոլորը մենաշնորհութիւնը չունէին։ Միջամասնութիւնը առևտուր ունէր տարեկան 70 ր. մինչև 300 ր., 30-էն աւելի հոգի 1500 ր. մինչև 3000 ր., մօտ 8 վաճառական 4 մինչև 5 հազար։ Բաղկալ անունով նպարավաճառները մօտ 120 հոգի էին։ Նրանցից սանք առևտուր ունէին 50 ր. մինչև 150 ր. գումարի, սանք 200 ր.—800 ր., սանք էլ 1000—2000 ր. տարեկան։ Ընդհանուր առմամբ նպարավաճառների առևտուրը 25 հազարի էր։ Խմիչքների առևտրականները՝ դուբանչիները մօտ 100 հոգի էին։ Խմիչքների առևտուրն Ալէքսանդրապոլում աւելի էր զարգացած, քան Երևանում։ Այդ կարգի առևտուրը հասնում էր 60 հազարի տարեկան։ Դուքանչիները հատասար առևտրի տէր չէին։ Գային մարդիկ, որ ունէին 100 ր. մինչև 500 ր. առևտուր, տար 700—1000 ր. վերջապէս մինչև 3 և 4 հազար։ Այս պատճառն էր Ալէքսանդրապոլի առևտուրը։ Նրանով զբաղւում էին մօտ 670 հոգի, իսկ գումարը հասնում էր 430 հազարի։

Արհեստ Ալէքսանդրապոլում զարգացած վիճակի մէջ էր, տարեկան 160 հազարի արտադրութեամբ։ Նա ոչ միայն բաւարարում էր տեղական պէտքերին, այլև արտահանութեան էր ծառայում։ Ալէքսանդրապոլի արհեստաւորների պատրաստած իրերն արտահանւում էին Թիւրքիա և Թիֆլիս։ Ալէքսանդրապոլցիները նախկին գաղթականներ էին Թիւրքիայից և այժմ Թուրքիայից շարունակում էին դեռ խմոլ Թիւրքիայի միջոցով շփանիլում։ Արտահանութեան առարկաները էին մաշիկներ և տակիմ ու ձեռագործներ։ Մաշիկներ պատրաստող արհեստաւորները կոչւում էին նափափ։ Նրանց ձեռագործից արտահանում էր Թիֆլիս և Թիւրքիա տարեկան 8 մինչև 10 հազար զուգ

*ապրանք։ Ոսկեթել ձեռագործները պատրաստում էին դազգ-
ևերը։ Դրանք էին կազմում Ալէքսանդրոպոլի առաջնակարգ ար-
հեստավոր դասը։ Պայտառութիւնը նոյնպէս զարգացած արհես-
էր Ալէքսանդրոպոլի մէջ։ Դրա պատճառը նրան քարաւանու-
թիւնն էր, այնինքն ծանրութիւնների և ապրանքների տեղա-
փոխութիւնը եղների միջոցով։ Քարաւանի միջոցով էր պահ-
պանւում յարաբերութիւնը Թիւրքիայի հետ։*

*Ալէքսանդրոպոլի արհեստաւորները կազմակերպուած էին
համքարութիւնների մէջ։ Համքարութիւնները այսօր ևս իրենց
գոյութիւնն էին և իրենց մէջ պարփակում էին տեղական արհես-
տոցները ներկայացուցիչներին։ Նրանց մասին կան հետևեալ թուա-
կան տեղեկութիւնները։*

Համքարութիւն	*Վարպետ*	*Վարպետացու*	*Աշակերտ*
Եփեպազործ (դազող) . .	89	32	97
Մաշիկագործ (հալուափ) . .	48	92	88
Գլուխ և գարգարող . .	75	70	65
Գդակագործ	42	—	24
Որմնադիր	100	—	—
Մոպագործ	45	25	30
Հիւան, տաղձագործ և պղպող	44	48	34
Դարբին	70	80	80
Գաշկակար	31	32	30
Ջուլհակ	50	10	30
Արծաթագործ և ժամագործ .	25	19	19
Պայտառ	40	36	38
Պղնձագործ	25	49	50
Ծխախոտագործ . . .	50	18	100
Սափրիչ	25	18	32
Ջինագործ	11	12	10
Թամբագործ և կապանագործ .	10	8	12
Գաշկագործ	17	21	8
Ներկարար և ներկող . .	8	1	9
Կառապան	15	4	—
Բուրգ ծեծող	6	—	3

Համքարությունն	Վարպետ	Վարպետացու	Աշակերտ
Թոկ պատրաստող . . .	16	15	18
Ալիսապրծ և լրատ . .	4	8	—
Փակոնապրծ	4	5	3
Ընդամենը՝ .	850	603	780

Այսպիսով Ալէքսանդրապոլի արհեստաւոր դասը բաղկացած էր 850 վարպետներից, 603 վարպետացուներից և 780 աշակերտներից, ընդամենը 2233 հոգուց:

Ալէքսանդրապոլի գործարանական արդիւնագործութիւնը հետեւեալ պատկերն ունէր. 12 օճառի գործարան, 9 օղիի, 5 ճարպամոմի, 5 ձիթահանք, 3 կուշկգործարան, 1 ապխտի և 1 լրատի արհեստանոց, ընդամենը 36: Օճառի անդիւնագործութիւնն Ալէքսանդրապոլում առաջնակարգ տեղ էր գրաւում: Արդիւնագործւում էր 25 հազար լուրլու ապրանք, որ մասամբ պատահանւում էր Թիւրքիա և Ախալցխա: Օղիի գործարաններն արդիւնագործում էին Թիւրքիայից ներմուծած չամչից 16 հազար ապրանք: Ջօշափելի էր և կաշիգործարանների արտադրութիւնը, սակայն պիտի ասել, որ ընդհանրապէս Ալէքսանդրապոլի գործարանային արդիւնագործութիւնն աննախանձելի վիճակի մէջ էր:

Մանրամասն նկարագրելով Թիֆլիսի, Երեւանի և Ալէքսանդրապոլի առեւտուրն, արհեստն և արդիւնաբերութիւնը՝ մենք կամենանք ընթերցողի համար պարզել Անդրկովկասի քաղաքներում (60-ական թուականներին) տիրող մեծաւոր կեանքը: Մեր նկարագրած մեծաւոր կացութիւնը յատուկ պիտի համարել և մեզանից հայրենակ քաղաքների համար: Մենք առանձնապէս կանգ չառանք այդ քաղաքներից (Շուշի, Շամախի, Նուխի, Գանձակ, Ախալցխա) իւրաքանչիւրի վրայ: Դրա պատճառներն երկուսն էին. նախ՝ չկամեցանք մանրամասնութիւններով ծանրաբեռնել նեղկոյ աշխատութիւնը, մանաւանդ որ այդ մանրամասնութիւնները լուսաբանութեան տեսակէտից նոր փաստեր չէին մատակարարում, երկրորդ՝ այդ մանրամասնութիւնները կոդկատուր տեղեկութիւնների բնաւորութիւն ունէին և ցանկալի ամբողջութեամբ չէին կարող պատկերել մի քանի քաղաքներ

րի առևտրա-արդիւնաբերական կեանքը։ Մեզ թւում է, որ վերը բերած տեղեկութիւններն էլ բաւական են ասելու, որ 60-ական թուականներին Անդրկովկասի քաղաքներում գերիշխող դեր էին կատարում առևտրական դրամագլուխն ու արհեստը, որ այդ քաղաքները քաղքենիական բարեկեցութեան վայրեր էին առանց ապրուստի և պարապմունքի խոշոր տարբերութիւնների։

Սակայն Անդրկովկասի արդիւնաբերական կեանքը մեծ-մեծ քաղաքներում չէր կենտրոնացած։ Այդ արդիւնաբերութիւնը գործարանային (добывающая) բնոյթ ունէր և կենտրոնանում էր այն վայրերում, ուր երկրաբանական, կլիմայական և այլ պայմանները արդիւնաբերութեան համար որոշ նախապրեալներ էին պարունակում կամ ընձեռնում։ Այդպիսի վայրերում ծայր առած արդիւնաբերութիւնն իր վրայ կրում էր ծայրագաւառի տարբերիչ յատկութիւնները, այսինքն դա մի արդիւնաբերութիւն էր, որին կամ արտադրում էր հում նիւթեր և այն չդիմեց վերամշակման կենտրոնի գործարաններին և արտահանման, կամ թէ արտադրում էր այնպիսի արդիւնքներ, որոնք երկրաբանական և այլ պայմանների շնորհիւ գոյութիւն չունէին (նաւթ, մետաքս)։ Անդրկովկասը մշակող (обрабатывающая) արդիւնաբերութիւն չունէր, որովհետև, ինչպէս ասել ենք վերը, ուսական նուաճումից յետոյ նա բաց շուկայ դարձաւ, իր քաղաքակրթութեամբ նա չէր կարող գործարանային արդիւնաբերութիւն առեղծել և մղել ներքին Ռուսաստանի հետ։

Եւ քանի որ այդպէս էր՝ նրան մնում էր հում կամ կիսահում նիւթերի արդիւնաբերութիւնը։ Նա առանում էր պատրաստի ապրանքներ և դրա փոխարէնը տալիս հում նիւթեր կամ իր արտադրական ոյժերը կենտրոնացնում երկրի առանձնայատկութիւնների շահագործման վրայ։ Այս դրութեան վտանգը ապացոյցն երևում է արդիւնաբերական կեանքի հետևեալ տուեալներից։

1843 թ. Անդրկովկասի մշակող արդիւնաբերութիւնը գլխաւորապէս կենտրոնացած էր Շամախիի նահանգում (Շուշի, Շամախի, Նուխի և այլն), ուր տարեկան արտադրում էր միատեսակ գործուածքներ 870 հազար րուբլու, բամբակէ—160 հազարի, կաշիներ—36 հազարի։ Սա աննշան արդիւնագործու-

թիւն է և, նկատեցէք՝ այնպիսի ապրանքների, որոնք արդիւնք են երկրի առանձնայատկութիւնների (մետաքս, բամբակ)։ Եթէ չլինէր այդ առանձնայատկութիւնը՝ հաւանօրէն Արևելեան Անդրկովկասն ոչ մի մշակուղ արդիւնագործութիւն չէր ունենալ։ Այդ միևնոյն 1843 թ. Անդրկովկասի լեռնագործնութիւնը հետևեալ պատկերն ունէր. Բոլշալուի գաւառում առացուել էր 5000 փութ 4 գրուանքայ պղինձ, որից գանձարանին հասնում էր 4,400 ր., Գանձակի գաւառի Բանանց, Կուշչի և մի քանի ուրիշ գիւղեր օգտում էին տեղական երկաթի հանքերից և վճարում պետութեանը 825 ր., Նախիջևանի գաւառից և Գորիի ապահաճերից առացուել էր 506,469½ փութ ապ 41,941 ր. 86 կ. արժողութեամբ, Ջամախիի և Բագուի լճերից առացուել էր ապ 299,719 փ. 36 գր.—44,287 ր. 52 կ. արժողութեամբ, Բագում արդիւնահանուել էր սև և սպիտակ համճառ 229,879 փ. 22 գր.—79,633 ր. 66 կ. արժողութեամբ, Գանձակի գաւառի Ջեպլիկ գիւղում շահագործուել էր ծխի հանքը, որից առացուել էր 5 հազար փութ չիր. հանքի շահագործողը պանձարանին վճարել էր կապալագին 4,030 ր.։ *) Եւ այսպէս պղինձ, ապ, նաւթ և չիր—ահա այն հանքերը, որոնք շահագործւում էին Անդրկովկասում։ Այդ հանքերով Անդրկովկասը չափազանց հարուստ էր, այնպէս որ անշնորհք և նախնական անխնիկայով էլ կարելի էր չօշափելի արդիւնքներ առանել։ Զարմանալի չէ, որ Անդրկովկասի ձեռնարկողը բոնց հետ ուղին, իր ուշադրութիւնը կենտրոնացրից այդ հանքերի շահագործման վրայ, որ նա շարունակից այդ միևնոյնն անել և յետագայում, երբ երկրի կուլտուրական մակարդակը բաւականին բարձրացել էր։ Սակայն նոյն այդ պատճառներով Անդրկովկասի արդիւնաբերութիւնն ընդունից միակողմանի կերպարանք։

60-ական թուականներին Անդրկովկասի լեռնագործնութիւնը միևնոյն ճիւղերին էր շահագործում. նա մի չափով կենտրոնացած էր միևնոյն վայրերում։ Աղի առացման տեղերը Կուրն և Նախիջևանն էին, նաւթինը՝ Բագուն։ Միայն պղնձի

*) Акты, т. IX, ч. II, № 520.

*չահագործումն էր, որ բաւականին ընդարձակուել էր և նորանոր տեղեր պրտւել, ինչպէս, օրինակ, Գանձակի (Գեաբէկ), Ջանդէլաւրի (Կաւարա, Ղաֆար, Հալիձոր, Ագարակ) և Ակբաստանդրապոլի գաւառներում։ Վերը արդիւնաբերւում էր նոյն Չեպելինից։ 1866 թ. գործել սուացել էր 5 հազար փութ։ Թիֆլիսի գաւառում (Բոլնիս) գործում էր մի թուրք ձուլարան, սակայն նա իր գոյութիւնը պահպանում էր պետութեան հաւատարմութեան աջակցութեամբ, իր արտադրութեամբ աչքի ընկնող տեղ չէր բռնում և վերջն էլ փակուեց։ Լեռնարդիւնաբերութեան մէջ յաջողութիւն էր գտնում պղնձի չահագործումը, որ գտնում էր հայերի, յոյների և վերմանացիների ձեռքին *)։ Պղնձի արդիւնաբերութիւնը 60-ական թուականներին ընդունել էր հետևեալ չափերը։*

1861 թ.—	17,956	փ.	31	գր.	
1862 » —	12,447	»	4	»	
1863 » —	16,096	»	12	»	*գործիներով* 1064 *բանուր*
1864 » —	16,425	»	25	»	» 1138 »
1865 » —	16,093	»	29	»	» 1650 »
1866 » —	18,757	»	10	»	» 1657**) »

Պղինձն արդիւնաբերւում էր մասնաւոր ձեռնարկողների ջանքերով և միջոցներով։ Այսուհ հրապարակ էր գալիս մասնաւոր նախաձեռնութեան ոգին։ Այդպէս չէր լեռնարդիւնաբերութեան մնացած ճիւղերում՝ նաւթի և ոսկի չահագործման մէջ։ Նաւթահողերն ու ոսկահանքերը պատկանում էին պետութեան, սակայն ճիշտ՝ գրաւում էին պետութեան կողմից։ Պետութիւնն ինքը այդ հանքերի չահագործողը չէր անմիջապէս. նա կապալով տալիս էր մասնաւոր ձեռնարկողներին։ Այդ սովորութիւնը չէր նպաստում տեխնական կեանքի զարգացմանը. մէկ-երկու հոգի գրում էին բացառիկ կացութեան մէջ, նրանց տակ բացում էր հարստանալու դուռը, իսկ նման մենաշնորհի պատճառով տուժում էր երկրի ողջ բնակչութիւնը։ Կապալառուն տիրանալով որևէ կապալի՝ իր քմահաճոյքն էր թելադրում ապառողին։ Նա աշխատում էր շուտափոյթ յետ բերել իր վճա-

*) Сборникъ ст. св. о Кавказѣ, от. II, էջ 77—89.
**) » » » » » » » էջ 91.

ած կապալապինը, բայց չէր մտահոգում կալսն և պարզապես պրիմնաթեան մասին։ Այն էլ պետք ասել, որ կապալային սիստեմը՝ չնորհիւ պետական անհատութեան ընդհանրապէս վերաբերմունքին՝ գոյէ միակ նպատակայարմար միջոցն էր պաշտպանելու գանձարանի շահերը։ Այսպէս 1821—1824 թ. թ. նաւթահանքերը արուած էին կապալով տարեկան 131 հազար րուբլով։ 1825 թ. նաւթահանքերի շահագործումը անցաւ անմիջապէս գանձարանին և եկամուտը լիաւ 76 հազարի, նշանակում է կապալի տուածից 55 հազարով պակաս։ Այս երեւոյթի դիմաց նորից առաջ մղուեց կապալային սիստեմը։ Եւ նաւթահանքերը 1826—1834 թ. թ. շահագործւում էին կապալային սիստեմով, բայ որում գանձարանը առանում էր 91—97 հազար տարեկան եկամուտ։ 1835—1849 թ. թ. հանքերը նորից անցան գանձարանի անմիջական շահագործմանը։ Գանձարանի եկամուտը այդ տարիներում ընդհանրապէս հասնում էր 100 հազարի տարեկան։ Ամենախոշոր եկամուտը նա ունեցել է 1844 թ., այն է՝ 125 հազար։ 1850 թ. մինչև 1872 թ. նաւթահանքերը գրաւել շահագործւում են կապալային սիստեմով։ 1850—1854 թ. թ. (ապրիլից՝ ապրիլ) նաւթահանքերի կապալատուներն են՝ Գուկասեանեան, Բարանովսկան և Տէր-Գուկասեան տարեկան 110 հազար կապալավարձով։ 1854—1862 թ. թ. կապալառու է միմիայն Տէր-Գուկասեանը 117 հազար տարեկան կապալավարձով։ 1863—1866 թ. թ. կապալառու է Միրզոյեանցը 162 հազար տարեկան կապալավարձով։ 1867—1872 թ. թ. գրաւել Միրզոյեանցը, որ վճարում է 136 հազար րուբլի տարեկան։

1832—1850 նաւթ արդիւնաբերւում էր տարեկան 200 հազար փութ (քիչ աւելի կամ պակաս)։ Եւ տանձին չանք չէր նկատում գրի տալու Անդրկովկասի լեռնարդիւնաբերութեան այդ ճիւղին։ Այդ շրջանում էլ ռուսական նաւթի տարածման սպառողը Պարսկաստանն էր։ Այսպէս՝ այդ երկիրն է արտահանել. 1845 թ. 120150 փ., 1850 թ.—132186 փ., ուրեմն տարեկան արդիւնաբերած նաւթի կէսից աւելին*)։

*) Ст. Гулишамбаровъ. „Очеркъ развитія и современное состояніе нефтяной промышленности Бакинскаго района.“—Сборникъ свѣдѣній о Кавказѣ. т. VII, Тифлисъ 1880. ¿¿ 333—335.

1859 թ. Բադուի գաւառի Սուրախանի գիւղում չինւում է ապիտակ նաւթի (կերոսինի) առաջին գործարանը: Ձեռնարկողները ռուս Կոկորևն ու Գուրանինն էին, որոնք հում նաւթը փութը 45 կոպէկով առանում էին կապալառու Մերզոյեանից: Գործարանի հիմնուելն և կերոսինի պատրաստելը մարդ առաւ հում նաւթի արդիւնաբերութեանը: Այդ ժամանակաշրջանի նաւթարդիւնաբերութիւնը հասնում էր հետևեալ չափերի.*)

1863 թ.—	340,000 փ.	1868 թ.—	735,764 փ.
1864 » —	538,000 »	1869 » —	1,685,229 »
1865 » —	554,291 »	1870 » —	1,704,465 »
1866 » —	691,820 »	1871 » —	1,375,523 »
1867 » —	998,907 »	1872 » —	1,535,981 »

1872 թ. վերջին վերացրուեց կապալային եղանակը: 60-ական թուականներից արդէն դրա դէմ մաքառում էին Բադում հաստատուած Կոկորևն ու Գուրանինը: Նրանց ձայնակցում էր հաչախաւոր ուսուցչապետ Մինդելէևը: Նաւթային հողերը բաժանուեցին որոշ հողամասերի և վաճառուեցին աճուրդով: Պառակտութիւնը Բադուի չէջանում 68 հոգաբաժին գնահատել էր 552,240 ր., սակայն աճուրդից առաջ 2,980,307 ր.: Այսքան տարբերութիւնը ստիպեց բացուել ստոր մրցութեան համար: Հրապարակ եկան նոր դրամատէրեր: 1872 ր. նաւթահողերի աճուրդին մասնակցեցին՝ 12 հայ ձեռնարկողներ և մի հայկական ընկերութիւն, 9 ռուս, 3 վրացի և 2 Թուրք: Հայերը իրենց բաժին ընկած հողերի դիմաց գանձարանին վճարեցին—1,467,000 ր., ռուսները՝—1,457,000 ր., վրացիները՝—20,000 ր., իսկ Թուրքերը՝—11,000 ր.: Հայերից միմիայն Մերզոյեանը վճարեց—1,222,000 ր.: Ռուսներից Կոկորևն ու Գուրանինը վճարեցին 1,323,000 ր.: Ցիշենք այստեղ, որ այս վերջին ձեռնարկողներն էին, որ կռւում էին կապալային սիստեմի դէմ և կերոսինի գործարան հիմնելով՝ ևնաւթ էին առնում Մերզոյեանից: Աճուրդին հրապարակ հանած դրամատէրերը ցոյց են տալիս, որ հայերն ու ռուսները հաւասար մրցակից էին նաւթարդիւնաբերութեան մէջ: Աննշան տեղ էին բռնում վրացիները և Թուրքերը: Այն էլ յիշենք, որ հայ աճ-

*) Г. Е. Старцевъ. „Бакинская Нефтяная промышленность." Баку, 1901. էջ 6—13.

*պահանջները իրօք ձեռնտուիներ ու վաճառականներ էին այս բանի կատարեալ իմաստով: Այն ինչ ուսանելոց ամանք պատկանում էին Դավիտեան պետական պաշտօնէութեան (Բենկենդորֆ, իշխ. Մելետոպոլի, գին. Բեբութով և այլն) *):*

1872 թ. աճուրդից յետոյ ձեռքերով փորուած հորերի, ձիերի ու պարկերի միջոցով առաջ տարուող արդիւնաբերութիւնը տուել տուեց նոր մեխանիքական արդիւնաբերութեան առաջ: Յետագայում նոյնը դարձաւ Անդրկովկասի արդիւնաբերութեան գլխաւոր առարկան:

Կապալով շահագործւում էր և Անդրկովկասի ապը, որի հարուստ հանքերը կենտրոնացած էին Կորբում և Նախիջևանի գաւառում: Ապի արդիւնաբերութիւնը հետևեալ թուական պատկերն ունէր**):

1852 թ.—	733,403 փ.	1858 թ.--	865,542 փ.
1853 » —	616,855 »	1859—1861—տեղեկութիւն. չկան	
1854 » —	477,593 »	1862 թ. —1,267,257 փ.	
1855 » —1,164,838 »		1863 » —1,384,188 »	
1856 » —	810,301 »	1864—65 թ.—տեղեկութիւն. չկան	
1857 » —1,001,369 »		1866 թ. — 1,266,131 փ.	

Սակայն ժամանակաշրջանին դոյն ուսուց արդիւնաբերութիւնն ոչ պլինձն էր. ոչ նաւթը և ոչ ապը: Անդրկովկասի արդիւնաբերութիւնը գլխաւորապէս ճանաչում էր երկու ապրանք, որոնք շուկայում խիստ բարձր արժէք ունէին—մետաքսը և տրոնը: Երկրի կլիմայական պայմանները, մասնաւոր ձեռնհասութիւնն ուղղում էին գէպի այդ ապրանքների շահագործումը: Դա ակնյայտնի է դառնում, երբ մենք ծանօթանում ենք արդիւնաբերութեան այդ երկու ճիւղերի մանրամասնութիւններին: Մետաքսի արդիւնաբերութիւնն Անդրկովկասում հինաւուրց երևոյթ էր: Նա համեմատաբար ծաղկած վիճակի մէջ էր նոյն իսկ խանութիւններում, որոնց մէջ սերտ կարգն ու կանոնը, ինչպէս յայտնի է, առհասարակ նպաստաւոր չէին արդիւնաբերութեան համար: Եւ դա հասկանալի է. մետաքսն անհրաժեշտ վարժամութեան պարագայ էր թէ տնտեսի սերտների և թէ արտասահմանի սպառողների համար, ասել է նա բարձր արժէք ունէր, ուստի և օգ-

*) С. Гулишамбаровъ, էջ 344.
**) Сборникъ, էջ 94.

տարեր պարապմունքի առարկայ էր։ Ռուսները՝ սկսելով Անդրկովկասին՝ լուրջ ուշադրութեան դարձրին մետաքսագործութեան զարգացման վրայ։) 1823—28 *թ. թ. այդ ուղղութեամբ աշխատում էր Իտալացի Կասանելլան։ Նա կառավարութենից նպաստ առանալով՝ ձեռնամուխ էր եղել հիմնել Թիֆլիսում նրա ղեկավարութեան ներքոյ մետաքսագործութեան համապատասխան մի մետաքսագործարան, սակայն այդ գործը յաջողութեամբ չէր պսակուել։ Կասանելլան վախճանուել և նրա գործը մնաց թերատ։ 1836 թ. կազմակերպուեց «Անդրկովկասում մետաքսագործութեան և առևտրական արդիւնաբերութեան տարածող ընկերութիւնը»։ Այդ ընկերութեան հիմնադիրներն ու անդամները առաքարտիճան անձնաւորութիւններ էին։ Ընկերութիւնն իր գործունէութեան համար կենտրոնական վայր ընտրեց Նախիջևանը։ Նա իր գոյութիւնը պահպանեց 30 տարի, 1836 թ. մինչև 1865 թ.։ Ընկերութիւնն այդ ժամանակամիջոցում խոշոր ծառայութիւն մատուցեց Անդրկովկասի մետաքսագործութեան։ Նա նպաստեց արտասահմանից ձևեր մտցրեց թէ՛ չերամապահութեան և թէ թել պատրաստելու գործի մէջ։ 1845—1855 թուականներին Եւրոպայում ամենուրեք տարածուեց չերամի հիւանդութիւն։ Անդրկովկասն ազատ էր այդ հիւանդութիւնից։ Եւրոպացիք սկսեցին շահագրգռուել Անդրկովկասի չերամապահութեամբ։ Մեր երկիրը գործաւ լուրջ ուշադրութեան առարկայ, քանի որ շուկայում առողջ սերմ և մետաքս նա էր մատակարարում։ Առաջին եւրոպացի սերմավաճառն այցելեց Նախիջևան 1856 թ.։ 1864 թ. Անդրկովկասում կային 200 սերմավաճառներ։ Որևէ գիտնականի՝ նրանք այնտեղ չէին։ Չերամի պահպանման և ոռչտապահիկ աճեցման վրայ, որ առաջած բոժոժը սերմանման անելով՝ փակում էին ձեռնարկութիւնը։ Սերմավաճառները չէին էլ նաև թել պատրաստելու գործարաններ և այդպիսով պատահաբար էին ոչ թէ հում նիւթ, այլ կիսամշակ ապրանք։ 1863 թ. սերմավաճառներն պատահաբար էին 1,700 փութ չ-*

---

*) Сводъ матеріаловъ и т. п., т. IV, Тифлисъ, 1888 г. ч. II. И. И. Шавровъ. „Очеркъ шелководства въ Закавказьи". էջ 137—175.

ման մեջ, որ առացուել էր ոչ պակաս 50 հազար փութ բաժնից: Այդ ժամանակ Խաչխայից Անդրկովկաս փոխադրելը կրծատանելիններըը Մոսկուայի յայտնի մեսազբաշխի Ալէքսէևը: Նախատես նա չէնեց վիճակի գործարան, որը 9 ամսուայ ընթացքում 452 ատամների և 851 բանուորի գործակցութեամբ արտադրում էր մինչև 900 փութ մետաքս: 1865 թ. պղպեղի հետաքրքրութիւնը սկսուեց տարածուել նաև Անդրկովկասում: Հետաքրքրութիւնը տանիչ հարուած տացրեց չերմատապահութեանը: 50 հազար փութ մետաքսի բերքից տարեկան արդիւնաբերութիւնն իջաւ 5—10 հազարի: 1851—56 թ. թ. ընթացքում Անդրկովկասը տարեկան արդիւնաբերում էր 25—30 հազար փութ մետաքս: Այդ քանակի կէսից ուելին արտահանում էր Մոսկուայ և միայն փոքր մասն արտասահման: Արտասահմանի բաժինը հետևեալ հրամական պատկերն ունէր:

1851 թ. արտահան. է	357,876 ր.	տպր.	1854 թ.—	113,462 ր.
1852 » »	830,304 »	»	1855 » —	207,777 »
1853 » »	685,628 »	»	1856 » —	578,777 »

Այս թուերից տեսնում ենք, որ Ղրիմի պատերազմն անդրադարձ ազդեցութիւն է անում Անդրկովկասի առևտրի վրայ: 1853 թուականի 685 հազար բութլու ապրանքից արտահանութիւնը 1854 թ. իջնում է 113 հազարի: Սակայն դրութիւնը սկսում է փոխուել 1856 թ.: 1857 թ. արտահանութիւնը բարձրանում է մինչև 826 հազարի: 1857—1864 թ. թ. ընթացքում Անդրկովկասի մետաքսի արդիւնաբերութիւնը ծաղկած վիճակի մէջ էր, տարեկան 50 հազար փութի արտադրութեամբ: Ապրանքի մեծագոյն մասը դարձեալ արտահանում էր Մոսկուա: Արտասահմանի բաժինը խոշոր չափով բարձրացած էր սերմից: Ընդհանուր առմամբ արտասահմանի բաժինը գնահատում էր:

1857 թ.—	826,719 ր.	1861 թ.—	745,792 ր.
1858 » —	458,362 »	1862 » —	1,301,868 »
1859 » —	634,812 »	1863 » —	2,617,389 »
1860 » —	1,173,710 »	1864 » —	2,085,063 »

1864 թ. պղպեղի հետաքրքրութեան պատճառով սկսում է գնահատել: Արտահանութիւնը դէպի Մոսկուա համարեա թէ պա-

պատում է: Առաջուց մեռածքը պլեմաւորապէս դուս է հանւում արտասահմանի չուկան: Բուն երկրի մէջ—Անդրկովկասում—մեռածքի զործածութիւնն իջնում է նուազագոյն չափի: 1864 թ. յետոյ արտասահմանի բաժինը տասնում է հինւելով թուերի:

1865 թ.—1,694,655 ր.		1869 թ.— 477,294 ր.	
1866 » —1,683,576 »		1870 » — 919,867 »	
1867 » — 293,727 »		1871 » —1,763,780 »	
1868 » —1,026,224 »		1872 » —1,929,794 »	

1866—1870 թ. թ. *ժամանակամիջոցը—չերքամատարածութեան վաստակաւոր տարիներն են: 1870 թ. սկսած նա պարձեալ դառնում է չահաբեր պարապմունք և սկսում է խոշոր դեր խաղալ երկրի անտեսական կեանքի մէջ:*

*Անդրկովկասի արդիւնաբերութեան մեծ խոշոր ճիւղը տարանի մշակութիւնն էր, որ կենտրոնացած էր Գերբենտ, Դուբայլ, Քութայի, Տարաագրանի և Կայտագի գաւառներում: *) Տարոնը գործադրում էր երկու ներկոց միջոց: Նախորդ դարի 40-ական թուականներից այդ բոյսի արդիւնաբերութեան մասին չատ աւարկայ էր գրձել Շուրեի Վլադիմիրի գործարանատէր Բարանովի: Այդ ձեռնարկողը հոլանդական կրպակի վոխարէն սկսեց գործածել տարոն և գրանով հիմք դրեց մի նոր արդիւնաբերութեան, որ յետագայում պարապմունք էր տալիս 40—60 հազար բանուորի և դէպի ինքն էր քաշել Անդրկովկասի համարեա բոլոր ազատ դրամագլուխները: Տարոնի արդիւնաբերութեան ծաւալն երևում է Գերբենտից ծովալ Բուռասան արտահանած տարոնի քանակից: Ահա տասնամեակները.*

Տարին	*Փութ-ներ*	*Դինը*	*Դումարը*	*Տարին*	*Փութ-ներ*	*Դինը*	*Դումարը*
1844	266	5—	1,330	1847	41,418	4,75	196,735½
1845	236	5—	1,180	1848	44.790	5,65	253,063½
1846	60,970	4—25	259,112—50	1849	66,700	4,10	273,470

*) О прикаспійской маренѣ. Тифлисъ. 1863.

Տարին	Փութիւր	Գինը	Գումարը	Տարին	Փութիւր	Գինը	Գումարը
1850	62,630	4,50	326,835	1862	189,492½	6 —	1,136,955**)
1851	79,300	4 —	317,200	1863	200,764	4,30	863,285⅕
1852	141,140	4,25	599,845	1864	184,827½	5 —	924,137½
1853	131,100	3,80	498,180	1865	304,211½	6 —	1,825,269
1854	130,400	4,50	586,800	1866	310,237½		
1855	123,880	3,50	433,580	1867	292,529		
1856	154,180	5,50	847,990	1868	290,451½		
1857	180,690	8—	1,445,420	1869	316,666¾		
1858	148,880	7—	1,042,160	1870	185,126		
1859	125,650	9—	1,130,850	1871	232,198		
1860	154,980	9—	1,394,820	1872	214,028¼***)		
1861	213,200	7—	1,492,400*)				

Սկսած 1866 *թ. մինչև* 1872 *թ.*, 7 *տարուայ ընթացքում արտահանուել է* 1,840,237 *փութ տարան: Այդ ժամանակաշրջանում տարանի գինը միջին հաշուով* 6 *րուբլի էր: Ուրիմն պիտի ընդունել, որ* 7 *տարուայ մէջ տարանի արտինաթերթունը նեմուծել էր Անդրկովկաս* 11,041,422 *րուբլի: Դա վիճակագրական տուեալ էր այդ ժամանակի համար: Իսկ եթէ* 1846 *թ. սկսած հաշուի առնենք տարանի արտինաթերթութեան չնորհիւ Անդրկովկաս նեմուծուած դրամի քանակը, ապա կըստանանք մօտ* 26 *միլիօն րուբլի: 27 տարուայ ընթացքում տապալուել եկած այդ դրամագլուխը պիտի անհետանար անէր հինօրեայ կայուն յարաբերութիւնները: Եւ իրօք տարանի արտինաթերթութիւնը խաչ ու ցաւ է կատարել Անդրկովկասի տնտեսական և հասարակական կեանքում: Նա* 40—60 *հազար լիզդի բանուր էր զրաղեցնում: Նրանցից ամբողջ ռազմիկն իր մահուան ցնծքերն փոխարէն բան էր բանեցնում: Մեծ է դա հասարակական յեղաշրջում չէր:*

---

*) 1861 *թ. համար դեբրենտից արտահանուածին մենք միացնում ենք կասպիական ծովի միւս վայրերից (Բագու, Պետրովսկ և Կիզովալա գրեատան) արտահանուածը՝* 15,770 *փութ:*

**) 1862—1864 *թթ. համար տեղեկութիւնները վերցրել ենք* Сборникъ ст. св. о Кавказѣ *գրքից.* отд. II, *էջ* 106.

***) 1866—1872 *թ.թ համար տեղեկութիւնները վերցրել ենք* Н. Шавровъ-*ի „*Обзоръ пронз. силъ Кавк. Намѣстничества*“ *գրքից, էջ* 492: *Եավրովը իր բերած թուերը ստորագրանում է հում տարանի և տարանից պատրաստած կրպակ մենք այդ թուերը միացրինք. տարանից կրպակ տարեկան պատրաստում էր* 12 *հազարից մինչև* 36 *հազար փութ:*

Տարոնի արդիւնաբերութիւնը մահացաւ 1873 թուականից՝ Արհեստական նկրկի (ալիզարին) գիւտը նրա մահարեր թշնամին հանդիսացաւ: Չատ ձեռնարկողներ կորցրին հոդի մէջ դրած իրենց դրամագլուխները: Միւսները, որ տարոնի շնորհիւ հարստացել էին և պահեստի դրամագլուխներ ունէին, չուեցին պէտի ուրիշ արդիւնաբերական ճիւղեր, գլխաւորապէս դէպի ծայրամասնող և փայլուն ապագայ խոստացող նաւթարդիւնաբերութիւնը:

Մենք Անդրկովկասի արդիւնաբերական պատկերը լիակատար նկարած կլինինք, եթէ երկու խօսք էլ ասինք բամբակագործութեան մասին: Արդէն ասացինք, որ վաճառականի թուականներին Երևանում աշքի ընկնող բամբակի առևտուր կար, որ նա կենտրոնացած էր գլխաւորապէս հայ բազարների ձեռքին: Այդ թուականներին Երևանի նահանգի բամբակի արտադրութեան քանակը հաւասար էր:

1861 թ.— 30,000 փ.
1862 » — 60,000 փ.
1863 » —150,000 փ. *)

1870 թ. Երևանի նահանգն արտադրել էր 300 հազար փութից աւելի մաքրած բամբակ, որ հաշուած 4 ր. մինչև 6 ր. գնորով գառնում էր շուկայում $1^1/_2$ միլիոն րուբլու արժէք ունեցող ապրանք: Բամբակ սկսում էր նուաճումներ անել Անդրկովկասի արդիւնաբերական կեանքի մէջ: Յայտնի գրամատէր Մելոդեանցն 1870 թ. Թիֆլիսում հիմնում է առաջին բամբակի գործուածքների ֆաբրիկը: Լաւ յաջողութեամբ նրանից առնելու համար նա բամբակագործներին բաժանում է ամերիկական սերմացու**):

* * *

Մենք ծանօթացանք Անդրկովկասի առևտրա-արդիւնաբերական կեանքին, սակայն մեզ անծանօթ մնացին իրենց առե-

---

*) Ст. Гулишамбаровъ. „Обзоръ фабрикъ и заводовъ Тифлисской губерніи. Отчетъ за 1886 г.“. Тифлисъ. 1888. էջ 80.

**) Отчетъ по Главному Управленію Намѣстника Кавказскаго 1862—1872 г., Тифлисъ, 1873. էջ 252.

ձած հիմնարկութիւններով և հասարակական յարաբերութիւններով թէ առևտրականը և թէ արհեստաւորը։ Մենք բաւականացանք ասելով, թէ Անդրկովկասի առևտրի և արհեստի մէջ պիտում էր համքարական կարգը, թէ, վերջապէս, արհեստաւորների դէմ ապրելը չահագործում էին կապալային համակարգով։ Այս ցանկը յայտարարութիւնները բաւարար չեն ըմբռնելու մեր երկրի քաղաքային դասերի անցեալը։ Պէտք է մի յատուկ տայեացքով ճանաչել համքարին և կապալառուին՝ ճանաչելու այն պատճառով, որ նրանք երկար պայքարով զուգորել են մեր հասարակական կեանքը։

Համքարութիւնները Արևելեան և մասնաւորապէս Անդրկովկասի քաղաքների մէջ ճանաչուած ինքնավար կազմակերպութիւններ էին, որ երկար շրջանակներում ընդգրկում էին միևնոյն արհեստի կամ պարապմունքի ներկայացուցիչներին*)։ Նրանք նման էին Արևմտեան Եւրոպայի քաղաքների գիլդային կազմակերպութիւններին։ Համքարութիւնների գործառնութիւններն երկու կարգի էին. ա) պետական կեանքի հետ առնչութիւն ունեցող և բ) մասնաւոր, ինքնօրինական։ Առաջին կարգի գործառնութիւններով համքարութիւնները ճանաչում էին արքունի հարկային միաւորներ և յատուկ ընդունում էր, որ քաղաքացիական դատաստանական գործերի քննութիւն ու լուծումը այդ կազմակերպութիւնների իրաւունքն է։ Համքարութեան անդամն առանձնապէս հարկատու չէր ճանաչում։ Հարկատուն համքարութիւն էր, որ իրեն բաժին ընկած հարկն ինքը բաժանում էր համայնքի անդամների մէջ, գանձում և հասցնում պետական մարմիններին։ Քաղաքացիական գործերի համար համքարութիւնները ունէին իրենց ատեաններն և պաշտօնեաները։ Պետական հաստատութիւնները չէին խառնում համքա-

*) Անդրկովկասի համքարութիւնների մասին տեղեկութիւններ կարելի է գտնել հետևեալ աղբիւրներում. 1) Юр. Ѳ. Ахвердовъ (Եղբայր Ախվերդեան) „Тифлисскіе Амкары“. Тифлисъ, 1883. 2) Сборникъ ст. св. о Кавказѣ, отд. III, էջ 30—32, 3) П. Шаншіевъ (Պետրոս Շանշեան) „Два слова объ амкарѣ“. Тифлисъ. 1857. 4) Гакстгаузенъ. „Закавказскій край“ С. П. Б. 1857. ч. I. էջ 105—108. 5) С. А. Егіазаровъ. „Городскіе цехи“. Казань. 1891:

րութիւնների ներքին գործերին։ Նրանք պաշտօն ունէին միջամտելու, երբ համքարական համայնքի անդամները քրէական յանցանք էին կատարում (սպանութիւն, ուտզակութիւն և այլն)։ Նոյնիսկ այսպես համքարութիւնների պաշտօնատարը անձնուրաց էր երբեմն համքարութիւնները հանդէս էին գալիս սեփական չահերով շահելու նպատակով և տուժել չկամենալու նրանց գործերին։ Եւ դա յաճախ պատճառ էր յաչդոյթեամբ, որովհետև քրէական յանցանքին Արևելքում շէր կարող պետական մտահոգութեան առարկայ, այլ կրում էր մասնաւոր բնոյթ։ Իսկ այս պարագայում միջնորդների, հաշտեցնողների գերը մեծ էր։ Եւ այդ գերի մէջ էին հանդէս գալիս համքարութիւնն ու նրանց պաշտօնատարները։ Համքարական դատարանի իրաւասութիւնը տարածւում էր քաղաքացիական կեանքի հետևեալ երևոյթների վրայ. 1) նա քննում էր և լուծում այն տարաձայնութիւնները, որ ծագում էին վարպետի և նրա վարպետութեան ու աշակերտի մէջ, տարաձայնութիւններ՝ վերաբերեալ վարձման ժամանակամիջոցին, աշակերտների խնամելուն, որպէսզին և առհասարակ անձնական ու արհեստակցական փոխյարաբերութիւններին. 2) նրա իրաւասութեան էին ենթարկւում և վարպետների մէջ ծագած տարաձայնութիւնների վերացումը, ինչպէս՝ պարտամուրհակային վէճերի լուծումը, տպրանքների առման և ապառողներին չորսմելու ժամով հանդէս եկած թերիմացութիւնները, ապա խօսքով և գործով հասցրած վիրաւորանքները, բարի անուան և պատուի անուանարկումն և այլն. 3) նա էր վերահսկում վարպետների ընտանեկան վերաբարեկրութիւնների շուրջը ծագած վէճերին—ամուսինների, հասակն առած զաւակների և ծնողների, համքարական վարպետների և նրանց ազգականների. 4) նրա հսկողութեան քննութեանն էին ենթարկւում հասած պահանջների առիթով հրապարակ եկած թերացումները, ինչպէս խառնուածութիւնից և հաղորդութիւնից խուսափումը, պահքն և ծոմերի չկատարումը, արբշռութիւնը և համքարութեան վնաս անպատիժ մնալը չը ներկայանալը. 5) նրա իրաւասութեան էին ենթարկւում և համքարութեան անդամների այն գործերը, որոնք

աննչութիւն ունէին հաւատակական վայելչութեան ու կրկի խանգարման հետ. 6) նա լսում էր և քաւարարում ապաւոդնելի պանդամները համքարութեան անդամների դէմ, երբ խնդիրը վերաբերում էր պատուէրների թերի կատարման, անպէտ արգիլանքների և վատ երկի վաճառման և այլն): Այսպիսով մենք տեսնում ենք, որ համքարութիւնների անդամների հանդէպ հաւատական յարաբերութիւնների մէջ խիստ զգուշած են հատուկական միւս խմբակցութիւններից: Համքարութիւն ինքնամփոփ կազմակերպութիւն էր: Նա իր անդամներին պիւրութիւն էր տալիս իւրայինների միջոցով վերջացնելու ամեն մի տարաձայնութիւն: Նա զգուշացնում էր համայնական ոգին և համքարական համայնքին ազատ էր պահում դրսի ազդեցութիւններից: Համքարութիւնները Արևելքում ունէին և մի կարևոր իրաւունք, այն է համայնքով պիտի իշխողներին բողոքելու արևէ կարգադրութեան դէմ կամ դարման խնդրելու արևէ կարիքի համար: Այդպիսի մի սովորութիւն չէր պատշաճում ռուսական օրէնքների ոգուն: Եւ ռուսական իշխանութիւնն Անդրկովկասի կառավարման սկզբի շրջանում անհրաժեշտ էր լինում տանել այդ անհաճոյ պիտոյները, մինչև որ բնակչութիւնն ընտելացաւ նոաճողի նոր կարգերին և մոռացութեան տուեց աւանդական սովորութիւնը: Այժմ պարզ պիտի լինի, թէ որոնք էին պետական կեանքի հետ աննչութիւն ունեցող այն գործառնութիւնները, որոնցով օժտուած էին համքարութիւնները: Դրանք էին համքարութիւնների հարկային ուրոյն միաւոր լինելը, նրանց սեփական համարեա թէ համայնապարսիկ դատաստան ունենալն ու պիտոյների իրաւունքը:

*Որոնք էին համքարութիւնների ինքնօգնական գործառնութիւնները**): Նախ նրանք հոգում էին իրենց համայնքի անդամների կարիքները: Այսպէս՝ օժիտ էին տալիս վախճանուած անդամի որբին, ապահովում էին նրա գուակների ապագան (վարժեցնում էին արհեստի մէջ, նպաստում էին շուտնակելու հօր պարապմունքը) միխիթարում էին այրուն և նրա ազգա-

*) Eriазаровъ, էջ 292—293.
**) Ахвердовъ, գլ. II.

նութիւն հասցնում, յարգում էին իրենց նիւթապաշտութեամբ վախճանուած անդամի թաղումը՝ յաճախ իրենց վրայ վերցնելով թաղման ծախքերը, եթէ վախճանուածը չքաւոր էր լինում, ապա նրանց ինքնօգնական գործառնութիւնների մէջ մտնում էր միասին հում նիւթեր առնելու սովորութիւնն և նրա թանումը համքարութեան անդամների մէջ, որի ժամանակ չէին մասացում վարպետների այրիները, նոր վարպետները և այլն։ Վերջին հանգամանքն այն առաւելութիւնն ունէր, որ վերացնում էր մրցումը համքարութիւնների անդամների մէջ և թուլացնում էր նիւթեր մատակարարողի պահանջկատութիւնը։ Այդ հանգամանքը միևնոյն ժամանակ հնարաւորութիւն էր տալիս ընդհանուր վարկ ունենալու մատակարարողի առաջ։ Ոչ թէ առանձին արհեստաւորն էր պատասխանատու ապրանքի վերցրած նիւթի համար, այլ ամբողջ համքարութիւնը, որն ունէր իւրաքանչիւր գործառնութիւնների մէջ։ Ուրիշ համքարութիւնների ընդհանուր հրաշխատութեան կրոնն էր։ Ինքնօգնութեան գործ էր և համայքով խանութներ վարձելը։ Այսպէս ընտրանիների աչքը սովորած էր լինում գործ ունենալ համերաշխօրէն և միաբան արտայայտուող համքարութեան հետ. նա իր կամեցածին համեմատ չէր կարող բարձրացնել ընտրանեավարձը կամ հետացնել վարձողին, իսկ վարձի անթերի ստացումը հրաշխատում էր ամբողջ համքարութիւնը։ Այս կարգի ինքնօգնական գործ պիտի համարել և մեռած անդամի խանութը՝ որպէս համարում ունեցող մի ձեռնարկութիւն՝ մի այլ վարպետի յանձնելը, որ կատարում էր որոշ վարձատրութեամբ յօգուտ վախճանուածի այրու և որբերի։ Ընտրանիների և ձեռնարկութեան հետ կապուած այս սովորութիւնները կոչում էին արուեստի Ինքնօգնութիւն էր և այն պաշտպանութիւնը, որ համքարութիւնը ցոյց էր տալիս իր անդամին, երբ վիրաւոր տարածնութեան մէջ էր լինում ապատուի կամ ուրիշ համքարութեան անդամի հետ։

Ինքնօգնութեան կարգում պիտի դասել և համքարութիւնների հրծնական ջնջմեռանդութիւնից բղխած բարեգործութիւնը։ Նրանք անձնուիրաբար օգնութեան էին հասնում ժամանակ և խօլերայի ժամանակ, թաղում էին աղքատներին և

պանդուխտներին, վրկանքով ազատում էին գերիներին և ճանապարհներին, եկեղեցիներ ու ճանապարհներ էին շինում, հաց էին բաժանում սով ատրներին և այլն։ Այդ բոլորը հասարակական ծառայություններ էին, որ գալիս էին բարեկարգելու քաղաքներն ու կեանքն ու մեծարանք մացնելու մարդկային համայնակցության մէջ, պարապանը, որանք աչքաթող էին արուած այն ժամանակուայ յոյն կարգերում։ Եւ այսպէս ինքնօգնությունը, միաձուլին ձեռք մեկնելը համքարական կազմակերպությունների երկրորդ կարգի գործառնութիւնն էր, որ իմաստ և կենսունակութիւն էր բաշխում նրանց։ Եթէ չըլինէր այդ պարապան, եթէ համքարութիւնները առեղծուած լինէին իրենց վարչական գործը, եթէ նրանք միայն ծառայէին հարկային պէտքերին կամ արուարքին ոստիկանական վայելչութեանը, ապա երկար չէին դիմանալ, չէին ունենալ իրենց ներքին հասարական բարձր մղումները, վաղ կըզային չնչին հարուածներից և չէին դառնալ պատուար վաչկատուն կարգերի դէմ։ Կարելի է անվերապահ ասել, որ եթէ Անդրիանոսի քաղաքացիական կազմակերպութիւն մի նպատակներին իրագործումը կարող է յաջողացնել աշխատանքի նպատակայարմար բաժանումով և որշ մնայուն օրգաններին անցում գործառնութիւններով։ Անցուխ կազմակերպութիւն չի կարող լինել։ Ամեն-մի կազմակերպութիւն պիտի ունենայ իր երաշխան։ Համքարութիւնները նոյնպէս իրենց օրգաններն ունէին։ Հիմնական և համքարական կեանքին ուղղութիւն տուղ օրգանը վարպետների ընդհանուր ժողովն էր, որ որոշումներ էր կայացնում և ընտրում էր պաշտօնատար անձերին։ Վերջիններս կազմում էին վարպետապետը (ուստաբաշի), նրա օգնականները (ադամախոլ), դանձապահն և ատրճանդակները (իխթիարլի), որոնք իրենց էին ածում մեծերի կարգադրութիւնները։ Համքարական պաշտօնեաները ձրի չէին կատարում իրենց պարտականութիւնները. նրանց բաւարարում էին հիւրասիրութեամբ, ճաշով, ընծայութեամբ կամ դրամական վարձատրութեամբ, նայած կրած նեղութիւններին և վատնած ժամանակին։ Այդ պաշտօնեաները

տարկապրական իրաւունք չունէին, նրանք պլեաւորապէս միջնորդ հաշտարարներ էին։ Եթէ պատահում էր համքարական համայնքում մի յանցաւոր անդամ, որ չէր ենթարկւում ոչ հաշտարարների և ոչ էլ ընդհանուր ժողովի որոշմանը, ապա համքարութիւնը, որպէս ևրք, նրան արձակում էր անդամութիւնից կամ ենթարկում էր բանտարկութեան։ Ամէն չաս գործադրում էր աւազանեալս սովորութիւնը, եթէ միայն մեղաւոր ճանաչուածն ընդունում էր համքարութեան ներկայութիւնը։ Հասկանալի է ինքնըստինքեան, որ համքարական դատարանը կազմւում էր նոյն վարպետապետից և նրա օգնականներից։

Կարմակերպութիւն ասելը դեռ չի նշանակում չաների գործակցութիւնն առանց նեթական գոհարերութեան։ Միութիւնն այժ է, բայց ապրանքներ արտադրող և ապրանքատէր հասարակարգի մէջ այժ է նաև դրամը։ Համքարութիւններն համերաշխ գործակցութիւնից բացի պէտք է դրամական կարողութեան տէր լինէին, մանաւանդ որ նրանց ինքնօգնական և բարեգործական ջանքերն առանց դրամական գոհարութիւնների չէին կարող իրագործուել։ Այս պատճառով համքարութիւնները մատնում էին համայնական կայքեր և դրամարկղ ունենալ։ Նրանց եկամուտների աղբիւրներն էին). *1) օրհնանիք—վարպետի սկզբնական վճարը, երբ նա ընդունում էր համքարութեան մէջ, 2) ճիրագ—վճար առաջին անգամ առանձին խանութ բանալու համար, 3) դաստուրանաց—վճար աշակերտութիւնից վարպետութեան դառնալիս, 4) տարեկան չափով վճար նորածնունդ տղայ և աղջիկ երեխաների համար, քանի որ համքարութիւնը որոշ հոգս էր տածում նրանց ապագայի նկատմամբ, 5) ընծայութիւն դրամով և բերքերով նորապսակների տղամարդկանցից։ 6) նուիրատուութիւն՝ համքարութեան կազմակերպի անձերի թաղման ծախսերում մասնակցելու համար, 7) վճար վարպետ օրհնելու նախապատուութեան համար, 8) տուգանք՝ ա.) վէճի, կռուի, հայհոյանքի, խարէութեան և սուտասութեան համար, որ լինի թա ընկերոջ թէ կազմակերպի անձի հետ, բ.) գէպի կրնան անցած դաժան վարմունքի կամ ծնողներին պատշաճ յարգանք*

*) Ахвердовъ, գլ. II.

չըմտաուցանելու համար, գ.) խառնվանութիւնից և հաղորդութիւնից խուսափելու համար, դ.) ընկերոջ կամ կողմնակի անձի (եթէ հրաւիրուած է համքարութիւնը) թաղմանը չնեղկայանալու համար, ե.) եկեղեցական ծեսերի խախտման համար, զ.) վարպետ և ընդհանուր ժողովի որոշումները չկատարելու համար: Համքարութիւններըը հատասար բարեկեցութեան չափ կողմնակիցներ էին: Այդ պարագան ունի ցայտուն երեսակ է ապացնելու ասելիների չիշատակումից: Այսօր նրանք միևնոյն վարք ու բարքի մարմիններ են, բացառիկ կացութիւնների ժխտողը: Եւ հաւաքուած գումարները էլ գործադրւում էին հատասար բարեկեցութեան խախտումը կանխելու համար: Համքարական նկատումներն ամեն տեղ միևնոյն չափերը չունէին: Տիպի և հանգամանքների համեմատ նրանք փոփոխւում էին, սակայն մի պրսիթիւն միւտ էր կայուն—համայնքի անդամների բարը պիտի գոյուէր համայնական զոհարերութեամբ:

Համքարութիւնն իր մէջ ընդգրկում էր ոչ միայն ընտանիքների պատիւները, այլև նրանց ամբողջ վերադասութիւնը: Համքարութիւնը համայնապարփակ միութիւն էր: Այդ պատճառով էլ նա պատւում էր նրեխաների ապագայով, մտահոգւում էր որբերի և այրիների ապահովութեան մասին, հսկում էր ընտանեկան պարկեշտութեան վրայ և այլն: Սակայն պիտի ասել, որ համքարական գործերի վնկատողութիւնը գանւում էր վարպետների ձեռքին: Նրանց ընտանիքների մեղսած անդամները չէին մասնակցում համայնքի վարչական խնդիրներին: Մեռնող վարպետ-անդամի տեղը բռնում էր որդին, եթէ նա հմտացած էր լինում հօր արհեստին: Ընդհանրացած կացութիւնը սա էր. վարպետ որդին—վարպետ է: Այս իսկ պատճառով վարպետի ընտանիքը, նրա ժառանգը մի տեսակ արտօնեալ դրութեան մէջ էին: Այդ արտօնութիւնը գրացում էր նրանց, որոնք կամ մնում էին արհեստ սովորել և այսպէս ասած դրսեայի լինելով՝ պակասում համքարութեան: Նրանք պիտի ամբողջ տարիներ աշակերտ և վարպետացու մնային, մի շարք պահանջներն բաւարարութեան տային և նոր միայն՝ վարպետ օրհնուելով՝ համքարութեան հատասար անդամը համարուէին: Նախանձելի չէր աշակերտի կամ վարպետացուի կացութիւնը: Նրանք ոչ միայն

արհեստ սովրում էին, այլ և յոճախ վարպետի տան ապատուր: Ճիշտ է, նահապետական նիստն ու կացը մեղմում էին նրանց դրութեան մեայլ կողմերը, սակայն փաստը նա է, որ նրանք լսա մեծի մասին ձրի, մի փոր հացով աշխատողներ էին: Աշակերտութեան մանելիս նրանց ծնողները կամ խնամակալները վարպետի հետ պայման էին կապում՝ «Որպես յանձնում ենք քեզ, խակ քեզ Աստուն. նրա մեռը քեզ, սակայն ինձ. պատժիր ծուլութեան, անփութութեան ու անուշադրութեան համար և խոտա պատժիր, միայն թէ հիմնովին վարժեցրու արհեստի մէջ»:*) Աշակերտութիւնը նայած տեղին և արհեստի նրութեանը չափանակում էր 3—10 տարի: Աշակերտների թիւը սեղ-սեղ նիմարկում էր սահմանափակման: Համքարութիւնը պահանջնել էր առաջարում նաև հասակի և վարք ու բարքի նկատմամբ: Վարպետը համքարութեան առաջ պատասխանատու էր իր աշակերտների ու վարպետացուների տեղ և անթոյլատրելի արարքների համար: Աշակերտութեան համար պահանջող ժամանակամիջոցը անցկացնելուց յետոյ՝ աշակերտը վարպետի առաջ րութեամբ և վկայութիւնով դառում էր վարպետացուների (քարգահ) կարգում: Համքարութիւնը կարող էր քննութիւն նշանակել և փորձել նրա գիտութիւններն ու հմտութիւնը: Վարպետացու դառնալուց յետոյ՝ արհեստաւորը կարող էր վարձուել և որոշ միջոցների ու յայն փորձառութիւնների տէր դառնալով վարպետութեան կոչում առանալ համքարութիւնից: Այսպիսով երկար ու ծանր օրեր մաշելուց յետոյ նա արժանանում էր համարձի անդամութեան: Հարկաւ, թէ աշակերտները և թէ վարպետացուները լաւ և մանջ չէին առնում իրենց լուծը: Լինում էին և դժգոհութիւններ: Դրա համար էլ մենք տեսնում ենք, որ համքարական դատարանն իրաւունք ունէր վերահասու լինելու վարպետի և նրա աշակերտների ու վարպետացուների միջ ծագած տարաձայնութիւններին: Սակայն Անդրկովկասի համքարութիւնների պատմութիւնը վարպետացուների ուրոյն (արատ թէ դադանի) կազմակերպութիւններ չի ճանաչում կամ չի յիշատակում: Տարաձայնութիւնները հասնորէն անհատական բնոյթ

*) Ериазаровъ, էջ 98.

Էին կրում և վարպետի կամ համբարտեվեան ջանիերով էլ լուծում։ Պէտք է յիշել միայն, որ 60 ական թուականներին նկատում էր վարպետապետների ոգին շարժում Ալէքսանդրապոլում։ Այդ շարժումն ընդունել էր դասակռիւ լինելու ուղղութիւն։ Դա մասին խօսք կրլինի յետագայում։ Այսուհ նորից կրկնում ենք, որ չնայած այն տարբերութեանը, որ կար վարպետների և նրանց աստղագիտների մէջ, չնայած նրան, որ համբարտեվենը այդ աստղագետներին հատասար տեղ և ձայն չէր յատկացնում, նրանք իրենց ուրոյն շահերի շուրջը կազմակերպութիւններ չունէին և կանխամտածուած պայքար էլ չէին մղում։ Այդ երևոյթի բացատրութիւնը պիտի փնտրել նրանում, որ Անդրկովկասի քաղաքներն ու նրանց մէջ հրապարակ եկած համքարութիւնները չէին հասել զարգացման բարձր աստիճանի։ 60-ական թուականներին նրանք շօշափելի այժ էին կազմում։ Դուրէ այդ չէջանից սկսուէր համբարութիւնների մէջ երևան գալ նրբին նեղհակութիւնը, սակայն հէնց այդ ժամանակ էլ երկրի մէջ խիստ զօրացած տնտեսական և մասամբ էլ արդիւնաբերական դրամագլուխը մտցրեց հարուստ տարրից ոչ համքարական կարգերին և իր ազդակն դրեց երկրի տնտեսական և հասարակական կեանքի վրայ։ Ծանօթանանք այդ նոր այժի հետ։

Մենք արդէն ասել ենք, որ ռուսական ազդապետութիւնն իր հետ բերաւ կեանքի և ինչքի ապահովութիւն։ Դա անհետացրեց զարգացման համար կարևորագոյն պատճառ էր։ Սակայն ռուսական ազդապետութիւնը միայն այդ չբաւեց Անդրկովկասի ժողովուրդներին։ Ռուսների նոր պետականութիւնը տնտեսական զարգացման ուժեղագոյն գործօններից մէկն էր։ Նրանք մի շարք պատերազմներ վարեցին Անդրկովկասում և ռազմական գործառնութիւնների հետ միասին մեծ դաներ տնտեսական կեանքի մէջ։ Պարսիկն և Օսմանցին կարող էին պատերազմել և կողոպտել. Ռուսը պատերազմում էր և տևաւոր տնուժ. կողոպուտը վերջնիս համար ազատ չէր։ Այս նոր գրութիւնն ստացել էր բանում հարստանալու տնտեսական կապանների միջոցով, որովհետև զօրքին պաշար մատակարարելը, պետական հաստատութիւնների համար շինութիւններ

կանգնելը կատարում էին կապարներն եռանակով: Եւ ոչ միայն այդ: Անգամ տուրքերի գանձելը կապալային էր: Սրանք համարանքներ էին, որ առևտրի և արհեստի ամեն տեսակի համար պետք ունենային նշանակալից հատուցումներ: Եւ ունեցան էլ: Հանդէս եկան հայ կապալառուներ: Կապալառու լինելը նոյն իսկ դասային նշան դառաւ: Որն էր նրանց դրամականը, բանականաբնական ունեցվածքների և առաքինաբնական ունեցվածքների տէրը էին նրանք, վերջապէս, մէրքը էին այդ նոր մարդկի: Դիմենք պատմաբանի մատենարարած փաստերին:

Հայերը կապալով վերցնում էին տուրքերի գանձումը: Մի հին վաւերագիր*) մատնանշում է, որ 1808 թ. յունուի 30-ին Բագրեւ տուրքերը չորս տարի ժամանակով և 112,500 րուբ. տարեկան կապալով արուում են շուշեցի Բարա Թառումեանին: Վաւերագրի մէջ ասուած է, որ կապալառուն իր վճարած փոխարէն կարող կը լինի գանձել 251,430 ր. տարեկան: Այդ գումարը պետք գայանար հետևեալ աղբիւրներից. նախ՝ չուխայից, սպանդանոցից, խանութական այգիներից և խանութներից, հշտերից, օղիի և գինիի վաճառումից, երկու ձկնորսաններից: Արդիւնաւորների այս ցուցակը պարզում է այն պկղիկ գերը, որ կապալառուն խաղում էր տեղական մեսրոպեան կեանքում: Այդ կեանքի գործոցների առանձ նրա ձեռքին էր գտնում: Դիմենք առիչ փաստերի: Վերը մենք տեսանք էէ միաբերը գրեթե տեղ էր բռնում Անդրկովկասի գրեթեբերութեան մէջ: Միաբերան առանց գեղական տուրքերի էր գրում և նրա գանձումը հայերի ձեռքին էր**): Գանձակի նախկին խանութեան մէջ միաբեր կապալառուներ էին Զաքինեան և Ջամալեան, Ելիզէ գաւառում (նախ) Գրիգորեան, Տէր-Գրիգորեան և Իսմիրեան, Ջամախիի և Շուշիի գաւառներում հաւաքում միաբերը վաճառում էր ամերդով, իսկ Ղարաբ

---

*) Акты, т. IV, № 865.

**) Сводъ матеріаловъ, т. IV, ч. II И. Н. Шавровъ "Очеркъ шелководства въ Закавказьи".

դատի կատարողներն էին Լազարևան, Տեր-Ղուկասեան և Մխոյեան: Այսպիսով մենք տեսնում ենք, որ մատթէոս ատաբով 1830—1850 թ. թ. գրաւում էին մարդիկ, որոնք յետագայում Անդրկովկասի տնտեսա-արդիւնաբերական կեանքի մէջ խաշտր վարկի և ծանուան տէր էին (Մխոյեան, Պրիլուկեան, Իմիրեան և այլն).

Տուրքերի կապակից բացի կային և արդիւնաբերութեան այլ ճիւղերի կապակներ, ինչպէս, օրինակ, նաւթի, ձկան և այլն: Մենք արդէն տեսանք, որ նաւթի, կապակը 1808 թ. չորս տարի ժամանակով արուել էր Թաումեանցին: 50-ական թուականներից մինչև 1872 թ. այդ կապակը պահում էր Կուկոլևանի, Բարանովսկու, Տէր-Ղուկասեանի և Մխոյեանցի ձեռքին: Նոյն այդ ժամանակաշրջանում Քուռի ձուկաբուծարանի համար ձկնորսական գործիքները կապակով չեն տարածում են Մխիթարեանի, Արշակունի, տատ Անանեան: Այս կարգի կապակատուները այնքան հարստանում էին, որ 1854 թ. Կովկասի փոխարքայ Վորոնցովն իր յաջորդին թողած հրահանգի մէջ յատկապէս յիշում է և յանձնարարում նրանց: Նա գրում է. «Հայ առևտրականների մէջ կան անձինք, որոնք արժանի են առանձին ուշադրութեան, ինչպէս, օրինակ, պատուաւոր քաղաքացիներ Արշակունի և Մխիթարեան, որոնք չհետևելով իրենց և դանձարանի համար՝ վերցրած ունին Սալեանի ձկնարարանի տարին կապակը, անգամ (այսինքն՝ Թիֆլիսի—Դ. Ա.) քաղաքագլուխ Սվիշնիկեանը և մանաւանդ նահանգային քարտուղար և պետական Յովհաննէս Մխոյեանը, վերջապէս, չնայած մի մարդ՝ միշտ պատրաստ՝ ոչքան հնարաւոր է քիչ չափով իր համար՝ օգտակար լինել կառավարութեանը: Նա մեզ (այսինքն՝ կառավարութեանը—Դ. Ա.) ծառայել է շատ խոշոր ծառայութիւններ, իր վրայ վերցնելով այնպիսի գործեր, որոնց համար դանիացողներ չկային, կամ թէ գոնէով այդպիսիները և ոչնչով նրանց իր գրաւականով: Անհատարակ ես նրան յանձնարարում եմ ձեզ, որպէս ամեն կողմից հաւատարիմ և օգտակար մարդու. այսպիսի մարդկանցից ամենից աւելի նա ունի ծանութիւն և վարկ Մոսկուայում»:*) Իր այս պաշտօնական գրու-

*) Акты, т. X, № 71, Инструкція кн. Воронцова ген. Реаду, отъ 1 марта 1854 г.

*[illegible] մեջ վարժությունը հայերի մասին պատմել պրոմ է, որ
նրանք կատարյալ [illegible] պլատոր գործիքն են կապրների [illegible]
յանձնարարությունները համար և որ վախտագրած մրցումը նրանց
մեջ յոգուտ գանձարանի [illegible] գնելը։*

*Հայ կապրատուններին համար մի ամպրեզ ևս կար. պա-
զրելն պաշար մատակարարելն էր։ Այսպես գյուղ ունի տա-
րատնտես անասնապրիչ։ Կապրատուն գործ ունի պետական
գանձարանի հետ և այն էլ ամսական հաշտատած [illegible]
ամենան միջոցով։ Ձմռանը, գիշերով և հաշատատ կապ-
րատուն բայ պետք գանել իր առջ չհատատակուներին մի
լայն տրապարակ։ «Նրանք (հայերը—Դ. Ա.), կարդում ենք մի
հին տրատարակության մեջ, *) սկսել են Թիֆլիսի և ամբողջ
Անդրկովկասի անասնին. կատարում են ամեն կարգի յանձնա-
րարություններ, պահում են տեղական բոլոր կապրները. վերց-
նում են բոլոր ձևնարկությունները, կատարում են մատակա-
րարական յանձնաժողովների պարտականությունները։ Նրանք
[illegible] գործակալներ են, վիճակագրներ, գործակալներ. մի խոս-
քով, որ չհատիր հնարավորություն կայ, այնտեղ անպատճառ
գանում են հայեր։ Հետաքրքրությունը նրանց հոտերի և գր-
ծերի մասին չափազանց է»։ Այս վկայությունը հայերի մասին վե-
րաբերում է նախորդ դարի 30-ական թուականներին, երբ քիչ
առջ վերջացել էին ռուս-պարսկական և ռուս-թուրքական
պատերազմները. երբ դեռ ևս շարունակում էին ռուսների
բարեացակամները Կովկասյան լեռնականների հետ։ Այդ նոյն ժա-
մանակաշրջանի մասին հետաքրքրական և ճիշտ դիտողություն-
ներ է անում հայ պատմաբան Ա. Երիցյանցը։ Նա էլ ընդգծ-
ում է պատերազմների հետևից հայերի մեջ յուրացած վե-
րաբերությունները։ «Հարկ է ասել, գրում է Երիցյանը, **) որ
Պասկևիչը ունի ձեռնտու էր համարում զորաց թէ պաշարի
մատակարարությունը և թէ անհատական մեր պահանջները*

---

*) „Обозрѣніе Россійскихъ владѣній за Кавказомъ", С.-П.-Б. 1836 г. ч. I, *էջ* 199.

**) *Ալ. Երիցյանց՝ «Անհայն Հայոց վարքագրությունը և կո-
չակ Հայք XIX, դ.», հ. I, էջ* 442—447.

յանձնել աճուրդով մասնաւոր անձանց, քան թէ կառավարել ապագայ ժամանակների պէս ակտիվեան պաշտօնէից ձեռքով։ Ընդհա այս նեղմտածուած կարգ ու կանոնների, օսմանեան պառլամանտում Պաուկինչի արած անհետաքրքիր ծախքը հարիւր վից մինիոն լուրլի թղթադրամի, որ համեմատարար շատ քիչ էր։ Այդ կարգ ու կանոնները առեղծեցին և կազմակերպեցին ժողովրդի մէջ մի առանձին դասակարգ «փորթմէյնէ» անունով, որ միանգամայն կայացած էր հայերից։ Սոցա էր յանձնուած գործերի ժամակարտարութիւնը, ճանապարհների յարդելը, շինութիւնների կառուցանելը, ծանրութիւնների տեղափոխելը և մեծ բանից այն ամենայն ինչ, որ կարևոր էր բանակի անհետաքրքիր կառավարութեան համար։ Այդ «փորթմէյնները» շատ նշանաւոր ծառայութիւններ մատուցին ռուսական գործին ու ամենք պատուհասներով պարգևատրուեցան։ Իրանց ճարպկութեամբ և աշխատասիրութեամբ նոքա գրաւել էին գործակատարց ուշադրութիւնը և երբեմն այնպիսի փոխուկ յանձնարարութիւններ էին կատարում, որ միանգամայն կրկնապատիւ էին պինուտրական և կամ քաղաքական պաշտօնէից։ Ամն Թիֆլիզից փորթմէյն Քալինեան, որ բանակին մեծ մատակարարութեամբ բաւականին հարստութիւն վաստակից, մի խումբ լրտեսներ էր պահում և նոցա միջոցով ամենամեչնչին տեղեկութիւններ էր հաղորդում պարտպետին թշնամու մասին։ Մեչտ գործից հետ լինելով և շատ անգամ էլ իրանից անձը վտանգի ենթարկելով, մի քանի փորթմէյն տալը կարճ միջոցում նշանաւոր հարստութեան աէր նոքա և շատով փորթմէյը այնքան հրապուրիչ գործ, որ սրտնաստից ակամայ մինչև ատամնաւորը, թողնելով իրանց պատմանքը, հետամուտ էին փորթմէյ դառնալու և այդ միջոցով հարստանալու։ Թէև փորթմէյ դիմողները ամենքը չհարստացան և շատ շատերն էլ միանգամայն վնասուեցին, բայց մի քանիսի օրինակների պատճառով հասարակաց բերանում «փորթմէյ» և հարուստ բառերը հոմանիշ դարձան։ Այդպէսով ահա ժողովուրդի այս նոր դասակարգը իր արատների վայրով պատուհասի դերք բանից և ամենքների աչքում գերատեսում էր նոր պինուտականների կարգից"։ Երեցեանցը ասում է, երբ կա-

ծում է, թէ կապալառուները բարձր համարում ունէին միայն ռամիկների աչքում։ Ո՞չ։ Նրանք պրամատէր էին դարձել. պրամն այժ էր, որ հպատակեցնում էր և քայքայում։ Նա միևնոյն ժամանակ յարդի էր և կառավարութեան աչքում։ Ամեն մի ընչասէրի չէր կարող կապալներ վերցնել, իսկ կառավարութեան համար կապալառուներն անհրաժեշտ մարդիկ էին։ Մենք անում, թէ ինչ վիայութիւն էր տալու նրանց մասին իրը գործակատար Փախտչիայ Իշխան Վարոնցովը։ Կապալառուներն երկրացանկի համար առնելի էին, որովհետև նրանք «կարում էին ազգի անունը օտարների առաջ»։ Այդ մասին նա մտրում է. «Սակայն որքան որ մեծ լինէր վաղեմիների առած օգուտը այնքան ևս մեծ և նշանաւոր էր յառաջացրած վնասը՝ անբարոյականացնելով նահապետական համեստութեամբ ապրող հայերին և կտրելով ազգիս անունը օտարների առաջ։ Հետամուտ լինելով կարճ ժամանակում հարստութիւն դիզելու, հայ վաղեմի չին կեղեքում էր երկրագործ գիւղացուն և քաղաքացի արհեստաւորից ու ամեն ցածութիւն, անխղճութիւն առնապարութեամբ էր առնում»։ Կապալառուներն իրենց գործառնութիւնների մէջ պինդ բռնած ունէին կաշառքի միջը։ Կաշառքը նրանց առաքինութիւններն էր անցել։ «Պաշտօնէից կաշառք առնել, նա լսեցնել էր տալիս իւր գլխած ազգայնոց բողոքները և կարծում էր ծածկել իւր սուտը, կեղծը, խարդախութիւնը և անպատիւ շահասիրութիւնը։ Կաշառք առնողները կաշառք առնում էին և չնորհակալութեամբ թօթռնում տուողի ձեռքը, բայց իրենց մէջ կատում էին այն կարծիքը, թէ հայը խարեբայ են, քաու, ցածահոգի, գրամ պաշտող և միայն բանիւ անբարոյական ժողովուրդ»...*) Երիցեանցը

*) Վաճառական թուղթերին Փիլիպոսում հրատարակած «Առևտրական շարադրութիւնքն» որի գլխաւոր աշխատակիցն էր Երիցեանցը։ Այդ թերթի համարները լի են ծանուցումներով տրամկապալների և աճուրդների մասին։ Ինչ գրատպարանի էր 30 տարի թուականների համար՝ հասանելն հանդուրժելի էր 60-ական թուականներին։ Եւ դա հասկանալի է։ Հին գիշատիչ կապալառուն երկար տարիների տարբերութեան գրագրակցում էր երևում և հրով կերպարանք չունէր։ Նա արդի մարդ էր գառնում։

Զարմին պաշար մատակարարող կապալառու էր և ներսիսեան դպրոցի բարերար։ Ինձ ասացին, որ մահը սպրում էին 60-ական թուականներին.

ուել է օրերին պաշար մատակարարող կապալառուների անվճելի պատիվը: Նրա հարստանալու մասին կասկած չի կարող լինել:

Այժմ մեզ համար պարզ է հայ կապալառուի դեմքը: Նա առևտրական պրամադլխի ներկայացուցիչն է, որ միջնորդի դեր է կատարում ապառոի և արտադրի մէջ: Այդ արտադրին էլ քաղաքներում համքարութիւնն է, գիւղերում—երկրագործը: Սակայն կապալառու-միջնորդը չէր կարող միշտ բաւարարուել սոսկ միջնորդական դերով: Այդ հասկանալի էր, երբ նա գիտ աննշան նեղմտականի տէր էր: Նեղմտութիւնը պահանջում էր դրանից, որ նա ձգտէր ունել դրամի ապահովութիւն գոնէ արտադրութեան և շուկայի վրայ, նա պիտի իր կամքը թելադրէր արտադրողներին և նոր ուղղութիւն տար ազգ անհատական կեանքին: Ասելիս նա պիտի կամենար անձամբ մասնակցել արտադրութեանը: Եւ դա ոչ թէ սրտէս անմիջական ուզածութիւն, այլ սրտէս աշխատանքի կազմակերպող, ուրիշների բանատրական ոյժը չհատցնող: Հէնց այդ ուղղութեամբ էլ ընթացաւ կապալառուների դասը: Հիմնարարելով քաղաքներում: նա նախ և առաջ ձեռնամուխ եղաւ գործ անելու առևտրական հրապարակի վրայ: Սակայն այստեղ տիրում էր համքարութիւնը: Նրա միահատուած գործառնութիւնները և ապրուստի առաքինութիւնները պատուար էին լայնածաւալ և ազատ ձեռնարկութիւնների դիմաց: Նոր առևտրականն իր համեմատարար խոշոր դրամագլխով չէր կարող անցնել համքարական անձուկ շրջանակների մէջ: Նա իր տեղ բերում էր մրցում և սրընթացութեան անյագ պահանջ: Շուկան պիտի մնար ազատ գործունէութեան և ոչ թէ գործարը հաշուի պիտի նայէր ինչ որ կազմակերպութեան տեղ: Եւ գործարները պիտի միջէին միմեանց մի կազմակերպութիւն, որ գալիս էր չափ ու սահման դնելու նրանց անդրմանին: Հասկանալի է, որ պիտի պայքար պատէր վարքամոլած կապալառուների և համքարութիւնների միջև: Այդ պայքարը պիտի տեւեր մինչև վախճան 50-ական թուականներից: Նա ընդունում է այնպիսի չափեր, որ իր վրայ է գրաւում և իշխանութեան ուշադրութիւնը: Անկարելի նկատել, որ կառավարութեան կամքն էր իշխանութեան ա-

*Ջակցութեամբ և կառավարական միջոցներով լուծել հարբատական կազմակերպութիւնները։ Այդ հանգամանքն է վասն որ Ջարդի ուշացրութիւն է դալիճում Գալիսից հետացող իշխան Վոլկոնսկուն։ Նա գրում է. *) «Հայ առևտրական և տհնտսական դասերի մէջ կայ մի հիմնարկութիւն, որի մասին ես կարող եմ համարում ձեզ մի քանի խօսք ասել, որովհետև երկու էլ երեք տարի առաջ շատ է խօսուել նրա մասին, շատ կշռամբանքներ և չափազանցութիւններ են եղել նրա առթիւ։ Այդ դժգոհութիւնը բղխում է մի քանի հայ առևտրականներից և արել շատ անփոյթ շահի արդիւնք է։ Անարկածս հիմնարկութիւնը հարբատութիւն է, որին՝ հինաւուրց սովորութիւնների համաձայն՝ անդամագրում են տեղացի մանր առևտրականներն ու արհեստաւորները։ Հարբատութիւնները հին և մասամբ նոր եւրոպական կոոպերացիաների նման օգտաւէտ են նրանց համար, որոնք անդամագրուած են նրան, բայց նրանք վնաս էին բերում այն պատճառով, որ հին սովորութիւնների համաձայն և առաջնորդում՝ առ և օտարերկրացի արհեստաւորները բացակայում էին շնորհիւ՝ առնծում էին կատարեալ մենաշնորհութիւն և արդիւմ ամեն մի մրցութիւն՝ լինի դա օտարներից թէ անդամագրուածների մէջ։ Նրանք վարպետապետներին միջոցով ստիպում էին ենթարկուել այն բոլորին, ինչ արդում էր համքարութեան կազմից և յայտնում անդամագրուածներին, այլևս ոչ մեր առևտրական և արհեստաւոր դասին։ Թիֆլիսի բնակչութեան շատացումն և Ռուսաստանից ու օտարերկրներից անդա նկած զանազան արհեստաւորների ներկայութիւնը հանէր բերին նոր հանգամանք.—հարբատութիւնները առնծում են մեծ անյարմարութիւններ, իսկ նրանց վարպետապետները պատճառում են մեծ նեղութիւններ։ Շատ ծրագրներ է ներկայացել, որոնք համարեա թէ բոլորը առնում էին դէպի համքարութիւնների կատարեալ աչնչացումը։ Ես դրան չեմ կարող համաձայնուել»։ Վարինցովը բացատրում է, թէ ինչու ինքը չի համաձայնուել աչնչացնել համքարութիւնները։ Նա ասում է, որ

*) Акты, т. X, № 71, Инструкція кн. Воронцова ген. Реаду, от 1 марта 1854 г.

նա ձևոք չբերթրացրնց այդ հինաւուրց հիմնարկութիւններին վրայ ի նկատի ունենալով նրանց հասարակական օգտակարդիրը: Նա մէկ-մէկ յիշում է համքարութիւնների առաւելութիւնները. նրանց ինքնօգնութիւնը, բարեգործութիւնը, բարքերի վայելչութեան և կարգի խաղաղութեան նպաստելը և այլն: Ի միջի այլոց նա յիշում է, թէ ինչպէս համքարութիւններն ամրողջ համայնքներով և անձնական աշխատանքով նպաստելին հոգևոր ճանապարհի շինութեանը: Եւ ասելացնում է, որ համքարութիւնների վնասակար մնաչնորհի առաջն առնելու համար նա բաւականացաւ նրանով, որ կարգադրից նրանց նիստութիւններ չպատճառելու այն բոլոր անձերին, որոնք կամենում են գրաղուել առևտրով և արհեստով առանց անդամագրուելու համքարութիւններին: «Համքարութիւնները, գրում է Վարոնցովը, այժմ էլ քաղաքի կարիքների համար նոյնչափ օգտակար են, ինչ որ առաջ: Այս գործի վրայ ես ծանրանում եմ այն պատճառով, որ համոզուած եմ, թէ եմ բացակայութեան ժամանակ ձեզ պիտի պանգատուին համքարութիւններից և գոյն խնդրին նրանց աչնչացման մասին: Նախորդը է առաջ անհետանք թողնել նման դիմումները և միայն հակել, որ համքարութիւնները գործերն առևտրով և արհեստով զարգացնելի համար չըգգանն գարգացիր գործելու իրենց կանոնները:

Վարոնցովը համոզուած էր, որ կարիք չկայ կատարեալ կան մի տարուածով վերջ տալ համքարութիւններին, քանի որ նրանք սահմանական իրաւունք չունէին իրենց շարկապելու մի արհեստի կամ գործարանքի բոլոր ներկայացուցիչներին: Ձեչա է, համքարութիւնները նման ձգտումներ ունէին և հենց դժգոհութիւնները ծագում էին այդ հանգամանքից, բայց Վարոնցովը կանում էր, որ գրա առաջը կարելի է առնել արդիւնով համքարութիւնների նման պահանջները: Միւս կողմից նա անում է, որ երկրական ձեռք արդիւնաբերութիւն և առևտուր գործանում են նաև Անգլիայում: Այդ երկրի ինքնին քայքայիչ պարագայ էր համքարութիւնների համար: Համքարութիւնները յուզում էին հենց այն պատճառով, որ չէին կարողանում մշտական հանդիսանալ նոր անհատական պայմանն-

բան Հրապարակի վրայ ուժգին պայքար էր տեղի ունենում. կամ համքարական սահմանափակում և հատուկ բարեկեցության կամ թէ ազատ առևտուր և արդիւնաբերութիւն, ապա և անհատական գործադրման նոր փուլեր: Վարդանովը չէր կամենում թէկուզ հանդիսանալ մէջնադարեան (այնինքն համքարութիւններին) և կանգնել հասարակական գործադրման անխոչ: Նա մխիթարական ժամանակ դէմ էր նրան, որ մի հարուածով աչքընչացնելն հինաւուրց հաստատութիւնները. նա կամենում էր, որ նոր անհատականը յաղթանակէ աստիճանաբար և առանց ցաւերի ու ցնցումների: Այս պատճառով նա հակառակում էր համքարութիւնների արմատնախութեան, նա հակազդեցութիւն էր կազմակերպում նրանց վրայ և հարցի լուծումը թողնում էր իրերի զարգացման ընթացքին:

Վարդանովն իրաւացի էր իր կասկածների մէջ, որ նոր դիմումներ պիտի լինեն համքարութիւնների աշնչացման համար: Նա իր տրահանգը գրել էր 1854 թ. մարտի 1-ին: Իսկ 1854 թ. հոկտեմբերի 24-ին Թիֆլիսի զինուորական նահանգապետը դիմում է փոխարքայի պաշտօնակատար գնդապետ Բէտգին և նրա ուշադրութիւնը հրաւիրում համքարութիւնների վրայ *): Զինուորական նահանգապետն իր դրի մէջ նկարագրում է այն դժուարութիւնները, որ առաջացնում են համքարութիւնները առևտրի և արհեստի մէջ: Նա գտնում է, որ համքարութիւնների կատարեալ աչնչացումը կարող է առաջացնել անցանկալի խլրտումներ և խորհուրդ է տալիս այդ միջոցի իրագործումը յետաձգել ուրիշ յարմար ժամանակների, սակայն հնարաւոր է համարում առայժմ գոնէ արգիլել առևտրական համքարութիւնները: Նահանգապետը միայն իր նրի կարծիքը չէր տալիս: Նա համերաշխօրէն գործում էր Թիֆլիսի բարեքարչական վարութեան հետ, մի հաստատութեան, որի գլուխը գտնում էր փարթամացած խոշոր բուրժուազիայի ձեռքին և որը համքարութիւնների անհաշտ թշնամին էր: Թիֆլիսի կապալառուներից, խոշոր առևտրականներից և անասէրներից բաղկացած այդ

*) Акты, т. XI, № 846, отношеніе и. д. Тифл. военнаго губернатора полк. Колюбакина ген. Реаду отъ 24 окт. 1854 г.

ներկայացուցչությունը չէր հաշտում այն հանգամանքի հետ, որ արհատաւորական եամ առևտրական շուկայում կարող է կարմակերպուած դիմադրութիւն լինել։ Կառուցած էին մանուանող անասէրները (ասկի ճիշտ խանութներին, քարտանատունների տէրերը), որովհետև համքարութիւններին ասկորութիւնը պետութեանը վարձել ամբողջ համայքներով առնձ էր դնում նրանց ախորժակին և թոյլ չէր տալիս բմահաճօրէն բարձրացնելու բնակարանների վարձը։ Դէպի համքարութիւնները ատած թշնամութիւնը հասնում էր այնպիսի չափերի, որ Ղրիմի պատերազմի շնորհիւ առնծուած կինատական մխիթարների թանութիւնը հասարում էր նրանց մեացած ջանքերի արդիւնք։ Թիֆլիսի քաղաքային ինքնավարութիւնը հրապարակով չէր գրնում համքարութիւնների դէմ. նա կամենում էր իշխանութիւնն էր ձեռքին գործիք դարձնել և լուծել աչքի փուշ դարձած կազմակերպութիւնները։ Նա օգտում էր այն կապերից, որ ունէր կառավարական շրջաններում։ Վիրջապէս, նա ինքը մի հինավուրց հաստատութիւն էր և ամենևին նման չէր յետ ընկած անկիւններում կուչ եկած արհատաւորների և մանր առևտրականների հրապարակով չճանաչուած կազմակերպութիւններին։ Եւ համքարութիւնների համար այս տպաւորութիւնը հանդէս եկան երկու տղոցից մատուրական—Գէորգ Ախվերդեանն և Պետրոս Զանչեանը, որոնք իրենց արտին մօտ ընդունելին նրանց չահերը և իշխանութեան առաջ յաուկ դիմումներով պաշտպանեցին նրանց գոյութեան իրաւունքը։ Ախվերդեանն և Զանչեանը իրենց պաշտպանութեամբ հրապարակ եկան 1857 թ., երբ Կովկասի Փոխարքան էր իշխ. Բարիատինսկին։ Այդ ժամանակ էնորից առ բնաւորութիւն էր առացել համքարութիւնների խնդիրը։ Ախվերդեանն և Զանչեան իրենց գործունեութիւնը սկսարում են համքարական կազմակերպութիւնների էութիւնը, նրանց բարձր արժանիքները բարեգործութեան և առաքինի վարքի բարքի տպաւորութիւնների և համոզում են իշխանութեանը մի խառը պրամատիկի միտն ձեռք չքաւ այդ հինաւուրց հաստատութիւններին։ Ախվերդեանն այդ նպատակով գրում է. *)

*) Ахвердовъ, гл. I, §§ 2.

«Նրանք (այսինքն՝ համքարութիւնների թշնամիները. Դ. Ա.) չնայելով այն բանին որ այդ հանդամանքները (համքարական կազմակերպութիւնները. Դ. Ա.) նպաստում են միայն բարի կանոնների հաստատման և երկրին մեծ օգուտներ ընդունած գիների պահպանման՝ դարերից են, որ համքարութիւնները ատամնում են նրանց կամայական վարմունքները: Նրանք ձգտում են աչնչացնել համքարութիւնները, որպէս հատարակական բարեկեցութեան և խաղաղութեան համար վնասակար և վտանգաւոր հիմնարկութիւններ, և դարդում՝ նոյնիսկ չեղած յանցանք են բարդում նրանց վրայ, անուանելով գաղտնի ընկերութիւններ: Դրա համար նրանք պահանջում են իշխանութիւնից համքարութիւնների բան վերացումն և հալածանքը, այն ինչ համքարական կազմակերպութիւնը յայտնի է իշխանութեան և Թիֆլիսի բոլոր բնակիչներին: Դրամատէրերը չեն համակրում, որ համքարութեան անդամները անպատակցօրէն մի բանաւոր դիտումով իրար են դուգորդում ապրուստի միջոցների մի բաժանումն աշխատանքի և արտադրութեան մէջ: Նրանց համար յանկանալի է իրենց ձեռքը կենտրոնացնել արդիւնաբերութեան և առևտրի որոշ ճիւղերը, որոնք, նրանց տեսակէտով, Թիֆլիսում պէտք չափազանց շահաբեր լինեն: Սակայն նրանք տեսնում են, որ համքարական նկրկոյ կազմակերպութիւնն անհնար է դարձնում նրանց ձգտումն ուժով մենաշնորհութիւն ստեղծելու և աշխատում են բոլոր միջոցներով քանդել այն: Յանուն արդիւնաբերութեան ազատութեան՝ նրանք պահանջում են նրա աչնչացումը, որպէս մենաշնորհի տրիւրի, որը հատարակական բարեկեցութեան վտանգող է, և մի փոքր չեն մտահոգում, որ իրենց հարստացումով՝ տասնեակ հազար մարդիկ պէտք կայացութեան ծայրագաւառում վերջնին մուրացկի մոպակը և մշտական հոգս պատճառեն կառավարութեանը»: Ակնհայտօրէն այստեղ պարզաւում է, որ համքարութեան թշնամիները իրենց նեղ շահերով տարուած դրամատէրերն են: Նրանք պարտադրութիւնը և արհեստի ազատութիւն են պահանջում, բայց մի նպատակով, որ իրենց նիւթական զօրութեան շնորհիւ հրապարակի միակ տէրը դառնան և տեղծեն մենաշնորհներից վատթարագոյնը:

Համբարձումիանների արտայայտած հակառակորդներն էին պաշտօնեայ Իմմիրեանը և Գալկաի Գլխաւոր վարչութեան խորհրդի անդամ բարօն Նիկոլային։ Իմմիրեանը պաշտպանում էր Թիֆլիսի քաղաքային ինքնավարութեան տեսակէտը, *) որ համբարձումիաններն պիտի ոտքի ելնէին։ Համարեա նոյն տեսակէտն էր պաշտպանում նաև բարօն Նիկոլային։ Վերջինիս կարծիքով կարելի էր թողնել արհեստաւորական համբարձումիանները, իսկ առևտրական համբարձումիանները պիտի միանգամից ոչնչանէին և հալածուէին, որպէս գաղտնի ընկերութիւններ։ **) Նրանց կազմակերպողները պիտի պատժուէին, որպէս քրէական յանցաւորներ։ Բարօն Նիկոլայի մէջ խօսում էր բիւրոկրատի խնամակալող ոգին։ Ակներեւ առում էր, որ համբարձումիանները նրանց կազմակերպուած լինելը երբէք պատճառ չեն համարել, որ Թիֆլիսի բոլոր բնակիչները ճանաչում են նրանց պաշտօնատարներին և այլն, իսկ Նիկոլային խօսում է նրանց պատճառ լինելու մասին։ Հարցը պարզում է այն ժամանակ, երբ մենք ի նկատի ենք ունենում սահմանադրական պետութեան կարգերը։ Այստեղ պատճառ է այն բոլորը, ինչ իշխանութեան թոյլատրութեան ներքև չի կրում իր վրայ։ Անգլիայում համբարձումիանները պետութեան ոստիկան հսկողութեան տակ էին։ Այդ հսկողութիւնից անցել էր 60 տարի, որի ընթացքում նրանք սպասելն դադարել ու ապրուստ էին։ Եւ ահա 60 տարի անցնելուց յետոյ բիւրոկրատը նոր միայն գլխի է ընկնում, որ իր ամենահաս բազկից խուսափում են ինչ որ միութիւններ։ Ուրեմն՝ խնամակալել, հսկել. կարող է գաղտնիք լինել, կարող է վտանգ ապառնալ։ Եւ դա ձեռնտու էր փարիսեցած բուրժուազիային։

Անկախ այն հալածանքից, որ փարիսեցած բուրժուազիան վարում էր համբարձումիանների դէմ, անհետական կեանքի դարպասումն էլ մահ էր նրանց միութիւններին։ Անգլ-

*) Վարանցովին նեղկուլտացրած իր վերաբերման մէջ Իմմիրեանը միշտ է, որ ինքը անհատէր է, իսկ համբարձումիանները թոյլ չեն տալիս նրան իր կամքով նշանակել խանութների վարձը։

**) Ахвердовъ, гл. II, էջ 30—32.

կոլկաթի մնակական-հասարակական յատկութիւնները ամբացել ու ակրտացել էին Ռուսաստանի և արտաստմանի հետ, որ նշանակում է, թէ մեր երկիրը մնակոտակէս կախման մէջ էր պրուել ունի զարգացած աշխատանքի հետ և զուտարտադրական-արդիւնաբերական մրցումը ընդհանուր չուկայում: Այս երևոյթը ունում էր մանր արհեստի և մանուֆակտուրայի միջև, այսինքն կործանում էր արդ մնակական կայունութիւն և ապահովութիւն և տպևկան չուտրում առաջ հայ քաղքենիութեան միջավայրում: XIX դարի 50-ական 60-ական թուականները հայ-լուսաւորչական հասի մէջ սուր բնոյթ կրծնական երևոյթութիւն, որ անդրադարձում էր նիւթական յետաշրջման՝ և մեր յետամնաց միջավայրում ընդունել էր կրծնական բնոյթ:

Հ. Գուկասեանց, որ գրել է բողոքականութեան ծագման պատմութիւնը հայերի մէջ), իրեև փաստ յիշում է, որ Զամախում դէպի բողոքականութիւնը հակում էին չոյց տալիս գլխաւորապէս արհեստաւորները: Զամախի «հերձվածների» գլխաւորներն էին գինագործ Գէորգ Համբարձումեանցը, հիւսն Ոսկանը, համեմատած վերը ծուռ Եսային, կօշկակար Ծկրտա Ռուսանը և այլն: Գինագործ Գէորգի որդին—Սարգիս Համբարձումեանց—Էջմիածնում բողոքական գործոյն անցած մի մարդ էր, պահում էր ուսումնարան և նոր գաւանանքի գլխաւոր մատուռ այժն էր: Հայ-լուսաւորչականների կշտամբանքներին, որ «հերձվածները» լում են պատճառական նկատելի և ազգային ինքնուրոյնութեան հիմնական կազմակերպութիւնը—նորակոչ բողոքականները պատասխանում էին, թէ վախչում են շռայլութիւններից: Բողոքականների շռայլութիւնը և անհամեմատ կեանքը մեծ առաւելութիւն տուին լուսաւորչական գաւանանքի հետ: Այդ պատճառանը տուին նրանք նաև Ամենայն Հայոց Կաթուղիկոսին: Գարդ կեանքի և խնայողութեան երկրպագումները հաշակելով իրենց, բողոքականները կազմակերպել էին նաև ընդհանուր փոխադարձ օգնութեան դրամարկղ, որից օգնութիւն էին առանում չքաւոր-

---

*) Հ. Գուկասեանց. «Բողոքականութիւնը Կոլկաթա Հայոց մէջ». Թիֆլիս, 1886.

նելը։ Բողոքականների նման գործունէութեան ազդեցութեան տակ Զամախիի հայ լուսաւորչականները առաջնորդի հետ միասին համախոհական կազմեցին, որով խոստում էին անում հրաժարուել չտալ ծախսէրից ու ձէռներից (հարճախօսութիւն և այլն)։ Ալիքսանդրապոլում բողոքականութեան խիստ տակաւոութիւն էին ցոյց տալիս վարպետները, այն ինչ դէպի նոր դաւանանքը տակուն ունէին վարպետացուները (քարդահ) և առատապակ առին ժողովուրդը։ Եւ այսպէս վերաբերմունքը միանգամայն տանելի էր. վարպետները ապահով էին և չահագործող, այն ինչ վարպետացուները անասելի կախեալ վիճակի մէջ էին գտնում։ Տնտեսական ներհակութիւնը այստեղ ընդունում էր կրօնական գոյութեան և անհամաձայնութեան կերպարանք։ Երրորդական միջնադարը ճանաչում է քարդահների ուժեղ կազմակերպութիւններ և շարժում վարպետների դէմ։ Մեր մէջ համբարական կազմակերպութիւնները չնայած երկար գնութեան՝ դանդաղ պատճառներով չէին հասան երկար գործունէութեան գագաթնակէտին։ Նրանք միշտ մնում էին թուլութիւնից։ Թոյլ համբարական կազմակերպութիւնները թոյլ և անկազմակերպ վիճակի մէջ պահեցին քարդահական խաւը։ Գանէ մենք վկայութիւններ չունենք նրանց առանձին կազմակերպութիւնների և շարժումների մասին։ Միակ յիշատակութիւնը Հ. Ղուկասեանցի վկայութիւնն է, թէ Ալէքսանդրապոլում քարդահները հակամիտ էին բողոքականութեան, որ նշանակում է, թէ նրանք զգում էին երկրից վիճակի առանձնայատկութիւնը և կրօնական անհամաձայնութեամբ էին դրսեւորում անտեսական հողի վրայ սերտուած գործունէութիւնը։

Այն, բողոքականութեան ծաւալումը հայութեան մէջ մենք նկատում ենք, որպէս արդիւնք այն վտանգի, որ սպառնում էր մանր արհեստին առևտրական խոշոր կապիտալը և ծայր առնող կրծատրանային արդիւնաբերութիւնը։ Ջուրած քարքինները անկարող էին բացատրել բարդացած և զժուարացած կեանքի պատճառները և նրանք երկիւղածօրէն կառչում էին կրօնին, մանաւանդ որ նա պահպանութեան, խնայողութեան, և պարսածութեան ուսմունք էր նաև։ Սակայն եթէ Զամախում

և Ալէքսանդրոպոլում չնորհիւ այդ քաղաքների յետամնաց մըթնոլորտի անտեսական ներհակութիւնը ընդունել էր կրօնական ժժտութեան կերպարանք, այդ միևնոյնը չըկրկնուեց Թիֆլիսում, որը Անդրկովկասի առաջնակարգ անտեսական կենտրոնն էր և իր մէջն էր ամփոփում նաև երկրի հոգևոր աղը։ Արդէն տեսանք, որ այդ քաղաքում յունական թուականների համքարութիւնները չարժման մէջ էին և հրապարակի վրայ ունէին թէ ուժեղ հակառակորդներ և թէ անձնուէր բարեկամներ։ Այսպէս համքարութիւնների հասարակական և տնտեսական դերը պարզ կերպակցում էր երկու կողմերից և սկսած այդ քաղաքի ու ժժտութեան մթնոլորտը չէր քօղարկում կրօնական դպրոցներով ու խնդիրներով։ Թիֆլիսի քաղաքային վարչութիւնը, որ արտայայտում էր խոշոր առևտրականների և տներէրի շահերը, սկսած 1859 թուից քայլ առ քայլ զանազան հրահանգներով ոչ միայն սահմանափակում էր առեստական համքարութիւնների պրծառնութիւնները և ժժտարացնում նրանց գոյութեան պայմանները, այլ և այդ նոյն քաղաքակա-նութիւնը կամենում էր կամենում առնել նաև արհեստական համքարութիւնները։ Քաղաքային վարչութիւնը իր նպատակ քաղաքականութիւնը հասցրեց այնպիսի չափերի, որ համքարութիւններին հրապարակական ցոյցի հանից իր դէմ։ 1865 թ. ամառը համքարութիւններին յարած առևտրական և արհեստաւոր բազմութիւնը զաղափարից իր պարտպմունքները և ամբոխով յարձակուեց քաղաքապետ Գալուստ Ջերմպանեանի տան վրայ, որ քաղաքի այդ ներկայացուցիչին պահ բերէ իր մտքին ու վերժինդրութեանը։ Ջերմպանեանը կնոջ հագուստով մի կերպ ազատուեց կատաղած ամբոխի ձեռքից, իսկ նրա տունն ու կայքը ենթարկուեց չարդ ու փշուրի։ Յափշտակելով իր վերժինդրական ծարաւին՝ համքարութիւնները գործեցին քաղաքից և բանակ դրին Կոջոլանքի վերնմանատանը։ Քաղաքի խանգարուած կարգը վերականգնելու համար իշխանութիւնը ստիպուած էր օգը կանչել։ Արքունի ապատնաւիքը խնամեցրեց համքարութիւններին և նրանք վերադարձան իրենց նախկին պարապմունքներին, հարկաւ, ստիպ ստիպ

նաամանք և պոնք իրանց ցույցի ու արարքի համար*)։ Համքարությունների հին հակառակորդ բարօն Նիկոլային հետևյալն է գրում այդ ցույցի մասին. «Թիֆլիսի 1865 թ. վարչական անկարգությունները ցույց տալն, որ այդ կերպ՝ առանց կառավարության կողի՝ միացած կորպորացիաները կարող են վնասակար լինել նաև հասարակական հանգստության համար»**)։ Պետք էր հասատանել այդ կառավարական կողը, որ վերանար հասարակական հանգստության սպառնացող վտանգը։ Եւ նա հաստատուեց 1869 թ. ապրիլի 5-ի օրինադրությամբ։

Նոր օրինքի էությունը հետևյալն էր. մօտ 80 համքարությունները դադրեցան իրաւունք ճանաչուց միայն 17-ի համար, քանի որում եղած միությունները ամանք վերացուցին, իսկ ամանք՝ միացուցին։ Այս իրաւունք արուց համքարությունների մէջ մտնելու միմիայն արհեստաւորներին, բայց ոչ առևտրականներին։ Ամեն համքարություն պիտի ունենար իր կառավարությունից հաստատուած արհեստապետը։ Բոլոր կառավարություններից ճանաչուած համքարությունները ենթարկում էին Արհեստաւորաց վարչության (Ремесленное Управленіе), որը իր ներքին մասում էր բարեքարին վարչության կարգի մէջ։ Օրինքը յատուկ կարգ ու կանոն տակ դրաւ նաև համքարությունների ընտրական եղանակը և ներքին կեանքը։ Վերացնում էին ուղղակի ընտրությունները և սահմանում երկաստիճան ընտրություններ. ընդհանուր համքարական ժողովը բաղկացած էր լիազորներից, քանի որում 10 համքար մտնում էին մի ներկայացուցիչ—լիազոր։ Նոյնպէս վերացնում էր համքարական գործերի կոլեգիալ վարման հին կարգը. այժմ արհեստապետը դառնում էր կենտրոնական լիազոր անձնաւորություն, որը իր գործադրության մէջ շատ-շատ կարող էր պետի 2—3 վարպետ—արհեստակիցների աջակցության։ Արհես-

---

*) Համքարությունների ցոյցի մասին հետաքրքրական լուրեր տպագրած էին Թատրոն» (Театръ»—1899. № 2 էջ 64—70. «Մի անցած Թատրոնական գործից»).

**) Отчетъ по Главному Управленію, էջ 118.

ատելի վճռատատական իրատատութեանն էին ենթարկում մանր-մանր գործեր և այնպիսի պահանջներ, որոնց արժէքը բարձր չէր 30 րուբլուց։ Արհեստասիրը ունէր պատժի իրատանք. տուգանք՝ մինչև 5 ր., բանտարկութիւն՝ մինչև 3 օր։

Նոր օրէնքը տահմանափակելով կազմակերպման իրաւունքը և եղած միութիւններն էլ դնելով կառավարական հսկողութեան և խնամակալութեան տակ՝ տանդնել էր այն «վտանգը», որի պատճառ համարած Ցատոպոլն էր բարձր Նիկոլային, սակայն հէնց այդ «վտանգը» նիւթ մահացու հարուած տալու համբարութիւններին։ Գաշկանդուեց նրանց ինքնագործունէութիւնը, վերացան ամիսավար ոգին ու վերաբերմունքը, նահատակ բարոյական հղնամութիւնը, թուլացան ինքնօգնութեան կապերը և հատատութիւնները և ամենայն համբարական կեանքի փոխարէն մերկ չոր ձևականութիւնը, արատրին կերպարանքը՝ առանց ներքին ջերմացնող ու տանդագործող կենդանութեան։ Ահա այսպէս անտեսական կեանքի զարգացումը, որ զարգացումն էր խոշոր ատհարա-արդիւնարերական բուրժուազիայի, և պետական հնամակալող ոգին միատանուած 60-ական թուականներին չէզոքացրին և միանգամայն անձնատ զարերին ատատական հատարակարգի բնորոշ հատատատութիւնից մէկը՝ համբարութիւնը։ Լայն և անխոչնդոտ ոգի բացուեց ազատ մրցման և պարտատնքի համար։ Թոյլ անհատականի տէրը կծկուեց իր անկիւնում ատանց կազմակերպուած դիմադրութեան իրաւունքի, իսկ անհատէս փարթամացածը՝ հրապարակի տէրը դառնալով՝ սկսեց յոյլերին և՛ արև և՛ անձրև։

Այժմ պիտի լուսարանենք մի կարևորագոյն հարց, թէ ինչպէս անդրադարձաւ հատարական հայութեան վրայ նրա հարատատ, փարթամացած բուրժուական դասութեան վատնումների մատնութեան ծնունդ նոյն և ինչպէս դատապարտեց այդ խոտը իր խմբակցական յարարերութիւնները ազգի հանրական մարմնի հետ։ Այս հարցի պատասխանը իմանալու համար մի պատասխան, որ միևնոյն ժամանակ լուսարանողը պիտի լինի և փարթամացած հայ բուրժուազիայի հատարական նկարագրի,—մենք պէտք է մի թռուցիկ յետադարձ հայեացք նետենք այն ուղիների վրայ, որոնց միջոցով այդ բուրժուազիան

պարենից իր օրուբիւնը և յաղթական դարձաւ 60-ական թուականներին:

Նոյնիսկ աշխատութեան որոշ էջերից արդէն անսանք, թէ ռուսական անրաւականութենից յետոյ հարստանալու ամենամեծ ուղի բացուեց հայ քաղաքային առևտրա-արդիւնաբերական դասի առաջ: Այդ ուղին էր կապալառութիւն բոլոր տեսակների. պաշարի մատակարարումն զօրքի համար, ճանապարհների և կառավարական շինութիւնների կառուցումն, պետական մենաշնորհ կազմող արդիւնաւետների շահագործումն և այլն: Հարստանալու այս ուղին ճանաչում էր պետութեան և հայ ձեռնարկի մէջ որոշ փոխ-յարաբերութիւններ և ոչ մի հիմնական տարբերութիւն այդ նոյն հայ ձեռնարկողի և հայութեան միջև: Կամենում ենք ասել, որ հայ կապալառուն իր հարստութեան պարնման գործում կարօտ չէր հայ ամբողջութեան. պահանջուած բանուորական ոյժը նա կարող էր վարձել և ոչ-հայկից, ինչպէս և անհրաժեշտ մթերքները նա կարող էր առնել գարձնել օտար ապրանքների նկատմամբ: Հայ ժողովուրդը չէր, որ կապալառուի առաջ հարստանալու արգելք էր բացել. գարձեալ նա չէր, որ բացառապէս պետի դեր խաղար նրա գործառնութիւնների մէջ: Այս մէկ: Ապա կարևոր է նկատել, որ ռուսական սերտ պետութենից յետոյ Ադրիանոպոլսի անտեսական կեանքի ծանրութիւնը թեքուեց նախ և առաջ դէպի երկրի վարչական կենտրոն Թիֆլիսը և յետոյ դէպի միջ-կասպիական գաւառները: Այս փաստի բացատրման համար մենք հարուստ նիւթեր ունինք: Թիֆլիսի տնտեսա-արդիւնաբերական կեանքի մասին խօսելիս՝ տեսանք, որ այդ քաղաքը երկրի խոշոր գրամագլուխների կենտրոնն էր: Տեսանք նաև, որ Անդրկովկասի խոշոր արդիւնաբերութիւնները (ապրան, նաւթ և այլն) գարլացան միջ-կասպիական գաւառներում: Իսկ Թիֆլիսը և միջ-կասպիական գաւառները հետու էին հայ բնագաւառներից, հայ ժողովրդի հոծ բնակութեան վայրերից: Մի Ադրիանում, մի Զուչում հայ ձեռնարկողը հեշտ էր գնում իր գրամագլխին, բայց նրա յետագայ ուռճացումը այլ ևս կատարում էր հայ միջավայրից դուրս, առանց հայ ժողովրդի մասնակցութեան, առանց նրա տպաւո-

դահան և բանտարկան այժմ օգտագործման։ Այս հանգամանքը հայ գաւառներից գաղթ էր քաշում արդիւնաբերական ձգտող ընտանիքները և մեծապէս ժամանակ անջատման ուղի էր բանում հայ ձեռնարկողի և նրա հարստացած ազգային միջնորդի միջև։ Այն, իբ պետական կազմակերպութեան տնտեսական դարգացման միջոցները դէպի հայութեան ձեռ Անդրկովկասի տնտեսական կեանքը դուրս էին բնակութեան վայրերից մեծ հեռու կենտրոններ՝ կարող էին միայն հայ կենտրոնախոյս խոշոր բուրժուան խաւ առնել, նպաստել այդ խաւի խորհրդանքը ազգի հարստական մարմնից, այլ ոչ իբ կենտրոնաձիգ գործնել նրան կամ մերձեցման ցանցերով կապել օտար հարիրների ամբ գերող հայ գրամագլուխները հայրենի երկնակամարի տակ ծաւալուն հայ չուներ ժողովրդի հետ։ Հայ ձեռնարկողը քանի նա երկրագործական տնտեսական էր և իր գործառնութիւնները կատարում էր հայ ապառաղների շրջանում՝ հարկաւ, չէր կարող նկատմամբ համայնական հողի չդիմել հայրենի ժողովրդի հետ, իսկ երբ նա միայն բարեկ էր առած հայրենի նեղ հարիրներն և ունէր յայն ապահովել վիճակում իր ձերբերի համար, ապահովել, որը կամ ներքին Ռուսաստանումն էր կամ Անդրկովկասի հետաքրքրութիւնների—ապա այդ ձեռնարկողը արդէն սկսում էր օտար մարդ դառնալ հայրենի ժողովրդի ազգային հանրական կեանքի համար։ Հարստութիւնը իր յառաջ գալիս հանգրնների ու արտադրութիւնն ունէր Կարելի է մանուֆակտուրային ապրանքների ձեռնարկութիւն ունենալ հայ միջավայրում, առ ու ծախս անել, անդամ հարստանալ և գոհ լինել իր վիճակով, բայց չի կարելի ազգն արդիւնաբերել, նաեւ կամ պինձի հանքեր շահագործել, կամ բանկային հաստատութիւն հիմնել և յայտ դնել, իբ հայութիւնը կարող է ապրեցնել այդ ձեռնարկութիւնները, այլևնքն ազգ անհրաժեշտ ապահովների կամ գործակիցների քանակը։ Խոշոր գրամագլուխները ձգտում են միջազգայնութեան, նրանք իրենց ուռճացման համար պահանջում են լայն շուկաներ։ Հայ կապիտալը կարող էր հիմնուել, իբէ նա սկզբից կառուցած մնար հայրենի միջավայրին և չձգտէր թռիչքներ գործել Ղարաբաղից դէպի Բագու, Աղուլիս կամ դէպի Թիֆլիս և Մոսկուա։ Այդ թռիչքների հետ էլ նրանք

պատրաստվում էին և իրենց սէրերին ներկում ապագայ-
ութեան գործունեու։ Այս երեւոյթին նպաստում էր նաև մի
այլ հանգամանք։

Պարսկական սիրատեսութիւնը հայերի համար առնծա-
ւում էր բացառիկ տառապանքի, որ նրանց մօտից-
նում էր իրարու։ Ռուսական սիրատեսութիւնը խորտակել էր
բացառիկութեան կաշկանդիչ շղթաները, բայց նա բոլոր հայ-
երին հաւասարապէս չէր կապել մի ազգային հաւաքական մար-
մնի մէջ։ Հայը կարող էր յայտել իր ազգութեանը, նրա նկատ-
ծած անդամը լինել, եթէ դրա համար պիտակցութիւն և պար-
տապատութիւն ունէր, եթէ այդ բանը նրան շահադրդում էր
նիւթականի կամ բարոյականի առաւելեալից, իսկ եթէ չկային
այդ հանգամանքները, ապա ոչ մի այժ չկար, որ Ս. Նազար-
եանցի արտայայտութեամբ «իշխանական դաւազան» չարժէր։
Արդէն հայի դժնդակ անցեալը նրանից դատարակել էր խոտո
արտայայտուած անհատականութեան սէր մի արտած։ Ռուս-
ական կալուածը՝ վերացնելով բացառիկ դրութեան կաշկանդում-
ները՝ նոր այժ տուեց հայի կենտրոնախոյս անհատականութեան։
Ձիշտ է, նոր սիրատեսողը անխախտ պահից նկնելու կապը,
բայց այդ հաւատատութիւնը հասարակական կեանքի զարգաց-
ման շնորհիւ չէր կարող լուրջ ծածկել ազգային հաւաքող
կազմակերպութեան բացը և ընդհակառակը իր պահպանողական
բնոյթով դառնում էր խոչընդոտման մի նոր աղբիւր, երբ ազգու-
թեան կրթուած անդամը նրա էր գործնում դաւանութեան կազ-
մակերպութիւնից և չէր գտնում ազգի կազմակերպութիւնը։

Ահա այսպէս՝ XIX դարի առաջին կէսում թէ անհատա-
կան գարգացումը և թէ հայութեան քաղաքական գոյութեան
պայմանները առնծում էին մի մթնոլորտ, երբ ազգային
անդամի բարձր առաքելութեան վրայ կանգնած նրա մի խումբ—
փարթամացած բուրժուազիան—նրա էր գործնում սեփական
ազգից։ Այդ բուրժուազիան բուռն հետաքրքրութեամբ և իրրև
խոտո շահադրդուած կողմն չէր միջամտում ազգային գործե-
րին, չէր ձգտում որոշ հասարակական ծրագիր առաջադրել և
այդ ծրագրի իրագործման առարկրել ազգի հաւաքական նաւա-
ղը։ Նա օրէցօր մեկուսանում էր ազգից, պահպանելով միայն

*կրօնական կապը և շատ-շատ բարեգործ հանդիսանալով իր պատանակիցների համար: Ձափաւոր կարողութեան տէր հայը դիտողի հետ էր, որովհետև գլխաւորապէս գործում և շինում էր ազգային միջավայրում, իսկ հէնց որ փոփոխութիւն էր կատարւում այդ նոյն հայի կարողութեան մէջ, փոփոխութիւն դէպի բարգաւաճումն և ուռճացումը,—ապա անփոփոխութեան քանակի հետ փոխւում էր և նրա միջոց մատչութեան սրտկը. նա սկսում էր վերից վար նայել հարստատ ազգի վրայ և չանալ իր վրայից թօթափել նրա տգեղ առանձնայատկութիւնները: Ձափաւոր կարողութեան տէր հայ չէր խուսափում ազգի ընձեռած պաշտօններից. նա նրէցփոխ էր, դպրոցական հոգաբարձու և այլն: Եւ նրա հասարակական դիրքի համար անպատշաճ բան չէր, որ հայ թերթում, օրինակ, լոյս տեսնէր հետևեալ ծանուցում. «Մարդասիրական Ընկերութեան հիմնադիրները յանուն Ս. Գր. Լուսաւորչին մերոյ, Բարձրագոյն հաստատուած բազում քաղաքում, ընտրեցին երևանց միջից պ. Գր. Թումայեանցին, որ կատարէ Բազու քաղաքում պատահական կամխոյքն՝ այնինքն առանց ամեն տեսակ ապրանք և կամ դրամ, ճանապարհ պիտի ընդունի և որոշ կամենան նորանց տէրերն այն պայմաններով, ինչպէս նրան է մինչև ցօրս վաճառականաց մէջ, և այս կամիքից ինչ արդիւնք որ առացուի, պիտի մատանին վերոյիշեալ Մ. Ը. պանձարանը. վասնորոյ ընկերութեան հիմնադիրները խնդրում են վաճառականաց, որ երևանց յանձնարարութիւնքն կատարելու համար Բազու քաղաքում դիմեն առ պարոն Թումայեանցն, որն որ փորձուած է և առաջ ևս կատարել է այնպիսի յանձնարարութիւններ ճշտութեամբ և ուղղութեամբ: 28 Մայիսի 1865 թ. 'ի Բազու»: *) Այս ծանուցումը մի լուսաւոր փաստ է, որ չափաւոր հարստութեան տէր հայը ազգային լուսաւորական-կուլտուրական հաստատութեան հիմնադիրն է դառնում և նրա բարգաւաճման համար էլ լծում որոշ ստեղծական յանձնարարութիւններ: Սակայն դրութիւնը փոխում է, երբ այդ նոյն հայը, ինչպէս ասացինք, թողում է սոցիալական անդունդի բարձր աստիճանին:

*) «Մեղու Հայաստանի». 1865. յունիսի 12-ի №-ը:

վերակշռության էին սահման և անդադար պահանջում համբուռատար լինել ու աջակցել հայ եկեղեցու նշանակության բարձրացման: Արդէն պիտանի, որ կառավարութիւնը՝ նեղբին քաղաքականութեան շահերից դրդուած՝ հայերի համար մի շատ վատուկ ժամանակաշրջանում էջմիածնի հայրապետական գահին դաղմեցրեց Ծովհաննէս Կարբեցու պէս մի ազնիւ և հոգու համակատար եկեղեցականի: Կարբեցու կաթուղիկոսանալը և առաջատար ուս կառավարութեան միջամտումը հայ եկեղեցու նեղբին խնդիրներին՝ ամէն նոյս թիւրքահայերին խոչ իրենց կապերը էջմիածնի աթոռի հետ: Թիւրքահայերի այդ վերաբերմունքը խոհականութիւն և զգաստութիւն նեղչնչից ուս կառավարութեան, որը այնուհետև մինչև Կարբեցու մահը իր գ. Պօլսի գեսպանի միջոցով անդադրում աշխատում էր համոզել նրանց վերականգնել իրենց կապերը էջմիածնի հետ և ճանաչել ընդհանրական պատրիարքի իրաւունքները: Բայց ուսական պատրին քաղաքականութիւնը չէր կարող իր յիշեալ աշխատանքի մէջ, չնայած որ այդ ժամանակ Ռուսաստանի ազդեցութիւնը ընդհանրապէս ուժեղ էր Թիւրքիայի վրայ: Թիւրքահայերի համար զգուշութիւն չէր կարող ունենալ այն Մայր Աթոռը, որը խոճակ էր Ռուսաստանում, բայց պէտք էր ազդեցիկ լինէր Թիւրքիայում: Այս հակասութիւնը այնքան սինդրախ էր, որ վտանգութիւն չէր նեղչնչում դէպի ուսների հայասիրութիւնը: Թիւրքահայերի վերաբերմունքը փոխուեց, երբ կաթուղիկոսուս Ներսէս Աշտարակեցին: Վերջինս հետաքրքրութիւն ստացաւ իր զգուշութիւններով անմիջական հարդրպակցութեան մէջ մտնելու Թիւրքահայերի հետ և թեկուզ նրանց միտքը դէպի էջմիածնի գլխաւորութիւնը: Ինչ չէր յաջողուել անցեալում ուս գիտանագիտութեանը՝ այն յաջողուեց հայոց կաթուղիկոսին, նրբ նա զգացնել տուեց Թիւրքահայերին, թէ էջմիածինը ունի նոյն իշխանութեամբ օժտուած աթոռակալ և ուժեղ բարեկ: Ներսէսի օրինակը մի ապացոյց էր, որ Թիւրքահայերին կարելի էր գրաւել և սիրաշահել հայ եկեղեցու արժէքի և վարկի բարձրացումով նախ և առաջ բուն Ռուսաստանում:

Հայ եկեղեցու քաղաքական արժէքը նոր գնահատութեան նիւթ դարձաւ Ներսէսի յաջորդի ընտրութեան ժամանակ:

Փախարքայ իշխ. Բարեաժինակին այն անսակէան էր պաշտպանում, որ կաթուղիկոսական ընտրութիւններն պէտք է տարածուեն ամեն—մի կռուազարական ճնշումից: Նա առաջարկում էր նախնեակ կազմակից լինել, որ կաթուղիկոս ընտրուի միայն Թիւրքահայ հոգևորական, որ ցուցնանուի առաջ կռուազարական ընտրութիւնը դէպի հայ եկեղեցին և դրանով հնարաւոր լինի արտասահմանեան հայերին կապել առաջ քաղաքականութեան հետ *): Ինչպէս յայտնի է կռուազարից իշխ. Բարեաժինակու ցանկութիւնը և կաթուղիկոս ընտրուեց Կ. Պոլսի պատրիարք Մատթէոս արքիպ. Զուխաճեանը (1858 թ.): Նոր կաթուղիկոսը իր հայրապետութեան սկզբում հէնց մասնակի սկսեց արտասահմանեան հայերի այն քաղաքական կազմակերպութեան մասին, որը պատրաստում էր իշխ. Բարեաժինակուն: 1859 թ. յունիսի 28-ից թուագրած իր նամակով Մատթէոս կաթուղիկոսը գրում էր վեհարքային, որ Թիւրքիայում հայերը գտնուին են լինում, կաթոլիկ ու բողոքական դառնում, որ պէտք վայելին ֆրանսիական, անգլիական ու ամերիկական հիւպատոսների հովանաւորութիւնը Թիւրքական բռնութիւնների դէմ, որ Ռուսաստանը հիւպատոսներ կամ քաղաքական պատմիներ նշանակելով հայաստանի զանազան կայքերում (Վան, Մուշ, Դիարբէքիր) և ընդհանրապէս Թիւրքիայի հայաբնակ քաղաքներում (Տրապիզոն, Բրուսա, Իզմիր և այլն) կարող կրնին չէզոքացնել եւրոպական պետութիւնների ազդեցութիւնը և առաջ մղել իր նշանակութիւնը հայերի աչքում: Իր այդ քաղաքականութեամբ, բացատրում է կաթուղիկոսը, Ռուսաստանը հայերին չեն կրնանալ զանազանութեան աչքով և կը նպաստէ ռուս-Թիւրքական սահմանի զարգացմանը**): Այսպիսով Մատթէոս կաթուղիկոսը ցանկանում էր տեսնել Ռուսաստանին հայերի պաշտպանի դերում և նրան կողմնակից մի անհատական քաղաքականութեան, որ ինքան էլ չէր պատշաճում այդ ժամանակ երկրին: Կ. Պոլսի նոսկին պատրիարքը կաթուղիկոսացած իրեն ուսուցչը, բայց էջմիածնում նա շուտով զգաստա-

---

*) Акты, т. XII. № 463.

**) Акты, т. XII. № 466.

յաւ. Մահմէտ կամուղիկոսը ակնառուն չեղաւ իր առաջարկած ծրագրի իրագործման։ Ռուսաստանը Թիւրքահայերի նկատմամբ դեռ վարում էր խօսքի քաղաքականութիւն. նրա համար ժամանակաւորութիւն կարող էր առնծել և հայ եկեղեցին, սակայն և նա պղուշօրէն բանակցում էր, բայց գործ չէր ձեռնարկում. Սա նորը քաղաքականութիւն էր, երբ մի կողմը առնում էր ակնկալութիւններով և պատրաստում պահանջելու անձնատուր լինելու, իսկ մեռ կողմը իրեն չէր կաշկանդում ամուր խոստումներով կամ հաստատ գծերով։

Մահմէտ կամուղիկոսին յաջորդեց Գէորգ IV (1866—1884), որ իր կամուղիկոսութեան առաջին տարիներում նոյնով ձգտում էր էջմիածնի բարոյական վարկը բարձր պահել Թիւրքահայութեան մէջ և այդ նպատակով համերաշխ էր ընթանում ռուսական արտաքին քաղաքականութեան հետ։ Իր նախորդի պէս նա էլ հրաւիրեց Ռուսաստանին հիւպատոսներ նշանակել Հայաստանում և Անատոլիայում։ Մեռ կողմից նա բանակցում էր Թիւրքիայի ռուսական դեսպան Իգնատիեի հետ (1871—1873 թ.թ.) էջմիածնի առանձին վերանորոգութիւն և էջմիածնական ու սրան կից գպրոց հաստատելու Կ. Պօլսում։ Այդ գործակատարը Գէորգ IV-ին տուել էր Իգնատիեը և կամուղիկոսը չուռպել էր Կ. Պօլիս ուղարկել իր ներկայացուցիչ Արշակ եպ. Չալալեանին, որ տեղն ու տեղը հանգամանօրէն որոշէ այդ ձեռնարկի իմաստը։ Իգնատիեի ցանկութիւնն էր էջմիածնի վերանորոգութեան և գպրոցի միջոցով տեղի խորտակել Ռուսաստանի ազդեցութիւնը Թիւրքահայերի վրայ։ Սակայն Կ. Պօլսի հայ հասարակութեան բարձր շրջաններն խնդամուտ եղան այդ ծրագրին և կողմնակից լինելով Փրանգիայի ու Անգլիայի ազդեցութեանը Թիւրքիայի ներքին գործերում՝ հասկացին կամուղիկոսին հրաժարուել ռուսական առաջարկից։ Մեռ կողմից Կալիսան անդամական վարչութիւնը իր գործակիցներով խոհեմութիւն էր այն ներքաշնակութիւնը, որ առնծուել էր էջմիածնի և ռուսական արտաքին քաղաքականութեան մէջ։ Նրանց հրապարակ էր գալիս հին հակառակութիւնը, երբ Ռուսաստանի ներսում անհանդուրժելի էր հայ ուժեղ եկեղեցական կազմակերպութիւնը, իսկ Ռուսաստանից դուրս պաշտպանում

և վաստատում էր նրա հեղինակութիւնը։ Գէորգ IV հակառակ իւրը կշտամբում էր Ռուսաստանի ներքին քաղաքականութիւնը և խեղճանում լինելով նրա ձրագրիններին, հրաժարուեց պահպանելու հեղինակութեան վարդապետն ասաւ մինչև ժամանակ չընկճուեցաւ մասնակցել մի քաղաքականութեան, որի մէջ ինքը՝ իբրև թոյլ կողմը՝ ստիպուած էր տար, քան թէ չահէր... *)

Պէտք ասենք մեր խօսքը հայ եկեղեցու քաղաքական արժէքի մասին։ Որքան էլ նա թոյլ այժ էր, բայց միշտ պահպանել արժէքաւորութիւնը, որովհետև հայ ազգային մարմինը չորանալից մնալ բաժան-բաժան ու կիսատրամանելու։ Ռուսական արտաքին քաղաքականութիւնը նրա համար մեր ուսումնասիրութեան ներկայ սրբում ժամանակաշրջանում բարեացակամ դիրք բռնեց։ Տարաւոր եղաւ այդ քաղաքականութիւնը, բայց ոչ որոշ նպատակից։ Նրա բռնանալութիւնն էր բարձր պահել էջմիածնի հեղինակութիւնը արտաքսմանեան հայերի աչքի և դրանով շահել նրանց համակրանքը դէպի Ռուսաստանը։ Այդ քաղաքականութիւնը ընդհանրապէս աջողութիւն գտաւ թէև նրա խօսքը չը համապատասխանեց ներքին քաղաքականութեան գործին, թէև հայ եկեղեցու կրթական-կուլտուրական գործունէութիւնը անկաշկանդ ծաւալուն ու խրախուսուն չգտաւ։ Բայ ինչ դրանից հայ եկեղեցին վերջին կարգի գործունէութեան ասպարէզում։

Պարսկական օրով հայ եկեղեցին տասարականօրէն կազմակերպած կրթական-կուլտուրական աշխատանք չէր վարում։ Գիտենք միայն, որ նա էջմիածնում ժառանգաւորաց կոչուած մի դպրոց էր պահում և միայն այդքան։ Կրթութիւնը մատակարարելը մնում էր «հոգու պարտք» սանն մի հայ եկեղեցականին, նրա ակը էր ածում դէպի ուսումը կամ դաստիարակում էր շակել իր անհատականը։ Դրութիւնը փոխուեց երբ Ռուսաստանը սկսաւ Վրաստանում և ապա Տաշտիկում պարսկական խանութիւնները։ Անդի անդրադարձ հայ

*) Տարտխան, «Հայկական խնդիրն ու Ազգային Սահմանադրութիւնը Թիֆլիս» Թիֆլիս. 1912. էջ 299—321.

ուսական յարաբերութիւնները, ասկի գանուածքից հայերի ձգտումը նուաճած տեղից երկիրը ազատելի ձեռքով և այս պայմաններում ասկի շեշտից հայերի համար կարիքը ծանօթ լինել ռուս լեզուին և ռուս պետական կարգերին ու կեանքին: Դպրոցը մի հիմնարկութիւն էր, որ գալիս էր բաւարարելու հասունացած կարիքը: Պահանջում էր ամուր փարել այդ հիմնարկութեանը և նրա առաջնորդութեամբ ընթանալ այնպիսի ուղիով, որ ոչ «հրաժարիմք» ասել պարապ ազգային նկարագրին և ոչ անպիտացուի յառաջադիմութեան ու յարմարելման նոր ուղին: Սակայն կարմր էր հայ հոգեցին XIX դարի սկզբում ձեռնամուխ լինել յայն կրթական գործունէութեան, ունէր նա դրա համար պահանջուած նիւթական ու բարոյական ոյժերը: Ոչ: Դա ազատակոչ կարիքը, բայց չկային միջոցներ, որ բաւարարէին այն: Եկեղեցու ապաստարանները ոչէր ու նախապաշարուած էին, նրա նիւթական միջոցները սպառուած Մայր-Աթոռի շուրջը ունի ունեցած պայքարների ու երկրի մէջ տիրող պատերազմների հետևից: Ինչևէ այդ ժամանակ էլ մեծ էր Ղուկաս կաթուղիկոսը 100 տարի բարի յուշ Աղա-Մահմետ շահին, որ վրէժ էջմիածնից կոծանումից: Հայ հոգեցին այդ ժամանակ ունի քան մարդկիկ էր ու կարող դրան օգնութեան: Միայն կողմից երկրի յուզուած վիճակը հետաքրքրութիւն չէր ընձեռում մատոգիր խաղաղ կարողական աշխատանքի մասին: Եւ ինչ որ ժամանակին պահանջն էր հայերի տգիտ կարիքների նկատմամբ՝ դրա մասին հետաքրքիր էր խորհել ու գործել հայ աշխարհից դուրս, հայկական գաղութներում: Այդ գաղութներում էլ հիմք դրուեց այն դպրոցական գործին, որ յետագայում գործաւ հոգեցին դիմաւորողն հոգեկից մէկը, նրան հասարակական ձեռնհասութեան ու համակրանք բաշխող ասարիան:

Առաջին հայ կանանոց և հաշտարար դպրոցը հիմնուեց Մոսկուայի Լազարեան ճեմարանը, որը հիմնարկուեց 1815 թ. երկու ազգական ասումնարան և յետագայում առաջաւ միջնակարգ դպրոցի իրաւունքներ, իսկ ասկի ուշ նաև բարձրագոյն դպրոցի: Լազարեան ճեմարանը կեանք առաւ Յովհաննէս և Յովակիմ Լազարեան եղբայրների բարեգործական գոհաբերութեամբ: Դրա-

ըստ կայքի արժէքը և գրամագլուխը 1838 թ. հաւասար էր 1,455,459 ր.: Երբ արդիւնք մասնատը գոհացնում էին՝ այդ գործը ձեռնարկէին կամ չունէր հայ ևկեղցու կազմակերպութիւն հետ, սակայն փառասէրն այդ կապը գոյութիւն ունէր մասնատը գործի գործադրման առաջին չէր անում: Նախ ինչ, որ Լազարեան ասմբը շատ է շահագրգռել հայութիւնն հայ ևկեղցու քաղաքական արժէքը, ուրիշն և այդ ասմբի հիմնած գործը մի նրախատեսական գործ էր հայ ազգին: Մեր կողմից Լազարեաններն այս կամ այն գործունէութիւնը ընդունում էին ոչ միայն հայոց համար, այլեւ ռուսաց կառավարութեան համար: Ամենայն հայոց կաթուղիկոսը և հայ բարձր հոգևորական անձինք համարում են ճեմարանի հոգևոր պատուար անգամներ, ասել է թէ հրապարակով հայտնում էր նրանց հովանաւորութիւնն ու բարեացակամութիւնը: Այս բոլոր պատճառներով Լազարեան ճեմարանը իր գոյութեան սկզբի շրջանում կարելի է համարել հայ ևկեղցու կրթական հաստատութիւն: Գոյութիւնը նկատուած նրա 1836 թ. հաշուէտութեան մէջ ասուած է. «Ընկալեալ այս ճեմարանը իբրև կենդանական և գլխաւոր հիմնարկութիւն հայոց ազգի մի անկարան է և հանդիսանում է սազմ, որի շնորհիւ առևտուրն ու քաղաքականութիւնը՝ ամենայն ժողովուրդներին մերձեցնելով հանդերձ՝ տալիս են պատուներ: Հայ երիտասարդութիւնը դասախօսակութիւնով այս հիմնարկութեան մէջ՝ ունի վստահ կրթական բնիկ առանձնը հետ: Այս ճեմարանի մէջ ուսումն են առնում Հայաստանի և նրա սահմանակից նահանգներից ու Տարուցին Ռուսաստանից նոյն երիտասարդներ: Բայց լաւագոյն ապացոյցը, թէ ինչպիսի վստահութիւն է վայելում այս հաստատութիւնը Մատենադարանում՝ այն է, որ շատ ուս պետական և այլ պաշտօնեայ իրենց զաւակներին մերձեցնում են նրա մէջ: Մինչև այժմ ճեմարանի սաներից մօտ 400 հոգի զինուորական և քաղաքական ծառայութեան մէջ են մտել: Ոմանք նրանցից բացառապէս ընծայել են իրենց գիտական ասպարէզի, բայց

բոլորը շարունակում են իրենց ծառայութիւնը յաւուրք օգտակարութեամբ կառավարութեան համար:

Ձեմարանի գոյութեան նպատակը երկու կարգի է:

ա. Արեւելեան լեզուների տեսական ու գործնական ամբողջութիւն և նրանց վերձուած թարգմանների պատրաստութիւն:

բ. Հայ ժողովրդի մեծագոյն բոլոր կրթական հաստատութիւնների համար ուսուցիչների, ինչպէս և հայ քրիստոնեական հասարակութեան համար կրթուած արթապետների պատրաստութիւն»: *)

Այսպէս նրա Հոգոբեան ճեմարանի ծառայութիւնը հայերին մի ժամանակաշրջանում, երբ իրաւ կարիք կար նրանց համար հասարակական կարգ հաստատել Թուրքիայում հետ և ընդհանուր ներքաղաքական լուսաւորութեան, սակայն նա՝ ծառայելով երկու տէրերի՝ չկարողացաւ հաւատարմութիւն պահպանել և կամաց-կամաց կորցրեց իր սկզբնական հատկութիւնը կրթական հիմք դրած նոր կրթական օջախներին: Այդպիսի օջախներից առաջինն էր Ներսիսեան դպրոցը:

Ներսիսեան դպրոցը բացուեց 1824 թ. Թիֆլիս քաղաքում, որը դարձել հայ-հայրենիքի սիրտը չէր կարող լինել որպէս՝ ազատ վիճակով պարսկական բռնութիւններից՝ միակ վայրն էր Անդրկովկասում, որ ընձեռում էր տանելի պայմաններ մի կրթական հաստատութեան գործադրման համար: Դպրոցի հիմնադիրը Ներսէս Աշտարակեցին չունէր Լազարեաններին հարստութիւնը, բայց երբեմն թեմակալ՝ հնարաւորութիւն ունէր կրթական նպատակներին յատկացնել եկեղեցական հասոյթներից: Սակայն այդ աղբիւրը այնքան էլ առատաբուխ չէր, որ կարելի լիներ կատարել մի մեծ դպրոցական շինք և հոգալ մեծաթիւ կրթականի ծախքերը: Աշտարակեցին պիտի ժողովրդի օգնութեան: 346 հոգի, ասում է պատմարանը, դպրոցական շինքի կառուցման համար 1819 թ. նուիրատուներից 5822 ր.: **) *Այդ գումա-*

---

*) Обозрѣніе Высочайшихъ указовъ и актовъ, относящихся до Московскаго Арм. Лаз. Инст. Вост. языковъ. Спб. 1839. էջ 70--72.

**) *Ար. Երիցեանց՝ «Պատմութիւն 75-ամեայ գոյութեան Ներսիսեան Հայոց Հոգևոր դպրոցի». Թիֆլիս. 1898. էջ 50—51.*

*լով չըփակուեց ժողովրդական դոհարերութիւնը։ Դպրոցը պա-
ձաւ մի հիմնարկութիւն, որի համար չըպակասեցին կտակները
ու այլ նուէրները։ Ժողովրդական համակրթութեամբ և օժան-
դակութեամբ նրա գոյութիւնը ապահովուած էր։*

*Ներսիսեան դպրոցի բացումը (1824 թ. դիպ. 1) եղաւ
մօտ 80 աշակերտով։ 1825 թ. սեպտեմբերին աշակերտութեան
թիւը հասաւ 208-ի, իսկ 1826 թ. մայիսին կային 360 աշա-
կերտ, որոնք դասերում էին հինգ դասատուներում։ *) Դպրոցի
դեկավարութիւնը յանձնուած էր Ցարութիւն վարդ. Ալամդա-
րեանին, որ ժամանակի ականաւոր հեղինակաւոր մտաւորական-
ներից մէկն էր։ Ալամդարեանի տեսչութիւնը շարունակուց
հինգ տարի։ Նրա օրով Ներսիսեան դպրոցը ստորեւ
մօտ 100 հոգի, «որոնցից ոմանք քահանայ և ուսուցիչներ դա-
ձան, մեծաններն վիճաբանական և բարեբանական պաշտօնեայք,
վաճառականք, և այլն։ Անհատարակ՝ Ալամդարեանի աշակեր-
ներից չատերը ականաւոր անձինք դարձան»։ **)։*

*Ալամդարեանի դեկավարած դպրոցը հոգևոր-կրօնական
բնոյթ ունէր, թէև նրա մէջ դասաւանդւում էին նաև լիպուներ
ու աշխարհիկ առարկաններ։ Դասաւանդութիւնը կատարւում էր
հարց ու պատասխանի եղանակով։ Ահա, օրինակ, ինչպէս էր
կատարւում հայոց պատմութեան դասաւանդութիւնը։*

Հարց. Հայկ կրկին դարձաւ Արարատեան աշխարհը։

*Պատասխան. Հրամերիս. իբր որդոքն և թոռամբքն, որ
300 հոգիք էին, վասն էկաւ յիւր հայրենի երկիրն։*

*Հ. Բէլն ինչ արաւ ինչ ժամանակ յետ Հայկայ վա-
խճանի։*

*Պ. Իւր որդւոց մէկի բերանով խաղաղ պրկից Հայկին՝ թէ
արի ինձ հնազանդիր, զարձիր յիս երկիրը, թէ չէ քեզ Հայկ
Էնակէս կանեմ։*

Հ. Ի՞նչ պատասխան ետուս Հայկին։

Պ. Հայկ պատասխանից թէ՝ ինչ որ ձեռացդ կարող

---

*) Անդ, էջ 104, 105 և 109.
**) Անդ, էջ 234—235.

պան. ես քոյ ճարտն չեմ, չեմ հնազանդիլ քեզ»: *) Հարկաւ, ներսեհեան դպրոցի մասամբ ազատամիտ ոգոմիլի բան էր, սակայն աւելի մեծ ուսումն չէր ծառայում նրա հետ մրցող պետական ազնուականների կոչուած դպրոցը (յետագայում զինուորական): Կային նոյնիսկ վկայողներ, որ հայոց դպրոցը բարձր է պետականից: Եւ հաւանօրէն դրանով պիտի բացատրել, որ ներսեհեան դպրոցում Ալմպարեանի օրով ուսման էին տրւում նաև վրացիներ, յոյներ ու թուրքեր: **) Որքան էլ թերութիւններ ունենար Աշտարակեցու հիմնած կրթական հաստատութիւնը, այնուամենայնիւ Անդրկովկասում իր տեսակի մէջ նա միակն էր հայերի համար: Եւ կրթական այդ միակ բարեկարգ օջախը չտառ մառնուց պիծուի կնանքն:

1828 թ. վերջին ներսէսեաքսորուց Թեոդորեան: Ալմպարեան վարդապետը մնաց առանց տեղ պաշտպանի և 1830 թ. հետզրուկց դպրոցական գործից: Հրապարակին ասէր էր թէ Ցամհաննէս Կարբեցին, որ սկզբում Վրաստանի առաջնորդ, իսկ յետագայում իբրև կաթուղիկոս՝ աշխատում էր խլացնել դպրոցի եկամուտները և խոպան վակել այն: Սակայն Կարբեցու չար մտադրութեանը հակառակ գնացին Թիֆլիսի առաջնուրդ հայերը և խնդիրը լուծուեց այն հանգամով, որ կառավարութեան միջոցով 1831 թ. կայսուց յատուկ «Կանիսես բարեկարգութեան Ուսումնարանի Հայոց Տիխիայ», որ իր ձեռքն առաւ դպրոցի գնհավարութիւնը և անվերջ պայքարելով Կարբեցու առնձգութիւնների դէմ՝ յաջողուց անշուք վիճակում պահել ու կառավարել դպրոցը մինչև 1837 թ.: Կարբեցու բռնած դիրքը դէպի հայերի միակ բարեկարգ դպրոցական հաստատութիւնը՝ ծանր հարուած հասցրեց ոչ միայն ներսեհեան դպրոցին, այլ և ընդհանրապէս ողջ կրթական գործին: Բաւական է յիշել, որ մասնավոր ներսէսի գործը անորոշ ու յոյսի վիճակի՝ նա դպրոցից վտարելու ունեար և ազնուական ընտանիքների զաւակներին: Հոյ ազնուականութիւնը 1831 թ. ներքամասայց եղաւ կառավարութեան, որ հայոց լեզուի դասեր

*) Անդ, էջ 113—114.
**) Անդ, էջ 234.

մայնաւին Թիֆլիսի գիմնազիայում և երբ յարդուց այդ միջնորդութիւն, *) ներսիսեան դպրոցից մօտ 90 ոսն տեղափոխուց գիմնազիա: Սա առաջին սկզբան քայլն էր, որ հայ ունևոր դասակարգի սերունդը հրաժարում էր կրթութեան առնել ազգային դպրոցի յարկի տակ: Հայ դպրոցը մնում էր բուժին ժողովրդական խաւերի:

Յովհաննէս Կարբեցու օրով ոչ միայն հարուածուց ներսիսեան դպրոցը, այլև առհասարակ անուշադրութեան մատնուեց ևկեղեցու կշռումը՝ ծաւալել հայերի մէջ ուսման գործը: Եկեղեցու պետը ազէտ և ապաշնորհ մարդ էր, իսկ եկեղեցական դասի մէջ աչքաթող մարդկանց սով էր տիրում: Կարբեցին կաթոլիկասական ոգուց մի չքնաղ, երբ հայ-հայրենիքի սիրտը, Արտաւանի նահանգը, միացրուել էր Ռուսաստանին: Դադարել էր պատերազմական ժամը և ցրուած հայութիւան առաջաւոր մարդիկ սպասում էին, թէ հայերի համար բացուել է կուլտուրական վերածնութեան փառաւոր շրջան: Ասի՝ ինչ էր գրում Երևանցիներին հետաւոր Կալկաթայից մեր վերածնութեան սահմռկանքից մէկը՝ Մ. Թաղիադեանցը—(1828 թ. նոյեմբերի 1-ին). «Երբ որ լսեցի ներկայ մեր աշխարհի սպասութիւնն, սիրտս ուրախութեամբ վառվեց, ֆրանկ ազգացուածութիւն ունենալով և մեր ազգի անդուածութիւնն, նախանձ մեծ ընկաւ հոգիս, և թէպէտև ես ոչ շատ փորձառէր վարդապետ եմ, ոչ վաճառական, ոչ կարգ ունիմ, ոչ տասնեակ, սակայն Աստուած, որ միշտ սիրոց ձեռքով մեծ մեծ բաներ այ կարող կատարել, վստահացնում այ ինձ, իմ կարեաց գործոյ եմ ըզպէս, իմ քաղաքիս և իմ ծնող Աշխարհիս պիտանի լինիմ ձեր չնորհքովն: Բայց այս իմ պիտանութիւնս ոչինչ կերպով չէ լինելէց, եթէ ոչ, վարժատուն հաստատէք և մեր երեխայից միտքն լուսաւորէք: ... Իմ ազնիւ Քաղաքացիք, պիտի որ մեր աշխարհի այսքան երկար ժամանակաց գերութեան սակ մնալն գիտենան յարկն ոչ կարէ ներկայ լուսոյէս ցուցանել ձեզ, բայց ուսում որ շուտով կարողանէք ճանաչել: Գիտութիւն էն ոգ-

*) Акты, т. VIII. № 65.

նիւ Թագուհին այ որ հանի ապրատ հագուստով բախտաւորաց պատն կղեկերի, ամմա Թագաւորաց Թագին պարծանքն ու վառք այ։ Տէրութիւն չկայ որ էս անուէր վիտակամբս կանգնած և պահվում չըլինի. Ռուսաց էդ մեծ կայսերութիւնն, թէ յառաջ քան զսուրբն Պետրոս իւրեանց իմաստասէր Թագաւորն ինչ էր և նոսկայ ինչ այ, յայտ է ձեզ։ Մին նրանից էթէ կարզալ պիտինայ, էն պատճառներն որ բազում չարչարանքով ու վիշ կամ հօթն տարուն այ ամարում, մին նրկու տարուն կարէ հնչա ու հանգիստ ամարուծ պատճառն հնարքով հնչացնել, և նոր-նոր պատճառներ ևս հնարել։ Ետուն պատճառից անունն յիշելով այնքան իմ ամաչում որ կարող չիմ առնել. դրան, մեր խնդճ աշխարհքն ինչ մին լաւ պատճառ ունի. ոչ ինչ։ Էն պատճառներն ոչ չորս հազար տարով յառաջ աշխարհումն կային, նոսկայ էլ էգոնք են մեր Հայաստանու պատճառներն, և ինչպէս կոպիտ ամարում են, էնպէս էլ կոպիտ ամարցնելով գնում են։ Պատճառ պայծառացնել չեն գիտում, նոր պատճառներ գտնել չեն կարում, ևթէ լաւ են ու մին ապջիկ գրել կարզալ ու ամարում, զարմանում են. ևր ինգլիզ կամ Ֆրանկ են անունում, կարծում են թէ Աստուած է յերկինից իջել առնին ամպամթմթաս։ Եւ ինչ է պատճառն ապաշիմ, ևթէ ոչ գիտութիւնից զուրկ մնալն։ Կարծիմ ինձ վերայ կծծատիք ևթէ ասիմ, որ Ինգլիզն և Ֆրանկն կնանիք և զաւերքն վնց հօթն ևրկու կարզալ գրել գիտեն. մեծ-մեծ գրքեր են չարտրում, ապում, ատաքարութիւն, ձև, կար, վաճառականութիւն, լաւ ապ ածել, պար գալ և այլն։ Բայց յառաջ ևր որ Աղնութիւնն Տպին կընտրզվի ձեր միջումն, և զուն գիտութիւն քաշութիւնն կմոռանաք, էն վախան կիմանաք թէ ինչ է իմ յայս։ Ես, իմ լաւ Քաղաքացիք, ախ հարայ այ կանչում, հին խմբին Թողէք. նոր Աղգի լուսաւորութիւնն և պայծառութիւնն հետևեցէք» *)։ Հայրենիքի վերածնութիւնն ծարաւով վառուած Մ. Թաղիադեանցը Ռոգիատանից եկաւ էջմիածին և 1831 թ.

---

*) Կենսագրութիւն Աբար. Դաւթեան Թաղիադեանց Երեանցւոյ. Հաւաքեց և խմբագրեց Տ. Յովհաննէս Ս. Մկրեան. Թիֆլիս. 1886. էջ 133—138.

*առացաւ կաթուղիկոսական քարոզութեան և ուսուցչութեան պաշտօն, սակայն նրա ըմբռաւ և սրտով հոգին չկարողացաւ հաշտուել Կարբեցու ապիկար վերչութեան հետ և նա նորից հեռացաւ օտարութիւն *): Թաղիադեանցը ինքն անկարող եղաւ տանել էջմիածնի մթնոլորտը: Այդ մթնոլորտի առեղծող Յովհաննէս Կարբեցին նոյնպէս չէր կարող տանել «նոր» մարդկանց, որոնցից էր Խաչ. Արովեանը: Երբ հայ եկեղեցուց վերածնիչը 1836 թ. ճանաչած գերմանական ուսումով վերադարձաւ հայրենիք և դիմեց կաթուղիկոսին՝ պատրաստակամութիւն յայտնելով ծառայել ազգի լուսաւորութեան գործին՝ նա առաջարկեց հետևեալ պատասխանը.—դու անմեղների մկրտքը լաւ կարող ես խմորել. կրթելը քո գործը չէ: Ողորմելին կարծում էր, թէ Արովեանը՝ երբ գերմանական կրթութեան ակը անձն՝ պիտի բողոքականութեան ատրճէ հայերի մէջ: Անկարող՝ գնահատելու ազգի առաջաւոր և սրտացաւ մարդկանց, թոյլ՝ կառավարութեան առաջ՝ Կարբեցին չէր այն մարդը, որ պիտի նեցուկ կանգնար Թաղիադեանցի յանկացած «նոր Ազգի լուսաւորութեան և պայծառութեան» գործին:*

Ի՞նչ պատկեր ունէր Անդրկովկասում հայոց դպրոցական գործ Կարբեցու օրով, 1834 թ.: Այս հարցին պատասխանելու համար դիմենք այն տեղեկութիւններին, որոնք ժողովել են դաւառապետների ձեռքով և հրատարակուած են Ազ. Երիցեանի կրած Ներսէսեան դպրոցի պատմութեան մէջ (էջ 271—275): Ահա այդ տեղեկութիւնները:

Դպրոցի ուր գտնուելը	Երանգ թիւը	Ուսուց. թիւը	Աշակ. թ.
Թիֆլիս բաղաքում	8	8	126
» *Ալաբարում . . .*	6	6	136
Թելաւում	1	3	40

) Պատմում է, որ Թաղիադեանցը մի օր մտնում է վեհարան և տեսնում, որ Հնդկաստանից նոր ղրկած յախճապոկէ քարանձը Կարբեցին դարձրել է քանդարան Այդ բանի դիմաց նա գրում մի կարճ առնաւոր, թէ՝

Երբ քարանձ քանդարանն Ջինչ այլ գնդ ցոյս երջանկութեան,
Դարձնալ նոտա ցոյս Վեհարան, Փախիր փութով Վեսրովպ Դաւթեան.

Գպրոցի ան պահուելը	Նրանց թիւը	Ուսուց. թիւը	Աշակ. թ.
Գօղթում	5	5	165
Զուշիում	3	3	100
Նախիում	4	4	74
Նախիի գաւառում . . .	18	18	78
Ղարայի գաւառում . . .	1	1	10
Գերբինա քաղաքում . . .	1	1	27
Չամախի » . . .	8	8	83
Չամախիի գաւառում . .	4	4	18
Ախալցխա քաղաքում . .	7	10	194
Ախալցխայի գաւառում .	12	15	158
Երեանի » . .	21	23	215
Ղարաղ և Փամբակ գաւ. .	10	10	340
Ընդամենը . .	109	119	1764

Այդ 109 գպրոցներից 13 պատկանում էին հայ-կաթոլիկներին, իսկ մնացած 96 գպրոցներից միայն 2-ի համար է յիշուած, թէ բացուած են հայ հոգևոր իշխանութեան կարգադրութեամբ (Թելաւում և Նախիում): Հայ երեք աշակերտ ապրում էին մի վրացու գպրոցում: Ուրիմն տարրական գպրոցներում սովորող հայ մանուկների թիւը հաւասար էր 1767: Իսկ ովքեր էին ուսուցանողները: Եկեղեցու պահապան, ժամկոչ, քահանայ, տարեւոր, գպիր և վարդապետ: Իրեն բացատրութիւն եկեղեցու այս պատասխանների՝ յիշուած է նաև «տէրտէրն տղուն», այսինքն աշխարհիկ ուսուցանող, որը ճիշտ է ոչ թէ մանուկը տգիտական, այլ տգիտական պատճառներից:

Գաւառապետների ժողոված այս տեղեկութիւններից պարզում է, որ կրթական գործը 1834 թ. կապուած էր մանուկների ընդունելութեան հետ և չսահմանափակութեան տարիք էր ուսուցանողների համար: Ըստ իւր, օրինակ, հայ ուսուցիչը առնում էր իւրաքանչիւր աշակերտից նայած նրա ծնողի ունեցուածքին 20 կ. մինչև 2 րուբ. ամսեկան*): Եկեղեցին չէր հանդիսանում

և գործը բաղնելով տեղանի վրայ՝ հետանում էր գործից:

*) Обозрѣніе Россійскихъ владѣній за Кавказомъ. ч. III. էջ 311

այդ դպրոցների իրաւասէրը, նրանց օժանդակողն ու հսկողը: Եւ նրբ կատարեալ բարձ Բաղէնը 1834 թ. յունուարի 13 ին մի շրջաբերականով կարգադրեց. թէ՝ «1. Ոչ մի դպրոց չէ կարող բացուել առանց ուսումնարանական Դիրեկցիայի (վերատեսչութեան) հրամանի, և 2. Ոչ ոք կարող է պարապել մանուկ դպրոցներում ուսուցչութեամբ և մատաղ սերնդի կրթութեամբ առանց այդ մասին վկայական և հրաման ունենալ ուսումնարանական իշխանութիւնից,» *)—Կարգեցին, իրրև հայ հիերոգրաֆ պետ, որպէս և ի պաշտօնէ նախանձախնդիր անձն հիերոգրաֆական դասի կրթական գործունէութեան՝ հարկ չտեսաւ բանակցելու կատարեալի հետ և պաշտպանելու հիերոգրաֆների բացած դպրոցների գոյութեան իրաւունքը: Պէտք է նկատել որ նա իր նիրկայացրած հիերոգրաֆան կազմակերպութեանը չէր համարում չահագրգռուած Բաղէնի շրջաբերականով:

Կարգեցին կրթական գործի ատաղ ու հրահրող շրջաձառ և 1836 թ. մարտի 11-ի «Պօլօժէնիէ»-ից յետոյ, երբ հայ հիերոգրաֆը առանուց էր իրաւունք իր գործունքի ատելիան գործելու ժողովրդական լուսաւորութիւնը: «Պօլօժէնիէ»-ի հրատարակութիւնից յետոյ 1837 թ. նրանից այնքան ատած և հարուածած ներսեհեան գործը հրատարակուեց թիւմակեան սեմինարիա: Նոյն 1837 թ. սեմինարիա բացուեց և կրևանում, իսկ 1838 թ. Շուշում: Այս երկու վերջին դպրոցները՝ չնայած իրենց անուան՝ հատարակ, անբաժանելի ծխական ուսումնարաններ էին. Կարգեցու կաթուղիկոսութեան վերջում, 1841 թ., մի վերկայութեամբ Ռուսաստանի հայոց վրայ թիւմակ կային ընդամենը 16 դպրոց, 39 ուսուցիչ և 689 աշակերտ (Էջմիածնում՝ 1 դպր., 4 ուսուցիչ, 14 աշակերտ, Ներսիսեանի թիւմ.՝ 9 դպր., 11 ուս. 270 աշ., Վրաստանի թիւմ.՝ 2 դպր., 11 ուս., 289 աշ.; Ատրպատականի թիւմ.՝ 2 դպր., 4 ուս., 22 աշ., Երևանի թիւմ.՝ 1 դպր., 5 ուս., 42 աշ., Գարդաբաղի թիւմ.՝ 1 դպր., 4 ուս., 52 աշ. Ջիւլֆայի թիւմ.՝—ոչ դպրոց, ոչ աշակերտ) **): Պետք

*) Ս.Պ. Երիցեանց՝ Պատմութիւն ներսեհեան դպրոցի, էջ 269–278.

**) «Արարատ Արարատեան». 1850. № 45. էջ 360.

ննթադրել, որ այսօրվա յիշատակ դպրոցները նրանք են, որոնք ճանաչուած էին հին հայոց կողմից՝ իբրև նրա հաստատութիւնները և որոնց նիւթական ու բարոյական մասին նա պարտաւոր էր զգում մտահոգել: Անգլիական, ուր կենսունակ էր հայրենիքի ճնշող միջավայրը, 16 դպրոցից բաժին էր ընկնում 5 դպրոց 24 ուսուցչով և 397 աշակերտով: Եւ այդ թուերը իրանք են խօսում, թէ որքան պարտի վիճակ էր ապրում հայ հին կրթական աստիւթիւնը:

*Կարգերու կաթուղիկոսութեան օրով նոյնիսկ վանքերից հին հայոց կախուած թեմական դպրոցների գոյութիւնը և նա ըմբռնողութիւն հոմ հետաքրքրութիւն չունեցու դէմ գնալու պատճառով վանքին: Մենք ի նկատի ունենք այն վերաբերմունքը, որ կար կառավարութեան և հայ հոգևոր իշխանութեան մէջ դէպի թեմական դպրոցները, թէ նրանք հաստատուած են կրթութիւն մատակարարելու միմիայն հոգևորականների որդիներին: Եթէ կառավարութիւնը այդ տեսակէտն էր պաշտպանում և այդ տեսակէտն էր բխեցնում «Положенիе»-ից՝ դա հասկանալի էր. նա ցանկանում էր հոգևոր կաստա տեղծել և հայ ժողովրդին բաժանել նրա տեղծած կրթական հիմնարկութիւններից: Բայց միայն տհասութեամբ կարելի է բացատրել Կարգերու տեսակէտը, երբ նրա կարգադրութեամբ 1838 թ. էջմիածնի Սինօդը միջոց էր վրտռտանի թեմի Կարապետ արքեպ. միջնորդութիւնը՝ ընդունել աշխարհականների որդիներին նորաբաց թեմական դպրոցը և կարգ էր դնում, թէ՝ «ի Հոգեւոր Ուսումնարանին կարելի է ընդունել զորիս աշխարհականաց յայնժամ, երբ ճուխրացօք բաղաքին Տիխխայ աճեսցին դրամք Ուսումնարանին. իսկ այժմ ճախնաս արդեանց եւ միջոցացն՝ առաւելապէս պարտ է ուսուցանել զորդիս հոգեւորականաց. եւ միչ ցայն ժամանակ որդիք աշխարհականաց կարեն ուսանիլ յարհուրի ուսումնարանի ժողովրդականաց Տիխխայ»: *) Այս տեսակէտը մշակիւց յետոյ՝ էջմիածնի մատենադարանում էր, որ հոգևորականների որդիները կրթութեան չըմանեն պետական դպրոցները, իսկ պետական ուսում-*

*) *Երիցեանց*, էջ 318.

նախանձախնդրությունը հանում էր, որ հայ աշխարհականների որդիները հետզհետե դպրոցներից։ Այսպէս՝ 1842 թ. փետրուարի 28-ի № 385 գրութեամբ Սինոդը պահանջում էր մարմնաւոր իշխանութենից, որ պետական դպրոցներից արձակուին 15 տարեկան ժամում ունեցող աշակերտներ, *) իսկ Երևանի փոխ-թեմակալը 1842 թ. փետրուարի 2-ի իր առաջարկութեամբ «պարտաւորեցնում է կոնսիստորիային որ առանց ներքոգրեալ վարուի որդոց «Սեմինարիա» չբառնալ հոգևորականների հետ.—«Դանել պետք (ուսում չառացող քահանայորդը) ՚ի չորս հարիւրաւոր կամ առ ՚ի պետերականութիւն», ինչպէս որ հրամայում է 1723 թ. սեպտ. 1-ի կայսերական հրովարտակը»։ **) Դուրս էր գալիս, որ հոգևորականների համար առնձուած դպրոցները պիտի սպառնալիքով առնային աշակերտ հոգևորական-ծնողներից, որոնք ունէի աշխատաց և ունեար լինելով և ցանկանալով իրենց որդիների առաջ հարթել պետական ծառայութեան ասպարէզը՝ բարեբաղդ էին համարում անվճառնել իրենց զաւակ կրթարանները և նախապատուութիւն տալ պետական-աշխարհական դպրոցին։ Այդ գործիքներին հակառակ էր վարում հայ ժողովրդի խառնարհ և շահնեար մասը. նա էլ՝ համեմատ իր կացութեան՝ կարող էր և ձգտում էր իր որդիների համար կրթութեան յարկ ընտրել հայ դպրոցը, սակայն այսպէս ծառանում էր մարմնաւոր իշխանութիւնը և արգելքներ յարուցանում դրա դէմ։ ***)

Այս գրութիւնը չէր կարող նպաստակայարմար դառնալ մի

---

*) Անդ, էջ 370.

**) 1837—1887. Յիշատակարան Հայոց Հոգևոր թեմական դպրոցի Երևանայ. Թիֆլիս. 1888. էջ 18.

***) Անդ. էջ 24. Արդեօք յարուցանողների շարքումն էր և Խաչատուր, որն՝ իբրև անօրէն Երևանի պատուական դպրոցի՝ ունէի էր խոստովանանք աշխարհականների որդիներին թեմական դպրոցից արձակելու հարցում։ Խաչատուր այս դէպքում գործում է իբրև պետական պաշտօնեայ. Ննջեցեալ էնգ, թէ կար և այն հանգամանքը, որ նա ցանկանում էր ինքը լուսաւորել հայ պատանիների միտքը և չթողնել, որ հայ մանուկները բթանան հոգևոր դպրոցի անհրապոյր միջնադարեան

հայ հոգևոր իշխանության և թէ կառավարության համար։ Առաջինը՝ վակելով իր զորության դաւը աշխարհականների աչքի՝ հալածում էր այն ամէն, որի վրայ ինքը նստած էր. ապանց ժողովրդական դահճության չէր կարող հայ զորց գոյության ունենալ, խակ ժողովին մերժել այդ զորցը՝ նշանակում էր դահճության չքացանելնդանից։ Երկրորդը մեր ծայրագոյնում դեռ այն այժն ու կազմակերպութիւնը չունէր, որ ամբողջանին իր ձեռքը կենտրոնացնէր երկրի կառավարական կարծը և անդիմադիր հասարակական ինքնագործունէութիւնը. կրթական գործում նա պէտք է զիջող լինէր։ Ինդրի նման դասաւորության մէջ հայ ժողովրդի ձայնը եկաւ սթափեցնելու էջմիածնին և առիթ տալ իր զաւակների համար ազգ յատկացնել ազգային զորցի չարկի առաջ։ 1842 թ. Թիֆլիսի հայ հասարակության մէջ սկսեց խմորուել մի միտք, որ հետևեալն էր. հայ հոգևոր իշխանութիւնը աշխարհականների ազգինների չի կընդունում իր զորցը, այն ինչ նա առնչուել ու բարգաւաճել է հէնց աշխարհականների գոհարերութեամբ. արդ՝ արդարացի կլինի, եթէ պահանջ դրուի, որ զորցի եկամուտների կէսը յանձնուի պետական գիմնազիային, բացուին այդ միջոցներով ազնուական դասարաններ, ուր կարող կլինին կրթութեան առնել հայ վաճառականների որդիները*)։ Վերոհաս միտքը, ինչպէս ասացինք, սթափեցրեց էջմիածնին։ Նա մի ընդարձակ պատճառով գիմեց Վրաստանի հայոց կոնսիստորիային՝ վասարանելով զորցի և նրա եկամուտների անկողմնակալ լինելը և ծանուցանելով մինչև ժամանակ, թէ Սինոդը արշիլ է գիմել ներքին գործերին միջամտութեան և ցանդրել տեղական Թիֆլիսի որոց վաճառականութեան հայոց տեղւոյն գատաստարանաց յայտնի առնուլն, եւ այնու տալ Սիմեոնոսին վարելութիւն իմն երախտաճանաչութեան ցուցանել ջերմեռանդութեան ցոցս առ հայրենի եկեղեցին, *որոյ ամենառատ կարիքն յայտնին առաւաձեռն նուիրատուք նոցա*

*) Երիցեանց, էջ 376.

ըստ օրինակի բարեպաշտոն նախահարց իւրեանց» *): Այսպիսով վերականգնում էր խախտուած ներդաշնակութիւնը հայ հոգևոր թարձր իշխանութեան և հայ ժողովրդի միջև: Հայ պարոյկ պատ-նները բացում էին բոլոր հայերի համար «ուանց ծագման ու կացութեան խտրութեան: Եւ դա պրաւական էր, որ այդ պատ-րոյը պիտի ծաւալուի ու բարգաւաճուի:

Ծովհաննէս Կարբեցուն յաջորդեց Ներսէս Աշտարակեցին, որի կաթուղիկոսութեան ժամանակ Տամասիա ոչինչ չարութեց կրթական գործի ծաւալման համար: Իր կաթուղիկոսական թե-մում նա 1849 թ. փակեց Երեանի թեմական պարոյը, որը վե-րաբացուեց միմիայն նրա մահից յետոյ՝ 1857 թ.: Նոյնիսկ Ներսիսեան պարոյը, որ նրա հին պանծալի գործերից մէկն էր, շատ քիչ արժանացաւ ուշադրութեան: 1848 թ. նա առեղ-ծեց աշխարհականներից ու հոգևորականներից կազմուած մի մարմին, որին յանձնեց պարոյի կառավարութիւնը: 1851 թ. մինչև 1861 թ., 10 տարուայ ընթացքում այդ մարմնի մէջ մտցին երեք աշխարհական հոգևորականներ—Ա. Թայլեան, Գ. Մանդինեան և Դ. Խէրտլինեան,—որոնք գործում էին կաթո-ղիկոսից առանձին իշխանութեամբ, պատասխանատուութիւն չէին դրում հաշուետուութիւն տալ ժողովրդին կամ նրա վառհա-թիւնը խնդրել և ամէնաչնչին ծանուցում էին իրենց պատաս-խանատու մարմնի կաթուղիկոսի առաջ: Յանձնելով պարոյի գործը իր բարեհաճութիւնը վայելող աշխարհականներին՝ ներ-սէսը պարոյի համար 1852 թ. տեսուչ հրաւիրեց Պետրոս Քան-շեանցին, մի կրթուած, առաքինի և բարի մարդու. Լայն չէին Քանշեանցի կրթական հորիզոնները, սակայն նրանք բրեանանե-րան բարեյաջողութեան հետ չէին անդրադառնում աշխարհի ա-ռարկաները (օր. մարդակազմութիւն) և այդ պատճառով խոտ ընդհարութիւն էին գտնում ծերունի կաթուղիկոսի կողմից: Ներսէսը ուզում առհասարակ և կրօնական գործերի կողմնա-կից էր և այդ խնդրում գիջող չէրաւ **): Նրա մահից յետոյ այդ

*) Նոյն, էջ 375—384.

**) Սա. Վարդանեանց. «Համառօտ պատմութիւն Ներսիսեան Հոգևոր պարոյի հօրինուածի և հինգամեայ գոյութեան» (1824—1899) Թիֆլիս. 1900. էջ 86—107.

ծրագրի ջատագովը հանդիսացաւ Վրաստանի առաջնորդ Սարգիս եպիսկոպոս Ջալալեանը, որի բնութագիրը տեսնում ենք Զանշեանցին 1857 թ. թողնել գործոյն անհաջողութիւնը։ Այդ դէպքից յետոյ գործոյն շուրջը տեսնում բաւական պայքարի մըթնոլորտ։ Մի կողմից կանգնած էին Թեմական Ջալալեանը, Տարտար Ս. Թալիեանը և այլ իշխաններ ու նրանք, որոնք դնում էին, թէ կրթական գործի անօրէնը առաջնորդն է և տասրակութիւնը իրաւունք չունի խառնուելու նրա գործերին ու կարգադրութիւններին։ Միւս կողմից գործում էր հայ աշխարհիկ մտաւորականութիւնը յանձին Գ. Զանշեանցի, Գր. Իզմիրեանի, Գաբր. Խատիսեանի, Գևորգ Սիմէոնեանի, Համբ. Էնֆիաճեանի և այլոց, որոնք պաշտպանում էին այն տեսակէտը, թէ կրթական գործի ակը հայ ժողովուրդն է, իսկ Թեմական այդ ժողովրդի հոգևոր ատաստարը,—ուրեմն և նա պիտի ենթարկուի ժողովրդական կամքին։ Խնդիրը այսպիսով ընդունում էր ռասմանադրական պայքարի բնոյթ։ Ցօգուտ ռասմանադրական կողմնակիցների խօսում էր այն պատմական հանգամանքը, որ հայ եկեղեցին իշխանատեր էր իր բարոյական հեղինակութեամբ, որ նա՝ չունենալով իր թիկունքում մարմնաւոր իշխանութեան պաշտպանութիւնը՝ իր կշռի ու արժէքը առանում էր ժողովրդական յօժարակամ գործակցութեամբ ու համակրանքով, որ և նա պիտի դիջէր ու ճանաչէր ժողովրդական կամքը, որ վերջինս կամենում էր անօրէնը լինել իր հաստատութիւններին։ Ջալալեանը և իր կողմնակիցները գործադրում էին հինգ օրաստրի ռպիցութիւնը, իսկ հարկը պահանջած դէպքում չէին հրաժարում բռնադրական մատնութիւնից։ Երկրի մարմնաւոր իշխանութեան ուղած հինգ պրոթիւններին մէջ նրանք Գևորգ Զանշեանցին և նրա համախոհներին ամբաստանում էին ազատամտութեան և հակառուսական պրոպագանդի մէջ, *) իսկ հայ հասարակութեան ականջին փսփսում էին

*) Ենթադրութեամբ յիշատակում ենք, որ մեր բռնմաշխատասիրութեան պատճառն ար. Էջեան սրտանիր եղաւ ծանօթացնելու մեզ իր գործակիցների մի քանի անտիպ վաւերագրերի հետ, որոնք լոյս են տեսնում Ջալալեանի և նրա կուսակիցների գործելակերպի վրայ և մեծապէս

այն միտքը, թե մեր վերածնությունը քարոզիչները կամենում են խորտակել ազգային ինքնության և բողոքական դարձնել հայերին։

Ներսեհյան դպրոցի շուրջը ստեղծուած հատարակական բախումը երիտ բոնակիների մէջ արհեստական երևոյթ չէր։ Այս աշխատութեան նախորդ գլխից տեսանք, թէ ինչ խորը վոխհարութեան առաջ էր կանգնած հայութեան մեծամասնի կեանքը 60-ական թուականներին և որքան անկայունութեան էր մատնել ուսճայած առևտրա-արդիւնաբերական կապիտալը հատարակական յարաբերութիւնների մէջ։ Այդս հնարաւոր չէր մնալ երկիւղած քաղքենի, մի անձուկ անկիւնի տակր խանութպան ու արհեստաւոր, տհմանական շրջանի բնակչութիւն քարոզչի և ունենալ անկարօտ ապրուստ, հայտնէս աշխատանք։ Ստանում էին հին յարաբերութիւնների հիմքերը, կերտում էր նոր հատարակութիւն, ուսկի և պահանջում էր բոլորովին հին վոչին ու արհեստին ժամանակին պահանջներին։ Դպրոցին ուկրիութեան մի մեծ ժամանակ վերապահուած էր խաչուելու և դա մանուկների հոգիների մէջ, որոնց կեանքը ազգային քաղաքական ասպարէզ չունէր և որոնց հատարական դիմերեսը խարխափած էր վերազանգատելու հոգևոր ու բարոյական արժէքների վրայ։ Թէ հայ դպրոցին ժամանակակիցները որքան պահանջներ էին ստանձնում—դա պարզում է հետևեալ վկայութիւնից. «Մենք այսօր (Թիֆլիսում) շատ անգամ լսում ենք մեր արուեստաւորներից, հասքարներից, (գուցէ և ծառատների հայերից ևս մեկնումը լինի լսում) թէ նորա չեն կամենում երկար ժամանակ պահել իրենց որդիքը մեր ժամանակ ուսումնարաններում այն պատճառով, որ այն ուսումով նոցա որդիքը հոգի ոչ են կարողանում դառնալ։ Օրինակ դանդատ։ Ամենայն մարդ կարող է վկայել, որ մեր այժմեան ուսումնարանների հարդարժանքը խնդճ աշխարհը ոչ մի պարծ չէ կարողանում կատարել աշխարհի մէջ, օրինակ կերակրի ապրուստ ճարելու համար։ Նորա ուսումը ոչինչ յարաբերութիւն

Ժամանակ բացատրում հայ կրթական գործի շուրջը տեղի ունեցած տհմանադրական շարժման արաջ կոպիտը։

չունի կնոջ հանգամանքների հետ, ուստի է առել նա միայն այն մտքով, որ ասէ, թէ ուստի եմ առել: Հարցրէք, այդ ուսման պատճառին՝ կարող են իրենց կնանքը ապահովել ինքնակեր կերպով: Մենք պատասխանում ենք նոցա կողմանէ, ոչխարին չէ: Ուսումը այլ է պետ ևս մեզ համար, և այլ է աշխարհի մէջ ապրելը. ուսումնարանում երեխայն ստանում է իր ուսման ընթացքը և կնոջ տալուէդ մանելով, նոր է պետք սովորել կնոջ հանգամանքները և պայմանները»): Այս վկայութիւնից պարզւում է, որ կնանքն ու դպրոցը նորաշինակ դպրացման մէջ չէին. կարելի էր ուսում առած մարդու համբաւ ունենալ, բայց անզօր լինել գործադրել այդ ուսումը կնանքի բարելաւման համար: Անկին. դպրոցի հաղորդած ուսումը անպէտք էր կնանքի համար: «Հայոց դպրոցներում, վկայում է մանկավարժ Ղ. Աղայեանցը, այն էլ որ կային, դիւրութիւն չէր ստանում, այլ միայն կրօն և հայոց լեզու: ... Մեր դպրոցները տխուր էին մանկանց և ուրախութիւնը: ... Հին վանական կրթութիւնն ևս մի տեսակ տարրական լուծ էր, պէտք էր նրանից նախապէս ազատուել: Կնանքը և դպրոցը մի ուղղութեամբ չէին ընթանում, դպրոցում լուսաժը հերքում էր կնանքի մէջ»**): Քանի այսպէս էր դրութիւնը նախորդ դարի 50-ական թուականների վերջին և 60-ական թուականների սկզբում, ապա արհեստական, դատ անգործին կամ անձնական բնոյթ չունէր այն պայքարը, որ մղում էր հայ աշխարհիկ մտաւորականութեան և հոգեւոր առաջնակարգ և համբաւաւոր ներկայացուցչի միջև: Ցիշենք այստեղ և այն, որ Թիֆլիսի պայքարը նոյն բովանդակութեամբ տեղի ունէր նաև Շուշում: Պ. Զանչևան և Սարգիս եպ. Զալալեան երկու տարբեր հոգեւորական հայեացքներ ունեցող սկզբունքների մարդիկներ էին: Կարեցու օրով հոգեւոր դպրոցի և հայ ժողովրդի փոխադարձ նեղութեան յարաբերութիւնների դրծը վատնդաւած էր շնորհիւ այն մտայնութեան, որ կամենում էր աշխարհականների դաւակներին մերժել դպրոցի յար-

*) «Ռուսկի Հ. Ուխ». 1862. Նոյեմբեր, էջ 852—853=յօդուած Գ. Տէր-Աղէքսանդրեանի.

**) Ղ. Աղայեանց՝ «Մի երես մեր նորագոյն պատմութիւնից». Մոսկուա. 1891. էջ 19 և 26.

կից: Ջալալեանի ներկայացրած նիկոլայականութիւնը նոր վտանգ էր սպառնում հայ ղպրոցի համար, երբ ձգտում էր անսասան պահել իր ինքնագլուխ անկախութիւնը վարչական դրծիքում և իր կրօնական առհմանափակ ծրագիրը տանել մէջ: Հասկանալի է, որ հայ աշխարհին մատուցակաութիւնը չըպիտի հանդուրժէր Ջալալեանին և նրա ուղղութիւնը:

Հասարակական պայքարը իր նոր դիմի մէջ էր, երբ հայրապետական գահ բարձրացաւ Մատթէոս կոմս ու վիւռոյը: Հայ նիկոլայական այս պետը՝ չընայած իր կրօնական մոլեռանդութեան՝ հետամուտ էր ընդունց ընդունելու, որ իր նպատակները կազմակերպութիւնը դժուար է միմիայն ժողովրդական համակրանքով, որ հնարաւոր չէ անպատանալ այդ ժողովրդի պահանջները՝ մասնակցութիւն ունենալ կրթական գործի կազմակերպման ու վերակազմման մէջ՝ և դպրոցական—կրթական հարցերում բանից առհմանադրական կոմիտէների ուղղութիւն:

1860—61 թ. թ. Մատթէոս կոմիտէների կարգադրութեամբ Անդրկովկասի հայ երեք թեմական դպրոցների կառավարութիւնը անցաւ ընտրովի հոգաբարձական մարմիններին: Մի անգամից չը պարզուց և չը ճշտուց հոգաբարձութիւնների ընտրութեան եղանակը և նրանց իրաւասութիւնները մանը: Օրինակ, հայրապետական կոնդակի թելադրանքով (1860 թուի մարտի 23) Երևանի թեմական դպրոցի հոգաբարձութեան ընտրութիւնը պիտի կատարուէր դասային կարգով. «զերկուս յաղնուականաց, զերկուս 'ի պատուական քաղաքացեաց և զերկուս առեմնեականաց»:*) Հոշիմի թիֆլիսում ընտրուելիք հոգաբարձութիւնների համար այս նախադրութիւն չունէր, **) թէև յիշում էր, որ հոգաբարձները արժանաւոր, «վկայեալ հարազատութեամբ» և ջերմեռանդ ազգասէր անձինք պիտի լինեն: Առաջին ընտրովի հոգաբարձութիւնների համ յատուկ յանձնաժողովների վրայ էլ պարտք էր դնում դպրոցական կանոնադրութիւնները կատարել առաջարկել կոմիտէների հաստատութեան:

---

*) Յիշատակ, էջ 47.

**) «Արարատ Հ. Ա.», 1861. Ապրիլ. էջ 299 և յունիս էջ 486.

թիւններուն մէջ պիտի դրուէր հոգաբարձութիւնների իրաւունքների ու պարտականութիւնների չափը։ Եւ այսպէս ծագում էր նոր պայքար կամ նոր տարաձայնութիւն, թէ ինչ սահմաններուն մէջ պիտի լինի ամիսփուած ժողովրդական ներկայացուցիչների իրաւասութիւնը։ Հետևանք այն պայքարին, որ տեղի ունեցաւ Թիֆլիսում ներսեան դպրոցի կանոնադրութեան շուրջը։ Այդ պայքարը և նրա բովանդակութիւնը պիտի համարել ամենամեծ ձեռկերպումը ժամանակի ողջ շարժման։

Թիֆլիսում պայքարողների արմատական թևը 1861 թ. յանիսին իր պահանջները կներկայ էրեմեա Արծրունու բերանով ամփոփել է հետևեալ հինգ կէտերի մէջ. «1. Բարը արդիւնք դարս ունի ուսումնարանին՝ ի նիւթիայ ժամանակին ընդ պահպան անուամբ հանդերձ ամենայն պէտիւք նոցին պարտին մնալ՝ ի անձնականութիւն դպրոցին առանց ձեռամուխ լինելոյ յայնս հոգևոր իշխանութեան։ 2. Ընդարձակել գործն ուսման դպրոցին ըստ չափու արդիանցն։ 3. Զննութիւն առարկայից ուսման առնմանել արդէն յԱրբունի դիմնադրեայս, այնպէս դի աշակերտք միոյն ուսումնարանի կարողանան ուղղակի մտանել՝ ի կայսերական համալսարանս։ 4. Որդիքդ կամ ժառանգաւոր աշակերտք դպրոցին, որք անանձն և ուսանին՝ ի հոգևոր նոքին, ունիցին զիմովին ազատութիւն, մինչ բնաւորեալ ինամք մնասցէ՝ ի հոգևորականութիւն, կամ յիսս արհանջել զծախսեալ՝ ի վերայ նորա դրամս։ Եւ 5. Ուսումնարանին կառավարի՝ ի ձեռն Հոգաբարձութեան, զանգամս որոյ թէ՝ ի հոգևորականաց և թէ յաշխարհականաց. ունի ընտրել ժողովուրդն. վճռակատար Առաջնորդն ունի լինել նախագահ և իրրև այդ հոգաբարձու, իսկ ծայրագոյն կառավարիչն է վեհափառ Կաթողիկոսն Ամենայն Հայոց»։ *) Այսպիսով արմատական հոսանքը դպրոցը ինքնավարի՝ հոգևոր իշխանութենէն իրրև իրաւական մարմին դպրոցը ներկայացնել թէ քաղաքական տեսակէտէ ձգտում էր այն աշխարհականացնել թէ քաղաքական վարութեան և թէ քաղաքական ծրագրի։ Նա կամենում էր հայ մտքնակարդ դպրոցը դնել այնպիսի բարձրութեան վրայ, որ վերջինս կազմէ մի օղակը պետական դպրոցական շղթայի։

*) Գ. Նէօլ գրագարանի անտիպ վաւերագրերից։

Դա, հարկաւ, յաւ ցանկալի էր եւ նոր էջ բացուէր, ապա կարելի կըլինէր ասել, թէ հայ ուսում առնող սերունդը նոյ ամբողջութեամբ, գոնէ իր պատկառելի մասով կըհետեւէր մայրենի դպրոցի յարկի տակ և դուրկ չէր մնալ ազգային կրթութենից։ Արմատականների տեսակէտը ունէր իր խոշոր թերութիւնը. յաւ կազմակերպած դպրոցի պահանջ առաջադրելով՝ նա նրանից խնդրում էր այն ինչ ցոյց էր տալիս ներկայիան հասոյթների անբաւարար աղբիւրները։ Դժուարով հոյ կրթարանը կապել ազգային դպրոցական շղթայի հետ՝ նա համարձակութիւն կամ խնդահասութիւն չունէր պետական միջոցներ պահանջել այդ կրթարանի պահպանութեան համար։ Մի այդպիսի պահանջ առաջադրելով՝ նա պիտի իր վրայից թօթափէր հայ ներկայիս ծայրագոյն իշխանութիւնը և ձգտէր իրագործելու հոյ ազգի աշխարհիկ կազմակերպութեան ու ներկայացուցչութեան պետութեան առաջ։ Նման ազգայնութեան համար հոյ արմատական հասարակը այժ չունէր և նա կամայ-ակամայ ստիպուած էր ազգը ներկայացնել եկեղեցուն շնորհած ինքնօրինութեան շրջանակներում. պահել եկեղեցական համայնքի ձեը, բայց միջուկը լցնել աշխարհիկ իմաստով։ Արմատական հասարակը զրում էր իր անզօրութիւնը պետականօրէն շարժուելու առաջարկում. նա միայն զօրաւոր էր հոյ միջավայրում, ուստի և նրա ծրագիրը իր վրայ կրում էր տարամերժական կնիք. որքան նա պահանջկոտ էր հոյ եկեղեցու կազմակերպութեան դիմաց, այնքան երկչոտ էր պետութեան առաջ։ Եւ նրա ծրագիրը ընդծելով ցանկալին՝ անդիտանում էր իրագործելին։ Դժուարով աշխարհիկ ազգային դպրոց ունենալ՝ նա յստակ ուղի չէր տեսնում այդ նպատակին հասնելու համար, այլ նրանից դուրս էր թերում եկեղեցու կազմակերպութեան առաջ և իր տեսակէտը կառուցանում այնպիսի յարաբերակցութեան պատասխանատուի վրայ, որպիսին էր եկեղեցական հասոյթների հետ ժողովրդական յօժարակամ ձեռնտուութիւնը։ Արմատական հասարակը առաւելում էր քաղաքական թուլութեամբ և այդ թուլութիւնն էր տարածում իր տեսակէտին։

Արմատականների հակառակ տեսակէտ էր պաշտպանում պահպանողականների խումբը։ «Ուսումնարանն մեր, ասում-

ծում էր այդ խումբը, է հոգևոր պլրոց, վանորայ կանոնադրութիւն նրա պարտի համաձայն լինել կանոնաց Սրբոյ Եկեղեցւոյ մերոյ. կառավարութիւն նորին ըստ կայսերական օրինաց պարտի լինել ընդ հրամանատարութեամբ վիճակաւոր Առաջնորդի և մարմնաւորականքս կարեմք լինել՝ ինձմէն հոգևոր իշխանեան խորհրդակից և օգնականք»: *) Ուրեմն պատպանողական խմբի տեսակէտը ձեակերպում էր այսպէս. հայ եկեղեցական վարչութեանը լիակատար և անսահմանափակ իշխանութիւն, իսկ աշխարհականներին կարծէքի և խորհրդի իրաւունք և պարտաւորութիւն նիւթական աջակցութիւն ցոյց տալու: Այս տեսակէտով պլրոցի կրթական բովանդակութիւնն էլ պիտի յարմարեցուած լինէր կրօնի թելադրանքներին: Պատպանողական խմբի տեսակէտի յատկանութիւնը և պատճառաբանութիւններն մենք արդարդած ենք տեսնում ժամանակակից մամուլի մի յօդուածի մէջ, որը այսօր առաջ ենք բերում ամբողջովին:

«Տիխոնից, գրում է «Համբաւարեր Ռուսիոյ» պարբերականը, **) սխրալի և յոյժ ցաւալի լուրեր են հասնում մեզ: Հաղիւ ուրախացած էինք՝ թէ ահա ամենայն երկպառակութիւն և կուսակցութեան հոգին վերացան Տիխոնում և նրա հոգևոր պլրոցի մէջ, հաղիւ թէ սկսած էինք յուսալ բարի բարի համբաւներ առանալու այդ տեղից, որ «սպարսկէին մեր սակերքը,» յանկարծ ամենայն ինչ պղտորւում, և սկսւում է: Ուրեմն մեր այդ դատարկալի զգացմունքները միայն բազէական, միայն մի պիշերուայ երազ էին: Ախտա հոգևոր պլրոցին, ախտա նոյնպէս երջանկայիշատակ Հիմնադրի մեծամասնակ աշխատութեանը: Մենք մտադրութիւն չունինք քննելու և պնդելու՝ թէ երկու կուսակցական բաժնից մէրը սրբատ է և մէրը մեղաւոր, կամ մէր կուսակցական բաժնի առաջնորդութիւնը օրհնական է, և սրինը վնասակար: Մի բան միայն նշմարւում է այդ երկպառակութիւնից՝ թէ երկու կուսակցական բաժիններն էլ չեն մտածում

*) Պ Ն էօի զրոպատրանի անտիպ վաւերագրերից:

**) «Համբաւարեր Ռուսիոյ». 1861. № 9. (գեկտ. 10). խմբ.-հրատ. Ջ. Վահրամեան Յօդուածը թուագրած է նոյեմբերի 23-ից:

հասարակաց ոգեպային օգուտը, վասն զի եթէ մառնամ լինէին նոքա՝ նրբէք այդ վիճակին չէին հասուցանել ուսումնարանը, և՛ ի մի սիրտ և՛ ի մի հոգի կիսապատէին ամենքն։ Ասացէք խնդրեմ՝ ինչ օգուտ և ինչ շահ այսպիսի անհամաձայնութիւններից։ Բայն միասուց այլ բան կայ. ասացէք։ Եթէ մի ոգին կամենայ խմանալ միւս կարծիքը այդ մասին, այս է. նախ ուսումնարանը նրբէք կանոնաւորելու և ժողովրդեան մէջ սրտանջը և սարաձայնութիւնը վերջանալու չէ, մինչև որ այդ ուսումնարանը բոլ ամենայնի չսրուշուի՝ թէ ինչ ուսումնարան է. Հոգեւոր, թէ՝ Աշխարհական։ Եթէ Հոգեւոր, ուրեմն թող հոգևորները միայն խառնուին նորա կառավարութիւնը, աշխարհականները դրծ չունին, թէև ժամանակ ժամանակ նախրապետ եղած են նորան. ինչ որ ասած է մի անգամ, նորան կրկին յիս չես բերելու։ Իսկ եթէ Աշխարհական, թող ուրեմն հոգևորները ձեռքերնին լուանան նորանից։ Բայց ասանք թէ այդ ուսումնարանից հոգևորները ձեռք վեր առին, և եղաւ նա բոլ ամենայնի Աշխարհական դպրոց, ինչ է կարծում, դրանով բանը կվերջանայ, խռովութիւնը կդադրի, ոչ, և սմենևին այլ կյառաջանան այն ժամանակ այլ խնդիրները, որ դուք միւ պատուիրի համարդիքը մոռած ևս չեն (սինոդին է կառավարութեան կողմը—Խ. Ա.)։ Թողէք ուրեմն, պատուիրի Տէրերը, այդ ուսումնարանը հոգևոր իշխանութեան ներքոյ, թող որ լինի նա միայն հոգևոր դպրոց՝ հոգևոր իշխանութեան ներքոյ, թողէք այդ հոգատարութիւնը վերադառնալ Սրբազնակատար Թաղիկոսին, նա լաւ գիտէ իւր ազգի պետքը, դուք ձեռք վեր առէք այդ ուսումնարանից, և մի խառնուիք նորա գործին, որ խաղաղութեան մէջ մնալով՝ ծոցին և պտղաբեր լինի։ Իսկ եթէ դուք անպատճառ կամիք խառնուիլ ուսումնական գործերին (որ վնասակար և գովելի բան է) չինեցէք ձեզ համար առանձին ուսումնարան, որի մէջ դուք միայն ձայն կունենաք (եթէ կարողանաք ունենալ) և հոգևորները առաջ արկելու չեն լինելու մեր ազգի յառաջադիմութեանը, որպէս կարծում են բանի մի պատուիրք»։

Եթէ այժմ համեմատենք արմատական և պահպանողական հասանքների տեսակէտները կրթական գործի կազմակերպման

հիմնական սկզբունքների նկատմամբ, ապա կընկատանք, որ ամատականների պահանջը որոշ կէտերում թոյլ էր չնորհել իր կողմնակիցների քաղաքական ակարութեան,—այն ինչ պահպանողականների պահանջը՝ գնդծ լինելով այդ թուլութենից՝ առաջում էր հաստատական կարճատեսութեամբ և նեթէ պատնար կիրառելի՝ գոնե նկնդեցու և ժողովրդի մէջև ու հարուածէր ատջինի հեղինակութեանն ու օրութեանը։ Թիֆլիսի հայութեան հաստատական կարծիքը ունկնդիր եղաւ ամատական հանքի առաջինին, բայց՝ առնի գործնական լինելով՝ երեմիա Արծրունու պաշտպանած 5 կէտերին առնց նոր ձեակերպութեան։ Այդ ձեակերպումով պահանջուում էր, որ պղտոյի կանոնադրութենը խոտոտուած լինի հետևեալ հիմնական սկզբունքների վրայ։

«1. Արդիւնք Թիֆլիզոյ Հայոց Ազգային Հոգևոր պղտոյն, որք մտանեն ի նմա մինչև յայժմ, կամ որք մտանելոց են յայսմհետ ի կալից, ի պտմատլեաց, յընծայաբերութենանց, ի կտակաց և յայլոց ազրիւրաց, պատրին մնալ մշտապէս անձեռնմխելի սեպհականութեան նորին և ի գործ դնել ի պայծառութեան և ի յառաջադիմութեան կրթութեանց մանկանց Հայոց։

2. Ընչեաց Թիֆլիզոյ Հայոց Ազգային Հոգևոր Դպրոցի, վերարերութեամբ ետուց ուսանողաց և աւանդեալ առարկայից, պատի ընդարձակիլ ըստ չափու եկամտից նորին։

3. Ամենայն մանկունք Հայոց, որք մտանեն ի Թիֆլիզոյ Հայոց Ազգային Հոգևոր Դպրոցն ունին սահման ի նմա զուսումն ձրիաբար, իսկ անտէրունչ որբք Հայոց, առաւելապէս յեկեղեցականաց, պատրին ընդունիլ և անանիլ ի նոյն իսկ Ուսուցանողանոցն, ուր նոցա տրուին և ամենայն պէտք։

4. Ի ետուց ուսանողաց Թիֆլիզոյ Հայոց Ազգային Հոգևոր Դպրոցի, կարին մտանել ի Հոգևոր կոչումն միայն այնոքիկ, որք ըստ բնութեան իւրեանց և նեղբին կոչման կարող են լինել արժանի սպասաւորք Աստուածային սեղանոյ, և որք յայս-

նեսցին առ այն ոյժ ամենայնի ցանկութիւն իւրեանց, առանց երէց առիւծանց և համարձանց։

5. Թիֆլիզոյ Հայոց Ազգային Հոգևոր Դպրոցն պարտի լինել միշտ ի լրակատար կախման Ծայրագոյն Պատրիարգին ամենայն Հայոց. Կառավարիչն Թիֆլիզոյ Հայոց Վիճակի պարտի մնալ միշտ, քան կոչման իւրում, առաջին հոգաւոր և նախագահ Խորհրդարանին Կառավարութեան Դպրոցին, իսկ այլ անդամք այնր Խորհրդարանի պարտին ընտրել ի ձեռն հաւատարմութեան քաղաքաց, քան յայտնի արժանաւորութեանց իւրեանց, առանց դանազանելոյ զնկեղեցական և զաշխարհական և հաւատալ ի Ծայրագոյն Կաթուղիկոսն ամենայն Հայոց»։)

Թիֆլիսեցիների 5 յօդուածից բաղկացած այս հիմնական որոշումները մի պատգամաւորութեան միջոցով նեկայացրուց Էջմիածնում Մատթէոս կաթուղիկոսին, որը իր վաւերացնող վճիռը տուաւ 1861 թ. յունիսի 9-ին։ Կաթուղիկոսը իր վաւերացման հետ մի երկու յաւելում արաւ այդ կէտերին։ Նախ դպրոցին յատկացրեց «Ներսիսեան» անունը, ապա կանոնդրեց, որ սրճկերներին բոլոր ուսման ղեկը պիտի լինի կաթուղիկոսի և Էջմիածնի Սինօդի վերաբերեալ, վերջապէս, դպրոցը կախում պիտի ունենար ոչ միայն նկեղեցու պետից, այլ և Սինօդից։

Հինգ հիմնական յօդուածների վաւերացումով դպրոցը առանում էր հաստատների որոշ սղբերներ և անցնում էր ժողովրդական կառավարութեան։ Մնում էր յաւուկ կանոնադրութեան մէջ մանրամասն որոշուէր դպրոցի կառավարութեան ներքին կարգը և ուսման դասընթացքը։ Հիմնականը պարզելուց յետոյ՝ դա երկրորդական գործ էր։ Ներսիսեան դպրոցի համար ընդունուած հիմնական կանոնները տարբեր չէին կարող մնալ տեղական արտօնութիւն ներսնք գնկատրող սկզբունքներ դարձան նաև մնացած թեմական դպրոցների համար։ Մատթէոս կաթուղիկոսը մտահոգուց իր հաստատած կանոնների մասին երկար պահել նաև մարմնաւոր իշխանութեանը։ Գանձ Ներսիսեան դպրոցի կանոնադրութիւնը 1864 թ. գնկտ. 5-ին առա-

---

*) «Տաճկ. Հ. Աշխ.» 1861. Յունիս. էջ 485—486.

յաւ Կալկաի Փոխարքայի թոյլատութիւնը գործադրելու համար։ *)

Առել թէ թեմական դպրոցների համար կանոնադրութիւնները մշակելուց յետոյ դպրոցական կեանքը մաս առ մաս խաղաղ զարգացման հունի մէջ պիտի մտներ։ Պահպանողական տեսակէտը պարտական էր, բայց ոչ ոչնչացնել։ Որ այդ տեսակէտի կրողը թեմական իշխանաւոր էր դառնում,—այնտեղ բացւում էր կամայականութիւնների և անձնական իշխանութեան դուռը։ Մեր դպրոցական պատմութիւնը լի է հոգեբարձական տիմիայոյզ կռիւներով. կռիւներ առաջնորդի և հոգաբարձութեան միջև, կռիւներ հոգաբարձութեան և էջմիածնի միջև։ Մենք այդ կռիւներով չենք ուզում զբաղուիլ։ Ցոյց ենք միայն տալու, որ հոգաբարձութիւնը ոչ միայն պայքարով առաջաւ դպրոցական տնտեսութեան, այլ և պայքարով պաշտպանեց իր նուաճումը։

Հայ կրթական գործը բարգաւաճման հասաւ ոչ թէ շնորհիւ Մաքենզի կանոնագրի։ Եկեղեցու պետը վերացրեց այն ամբողջ խաչնդուանները, որանք դժուարութիւն էին ժողովրդական ձեռնարկութեան դէմ։ Նա զրանով ըմբռնեց ժամանակի պահանջը և հասարակական ինքնագործունէութեան համար որոշ չափութիւններ տեղեց, որով և չափազանց տգղի կրթական ջանքերը իր նպատակին հետ։ Նրա օրով կերպարանուեց և հայ ուսումնարանի հիմնարկման մի ինքնայատուկ եղանակ. այս կամ այն ուսումնառանին հայ հասարակութիւնը՝ որոշելով գալոց բանալ՝ ժողովում էր անհրաժեշտ միջոցները կամ ծրագրում եկամտաբերի աղբիւրը և եկեղեցու հսկանաւորութեան դիմելով՝ յոյսով և հաւատով դիմում գործի։ Մեր բոլոր ծխական գպրոցները Մաքենզի կանոնագրի օրով, թէ յետագայում, հիմք են առել այդ եղանակով։ Գործը ապահովելու է ոչ թէ վերից, եկեղեցական վարչութիւնից եկած հրահանգով և նրանց օժանդակութեամբ, այլ վարից, ժողովրդական ինքնագործունէութեամբ և յօժարակամ զոհաբերութեամբ։*)

---

*) Սա. Մաքենզիանց, էջ 111.

**) Մի քանի հին հրահանգութիւններ—1. «Գաւառական տե-

Նրա օրով բացուեց, թէև ինքնօրինակ պայմաններով մէջ, Խարբերդի դպրոցը (1858 թ.), որ յետագայում կերտաբանա փոխուեց Թեմականի։ Այն, հայ կրթական գործը խոշոր մղում առացաւ Մատթէոս կաթուղիկոսի օրով։ Արդէն պիտանք, որ հայութիւնը 60-ական թուականներին անտեսական եւ ու դիւ չրջան էր ապրում և յուսադրութիւն ուղիներ փնտրում։ Հայ ևիևցու պետք՝ թէև սահմիկ կրօնամոլ՝ չկամեցաւ խոչնդոտ լինել հասարակական զարթօնքի պահուն։ Նա դպրոցը յանձնեց ժողովրդին։ Եւ դա կազմում է Մատթէոս կաթուղիկոսի չինարար վիճակագրծութիւնը։

Հայ ևիևցու կրթական գործունէութիւնը նոր թափ ու ծաւալ առացաւ Գէորգ IV-ի օրով։ Նրա նախորդը ծխական դպրոցների կառավարութիւնը յանձնել էր թեմական դպրոցների հոգաբարձութիւններին։ Գէորգ IV 1868 թ. յատուկ կանոններ հրատարակեց ծխական դպրոցների համար, *) որոնցով սահմանւում էին ծխական հոգաբարձութիւններ։ «Ծխական դպրոցը, ասուած է այդ կանոնների մէջ, կառավարին ի ձեռն հոգաբարձուաց, որք ընտրին համահաճութեամբ ժողովրդականաց և հաստատութեամբ թեմական իշխանութեան։ Ետրաքանչիւր ծխական դպրոց պարտի ունել վերին հոգաբարձուս, մին հոգևորական և երկուքն աշխարհական, յորոց մինն պարտի լինել երէցփոխան եկեղեցւոյն. իսկ՝ ի գիւղաքաղաքս և՝ ի քաղաս առանձնական կարևոր համարի ընտրել գՏինը հոգաբարձուս։ Աշխարհական հոգաբարձութիւն ընտրի առաւելութեամբ ձայնից ժողովրդականաց։ Հոգաբարձուք պարտին 1) խնամա-

---

*) Այդ կանոնները տպագրուած են «Արարատի» 1868 թ. թիւ 2-ում։

նել բարեկարգութեան և պայծառութեան գպրոցին, 2) աշխատել աճեցուցանել գիւղատուս նպատ և տասու լինել ծախուցնողին»: Այս կանոնների մեծագոյն կէտը այն էր, որ հոգարարձութեանների կազմը և ընտրութիւնը պատկին պիտի լինէր, քանի որ անհրաժեշտ էր պատւում հոգևորական-հոգարարձուի նեկատելութիւնը: Ծխական գպրոցների նեմեականի տակից Գէորգ IV-ի կանոնները հետևեալն էին պրչում. «Մատք գպրոցաց համարին 1) առհմանեալ տալք ծնողաց աշակերտաց, 2) նախատաւութիւն բարեպաշտ անձանց, 3) տակաւիք եկեղեցական գրամագլխոց կամ մասն ինչ՝ ի գրամագլխոց անտի ըստ կարգադրութեան Թեմական Առաջնորդին և ըստ կանխատգոյն պետութեան Վեհափառ Կաթուղիկոսի տեղեակ հոյց»: Այսպիսով ծխական գպրոցների նեմեականը մեծ էր կախում ժողովրդի յօժարակամ ձեռնատուութիւնից, ուրեմն և յոյժ փոքր վիճակի մէջ: Ծխական գպրոցներում ուսանելի առարկաները էին. կրօն, հայոց և ռուսաց լեզուներ ու թուաբանութիւն:

1869 թ. Գէորգ IV հրատարակից վանական փակ դպրոցների կանոնադրութիւնը, գպրոցների, որոնց նպատակն էր աշակերտներ պատրաստել էջմիածնի հիմնարկական գպրոցի համար: Այդ գպրոցներում ուսի էր շեշտուած կրկեական դէն, քանի որ հուսակրօնները պատրաստելը նրանց գլխաւոր նպատակն էր: Իրրև Գէորգ IV-ի օրով նոած բարեկարգութեան՝ պետք չէին Թեմական ուսուցութիւնների հաստատելը 1873 թ., որ պետք զարկ տար ծխական գպրոցների բազմացման և բարգաւաճման գործին. 1874 թ. այդ նոյն կաթուղիկոսը բացեց իր անունը կրող Գէորգեան ճեմարանը էջմիածնում:

Ի՞նչ ծաւալ էր տացել հայերի կրթական գործը Գէորգ IV-ի օրով: Աշխատանք մի քանի թուական տեղեկութիւններով պատասխանել այս հարցին: «Արարատի» մէջ տպագրուած մի յօդուածից իմանում ենք, որ 1870 թ. պետական բարձր, միջնակարգ և տարրին գպրոցներում սովորում էին 1795 հ. (ինքնագրական), *) իսկ «մեր ազգային ծխական և հոգևոր գպրոց-

*) «Արարատ.» 1871. Քիւ բ. Յունիս. էջ 102.

նրի աշակերտների թիւը պարտ դարձ կրկնապատկից ուրի լինի»: Նշանակում է հայ դպրոցների աշակերտութեան թիւը պիտի լինէր մօտ 4000: Հայ դպրոցների և նրանց աշակերտութեան մասին ուրիշ մանրամասն տեղեկութիւններ ունենք 1876 թուի համար: Այդ տեղեկութիւնները ժողովուած են թեմական տեսուչների ձեռքով և կոմիտասիկան դիտութեամբ հրատարակութեան յանձնուած «Դպրոց» մանկավարժական ԹերԹի խմբագրութեան կողմից *): Ըստ այդ տեղեկութիւնների հայոց 6 թեմերում գոյութիւն է ունեցել 254 դպրոց, որոնցից 212 տղաների, 37 աղջկանց և 5 խառն: Այդ դպրոցների աշակերտութեան թիւը եղել է 10,473, իսկ ուսուցիչների թիւը՝ 555: Ըստ թեմերի կրթական դրծը ունեցել է հետևեալ պատկերը.

	Տղ. դպ.	Ուս.	Աշակ.	Աղջ. դպ.	Ուս.	Աշ-ուհի.
Վրաստանի թեմ.	66	128	3038	15	101 (?)	674
Երևանի »	65	99	2658	7	23	349
Ղարսքարի »	44	52	1324	1	1	18
Շամախիի »	11	20	490	2 (?)	4 (?)	66 (?)
Ստրախանի »	10	32	602	3	21	214
Բեսարաբիայի»	21	41	481	5	16	144
Ընդամենը՝	217	372	8593	33	166	1465

Մի քանի թուերի մօտ մենք հարցական նշան ենք դրել և դա հետևեալ պատճառով. նախ ուղղակի անհաւատալի է թուում, թէ Վրաստանի թեմի 15 աղջկանց դպրոցները կարող էին ունենալ 101 ուսուցիչ, ապա մեզ յայտնի է այլ տեղեկութիւնից, որ 1876 թ. Բաքուում գոյութիւն է ունեցել աղջկանց դպրոց, այն ինչ որ մասին չկայ թեմական տեսուչների հաւաքած տեղեկութիւնների մէջ:

---

*) „Кавказскій Альманахъ на 1877 г.“. И. Шахтахтинскаго. Тифлисъ. 1877. Այս տրիւրի հաղորդած տեղեկութիւնները նոյնպէս պակասաւոր են. դասարկինները միասին չեն համապատասխանում համապատասխան թուերին

Թեմական աւագներէն անդիմութիւնները մատնացոյց են անում 555 ուսուցիչ, որոնցից կին եղել է 48 հոգի, վարդապետ —13 հ., քահանայ— 124, սարկաւագ—30, աշխարհական— 340: Ուսուցիչների ցինզը եղել է. անալին կրթութիւն—122, նախկան դպրոցից—107, հայ միջնակարգ դպրոցներից (?)— 71, էջմիածնի դպրոցից—35, Խալիբեան դպր.—18, Շուշի— 17, Փարիզի Մուրատեան դպր.—5, Շամախի—3, Երևանի—1, Արտասահմանեան՝ 38, պետական կլասիքական գիմնազիայից— 38, դաւառական ուսումն.—32, Լազարեան ճեմ.—22, համալսարանից—16, բէալական դպր.—6, Ներսիսեան դպր.—2, Գեղարուեստների ճեմ.—2, Գիւղատնտեսական ինստիտուտից— 1.: Վարժուհիների ցինզը եղել է. պետական դպրոցներից—21, մասնաւոր—17, հայոց—10: 70-ական թուականների կէսին հայ կղերը զարգացման այս աստիճանին էր հասել: Եւ դա կատարուել էր վերջերս մի 10—15 տարիների ընթացքում: Այդպէս ենք ասում այն պատճառով, որ մինչև 60-ական թուականները նա ոգորմելի գոյութիւն էր քարշ տալիս և զարգացման մղում աւագ միմիայն Մատթէոս կաթուղիկոսի օրով: Չի կարելի ասել, թէ հայ դպրոցը իր քանակի տեսակետ բարձր պակի տէր էր: Ընդհակառակը. նա շատ պակասաւոր կազմիր ունէր: Սա ինչպիսի գոյներով է նկարագրում Աբովեանի դպրոցը (1870 թ.) մանկավարժ Ղ. Ագայեանը. «Այդ ժամանակ մենք չունէինք աւանդելի առարկաների համար դասագրքեր, չունէինք մի որևէ օրինակելի և կարգին դպրոց, ամեն ինչ նոր էր սկսում բուանել այս ու այնտեղ: Դասաւանդութեան համար ինձ տուին չորս առարկայ՝ աշխարհագրութիւն, թուաբանութիւն, ազգային և ընդհանուր պատմութիւն: Գիտութեան առարկաները էլ սրանք էին, մնացածը լեզուներ էին՝ հայերէն, ռուսերէն և ֆրանսերէն, այլ և կրօն, երկրագործութիւն և վայելչագրութիւն: Ուսուցչական ժողովներ չէին լինում, ոչ էլ ուսման ծրագիր ունէին: ... Հիմա էլ որ միտս է գալիս միտս պատում, մազերս փշաքաղւում են: Այդ ինչութիւնս սկսեց նախանձախնդիր լինել իմ ուսումնարանի հէնքից անջատած էր, ինչպէս անջատած է լինում գոմը յատ հէնքից: Եւ հէնց գոմն էլ նման էր պատաքուստ, խակ ներքուստ

նման էր խոզանոցի, երբ բազմաթիւ մեծ և փոքր խոտուիններ իրար պլուով ընկնելով՝ որը բզթբզթում է, որը խոխոտում, որը մըրթմըրթում է, որն էլ ճղռում, ճչում։ Անկարգ, անկանոն, ամեն մէկի ձեռքին մի առանձին պրոք կամ տեսարան, իսկ վարժապետը մի կատարեալ վայրենի, իսկ և իսկ խոզարած, մի երկայն ճիպոտ ձեռին մէկին պլուին էր խփում, մեռի ձեռնին»։ *) Եթէ այսպիսի պակի տէր էր Ախալցխայի դպրոցը, որը հաստատուած էր մի հայաշատ քաղաքում և ունէր նիւթական համեմատաբար ապահով միջոցներ,—ապա պիտի պատկերացնել, թէ որքան պարմանի վիճակի մէջ էին գտնում մնացած հայ դպրոցները, մանաւանդ պետական ծխական ուսումնարանները։ Այդ դպրոցների պակի բարձրացումը կախում էր հայութեան ընդհանուր նիւթական բարգաւաճումից, որի միայն հնարաւոր էր առաջ դասարանութիւններ անել և բարեկարգ դպրոց ունենալ։ Դա, տարակոյս, ժամանակի խնդիր էր։ Պետք էր, որ այդ դպրոցները գոյութեան իրաւունք ունենան պետութեան մէջ, որ նրանց դարդացումը չդիմաշխատող կառավարութեան կողմից։ Սա ծանր, մատնոցիչ խնդիր էր։ Պետութիւնը ինքը պիտի էր ուշադիր դարձել դէպի կովկասցիների կրթական գործը և առանձին բարեհաճութիւն չէր ցոյց տալու դէպի հայ ազգային դպրոցը։

«Պէտք է յիշել, գրում է Կովկասի վարչական բարձր անձերից մէկը՝ բարոն Նիկօլայ, հայ դպրոցների բաւական նեղ դարդացումը, որոնք՝ իրրև նկնդիցական-ծխական՝ խառնուում են կառավարական հսկողութիւնից։ Այդ դպրոցները ընդհանուր առմամբ քիչ են նպաստում ազգի կրթութեան տարածման։ Ուսուցումը նրանց մէջ յանձնուում է միանգամայն անպատրաստ անձերի կամ գանում է ծայրաստիճան տէտ հոգևորականութեան ձեռքին, ուստի և այն չօշափելի գումարները, որոնք պահպանում են այդ դպրոցների համար նկնդիցական նեղմանութիւնից, ինչպէս և մասնաւոր անձերից ու հասարակութիւններից, կորչում են անարդիւնաւէտ ծախք՝ նպրտած իբրև դի-

---

*) Ղ. Աղայեանց. Իմ կեանքի պետուր դէպքերը. Թիֆլիս. 1893. էջ 125—126.

վատ կցուած ցնդային առանձնայատկութեան բաւարարման»*): Ըստ մեր կարծիքը անէր հայ դպրոցների մասին Կովկասի բարձր իշխանութիւնը 1872 թ.: Եւ այդ կարծիքը պիտի վառնդի ամենայարդ առիթէր հայ կրթական գործի համար: Գէորգ IV-ին աջողուց ցրել վառնդի կատակուած ամպերը: 1874 թ. յուլիսի 19-ին Բարձրագոյն հաստատութիւն դառն հայ դպրոցների վերաբերեալ կանոնները, որոնք արուեցին մայրին նրանց կատարման գործութեան մէջ: Ահա այդ կանոնները.

1) Համաձայն օրէնքների ծոցուածոյ XI հատորի, I մասի, 975 յօդուածի, հայ-լուսաւորչական հոգևորականութեան պատասխանատուութիւնն է մնում հիմնել և կառավարել հիմնական դպրոցներ, նոյնպէս և հոգալ մայնալու դաստատութեան կանոնաւոր և յարմար եղանակ և պահպանել բարի վարք ուսուցանողների և աշակերտների մէջ:

2) Ժողովրդական դպրոցների տեսուչների վրայ, հայ հոգևորականութեան հիմնելիք և վարելիք ընդհանուր կրթական հիմնական-ծխական դպրոցների վերաբերմամբ, պատասխանութիւն է դրուում, համաձայն 1873 թուի նոյեմբերի 22-ին Բարձրագոյն հաստատուած Գլխաւոր Խորհրդի կարծիքին՝ հսկողութիւն ունենալ, 1) որ բոլոր դպրոցներում ուսանուի ռուսաց լեզուն, իսկ այն դպրոցներում, որտեղ ուսանում են ընդհանուր պատմութիւն և աշխարհագրութիւն, ուսանուին նաև ռուսաց աշխարհագրութիւն՝ ռուսերէն լեզուով. 2) որ այս դպրոցներում ուսուցանողները լինեն ռուսահպատակներ և ունենան պարտ ու պատշաճ բարոյական յատկութիւններ,

3) Այն ուսումնարանները, որոնք նպատակ ունեն հոգևորականներ պատրաստել՝ չեն ներթարկում ժողովրդական ուսումնարանների տեսուչների հսկողութեան և գտնում են հարկաւոր իշխանութեան բացառական վարչութեան տակ: Այս դպրոցների ուսման դասընթացքի և ներքին կարգերի մասին կանոնները պէտք է ներկայացնուեն բարձրագոյն կառավարութեան ի հաստատութիւն (յօդ. 1004, մասն I, հատ. XI օրէնքների ժող.):

1874 թ. յուլիսի 19-ի կանոնները արուեցին մայրին հայ

*) Отчетъ по Главному Управленію. էջ 280.

պարտիներ իրատարակեն կայսրեան մէջ, բայց ոչ պետրեան անուանութեան...

Միանգամայն պետք կըլինի ասել, թէ հայութեան կրթական կարիքները բացառապէս բաւարարում էին եկեղեցական դպրոցի կողմից: Տեսանք արդէն, որ 1831 թ. մօտ 90 տղաներ Թողին Ներսիսեան դպրոցը և մտան պետական գիմնազիա: Իսկ 1834 թ. պատահական կոչուած դպրոցները հետևեալ քանակի աշակերտութիւն ունէին) (յիշատակում ենք այն դպրոցները, որոնց մէջ աշակերտների մեծամասնութիւնը հայ էր):

	Աշխատան. և պաշտօնեաներ. որդիներ	Վաճառականների և մաճառականների	Այլ դասերի	Ընդամենը
Թիֆլիսի դպրոց . .	45	10	1	56
Գորիի » . .	66	5	—	71
Շուշիի » . .	13	26	6	44
Սղնախի » . .	43	45	1	89
Ախալցխայի » . .	—	82	—	82
Երևանի » . .	3	34	—	37
Բագուի » . .	11	14	4	29
Նուխիի » . .	7	21	—	28
Գանձակի » . .	6	34	—	40
Ընդամենը՝ .	194	270	12	476

Դասակից վեր պետք համարել, որ այսոքիկ յիշատակ դպրոցների և վաճառականների, ինչպէս և այլ դասերի որդիները համարեա բացառապէս հայեր էին: Պակաս չէր նրանց թիւը և պետականների մէջ, մանաւանդ հայ-թուրքական դա-

---

*) Акты, т. VIII. № 67.

տուական դպրոցներում։ Թուրքերը, յիշուած է մեր տպերի մէջ, խուսափում են իրենց զաւակներին պետական դպրոց տալ, պետն միայն հայերն էին, որ սիրով խուժում էին պետական ուսումնարանները։

Կովկասի նուաճման և խաղաղացման հետ դպրոցների քանակը պետութիւնը բազմացրեց դպրոցների քանակը։ 1834 թ. գոյութիւն ունէին պետական 1 գիմնազիա և 11 գաւառական դպրոց, 1846 թ.—1 գիմն., 15 գաւառական դպր., *) իսկ 1856 թ.—4 գիմն., 24 գաւառական դպրոց **)։ 1846 թ. գիմնազիայի և գաւառական դպրոցների աշակերտութեան թիւը (բոլոր տղոցներն) հաւասար էր—2097-ի, իսկ 1856 թ.—2966-ի։ 1865 թ. Կովկասի դպրոցական շրջանում գոյութիւն ունէին.—5 գիմնազիա, 1 իգական դպրոց, 2 տղէկանց գիմն., 9 սովորական դպրոց, 21 գաւառական և քաղաքային դպրոցներ, որոնց մէջ սովորում էին 5579 հոգի։

Այսպէս սակայնութիւն բարգաւաճում էր պետական դպրոցական գործը, որ իր ձեռքն էր առնում հայ և վրացի ազնուական կամ ունևոր դասերի զաւակների կրթութիւնը։ Ի՞նչպէս պետք անդրադառնար այդ երևոյթը հայ ազգային կեանքի վրայ։ Սկզբում, կարելի է ասել, բարերար կերպով։ Պետական դպրոցը, որքան էլ նա թերութիւններով լիներ, այնուամենայնիւ մի կուլտուրական մեծութիւն էր, որ գոյութիւն չունէր հայ միջավայրում։ Եւ հասկանալի է, որ այդ դպրոցի առնը պետք կուլտուրական և առաջդիմիչ ազդեցութիւն իր յիմանց հարազատների համար։ Ներազգում դրութիւնը փոխուում է. դպրոցների քանակական մեծութեան հետ փոխուում է և նրանց որակական մեծութիւնը, որ դառնում է ձգտում ամբողջովին խորթացնել ու կտրել հարազատ ազգից, մանաւանդ, որ այդ նպատակին ծառայում նաև պետական միւս գործունեութիւնները (անհատական քաղաքականութիւն, վարչութիւն, դատարան և այլն)։ Եւ այս պատճառներով հայութեան հատա-

*) „Кавказскій Календарь“ на 1846 г.

**) „Памятная книжка Кавк. Учеби. Окр. на 1880 г.“. Тифлисъ. 1880. Ст. Л. Модзалевскаго. „Ходъ учеби. дѣла въ Кавк. Намѣстничествѣ“.

բակական մաքի զարգացումը օրէցօր դառնում է երկիւղի. մի կողմից մայրնի դպրոցը պատրաստում է ազգի կեանքի հետ նեղպաշնակ չափաւոր մասնագիտականութիւն, իսկ միւս կողմից պետական դպրոցը հրապարակ է հանում մասնագիտականների մի բազմութիւն, որոնցից քչերն են բռնում հարազատ ժողովրդի մասնագիտութիւնների գործիքը, իսկ մեծամասնութիւնը դառնում է զարգացած արհեստաւորների մի դաս՝ խորթ իր հարազատների հասարակական ապրումներին և օտար պետականօրէն ներծ ժողովրդին: Հայ երիտասարդութեան տարրեր սխտամիտների դատարակութիւն տանելը և հայ մասնագիտութեան երկու տարրեր հունով առաջնորդումը ծանր հետևանքներ ունեցաւ ազգի հասարակական մտքի ամրապնդման վրայ: Այդ երկուութիւնը նկատելի էր դեռ ևս 60-ական թուականների, բայց նա հասարակական խոցի կերպարանք առաջ չէր ստացել, մի շրջանում, երբ դեռ պէտք ունէր յատուկ ուսումնասիրութեան:

ԳԼՈՒԽ V

ՀՈԳԵՒՈՐ ՄԻՋԱՎԱՅՐԸ

(Ծառուրական խաւը. հայ պարբերականն ու գիրքը. տիրող մտայնութիւնը)

Մենք արդէն ծանօթ ենք նախորդ գլխի առաջին հօմն առնուազն հայ իրականութեան մէջ տնկի ունեցած հասարակական անցուդարձերին: Մենք, անհամբեր քարոզչական ոգևորութիւնը փոխարինած իրականութեան և նրանից բղխած հիասթափութիւնների փլատակն ու նրանց երեսն գալը: Այժմ մենք ծանօթ ենք ժամանակաշրջանի իրերի ընթացքին: Այդ իրերի ընթացքը 60-ական թուականներին հայ հասարակական մարմնին տանել էր հետևեալ կերպարանքը. հասարակական առաջնութիւնն ու պատիւը պատկանում էր հոգևոր դասին և սրա հետ նաև թուով աննշան, բայց ազդեցութեամբ նշանաւոր, հայ ազնուականութեան և պաշտօնէութեան. ազգի ներկայացուցչութիւնն այդ խաւերի մէնաշնորհն էր համարւում. նիւթական կարողութիւնն ու հիմը կենարանում էր կապալի նախնական կատակման ներկայացուցիչների ձեռքում, որոնք ընդհանրապէս կապալառու էին կոչւում և ձգտում էին ալևանալ քաղաքների առևտրին ու արդիւնաբերութեանը. նրանք դեռևս ժամանակ շատ էլ չէին ջանում հայութեան ծոցում, նրա հասարակական գործերում ցուցաբերել իրենց այժն ու արժէքը. կապալառուների հրապարակ գալն ու անհատական կեանքին ալևլու ձգտումը կրծանիշ կերպով անդրադառնում էր մանր պետևառի ու առևտրի վրայ, առաջացնում էր խլրտումներ, ձեռնարկութիւն կրծնական ու աշխարհիկ իմաստով առևտում էր քաղաքային քաղքենիութեանը պահանջելու, որ իր կարիքներին յարմարացնում մեր ազգային ամենակարևոր հաստատ-

Թիւնը—պարոյը, որ մինոյն ժամանակ իմացականութեան անօթը—պրակտիկ լեզուն—վար կ՚ինէ իր տիւ թարձունքից, աչխարհիկ դառնայ և ծառայէ մասսաների օրուայ պէտքերին։ Հասարակական այս նոր ու գեղին անմահն էր մնում հայ գիւղացիութիւնը, որը շնչում էր ազնուական-կալուածատէրի և ազնուական պետութեան լծի տակ։ Նա անմռունչ դանդաւած էր, խոնարհ ու հլու ազգի հոգևոր գասին ու եկեղեցիներին և նրան նիւթապահելու պարտքան էր, որ գոյութիւն էր տիրող խաւերին։ Այսոհից պարզ է, որ մեր հասարակական կեանքը բարդացել էր, քանի որ հասարական հայութիւնն ունի բարդ կառուցուածք ունէր։ Իրերի այս իւրօրինակ դասաւորմանը պիտի յաջորդէր տարբեր խղճանքի ցուցահանում, այսինքն հասարակական խաւերի ձգտումների իրենց տարբեր ձևակերպումն պիտի տանային մասնայնի մասնայնի։ Ժամանակի գերիշխող գաղափարը հայութեան հասարման հարցն էր, հայութեան ինքնուրոյն գոյութեան ու բարգաւաճման խնդիրը։ Այս հարցի տարբեր ձևակերպումն ու այժմէականութիւնն արդիւնք էր բարժուական փոխյարաբերութիւնների յարաճուն ծաւալման, երբ անհատական կեանքի զարգացման հետ տեղա կապեր ու յարաբերութիւններ էին առնդնում ցրուածութիւնից տատապող հայերի մէջ։ Հայութեան հասարման գաղափարը, որ ազգութեան գաղափարն էր և իր դրօշակի վրայ գրուծած ունէր մեր կեանքի ներազատագրումը—ինքնին առաջադիմական էր։ Սակայն առաջադիմական գաղափարի յաղթանակը, որ և բարժուազիայի յաղթանակը պիտի լինէր, հրապարակ էր հանում մի նոր գոյք խաւերի-հոգևորականութեան և ազնուականութեան—ինդիմութիւնն և քաղքենիութեան ինքնատաշատանոցական հոգումներին։

Մասսայական շարժումներն ու տեղաշարժութիւնները առնչում են յաւուրհ շահերի ու ձգտումների մէջ նոյնպէս, բայց մասանների իրենք ամբողջ գանդաւածով չեն ձևակերպում հիմնական գարձած հարցերը։ Նրանց վերաբերեն այդ անում են ժամանակի առաջատար գլուխները, գաղափարախոսները, որոնք պատկերաւոր կամ իմ անդիտութեամբ կատարում են գրան օրուայ պահանջները, ապա հիմնարկել նրանց և առաջադիմ

պես չինաբար ապրանշաններ։ Որքան ժողովրդի կեանքը միա-
լար ընթացք ունի և մի ուժեղ դասակարգային հակամարտ
չի ծաւալում նրա մարմինը, այնքան էլ ժամանակի առաջատար
գաղափարները հաշտեցնող և ձուլող գաղափարներ են արծարծում։
Նրանք կարծես մառանում են, որ իրենք որոշ կողմի մարդիկ
են, որոշ հետաքրքրների ծնունդ։ Նրանք անկեղծօրէն հաւատում
են իրենց անաչառութեանը։ Հաւատում են և նրան, որ իրենց
առաջարկած միջոցները չեն վտանգում որևէ խաւի գոյութիւն
կամ առանձնաշնորհում. այլ միայն հաւասարապէս բարիքներ
են առաջացնում բոլորի համար։ Այդ կարգի մառաւորականներն
իրենց դիրքում են ուսուցանողի, լուսաւորողի և դիակավարողի դի-
րքում. խօսքի ազդեցութիւնը, իրենց առաջարկած միջոցների
օրութիւնը նրանք ահագին և վճռական արժէք են տալիս։
Նրանք լուսաւորիչներ են, բոլորի համար հոգացող և մտահո-
գող եւ նրանց այդօրինակ դիրքին նպաստում է նաև այն հան-
գամանքը, որ առաջաւոր դասակարգի չարժումն այդ պահուն
իր մէջ կնոպրոնացնում է ամբողջ ժողովրդի շահերի համա-
րումները։ Ինքնախոստովանութիւններ չեն լինում և առաջաւոր
մառաւորը չի կասկածում, որ ժամանակով նոր խաւեր պիտի
բարձրանան և նոր պահանջներ պիտի առաջադրեն և որ իր պաշտ-
պանած գաղափարները մեծ չափով պիտի դառնան ապագայի
պիտոյ դասակարգի գէնքերը։

Նախորդ դարի 50—60-ական թուականներին, երբ հայ-
կական կեանքը սկսուել էր ստորաբերուել նոր առիթներով
փոխարերութիւնների ազդեցութեան տակ, երբ դեռ պարզ
չէր, թէ ով էր բարձրացողն և ով ընկնողը, հայ առաջաւոր
գրականները, մեր առաջին աշխարհիկ առաջնորդ-մառաւորակա-
նները գերազանցապէս լուսաւորիչներ էին, որոնք գործունեայ
կերպով կարողանում էին հաշտեցնել անհաշտելին, միութեան
ու գործի հրաւիրել բոլոր խաւերին, խօսել բոլորի անունից.
ստորոգել բոլորի առանձնայատուկ ձգտումներն ազգութեան
ներքին գաղափարին։ Սակայն չնայած այս գլխաւոր ու բոլոր
հաւատարիչներին յատուկ մոտեցակերպին՝ նրանցից ամեն մէկը
պատուհասուած է ուրոյն հակասութիւնների հրանգներով, որոնք
ծագում են լուսաւորչի ստեղծ վերաբերմունքից դէպի այս

դամ այն հատարակական խաւը։ Ճաճախ լինում է նոյնիսկ, որ առևտուր լուսաւորչը հայութեան հատարկան կազմի մէջ կը գանկանայ իր համակրած խաւի գերիշխանութիւնը տեսնել, ազգութեան գազափարը նրա շահերին ծառայեցնել։ Այս բոլորը սակայն ներկայնակ և պարզ ծրագիրը չի գառնում, այլ մնում է, որպէս նրնդան և հակատակ միտք ու գոյծ։ Այսպէս են գատատուած վերանորոգիչ—լուսաւորիչների ջանքերն ու ձգտումները։ Բայց այդ անկայունութիւնն ու երերումը չի տեսնում նրանց հակատակորդների մէջ։ Որքան էլ նրանք սահմանափակ մարդիկ են, բայց խօսում են որոշ ու պարզ, միանգամայն համոզուած իրենց ճշմարտութեան մէջ։ Դրանք արդէն սկիզբն ու վերջն իմացող գաղափարախօսներ են, որոնք իրենց կեանքի իմաստը կապել են որոշ գասի գոյութեան հետ և այդ գասի գերիշխանութիւնն են պաշտպանում հատարկական բոլոր առանձնութիւնում։

*Բայց ինչ մեծութիւն էր ներկայացնում իրենից հայ մատուցական գասը, որից դուրս էին գալիս մեր վերանորոգութեան քարոզիչները և նրանց հակատակորդ գաղափարախօսները։ «Ոտանոյ հայոց մէջ յուսն թուականին, գրում է Ազ. Երիցեանցը, հազիւ թէ մի 20 կամ 30 անձ լինէր համալսարանական գիտութեամբ, հայկարան—գիտնականների *) թիւը գուցէ հասնէր տասին, բայց գոյա մէջ յայտնի նշանաւորները հինգ վեց հատ էին. մի տասիւ անձը համարեա էր այն հայերի թիւը, որ շատ քիչ վազ ծանօթով պատրաստ են երբեմն երբեմն հայերէն գիրք առնելու, մի երկու այդքան էլ կարդային, որոնք*

) Ազ. Երիցեանցը «հայկարան—գիտնականներ» մասին հետևեալ բացատրութիւնն է տալիս. Նրանք ինքնակրթութեամբ, զբաղուելով Մխիթարեանների հրատարակութիւններով զարգացած մարդիկ էին, որ կոչուած էին գիտնական, հայկարան կամ վարժապետ։ «Ով գոցանից առնէր Կարգնու վիլիսոփայութեան չորս հատորը—նա վիլիսոփայ էր ժողովրդի աչքում, ով առնէր Ռէսթինի բժշկականութիւնը—նա ճանաչում էր ամենայն հիւանդութիւն և ամեն ցաւի գեղ էր տալիս, ում մօտ գտնում էր Թէատրոսը—նա խելօք և բարոյական մարդ էր, իսկ Թոլէնի հնախօսութեան հատորները ընտիր գիտնականների բաժին էին։

ալիշնակից պրքիր վոխառնելով կարդալու վարժուած էին։ Այսքան էր մօտաւորապէս այն ժամանակուայ կարդալու ընդունակութիւն ունեցող հայերի թիւը ամբողջ Ռուսաստանում։ Իսկ մնացած կէս միլիօնից աւելի հայ հասարակութիւնը այբուբենից անգամ զուրկ ընկղմած էր խորը տգիտութեան մէջ» *)։

Տպիչ, գիր գիտցողներն և գիրք սիրողներն շատ պէտք ունէին հայ հոգևորականներին, որոնց խոշորագոյն մասը լոկ պատճառաչ էր, գիտէր գոհանալ նիհարցական գրքերի ընթերցանութեամբ կամ թէ գրքերի նրանով նիհարցական արարողութիւններ կատարել։ Բայց յիմնական խնդիրները հայ գրքօնքի սկիզբն էին կազմում։ Օրէցօր հայ մատենագրութեան քանակն աճում էր, առնչւում էր նրանական խմաստով գրականութեան, հրատարակում անվի էր ունենում գրծերի ու մարդի բաղխումն։ Սակայն այս բոլորը կատարւում էր չափազանց դանդաղ և հայութեան մէջ խրատչելը նրագական կրթութեան տէր անձն նրբէք աննկատելի չէր մնում և այդպիսին միշտ համարւում էր կոչուած գրել հասարակական աշխատանքի համար։ Գրքութեան առանձ, կրթութեան տէր լինել լոկ անձնական հաճոյքի համար—դա ապօրինակ նրնոյթ կարող էր համարուել 60-ական թուականներին։ Ամեն ոք յիւում էր մի հասարակական գործ. հունձը շատ էր—մշակները սակաւ։ Զարմանալի ուժգնութեան էր հասնում հասարակական պայքարը։ Պարբերականների բանակը խնայել չգիտէր։ Եթէ բանասէրը չէր օգնում, հրատարակէին գալիս գործնական մեջայնները։ Ցիշենք միայն «Հիւսիսափայլի» դէմ յարուցած հալածանքն և Զամախի բողոքականներին նրրև թէ նրատող մեջոցը, նրր հայ հոգևորականութիւնը հրաժարւում էր հոգին յանձնել բողոքական համարուած մի ընտանիքի մեռեալ մանկանը։ Ինքը, պարբերական հրատարակութիւնը հազուագիւտ բաներից էին։ Եւ եթէ աւելի շատ լոյս էին ընծայում անպէտք և ժամանակի կարիքներին անհամա-

*) Ա. Երիցեանց՝ «Առաքեանոց վարժարանից և նորա գրական գործունէութիւնից», «Փորձ», 1879 թ., նոյեմբեր, էջ 48.

պատասխան գրքեր ու յօդուածներ, ապա տակաւին այժմ էութիւն ունեցող հրատարակութիւններն ու գրուածքներն իրենք անհատական չէին մնում: Նրանք որև է հատարակական խաւի և ամենից առաջ հոգևորական դասի կամ եկեղեցու հետ կապուած խնդիրներով էին շօշափում և այդ հանգամանքն առաջնում էր լրատուական ուշադրութիւն: Հետաքրքրական է համեմատել, թէ գրքերի ու պարբերական հրատարակութիւնների պահի չափանատութիւն կար հայերի մէջ: Այդ մասին տեղեկութիւններ համարում մի քանի թուական տեղեկութիւններ տալ՝ մանաւանդ որ թուերն անուղակի կերպով մեզ կը պատկերացնեն հայերի ուսումնասիրութիւնը:

Առաջին տպագիր պարբերական հրատարակութիւնը պիտի համարել «Տաճկաս» թերթը, որ լոյս էր տեսնում 1847—1848 թ.թ. և իր բովանդակութեամբ գլխաւորապէս պաշտօնական տեսակէտ հրատարակող համանուն թերթի թարգմանութիւնն էր: Թերթը հրատարակում էր պրոբար լեռնով: Դեկտեմբերին էին Ներսիսեան դպրոցի ուսուցիչներ Յակոբ Կարնեցին և Միքայէլ Պատկանեանը: 1850 թ, Գաբրիել քահանայ Պատկանեանը ձեռնարկում է «Արարատ» չաբաթաթերթի հրատարակութիւնը: «Արարատը» աշխարհարար էր, թէև տպագրում էր նաև գրարար յօդուածներ ու առանուրներ: Այդ թերթը մի տարուայ կեանք ունեցաւ: 1858 թ. սկսում են հրատարակուել «Հիւսիսափայլը», «Ճառաքարը» ու «Մեղու Հայաստանին»: Առաջինը երկուսը Մոսկուայում, իսկ վերջինը—Թիֆլիսում, 1860 թ. հրատարակ են գալիս «Կռունկ Հայոց Աշխարհին»—Թիֆլիսում, իսկ «Մասեաց Արարեի և Ծիրանի Հայաստանեայցը»—Էջմիածնում: 60-ական թուականներին կեանք են առնում, անկանոն հրատարակում և շուտ էլ խափանում մի շարք թերթեր՝ «Համբաւարեր Ռուսոյ (1861—1862) հրատ. Զարմայր Մահտեսեանց, „Հիւսիս“ (1863—64) (հրատ. Ռ. Պատկանեան), «Վաճառական» (1866—67) (հրատ. Գ. Տէր-Ադէքսանդրեանց, գլխաւոր աշխատակից՝ Ագ. Երեցեանց), «Գործուն» (հրատ. Սմ. Քէլէկեան) և «Հայկական Աշխարհ» (հրատ. Սմ. Սահակեանէ): Ահա այս պարբերականների մէջ էր գլխաւորապէս ամփոփում յարձակող ու նահանջող հայկական միտքը:

Հայ պարբերականները տարածում էին ոննչան քանակով, որովհետև, ինչպես տեսանք, ոննչան էր դիր պետդ հայերի քանակը: Բաժանորդների թիվը մի քանի հարյուրից չէր բարձրանում: Ամեն-ինչ կախուած էր համախոհ գործակալների աջակցութիւնից: Բաժանորդ լինելն ու գանելն ազգասիրական գործ էր համարում: Ընթերցողներն այնքան քիչ էին, որ նրանց պատելը, մի հանդէսից միւսին գրգռելը չանք ու աշխատանք էին պահանջում: Սահիան քահ. Մանդինեանն՝ արշաւանք ակսելով Նազարեանցի դէմ՝ քանի անգամ կրկնում է, որ ինքը մրցութիւնից ու նախանձից դրդուած չէ, որ անում է այդ քայլը («Միութ Հայաստանի», № 16—1858 թ): Նազարեանցը բաժանորդ ունենալու համար դիմում է Փոխարքայի դիւանատան կառավարիչ Կրուզենշտէրնին և նրա աջակցութիւնը խնդրում: Եւ պիտի ասել, որ 1859 թ., երբ Կրուզենշտէրնի առաջարկութեամբ «Հյուսիսափայլին» բաժանորդագրում է հայ դիւանագործ ու քաղաքացիական պաշտօնէութիւնը, Նազարեանցի պրպիտակները համեմատաբար ամէն բաժանորդներ ունեցաւ, քան առաջին և մեռցած տարիները: Հետաքրքրական է ծանօթանալ հայ բաժանորդ-ընթերցողի բնակավայրի, քանակի և դասային պատկանելիութեան հետ: Այդ կանոնք «Հյուսիսափայլի», «Ճռաքաղի», «Միութ Հայաստանիի» և «Կաւնկի» մի քանի տարիների նկատմամբ, օգտուելով բաժանորդների այն անուանացուցակներից, որոնք տեղերում ստորագրում էին այդ թերթերի տարեվերջին համարներում:

1858 թ., այսինքն իր հրատարակութեան առաջին տարին, «Հյուսիսափայլը» 262 բաժանորդ ունէր: Այդ քանակից Պետերբուրգին, ուր տարում էր հայութեան խոշորագոյն և ճնշող մեծամասնութիւնը, բնկնում էր 75 բաժանորդ (Թիֆլիս—48, Շամախի—12, Ագուլիս—5, Հին-Նախիջևան—3, Երևան, Շուշի, Նուխի և մեռցած տեղերը մի-մի բաժանորդ): Մնացած 187 բաժանորդները տարիս էր Ռուսաստանն և Հյուսիսային Գոլկոտը (Նախիջևան Դ|վրայ—56, Հաշտարխան—33, Մոսկուա—31, Ղրիմ—20, Պետերբուրգ—10 և այլն). „Հյուսիսափայլի“ բաժանորդներն բուռ դասի ստորագրած էին՝ հոգևորական—22 հոգի (21 հոգևորականներից միայն 2 Պետերբուրգից, այն է

Հին-Նախիջևանից), ոգնուկան և սամիճանատը—29 հոգի (և մինի այլոց՝ Խաչ. Լազարևանց. Կ. Եղնանց, Միքայել Բերբերյանց, Մ. Էմին, Մ. Լօրիս-Մելիքեանց)։ Մնացած բաժանորդները գլխաւորապէս վաճառականներ են։ Կայ և աննշան թւով ինաւիլգենտներ։

1859 թ., երբ Նազարեանցն ունէր Գոլիտսի իշխանութեան աջակցութիւնը, «Հիւսիսափայլի» բաժանորդների թիւը հասաւ 350-ի։ Ըստ վայրի նրանք աստրախանում էին՝ Անդրկովկասում—146 (Թիֆլիս—60, Ջաւախի—30, Ջուլֆա—24, Երևան—7, Ախալցխա—5, Լէնքորան—5, Բագու 3, Նուխի—3 և այլն), Ռուսաստան և Հիւսիսային Գոլիտս—201 (Նոր-Նախիջևան—60, Ղրիմ—34, Հաշտարխան—28, Մոսկուա—24, Պետերբուրգ—12, Օդեսա—6 և այլն) և Թուրքիա ու Պարսկաստան—3։ Ըստ դասի բաժանորդների աստրախանումը հետևեալն է՝ հոգևորական և ազնց մէջ Մատթէոս կաթուղիկոսը—9 հոգի, ոգնուկան, սամիճանատը ու գիւղատրական—55 հ։ Մնացած-ների հասարակական դիրքի մասին ցուցակը լռում է։ Նոր-Նախիջևանի համար միայն յիշուած են 56 վաճառական։ Բայց հասկանալի է, որ վաճառական բաժանորդների քանակն անհամեմատ բարձր էր։ Կարելի է նոյնիսկ ասել, որ «Հիւսիսափայլի» բաժանորդները գլխաւորապէս վաճառականներ էին։

Ժամանակի պարբերականների մէջ «Հիւսիսափայլը» միակացած և բացառիկ տեղ էր բռնում։ Մնացած հայ պարբերականները հակառակ բռնակի օրգաններ լինելով՝ նրա հետ Թիֆլիսի բռնակալի մէջ էին գտնում։ Այդ հանգամանքն անդրադառնում էր և նրանց բաժանորդների քանակի ու տրակի վրայ։ Դիմենք Թուման պատկերացման։

«Ձռաֆատը» 1859 թ. համար գրում է՝ «բաժանորդաց թիւն ընդ ամենն է 372, իսկ աստղիտ օրինակաց՝ 405»։ Ըստ վայրի այդ բաժանորդները աստրախանում էին՝ Անդրկովկասում—206 (Թիֆլիս—68, Էջմիածին—22, Ջուլֆա—19, Երևան—18, Ջաւախ—16, Բագու—15, Գանձակ—7, Հին-Նախիջևան—8, Սղնախ—5, Ախալցխա—2 և այլն), Ռուսաստան և Հիւսիսային Գոլիտս—142 (Մոսկուա—44, Ղրիմ—24, Պետերբուրգ—17, Հաշտարխան—16, Նոր-Նախիջևան—8, Սուրոմսկ—8, Մոզ-

պոկ—8, և այլն), Թխլբխա—16, Փարխդ—7, Վխննա—1: Ըստ դասի այդ բաժանորդները տարբերվում էին՝ հոգևորական —49 հ. (սրանց մէջ են՝ Մատթէոս կաթուղիկոս, 3 արքեպիսկոպոս, 9 վարդապետ և այլն), մեծ թուով պետական պաշտոնյաներ և առևտրականներ, ինչպէս՝ Խաչ. Հարությանց, Յովհ. Գևորնեանց, Բնհրուտեան իշխաններ, Արղութեան իշխաններ, Խալիբեան և այլն: Ապա պատկանել են բնում վաճառականները *): Սուրբ նրանց ճիշտ թիւը դժուար է:

«Հիւսիսափայլն» ու «ձոտքաղը» հրատարակում էին Մոսկուայում: «Հիւսիսափայլը» յուրջ գրական ու գիտական ամսաթերթ էր, իսկ «ձոտքաղը» կրօնական իմաստասիրական, պատմական հանդէսներն էր, անշուշտ և անբռնազբոս առանձնացրի ու նեղաբեանցի դէմ ուղղուած չարամիտ յարձակումների հանդիսարան: Սակայն համեմատելէք 1859 թ. նրանց առաջնեղի քանակն ու հասարակական դիրքը: Նեղաբեանցն իր նաև ունէր իշխանութեան աջակցութիւնը, բայց այնուամենայնիւ նրա բաժանորդների թիւը 350 էր, իսկ «ձոտքաղի» խմբագիր Մանր-Մանրեանցը առանց որևէ աջակցութեան կարող էր ասել՝ 372 բաժանորդ և 405 առաջող, որ նշանակում է, թէ բաժանորդներից ոմանք ունէլ հարիւրներ առանձին՝ տարածում էին իրենց շրջանում: Եւ այն ժամանակ, երբ Անդրկովկասում, այնինչ հայութեան կենտրոնում, Նեղաբեանցը 146 բաժանորդ ունէր, Մանրեանցը դրա դիմաց ցոյց էր տալիս իր 206 բաժանորդները: Իսկ բաժանորդների որակը: Մանրեանցինը՝ արքեպիսկոպոսներ, յայտնի վարդապետներ, քահանաներ (Սարգիս արք. Յալթեան, Գաբրիել վրդ. Այվազեան, Յովսէփ քահ. Օրբելի), ազգ իշխաններ ու ազդեցիկ մեծատուններ, իսկ Նեղաբեանցինը՝ շատ-շատ վաճառականներ:

---

*) «Հիւսիսափայլին», «ձոտքաղին» և առհասարակ հայ պարբերականների վաճառական բաժանորդներին հետաքրքրող որոշներ տեղեկություններ այնքան էլ երկար ժամանակ չի անցել նրանց հրատարակութեան ժամանակից և կեանք այդ կարգի բաժանորդների ազգանունները մեր օրերում դեռ գոյութիւն ունեն առևտրական ու արդիւնաբերական հրապարակներում:

Այժմ տեսանենք Կովկասեան թերթերի տարածման պատկերը։ Այդ կողմից պետք վերցնենք Թիֆլիսում հրատարակուող «Մեղու Հայաստանին» և «Կռունկը»։

1858 թ. „Մեղու Հայաստանին“ մօտ 600 բաժանորդ ունէր։ Այդ քանակից Անդրկովկասին բաժին էր ընկնում—457 տապատ (Թիֆլիս—218, Շուշի—38, Ալէքսանդրապոլ—22, Շամախի—19, Գանձակ—14, Երևան—13, Էջմիածին—12, Բագու—15, Ախալցխա—9, Հին-Նախիջևան—10, Վեդրինա—10, Նախիջևան—5 և այլն), Ռուսաստանին և Հրեստանին Կովկասին—108 (Մոսկուա—25, Նոր-Նախիջևան—12, Ղրիմ—19, Հաշտարխան—10, Պետերբուրգ—9 և այլն)։ «Մեղուի» բաժանորդները բաղդատապէս աստիճանաւոր էին՝ հոգևորական—62, պետական և ազնուական—187 (Արդութեան 6 իշխաններ, Բեհբութեան—3 իշխ., Թումանեան—2 իշխ., 2 Լօրիս-Մելիքեաններ, 2 Լազարեան և այլն)։ Ապա «Մեղուն» ունի մեծանգամայն նոր ժողովրդական բաժանորդներ։ Դրանք գիւղական ասնուաէրերն են („քհօխոյ“), թուով վեց տող։ Մնացած բաժանորդները, 300-ից աւելի, վաճառական դասից են։ Ինտելիգենցիայից յիշել պետք վեց բժիշկներ։

«Կռունկ Հայոց Աշխարհին» 1860 թ. ունէր 440 բաժանորդ։ Անդրկովկասն այդ քանակից տալիս էր 275 բաժանորդ (Թիֆլիս—135, Գանձակ—23, Ալէքսանդրապոլ—23, Ախալցխա—16, Ախալքալաք—15, Վեդրինա—9, Երևան—8, Շուշի—7, Շամախի—3, Նախիջևան—3 և այլն), Ռուսաստանին և Հրեստանին Կովկասը—128 (Հաշտարխան—32, Մոսկուա—20, Նոր-Նախիջևան—15, Պետերբուրգ—11 և այլն), Թիւրքիան—31 (Պոլիս—26, Իզմիր—4, Տրապիզոն—1), Պարսկաստանը—6 (Թաւրիզ—4, Թեհրան—2)։ «Կռունկի» բաժանորդները բաղդատապէս աստիճանաւոր էին՝ հոգևորական—48 հ. (այս թուի կաթուղիկոսը, երկու պատրիարք, 6 եպիսկոպոս, 3 եպիսկոպոս և այլն), պետական և ազնուական—53 հոգի (Լօրիս-Մելիքեան, Բեհբութեան, երկու Արծրունի և այլն), ապա մի քանի ինտելիգենտներ և մնացածը հասարականներ։

Եթէ այժմ համեմատենք „Հիւսիսափայլի“ և մնացած հայ պարբերականների բաժանորդների քանակը նրանց դասերին

պահանջելու համար կոմից—ապա մեր առաջ կը ծառանայ այն փաստը, որ «Հյուսիսափայլը» հոգևորական բաժանորդ համարեա թէ չունի, այն ինչ մնացած պարբերականների համար այդ դասը պահպանելի թուով առաջնակն է տալիս: «Հյուսիսափայլը» նկատելի չափով զուրկ է նաև աղնուական և առևտրական դասերի բաժանորդներից (1859 թուականին օրինակ չի կարող ծառայել, որովհետև, ինչպէս առաջինը, այդ տարին նպաստեցնելու աշակցում էր Կովկասի իշխանութիւնը), իսկ դրա պէտք մնացած պարբերականները ունին այդ դասի ձեռնտուութիւնը: Ո՞վ էր ուրմն գլխաւորապէս „Հյուսիսափայլի“ բաժանորդը: Հայ վաճառականը: Բայց այդ դասը նոյն ևռանդով և նոյնիսկ գերազանց ջերմութեամբ նաև հակառակորդ բանակի պատուոյն էր: Նա պէտ ևս երբուն աշխարհայեացքի կրող էր և իր առանձին տասարակական ձգտումների տունը չէր դիել: Որքան որ նրա մի թևը ձգտում էր ազատագրուել միջնադարեան իշխող դասերի իդէոլոգիայից, այնքան նրա միւս թևը չտուում էր իր դիրքն ճանաչել միջնադարի ներկայացուցիչների գերիշխանութիւնը, թէ կեանքի մէջ և թէ իդէոլոգիայի:

Հայ պարբերականների բաժանորդների ցուցակները քննելուց յետոյ, որ անհրաժեշտ էր այս կամ այն պարբերականի ևսկը կանգնած համակրողների դէմքը ճանաչելու համար, այժմ պիտի նք հայ գրքի շրջանառութեան խնդրին առհասարակ, այսինքն աշխատանք իմանալ, թէ ինչ քանակի և որակի գրքեր և հրատարակութիւններ էին ապատում 50-ական և 60-ական թուականներին:

Կովկասի գրաքննական կոմիտէի տուեալներով 1855 թ. ներկայացուել են տպագրութեան թոյլատուութիւն առնելու համար 13 ձեռագիր և գիրք (գրքերն արտասպութեան համար): Պարբերական հրատարակութիւններ ներկայացուել են 47 առանձին համարներ, որոնցից 18 թոյլատուել է ամբողջովին, իսկ 29 բացառութիւններով: Տպագրած գրքեր ներկայացուել են 65 անուն և տասը: Օրինակների քանակը եղել է 507, որոնցից 37 անուն և տասը 394 օրինակով հոգևոր բովանդակութեամբ, 9 անուն և տասը 60 օրինակով—քաղաքական, 12 անուն և տասը 23 օրինակով—գիտական գրականութիւնից,

7 անուն և հատոր 30 օրինակով—դպրոցական: Այդ գրքերից 43 անուն արդէն թոյլատրուած են եղել մինչև 1855 թ., 8 անուն քննուել ու թոյլատրուել է 1855 թ., իսկ 14 անուն մնացել է քննուելի 1856 թուականում *): Թէ պարբերականները և թէ գրքերը պարզ է, որ նախմուծուած են եղել արտասահմանից—Պօլսից, Վիեննայից և այլն, որովհետև Ռուսաստանում հրատարակուած գրքերը նորից չէին ենթարկուել դոկտոր կօմիտէի գրաքննութեան: Եւ այն էլ պիտանք, որ 1855 թ. Ռուսաստանում հայերը պարբերականներ չունէին: Կովկասի հայութեան մտաւոր ճիգերն արտայայտուել են այն 13 ձեռագրերի և գրքերի մէջ, որոնց մասին կոմիտէն յիշում է իր հաշուի հինգ սկզբից: 1856 տարուայ թոյլտուութեան ընդունել է 4 ձեռագրի համար: Պարբերականներ ներկայացրուել են 45 համար, որոնցից 35 №№ թոյլատրուել են ամբողջովին, իսկ 10 բացառութիւններով: Գրքեր ներկայացրուել են 228 անուն և 258 հատոր: Օրինակների քանակն եղել է 2300, որոնցից տզեսր թոյլատրութեամբ 76 անուն 81 հատոր—1,368 օրինակ, քաղաքական—36 անուն 46 հատոր—225 օրինակ, գիտական գրականութեան—82 անուն 94 հատոր—348 օրինակ, դպրոցական—34 անուն 37 հատոր—359 օրինակ: Գրաքննական կոմիտէն այդ բոլոր գրքերը բացի 2 աշխատութիւնից թոյլատրել է չէնզուրայի մէջ մտնելու **): Պարբերականներն ու գրքերը բացատրում էս արտասահմանեան հրատարակութիւններ են եղել:

1858 և 1859 թուականների համար մենք տեղեկութիւններ չունենք: 1860 թ. գրաքննական կոմիտէից ազատրուեան թոյլտուութիւն է խնդրուել 12 ձեռագրերի և գրքերի համար: Բացի այդ նրա քննութեան տակից անցել են 52 համար «Մեղու Հայաստանի», 12 համար «Նոսնի Հայոց Աշխարհին» և

*) Акты, т. XI. № 792, Отчетъ о дѣйствіяхъ цензурного Комитета за 1855 г.

**) Акты, т. XI, № 799, Отчетъ о дѣйствіяхъ цензурнаго Комитета за 1856 г.

արտասահմանեան պարբերականներ 199 №№—629 օրինակ։ Արտասահմանից 1860 թ. գրքեր ներմուծուել են՝

ա. հոգևոր բովանդակ. . .	57	*անուն*	57	*հատոր*	1,268 *օրին.*
բ. պատմական և քաղաք.	20	»	26	»	157 »
գ. գեղեցիկ գրականութ.	20	»	22	»	826 »
դ. գրքոց. և օժան. գիր.	20	»	20	»	1,292 »
Ընդամենը՝ . .	117	»	125	»	3,543 »*)

1861 և 1862 *թուականների համար գրաքննական կոմիտէն հետևեալ տեղեկութիւններն է տալիս* **)։

1861 *թ.*

Ներկայացուած է ձեռագ.՝ 12
Պարբերական հրատարակութ.՝
«Մեղու Հայաստանի» 53 №
«Կասպի Հ. Ա.» 12 №
Արտասահմանից ներմուծուած է
պարբերական հրատարակ. 115 №—744 *օրինակ* ***)
Գրքեր ներմուծուել է՝

Հոգևոր բովանդակութեամբ.	65	*անուն*	67	*հատոր*	1,512 *օր.*
Պատմական և քաղաքական.	11	»	20	»	60 »
Գեղեցիկ գրականութիւն . .	33	»	34	»	273 »
Գրքոյկական և օժանդ. գիր.	94	»	25	»	1,168 »
Ընդամենը՝	203	»	146	»	3,013 »

1862 *թ.*

Ներկայացուած է ձեռագրեր՝ 6
Պարբերական հրատարակութ.՝
„Մեղու Հայաստանի“ . 52 №

*) Акты, т. XII, էջ 1375—1376.

**) Акты, т. XII, էջ 1380 և 1386—1387.

***) 1861 *թ. պարբերական հրատարակութիւններից* 19 № *թոյլատրուել է բացառութիւններով, իսկ* 3 № *արգիլուել է։* 1862 *թ. թոյլատրուել է բացառութիւններով* 12 №, *արգիլուել է* 2 №։

„Կաւնկ Հ. Աշխ.“ . .					1—11	№
Արտասահմանից ներմուծուած էր՝						
Պարբերական հրատարակութ.՝					89	№
Գրքեր՝						
Հոգևոր բովանդակութեամբ՝	158	անուն	169	հատոր	1,311	օր.
Պատմական և քաղաքական	49	»	56	»	126	»
Գեղեցիկ գրականութիւն .	79	»	79	»	569	»
Գիտական և մանկական	24	»	24	»	1,074	»
Աշխարհագր. ատլ., և ճանապ.	1	»	1	»	14	»
Օժանդակ գիտութիւններ.	14	»	14	»	14	»
Ընդամենը՝ . . .	325	»	344	»	3,114	»

Պարբերականները հրատարակում էին տարմանափակ թիւով, որովհետև, ինչպէս տեսանք, տարմանափակ էր բաժանորդների քանակը: «Մեղու Հայաստանին» 1861 թ. տպագրւում էր 350 օրինակ, 1862—1864 թ.թ.—480 օր., 1865—1866 թ. թ.—450 օր., 1867—1868 թ. թ.—360 օրինակ: «Կաւնկ Հայոց Աշխարհին» 1862 թ. տպագրւում էր 800 օրինակ. 1863 թ.—580 օր., 1865 թ. լոյս տեսան „Կաւնկի“ երկու վերջ տեղագրութիւնները (Թիրթը Մարկոս Աղաթէկեանի ձեռքից անցել էր Սա. Սահիանէին). առին մէկը—400 օր., 1866 թ. լոյս տեսաւ 65 թ. համար լրացուցիչ մի տեղագրութ. 10.11 և 12 համարների տակ, որ տպագրուել էր 250 օր.: 1866 թ. „Կաւնկը“ փոխուեց «Հայկական Աշխարհի»: Այդ թուականին նա տպագրւում էր 250 օր.: Յաջորդ 1867—68 թ.թ. նոյնիսկ այդ քանակը չլրացնելուց և տպագրած օրինակները քանակի չափ 200-ի: Այդ շրջանի «Վաճառականի» Թիրթը 1866 թ. տպագրւում էր 450 օր., իսկ 1867 թ.—240 օր.: Սահիան քահ. Մանդինեանի «Գործունի» №№ 1—6 լոյս տեսան 500-ական օրինակ, №№ 7 և 8—300-ական, «Գործունը» № 8 դադարից: Թիֆլիսում 1862—1868 թ.թ. տպագրուից 53 անուն հայ քերթեր ու թերթեր, այսպէս՝ 1862 թ.—6 անուն, 63 թ.—7, 64 թ.—5, 65 թ.—12, 66 թ.—11, 67 թ.—8, 68 թ.—4: Գրքերի այդ քանակն ըստ բովանդակութեան տարբերւում

էր՝ հոգևոր—8 անուն, այրևնության—8, դպրոցական և մանկական ընթերցանության համար—18, աշխարհագրական և պատմական—3, օժանդակ գիտություններից—2, գեղեցիկ գրականության—4, օրացույց—8, խառն—2 *):

1863 թ. սկսած մենք այլ ևս տեղեկություններ չունենք պատահմանից նկատած գրքերի քանակի և գրակի մասին: Այլ և ընդհանրապէս մեզ պակասում են տեղեկություններ Ռուսաստանի զանազան վայրերում (Մոսկուա, Պետերբուրգ, Թեոդոսիա) տպագրուած հայ գրքերի մասին, որոնք՝ առանց թիֆլիսի գրաքննական կոմիտէին նախապայմանելու՝ անարգել տարածում էին հայության մէջ: Անտարակոյս, ցանկալի էր ծանօթանալ հայ գրքի շուկային իր բոլոր մանրամասնություններով, որպեսզի վերջ ի վերջոյ ժամանակի անցուդարձերը մնում են մեկնուած գրքերի մէջ և նրանք են յետնորդներին վկայում նախորդների մասին, սակայն մեր անկազմակերպ հասարակական կեանքի չնորհիւ դա մեզ համար դեռ անհնար եղաւ: Բայց և այն, ինչ ցուցահանեցինք վերի էջերում, թոյլ է, թէ այնուամենայնիւ մի որոշ հասկացողություն ժամանակի մասին մեզ տալիս է: Մենք տեսնում ենք, որ հրատարակչութ, նորմուծող, առհ է՝ տպարան գրքերի խոշորագոյն մասը՝ կրօնական բովանդակություն ունի: Դա հոգևոր գաղափարախոհության մի ապացոյց է. հրատարակիչները զգաստացած էին հոգևորական, գրաքննչի մեծաւ մասամբ նրանք, նրանց բովանդակության համար, վերջապէս, ընթերցողների պահանջն գրքեր հրատարակել նրանք: Հայ աշխարհիկ մտքն անկարն էր միայն երկու-երեք հանդիսանում: Ապա նա տեղ էր գտնում մի քանի լրագրի գրքոյկների մէջ, սակայն ճիշտն այդ գրքոյկների առաջադրանքում: Ընթերցողին չգիտեմ ինչպէս հետաքրքրել այն հանգամանքը, որ հրատարակում և տպագրում էին գրքեր նաև պատմական, աշխարհագրական բովանդակության համար: Այդ գրքերն ըստ էության պետք աշխարհիկ դիտելի մասին խօսէին, սակայն չնայած նրանց կազմողների ունեցած հետե-

*) Сборникъ статист. свѣдѣній о Кавказѣ, Тифлисъ. 1869. от. II, էջ 163, 166, 169.

ցանկանալի գործերն էին հաշտում։ Մի ուսանձին բան չէր նկատացնում իրենց ազգային պատմությունը։ Ինքնատյունը— հայ պատմության այս կամ այն դրության ճառագայթն նկարագրությունն էր, իսկ թարգմանականը—անճաշակ և միամիտ գործի վերստատրությունն։ Այժմեականության ունեցող աշխարհիկ հայ միտքը, որ կրքեր էր յուզում, պայքար առաջացնում, ինչպես ասացինք, գլխավորապես պատահարում էր մի երկու պարբերականների մէջ։ Ինչ խոսք, որ առաջին տեղը «Հիւսիսափայլն» էր բռնում։ Արդ՝ 50-ական, 60-ական թուականների հայ պարբերականն ու դրի տրամքին պարագաների հետ ծանոթանալուց յետոյ՝ խնդրեմ լիներ նրա նկրքին, ժամանակաշրջանի այժմեականությունը յուզող, բովանդակություններ։ Բայց նախ և առաջ մի տարց. ինչ մտայնության տէր էր հայությունը նախորդ դարի առաջին կիսում։

Պարսկական և թիւրքական ոլորտությունն առ հայությունը գիտակցի մասամ էր դարձել։ Արտօնեալ դասը հոգևորականությունն էր։ Նա էր միևնոյն ժամանակ գրի ու գրքի նկրկայացուցիչը։ Եւ այդ դասը, որպէս կազմակերպություն, համակերպուել էր ոլորտ ընժիմի հետ և ոսկի չէր փախցնում քարոզելու ժողովրդին հնազանդություն և հաւատարմություն պէտք ոլորտներըը։ Ժողովրդական մասամն իր համար փրկության ճանապարհ չէր տեսնում։ Նա հնծում էր բռնակալներն ցնծառ և յոյս չունէր երբ և իցէ ազատուելու պարսկի ու թիւրքի անարդ պետութիւններից։ Հայ երկիրը գարձել էր լայն ու հարաչանքի հովիտ։ Յուսահատ ու լքուած հայությունը մխիթարության փնտրում էր հաւատի մէջ, մանաւանդ այն խոստումների, որոնցով «այս աշխարհը» համարւում էր անցորդի և ժամանակաւոր կայան, իսկ «միւս աշխարհը» հանգստության ու վարձատրության վայր բոլոր հաւատի պատճառով հալածուածների համար։ Հայ ժողովրդի մէջ ծայր էր առել մի ինքնօրինակ մեսիանիզմ, հրաշքի և սինկալության մի ոգուտ, թէ հայության ստոգականքները պիտի չարժեն Առուծոյ կամ մի այլ մեծության գութը, որ հետու չէ փրկության ժամը։ Այդ կարգի հոգեկան և մտաւոր մթնոլորտ է նկարագրում Խաչ. Արովեանը, որն իր աչքով տեսել էր պարսկական ոլորտության

բոլոր արհամարհանքը: Ահա մոհամեդական «Մուհառեմի» ծոմին էջմիածնից մի պատգամաւորութիւն է ելել Երեան՝ շնորհաւորելու խանի ծնունդ: Էջմիածնի նախնապատին ընդառաջ են գնացել հայ հոգեվորները, նրան պատով իջեցրել են առաջնորդանոց և խօսք բացել ազգի անմխիթար կացութեան վրայ: Աշխարհիկ երեսին հարցնում է հոգևոր երեսից. «Ախր էս հօ օր չի՝ որ մենք բաշում ենք: Մնացել ենք նման մի պես շինքանց ծառ. որ վերջն ախ ինչ պէտք է լաւ, գիր չէք բաց արել, ինչ ա ասում. էս աշխարքս քանի տարի էլ պտի մնայ. վախտը հասել չի, որ մէկ Գաբրիէլեան փողը փչէր, աշխարքս հայտու պէս դղէր, էնպէս որ մէկ պահիկ ասող էլ՝ մէկ օրման ճամփից էրևէր, աճուճ պառնալը, եղիա մարգարէն գային, մարդիկ մէկ թզի չափ պառնային, մեր տէրը էջմիածինը ու Երուսաղէմը մնային, մեր ազգը օդրանար, էս անհաւատ անօրէնները մի կորչէին, ջնջվէին ու մենք սկսինք երկնքի ու երկրի փառքը վայելել, ինչպէս որ հրեշտակը երգումը մեր տէրը Հաւատարին պատմել ա: Մենք էլ ասոդից ենք լսել, հօ մեր պլխիցը չենք տում: Ախր ամպատան, բարդատան էապէս ենք խմացել՝ թէ Աստուած պետականը՝ որ մեր տէրը Հաւատարչին էնքան չարչարից, տանը չորս տանջանք տալ ասից; տանը չորս տասի Խաչ Վերտումը՝ ծառայ եմ նրա տէրը օրհնեցին՝ (ասից ու երեսին խաչ հանից.) պահից, մեր խաթեր էնպէս արաւ, որ մեր ազգն էլ տանջվի, չարչարվի, էլ էս աշխարքին թամահ չանի, որ Աստուծոյ մօտ պարզևես գանվի ու երկնային թագաւորութիւնը վայելի: Ախ՝ ինչ կըլէր՝ որ էս օրը մի շաւաղ պար, մեր աչքն էլ լիս տեսնէր. երկրի թագաւորութիւնը մեր ընչին ա պէտքը, երկնքումը պտի մեր տապը բանի, որ ամէն ազգ էլ տեսնին ու ամաչին, վուչմանին, որ երկրիս մեծութիւնները էնքան խոխ էին էլել: .... Գիրն էլայ ձեր ձեռին, (այսինքն հոգևորականութեան. Դ. Ա.) գրի բաժանիքն էլ: Ձեր մէկ մարդը աշխարքի բարէբար բան գիտի: Ասում են՝ թէ ընչանք աշխարքս չվերջանայ, մեր ազգին ոչ թագաւորութիւն կըլի, ոչ թախտ, հենց էապէս գիտի չարչարվինք, մենք պատինք, ուրիշներն ուտին»): Եպիսկոպոսն այս պատն խորհրդածութիւններին պա-

*) Տես. Արտևան՝ «Երկեր», Մոսկուա, 1897. էջ. 124—125.

տասխանում է, որ առաքեալները, մարգարէները ու մարտիրոսները՝ հալածանք կրելով՝ արժանացել են Աստուծոյ շնորհներին և «այժմ նրա աջակողմեան դասումը նստած» վայելում են երկնքի ուրախութիւնը, որ այդ վսեմի հետ չահ չկայ վսեմանալու երկրային անցաւոր վայելքները։ «Էդ որ գիժը կանի։ Փառք աշխարհս երկու ծալիկ խոտոյ, այսօր է և ի վաղին յամաքի։ Մեղ պէս մեղաւոր անարժան մարդիկը պէտք է Աստծուն ընդիմանանք։ Էդպէս սարսափելի չար միտքը ձեր սրտերումն էլ չի պահ անց կէնայ, որ մնայ բերան բերէք, ամ լեզվով էլ առէք։ Ինչ Աստուծոյ կամքն ա, էն պիտի լիի։ Պօղոս Առաքեալը չի ասում, թէ «ինձագանդ լերուք բազաւորաց, զի յԱստուծոյ են կարգեալ». պրծանք, գնաց, ով այլ անսակ կմտածի, անհաւատ ա ու դժոխքի բաժին, մեր պարտականութիւնն ա, որ ասենք, ձերը՝ որ լսէք։ Չէք լսել, պարտականը դուք մնաք»)։

Մեղ չըպիտի չփոթէ այն հանգամանքը, որ Արովանի արձանագրած մարքերը գտնում են մի դեղարուեստական համաձուած գրքի մէջ։ Արովանի երեխէին ուսուիկապատը ժամանակի ընդհանրացած կարծիքների արտայայտիչներն են։ Իրենց գրոյցով նրանք մեր առաջ ցուցահանում են նախորդ գարի սկզբի հայ հասարակական միտքը, նրա կարողութիւնն ու պատմութիւնը։ Որ Արովանի արձանագրած մարքերը մտացածին չեն, որ նրանք իրականութեան մի բեկորն էին—մենք այդ մասին կասկած չունենք։ Դայ մեր ձեռքի տակ և մի այլ վկայութիւն, որը թէև վերաբերում է Թիւրքիային, բայց պատկերացնում է նոյն ժամանակի մթնոլորտը, որն ստեղծել է Արովանի գրչի տակ։

Արևէն Թախմախեան՝ խօսելով Թիւրքիայում տիրող հասարակական տարրերի մասին՝ պատմում է հետևեալը. «Վանայ ձովը 4 կղզիներ ունի, որոնցից, երեքը վանքեր են, հայ ազգի վրկութեան համար աղօթող արևզանների կրած։ Մի ժամանակ, այդ կրօնաւորները վանից այս կողմ ձախորդ ազգութիւն չունէին, իրանց աշխարհի ունայնութեան վրա տուած խիստ

*) Անդ, էջ 127.

քարոզներով. այնպէս որ, դուցա քարոզների ազդեցութեան տակ կրնասարկները ընտանեաց ծոյլ վախչում էին վանքից. մարդիկ ինչպէս կրօնասէրներ բնաւ պիտէին բոլոր ամսոյն ու նախկը և Այգեսանից բաղաք իրանց գործն գնալիս, մարդ կարծես պատահում էր խումբ-խումբ ապուշների, որոնք իրանք իրանց վախում, այլոնքն ամսոս էին կարդում. նոքա կամաւ իրանց անձը, առյիկնանց պէս, ննջասիում էին թխբքերի ծեծին և նախատինքին: Այդ ժամանակի վանեցիները երկրային թագաւորութեան մարդերին թշնամի էին: Այդ մասնաւոր պրօպագանդիստներին մահացու տրված առից Խրիմեան իր աշակերտներով, որոնք ազգասէրն քարոզեցին»*): Հէնց այս երկրային թագաւորութիւնը մեծագոյ հոգևորականներին է պատկերացնում Րաֆֆին իր ճանապարհորդական նկարագրութեան մէջ**): Այսպէս, գնա ևս նախորդ գլխի չինական թուականներին հայ հոգևորականութեան մէջ տիրապետող էր այն միտքը, որ հայութիւնն աշխարհային բաներից ու փառքի նոանից չըպիտի ընկնի, որ նա պիտի պատրաստուի երկնային կեանքի համար: Այդպէս առում ու քարոզում էր հասարակ ժողովրդի համար: Գուցէ դա շատ հոգևորականների անկեղծ դաւանանքն էր, բայց այն էլ փաստ էր, որ այդ գաղափարները լաւ մեծի մասին շարժում էին յար ու նման Խրիմեանի նկարագրած պատկերին.

Առնմք ըմպիս և ըմմատաղ, գիտելոն գառըն կարմրած,
Առնմք ըղձաշ ըմխաբխաց իսկն ի վերայ լիճ լիճ լցեալ.
Առնմք ըմկոթըն մաքուց և ըմմածունըն սերտակատ,
Առնմք գանհալըն կարտոպ և ձագուց մեղը ըմհնա նորա.
Առնմք և յաւերանամք, նըննջմք ի խաւց, խորտամբ անհոգ:

*) Ա. Րաֆֆաֆեան՝ «Հայրենիքի պահանջներ և հայ գիւղացին», հրատարակեալ թիւն կարդացված 1881 մայիսի 29-ին և կրկնված յունիսի 12-ին, Թիֆլիս, Արծրունու Տպարանում Թիֆլիս, 1881. էջ 21—22:

**) «Ուխտաւորաց վանքը».

Այս նշանակում էր, որ մերժելով աշխարհային հատարտական իմաստով հայ հոգևորականությունն այն չէր մերժում մանուսը բարեկեցության, հանգստի և ապահով ապրուստի տեսակէտից։

Հայ ժողովրդական մասսաների քաղաքական դիմադրությունը, նրանց ննջասրտումը հոգևորականության՝ առաջացրել էր և մի ստորնոտ հոգևոր ու մասսայ վիճակ։ Ընդհատարտական խեղճության ու ստրկացման՝ մասսաների, ամբողջ հայության մէջ ապրում էր մի համոզում, որ հայ ազգն ընտրյալ ազգ է։ Այդ համոզումն ունէր և բարբարոսից ու հեթանոսներից, որ հրամայական եկան Մխիթարեանները և փշրելու տակից լոյս աշխարհ հանելին անցեալի նշխարները։ Մխիթարեանները հատարտներ ու հրամայականներ էին։ Հայության վերաբերեալ ամեն մի տող նրանց մէջ առաջացնում էր խորին պատկառանք, համարեա թէ սրբության նկատմամբ, իսկ քննադատության-երբէք։ Մխիթարեանների հրամայականները հայ կրթուած դասէ, այնինչ հայ հոգևորականության առջև բաց սրերն անցեալ եղած ու չեղած մեծագործությունների պատկերը։ Արդիւնքն եղաւ այն, որ հրամայականը սկսեց իր սուր խորքում վերից վար նայել սերտղի վրայ։ Եւ այն համոզումը, որ հայությունն ընտրյալ ազգ է, ուժգնացաւ նաև ներքին ինքնագոհության զգացումն ևս։ Բայց այդ ինքնագոհության զգացումը չօշափելի գոյծ չէր դառնում, նա չէր հրահրում պէտք անցեալի անկախության վերականգնումը, այլ ընդհակառակը դալիս էր թե ասես ունայնության քարոզին, որ առաջ եղել են այսպիսի ժամանակներ, հայությունն ունեցել է իր ազատ ու անկախ քաղաքական գոյությունը, բայց և այդ բոլորը, որ ասես մարդկանց ձեռքի գործ, անցել է, ուրեմն՝ յաւիտենական Աստուծոյ արքայության է, այն միայն խնդրելէք։ Այսպիսով ունայնության քարոզն և ազգային ինքնագոհությունը առնչակից էին իմիջիայլոց հայասոլուբիւն, որը խորշում էր գրի աշխարհից, չէր կամենում օրինակ վերցնել օտարներից, մերժում էր աշխարհիկ հատարտական գոյությունը։ Հայությունը դարձել էր կրօնական համայնք, միանգամայն ատհամանափակ իր ընթացքի մէջ և տանդատար իր ձգտումներով։

Նախորդ դարի յինսական թուականներին, երբ փոփոխուած տնտեսական ու հասարակական պայմաններին չնորհիւ ծայր առաւ մեր վերածնութիւնը, երբ հրապարակի վրայ դրուած էր մեր աշխարհիկ գոյութեան խնդիրը, տապարէդ նետուից, որպէս ընդհմատիր այժ, նաև ինքնագոհ հայամոլութիւնը: Այդ հասանքը, որ իր հետ ունէր եկեղեցական դասին, պինդ փակել էր այն պնդումներին, թէ հայութիւնը իր հասարակական կեանքի մէջ կարիք չունի աշխոյժ փոփոխելու: Հայ լեզուի աշխարհականացումը նա համարում էր սրբապղծութիւն, որովհետև «ճիշդ մեր դնելով աննկուցելի պատմութեան սկզբնաւորութեան սղին՝ համարի մայր, վաղեմի, առաջին, նկուցագոյն և հարազատ, ոչ մուրացիկ, ոչ կարկատեալ, ոչ ածանցեալ, և ոչ ՚ի փոխ առեալ յայլոց, այլ նախամարդոյն Ադամայ պարզև և պատկ բանականութեան շնորհեալ ամենամատ Արարչապետին դեռ ևս ՚ի խոնձարուրս նորածին կենաց և անմեղութեան վիճակի նորա»... *) Որևէ քննադատութիւն մեր պատմական անցեալի, դէպքերի և անձերի նկատմամբ համարում էր դարձեալ սրբապղծութիւն և դատճանութիւն սրբոյն անուան և շահերի հանդէպ: Հայութեան անցեալի հետ կապուած ատնդութիւնները, անգամ ակնյայտնի առասպելները համարում էին անձեռնմխելի սրբութիւններ: Եւ մի ազգ, որի լեզուն նախամարդ Ադամի (!?) բարբառն էր, որի բնակած վայրը հինօրեայ դրախտի տեղն էր նկրկայացնում, որի գլխաւոր առաքեալն արժանացել էր Մեծնի այցին, որի նախահայրերին այնքան քաջագործութիւններ անկին կատարած,—միթէ այդպիսի ազգը կարիք ունէր «մուրալ, կարկատել, փոխ առնել», ինչպէս առում էր Արարատեանը: Ազա չէր պիտի մոռանալ, որ ազգն ոչ միայն պանծալի անցեալի տէր էր, այլ և ունէր կենդանի, այժմ իսկ առաքելի վրայ ծառացած արբազան հովիւներ, որոնց «մէկ մազը աշխարքի բարէբար բան գիտէ»: Եւ ոչ միայն նրանք: Չէ որ նրանց կողքին ամուր կանգնած էին

---

*) Առաքեալ Վարժապետ Արարատեան՝ «Ծխամարտ ընդդէմ Սասան յարուցեալ ամենապատուական նախամայր մարտիր լեզուիս Հայոց,» Թիֆլիս, 1858. էջ 5.

ազգի իշխաններըը, ամենքան ունեու, ամենքան պատուաւոր և յարգուած իշխանութեան առաջ։ Էլ ինչն էր մեղ պակաս։ Ոչինչ։ Միայն էր հանդիսաւ տալու ազգի առաջնորդների հոգևոր-թեան առիթ, շրջապատելու օտար ազգերի օրինակով, խորհուրդ մեր պարծանքների մէջ և կրկ ու չփոթի չերծուցանել ազգի ծոցում։ Դա ազգային սիրոյ խաւերի—հոգևորականութեան ու աշխարհականութեան—բաղձանքների թելադրութիւնն էր. թող ազգը հպարտակ մնայ իրենց, նրա ներկայացուցչութեան արտօնութիւնը թող միայ հին ձևերում, իսկ խոնարհ ազգայինների գործելու ազատ համար բաւ է և հին յիշողութիւնների օրօրը։ Սակայն պատմութիւն իզուր չէր պարծել։ Իզուր չէին առաջ եկել նոր հասարակական խաւեր, որոնք առնուելոյ էին արել ազգ անհատակերպը. իզուր կցորդել ցրուած հայերին և շարժման մէջ դրել ազգի գաւակներին։ Անցեալի յիշողութիւններն այլ ևս թափթիր էին, որոնցով կամենում էին թաղցնել ներկայի թուլութիւնն ու անճարութիւնը։ Հին վիճակը, հին հասկացողութիւնները, հին լեզուն պատուիրակ էին, որ փակում էին նորի առաջ, նորի, որ բարեկեցութիւն, լոյն մտաւոր հորիզոններ ու վիճակական կեանք էր խոստանում։ Գէթ էր պայքարել։ Ազգանշանը պայքարն էր, հասարակական անհաշտ պայքարը։ Եւ հնչում էր նրա պրատամը. «Օրհնեալ է պատերազմը» (Մի՛ք. Նալբանդեան)։

ԳԼՈՒԽ VI

ՀԱՅՈՒԹԵԱՆ ՀԱՒԱՔՈՒՄԸ

(Հաչ. Աբովեան. Ռ. Պատկանեան. Ս. Նազարեանց. Միհ. Նալբանդեան. «Ինքնագոհ հայամոլութիւնը եւ նրա յետագայ կերպարանաւորումը. Գր. Ասծրուճին «նոր խօսքի» ազդարար. Եզրափակում)

Մեր վերածնիչները՝ Խաչ. Աբովեան (1804—1848), Ռափայէլ Պատկանեան (1830—1892), Սահակեան Նազարեանց (1812—1879), Միքայէլ Նալբանդեան (1829—1866) իրենց ուսմի համ պատա առաջնորդ ու ընակիցներով նախ և առաջ, ինչպէս վերն էլ ասել ենք, մտահոգում էին և արծարծում հասարեաց հաւաքման գաղափարը։ Հայերի պիտի ազգ կազմեին, այսինքն մի ուրոյն մարդկային հաւաքական մարմին, որն ունենար իր սորրեր կուլտուրական ձգտումների համապատասխանը, պահպանէր իր առանձին նկարագիրը, սովորութիւններն ու լեզուն։ Հայերը նոր չէին ազգ կազմում, սակայն նրանց կազմած պետութիւնը տզրուկութեան և ոչնուականութեան դրշմն էր կրում իր վրայ, իսկ դա արտայայտում էր նրանով, որ պետութեան մի ծայրին ծառացել էր արտօնեալների մի խմբակ, մեւս ծայրին տարածւում էր ժողովրդի անմասն, հրու և ամենատառապ հսկայ զանգուածը։ Հասարակ իրաւունք և հասարակ պարտականութիւն դէպի պետութիւն առաջ հասկացողութիւնը—դա էր հրապարակի պահանջը։ Պետութեան գործիքը իշխանը ուժասպառ քարոզը մեր անտեսական զարգացման և բարեկարգիչ պետութեան հետևանքն էր։ Բարեկարգման գաղափար է, որ գաղափին, պետութեան հետ կապուած արտօնութիւնները յանձնումն պատ-

մութեան արեխիւր: Հայ միջավայրում, ինչպէս անսանք իր տեղում, բուրժուական պայքարից և տապալից համբարութիւնը, որ գաղափարական հատատաութիւն էր և խաչնորա էր հանդիսանում նրա անհատական անարգից ծաւալմանը: Խորտակելով իր անհատական գոծունէութեան մէջ անմիջական արգիլքներ յարուցանող հակառակորդին՝ նա պիտի չանար անվնաս գարձնելու նաև մնացած հայկական գաները, որոնք աւելի չահում էին ապահնած իրենց ծագման ու հատարակական պաշտօնին, քան թէ գրանարիով անձնական ձիրք ու չնորհք: Այս հակամարտը նախ և առաջ տեղի պիտի ունենար գաղափարականութեան մէջ: Եւ նա ճայթից ազգութեան գաղափարի շուրջը:

Աբովեանի հոգեբանին ասում է. «մեր (այսինքն՝ կրթութ—Դ. Ա.) պարտականութիւնն ա, որ ասինք, ձիրք՝ (այսինքն՝ ժողովրդի—Դ. Ա.) որ իւէք» *): Այսպէս ազգային նիւթ կայացուցչութիւնը, ազգի առաջնորդութիւնը հոգեբանը վերապահում է իր գաին, իսկ հարատակութեան առաքինութիւնները—ժողովրդին: Հաւասար իրաւունքն և հաւասար պարտականութիւնը բացառում է: Իսկ ժողովրդի աչքարաց գաւակը նոյն այդ հոգեբանից առանձին արտարանում է. «Մար ու ձոր սէրտէրի փար **)... Բանը էն չի, որ մարդ ձէրը առլիս, գնայ ժամը, մէկ էրկու ծունգր դնի, դուս գայ, մի քիչ գրին մտիկ անի, արշառաւայ, բունը առնի, կակոդ բարձի վրայ, գութաքի ետդան գօշակում երկար ձգվի, ուտի, խմի, քէֆ անի, վերն ու գլուխը հառաչնի, ու գայ, մեր Տանին ընկնի, թէ ինչ որ գառել էք՝ էն էլ մեղ ասէք, որ առնինք՝ լաւ անենք, լաւ հագնենք, լաւ մաշենք, ձեզ համար ազօթք անենք՝ .... Մէկ հաս ու չհաս պառառէլիս հօ՝ ուզում են՝ թէ մեր առնը քանդեն: Տօ թէ առաւ կարճ ա, չի հառնիլ, փոդն ա երկարացնում: Ինքաններս խոհել ենք, ինչ որ առում են, ակամէ ենք անում: ... Առնք՝ թէ կարդաւոր են, խաթրնեիցը անց

*) Աբովեան, էջ 127.
**) Աբովեան, էջ 23.

չինք կլնում, չինք ուզում, որ անէծքի պատճառ դառնանք, չունքի սևագլխի անէծքը, քարին որ դիպչի, քարը կըպատռի, իրանք էլ մի քիչ պէտք է իրանց չափը ճանաչին։ ... Քահանան ձիու վրայ իրանք են նստում, իսա ու դումաշ իրանց հագին ա, գարլու փլու ու հազար տեսակ անուշ կերակրներ, խմիչք իրանք գործ ածում. բանըզ կուշտն ընկած վախտը՝ ուզում են՝ թէ գլուխը վեր բերին, էս ոչ Քրիստոս ա տրել, ոչ Մահմէդ։ ... Մեզանից առնում են, իրանց բախիսմաններին ու պղպականներին չէնացնում, եդոյ մեզ վրայ էլ մեծ-մեծ խոստում։ ... Վարժատան չեն բոյ անում, չեն կարթացնում, հէնց ուզում են՝ թէ մեր դաւած խլեն։ ... Ախր մեր ազգը որ խեղճ ա մնացել, թըխ, կրակի նման, բոլորի պատճառն էսա՝ որ մեզ մէկ տաղ չի լսում՝ թէ մենք մի ենք, մեր հաւատն բնչ ա, ո՞նչի համար ենք էկել աշխարք. քոռ գալիս ենք, քոռ գնում» *)։

Արամեանի քննադատութիւնը խիստ կծու է։ Նրա առածից դուրս է գալիս, որ հոգևորականութիւնը մի պորտաբոյծ դաս է, որ գիտէ միայն շահագործել և ոչ մի բանով իրախառնուդ չլինել։ Եւ Արամեանն անվախճար նեկայի դիմաց վերջում է «սիրելի ազգ» անցկալը. «Մտածում էի ձեր կորցրած փառքն ու մեծութիւնը, մեր առաջի՝ էն հրանալի թագաւորաց, իշխանաց գործքն ու կեանքը, մեր հայրենեաց, մեր առաջ աշխարքի առաջման արանչելիքն ու հրաշքը, մեր ընտիր ազգի անեման բնութիւնը ու մեծ քաջութիւններ։ Մանկա առաջս էր կանգնած միշտ, որ ժամով ցոյց էր տալիս՝ թէ ինչ աշխարքի ծնունդ եմ ես, Դրախտը մոքում էր կենդանի, որ ինձ հրապուրէ, թէ լուրջ՝ միշտ մեր երկրի անունն ու պատուականութիւնը՝ իմ առաջս էր բերում, Հայկ, Վարդան, Տրդատ, Լուսաւորիչ՝ քնած տեղս էլ ինձ տալիս էին՝ որ ես իրանց որդին եմ. երբեմն էլ Ասիայ ինձ անպատուր ձէն էին տալիս, թէ Հայկայ պատկան եմ ես, Նոյեան թառը, էջմիածնայ որդին, դրախտի թոռիկը» (էջ IV, յառաջաբան)։

*Եթէ մի կողմն թողնենք այն անհիմն և անտեղի գրոյց-

*) Արամեան, էջ 38—40.

նները, որ անում է այսոհետ Արսլանն և որն այդ ժամանակուայ մեր հայկարանների պետութեան բնորոշ գիծն էր, ապա կըմնայ մի կարևոր հանգամանք նրա մարտումների մէջ, այն է՝ անմիջապար ներկայի դիմաց անցեալ հերոսների օգնութեան դիմելը: Եւ ոչ միայն այդ: Նա առնչւում է իր հետոյ Ազատին, Ազատ ու պատմութեան մէջ փոստարանութիւններ է շռայլում իշխաններ Մատաթեանին և Բեհբուտեանին: Ձի մատանում յիշատակել և մի շարք ուրիշ քայլեր, որոնք ցոյց են տալիս հայ ժողովրդի պաշտպանութեան համար: Արսլանը քաջութեան երգիչ է և չի էլ անում, որ իր փոստարանած Մատաթեանն ու Բեհբուտեանը միայն ծապուժով են հայեր և ոչ գրծով: Մենակ Արսլանը չէր, որ գրում էր խոնարհեցնում հերոսական գործերի ու գէմքերի առաջ: Այդպէս էին և նրա յետնորդներից շատերը: Եւ նրանց ժամանակաշրջանի գործիչների մասսայ վիճակին ու հոգեբանութիւնը հասկանալու համար անհրաժեշտ է աչքաթող չանել այդ բնորոշ գիծը:

Ինչո՞ւ էր Արսլանը մեկ գրում գրատարութիւնը, այն ինչ հոգնոր դասի արտքները նա գիտէր ուժի շատ պատասխանել և մերժել: Այս հարցին պատասխանելու համար անհրաժեշտ է յիշատակել, թէ հերոսների հոգեբանական գործունէութիւնը ուժի շատ ոչ տատրակական խաւի վրայ էր անդրադառնում կամ ծանրանում: Արսլանի երկից երևում է, որ գիտակցութեան: Եւ հերոսները նրա համար պաշտելի են այն պատճառով, որովհետև գիտակցութեան պաշտպաններն են: Իսկ հոգեբանականները ուժի են, որովհետև գիտեն միայն ծանրացնել տատրակական այդ զանգուածի կացութիւնը:

Ո՞նչ նկատրերի ակը տատրակական խաւ է գիտակցութիւնն և ինչ տատրակական տատրութիւններ ունէր Արսլանի հայ գիտակցին: Գիտակցին իր անհատութիւնը վարում է միտուցած ու կղզեցած: Նրա տատրակական կեանքը տեղում է իր խոկ համայնքի մէջ: Գրեթ մարդկանց և համայնքների հետ կամ նա քիչ է շփուում կամ խոկի չի պատահում: Նրա ինքնամփոփ անհատութիւնը, որ ուրիշ է և՛ անունդ և՛ հարստատ, չի հարկադրում բարդ յարաբերութիւններ առնչել դրսի աշխարհի հետ: Այդ պատճառով նա չի կարողանում լայն և ուժեղ՝ լուս-

նից և իր շահերին համապատասխան՝ կազմակերպութիւններ ստեղծել։ Նա միշտ փնտրում է հովանաւոր, որ պաշտպանութիւն տայ նրան դրսի թշնամիներից և խաղաղութիւն պարգեւէ հայրենի երկրին։ Գևորգին հովինակութեան պետի է։ Հովինակաւոր է նրա համար պետի ծեր նահապետը։ Տէր ու սիրական, անքննելի հովինակութիւններ են նաև երկրի իշխանն ու Աստուած։ Եթէ այսպէս է ընդհանրապէս պետական, ապա Արամեանի հայ պետացու նկարագրին աւելանում էր և այն, որ նա զարերի ստրուկն էր, որ նա պարսիկ իշխանութեան և հայ հոգևորականութեան անձայն չհատարծման չնորհիւ միանգամայն պիտանարկ էր դարձել։ Նա հաւատ չունէր մեծապետութեան համար, փորել էր անհնկատութեան, ստատուկ անհչերին, որ ամա կամ աշխարհս պիտի ոչնչանայ Աստուծոյ զայրոյթի հարուածներից կամ օտար հարիոններից պիտի գայ հայութեան վրիժը։ Հարկաւ, նման գիտակցութիւնը գոնէ նուազապէս չափով չէր կարող ինքնագոհ լինել. նա պիտի իր յոյսը գնէր վրիժ—հերոսների վրայ։ Եւ Արամեանը, որ գիտէ գաւակ էր ու լաւ էր գիտակցութեան արդիւնքով, ինքն էլ համակուել էր նրա հոգերանութեամբ, ինքն էլ նրա պէս բռնել էր ազատարար հերոսների փնջը։ Եւ այդ հերոսները նախկայի մէջ նրան պատկերանում էին, որպէս Ազատ, Մարդութեան, Բնութեան և այլն, իսկ անցեալի մէջ, որպէս Վարդան, Վահան Մամիկոնեան նախահայրեր։ Արդիւնքը միևնոյնն էր. հերոսների պաշտամունք։ Հայ գիտակցին իր սրտի նախրական խորքում անհչում էր իր հարազատ հովանաւորն ունենալ, իր ցնծալին և ապրելի գրսից։ Արամեանն արձանագրում էր նրա այդ անհչանքները, նա ջանում էր յստակել փոքրութիւնը, երկիւղը, հոգևորականների թողած ազդեցութիւնն և իր առաջ տեսնել մի արժանիքով, ինքնուրոյն գոյութեան ձգտումով առաքած ժողովուրդ։ Այս վերջին պարագայում նա միստիկաւոր կող էր, կրակոտ քարոզիչ։ Իր նախրական մարդի պատկերացման համար է նա Ազատին ձգում է Անի աւերակներն և նրա բերանով արծարծում հանգած մայրաքաղաքի վերանորոգման անհրաժեշտութիւնը։ Այսոհ էլ նա հոգևորականութեան ոխերիմ թշնամին է, երբ յիշում է, թէ երբ անգրկի անէծքով է

կրծանուել Բագրատունիների մայրաքաղաքն և որ սնապրութիւնների պղծութեան չնորհիւ է Անին մնում անմարդաբնակ ու ամբակ։ Սակայն Արսլանի ժամանակ ունեցայող. ազօթող հայ պիւզացիութիւն կար, իսկ Գագոնները բացառիկ երևոյթ էին։ Մնում էր որ այդ պիւզացիութեան բարեկամները նրան զատուէին ընդհանուրութիւն, ոչի և կամք, մնում էր որ նրանք ձգտումների ու գործի նպատակ ստանձնէին։ Արսլանը պիւզացիութեան բարեկամն էր. նա պիւզացիութեան մէջ անհետանում էր մի ազատարար ձեռք։ Եւ երբ այդ ազատարար ձեռքը հանդիսացաւ ուսա բանակը՝ նա լցուեց ուսասիրութեան բուռն զգացմունքով։ Հայ անցեալը գործաւ նրա համար խնկելի յիշողութիւն, իսկ ուսական սիրալիրութիւնը յորդորչուեց այդ անցեալի շարունակութիւն, հարատև իշխանութեան վերածնունդ։

«Հայոց արտասուալից ազօթքը՝ գրում է Խ. Արսլանը, որ միշտ ցնծալի անում էին, թէ երբ կրկի՝ մէկ Ռուսաց իրանց հասատակցի երեսը տեսնին, երբ հարց մանին, թող Աստուած և կատարից. խաչի յիսի և Ռուսաց մարդասիրութեան չնորհքը ազատաժին էլ կակղացրին, ու Հայաստանի չօլ, սակայ գաշտերը էս օր մարդաբնակ են գառել ու Ռուսաց զգի խնամքը վայելում, իրանց սուրբ աշխարքը կրկին չէնացնում»։ ... «Պարելի է՝ աշխարհը աշխարհով գիտչի, զգեր գան ու էլ նոր աշնչանան, բայց քանի որ Հայի չունչն ու յիսուն կայ, երբ նրանց մարքիցը կէրթայ էն սեռակից ոհաթը, երբ իշխանն վարշուի, գիներան Կրասովսկի մեր անմահ ներսէին հետները՝ խաչ սեռատրան ձեռին՝ մատն բերդը, որ Հայոց աշխարքի ազատութեան ծօնը կատարին։ Պէտք է աշխարքումն էլ Հայի հոգի չելի, որ իրանց փրկիչ Պատերիչի անմահ յիշատակը արտասուքով ու լացով չյիշեն, իրանց աշխարքի հօր ու պահպանողի սուրբ անունը, որ հիւսիսի բնակիցը սկսած նրանց հոգար քաշել՝ նրանց իր թևի տակն էր ուզում բերի, արդուիթիւնն էլ պաշտին»։ ... «Քանի Հայաստան իր փառքը կորցրել էր, քանի Հայք իրանց գլուխն էլին թող սեղ թշնամու ձեռք քցել, էս օրը,

*Եա ուրախութիւնը չէին տեսել, չէին վայելել» (խօսքը Երևանի պատման մասին է—Դ. Ա. *):*

Էլ ինչ էր մնում անել հայ պետացան, հայ ժողովրդին: Օգտուել առիթից կացութեան բարիքներից, կազդուրուել անարգ լծի վէրքերից և ընթանալ լուսաւոր ուղիներն շտկով: Այդպէս էր մտածում Արովեանը: Այսոքով էլ նա տեսնում էր, որ պետացին ինքնին անընդունակ է շատ բան անելու: Նա զգում էր, որ օգնութեան կարիք կայ: Ո՛վ պիտի լինէր օգնողը: Ազգի պատուն մասը, ազգի ներկայացուցչութիւնն իր վրայ առած հոգևորականութիւնը: Եւ նա այդ պահանջում էր: Պէտք էր թօթափել հնութեան փոշին, պէտք էր գրքի, դպրոցի և ժողովրդի մէջ առնել սերտ կապ, ընդհանուր լեզու և ընդգրկել կրօնական ուսումն ու դիտութիւնը: Բայց դա նշանակում էր, որ հոգևորականութիւնը պիտի հրաժարուի իր մենաշնորհից—գրաբար լեզուից և եկեղեցական հնամեաններին անհաշիւ վառնուելուց: Հարկաւ, առանց դիմադրութեան, առանց պայքարի այդ չէր կարող գլուխ գալ: Եւ Արովեանը նկատում էր, որ կռիւ կայ: Հոգևորականութիւնն չանաց և յաջողեցրեց, որ կղզիացնուի նրա ազդեցութիւնը:

Սակայն գաղափարները զարմանալի կենսունակութիւն ունեն, երբ մանուանդ բխում են պատմական անհրաժեշտութիւնից: Պատմական անհրաժեշտութիւն էր, որ հայութիւնը գրքի նոր լեզու ունենայ, այն լեզուն, որով նա յայտնում էր իր խնդին ու թախիծը, որով նա կարգաւորում էր իր փոխյարաբերութիւնները: Գիրքը, հատարտիական յառաջադիմութեան այդ անպնտասանելի գործօնը, հայութեան սերտ խաւերի ձեռքին պարձել էր արտօնութեան հիմնաքարերից մեկը: Ժողովրդական գրքը պահանջում էր, որ նա գրական մենաշնորհ լինել, որ նա մատչելի լինի բոլոր խաւերին, որ նա գրուի ու տպագրուի ժողովրդի լեզուով և ժողովրդական յատկի մասին: Այս մտահոգութիւններով տարուած՝ Արովեանը ձեռնարկեց լեզուի բարեփոխման պահանջին ու էութիւնը: «Ա՛խ՝ լեզուն, լեզուն, լեզուն որ չլլի, մարդ ընչի նման կլլի, առում է Արովեանը:

---

*) Աեղ, էջ 268, 271 և 272.

*Մէկ ապրի պահողը, իրար հետ միացնողը լեզուն ա ու հաւատը: Լեզուդ փոխիր, հաւատդ ուրացիր. էլ ընչմէ կարես ասել, թէ ուր ապրից ես» *). Եւ յետոյ. «Ձեզ եմ ասում՝ ձեզ՝ հայոց նախարահաս երիտասարդք՝ ձեր անունին մնանեմ, ձեր արեան դարձան. ասում լեզու սովորեցէք, ձեր լեզուն, ձեր հաւատը պահեմ բռնեցէք: Մէկ դարդակ լեզուն ինչ ա, որ մարդ չկարենայ սովորել» **): Արսլանեան այսպես ամաչեցնում է հայ երիտասարդներին, որ խուսափում են սովորել հայ լեզուն: Խոհինչու է տեղի ունենում այդ երեւոյթը: «Ջան անգամ, ասում է Արսլանեան, մէկ Հայ տեսնելիս, ուզում էի՝ էլած չունչս էլ հաննեմ, նրան տամ. բայց ա՛խ՝ լեզուս փոքր էր, աչքս բաց, բերան բռնած, սիրտս խոր, ձեռս պակաս, լեզուս կարճ. գոնէ չունէի, որ գոնէ ցոյց տայի ուզածս, անունս մեծ չէր՝ որ տաձս տեղ հասնի, մեր գրքերն էլ գրաբառ, մեր նոր լեզուն էլ անպատեհ... խնդրէի, աղաչէի էլ՝ լեզուս մարդ չէր իմանալ... էս միջոցումը Աստուած ինձ մէկ բանի էրեխէք էլ տայրեց, որ պէտք է կարդացնէի: Սիրտս ուզում էր, գոռամ, որ էս էրեխէքանց ձեռքն էլ՝ ինչ Հայի գիրք տալիս էի, չլին տակտանում: Ռուսի, Նէմցի, Ֆրանցուզի լեզուները ինչ բան որ կարդում էին, նրանց անուն տզուն էլ էին՝ էնպէս բանները գիր գալիս: Ուզում էի շատ անգամ մտքես պահեմ՝ որ էս օտար լեզուքը սիրլի էին սրտում, քանց մերը» (Յառաջաբան, էջ V): Սակայն Արսլանը պարզ տեսականում էր, որ սովն մի հայի, մանաւանդ հայ պետական ու քաղքենուն, միջոցներ չեն տուած յատուկ ուսուցիչների և օտար լեզուների օրնութեամբ իր զաւակին ընտելացնել ժամանակի քաղաքակրթութեանը: Այդպէս կարող էին անել տաճկահպատակ հայերը, բայց ոչ հայ ժողովուրդը: Վիճելու կետերը բերի երեւոյթների մասին որևէ տեսակցութեան կարող էր տանել միմիայն մարդիկ լեզուի: Եւ տես այդ լեզուն պետք քարոզած չլինէր հին կտակարանի մէջ, այնպես յարմարուէր նոր պայմաններին, նա պետք աշխարհակա-

---

*) Արսլանեան, էջ 100.
**) Անդ, էջ 100.

նանար Արվեանն այսպիսով իրերի արամարանութեամբ գալիս էր կանգնում լեզուի բարեկարգման պահանջի վրայ: Նա հասկացաւ և ձեռնարկեց նոր լեզուի պահանջը, անգամ իրապրծեց իր ըմբռնումն և շարադրեց «Վէրք Հայաստանին», բայց նրան չէր վիճակուած պայքարել, գտնել ու գտնուել այդ պահանջի չափը: Այդ գործը պատմութիւնը վերապահել էր Սա. Նորայեանցին: Սակայն և խնդրի առաջադրումը մի անգնահատելի ծառայութիւն է, որ մատուցել է Արվեանը հայ ժողովրդին: Միա կողմից չի մոռացել, չի անփութացել և այն, որ նա առաջինն եղաւ հայ գիտակցութեան հարազատ հովանաւորի չարչն ունեցած արհամարհրի արձանագրողն և այդ մասին գիտակական տեղեկով մատրողը:

Մեր վերածնիչներից իր գրական առնուածքով ոչ ոք այնքան հարազատ չէ Արվեանին, որքան Ռափայել Պատկանեանը: Նրա առնձագործութիւնների մէջ նոյնպէս հրապարակ է գալիս ապառամն ու կայան վիճարկ հայը, հառաչա և ապահով հայրենիքի կարօտով ապրող հայ ժողովուրդը: Արվեանը ռուսական ոլորտակառութիւնը համարում էր հայութեան տեղչանքները պահող մի հանգամանք, այն ինչ Պատկանեանը, որ իր ապրանքի բնոյթով այնքան նման է նրան, այս մի կէտում, քաղաքական այս հարցում, միանգամայն կանգնած է ուրիշ տեսակէտի վրայ: Եւ որովհետև ռուսական իշխանութեան տակ հայ քաղաքական մտքն առհասարակ իրին պահում էր դպրուած, ուստի և Պատկանեանի ապրանքը պարզապէս չէր ձեռնարկում նրա տեսակէտը, այլ գրաւած լինելով հայ-հայրենիքի գարնանման քարոզով՝ նա անուղղակի կերպով ցոյց էր տալիս, որ ռուսական ոլորտակառութեան հետ դեռ չին իրականացել հայերի ապառումները, որ հայութիւնը պիտի ձգտի իր առանձին և հարազատ անկեան ունենալու: Պատկանեանի բերանով խօսում էր նոյն ակնկալութիւններով, ապառումներով և յոյսերով ապրած հայ մասսան: Այդ մասսան էլի անգօր է ինքնագործունէութեան ուղով շահելու իր դասը: Իր ապառագրութիւնը նա ապառում է հետաքրքի չանքերից, ուրիշի աջակցութիւնից ու հովանաւորութիւնից:

Պատկանեանը Արվեանի պէս յոյս, նուագ ու արհութիւն

է նկարչում վհատուած ու լքուած հայերին: Նա ատելէր հանում հայ նախահայրերի մեծապարծանքներն և պապերի օրինակով դէպի գոյ է հրաւիրում դիմադրելի պարձած գաւակներին: Պատկանեանն այս պարագայում անգամ չի հրաժարւում ինքնագոհ հայամոլների ղէնքերից. հայ լեզուն արտակարգ է «աստուածախօս», հայ-հայրենիքը—«Դրախտ», հայերը—„Նոյայ սերունդ“ և այլ («Օրօրք Հայաստանի»): Զարմայր, Վարդան, Տիգրան և մեւս պատմական գործիչները միշտ նրա երգերի ու վէպերի առարկաներն են: Մինոյն ժամանակ իր գրական գործունէութեան առաջին շրջանում նա առում է հոգևոր կեանքի դասը և հայութեան ծանր վիճակը կապում է այդ դասի պախարակելի գործունէութեան հետ: Այն ժամանակ, երբ Արաքսը ախրագին ողբում է, թէ՝

Մինչ իմ արդիք,—ով վիշտ—
Ծարաւ, նօթի, անուրախ
Օտար աշխար յածում են
Թոյլ ոտքերով կիսաշունչ...

բանաստեղծը Հայաստանին հոգնօրէն խորհուրդ է տալիս, որ

Ջուտ շուտ գըրկէ քարոզիչներ
Սևազլուխ, մըրքատար,
Որ յորդորեն ապրիլ նոցա,
Թէև լսարուկ, բայց անդորր:
Խաղաղասէր կեանք քարոզեն,
Մեծ-մեծ յայտեր երկնային,
Ազնիւ զգացմանց ցընորք տանեն,
Անօգտաւէտ բընաւին:
Չի հասկանան վախճան կենաց,
Գոյը են եկել՝ գոյը երթան,
Գրօնն էլ ինչպէս հարք կը մեկնեն,
Նոքա այնպէս հասկանան («Օրօրք Հայաստանի»)

Հոգևորական դասի վնասակար ազդեցութիւնը ցոյց տալու համար Ռ. Պատկանեանը գրել է իր «Ի Մրուռը», որ մինչև բաւական է ապացուցանելու, թէ մեր բանաստեղծը

հայերի գլխին նիած պատուհասները մեծաւ մասամբ համարում է հայ հոգևորականութեան տղիտութեան չանքերի արդիւնք:

Հայութեան հաւաքման, «տղգ կազմելու» խնդիրը Պատկանեանի հոգու արքայն էր և այդ պատճառից նա չէր կարժանանում մինչև իր մահը: Աղգութեան պատկերը նա չէր կարդում հայ բարժուազիայի գիտիչանութեան հետ: Հայ «մեծատունը» նրա համար հակակրելի մեծութիւն էր: Եւ դա հասանիլն այն պատճառով, որ Ռուսաստանում հայ բարժուազիայի համար առիթ էր պարզանալու և բարգաւաճելու լայն ասպարէզ և որ այդ բարժուազիան՝ գոհ իր կացութիւնից՝ իրեն անջատում էր ազգային մարմնից և շատ քիչ էր մտահոգում հանրական գործերի մասին: Պատկանեանի աչքից չէին խուսափում հայ բարժուազիայի հասարակական ձգտումները, նրա ազգային—հասարակական բնազդներից զուրկ լինելը: Եւ մեր բանաստեղծը խոր ու պացմուն չէր խնայում խարազանելու ազգային պարտականութիւններից խուսափողներին: Նա անիւղ համոզուած էր, որ ազգութեան գաղափարը, ինքնահաւաքման և ինքնաճանաչման գիտակցութիւնը հայ ժողովրդական մասանների համար է նախ և առաջ: Կրկնում ենք, Պատկանեանի բերանով գործել ու գործել խօսում էր կայան ու ապառաժան, հարատև գրել և հավետաւոր վիպորդ հայութիւնը: Եւ դա մանաւանդ մեծ ուշադրութեան արժանի գաղափար էր դառնում, երբ պարզում էր, որ ազգական գիտակցութիւնն ունեցող անհատները չի արգարացնում: Ինչ վերաբերում է այն գիտին, որ կասկած է Պատկանեանը մեր նոր գրգռի նկատմամբ, պիտի ասել, որ նա հարցին մօտիկ է գործնական հարաբերութեանց վիճարան

նիշներից ամենաակնառուքը, որին ժամանակի մարդիկ իրաւամբ «զարթուցիչ մեքենայ» էին անուանել: Մեր խօսքը Ստեփանոս Նազարեանցի մասին է: Նազարեանցը առանձնայուկ տեղ է բռնում մեր մտաւոր զարգացման պատմութեան մէջ. իր ժամանակի մարդկանց հետ նա գնե և որոշ նեղլուշնակութեան մէջ էր և այն էլ գլխաւորապէս լեզուի հարցում և նկիցեակեան դասի գերիշխանութեան դէմ վարած պայքարի մէջ, բայց այնուհետև այդ նեղլուշնակութիւնը խախտում է և նրա բարոյական դէմքը մնում է կղզիացած ու առանձնացած: Նրա հասարակական տեսակէտները բղխում էին այն հայեացքից, որ կապում էր հայերի ազգային կառուցուածքի մասին, և ապա այս խնդրում խոշոր գեր էր կատարում նրա ստացած կրթութիւնը:

Նազարեանցը հայ ազգի բոլոր խաւերին չէր ճանաչում: Հայ ազգը նրա համար վաճառականների ու արհեստաւորների մի զանգուած էր, որն իր հասարակական գործերի ղեկավարութիւնը յանձնել էր հոգեւորական դասին: Ազգի հասարակական կազմի մասին նա գրում էր. «Հայոց ազգը չունի ընկերական կեանքը, քան որում անկարելի է զա առանց ընկերական կրթութեան, և ընդհանուր լուսաւորութեան: Հայոց ազգը համարեա՝ թէ բոլորովին վաճառական է, ունի միայն նիւթաւոր առևտրական կապակցութիւն օտարի կամ իւր ընկերի հետ. մի այլ հարկադրակցութիւն, իմացական առևտուրք չունին Հայք. որովհետև բոլոր խօսելիքը այդ ազգի մէջ լոկ արծաթի ու շահասացութեան վրայ է, և ամեն մարդ ունի իւր առանձին ու ջոկ օգուտը, ուրիշն և ամեն—մի Հայ առանձնացած ու օտարացած իւր մարմով ու արուով, նաւած է մի անկիւնում, անկարօտ մի այլ հարկադրակցութեան իւր ընկերի հետ, որ հնարաւոր էր միայն լուսաւորութեամբ և ընդհանուր գաղափարներով ազգի և մարդկութեան մասին: Հայ մարդը չէ զգում իւր մէջ հարկաւորութիւն մի բան մտանաւորելու, տալու ընկերին, որովհետև չունի այդ մտանաւորելի, տալի բանը: Ուրիշն և ոչինչ պատճառ չունի նա դառնալու կամ մօտենալու իւր ընկերին: Հարուստներ, հնուներ և թագուհիներ են այն միայնակ հանդէսները, ուր մի Հայ մօտենում էր միւսին և կարող էր պատահմամբ խօսք ու գործ բանալ մի

*ընկերական խնդրի վերայ, կարծիք յայտնել այս նիւթի և այն մարդու վերայ որ նեղիայ չէր, բայց խօսակցութեան նիւթ էր պատուի մի քանի ժամաչափ տեղական, ժողովի մէջ: Ազգասիրական զգացողի և ձեռնարկութիւններին խրախուսակցութիւնք և ընկերապահ մտածութիւնք անյսկի բան են հայերի մէջ: Այն արուեստակից (համքար կամ Անանիք առած) միաբանութիւնքը, որոնց շատ տիրում են մեր Թիֆլիզեցի հայերը մեծ զօրութիւն և ազդեցութիւն ընծայել, ամենևին արուարքին բան են, և ոչինչ խորհուրդ չունին, եթէ ոչ մի արուարքին կարգ ու կանոն պահելու այդ արուեստակիցներին մէջ, և հակելու նոցա նիւթական օգտի վերայ: Ասելի լաւ հասատատութիւնը մեր առածներին տալիս է այն բանը, որ ոչ մի տեղ այդ արուեստակիցների հոգատարձութեամբ չի յառաջացել մինչև այժմ ոչինչ ընկերական կարգադրութիւն, ոչ մի ուսումնարան, ոչ մի ժողովրդական գրանոց, ոչ մի ընթերցանութեան կամ մի այլ նմացական գործողութեան ժողով» *): Եւ ապա. «Հայերը, թէև շատ մօտ են լուսաւորութեան աղբիւրին (Ռուսաստանի քաղաքներում.—Դ. Ա.), բայց իրրև մի անլուսաւոր վաճառական ազգ, գոնէ ունենալով միայն Ռուսաց ազգի յատ և անկիրթ վաճառականների հետ, ի հարկէ կարող էին միայն ուսանել դրացանից մի քանի վաճառական յաջողութիւնք, արուարքին քաղաքավարութեան ձևեր և կարգեր, բայց ոչ մի տեղ մասնաւորական շարժողութիւն դէպ ի յառաջ. Հայերը այդպիսի աննախանձելի օրինակներ իրենց աչքի առաջ ունենալով, զարմացք կըլինէր, եթէ դպրոցի մէջ տեղ ունենար, ցանկութիւն յատնային իրենց մէջ ընթերցասիրութեամբ և համատարածութեամբ հոգ տանել իրենց իմացական կատարելութեանը: Վաճառականութիւնը ինքն ըստ ինքեան շատ նուազ և ձեռնտու է նիւթապաշտութեանը, ուր մնաց մի անդատախտակ և անլուսաւոր ազգի մէջ, որի հանապազօրեայ ընկերը է նոյնպիսի տգէտ և կոպիտ ժողովուրդ: ... Կարծեմ, ամենայն

*) «Հիւսիսափայլ», 1859. Յունուար. էջ 55—56. Սո. Նազարեանց՝ «Նկատողութիւնք թէ ինչ բարոյական խորհուրդ ունի մի ազգային թէատրոն»

բան հեշտ և ընդունելի է մեր Հային բացի այն բանից որ մէջ հարկաւոր էր մի փոքր խմացական գործողութիւն, պարզ ասեմ, մի փոքր մտքի աշխատութիւն, որն նպատակը արծաթ չէ, այլ խմացական և բարոյական: Ահա այս և սորա նման պատճառներով համարեա թէ ամենայն ոք քնած է հայոց ազգի հոգին. ազնիւ, ականատես մարդկութեան գազափար չկայ նորա համար, որովհետև չունի նա ոչինչ ազնիւ պատասխանութիւն, ոչինչ անձնայրպութիւն, գուցէ թէ երբէք մտածել ևս ատած չէ թէ ինչ պահպանութիւն կար մի հնչուտը և մի հոգևոր էակի մէջ, գուցէ թէ հայը չգիտէ դեռ ևս թէ նա երբեմն մարդ էր բանական հոգով պատկանում էր երկնքին և ատտուածներին, որոնց ուսմամբ և մտածութեամբ, պարտական էր կատարելագործել իւր անձը, ինչ վիճակի մէջ ևս գրած լինէր նորան նախախնամութիւնը. և այսպէս զարմանք չէ, եթէ մեր հայը կարծում է թէ նա գտանվում էր այս աշխարհումս մարմնաւոր պետութեան ճարելու և վայելելու համար և թէ բոլոր կեանքի ևջանկութիւնը, սկիզբը և վերջը բովանդակվում էր նիւթական վատակի ճոխութեան և մեծութեան մէջ» *): Դարձեալ հայերի ազգային նկարագրի մասին է խօսում Նալբանդեանցը՝ «որ գարաւոր ժամանակներ ապրած լինելով ֆիզիքական և հոգեկան ծառայութեան տակ, կորուսել է և ամենայն ազատ մտածողութիւն, առաջ հայեացք իւրև մարդկութեան վերայ, և իւր նկատմայ անկրթութեան մէջ ոչինչ ընկերական խնդրի վերայ չունի այլ տեսութիւն, քան թէ մի խառնափնդոր, վայրի և վերայ վայրենի: Յանկարծ ազատ վերայ և այն երջանկութիւնը, որ հայոց ժողովուրդը բաղկանում է մեծ վաճառական մարդկից և արուեստաւորներից, որ պարապած են իւր վաստակասիրութեամբ և նիւթական շահասացութեամբ, ամենեին հեռի և կարած մարդուս իմացական և բարոյական կեանքի խնդիրների քննողութիւնից: Հայոց մէջ չկայ ազգային ուսումնականների հա-

---

*) «Հիւսիսափայլ». 1859. Նոյեմբեր. էջ 894—896. Սա. Նազարեանց, «Նամակներ».

*սարակութիւն, և մի քանի կիսատ թերատ պրպէտ մարդիկ ասիլ վնասակար են ազգին, քան թէ օգտակար» *):*

Ահա այսպէս Նազարեանցը հայերի մասին ունէր միակողմանի կարծիք, թէ նրանք զբաղուրապէս վաճառական ու արհեստաւոր են, որ ահեղա-արդիւնաբերական այդ դասը չի օժտուած հասարակական ընդունակութեամբ և միայն մասնակի չափ մասին: Ինչ վերաբերում էր այն բանին, որ հայ ահեղա-արդիւնաբերական դասը չէր վայելում հասարակական առաքինութիւններով, Նազարեանցն ուղղ էր նկատել այդ, բայց նա աննկուն սխալմունքի մէջ էր, երբ բոլոր հայերին նոյնացնում էր վաճառականների ու արհեստաւորների հետ: Նազարեանցն իրեն նպատակ էր դրել ըստ չափու կարողութեան նպաստել հայերի հասարակութիւն դառնալու գործին. նա նաև և խօսք չէր խնայում պախարակելու հասարակական գաղափարները. նա բոլորին կոչում էր դէպի կազմակերպուած կեանք: Ի՞նչ հասարակական ազդակներ պիտի շարժադրէին կենսունակայա յատկութիւններով օժտուած հայերին: Մեր վերածնիչը պատասխանում էր՝ լեզուն և կրօնը:

*«Հայերը՝ գրում է Սա. Նազարեանցը, ինչպէ նոցա նկարագրութիւն է՝ ունեն երկու հոգիէն անօթ՝ լեզուն և կրօնը»: Ապա նա աւելացնում է. «Քաղաքական անօթը՝ արդարև մի անչափելի մեծակշիռ անօթ՝ իբր և օտարի մեղքովը աչընչացել է և շրկայ այժմուս» **) Նազարեանցը յաւ էր համարում, թէ ինչ առաւելութիւններ ունի քաղաքական ինքնուրոյն կեանքը, որի ժողովրդի աշխատասիրութեան պետական կազմակերպութեան գոյութիւնը: Նա քանի անգամ հոգոյնների բնոյթ կրող անուններ է անում այդ մասին և վերջ ի վերջոյ գալիս է այն եզրակացութեան, որ հայերի քաղաքական ձգտումները անձնատուրւում են Ռուսաստանի մէջ, որ ռուսական իշխանութեան ներքոյ հայերն անպակս կարող են հետամուտ լինել*

---

*) «Հիւսիսափայլ». 1861. Նոյեմբեր. էջ 384—385. Սա. Նազարեանց, «Ծանուցում Հիւսիսափայլի պատուելի ընթերցողներին».

**) Սուրբ Նազարեան Վարդապետարան կրօնի հասարակաց հայախօսութեամբ, Մոսկվա, 1853, էջ 7.

իրենց կուլտուրական զարգացման և պահանջ դրանով։ «Հայք քրիստոնեայք են հաւատով, ասում է նա, այդ շատ փոքր բան է, մի ազգային պատիւ ունենալու աշխարհի երեսին, ազգի մէջ. հաւատը ասանց իշխանական զաւազանի թեական, խաչը առանց սրի սակաւ է, և չէ կարող ազգաշինութեան պատճառ լինել։ Եթէ սուտ է մեր ասածը, թող ցոյց տան մեզ աշխարհի երեսին մի լուսաւորեալ, քաղաքացիաւ, հզոր և հրամայող ազգ, որ միայն կրօնի զօրութեամբ, առանց քաղաքական կեանքի և միջոցների, հասած լինէր այնքիչ ազգաշինութեան, բարեկարգութեան և ազգային պատուի մակարդակի մէջ»)։ Հայերը քաղաքական այժ չունեն։ Ի՞նչ անել։ Եւրոպականանալ, այսինքն ձեռք բերել բուրժուական Եւրոպայի քաղաքակրթութիւնը, մանաւանդ որ «Մեր բարեմիտ Ռուսաստանը և մեր բարի թագաւորը» քաջալերում են լուսաւորութիւնը։ «Ռուսաստանը, գրում է Ս. Ն., կարող է ամենևին անիրաւ լինել Հայոց ազգի դէպ ի նա անդրժելի հաւատարմութեան մասին, և զուր ազգայցքը միշտ և հանապազ անել է նա։ Տաճկինները գրէթ մահմետականք, իրենց յարարերութեան մէջ դէպ ի Ռուսաստան, թէ շատ և թէ փոքր միշտ կասկածելի են. Վրացիքը, թէպէտ և կարող չէին պահպանել իրենց ազատ գրութիւնը Պարսիկների երեսից, այնուամենայնիւ գրանջում են և անդամ են Ռուսաստանից, որ սա բաւականացել չէ մի պաշտպանողական իշխանութեամբ, այլ ստորագրել նորանց իր ստոյգ հրամանակարութեան տակ։ Բայց Հայերը ճշմարտապէս և իրաւացի չնորհակալ են Ռուսաստանին, որ ազատել է նորանց մի անասնելի, անարդական ստրկութիւնից, և բացել է նոցա ասջև մի նոր քաղաքական կեանքի ասպարէզ։ Բայց թող մեր Հայերը ճանաչեն իրենց մեծ բարերարի չնորհը և զուր դնեն նրան արժանապէս, ամենայն պատրաստութեամբ և յօժարութեամբ ընդունելով Ռուսաստանի ձեռքից Եւրոպական լուսաւորութեան ճանապարհն պարզելը և առնելով իրենից ազգին այնպիսի*

---

*) «Հիւսիսափայլ», 1859. Յունուար. էջ 5. Ստ. Նազարեանց. «Հայերի կացութիւն մարդկութեան մէջ».

*կերպով, ինչպէս կարող էր դա օրհնարեր լինել Հայերին» *): Նրանից դառնալով քաղաքական հարցին՝ Ս. Ն. գրում է. «Հայոց կեանքը չունենալով ոչինչ քաղաքական ասպարէզ, այլ լինելով մի փոքրիկ խոր մէջ փակած և ամփոփած մասնաւոր անհատութիւն, դրա մէջ ի հարկէ չէին և լինել արիւնոտ հրապարակներ և ազնիւ հանդիսաւոր դիւանագիտութիւնք պատուի ասպարէզի մէջ, այլ միայն մանր մունր ծակամուտ պարանոգրծութիւնք, բամբասանք, շարախօսութիւնք միմիանց վերայ մութ անկիւնների մէջ, փոքրոգի արեւելեան անէծք և նզովք ճշմարտասէրների վերայ, երբ որ ծածուկ բռնակալութիւնը անցաղալ էր դառնում իւր գործերի մէջ, և անհնում էր դիւանագիտած ընդդիմ իւր հասարակաց կործիքը» **): Նոյեմբերին այսպէս արտայայտւում է հոյ ճգին միջավայրի դէմ, որ մեծ գործերի փոխարէն թագաւորում են մանր առնգութիւններ: Հարկաւ, նման միջավայրը՝ զուրկ լինելով քաղաքական շահերից, գաղափարների և սկզբունքների բախումներից՝ պիտի հեղձուկ դառնար ժամանակից առաջ հրապարակ նետած մըտաւորականի համար: Իր քաղաքական հայեացքները Ս. Ն. հերքակում է հեռանալ խորհրդածութիւնով. «Հայերս քաղաքական մարմով ոտս ենք, այսինքն Ռուսաց կայսեր հպատակք և անդամք այդ սէրութենական մարմնի, և ունինք նոյն օգուտք և վնասքը, ինչ որ ունի թագաւորութիւն ներքուստ և արտաքուստ» ***):

Այսպիսի մի համոզման գալուց յետոյ, որով միանգամայն միջնում են հայկական ուրոյն քաղաքական ձգտումները, Ս. Ն. այնուամենայնիւ չի հրաժարում հայ ազգութեան ուրոյն դոյութեան գաղափարից: Նա գիտէր, որ «քաղաքական անօթը» մի չափազանց նպատակաւոր այժ է ազգի պահպանման գործում, իսկ եթէ դա չլիներ, ապա հրապարակ է գալիս «շատակիր

*) Անդ, էջ 11—12.

**) «Հիւսիսափայլ». 1859. Օգոստոս. էջ 660. Ս. Նազարեանց՝ «Վանաց ցուցիչ».

***) «Հիւսիսափայլ». 1864. Մարտ. էջ 227. Ս. Նազարեանց՝ «Ազգային մտածութիւնք».

Կռնոսը» որ կարող է ուսել և մաշել մեզ «իրրև անպիտանացած որպիք ժամանակի»: Թրուֆեան ոհարիու լինելը նախշնչում է Ս. Ն. պրել. «իմ վիրջին խօսքը ու մերայինքը, այսպէս ժամանակը պրել է Հայերի ազգն կրակ և ջուր. մահ և կեանք. որին կամին, թող մեզնի իրենց ձեռքը: Հայերի ազգն պրած է այսօր մի երկճիւղ հերակլէսեան ճանապարհ, ղէպ ի ազատութիւն և արուա, ղէպ ի վրկութիւն և կորուստ: Թող ընտրին, որը հաճոյ է նոցա: Մենք անպարտ ենք» *): Սակայն չի կարելի ասել, որ Նազարիանցը մտանանչելով երեսյթը՝ հրաժարւում է ցոյց տալ վրկութեան ուղին: Նա դեռ 1853 թ. երկու ապրանքներ էր մատնացոյց արել—լեզուն և կրօնը—և համոզուած էր, որ նրանց միջոցով միայն հայութիւնը կարող է բռնել վերածնութեան ուղին: Լեզուն Նազարիանցի ուղիղ անալիսով «մի ազգի հոգու և իմացականութեան գլխաւոր անօթն է» և հայերի համար նա սխալ դասնար «անօթի մասնութեան և գիտութեան» **): Իսկ կրօնի նկատմամբ նա ասում էր. «Անհնայն բան, որ ամենայն մարդու համար յարգ ու կշիռ ունի գիտութեան և կեանքի մէջ, յառաջանում է կրօնի ազդիւրից և ներս է թափւում այս աւրը ծովի մէջ: Ոչինչ բան ճշմարիտ, ոչինչ բան գիտելի, ոչինչ բան բարի չէ, որ չունի ծագումը կրօնից և չէ առանում իւր գօրութիւնը և արդիւնքներ նրա մէջ»***): Նազարիանցի համար կրօնն ոչ միայն ներքին համոզմունքի խնդիրը է, այլև նրա ոգով պետք դաստիարակէին մարդկանց կենցաղական յարաբերութիւնները: Կրօնը նրա համար ներքին յայտնութիւն չէր միայն, այլ և գործնական ուսմունք: Այսպէս նայելով լեզուին ու կրօնին՝ նա հարկաւ չէր կարող հաշտուել «փայտացած» հայ լեզուի և ծէս դարձած հայ կրօնի հետ: Եւ նա առաջադրեց դրանց վերանորոգման պահանջը:

---

*) Անդ, էջ 235.

**) «Հիւսիսափայլ». 1863. Դեկտեմբեր. էջ 7–8 ՈՒ. Նազարեանց՝ «Ազգային մտածութիւնք».

***) «Հիւսիսափայլ». 1864. Փետրուար. էջ 129. Ո. Ն. «Ազգային մտածութիւնք».

Լեզուի վերանորոգման պահանջը Ս. Նազարեանցը սկսում է հոգևորականության դէմ մղուած մի պայքարով: «Հայոց խղճաւի տղայ, դրում է նա, երկար ժամանակ անուսումն մընալով, շատ փոքր կամ ամենևին ոչինչ ծանօթութիւն չունենալով եւրոպական բազմօրինակ լուսաւորութեան մասին, այլ և բոլոր ուսումնականութիւնը փակած մընալով արհեստական խըղճերի մէջ և քանի մի միակողմանի գիտնականների ձեռքում, կարծիք է յառաջացրել ազգի մէջ՝ որպէս թէ քերականութիւն և ճարտասանութիւն մի այնպիսի գերագոյն ուսումն է, որով պիտոյ էր չափել ու կշռել ամենայն գիտութիւն, մինչև որ Հայոց հասարակ մարդը ևս՝ քերականութեան և ճարտասանութեան անունը տալով կամ լրսելով, մտածում է թէ՝ ինչ իմաստութիւն կայ և չկայ աշխարհս վերայ՝ նոցա մէջ է պարունակված» *): Միևժամայն արհեստական խղճերի մէջ փակուած ուսումնականութիւնը՝ Նազարեանցը շարունակում է. «Եթէ հայոց գաւակը անսանելով՝ թէ իւր մայրենի լեզուն անհիմն է, անծուծ է, բնական ուղիղ դատողութիւնով րդոց է թողնում մեռնելը և ձեռք է ձգում այն կենդանի և գօրութիւն տուող նիւթը որ պառնում է օտար լեզուի մէջ. եթէ հայազգի գաւակը չանսանելով իւր հայրենի պարզասուն ծառը, պարզում է ձեռքը դէպի օտարասունի ծառը և նորա համեղ պտուղներովը յագենում իւր սաստքը, և այդպէս օտարի կերակրովը սկսանում սուտ բակրանում է և ինքը օտարանալ և այլազգանալ. այդ չանի մէջ ոմ է մեղաւոր և դատապարտելի. հայոց մանուկը և պատանին, թէև նորա անհոգ և անփոյթ հոգեբարձուքը. ինչպէս կարելի է քաղել այնպիսի վարդ ու մանուշակ, ինչ տեղ ցանած են փուշ և տատասկ. հայոց գաւակը մեղաւոր չէ՝ եթէ չէ կարող հայ լինել հոգով և սրտով. նորա հայութիւնը չինել են իւր համար մի անպարծանք բան, փուտ փայտ, չոր ու ցամաք ծառ» **): Նազարեանցի իւր այս մտքին շատ է սիրում վերադառնալ և դա ոչ թէ հասարակ իմաստասիրական հետաքրքրու-

*) Առաքեանոյ Նազարեան Վարժապետարան կրօնի հասարակաց հայախօսութեամբ. Մոսկուա. 1853. էջ 8.

**) Անդ, էջ 9—10.

թննից պրպուած, այլ նրա համար, որ նոր լեզուի հարցը մահու և կեանքի չափ ծանրակշիռ հանգամանք ունէր ժամանակի հայութեան համար: «Հայրենական լեզուի ուսումն պիտոյ է բազկացնէ գլխաւոր հիմքը ազգային դաստիարակութեան: Ժողովուրդը պարտական է կատարելապէս ուսանիլ խօսիլ, դպրել հասկանալ և մատնել իւր մայրենի լեզուով: Ո՛չ մի ազգային ուսումնարանում հարկաւոր չէ սիրանիլ ուսուցանիլ Հայոց մանուկներին օտար լեզուք, մինչև նոքա չէին ստացել մի վորէ աջողակութիւն գրած դնելու իւրեանց հայրենականը» *): Սակայն այս պահանջը կարող էր իրագործուել միայն այն դէպքում, եթէ մայրենի լեզուն լինէր «ախորժ, ընտանի» այնքան հասկանալի բնիկ բոլոդի համար: Գրաբարը կորցրել էր իր ընտանիութիւնը: Մենք տեսանք, որ Արովեանը վկայում էր, թէ դերմաներէնն ու ֆրանսերէնը ուսի էին հասկանալի հայ մանուկներին, քան թէ գրաբարը, որը միևնոյն ժամանակ իր մէջ ամփոփում էր կրօնական բովանդակութիւն: Այդ՝ Ս. Նազարեանցը լաւ գիտէր, որ իր պահանջը կարող էր իրագործուել միայն գրաբարի գերիշխանութեան տապալումով: Եթէ ժամանակի ուրիշ հեղինակները թոյլ էին տալիս աշխարհաբար լեզուի գործածութիւնն իրրև օժանդակութիւն գրաբարը սովորելու համար, իրրև ժամանակաւոր չարիք—Ստ. Ն. այդ խնդրում միանգամայն հակառակ բնեւռի վրայ էր կանգնած և գրաբարի դարը համարում էր անդարձ անցած: Այս պարտական էր, որ թշնամիներ էր ծնեցնում նրա դէմ: Գրաբարի տապալումը նշանակում էր և «արեւելական իսկերի ուսումնականութեան» տապալում, որ հարկաւ, անհանդուրժելի էր հոգևորականութեան համար:

Մենք ասացինք, որ Ստ. Ն. համար կրօնը միայն նեղքին համոզմանքի խնդիր չէր, այլ և գործնական, մարդկանց փոխյարաբերութիւնները չափող ուժ: Կրօնի մասին նա գրում էր. «Ինքը քրիստոնէութիւնը լոյս է, ճշմարտութիւն է, ամենեին կատարեալ է. բայց՝ եթէ նորա երկնաւոր սերմերը պի-

*) «Հիւսիսափայլ». 1859. Յունուար. էջ 12. Ս. Ն. «Հայերի կրօնքը մարդկութեան մէջ».

*ույ է կնոպանային քրիստոնէի սրտի մէջ, աճէին և պըտղաբեր լինէին, ապա անպատճառ հարկաւոր էր ժողովրդին քրիստոնէական դաստիարակութիւն՝ Աւետարանի հասատքման հիման վերայ: Արդարև՝ հնչա և ամենահնչա էր քրիստոնէի անուն կըրել իբր վերայ, արտաքին արարողութիւններով ընկերանալ քրիստոսասէն հկեղեցուն, բայց այդպիսի քրիստոնէութիւնը ոչ մի այլ բան չէր, եթէ ոչ մերկնապաշտութիւն և անձնախաբէութիւն» *): Ընդունելով Աւետարանը դաստիարակութեան հիմք և կանքի ուղեցոյց՝ Ս. Ն. իր յուսաւորութեան գործին նուիրած յօդուածներում երբէք չի մոռանում կրկնել, որ նիւթական շահը չէ կազմում կրթութեան և յառաջադիմութեան խթիչը, այլ կատարելութեան ձգտումը նմանուել Արարչին: «Այն ազգը և այն մարդը, գրում է նա, որ անփոյթ է իր հոգևոր աստուածապարգև կարողութիւնքը աճեցնելու և զօրացնելու, այն ազգը և մարդը որ կամաւ և գիտութեամբ իր անձը գերի տալով մի լոկ մարմնապաշտութեան, մի լոկ նիւթական վաստակաբանութեան, թոյլ չէ տալիս իր մէջ յառաջանալու որ և իցէ ազնիւ հոգևոյն ձգտողութիւններին, այն ազգը և մարդը ամբարիշտ ձևերով ոչնչացնում է մեռանելոյն և իր աստուածնկէն արարչի խորհուրդը, այն խորհուրդը որով պարգևած են մարդուս հոգևոր շնորհներ. այսինքն, որ սոքա դաստիարակվելով ուսմամբ, պիտոյ է պայծառացնէին մարդուս մէջ Աստուծոյ նմանութեան պատկերը, որ այլապէս մնալու էր մշանջենաւոր խաւարով ծածկած»: ... «Ի՛նչ են մտածում մեր հայ եղբարքը. երեանց մարմնաւոր պիտոյքը այս և այն ճանապարհով ճարելոց և լցուցանելոց յետոյ, ուրիշ ոչինչ բան հարկաւոր չէ. այդքան հոգսաբաժանութիւն իր համար ունի և անասունը. ինչո՞ւ ապա սրանից դանազանւում է այն բանական էակը որին աստուած ինք մարդ. ուր մնաց ապա այն իմացական հոգին, որով աստուածութիւնը կամեցել է նորան դիրացնից կացուցանել անբան արարածներից. ուր մնաց ապա այն երկնաբաղաքացի

---

*) *Առաքեանոյ նազարեան Վարդապետարան Կրօնի հասարակաց հայախօսութեամբ, Մոսկվա.* 1853. էջ 7—8.

կոչումը, որ առացիլ է մարդս. եթէ նորա բոլոր Ջանքը և աշխատութիւնը պիտոյ է կապած առած մնային յոկ երկրաւորի և մարմնաւորի վերայ: Արդարև, մարդուս նիւթական վաստակութիւնը օրինաւոր ճանապարհներով, երկրաւոր բարիք ժողովելը առանց դատաճանելու և պրկելու իւր բնիկը, դատապարտելի չէ, այլ գովանի, որովհետև մարմնաւորի հոգատարութիւնը այն հիմն ու պատուանդանն է, որի վերայ պիտոյ է հաստատի հոգին և գործ կատարէ այս ժամանակաւոր կեանքիս մէջ մշտնջենաւոր կեանքի համար. բայց մարմնի հոգատարձութիւնը միջնորդական հնար է, այլ ոչ նպատակ. նպատակն է հոգու պահպանութիւնը, ճեմութիւնը, կատարելութիւնը: Մեր Հայերի մէջ այս բանը վեր և վայր է արվել. միջնորդական հնարը դարձել է բուն նպատակ, և բուն նպատակը մոռնալին կորել է աչքից: Հայը մոռանում է արժանաւոր մարդ լինել հասարակութեան մէջ, եթէ ունեւոր էր արծաթով, թէև մոռնալին չքաւոր էր խղճակատութեամբ. սիրտը կարծիք, որովհետև արծաթի շատութիւնը կարող չէ ծածկել խելքի պակասութիւնը և հոգու անկատարութիւնը» *): Այսպէս նայելով կեանքի իմաստի վրայ, այս աշխարհը նիւթով, որպէս անցաւոր մի կայան՝ Սո. Ն. չափազանց հեռատեսական է, երբ դատապարտում է շռայլութիւնն և ճոխութիւնը, չըհամարելով դրանց մարդու յարգութեան արժանները: Նրա համար մարդն արժանի է յարգանքի, երբ «ուսումնական իմաստակութեան» տէր է, երբ մի «առաքինազարդ հոգի» է կրում իր մէջ:

Քանի որ Աստուածը կազմում է քրիստոնեական կրօնի հիմքը, ապա և Սո. Նարեկացին ամենքով մի ազգութեան մէջ գանազան դասակարգութիւնների պատկանող հասուածները միևնոյն չարժուն Աստուածի ոգով, չըպիտի հալածին իրար և միևնոյն գանազանն իրարից ազգութեան և կրօնի գաղափարները: Այս առիթով նա գրում է. «Ի՞նչ իշխանութիւն ունի մի քրիստոնեայ մի քրիստոնէի խղճի ազատութեան վերայ. մարդս այն իրի քաղաքացի պարտական է հնազանդել այս և այն աշխար-

---

*) «Հիւսիսափայլ». 1859. Նոյեմբեր. էջ 899—900. Սո. Ն. «Նամակներ».

հոկան օրէնքներին այս և այն թագաւորութեան մէջ, ուր ունի նա իւր օթևանը, բայց կրօնական բաներէն մէջ նա զօրք ունի իւր խղճի և իւր Աստուծոյ հետ. նա պատասխանատու չէ ոչ ոքի իւր ընկերներից, և ոչ ոք զօրանից իշխանութիւն չունի հրամայել նորա խղճին կամ հալածել ու թշնամանել նորան, որովհետև կյօրդ չէր մեր մանուկը անհատական կարծիքներին: Գուցէ մի քանի կարճամիտ և ոչէտ մարդիկ կընդդիմադրին մեզ, թէ ազգը պահպանելու համար, պետոյ էր ամենայն խստութեամբ պահպանել և պաշտպանել Հայոց քրիստոնէութեան արատին կերպարանքը և անգործական սովորութիւնքը, որ այդպէս մեր Հայը սրտիվէր, պահպանվէր միւս ազգերից և անխառն մնար հայկական ազգութիւնը: Մենք ասացինք վերևում, թէ ազգ ու կրօնը կամ կամ խնդիրներ են. մէյ է ազգութեան հանդէսը և մէյ է կրօնի հանդէսը. մինը աշխարհական խորհուրդ ունի, բայց միւսը երկնաշխարհիկ բան, երկնի մարմին ըմբռնողութիւն, գործ ունի ուղղակի մարդուս խղճի, և Աստուծոյ հետ: Ուրիշն Հայերը թէ Լուսաւորչականք, թէ Կաթոլիկք և թէ Պրոտեստանտք, մրնում են միշտ արևնակից եղբարք, մի ազգի որդիք, մի լեզուի կցորդք, մի ազգային պատմութեան (այսինքն մինոյն նախահարց և նախամարց) ժառանգներ: Աստուած կամեցել է, որ Հայք, լինեն Հայք, այսինքն մի առանձնահատուկ ազգ. թող և այդպիսի մնան դարձ, անշարժ և անփոփոխ, թող նորա լինեն հայրենասէր, չմիաւորվին աչինչ ազգի հետ, ոչ յոյնի, ոչ գերմանացու, ոչ ֆրանսիացու, ոչ անգլիացու հետ, որ ընդդէմ է Աստուծոյ կամքին, որովհետև նա բարի է տեսել որշել Հայ ազգը միւսից, տալով նորան այլ լեզու, այլ իրաք, այլ բարքատ բնութիւն: Բայց կրօնով կարող են Հայերը լինել որշ որշ, և ոչ մինը չունի իշխանութիւն բռնադատել միւսի խիղճը, կամ թէ մտածել թէ այլազգաչա քրիստոնեայ Հայը, արդէն հոգով և պատվ բաց էր կարծ ազգից, պիղծ էր, որովհետև Կաթոլիկ էր կամ Պրոտեստանտ»*): Այսպէս նպարևանցը բացայայտ կեր-

*) «Հիւսիսափայլ». 1860. Նոյեմբեր. էջ 309—310. Սա. Նազարեանցին ներկայ առիթը գրել էր գրելու Գալատ պատահած մի ծանր դէպք.

պով կրօնը յայտարարում է խղճի գործ և ազգութեան գործերը բաժանում է նրանից:

Մի միջավայրում, ուր կրօնը համարւում էր ազգութեան խարիսխ, նման յայտարարութիւնը պիտի բուռն ցասում առաջացնէր: Եւ, վիրջապէս, ազգութեան պահպանութեան խնդրում ինքը Նազարեանցը կրօնին յատկացրել էր յետին հետ հատուած պաշտօն: Այժմ այլ ևս կրօնը զրկւում էր իր բացառիկ դիրքից: Նազարեանցի այդ հրաժարումը հին տեսակէտից իր բացատրութիւնն ունի, որին մենք կը ծանօթանանք քիչ յետոյ:

Նազարեանցի համար, ինչպէս քանի անգամ ասել ենք, կրօնը իսկ ներքին յայտնութեան աստիճան չէր: Կրօնի մէջ էր նա տեսնում կեանքի ուղեցոյցը: Իր տեսակէտները նա կապում էր կրօնի սկզբունքների հետ: Եւ այնտեղ, ուր պահանջւում էր մատնել երկնայինը, ուր անհրաժեշտ էր խորհել տեսակէտների մէջ մեր վերածնիչը դառնում էր բարոյախօս և յանուն վերացական սկզբունքների՝ խորտուբւում էր աստիճանի խորհրդածութիւնների մէջ կամ թէ տեսաբանական քարոզներ էր կարդում իր ընթերցողներին: Այսպէս մենք գործ ունենք մի երևոյթի հետ, երբ անպարզացած հասարակական կեանքի ծոցում տեսակէտները ու պայքարն ընդունում են կրօնական չափման կերպարանք, երբ կրօնական վերանորոգման պահանջը վարագուրում է որոշ խաւերի տեսակէտն և հասարակական ձգտումների դէմքը: Ս. Նազարեանցի տեսակէտները ունէր քան խաւացած և որոշ են երևան գալիս նրա «Հարստութեան արժանաւորութիւնը» յօդուածում: Այդ յօդուածում նա գրում է. «Եթէ մեր դիտենք հարստութեան յատ-

---

հատուկ նպատակ չէին ընդգրկել ազգային վերնախաւին պատկանող մի բողոքական հոգի մարմնին և այդ առիթով անկի էր ունեցել խոշոր իրարանցում: Պիտի ասել, որ նման մի պէտք 60-ական թուականներին անկի էր ունեցել նաև Եամախում, երբ հայ քահանան հրաժարուել էր հոգին լանձնելու բողոքականի մահկան պահին: Եւ Նազարեանցը իրաւունք ունէր վրդովուելու կրօնական վանաւորհատութեան դէմ:

*բերութիւնը դէպի ներսողը, ապա ինքնասաց հարսութիւնը ունի աւելի մեծ արժանաւորութիւն քան թէ ժառանգականը: Ես այս տեղ ենթադրում եմ, որ հարսութիւնը վաստակած էր արդար ճանապարհներով, առանց արատաւորելու խիղճը, առանց անվոյթ առնելու աւելի բարձր պարտականութիւնք, այլև պա վաստակած էր ոչ թէ մի առանձին կամ թէ մի քանի բաղդատ դիպուածներով, այլ մի օրինաւոր տևողական աշխատասիրութեամբ: Ով որ այսպիսի կերպով վաստակում է իր հարստութիւնքը, նա պիտոյ է անպատճառ շատ կամ փոքր չափով կայուցանէ իր ճշմարիտ ներքին հոգեկեր կատարելութիւնը. և այդպիսի մարդու մէջ, իսկ վաստակելը արդէն, առանց մեր դնելու ունևորութեանը և նորա վայելքին, ունի մի տոյժ, տևողական արժանաւորութիւն: Պատճառ, այդպիսի ստանալով իր հարստութիւնը, գործ է դնում նա իր խմացական զօրութիւնքը, աճեցնում է, վարժում է, ամրապնդում է նրանց» *): Նապաստանցը շափաւոր ունևորութեան կողմնակից է, նա մերժում է ժառանգական հարստութիւնը: Իսչոր հարստութիւնը նրա աչքում մի արգելացում միայն ունի, եթէ նա գործադրում է բարի և ազաքինի նպատակներով. ժառանգական հարստութիւնը նրա համոզմունքով տանում է դէպի անվոյթ մի կեանք, այն ինչ «ինքնասաց» ունևորութեան հասնելու համար մարդ ստիպուած է լինում յարել իր եռանդն և ունակութիւնը. նա այդպիսով բազմակողմանի զարգացման ապարէզ ունի իր առաջ:*

Այժմ մենք ծանօթ ենք Սա. Նապաստանցի աշխարհայեացքի հետ. հայ ժողովուրդը նրան պատկերանում է, որպէս վաճառականների և արհեստաւորների մի գանգուած, որ չի պատմում իրար շաղկապող հասարակական կեանքով, այլ է, յաւտմնաց և միշտ կոկորդ խրուած միջնադարեան նախապաշարմունքների մէջ. այդ ժողովուրդը չի կարող ուրոյն քաղաքական իդէալներ ունենալ և ընդդիմել է ռուսական պետականու-

---

*) «Հիւսիսափայլ». 1860. Նոյեմբեր. էջ 318. Սա. Ն. «Հարստութեան արժանաւորութիւնը»

թիան և քաղաքականութեան սկզբունքները. իր նորքին վերածնութեան համար նա ունի երկու ազգակիներ—լեզուն և կրօնը. լեզուն պիտի վերանորոգուի և աշխարհականանայ, կրօնը վերադարձին միքինապաշտութիւն և ձէս լինելու՝ պիտի պատրաստուի կենդանի գործի, համայնակցութեան բարերար ուժանակը:

Ո՛վ պէտք է լծուէր ազգի վերածնութեան գործին. չէ՞ որ պաշտօնները մասնաւորում են որոշ կազմակերպութիւններ, որոշ խաւերի ջանքերով: Նոպարեանցը դրան պատասխանում է. «Ազգի օրուրը յատուկ տանելու համար՝ ոչ ով ծառայ չէ, ոչ ով պարտն չէ. այլ ամենքիան պարտական են մշտակ լինել, արդար և չկրմնատանդ մշտակ, մեծատունը՝ իր ստուտ արծաթովը, և գիտնականը՝ իր աշխատասէր գլխովը» *): Այսպիսով պարզօրէն ազգի վերածնութեան գործը ապատում է հայ մեծատան (ունևոր պաշտօնական կամ վաճառական) և մատուռականի պաշտպանութիւնից: Եւ այս ծրագրով հոգևորական դասը դուրս է մնում է շինարար աշխատանքից: Սակայն Նոպարեանցի վերաբերմունքը փոխում է, երբ նա գործնականապէս ծանօթանում է հայ «մեծատուններին» առաքինութիւններին: Նա տեսնում է, որ այդ կարգի մարդիկ ստրուած են շահասիրութեամբ և արծաթասիրութեամբ, որ նրանք չեն մասնոգում հասարակական շահերի մասին, ուստի և չպիտի ստանան հայ «գիտնականի» ջանքերին: 1859 թուականին Նոպարեանցը փորձում է հին ուխի մէջ նոր գինի ածել, այսինքն նպատակ հայ եկեղեցական կազմակերպութիւնն օգտագործել նոր նպատակների համար: Նա գիտում էր, որ մի ժողովրդի վերածնութիւնն չէր կարող իրագործուել առանց կազմակերպուած հասարակական ջանքերի և եթէ այդ չի կարելի ակնկալել հայ մեծատուններից, ապա գոյէ հնարաւոր լինի իրագործել եկեղեցական դասի ջանքերով, մանաւանդ որ անցեալում այդ դասն է նպել հայ կրթութեան կրողը: Նոպարեանցը նորընտիր Մաքէոս կաթուղիկոսից է ապատում իր յուսացումների իրագործումը:

---

*) Նոր Նոպարեան Գարդապետարան կրօնի հասարակաց հայախօսութեամբ. Մոսկվա. 1853. էջ 10.

*Իր մի յօդուածում *) նա գրում է. «Հայոց եկեղեցին գոնեայ Առաքեալների ժէ դարում է մինչև այժմ մի արտաքին կարգի պահպանութեան կամ հոգաբարձութեան, ոչ թէ մի գլխոյ քրիստոնէական դաստիարակութեան և լուսաւորութեան տգէտ համան, այլ մի ամրոց ազգ և անուանի բարձր թագի արած պաշտօնեաներին, որ Քրիստոնէութեան արտաքինը միայն լուսցանելով, ծէս, աւանդութիւն և արարողութիւնք միայն կատարելով, պահպանել են Քրիստոնէութեան շոր ու ցամաք ոսկրները կիրպարանքը—և տգին, որ միայն կարող է կեցուցանել, վերացել է. ուստի և յառաջացել է ազգի մէջ մի համառօտ նիւթապաշտութիւն և նուազութիւն քրիստոնէական առաքինութիւններին, ամենևին պակասութիւն եղբայրասիրութեան և ազգասիրական միտքանութեան: Հոգևորական դասը, որ պետոյ է լինէր համեմիշ ազգ ժողովրդի համար, անարժան առաջնորդներին անտարբերութեամբ, անհամակել է, և այդպիսարար կորուսել է ժողովրդի աչքում այն պատիւը, որ կրում էին Առաջեայ բանի արժանաւոր սպասաւորներին: Այժմ ժողովրդի և հոգևորների մէջ օրէ օր աւելի լայնանում է բաժանող խորագը, ժողովուրդը հետևելով ժամանակի առաջադիմական ընթացքին և յառաջ գնալով, բայց հոգևորները մնալով միշտ պարապութեան և խաւարի մէջ, ուրեմն և բնական էր սեանել այսպես մի սրտալի պատերազմ լուսի և խաւարի մէջ. միայն թէ ցաւալի և խորին արտով ցաւալի է ազգին, սեանել խաւարի կողմից պատերազմողների շարքում այնպիսի անձինք, որ իրրև թէ նուիրած էին իրենց անձը Առաջեայ բանի սպասաւորութեան: Ազգասէր հակառակութիւն: Այն անձինքը, որոնց սուրբ կոչումը էր լուսաւոր ճրագ լինել ազգին, լինում են ազգի խաւարեցուցիչ, աշխարհականների համար չար ու պղծակեցուցիչ օրինակներ» Այսքան յուսի համազմանը ունենալով հայ հոգևորականութեան մասին՝ Ս. Ն. այնուամենայնիւ գիմում է նորընծաներ կամուղիկոսին և խորհուրդ տալիս, որ նա «սկսանէ իւր ազգասի-

---

*) «Հիւսիսափայլ». 1859. Յունիս. էջ 562—563. Ս. Ն. «Առաջեայ Հայկի յոյսերը և արդարացի ակնկալութիւնքը նորկայսեան».

*բական մեծ վաստակը ազգի և եկեղեցու սպասքէզի մէջ, շրջանակաս խորհրդակցութեամբ Հայոց արդարամիտ բանապէտներէն, այլ և եւրոպական դիտանաւորներէն հետս։ Նպատակացը մի անդամ չէ միայն դիմում անում հայ հոգևոր դասին և լսում։ Նա իւր միտքը կրկնում է մի քանի անգամ։ Այսպէս նա գրգռում է. «Հայոց ազգը չունի թագաւորութիւն, սրեմն և մի Պետրոս մեծ կարող չէր վեր կենալ նորա մէջ և իշխանական գաւազանը ձեռքին հրամայով յառաջ մղել ազգաշինութեան գործը. Հայոց դրութիւնը այլ է. նոցա կարող մարդիկը, մանաւանդ թէ ազգի հոգևոր գլուխը պարտական է գործ դնել մի բարոյական գաւազան, կեանք և կենդանութիւն յառաջացնելու ազգի մէջ, իմաստութեամբ հրամայելով և յառաջ տանելով ազգի դաստիարակութեան վաստակը. վերջապէս, եթէ բաւական ծանր հոգալիք ունէր մի հայկական կաթողիկոս, իւր հոգևորական դասու դաստիարակութիւնը և կրթութիւնը միայն հոգալով, ըստ որում այդպես ամենայն բան պիտոյ էր այրից ու բնից սկսանել, որովհետև բոլորը սոքից մինչև գլուխ թագված է վայրենի տգիտութեան մէջ, վերջապէս, ասում եմ, ինքը ժողովուրդը պարտական է վեր կենալ և գործ դնել իւր վերայ մի բարոյական գաւազանի օգտութիւն. ինքը պիտոյ է լինի իւր իմաստուն առաջնորդ և պատժող և խրատող դաստիարակիչը, ինքը պարտական է հոգալ իւր միջից իւր ուսուցիչք և պիտույքը» *)։ Այս հատուածի սկիզբն ու վերջը սրամտագօրէն իրար հակառակ նկարում յուսացումներ և անկնկալութիւններ հայոց կաթուղիկոսութիւնից, վերջում ինքնագործունէութեան, ինքնօգնութեան և ձեռնարկեալութեան համոզուած կոչ։ Բանը նշանաւոր է, որ Ս. Ներսէս կարծել տալ, որ նրանք ինքնայօժար չեն վերջում իրենց դիրքն ու տեղը։ Հայ եկեղեցու կազմակերպութիւնը պահ մի գրաւից նրան, որովհետև հասարակական ոյժ է գործ հնարաւոր է միայն իրագործել կազմակերպութեան միջոցով, բայց նա գիտէր և նրից համոզուեց, որ հայ եկեղեցու կազմակերպութիւնը գա-

---

*) «Հիւսիսափայլ». 1859. Նոյեմբեր. էջ 897—898 Ս. Ն. «Նամակներ»։

տում է «արեգակամիանալ» ձևքում, որ նա չըպիտի տոգորուի կենդանի գործի նամանակ: Ուրեմն այստեղ էլ, ինչպէս և մեծատուններին դէպքում, վերածնութեան գործը մնում էր առանց հատուած կրօնների և հայ «պետականը» պիտի նոր հասարակական նաւ փնտրէը իր քարտների համար: Այդպէս էլ արաւ Ս. Նազարեանցը:

*Այժմ նա գրում է. «Մի ազգի գլխաւոր ուժը և օրութիւնը հասարակի մէջ է, որովհետև հասարակի բազմութիւնը հասկնում հազարաւոր, իսկ մեծատուններին թիւը սակաւ ու քանի է. բայց դրանից, աշխարհս բոլոր ակնաւոր գործերը իմաստութեան և ճարտարութեան մէջ, յառաջացած են ժողովրդի միջակ և չքաւոր դասակարգերից. աշխարհաշէն գիւտերը և յայտնագործութիւնքը սրած են ժողովրդական կարգի մարդկի ձեռքով, որովհետև դուցա մէջ են ամփոփուած մի ազգի կենդանի քանքարքը և շնորհները: Այսքանս թող բաւական լինի, պարզ և բացայայտ հասկացնելու մեր Հայոց հասարակին իր իրաւունքը, իր կշիռը, իր խորհրդաւոր կոչումը ազգի մասսական և բարոյական վերաշինութեան համար: Կրկնենք այսանդ դարձեալ միանգամ մեր սրտի անփոխելի վկայութիւնը, որ մի այլ տեղ մերձդրուածների մէջ ասած ենք մեր ազգին թէ. «հայկական ժողովրդի յուսաւորութիւնը պիտոյ է լինի իր յաստուկ ձեռքի վաստակած վաստակը» *): Այս վերջաւորութեան յանգելով իր պրնումների մէջ՝ Ս. Նազարեանցը ճարտարախոսութիւն և զգացմունք չի խնայում համոզելու իր ընթերցողներին, որ իշխաններին, երեելիներին ու բարեգործներին գիրի գալը յանցանք է, որ այդ կարգի մարդիկ միայն մտածում են իրենց շահերի մասին և գաղտագրուելի է, անունով նրանց դէպի հասարակական գործն ունեցած անտարբերութիւնը՝ յաւտահաս նամել, ձեռքերը գոգումը դնել և բնութագրաց ապաստել պրիշի վշրանքին: «Օգոստոսները, Մեկենասները և Լուդովիկոսները շատ անգամ վնասակար են եղած մարդկութեան ա-*

*) «Հրեխտակ». 1863. Դեկտեմբեր. էջ 3. Ս. Նազարեանց, „Ազգային մտածմունք".

ւել, քան օգտակար», բացականչում է Ս. Նազարեանցը։ «Հաւատակն է» ազգի ասման և նա պիտի իր ձեռքը վերցնի վերածնութեան ամբողջ գործը։ Մի անգամ արդէն այս համոզմունքին գալով՝ նա այլևս աչք չի դարձնում «մեծատուններին» և «հոգևորներին» կողմը։ Մեծատունն և հոգևորը այժմ նրա թունաւ կշտամբանքներին են արժանանում։

«Քան մեծատունք, գրում է նա, չին պահպանում ևս իւրեանց արտով ազգին, այլ իւրեանց անձնական բարեկենդանութիւնը է նոցա համար և ազգ և ազգային օգուտ. և ինչ որ պահանջութեան թերթերի վերայ չէ խոսնկ և կնդրուկ նոցա քթին, նոցա նրբէք չարած մեծագործութիւններին համար, գուցէ թէ և արժանի գտատպարտութիւն նոցա նեխած ու վխած անձնապաշտութեանը և վնասակարութեանը ազգին, այդ բոլորը ի հարկէ ոչ թէ պարզապէս անհաճոյ է նոցա, այլև պատճառ ամենայն վատթար հնարների գործ դնելու, ամենայն համախոհներով հետ միանալու, որ վնասեն մի համարձակախոս գրուածքի գործարանի ազգի հրատարակի մէջ։ Մեծատունք հրաժարուած, ձեռները լուացած ազգից և նորա ամենագնիւ բարոյական և իմացական բարգաւորութիւնից, մնացել են միայն Հիսուսային օգնականք մի փոքրիկ բաղմութիւն ըստ մեծի մասին չքաւորների. ճշմարիտ է, 2000 տարի առաջ, երբ Քրիստոս յայտնուեցաւ հրէից խստասրտանց և քարասիրտ ազգի մէջ, նորա բարեկամքը և հետևողքը չեղան ոչ մեծատուն փարիսեցիք և ոչ մեծամիտ ախմար քահանայապետք, այլ ազգաւ ձկնորսներ և չքաւոր արուեստաւորներ. ճշմարտութիւնը անարժան էր մեծատուններին և մեծատունքը անարժան էին ճշմարտութեանը. նոյն բանը տեսանում ենք և հայերի մէջ»։ ... «Թէ յառաջ թէ յետոյ և Հայոց հարցը մեծատունքը պիտի խոնարհեցնեն իւրեանց գլուխը ճշմարտութեան առաջև և հասկանան այսօր կամ էգուց, որ մեծատունը, ճշմարիտ մեծատունը նա է, որ և մեծատուն է հոգով ու արտով, այսինքն լուսաւոր իմացականութեամբ և ազնիւ զգացողութեամբ, առաքինական վաստակներով և աշխարհաշէն բարեգործութեամբ յօգուտ մարդկութեան։ Ապա թէ ոչ, այն մեծատունքը որ միայն իւրեանց միլիոններուն զօրութեամբ իւրեանց համար փարթամ ապրում են,

*ամենայն լրութեան և առաւելութեան մէջ լոյ տալով, այլեւ մատածում են թէ ունէին իրաւունք պատիւ և մեծարանք պահանջելու իւրեանց ընկերից—այսպիսիքը մեր ժամանակներում, ուր ընդունված է միայն իմացական ու բարոյական մեծաւորութիւն, կարող են միայն, մատծող մարդկերի աչքում, պատճառ արհամարհանք և նախատինք» *): Շատ քիչ հայ հրապարակախօսներ են գործածել այս լեզուն: Առհասարակ հայ «մեծաւորներին» նախատելու, դատապարտելու և քննադատելու գործում նպատակահարմար ոչ մի դարձուածքի աւազ կանգ չի առնում: Նրա վերջին նպատակայութիւնն է, որ „մեծաւորները“ պիտի ընթանան ազգի մեծամասնութեան շահերի ուղով, իսկ եթէ նրանք այդ չեն անել, ապա պիտի անպատանալ նրանց՝ համոզուած լինելով, որ մի օր դրա համար կըկրեն արժանի պատիժ:*

Իսկ ով էր ազգի մեծամասնութիւնը, որի անունից հեղա խօսում էր Նազարեանցը: Նա այդ մեծամասնութեանը „հասարակ“ անունն էր տալիս: Մենք պիտենք, որ նա չէր ճանաչում հայ պիւրոգիններին, որ հայութեան ծոցում նրա համար կային վաճառականներ ու արհեստաւորներ: Արդ՝ „մեծաւորները“ միայն կարող էին լինել հարուստ վաճառականները, հայ արհեստաւորները և եթէ այժմ Նազարեանցն զայրում էր նրանց և նրանց դէմ էր արտայայտում, ասել է, թէ հրապարակի վրայ մնացած „հասարակը“ կազմուած էր մանր վաճառականներից և արհեստաւորներից: Այսպիսով մեր վերածնիչն իր երկար արտասանքներից յետոյ իր յուսացումների և ներշնչութեան աղբիւրը խարխում է մանր վաճառականների և արհեստաւորների վրայ, հասարակական մի խաւի, որը 60-ական թուականներին կազմակերպուած էր համքարութիւնների մէջ:

Իր տեղում մենք տեսանք, որ այդ համքարութիւնները օրհասի մէջ էին, որ առևտրական խոշոր կապիտալը նրանց ներում, հալածում և կործանում էր: Տեսանք նաև, որ համքարութիւնները այնպիսի պաշտպաններ ունէին, ինչպէս Գէորգ Ախ-

---

*) «Հիւսիսափայլ», 1862. Յունուար. էջ 5—6. Ս. Նազարեանց՝ «Յառաջարան Հիւսիսափայլի 1862 Թուականին»

վիրտան և Պետրոս Չանչեան։ Նազարեանցը ծանօթ էր հայ համքարութիւններին։ Նա անգամ ժժգոհ էր նրանց կազմակերպութիւններից ու գործառնութիւններից։ Ցիշենք, որ նա գրում էր, թէ՝ „Այն արուեստակից (համքար կամ Առնաճ առած) միաբանութիւնքը, որոնց շատ սիրում են մեր Թիֆլիզեցի հայերը մեծ զօրութիւն և ազդեցութիւն ընծայել, ամենևին արատքին բան են, և ոչինչ խորհուրդ չունին, եթէ ոչ մի արուեստակից կարգ ու կանոն պահելու այդ արուեստակիցների մէջ, և հսկելու նոցա նիւթական օգտի վերայ։ Նիւթապաշտութիւնը Նազարեանցին սաստիկ էր։ Հայ համքարութիւնների մէջ նա չէր տեսանում «ոչինչ ընկերական կարգապրութիւն, ոչ մի ուսումնարան, ոչ մի ժողովրդական դրանց, ոչ մի ընթերցանութեան կամ մի այլ իմացական գործողութեան ժողով»։ Այդ՝ երբ հին համքարութիւնների բնութիւնքով նա համքարութիւնների մէջ կազմակերպուած հայ մանր վաճառականներից և արհեստաւորներից էր սպասում հասարակական անձնուէր գործունէութիւն՝ մինչ ազգի ամենէն զօրեղ անդամները անտարբերութեամբ դառնում էին հին անկազմակերպ դառնած կազմակերպութիւնների վրայ և ոչինչ նոր բան չէին տալիս առաջարկէր նրանց բարեփոխման համար։ Նազարեանը գնաց վերջին չափով։ Նա սում էր, որ հայերը քաղաքական իշխանութիւն չունին, որ օրէնքին կանգնել ուսուցութեան գործին, ապա հայ հոգևորականութիւնն և մեծատուններն անպիտանում են ժողովրդական չահը, մնում էք դուք, „հասարակի" անդամներ, որ հարկը հաղարաւոր էք, մնում էք դուք և ձեր կարիքները. մի ննջէք ուրեմն, արթնացէք, համատարած ընկերութիւններ կազմակերպեցէք և ինքնօգնութեան մէջ վերցրեցէք ձեր փրկութիւնը, ձեր ապագան։ Ահա այսպէս՝ ազատութեան կերպով ուժեղների և սիրտների դէմ էր հայցնում յետոյ, Նազարեանցն երես է դարձնում նրանցից և հայ «հասարակի» ինքնագործունէութեան մէջ է տեսնում ժողովրդի փրկութիւնն ու վերածնութիւնը *)։

---

*) Նազարեանցի ընկերակցութիւններ կազմակերպելու պրօպագանդն ունեցաւ իր անմիջական հետևանքները 60-ական թուականներին հիմնուեցին Բագուի Հայոց Մարզասիրական Ընկերութիւնն և Նոր-Նախիջևանի բարեգործականը։

Թժբախտաբար հայ «հասարակին» այդ օրերում չհաջողման մէջ էր։ Նրա հին կազմակերպութիւնները քայքայում էին և նա՝ անպէտ ու ապէտ մի մասա՝ չկրկնէր, թէ որանից էին գալիս իր դէմն անցացող հարուածները։ Նա կամ ապարդիւն յուզմունքներ էր առաջացնում (Թիֆլիսի համքարական չարժումը) կամ թէ կրօնափոխութեան մէջ էր անհնում հին վարք ու բարքի, հին լեզուների պահպանութիւնը (Զամախի և Ալէքսանդրապոլի բողոքականութեան քարոզը)։ Նպատակը, որ կանգնել էր „հասարակի“ անհատի վրայ, ոտքերում էր այդ խառն ձգտումներով։ «Հասարակի» անհատական ձգտումները վարագուրել էին կրօնական և բարոյական չղարշով։ Նրա բողոքները, նրա կռիւը դարձել էին բարոյախօսութիւն ու կրօնական վէճ։ Այդ միևնոյնն էլ տեղի էր ունենում Նպատակացի հրատարակիչութեան մէջ *)։ Մի կողմից նա «հասարակին» հրաւիրում էր ընկերակցութիւններ կազմակերպել և իր ձեռքը վերցնել անհատի չահերի պաշտպանութիւնը, միւս կողմից նա չանէր էր արձակում „միջամտութեան, ցոփութեան և շռայլութեան դէմ։ Եւ իր այս յայտութիւնների չնորհիւ Ս. Նպատակացի ամբողջ հրատարակիչութիւնն իր վրայ կրում էր կրօնական դրոշմ։ Այնքան, որքան Սա. Նպատակացը հայ հասարակութեան մասամբ և հասարակական գերիշխանութեան դէմ էր, այնքան, որքան նա հայ կինտրոնախոյս և հասարակական բնազդներից զուրկ «միջամտողի» նախատողն և քննադատողն էր, որքան նա հայ «հասարակի» օրհասական ճիգերի թարգմանն էր, նրա ոգևորումների և յուսացումների կրողը, նրա մխիթարողն ու խրախուսողը—այդ չափով Սանփանսա Նպատակացը հայ միջավայրի հարազատ ծնունդն և զրծիչն էր։

Սակայն Ս. Նպատակացի մասամբ կարդութիւնն և հասարակական հայեացքների համապատասխանութիւնը մեծ-մեծայն հայ միջա-

---

*) Դաղտնիք չէ, որ Նպատակացը ձեռքով յուսաւորչական' խիստ պաշտպանութիւն էր ցոյց տալիս բողոքականներին։ Հէնց այդ պաշտպանութեան համար հակառակորդները նրան մեղադրում էին հաւատափոխութեան մէջ և հալածանքի էին յարուցանում։ Հիւսխապփայլ ծէմ

վայրի ապրելության համակ չէր կերպարանորեն։ Նազարեանցը, ինչպես ինքն է խոստովանում իր նամակներից մէկում, նախ պերճանացել էր, ապա հայացել։ Նրա մասին կարդալ էին նրա համակրանքներն ու հակակրանքները կարդալու պերճանական միջավայրում։ Սակ ինչ էր ներկայացնում իրենից այդ միջավայրը։ Դա մանր-բուրժուական, աստուածավախ և երկիւղած, մակերեսապրաստան և զգայունութիւնների մէջ պերճան բնութիւնների միջավայրն էր, որ նախորդ դարի 30-ական թուականներին դեռ գոյութիւն ունէր յայնածաւալ Ռուսաստանի մի ծայրում, Դորպատ քաղաքում։ Պերճանական քաղաքը, պերճանացիների կեանքն և ուսումը հարկաւ բարձր էին հայկականից, բայց այնուամենայնիւ գտնվել լճացած վիճակի մէջ էին գտնում։ Համբարական կազմակերպութիւնները և հասակրանքները այստեղ նոյնպէս սիրող երևոյթ էին։ Բարձր ուսման մէջ սիրատուում էր քրիստոնեական ոգին, որ միւսում էր գունաւորն ու համաձակը, ամեն-մի մարդի խիղճ և նրմանութիւն։ Կանոն փիլիսոփայութիւնը թև ու թիկունք էր տուել քրիստոնեական ևկեղեցուն, իսկ նրա բարոյական դատաստանը խոտոր պատշաճում էր մանր-բուրժուական վերաբերութիւններին և իրմով տոգորում էր հասարակաց գիտութիւնները։ Կանոն իր «Մաքուր բանականութեան քննադատութեան» մէջ միւսում էր այն բոլորը, ինչ չէր կարելի ճանաչել փորձի միջոցով. առարկան ինքնին («նոումէն») անճանաչելի էր, իսկ երևոյթը («ֆենոմէն») ճանաչելի։ Սակայն մի առարկայ գոյութիւն ունի, որն իր համար թէ առարկայ է ինքնին և թէ երևոյթ. դա մարդն է։ Մարդն ունի մի հոգևոր աշխարհ, որ հատատարքներով, վարմունքի դանազան կանոններով և այլն։ Ո՞րն է այդ երևոյթների դրդապատճառը, որ պետք գնահատակցական կապը։ Եթէ մարդուն ընդունենք հատարակական կենդանի, ապա յիշենք և իմանանք, որ նա իր այժմեան հոգևոր կարողութիւններին կամաց-կամաց հասել է երկար դարերի ընթացքում և հասարակութեան ու բնութեան հետ վարած իր անդադրում պայքարի մէջ, ապա և բացատրելի կլինի մարդու հոգեկան ներքին աշխարհը։ Բայց Կանտը խնդրին այդպես չէ նայել. եթէ կայ մարդու ներքին աշխարհը, եթէ գոյութիւն ունին դանա-

*դան բարոյական հասկացողութիւններ և դրանց բացատրութիւնը խուսափում է փորձից, ապա դրանք պիտի համարել գիրքնական ծագում ունեցող պարապաններ։ Եւ Կանտ իր «Գործնական բանականութեան քննադատութեան» մէջ յետին դաններով հրապարակ է հանում այն, ինչ մնջժում է նրա «Մաքուր բանականութեան քննադատութիւնը»։ Կանտի բարոյական կանոնն ասում է. «Այնպէս վարուիր, որ քո կամքի արտայայտութիւնը կարող լինի միևնոյն ժամանակ դառնալ ընդհանուր օրէնսդրութեան սկզբունք»։ Այս նշանակում է, որ մի անիր այն, ինչ չես կամենում, որ քեզ անեն։ Եւ այս սկզբունքն ատեստական է։ Կանտ ապրում էր մանր-բուրժուական Գերմանիայում, որը հնձում էր աւատականների յետ տակ։ Մանր բուրժուազիան չէր կարող տապալել աւատականների լուծը. նա հաւատար կեցուածքի ու կարողութեան սէր էր և առելութեամբ էր նայում այն խաւին, որն իշխանութեամբ և կարողութեամբ տաբերում էր նրանից։ Մանր բուրժուազիայի այդ տրամադրութիւնն իրենց արտայայտութիւնը գտան Կանտի բարոյականութեան մէջ, բայց այդ բարոյականութիւնը միևնոյն ժամանակ բրիստոնեական էր։ Քրիստոնեական ևիևիցին, որ այնքան հարուածներ էր կրել XVIII դարի լուսաւորիչներից, չատակ կառչել թէ Կանտի ճանաչողութեան տեսութեանը, թէ ընդհանուր նրա բարոյական կանոնը։ Այսպիսով աշխարհի ամենամեծ մտածողներից մէկի մօտ պրագմատիզմն ևկան թև ու թիկունք կանգնելու ևիևիցուն, կոծկելու նրա խորհուրդ փիլիսոփայական չէնքն և հաշտեցնելու կրօնը գիտութեան հետ։

Կանտի փիլիսոփայութիւնն ևիևիցու վտանգը դարձաւ։ Այդ փիլիսոփայութեան ոգին պիտի համակէր կրօնական զբաղմունքները։ Եւ մենք հէնց այդ ենք տեսնում Նապոլեոնցի կրօնական աշխատութեան նկատմամբ։ Նրա «Վարպետաստան կրօնի» գիրքը սկսում է հետևեալ հատուածով. «Առաջին մտածելի բանը. Մարդը որ կամենում է Աստուծոյ և աշխարհի վերայ մտածել, բակբառնում է այն առարկայից որ ունի մօտ է իւրեան, որ իր համար ունի ըզգալի է, այնինքն՝ իր

անձիցը» *): Նաղարևանցի այս պարբերութիւնը մատնում է նրա կանոնական լինելը. չէ որ ըստ Կանոն պարձեալ մարդն է, որ առաքեալ է ինքնին և երեցք, ուրեմն և միակ ճանաչելի բանը: Կանոն վիլխասիայութիւնն իպէալիստական է: Իդէալիստ է և Ս. Նաղարևանցը: Այդ իդէալիզմն է արտայայտում այն յօդուածի մէջ, որ 1864 թ. տպագրել է «Հիւսիսափայլը» Նա հաւր և փոթորիկ է ճայթում մատերիալիզմի դէմ: «Անգիտակից նիւթը, գրուած է այդտեղ, անգիտակից չարժողութիւնը, սրբա էին արարչական զօրութիւնքը, որ գոյացուցել էին ամենայն բան. մի կոյր խաղից, որ մի և'ս ունի կոյր դիպուած խաղում էր հիւլէների (ատոմների) հետ, երբև թէ յառաջացել էր այս փառաւոր, զարմանալի տեսարանը, որ բնութիւնը միշտ և հանապազ պատկերացնում է մեր առաջև: Մտքերի և զգայողութիւնների աշխարհը, ամենայն գեղեցիկ և մեծ բան, որ ունի իւր արմատը այդ տեսմանի մէջ, զա երբև թէ չգիտի ունել խորհուրդ ունենար բան թէ զուզադիպութիւնը երկու կոթիլ ջրի կամ թէ մի փոշեղէն ամպի վեր պտոյտները»: ... „Որչափ ևս զժուար հասկանալի էր, թէ ինչպէս կարող էր իմացականութիւնը մինչև այդ չափ կատարել, և միևնոյն այդքան սասանիլ մերժուիլ, սակայն պատմութիւնը ուսուցանում է, որ այդ ամենայն ժամանակ պատահած է. այդ չէ մնացել օտար և այն վերջին (տան և ուխերուդ) զարուն, որ, նորա զիտութեան և կրթութեան մասին, այնքան յաճախ վեր են դասում յառաջադնաց զարերից. պատճառ, որ այդ զարումը երևեցած են շատ մատենագիրներ, որ չանհատ նրան ապացուցանել թէ պիտոյ չէր աչինչ Աստուած, այն խորհրդով, որ մենք լցուցանէինք մեր հարցասիրութիւնը, վերահասու լինէինք աշխարհին և նորա մէջ ապրէինք կատարելապէս երջանիկ": ... «Ուրեմն թող գնայ կորչի այն յիմար խիղճը, գնայ կորչի այն սխամոլ զգայողութիւնը իւր պարտականութեան, թող բաց զրսի այն հին մտերական կարծիքը, թէ պիտոյ էր սիրել իւր ընկերը

---

*) Սանկտպետերբուրգի Նաղարևան վարժարանին կրօնի հատորակաց հայախօսութեամբ, Մոսկվա. 1853. էջ 11.

*պակէս իր անձն։ Այլ ինչ խորհուրդ ունի իրաւունք կամ անիրաւութիւն, առաքինութիւն և բարոյականութիւն, մարդասիրութիւն և հայրենասիրութիւն։ Դա մոլորութիւն և խաբէութիւն է. բայց ի նիւթից չկայ աչինչ բան, և սա աչինչ պահանջողութիւն յառաջ չէ բերում։ Ուտենք, խմենք, վայելենք, ինչ բանի ցանկանում էր սիրտը և ինչ որ կարող էինք ձեռք բերել. պատճառ, էգուց մեռած էինք» *)։*

Յօդուածն ուղին է պնդում, թէ մաութիւլիզմը մերժում է կերպնական էակների գոյութիւնը։ Նա նոյնպէս ուղիղ է նկատել, որ եթէ չըկայ անդրաշխարհային կեանք և գոյութիւն, ապա պիտի մարդուն արժանի գաղձնել այս երկրի կեանքը։ Ճիշտ է, որ մաութիւլիզմն և այսոհետ XVIII դարի ֆրանսիական յառաջդիմների մաութիւլիզմն երկնի գրախտն իջեցնում է երկիր։ Բայց Ջիօնբօնի „կերմանական բնազին“ գիտունն և նրա հետ մեր նեղաբանցը չափազանց սխալում են, երբ պնդում են, թէ մաութիւլիզմը նաև անբարոյականութիւն է, թէ բարոյականութիւնն երկնային ծագում ունի և ոչ մերժում է երկնային, կերպնական էակների գոյութիւնը՝ նա միևնոյն ժամանակ խաչ է դնում նաև բարոյական հասկացողութիւնների վրայ։ Հետաքրքրական նրբութիւն։ Յօդուածը մի ծանօթութիւն ունի, որի մէջ ասուած է, թէ մաութիւլիզմի նախկին ցուցիչն է Հ՛ոլբախն իր «Systéme de la Hature» գրքով և որ չնայած Հ՛ոլբախի „ասուածատուրց նիւթապաշտութեանը՝“ նա բարի և պինդ մարդ էր։ Ո՛րևէն մաութիւլիզմն այնքան

) «Հիւսիսափայլ». Յուլիս. 1864. էջ 504, 505 և 508. Ջիօնբօն, կերմանական բնազին՝ «Համեմատական նպատակը բնազննութեան և նորա նիւթապաշտական մոլորութիւնը»։ Այս յօդուածը թարգմանութիւն է, ուրևէ կարող է տարակուսութիւն լինել, թէ նա չի արտայայտում Նաղարևանցի մասնակցութիւնը։ Մի այդպիսի տարակուսութիւն չափազանց սխալ կըլինի։ 60-ական թուականներին ընթերցողը պահանջ չէր դնում պարբերականի հրատարակողին։ Հրատարակիչը տալիս էր այն, ինչ ցանկալի և նպատակայարմար էր դնում Յօդուածների ընտրութիւնը միանգամայն խմբագրից էր կախուած։ Նրա զարդացումը, իմացականութիւնն և ճաշակն էին վճռական դեր կատարում

էլ հրէշաւոր բան չէ, որ նրա ականաւոր նախկինցուցիչներից մէկը պարձակում է բարի և տոնիս: Սակայն անցնենք: Մաաներիալիզմը յետափետական ուսմունք և կուռ դէնք է և դա է որ դուր չի գալիս մերոնցին, դա է, որ նպատակայարմար միջոց չէ թուում այն բոլոր գործիչներին, որոնք մարդկային հասարակութեան վրկութիւնը, նրա կենցաղի բարեբախտութիւնը սպասում են լոկ իմաստուն խօսքի ծաւալումից ու պնդութիւնից: Մաաներիալիզմը չի չոյում մարդու անմահութիւնը. թէ նա պիտի չարունակէ իր կեանքը նաև մահից յետոյ: Եւ այդ հանգամանքն աւելի քան կատաղեցնում է նրա հակառակորդներին: «Ո՞չ ապաքէն, գրում է „Հիւսիսափայլի" յօդուածագիրը, անհամեմատ աւելի լաւ էր լինելու, եթէ մեր Քշուառ ներ երէք սասցած չլինէր գոյութիւն և կեանք այն, եթէ նա մշանջենաւոր գիշերի մէջ թաղած մնացած լինէր: Պատճառ, կարող էր մարդուս համար լինել մի աւելի անհիմար բան, քան թէ չար ու չար ցաւից ու տառապանքից յետոյ խնդասուս լինել, թէ ինքը չէր մի աւելի բան, քան թէ մի կտոր չարժուն նիւթ, ու ժամանակ մի կոյր հարկաւորութեամբ երբեմն այս կողմը, երբեմն այն կողմը քարշուած, որ իւր անհատական կեանքի շրջանաւորութիւնը ատրակուց յետոյ, դարձեալ յետ ընկղմուէր անգիտակցութեան սկզբնական խաւարի մէջ, կամ թէ նոր ի նորոյ խաղալիք դառնար կոյր բնական ոգորութիւնների և նիւթ տար այս կամ այն պատահական կազմածին» *): Հարկաւ, բնութիւնից իրեն տանձնացնող մարդը չէր կարող հաշտուել նման անվաստունակ վերջաւորութեան հետ: Եւ նորարեանցը, որ այնքան պինդ սկսում էր կրօնի և բարոյախոսութեան վերջը, որ մարդու կոչման մէջ նախանձութեան մասն էր տեսնում, այդ երկիւղած մարդը չեր կարող նիւթ ապաշաւութեան հակառակորդ չլինել: Այստեղից պարզ պիտի լինի նաև, որ Նորարեանցի ստացած գիտմանական կրթութիւնը, նրա փիլիսոփայական մտայղացողութիւնը հրահրում էին նրան համակրութիւն ունենալ դէպի մի կեանք, որը հասարա-

---

*) Անդ, էջ 507.

ասախանում էր աւետարանական ոգուն։ Այդպիսի կառարեալ կեանք նրա կարծիքով ապրում էր Գերմանիայում։ Դա վերմանական այն հասարակական կեանքն էր, որ կառարեալ էր թւում նաև Մօղէս Հեսային և Պաղլ Գրիմին։ Այդ կեանքը իր մէջ խաչող աննկուատ ջանային տարրերութիւններ չէր պարունակում։ Տնտեսական կեանքի մէջ ապրում էր մանր վաճառականութիւնն և արհեստը, որն «ռակիս» մականունն էր առացել։ Եւ թւում էր, թէ հասարակական ու անհատական կեանքը միայն այդ ներդաշնակութիւնը կարող է ունենալ, իսկ նոած բացին էլ կարելի է կարկատել համոզմունքի զօրութեամբ։ Նադարեանցն այսպիսով մանր-բուրժուական համակրութիւնների մէջ էր ամրացրել իր աշխարհայեացքը։ Հայկական միջավայրն էլ գերազանցապէս մանր-բուրժուական էր և զարմանալի չէ, որ Նադարեանցի մտայնութիւնն և գործունէութեան սֆեռները վերջ ի վերջոյ չափազանցին ներդաշնակօրէն։

Նադարեանցի գործն ու խօսքը հասկանալու համար չըմլէք է մոռանալ նրա սոցիալական դիրքը։ Նա մտաւորական էր, որ ապրում էր վաճառելով իր մտաւոր ոյժը, և այդ պարագան բնորոշ կնիք էր դնում նրա հայեացքների վրայ։ Նա անկախութեան էր ձգտում, բայց անկախ մարդ չէր։ Մի յօդուածում նա գրում է. «Այլ և գործել, իմ ազնիւ եղբայրք, հարստութիւնը ունի մի այլ կողմից մեծ արժանաւորութիւն նրա ունեցողների համար, բայց միայն նոցա մէջ եղած առաւել ընտիր և ազնիւ ունեցողների համար։ Սոցա համար է նա մի ճնար աննման մեծ անկախութեան և զօրանում մի հնար աւելի ազատօրէն դասելու ճշմարիտը և աւտը, իրաւը և անիրաւը, պատիւը և ամօթը, մի հնար այլական հաստատութեամբ վարելու բարձր և ցած մարդերի հետ, մեծաւորների և տորադրածների հետ. մի հնար աւելի պնդութեամբ պաշտպանելու եւ յառաջադէմ կացուցանելու բարոյական և մարդկային ազատութիւնը։ Ինչքան սակաւ ունէր մարդ հոգալու իր ապրուստը իր յառաջադիմութիւնը աշխարհի վերայ. ինչքան սակաւ նրա արտաքին բարեկեցութիւնը կախ էր մեանների հաւանութիւնից և ատից, ինչքան աւելի բան կարող էր նա իր բարդաւորութիւնից զոհ բերել և բաց թողուլ, առանց թշուառանալու, կամ թէ կարօտութիւն կրելու,

այնքան փոքր տիպիք կար մարդահաճութիւն գործելու, իւր անձը կարողների և մեծամեծների առաջև անարդարար խոնարհացնելու, նոցա գառամվճիռը անպայմանօրէն առարկելու, կամ թէ պրաւելու նոցա սիրտը պատժապարտ կամակատարութեամբ, ծառայական խոնարհութեամբ. այնքան ևս ազատօրէն էր ինքը մտածել, ինքը գտանել, իւր յատուկ համոզողութեանը իմացութեանը, ձգտողութեանը հետևել. այնքան ևս համարձակ կարող էր խնամք տանել տիրերին, բարեխիղճ գործին, ճնշածին. այնքան ևս ազգութեամբ պաշտպանել անմեղների իրաւունքը, այնքան ևս քաջասիրտ ընդդիմանալ իշխանութեան չարաչար գործադրութեանը, խորամանի գործոններին, ամբարիշտների խորհուրդներին և միտքանութիւններին. այնքան ևս փոքր առարկութիւ էր նա հակառակիլ թագուորիկայ մտրութիւններին, անկարգութիւններին, յիմարութիւններին, և անկոմնաւոր և ազատ կշռողութեամբ մարդկերի և իրերի, մի ճիշդ կամ, կիսկ կամինք ասել, խիստ առաքինական դնացքով, պրշիլ իւր անձը միւններից:—Բայց այս, որ մեծանամիծար մարդիկ, որ իւրեանց հարստութիւնը գործ են դնում այնպիսի խորհրդով, որից մտածողութեան և դնացքի վերայ ունի նա այնպիսի ներգործութիւն: Այդպիսիների համար հարստութիւնը է մի մեծագին պարգև նախախնամութեան, նոցա համար ունի նա անչուշտ մեծ և անգնական արժանաւորութիւն» *): Այս տողերի մէջ խօսում է մատենագրականի կաշկանդած ոգին: Իր դիտութեամբ, իր հասարակական հայեացքներով ոտ մերժում է նոյն հատարակարդը, սակայն հնարաւորութիւն չունի «այրական հաստատութեամբ» արժարծելու և իրագործելու իր հոգևոր պարտնութիւնը: Դրութիւնը զժուարանում է մանաւանդ այն ժամանակ, երբ այդ մատենագրականը մի գործադրած խաւի անդամ չէ, երբ նա հատարակութեան մէջ իւրայիններ չունի, այլ ինքն է առաջին կարապետը: Արևելեան ու նագարեանը նման կարապետներ էին, միանգամայն շղթայուած օտար և հակառակ շրջ-

---

*) «Հիւսիսափայլ». 1860. Նոյեմբեր. էջ 320—321. Սր. Նագարեանց՝ «Հարստութեան արժանաւորութիւնը».

ջապատով։ Նրանց մասին է, որ կարելի է ասել, թէ՝ յիսունին և իւրքն գնա ոչ ընկալան։ Եւ ահա մնաւոր, հաւատականի բնաղդնելով օժտուած, հաւատական գործի համար օր ու գիշեր մտորող մտաւորականը տալիս է ինքնօրինակ խոստովանելով, որ եթէ չըկայ հաւատականի ձեռնաւութիւն և աջակցութիւն, ապա որքան նպատակայարմար կըլինէր, եթէ այդ մտաւորականը, որ միևնոյն ժամանակ առաքինի մարդ է, նիւթական կարողութեան տէր լինէր։ Այն ժամանակ նա ցոյց կուտար, թէ ինչպէս պիտի հոգալ հաւատականի գործերը։ Նապարնանց-մտաւորականը տեսնում էր, որ նահապետական, կիսաւատական մթնոլորտ ունեցող հայ միջավայրը չըպիտի ճանաչէ նրա արժանիքները, չըպիտի գնահատէ նրա գիտնականութիւնը։ Նա գիտէր, որ իրեն յարգ ու պատիւ կարող էր տալ մի եւրոպական հաւատականութիւն և այստեղից էլ գոհում էր նրա չիմ փափագը եւրոպականացած տեսնել հայ միջավայրը։ Եւ այդ եւրոպականացումն տեսնելին չէր նշանակում արդի բուրժուական փոխյարաբերութիւնները, երբ հաւատականութիւնը ճեղքուած է երկու խոշոր դասակարգերի, երբ ունևորի և չունևորի հակամարտը բարձրաձայնում տեղ ամենուրեք, ոչ—այդ եւրոպականացումը չափաւոր կարողութեան, «ինքնաստոյ հարստութեան» տիրապետութիւնն էր, հարստութեան, որ «վաստակած էր արդար ճանապարհներով»։ Նապարնանցը մանր-բուրժուական կարկերի երկրպագու էր, ընկերատէր, տաքինի վարք ու բարքի կողմնակից։ Ինչպէս որ նա անկախութիւն էր ցանկանում մտաւորականի համար, նոյնպէս փափագում էր, որ իւրաքանչիւր քաղաքացի ապրէ իր ձեռքի անկախ աշխատանքով։

Այժմ մենք ճանաչում ենք Նապարնանցին։ Նրա աշխարհայեացքը կազմակերպուել էր երեք ազդակների խաչաձևումով։ Առաջին ազդակը հայ միջավայրն էր. երկրորդը՝ նրա տացած կրթութիւնը, իսկ երրորդը՝ նրա սոցիալական դիրքը։ Այս երեք ազդակները Նապարնանցից կազմակերպին մանր-բուրժուական հայեացքների տէր մի հրապարակախօս, որն առանձին մեծ նշանակութիւն էր տալիս հրապարակական խօսքի արժէքին, բարոյական սկզբունքների յաղթահարող ոյժին և կրօնի չինաբար ազդեցութեանը։ Նա ուտօպիստ էր հաւատականի առա-

քննութիւններուն ճանաչողութեան գործում և չարունակում էր հաւատալ, թէ «ապծամտութիւն» և „նիւթապաշտ" «մեծատուններուն» մի օր պիտի հրաժարուին իրենց հասարակութենից և պիտի ձեռնատու լինեն հայ «հասարակի» վերածնութեան գործին։ Նրա ուսօպիզմը հասարակական-անտեսական խնդիրներում հասնում էր այնպիսի չափերի, որ 60-ական թուականներին միևժամ էր ժառանգական անփափանութիւնը։ Իր հասարակական համակրանքների մէջ նա քայլ առ քայլ մօտեցել էր հայ «հասարակին», որ այդ ժամանակ չուարման մէջ էր առևտրական կապիտալի հասցրած հարուածների տակ։ Իր բարոյախօսական հրապարակագրութեամբ նա այդ «հասարակի» անհրի թարգմանն էր։ Արդ՝ որ հայ հասարակական խաւի գաղափարախօսն էր Ս. Նազարեանցը։ Հայ հոգևորականութեան ներսականութեան մեացորդների, հայ գիւղ բարձրացող խոշոր բուրժուազիայի, թէ հայ «հասարակին»—հայ մանր առևտրականների և արհեստաւորների։ Թուում է, թէ երկու պատասխան չի կարող լինել, թուում է, թէ ինքնին պարզ է, որ Ս. Նազարեանցը հայ «հասարակի» գաղափարախօսն էր։ Իսկ ինչո՞ւ է հայ հասարակական մարքի մէջ ընդհանրացել այն կարծիքը, թէ Ս. Նազարեանցը լիբերալ է, այնինչ բուրժուազիայի դասակարգային քաղաքականութեան, նրա գերիշխանութեան և անտեսական կարողութեան չատագով և մարտիկ։ Այդ սխալ կարծիքի բացատրութիւնը պիտի փնտրել նրանում, որ Նազարեանցի ուրոպականացման պահանջն եկաւ ոչ թէ բարօր վիճակի մէջ գտնուս հայ «հասարակին», այլ չուր ապրացնելու հայ բուրժուազիայի չրատացին։ Մեր հասարակական մարքի զարգացման պատմիչները և քննադատները չեն կամենում դառել Նազարեանցի ուսուցիչներից. պատմութիւնը չի ընթացել Նազարեանցի կամեցածի պէս և դրա մէջ միտուրը նա չէ մեղավին։ Նազարեանցը լիբերալ չէ։ Նա քաղքենի դեմոկրատիայի ուսօպիստ առաջնորդն է։ Ինքը հասնօրէն այդպէս չէր նայում իր վրայ, քանի որ անկեղծօրէն և համոզուած ձգտում էր հաչտեցնել ներհակ հասարակական խաւերն և ամբողջ հասարակութիւնը առաջադասել իվերուստ բղխած բարոյական սկզբունք-

*ներին, սակայն նրա գործն ու խօսքն առաքելական տարբա-
ւուծումն ուրիշ պատասխան չեն տալիս:*

*«Հիւսնապետ»-ի մէջ Նալբանդեանցը մի ուժեղ գինակից
ունէր. դա Միքայէլ Նալբանդեան էր: 50-ական և 60-ական
թուականների մեր գործիչների և գրողների մէջ Մ. Նալբան-
դեանի նման յստակ տեսակէտ էր վայելում, սակայն
նրա արմատականութիւնը ծայր է առնում և բորբոքում այն ժա-
մանակ, երբ նա հեռացել էր «Հիւսնապետից»: Այդ պարբերա-
կանի մէջ նա համերաշխ էր Նալբանդեանի հետ, պաշտպանում և
արծարծում էր նրա հայեացքները, միայն արտաքին ձևակեր-
պումների մէջ աւելի սուր էր, ջրոտ և կծու: «Հիւսնապետից»
դուրս նա գնում է ինքն իրեն, գառնում է ինքնուրոյն և նոր
խօսքի գուշակ: Այստեղ նրա հայեացքները բնորոշ արտայայ-
տութեան են գտնում գլխաւորապէս «Երկու Տող» և «Երկրագոր-
ծութիւնը սրպէս ուղիղ ճանապարհ» գրուածքներում: Դրանց
մէջ էլ մենք պիտի փնտրենք այն ինքնուրոյնը, որ հրապարակ
էր բերում Միքայել Նալբանդեանը:*

*Ինչպէս էր նայում Նալբանդեանը հայութեան հաւաքման
գործին: Նա գրում էր. «Եթէ հաւասար իրաւունքը խոստովանվի
բոլոր երկրագունդի վերայ, եթէ ներկայ նոած պետական համակար-
գութիւնքը, այսօր ոչնչանան, վաղը, ոչ միայն չէ մնում ազ-
գութեան խնդիրը, այլ հարկաւոր ևս չէ: Բայց այս է բանը,
որ դրան հասնելը, ժամանակի է կարօտ. և մինչև այն ժամա-
նակ, «Արքայութիւն Աստուծոյ բռնաբարի, և բռնք յափշտա-
կեն զնա». մինչև այն ժամանակ, «սահմանք քոջոց, զէնք իւր-
եանց»—ասում է մեր իմաստուն ծերունին» (այսինքն՝ Մովսէս
Խորենացին—Դ. Ա.): Մենք ուրախ չենք, որ այդպէս է լինում,
մենք ուրախ չենք, որ մի ազգ ճնշում է, հարստահարում է
մեա ազգը, և իւր զէնքով սահման է դնում նորա հողի վերայ,
բայց ասիկեան մեր արտաքինը ոչինչ է, համեմատելով այն
մինչև այժմ եղած կարգի հետ, ուստի մեր կարծութիւնքը
ուղղում ենք մեր ազգութիւնը պաշտպանելու համար: Եւ մեր
ամենից պարտքն է մինչև այն ժամանակ մնալ ազգութեան
դրօշի տակ, որքան ուրիշը կրում է, իւր անտեսական ազգու-
թեան դրօշը: Բայց, այս առնով, կամք չունինք ազգութիւնը

կայր փոխադիկասութիւն դարձնել։ Հերիք է, որչափ, կայր և փոխադիկական ազգութիւնը ունի իր եսական կողմերը. հերիք է ասում ենք, որ մի ազգութիւն, իր մի չամփուռ խորհածի համար, մարթում է մեռա ազգութեան նղը» ... «Ազգութիւնը, իբրև պատմական երեւոյթ, իբրև հաւասար երեւոյթ, ընդհանուր մարդկութեան կեանքի մէջ, չի կարելի մերժել, թէ և բանականութիւնը երբէք չէ կարող արդարացնել նորան։ Մարդը, մինչև այժմ չէ հասել այն տեղ, որ առանց երկրորդական և պաշտօնական անունի հանդէս գայ, միայն մարդու բնական անունով. մինչև այժմ մարդը չը կայ աշխարհի երեսին, մինչև այժմ ազգեր կան» *)։ Այսպէս Նալբանդեանը զարմանալի կերպով իրար հետ հաշտեցնում է ըրականն ու իդէալականը։ Ազգութիւնը նրա համար պատմական երեւոյթ է։ Ինչ որ պատմական է, նա էլ իր վախճանը պիտի ունենայ պատմութեան յառաջդիմութիւնից, բայց Նալբանդեանի համար ուրիշ պատճառներ կան, որ կարող են անօգուտ դարձնել ազգութեան պահանջները։ Այդպէս կարող է լինել, եթէ ոչնչանան նրա պետական համակարգութիւնները և եթէ հաւասար իրաւունք երաշխաւորի երկրագունդի վրայ։ Իսկ ինչպէս ոչնչացնել այդ արգելքները, որ «բանականութիւնն» այլևս նպատակութեան մէջ չդնի նորա հետ։ Դրա համար Նալբանդեանը խորհուրդ է տալիս ձգտել հիմնաւոր անհատական անկախութեան—«մի կտոր հող ձեռք բերել»։ Այդպիսով մի ազգ միւս ազգի հետ չի մրցում խորհածի համար։ Տնտեսապէս անկախ ազգային միաւորները իրաւ չեն խանգարում հանգիստ և ազատ ապրել, ուրեմն և հնարաւոր է դառնում մոտանալ ազգայնականն և ընդգրկել մարդկայինը։ Հաւասար կացութեան մի պահեր է այ, որ պնդում է, թէ՝ ապրիր և ապրելու հնարաւորութիւն տուր ուրիշին։ «Ազգութիւնը հարկաւոր է և օգտակար, չարունակում է Նալբանդեանը, երբ հանդէս է գալիս այլական հաստատամասութեամբ, պահանջում է ուրիշների հաւասար իրաւունք և ոչինչ չէ խնդրում աւելի։ Ազգութիւնը օգտակար է և հարկաւոր, այն

*) Միքայէլ Նալբանդեանցի երկերը. հ. II. 1906. էջ 360—361. «Երկրագործութիւնը արդէս ուղիղ ճանապարհ».

ժամանակ, երբ զգալի է, ոչ սրպէս մի բարոյական շռայլութիւն, այլ սրպէս կարիք, սրպէս իրաւունք, երկրագունդի վերայ մի կատր հող ձեռք բերելու համար, սրպէսզի այդ ազգութեան անդամքը ապահովեն իւրեանց ապրուստը, սրպէսզի զերի և սրտուկ չըլինեն սրեչին: Ազգութիւնը անմեղադրելի է և ամենայն ընդունելութեան արժանի, եթէ նա, խոտովանի միւս սրրչ ազգութիւնքը անխտիր, նոյնպիսի իրաւանց ժառանգ, սրպիսի սահցել է ինքը: Ազգութիւնը անմեղադրելի է և ոչնչի խակ, եթէ նա ընդհանուր մարդկութեան գործը թեթևացնել աշխատի, իւր հատրկական անձնաւորութեան անունով իրաւունք ձեռք բերելով, և նոյն իրաւունքը և սրտօնութիւնքը, հաւասարապէս, իւր անդամներին բաշխելով: Եթէ ազգութեան նպրքին և էական խորհուրդը չէ անհատական խնդիրը, անհմն է այդ ազգութիւնը, սակս է այդ ազգութիւնը, և նա կը կործանվի» *): Սրդ՝ եթէ անհատական խնդիրն է ազգութեան նպրքին և էական խորհուրդը, ապա պիտի այնպէս գաստրել հասարակական յարաբերութիւնները, սր թէ սրտաքուստ՝ սրրչ ազգերի նկատմամբ՝ և թէ նրքուստ՝ ազգայինների վերաբերմամբ՝ նա չանդրադառնայ սրևէ զրկանքով և անիրաւութեամբ: Դրա համար պիտի մերժել ժամանակի անհատակարգը, պիտի հիմնել նոր հասարակական անհատութիւն: Ո՛րն է մերժելին և որն ընդունելին:

Մինք. Նաբանդևանի համար մերժելին այն անհատակարգն է, որ սիրում է Արևմտեան Եւրոպայում: Նա ասում է. «Անգլիան հարուստ է, սրչինչ սէրութիւն այնքան արծաթ և ոսկի չունի, ամենին փոխ է տալիս, ինքը բնաւ նեղութիւն չունի, և և այլն, և այլն: Հազարաւոր գովեստներ, բերաւոր երանիներ լսած ենք հարիւրաւոր անգամ. նոյնը գրեթէ և Ֆրանսիոյ վերաբերութեամբ: Բայց հարկաւոր է իմանալ, սր սէրութիւնքը ազգ չին, և սէրութեանց շահը, ազգի շահի հետ բնաւ վերաբերութիւն չունի, քանի սր սէրութեանց կազմութիւնը այնպէս է,

*) Անդ. էջ 372—373.

*ինչպէս որ կան այսօր» *): ... «եթէ ասենք, թէ Անգլիան հարուստ է, և Անգլիա ասելով հասկընանք կառավարութիւնը և պետականութիւնը, այդ մի այլ խնդիր է և այն ժամանակ վերագրեալ հարստութիւնը չէ վերաբերվում անգլիական ազգին, այլ կառավարութեան և պետականութեան, որ Անգլիա չինի, որովհետև մինը անգլիական կառավարութիւն է, իսկ միւսը անգլիական պետականութիւն» **): Այսպիսով պետականութիւնը դեռ ևս ազգը չի ներկայացնում: Ազգը վաթսուն միլիոն են—գիւղացիները, քաղքենիները, բանուորները, այն «միլիոններ բազկացնող անհատները», որոնց մասն բացակայում է «նիւթական կարողութեան նըշմարանքը»: Իսկ ինչո՞ւ է այդպէս: Նալբանդեանը դրան պատասխանում է. «Անգլիական հրկիզները պետականների մասնաւոր անձնականութիւնք են. հասարակ ժողովուրդը մի հատ ցից գարկելու հող չունի» ***): Միւս կողմից Անգլիան արդիւնաբերական երկիր է. նա է, որ իր ապրանքներով ողողում է աշխարհի ծայրերը: Բայց «հարուստ է անգլիական ազգը, եթէ մի քանի գործարան փակվելով, կամ մի ժապաւէն գործածութիւնից դուրս ընկնելով բնաւոր մարդիկ և բնաւոր դերդաստանք, դառն աղքատութեան հետ պատերազմելով, կարող են ամեամեն կտրվիլ: Հարուստ է ֆրանսիական ժողովուրդը, եթէ մի քաղաքում մի քանի գործարանք փակվիլով, մի անապին բազմութիւն գործաւորներք կըզրաստապարտվի դէպի մուրացկանութիւն... Չէ, հարուստ չէ, ասում ենք, և այն պատճառով: ... Անգլիական գործաւորը, որ ապրում է այսօր, չգիտէ թէ վաղը պիտի հնար ունենայ ապրելու թէ ոչ. քանզի չգիտէ, թէ պիտի շարունակէ գործարանը իր գործը, որ և նա աշխատելով առանց մի քանի շրջիկ և հազար իւր ընտանիքը» ****): Այս խորհրդածութիւններից բխում է այն, որ*

---

*) Միքայէլ Նալբանդեանցի երկերը. հ. II. 1906. էջ 312. «Երկրագործութիւնը որպէս ուղիղ ճանապարհ».

**) Անդ, էջ 313.

***) Անդ, էջ 314.

****) Անդ, էջ 319—320.

*հարուստ չէ մի ազգ, եթէ հոգը մի դասակարգի մանուկը սեփականութիւնն է, իսկ արդիւնաբերութիւնը կենտրոնացած մի այլ դասակարգի ձեռքում: Բայց սրն է իսկական հարստութեան և բարեկեցութեան հիմքը: «Այն ազգը, գրում է Նալբանդեան, որ չունի հոգ և երկիւղ, երբէք չյաւաշ, որ պիտի հարստանայ. այդ անբնական մի բան է և դրան յաւաշը խելագարութիւն: Թող բնաւ չյաւաշ, որ առաջ հարստանայ և յետոյ երկիւղ ձեռք բերէ. այդ լինելու չէ: Նախ որ հարստութիւնը, որ եթէ կայ այդ ազգի մանուկների ձեռքում, կամ վաճառականութիւնը, որ եթէ վաճառականութիւն է... հիմք չունի, այլ, իբրև պատահական մի բան, ենթակայ է պատահարների ազդեցութեան: Երկրորդ, որ հոգ և երկիւղ միւրաթաբ ձեռք բերելու նպատակը և խորհուրդը փառք չէ, պատիւ չէ, դրա նրնխայական գաղափարներ են, այլ հնար գտնել իւր կեանքը և գոյութիւնը ապահովելու համար: Եւ հաւատացէք, որ վաճառականութիւնը և արուեստը որչափ որ ծաղկին, եթէ առանց երկրագործութեան չկայ և վաճառականութիւն («Եւ առանց ազատ հոգի, չկայ երկրագործութիւն»:—Հեղինակին ականջն է վայր, աննրեղութեան), որ չափ որ մանուր մարդիկ միլիոններ դիզեն, այսուամենայնիւ ենթակայ են բամբակի և ժապաւէնի ազդեցութեան (այսինքն՝ պարբերաբար կրկնուղ ճգնաժամերի—Դ. Ա.): Մի մըրիկ, մի վոթորիկ, և... գնա ախտադէմ ցնցել գաղափարկ քաղաքները, որոնց մէջ լցուած էին երեսմն ոսկին և արծաթը» *): Ուրեմն պէտք է հոգ և երկիւղ ունենալ, մնացածը խախուտ է և երեսուն: Նալբանդեան հարցնում է. «Ի՞նչ արիւններից կարող է հանել հասարակ ժողովուրդը իւր, չասենք հարստութիւնը, այլ, ապրուստը. և ապրուստ հազիւ, մշանջենական և ոչ առօրեայ: Հասարակ ժողովրդի համար, ուղղակի, և մնացած մասին համար անուղղակի, բայց և այնպէս անհրաժեշտ, ինչպէս ջուրը ձուկի համար, միակ աղբիւր ապրուստի և հարստութեան է երկրագործութիւնը: Երբ որ մի ազգ կազմող անհատների մեծագոյն մասը պարապի երկրագործութեամբ և*

---

*) Անդ, էջ 320—321.

*առհասարակ քրիստոնեական անհատութեամբ, այն ժամանակ, այդ ազգի ընդհանրութիւնը հարուստ և ապահովեալ. որովհետև նորա հիմքը դրված է բնականապէս և բնութեան վերայ։ Եւ այս պատճառով, փոքրագոյն մասը, որ չէ պարտաւոր երկրագործութեամբ, կարող է հարստանալ լինել, որ հազիւ կարող կարողանայ մշակել, շինել, գործել և վաճառել այն, ինչ որ դուրս է բերում գետնից նորա մեծագոյն մասը։ Ազգի մեծագոյն մասը, երկրագործութեամբ ապահովեալ է. և անհնար է թէ նեղութեան պատահի, ապրուստի կողմից։ Փոքրագոյն մասը, որ բաղկանում է վաճառականներից, չէ կարող անգործ մնալ, քանի որ մեծագոյն մասի արդիւնքը ապաւում է նորա, կամ, մշակութեան, կամ, վաճառականութեան. և որև էցէ մի դժբախտ դիպուածում, այդ փոքրագոյն մասից ամենափոքրագոյն մի մասը միայն, կարող է նեղութիւն տեսնել առօրեայ և անցողական նեղութեան, քանզի, ազգի հիմքը դրված է երկրի մասնաւորութեան վերայ և կախված չէ օդի մէջ» *)։ Այսպիսով հողը բարեկեցութեան հիմք է ընդունում, հողն այն համապարման է համարում, որ կարող է բոլորին ընձեռել ապահով ապրուստ։ Եւ քանի որ հողն այդքան կարևոր առարկայ է, ապա անհրաժեշտ է կանոնաւորել նրան սեփականացնելու եղանակը։ Այդ մասին Մ. Նալբանդեանը գրում է. «Եթէ կամենում ես գիւղի մէջ բնակվել, ապա ուրեմն մես գեղացիների չափով կառաս քո բնակութեան, առանձին պարտիզի, անասնոց գոմի և այլ կարևոր բաների հարկաւոր եղածի չափ հողի քանակութիւն, որի վերայ կըշինես քո բնակութիւնը, վերառաց պարապանելով։ Իսկ եթէ քաղաքում կամենում ես բնակվել, նոյնպէս, մես բոլոր քաղաքացիների չափով հող կառանաս տուն և բնակութիւն հաստատելու համար։ Եւ այս երկու դիպուածում, այսինքն, թէ գեղում և թէ քաղաքում, ինչ որված հողը, որի վերայ չինութիւն թէ արել ես և թէ ոչ, ապառիս, կամեցածիդ պէս, գրաւ դնել, վաճառել, ընծայել, ի վերջոյ, դու նորա ան-

---

*) Անդ, էջ 313.

պայման տէրն ես և դրա վերայ խօսելիք չկայ։ Իսկ խօսելիքը վերաբերում է դաշտային հողին, ուր պիտի ընթանայ երկրագործութիւնը։ Պիտի իմանաս, որ գեղի և քաղաքի իւրաքանչիւր անդամը, հատասար չափով, իրաւունք պիտի ունենայ մի որոշեալ քանակութիւն հող մշակելու և գործելու։ Եւ այս իրաւունքը պիտի տէ այնքան, որքան նա, կամ, նրա ներկայացուցիչը պիտի բնակվի այն հողի վերայ։ Իւրաքանչիւր քաղաք, իւրաքանչիւր գիւղ, պիտի ունենայ իր յատուկ հողը, որ պիտի սեպհական մնայ քաղաքի կամ գեղի հասարակութեան։ Քաղաքի, կամ գեղի բնակիչքը հատասար իրաւունքով ազատ են իւրեանց բաժինը գործել և մշակել, բանի որ պահում են այն գեղում կամ այն քաղաքում։ Եւ եթէ դու, լինելով քաղաքացի, զրաղված լինելով վաճառականութեամբ, կամ այլ գործերով, չկամիս, կամ, ձեռնտու չես քո բաժին ընկած հողը մշակելու, կամ մարդիկ վարձելով մշակել տալու, այդպիսի դէպքումդ կարող ես վարձու տալ և այդ կերպով օգուտ քաղել քո հողից։ Եթէ հող վաճառելու սկզբունքը թոյլ տրվի, այն ժամանակ ազգաւորութեան և շուառութեան սկզբունքը կընդունվի" *)։ Մ. Նալբանդեանն իր այս ծրագրով առաջարկում է հողի իրաւունքի խնդիր։ Նրա համար իր ծրագիրը սուրբ է, մարդկային և արդար։ Նա համոզուած է, որ հողային սեփականութեան նման դասաւորութիւնը վերջ կդնայ չքաւորութեան և չի նկատում, որ այդ ծրագրի մէջ բացեր կան, որոնք անօգուտ են գարձնում այն։ Մթթէ հնարաւոր բան է բնակաւորիններն առաձախի մէջ դնել կամ թէ թոյլատրել հողերի վարձով տալը, ապա պնդել, որ հողի իրաւունքը կարող է չքաւորութեան առաջն առնել։ Դա անիրական միջոց է։ Եւ, վերջապէս, հող ունենալը դեռ չի նշանակում, թէ ունեցողը նաև մշակելու միջոցներ ունի, ինչպէս, օրինակ, ցեղան անասուններ, գիւղատնտեսական գործիքներ և այլն։ Իսկ առանց այդ պարագաների ոչ մի հողի իրաւունք չի կարող համապարման համարուել։

Ի՞նչ է ուրեմն միջոց Նալբանդեանը։ Նա միջոց է

---

*) Անդ, էջ 317—318.

Արևմտեան Եւրոպայում սիրող հոգի մանուկը անփափկանութեան հասաւոութիւնը, մնջում է գործարանային արդիւնաբերութիւնը, որը միշտ չի կարողանում հայց մատակարարել իր պահանջած բանուորութեան։ Դրա փոխարէն նա հրաւիրում է փոխել երկրագործութեան և հոգը հռչակել համազգային սիականութիւն։

Դառնալով հայ իրականութեան՝ Միք. Նալբանդեանը լռութեան է մատնում ռուսահայերի վիճակը և իր ուշքը կենտրոնացնում թիւրքահայերի վրայ։ Նա տեսնում է, որ Թիւրքիան իր ձախորդ ֆինանսական քաղաքականութեան շնորհիւ քայքայում է, որ դրամի գերիշխանութիւնը փլում է նրա բնակիչների անասնութիւնն և որ հայերը մի առանձին ձգտում ունին դէպի վաճառականութիւնը և կենտրոնանում են երկրի ծովեզրեայ քաղաքներում։ Այդ հանգամանքը վշտացնում է մեր հրապարակախօսին։ Նա առաջուց երկրների օրինակով կամենում է համոզել, որ մի ժողովրդի ոյժը հոգի մէջ է։ Ապա մատյի էջեր է նուիրում հայերի մէջ ծայր առած պանդխտութեանը, հրաւիրելով հայերին չքաւորել քաղաքների կեանքով և հրապուրանքով։ Ահա ինչ էջեր է նուիրում նա պանդուխտներին. «Բացի սրանից (այսինքն, որ քաղաքի աշխատավարձը չի բաւականանում գիւղականին—Դ. Ա.), ընտանեկան կեանքից զրկվելը, ժոխային աշխատութիւնը որով պիտի չահի նա այն մի քանի յաւելեալ դուրուշները, վարատական և անմաքուր կեանքը որ պիտի անցուցանէ նա պանդոխտ իջևաններում։ Երեկոյեան պիտի գայ վատառկեալ, ուժաթափ, չար անգամ և վնասած անդամներով, իսկ լուսադեմին, նոյն եղելատական ծառայութիւնը որ սպասում է նորան։ Հայ այն ընտանեկան մթնոլորտութիւնը, ամուսնու և զաւակների մտերմական, զուարթկ և անմեղ հայեացքները, որ առանց ձայնի, առանց խօսելու, կարող են ամոքել ճակատագրի դառնութիւնը, և այս բոլորը անխորհուրդ, առանց հիմնական հաշուի և չկամելուց, արմատական կերպով զարման առնել իր աղքատութեան։ Եւ այսպէս, իրրև զրաստ, իրրև մեքենայ ծառայելով արտաստնի օտարութեան մէջ, տան-քրան տալի, կամ, մնում է այնտեղ, թողնելով իր ընտանիքը ծայրացեալ թշուառութեան մէջ կամ վերադառ-

նում է դէպի իր երկիրը։ Վերադառնում է... Բայց ոչ այնպէս աւոյդ և զուարթ ինչպէս գուրս էր եկել այնտեղից, այլ, հասակն առած, ուժաթափ և թօշնած։ Վերադառնում է իր տունը... Բայց ինչ եղաւ արդեօք այն լքիալ տունն և ընտանիքի վիճակը նորա բացակայութեան ժամանակ։ Վերադառնում է իր տունը, երբ կորուսել էր աշխատելու ընդունակութիւնը։ Յարմարութիւնը Ուրեմն, վերադառնում է նա միմիայն իր նիւթական թեամբ, իր աղքատ և կարօտ ընտանեաց Թիւը յաւելցնելու համար» *)։ Այս մասյլ պատկերը նկարելուց յետոյ՝ Մ.Ք. Նալբանդեանը տարիմնորից տրտմարար է հանում երկրագործութեան համադարմանը։ «Այն ժողովուրդը, որ գուրս չէ եկել իր պատմական աշխարհից, թող և չշարժի, մնք ընդդէմ ենք գաղթականութեան և գաղթականութիւնը չէ մեր քարոզածը. իսկ այն մասը, որ գուրս է իր աշխարհից, ասել է թէ գանվում է գաղթականութեան և պանդխտութեան մէջ, նորան տրտնջում ենք վերադառնալ, մանաւանդ Փոքր Ասիա, որ աւելի տրտմելի է իր ծանրութեամբ» **)։ Այսպէս տրտնջը վերաբերում է ոչ միայն նախկին երկրագործներին, այլ և հայ վաճառականներին։ «Եւ մեծ է կարծում են մեր պատմելի վաճառականք, գրում է Մ. Նալբանդեան, թէ Մէնչեսթրի, Մանչէլի կամ այլ եւրոպական քաղաքների հետ առևտուր ունենալը, կարելի է անուանել ազգային վաճառականութիւն, միմիայն պատճառով որ ինքեանք հայ էին։ Նոցա վաճառականութիւնը ազգային չէ, և ազգի ընդհանուրի չահի հետ չունի որևիցէ վերաբերութիւն։ Այն ժամանակ միայն կարող է երևել ազգային վաճառականութիւնը, երբ նա, գլխաւորապէս, հայի առաջ բերած նիւթը և արդիւնքը վաճառէ, այն ժամանակ միայն, ազգը օգուտ կըքաղէ մեր վաճառականների գործառնութիւնից, երբ, որբա միջնորդ լինեն հայոց ընդհանրութեան և Եւրոպիոյ մէջ, այն ժամանակ ազգային է վաճառականութիւնը, երբ նորա խարխափը դրված է ազգի հիմքի վերայ» ***)։

---

*) Անդ, էջ 340—341.

**) Անդ, էջ 344.

***) Անդ, էջ 345—346.

*Ցաւակցելով վաճառականներին վերադրեալ գործառնութիւնը, այսինքն հայ երկրագործի համար ապրանքների արտահանութեան հոգսը՝ Մ. Նալբանդեանը միևնոյն ժամանակ նրանց հետ կապում է և մի այլ ակնկալութիւն: Նա պիտէ, որ հայ երկրագործն առանց դրամի օգնութեան չի կարող շատ գործեր կատարել, որ նա վարկի կարիք պիտի ունենայ: Եւ ահա այստեղ վաճառականների վրայ է բարձում վարկի հոգատարութիւնը: «Վաճառականը, դրամ է նա, ոչ ապաքէն դրամ է տալիս իւր վաճառելի ապրանքը ձեռք բերելու համար: Ո՞չ ապաքէն ունի մի քանի փարայ, որի շրջանառութեամբ ապրում է նա և նորա ընտանիքը: Կարողութեան աչք մարդը, ոչ ապաքէն իւր արծաթը դնում է ակռանութի մօտ, կամ տալիս է մեռնուար մարդերի տակոս առանալու ակնկալութեամբ: Վաճառականը, փոխանակ Եւրոպայի ձեռագործքը գնելու և փոխանակ պատահարների ձեռքում խաղալիկ դառնալու, կարող է ամենայն վստահութեամբ, հում նիւթեր առնուլ հայ երկրագործից, տալ նրանք ապահարիլ նորան, մանր մունր դումարներ տալ յառաջուց այս և այն չինականին և հունձից յետոյ, ապրանք առնալ փոխարէն: Կարողութեան աչք մարդը, նոյն այս ճանապարհով կարող է ճոխացնել իւր դումարը: Եւ եթէ չկամի նա ապրանքը պահել իւր ձեռքում, մի րոպէի մէջ կամեցաւ և ահա պատրաստ են վաճառականք գնել նորա ապրանքը» *): ... «Եւ միայն հում բերքերը չեն, որ կարող են գրաւել հայ վաճառականի գործունէութիւնը. այդ բերքերի մշակութիւնը, մի լայն հանդէս, մի բնական տափարէզ այն ժրաջան և գործունեայ մարդերի համար, որ առաւելեալ կամին պարապել վաճառականութեամբ: Նոյն այն գործարանքը, նոյն այն մեքենաները, որ կարող են ներգործել Եւրոպայի մէջ, ծանր պայմանների տակ, կարող են ներգործել և Ասիոյ մէջ, ուր կեանքի պիտոյքը, պարզութիւնը և այլ բնական հանգամանքները աւելի դիւրութիւն կարող են տալ այսպիսի ձեռնարկութեանց» **): Այսպէս*

---

*) Անդ, էջ 349.
**) Անդ, էջ 357.

պատրաստել վաճառականութիւնն և արդիւնաբերութիւնն երկրագործութեան հետ՝ Մ. Նալբանդեանը հատանօքէն ցանկանում է տեսնել հայերին պարփակուած մի ինքնամփոփ անտեսական մեծութեան մէջ, նա ձգտում է հայերին ազատուած տեսնել եւրոպայի անտեսական կախումից, սակայն քանի որ հայ երկրում նա պատուաստում է նոյն եւրոպական արդիւնաբերական ճիւղերը, ապա պրանով վրում է իր երկրագործական հասարակարգի կառուցուածքը։ Եւ իրօք. այնպէս, որ սերում է զարգացած վաճառականութիւն, մի վաճառականութիւն, որ անպատմ վարկ է բացում կատարեալ երկրագործին, այնպէս, որ «ծանր պայմաններ» չկան մերենայական արդիւնագործութեան պարզացման համար և ցանկալի է համարւում այդ արդիւնագործութեան ծաւալումը, այնպէս չի կարող անկախ երկրագործ լինել, որն այնքան ցանկալի էր Մ. Նալբանդեանին։ Հակառակ Մ. Նալբանդեանի ջերմ և անկեղծ ցանկութեան՝ միշտ պաշտպանել երկրագործի շահերը՝ նրա հայեացքները հակասական ընթացք են ընդունում։ Եւ դա այն պատճառով, որ նա կամենում է հայ միջավայրում պատուաստել եւրոպական և ուսումնասիրած անտեսական կառուցուածքները՝ ցանկանալով միևնոյն ժամանակ անկախ տեսնել հայութիւնն եւրոպական անտեսական ներարկումից, մի բան, որ անկարելի էր առանց զրկելու եւրոպային պատշաճ միջոցները, այսինքն առանց եւրոպական քաղաքների կուլտուրայի և արդիւնագործութեան։ Բան եւրոպայում նրա անտեսակարգի դէմ լուող բողոքները շատուած մարդ արտայայտութիւններ էին, որոնք չէին կարող յետ շրջել պատմութեան անիւը։ Մ. Նալբանդեանի «երկրագործութիւնը» գաղափարական մի սրձագանք էր, որ հայ երկնամարդ առ նոյնպէս չքաւոր կարողանար դիւղացիական կուլտուրային ներքին այժ և հրապուրանք տալ, սակայն նա ապացուցանում էր մեր հեղինակի հասարակական համակրանքների էութիւնը, նրա ժողովրդասէր, ազգի ճշմարիտ դիւղացիասէր լինելը։ Հայութեան հաւաքումը Նալբանդեանի համար նրա գործունէութեան վերջին շրջանում հայ դիւղացու գերիշխանութեան պնդումն էր ազգի կազմի մէջ։ Եւ այս տեսակէտից ելնելով՝ նա

դիակը խնամ լեզու բանեցնել ազգի մարմնի մէջ ոխրագ խաւերի դէմ։ Այդ մենք արդարի տեսանում ենք նրա «Երկու ազգի» մէջ։

*Ազգի կառուցուածքին գառնալով՝ Մ. Նալբանդեանը գրում է. «Ազգը չէ հոգևորների համար. ուրեմն և ոչ կրօնական ժողովի համար (տեսնում է Կ. Պօլսի կրօնական ժողովը—Դ. Ս.) այդ գաղափարը թող տանեն միանգամայն իրենից մոքից, այլ հոգևորը և կրօնական ժողովը հոգած են և կան ազգի համար, և նոցա յարուցանողը, պահողը և գործմանողը ազգն է գործել։ Անցան այն ժամանակները, երբ մարդիկ ոգևորում էին վիրացական և միաբիկական բաներով. անորքեի իրական աշխարհը, երկաթի գաւազանը ձեռքում, պահանջում է իր արգարացի հարկը։ Մարդկութիւնը կապուած է երկրագնդի հետ. վորձերը ուղղին նորան իր երջանկութեան և թշուառութեան պատճառները գտնել երկրագունդի վերայ։ Անցան և անդառնալի անցան այն խաւար օրերը, երբ մարդիկ երջանիկ էին համարելով մի սեռդլխի քրանց կամ շատ անգամ գոչաքաղութեամբ և պոռնկութեամբ ապականուած մի ձևք» *)։ «Ո՛ր տեղ մի գայթակղութիւն, որի պատճառը չէր եկեղեցական, ո՛ր տեղ հարստահարութիւն, որի հերսը չէր եկեղեցական, որ տեղ խռովութիւն, որի խմորը չէր եկեղեցական» **)։ Փաչ գրոյց է և այն ճամարտակութիւնը, թէ հայ ազգն իր գոյութեան պահպանումը պարտական է եկեղեցականներին։ «Եթէ հայոց ազգը, չարունակում է Նալբանդեանը, իր կրօնը պահելով մնաց աշխարհի երեսին, այդ մասին շնորհակալութիւն Մահմետականութեան. սա բացատրեր պահպանեց Հայերի կրօնը։ Ազգը որ չափ ևս թագուած լինէր խաւար ոգիութեան մէջ, այնուամենայնիւ, եթէ մի մասը գիտակցութեամբ, միտ և աւելի մեծ մասը, ֆանատիկոսութեամբ հետի մնալով մահմետականութենից, պահեց իր կրօնը, հետևաբար և ազգութիւնը։ Թող Հայոց ազգը, իր թագաւորութեան կործանման օրից, ասպիսնար արևէ Քրիստոնեայ կառավարութեան, այն ժամանակ կ'տեսնէիք ...*

---

*) *Անդ, էջ 281. «Երկու ազգ».*
**) *Անդ, էջ 283.*

*Բայց ինչպէս պիտի անսանէինք. վասն զի մեք ևս ծնեալ չէ-ինք որպէս Հայ» *): Հոգևոր դասը պիտի փոխէ իր դէպի ազգն ունեցած վերաբերմունքը: Ազգի հայրով և ձեռնասուէթեամբ կեն-դանի՝ նա իր այժելը պիտի աստրպէէ ազգի յառաջադիմու-թեան գործին, նա «պարտական է սպասաւորել» այդ նպատա-կին: Եկեղեցականը «առանց ստիճանի և պաշտօնի խտրութեան» իրեն իրաւունք չըպիտի համարէ «Հայոց ազգի գաւակները դաստիա-ծելու և դիշատելու»: Պէտք է բարենորոգել եկեղեցու անտեսական կառավարութիւնը, որ չըկողոպտուին եկեղեցու միջոցները և նրանք գործադրուին յօգուտ հանրութեան: «Վարձկան, պրոպա-գոյծ» հոգևորականները տեղի պիտի տան ժողովրդական սպա-սաւորների առաջ: Պէտք է բարձրացնել նրանց կրթական մա-կարդակը և վերջ տալ կաշառքով ապէտներին հոգևորականաց-նելու սովորութեանը: Առհասարակ եկեղեցու գործերը պիտի դնել կանոնաւոր ընթացքի մէջ և իսպառ վերացնել կամայա-կանութիւնը: Եւ այդ բոլորն ազգի չահի համար: Իսկ ով է ազգը: Մ. Նալբանդեանն այդ մասին գրում է. «Այժմ և մինչև մեր գերեզմանի ամբը վրէժխնդիր և նախանձաւոր ենք հասարակ ժո-ղովրդի իրաւունքը պաշտպանելու և այս խորհրդով ամենայն բանի ընդունակ»**): Ապա՝ «Մենք ազատակամ նուիրեցինք մեզ հասարակ ժողովրդի իրաւունքը պաշտպանելու: Մեր անձը և գրիչը չնուիրեցինք հարուստներին, նոքա իրենց արծաթի թումբերի տակ միշտ անխոցելի են, նաև բռնակալների իշխա-նութեան մէջ: Բայց այն խեղճ Հայը, այն հարուստահարուած, ողբմելի, աղքատ, մերկ և քաղցած Հայը, ոչ միայն ճնշված օտարներից և բարբարոսներից, այլև իր հարուստներից, իր հոգևորներից և, կրնապրպէտ, ուսումնական կամ վիլիսոփայ ասուածներից, ահա այն Հայը ամենայն արդարոյի իրաւուն-քով պահանջ է մեր աշխատութիւնը և նորան դրձնել, առանց և վայրկենական երկմտութեան, նուիրեցինք մեր բոլոր կա-րողութիւնը***): Ահա այսպէս՝ Մ.ք. Նալբանդեանի համար ևս,

---

*) Անդ, էջ 287.
**) Անդ, էջ 291.
***) Անդ, էջ 283.

ինչպէս այդ Ս. Նազարեանցի համար էր, հայ ազգը «հարատա-հարուած, ողբաա, մերկ ու քաղցած» «հասարակն» էր։ Այդ «հասարակի» համար Նալբանդեանն իրեն ընդունակ է համարում ամեն բանի։ Նոյն այդ «հասարակի» համար նա գրում է իր երկրագործական ուսօպիան։ Եւ եթէ այժմ մենք հարցանք, թէ ինչպէս էր հասկանում Նալբանդեանը հայութեան հաւաքումը, պիտի պատասխաննինք, որ այդ հաւաքումը նա ապաում էր և հասկանում, որպէս հայ քաղքենիի և գիւղացու ուրոյն դոյութիւն ազգերի հանդիսարանում և նոցա գիւղիշխանութիւնը սեփական ազգային մարմնի մէջ։

Արովեանի, Պատկանեանի, Նազարեանցի և Նալբանդեանի արձարձած սկզբունքների և հասարակական պռնուձների հետ մենք ծանօթ ենք։ Այդ երախտաւոր գործիչները իրենց կեանքի ժամանակ բուռն հակառակութեան են հանդիպել, որովհետև ընթացել են սխրող խաւերի և իշխող հասարակական դասակարգների դէմ։ Տիրողները իրենց գործը տեսել են ամեն շատ առանին կեանքի մէջ, քան թէ ժամանակաշրջանի մասին և գրքերի էջերում։ Դա բոլոր սխրողների յատուկ գործակերպն է. անգիտանալ յարձակումներն ու քննադատութիւնը, մերկի տեղ չդնել նոր գաղափարների կրողներին և եթէ յարձակումները ձանձրացնում են դայրացնելու չափ, ապա բանի մի հարուածով ջանալ վակելու հասակորդի բերանը։ Տիրողների տրամաբանութիւնն է.

Գաղափարը բաղխում է ինչ որ նոր բանի մասին,
Ամուր փակենք մենք դռները նրկերով։

Հայ սխրողները-հոգևոր և աշխարհական դասերը-ընթանում էին վերը տեսնուած գործելակերպով։ Նրանք պատճառաբանութեան չէին հակադրում պատճառաբանութիւն, այլ հարուածներ։ Հարուածում է Արովեանը, հարուածում են Նազարեանցն ու Նալբանդեանը, հարուածում են սրանց կուսակիցները։ Հայ սխրողները իրենց բարձրութիւնից չեն իջել խօսքի ու գաղափարական մենամարտի։ Նրանց փոխարէն այդ արել են մի շարք սիկոֆանտներ, արել են յաճախ անյաջող, ոչ տաքինի ձևերով ու միջոցներով և ոչ էլ հմտութեամբ ու վարպետութեամբ։ Եւ այսօր եթէ կամենում

ինք իրագիկ լինել մեր վերածնիչներին հակառակ եղող բանակի գաղափարականութեանը, այլ միայն հնարաւոր է ակնարկած սիկօֆանտների գրուածքներից, որոնք մաքառում էին ոչ միայն եկեղեցից գրուած, այլ և իրենց խղճի թելադրանքով։

Հայ սիրողների մարտական մասնաւորականութիւնը բացատրած էր Առաքել վարժապետ Արարատեանից, Սահակ քահանայ Մանդինեանից, Յովսէփ Հերքէղեանից, Մանր Մանրեանից և մի քանի երկրորդական անձերից։ Ի՞նչ էին առաջարկում գրանք եղող յարձակումների դէմ։ Նրանք բոլորը շարկապում էին միևնոյն ինքնագոհ հայամոլութեամբ։ Ինչ որ հայկական էր՝ նրանց համար վեր էր ամեն բանից։ Ինչ որ գրից էր գալիս՝ կատարեալ բարիք էր, ինչ որ նոր էր—մերժելի։ Առաքել վարժապետի համար հայոց լեզուն Աստուծոյ պարգեւն էր Ադամին։ Եւ մարդկային առաջին լեզուն լինելով՝ նա բարեկարգման կարիք չունէր. նա մուրացիկ, կարկատած և փոխառած չէր օտար ազգերի լեզուների պէս։ Նա դէմ էր գրաբարի նախադասման և ծանր յանդիմանութիւններ էր կարդում Նազարեանցին։ Վերջինիս գիտնականութիւնը նրա համար արժէք չունէր։ Գրաբարի ապականումը նրա կարծիքով նաև կրօնասիրութեան տապալումն էր նշանակում։ «Եթէ, գրում էր Առաքել վարժապետը, առէ վարդապետն Նազարեան, թէ ես ընդ եկեղեցական գրանց գործ ոչ ունիմ, թող մնացին նոքին նոյնութեամբ որպէս Աստուած, իմ կամք և գիտութիւն են զմանկունս և զնաւարտականութիւն հայոց լուսաւորել, թող մեռելոյն թաղել զմեռեալս իւրեանց, մեք զկին նորոյն գնացուք, այդու ևս սխալ չարաչար, յերկուս հերձելով զիեղու մեր և զազգ. և խորոց արկանելով ընդ մէջ ժողովրդականաց և հոգևորականաց, մինչ զամ նորոյն առաջնորդելով և մեսոյն՝ ի հնութեան թողուլ. ամանց թաժայ հաց ճամբելով, և այլոց քարեաւ. ոչ լաւ ևս է մի լեզու լինել (որպէս և էն), մի հօտ, և մի հովիւ, և մի սերմանել՝ ի զուր երկպառակութիւն և վտանգաւոր օրինութեան հնձել առնէձս յամենեցունց մինչև ցվախճան աշխարհի»)։ Արարատեանը*

---

*) Առաքել վարժապետ Արարատեան՝ «Դիմաքրաւ ընդդէմ Սահան յարուցելոյ ամենապատուական նախամայր մաքուր լեզուիս Հայոց». Թիֆլիս. 1858. էջ 14.

*բնադիպօրէն դիպում էր, որ աշխարհաբարի յաղթանակը պիտի տապալէր հոգևոր դասի գերիշխանութիւնը նախ ուսման մէջ, կրթական տապարէզում, ապա հասարակական վերաբերութիւններուն շրջանում: Դրա համար է, որ նա խօսք է բանում մի հօտի և մի հովիւի, աշխարհականների և հոգևորականների բաժանման մասին: Հարկաւ անհրաժեշտ էր ապառնացող վտանգի առաջն առնել: Եւ Արտաւանն առաջարկում էր. „Եթէ ամենայն Ռուսահայք քաջ ուշադիր, նուրբ խորհրդոց և յամենայնի վերահասու լինէին մտաց, խորհրդոց, բանից և գործոց Վար. Նազարեան ուղիակը հասարակօրէն՝ ի վնաս նկեղեցւոյն, կրօնի, ազգի և լեզուի մերոյ, ոչ միայն օգնէին ապագրութեան գրեանց նորա, այլ և ճարակ հրոյ տուեալ գամենայն մատեանս նորա, խափանէին գնա մի եւս խօսել կամ գրել ինչ գաղղէ, գկրօնէ և գլեզուէ մերմէ“ *): Այսքան անողորմն է Առաքեալ վարժապետը նորի հանդէպ, այսքան անգութ վերաբերմունք է տածում նա դէպի Նազարեանցը, որը «անարդէ և թշնամանէ գիշեան և գժտասիրդս մեր առհասարակ»: Գրաբարի և նկեղեցական դասի մի այսպիսի ֆանատիկոս պաշտպան է Առաքեալ վարժապետը:*

Հոգևորականութեան միւս գաղափարախօս Ս. քահանայ Մանդինեանցը յետ չի մնում Արտաւանից: Նրա համար հասկանալի բան է, որ Մխիթարեանները գրում են ազգի և նկեղեցւոյ դէմ, բայց միանգամայն անհարդուժելի է, որ այդ միևնոյնն անում է Ս. Նազարեանցը: Նա վրդովում է, որ Նազարեանցը հայ վիտուններին սխօլաստիկ է անուանում, տառի գիւտը հրաշք չի համարում, որ գրաբարը մեռած և ազգը մանուկ է սրակում, մանաւանդ, որ հայոց լեզուի համար գրում է՝ թէ «Հնդկաւ Եւրոպական Սանսկրիտ լեզուներէ մի ճիւղն է, և պատկանում է մանաւանդ Իրանի այնինքն Զենդ և Պարսիկ լեզուներին, բոլորովին մոռանում է Հայոց լեզուի ծագումն, հայց Ինճիճեանի, Շամչեանի և Ալիշանի հատատութիւններն, թէ Հայոց լեզուն նոյն լեզուն է, անուանում է նո-

---

*) Անդ, էջ 22.

*ցա ուսումնական աշխատութիւնն մաշած և կտրատած» *): Եւ Մանդինեանց քահանան մատուռ է նպատնանցի ազգակոծան ատաքնելի վրա. «Արդեօք՝ քանի նախատինք, քանի անարգանք, քանի թշնամանք է պատմ Հայոց ազգի վրայ: Ազգն մինչև այսօր լռում էր, գուցէ թէ նա զգայ իւր գրածնելըն, սակայն օրէցօր աւելացրուց և ինքնան օգնական գտաւ ոմն Նալբանդեանց, որք անզգոյշ խօսքերով սկսել են ազգին պարսաւել, ոչ թէ միայն անգրագէտ մարդկանցն՝ այլ և գիտուններին, և իրանք մի միայն կամենում են նոր լուսաւորիչ լինեն ազգին, նոր լեզու, նոր ուսումն տարածել, ցոյց տալու համար թէ մեր ազգը սկսեալ մեր նահապետ Հայկէն որ 4000 տարի է անցել, մինչև այսօր անուսումն և անլեզու ինք մնացել, և մեր հին Մատենագիրքը բոլորովին անպիտան են եղեալ»: ... «Ես որպէս քահանայ ըստ պահանջման սրբազան պարտաւորութեանս գայս միայն համառօտիւ ծանուցանեմ ազգին ազգիս. թէ գերապատուելի վարդապետ կոչեցեալն Նարեկացի չարժուած փառասիրութենէ՝ միմիայն իրան է կարծում ընդհանուր Հայոց ազգի մէջ, ինչ տեղ որ բնակվում են, գիտուն և լեզուագէտ, իսկ մնացածներին՝ ոչէտ, անուսումն և անլեզու, ուստի որոյ և վառահացեալ կամենում է նոր լեզուի հիմնադիր լինել, բայց չէ խմանում, թէ այն լեզուն՝ որ նա կամենում է տարածել, ընդհանուր ազգն անպիտան է համարում, խորշում է նրանից, եթէ ընդունող լինի, ուրեմն մինչև հիմայ «նոր հայախօսութեան հանդէս» տապկեալ գիրքն ծախուած կըլինէր, և կրկին տպագրեալ: Նորա տպեալ գրանց մէջն ոչինչ անույշ բան չես կարող գտնել, հա, ազգի և լեզուի վրայ նախատինք շատ կըգտնես, եթէ ուշադիմամբ կարդաս, բայց ժամանակն ափսոս է նորա կարդալու վրայ կորցնելն և գուցէ մեր սիրելի ազգն ասէ. թէ ես նախանձուէն չարժուած՝ նորա գրեանքն կամենում եմ տպաոսել, քան լոյն ինձ, ես Աստուածի աչակերտ եմ, «գայմ գիտացն ամենեքեան, եթէ իմ աշակերտք էք, եթէ սիրեցէք զմիմեանս. Յովհ. ԺԳ. 55: Բայց մէկին չեմ կարող սիրել, և նորա գրուած-*

*) «Մեղու Հայաստանի», № 16. 1858, էջ 126.

քին հետևելով ընդհանուր ազգին թշնամի դառնալ և պախարակել» *): Հարկ չկայ այժմ ծանրանալ Մանրինեանցի ապծաբան պատափարնների վրայ. նրանք չափազանց մլամիտ և անճարակ են, բայց իր ժամանակին դիմադրելիության զէնքեր էին, որոնց խորտակելու համար պահանջւում էր յամառ պայքար:

«Մեղու Հայաստանեայ» խմբագրին ձայնակցում էր աշխատակից Վահան Արամեանը: Սրա անապարծութիւնը վերաբերած էր Նազարեանցի յայտարարութիւնից, թէ հայկի պատմութիւնն առասպել է: Եւ նա գրում է. «եթէ Գ. Վարդանեան ինքն հայ գոլով՝ ինքնայօժար կամօք ուզում է իւր հայրենական փառքի ժառանգութենէն (այսինքն՝ հայկական լեզուի առաջնութեան պարծանքէն) հրաժարուիլ, գայդ բանը կարող է նա առնել ազատօրէն. և ոչ ոք իրաւունք չունի դէմ դնելու: Սակայն այլ հարազատ բազմաթիւ որդիքն հայկայ (հայոց ազգն ողջոյն) կը յօժարին արդեօք նորա կարծեացը համաձայնիլ, և կամայն հետևիլ, այդ շատ խոր մտածելի բան է. և ես՝ քան թէ Այո» **): Այստեղ նորից հրապարակ է գալիս բոլորանած հայամոլութիւնը, որ անցեալի եղած կամ չեղած բարեմասնութիւններից թռուցիկ է շինում քօղարկելու իր ողբալի գոյութիւնը: Այդ միջոցով հայամոլութիւնը պատասխանատու է դառնում նրա արծաթածողների, նեկուց դէպքում ուսումնականութեան նեկուսացուցիչ հոգևոր դասի համար և մթագնեցնում է գլուխ բարձրացնող ժողովրդի տեսողութիւնը: Անապարծութիւնն և ինքնագոհութիւնը, հարկաւ, չեն հաշտւում անգամ սև աշխատանքի հետ, որ անհրաժեշտ էր հայերին նոր պայմաններին յարմարուելու համար: Եւ հայ գիտունների չոյանքները, թէ հայերն ունեն լատպոյնը պատմութեան և լեզուի կողմից, մի նեղակացութեան միայն կարող էր հասցնել նրանց, այն է՝ առանձնանալ գրի աշխարհից, կղզիանալ սեփական միջավայրում, վե-

---

*) «Մեղու Հայաստանեայ», № 16. 1858. էջ 124—125 Սահմանս քահանայ Մանրինեանց՝ «Մի քանի խօսք գերապատուելի Սահմանս սէր-Եսայեան Նազարեանցի գրուած մատեանների վերայ».

**) «Մեղու Հայաստանեայ», № 34, 1858., էջ 275.

ին վար նայել ժամանակի փոփոխութիւններին և կարծեցեալ պիտանական ազիւսութեան մէջ՝ խանարհ մնալ հայ ազգովնների լծին։ Մանվիննանց քահանան իր աշխատակիցներով, որոնց մէջ էր նաև Արտաւանը, ամօլ ջանքեր էին թափում անխախտ պահելու եկեղեցական դասի և հայ իշխանների պիշխանութիւնը։ Նրանք չէին խնայում նազարեանցին, որ յաուաջադէմ բանակի դրօշակակիրն էր և կենտրոնական անձը։

Նազարեանցի գաւանանքով հայերն իրենց ազգային միութեան համար ունէին «երկու հոգևոյն անօթ՝ լեզուն և կրօնքը»։ Հակառակ բանակի գաղափարախօսներին նոյնը էին ասում, սակայն նոյն կերպ չէին հասկանում նրա բովանդակութիւնը։ Արդէն սեասանք, որ լեզուի հարցում նրանք Նազարեանցի անհաշտ հակառակորդներն էին և ոչ մի բարենորոգում չէին ընդունում։ Այդ մեննոյն վերաբերմունքն ունէին նրանք նաև կրօնի խնդրում։ Նազարեանցի համար կրօնը կենդանի գործ էր, կենցաղավարական բարոյականութեան և համայնակեցութեան գործօն։ Իսկ նրա հակառակորդների համար կրօնը վերացական ուսմունք էր, գաւանարանական խնդիր, ծէս և արարքներ պաշտօն։ Եկեղեցու նուիրապետութեան անքննադատելի մեծութիւն էր նրանց աչքում. ձեռնադրները, ժողովուրդն իրաւունք չըպիտի ունենային խառնուել եկեղեցու գործերին, հակել նրա կեսմատներն վրայ և ուղղութիւն տալ նրա կրթական-կուլտուրական ձգտումներին։ Հարկաւ, սրանք սրամտօրէն հակառակ սեսակէտներ էին։ Նազարեանցին և նրա կուսակիցներին անբաժանելի ցոյց տալու համար անվերջ հարկաւմ էին, թէ նրանք լուսերական են և առհասարակ հասարակ խնդիրներում՝ անհամակրող։ Մի հասարակութիւն, որը հասարին մեծ նշանակութիւն էր տալիս և համարեա ամբողջովին հասարով էր ապրում, չէր կարող անպիտանալ այդ մեղադրանքները, ուստի և նրա աչքում հասարի մէջ թերացողները չէին կարող հասարակական առաջնորդներ լինել։ Հայութեան այդ թույլ կողը լաւ գիտէին շահագործել Մաքր Մանրեանցը և Յովսէփ Շերքէզեանցը։ Նազարեանցն իր «Վարդապետարան կրօնի» գրքի մէջ (տպագրուած 1853 թ.) ասել էր, թէ Աետարանը սկսուից տարածուել 1850 տարի առաջ։ Մանրը պատասխանում էր, որ 3 տարիկան ճի-

*սւսալը (1853 հանած 1850) չէր ուհատրանել, որ նա սկսել է քարոզել 33 տարեկան հասակում, ուրեմն 1820 տարի առաջ։ Նպատականյը գրել էր, որ մարքի համար հատանական է թուում, թէ մեռցած մարտակնների վրայ կարող են քանական արարածներ լինել։ Մանրը պատասխանում էր. «Սուտ են ուրեմն Աստուածաշունչ գրոց բանքն, որք յայտնում են՝ թէ 'ի միոյ արեգ. արար Աստուած զմարդկային ազգը. կամ թէ՝ Ադամ միայն է Առաջնաստեղծ մարդ, Նախամարդ, Արմատ բնդհանուր մարդկութեան, որ սահճաւ յԱստուծոյ վիճակորդ օրհնմը, և գրուեցաւ երկրաւոր դրախտի մէջ» *)։ Ասելի ապանիշ և թունոտ լինելու համար Մանրը հարց էր տալիս. «ա. Այն ատամնակ մարդիկն ինչ լեզուս են խօսում։ բ. Մի լեզու միայն ունին, թէ շատ զանազան լեզուներ»։ Եւ այլն, և այլն։ Պակաս թունոտ լեզու չէր բանեցնում Յովսէփ Չերքէզեանցը։ «Մինթէ, գրում էր նա, մարդս ունի իրաւունք իւր ազգի եկեղեցւոյ սահմանած և վճռած դաւանութիւնը քննութեան առարկայ շինել և ապստրութեամբ անհաւան լինել այն դաւանութեանը։ Այս սեղ կայ արդեօք բարոյականութիւն. չինք կարծում. անունով հայ լինել և մաքերով լութերական նշանակում է ունենալ կեղծեալ հաւատ, որ հետի չէ անհաւատութիւնից, նշանակում է ունենալ երկդիմի խօսակցութիւն, ուրեմն և խաբերայութիւն և հետևաբար անբարոյականութիւն» **)։ Եւ մին-մինակ հաւատը չէր, որ հետաքրքրում էր Չերքէզեանցին։ Այս մինուոյն յօդուածում նա պաշտպան է կանգնում Յարութիւն տպա Խալիբեանին և Գաբրիել վարդապետ Այվազեանին, որոնք Նոր-Նախիջևանի եկեղեցական գումարները գործադրում էին առանց ժողովրդի կամքը հարցնելու, իսկ դրա համար «հետևափայլն» քննադատած և մերկացրուած մարդկանցից էին։

Չերքէզեանցի պաշտպանած տեսակէտը հասկանալու համար անհրաժեշտ է ծանօթանալ նրա մի երկար յօդուածի հետ, որ նա հրատարակել է Գաբրիել վ. Այվազեանի պարբերակա-

---

*) «Ձայնք», 1859. էջ 179. Տես Տերեանց՝ «Չննութիւնք հրատարակեալ գրուածոց Սեփեանոսի Նազարեանց».

**) «Մեղու Հայաստանի». 1860., № 18, էջ 100.

նաեւ. Այդպես նա գրում է. „Դու (այսինքն Նապարևանցդ—Դ. Ա.) մեր բոլոր ազգի վերայ, մեծի և փոքրի, հոգևորականի և աշխարհականի, թէ ազամարդու և թէ՝ ով յիմեն անամօթութեան մեր կանանց և աղջկանց վերայ, ինչ կամեցար խօսեցիր, թէ յայտնի և թէ ծածկաբանօրէն. և գրուածնելիդ անունը դրեցիր նոր լուսաւորութեան հանդէս. Նայրանդևանցը տարփոնից այդ լուսաւորութիւնը, դուռնայ վշնց քեզ համար և ինքը դրնց իւր սովրական և իմնի ժառանգած սահմանութիւնները. Սապան (Սապա Ալէքսանդրիանց՝ Զամախեցի՝ «Հիւսիսափայլի» Ջերմ կողմնակիցը, օժանդակողն և աշխատակիցը—Դ. Ա.) ազգասէն գաղափարներ կոչնց քո մտքդ, Պրակոսանը նապարայ խմնց, Ղուկասեանը (գործակալ «Հիւսիսափայլի» մէջ երևացող յօդուածների հեղինակները—Դ. Ա.) հսաւ գնչնց քեզ։ Ես Հիւսիսափայլ օրագրի մէջնորդութեամբ վառարանցդը հանդուցեալ սիեղերահռչակ Նիւթէս կամուղիկոսն (Նապարեանցն ասել էր, որ Նիւթէսը չըգնահատանց Արովեանին—Դ. Ա.), մեր ազգի բոլոր եպիսկոպոսաններին, առաջնորդներին և վարդապետներին կոչնցիր տգեսցեր, յիմարցեր, խաւարի զաւակներ և այլն, մեր հայազգի ուսանողների թատրոնական խաղարկութիւնը պախարակեցիր առանց ուսումնական քննութեան («Հիւսիսափայլը» չէր հաւանել 1859 թ. Մոսկուայում Լազարեան ճեմարանի դահլիճում նկարագրած կնոջ դասական ազնիւթիւնը Պապի կնանքից—Դ. Ա.). մեր հայոց բոլոր ուսումնականներին անբարոյական կոչնցիր Սազայի բերանով (ուսումնականներ՝ Արարատեան, Մասեր և այլն—Դ. Ա.). մեր հին մատենագրութիւնն ու լեզուն, որոց վերայ աշխարհ ամենայն, նա ևս քո ազգական դեմանացիք (ուշադրութիւն! Դ. Ա.) յարգանքով և գործակցմամբ են խօսել միշտ, անցուծ, անճիւթ, ժանգոտած եւ փտած կոչնցիր. վերջապես արտակից ձևրքերով մերձեցար մեր ամենամաքուր հաւատին, մեր եկեղեցական խորհուրդները սկսար Լուսերի մաքերով մեկնել, կրճատել և այլայլել և որ առաւել դարհուրելին է (կարծում ենք, որ դարանով վերջացաւ քո սրտի պատճառութիւնը դէպի և քո արհնակից ազգը), մեր ուղղափառ, բարեպաշտեան, քրիստոսահիմն, առաքելաշէն եկեղեցու համար առաջարկեցիր վերանորոգութիւն (բնֆորմ) ոտքից մինչև գլուխ,

արմատից դէպ ի վեր: Միզանից ոչ ոք չասաց, ապը չբողոքից, նոյն ինքն Եկեղեցին լուռ մնաց (կարծում ենք առ ժամանակ լինչ), թէ այդպիսի գրուածները արժանի են դատաստանական քննութեան. մենք բաւականացանք միայն հերքելով և գրելով քո խօսքերը, հաստատելով քո ուսումնականութեան թերութիւնը, քո խղճմտանքի այլակրօնութիւնը, և ահա մեզ պատասխանում ես, թէ արդէս համաձայնութեան տալ, թէ կարելի է ուրիշն դատաւոր լինել և աչինչ չիմանալ» (ակնարկում է Նազարեանցի դիանական ասութեանը—Դ. Ա.) *): ... «Ես ապրայն, քրիստոսասիրեմն, Առաքելական Եկեղեցու պատմութիւնը թողած և նորա բազմապարեան անփոփոխ մխակերպ ուղղափառ դաւանութիւնը արհամարհելով սերտասրութեամբ Մարտին Լուտերին. կոչնչեցիր նորան պարզևական գործիք Նախախնամութեան, վերանորոգող մաքուր քրիստոնէական ուսման և երախտաւոր բանադատ աշխարհի (Նազարեանցը Լութերին գրուատել էր պատկանութեան դէմ վարած պայքարի համար—Դ. Ա.). սերտեցիր նորա պատմութիւնը, գնացիր նորա ճանապարհով. նորա իւրքանչիւր խօսքը, միտքը, նա ևս բառերը կոյր աշակերտի նման կրկնեցիր բառ առ բառ քո ապրի մէջ. խօսքով և գրով քարոզեցիր նորա խօսածը ու գրածը, սկսած ազատութեան հանդէսից կրօնական առարկաների մէջ մինչև արմատական վերանորոգութիւնը մեր Եկեղեցու մէջ. քո պաշտօնը լիովին կատարեցիր. ինչ մնում է քեզ այժմ ասելու մեր մէջ ասելի. աչինչ. գնա, ուրախ, վերադարձիր քո նոր հայրենիքը. ասա քո նոր հայրենակիցներիդ, թէ նոցա քեզ յանձնած պաշտօնը կատարեցիր այնպէս, որպէս պատուիրել էին քեզ. այլ թէ ինչ օգուտ կարող են քաղել նոքա քո նուիրականութիւնից, ասա, թէ հայր քո քարոզութիւնը ընդունելի իրրև բժիշկների համար վճռելի չաւ. թէ բազմաչարչար, Առաքելապատում Գրիգոր Լուսաւորչի ասի եղունդը չեն կամենում փոխել Լուտերի գլխու հետ, ասա, թէ քո անունը գրեցին վերանորոգուած նորընծայ անվեզար

---

*) «Մասեաց Աղաւնի և Արտաշատ Հայաստանեայց». 1861. № Փետրուարի 15-ի. էջ 43. «Յովսէփայ Ներքէզեանց նամակ առ Սահակ Վարդապետ Նազարեանց».

վարդապես. *խանգարիչ մաքուր քրիստոնէական հայկազեան ուսման. ապիրատ քո հայրենիքի, ուրեմն և բոլանդակ աշխարհի առջև*» *): Այսպիսի մտաւոր զէնք էին պատրաստում նազարեանցի ղէմ նրա հակառակորդները: Եւ այդ զէնքը կարողանում էր արամապրել ուրիշներին, կարողանում էր հալածանք յարուցանել մեր վերածնիչի դէմ: Շնորհէնեանն ոչ միայն լրագրական բանակռիւ էր մղում Նազարեանցի դէմ, այլ և էջմիածնի օգնութեանը դիմից խափանելու «Հուսիսափայլի» պրօպագանդը: Էջմիածնի Սինօդը յինուելով Շնորհէնեանցի մատուցած խնդրքի վրայ՝ նազարեանցին հաշակից «Լուսերեակն հագուով և արտ, և հայ՝ միայն անուամբ առ ի պատրիոյ գհամապիսս իւր» **): Նրա «Վարդապետարան կրօնին» արգիլուից, իսկ «Հուսիսափայլի» խափանման համար դիմումն եղաւ նախարարութեան: Ահա պահպանողական բանակի խօսքն ու գործը: Ամեն բան անում էր անխախտ պահելու հոգևոր դասի գերիշխանութիւնը: Եւ նրա խօսքը չէր ազդում, հանդէս էր գալիս բանութիւնը:

Սակայն պատմութիւնը նորից չէր գործել: Նազարեանցն և նրա գինակիցները երկնքից չէին ընկել, այլ հայ իրականութեան հարազատ ծնունդն էին: Եւ չուսով պահպանողական բանակի մէջ անզգայութիւն կատարուից նրանց նկատմամբ:

Դեռ ևս 50-ական թուականներից հայ հասարակական ասպարէզում գործում էր Պետրոս Շանշեանը: Մենք տեսանք նրան համքարութիւնների պաշտպանի գերում, բայց նա պաշտպան էր նաև աշխարհիկ կրթութեան, թէև այսոքն խոշոր գեր էր յատկացնում կրօնին և նրա քարոզած բարոյական ընկերային սկզբունքներին: Շանշեանը հայ հնդեցական դասի գլխաւորութեան բացասողը չէր, բայց նա յանկանում էր, որ այդ դասը չընկրկեր անշարժութեան մէջ, հրաժարուի կատարելագործուելու ձգտումներից և ժողովրդի հետ միասին կոչ անի պատմութեան ուղին: Եթէ արուշիլ լինենք Շանշեանի տեղը հայ մարի

---

*) Անդ, 1861. № Մարտի 1-ի, էջ 56.

**) Սինօդի օրագրութիւնը հրատարակուած է «Մասեաց Աղաւնիի» 1862 թ. Օգոստոսի 15-ի №-ում.

կաճառում, տալա նրան պետի յատկացնենք կենտրոնը: Ձախից Ս. Նազարեանցը իր հետևողներով, աջից՝ ինքնապահ հայամոլ-ները:

1863 թ. «Մեղու Հայաստանին» անցաւ Պետրոս Սիմէօ-նեանցի ձեռքը, որը Դորպատի համալսարանի նախկին սանն էր և թէև պահպանողական, բայց գիտէր խոնարհուել ճշմարիտ մարի և կեանքի առջև: Նազարեանցն և նրա գինակիցները նոր «Մեղուի» կողմից այլևս չէին անհանգստացնում և բանադրում: Իսկ չափաւոր պահպանողական, խիստ ազգային գունաւորում ունե-ցող «Կռունկ Հայոց Աշխարհին» միանգամայն պատկառանքով էր խօսում մեր վերածնիչների մասին: «Դա է, գրում է Ս. Նա-զարեանցի մասին Գ. Տ.—Ա., Հայոց համար (նա է բոլորի համար չէ. գոնեա Ռուսիոյնակ Հայերի համար) մի զարմանալի մեծա-նայ, մի այնպիսի հարուածք տուող օրուձիւն, որ աշխատում է աճապարանել Հայերին իրենց քաղցր, անհոգութեան քնից, բանալով նոցա աստղ նոր գործունէութեան առաքել, ա-պրելի կենաց և երջանկութեան, որից զուրկ է Հայն»*): Բայց չըպէտք է կարծել, թէ նման վկայականից յետոյ „Կռունկի“ հրապարակախօսներն ամբողջովին համաձայնում են Նազա-րեանցի հետ: Ո՛չ: Նրանք իրաւ որ ընդունում են, թէ պէտք է աճապարել «անհոգութեան քնից», բայց աճապարել ընդհանրա-պէս ոչ այն ուղիով, որը մատնացոյց էր անում Նազարեանցը: Վեր-ջինիս համար, օրինակ, այլ էր կրօնը, այլ ազգութիւնը: Այ-սպէս չի կարծում «Կռունկը»: «Այն Հայերն, գրում է Գ. Մու-րադեանց (յետագայում Մելքիսեդէկ արքեպիսկոպոս), որոնք ժամանակ առ ժամանակ իրանց ներկայութիւն բաժանում են, ոչ թէ երկայնասրտութեան, հայրենասիրութեան և միաբան անձ-նազոհութեան դրօշակ են բռնել իրանց ձեռքին, այլ առևտու-թեան, հալածանաց, հայհոյութեան և թշնամութեան: Հայերի համար կրօնական և ազգային հանդէսներն մի են եղել և ոչ

---

*) «Կռունկ Հայոց Աշխարհին». 1862. Նոյեմբեր. էջ 841. Գ. Տ.-Ա. (Գէորգ Տէր-Ալէքսանդրեանց) «Հետաքրքրական առաջարկութիւնը մի ընդհանուր հայկական ընկերութեան մասին.

տարրեր: Եկեղեցին նրանց ազգայնութեան կնիքն է եղել, ու ջոջացել են միաբանութեան և հայրենասիրութեան բոլոր վայել ճառագայթներն. խոյս տալով եկեղեցուց, խոյս են տուել ազգայնութեան ամէն նուիրական զգացմունքներից: Երկպառակուելով հայրենի զառանցանքից և նախնական ծէսերից՝ երկպառակուել են և հայրենասիրութիւնից և պատրաստ ամայի են թողել իրան հայրենիքն, որին սխալ կերպ է այսպիսի տգէտների գլխով գրուած մեր ազգային պատմութիւնը»: ... «Եթէ պ. Նազարեանցն օրինակ է բերում մեզ Գերմանացիք կամ Անգլիացիք, որոնք զանազան բաժիններով զանազան զառանցանքի են պատկանում և հայրենասիրութեան, ազգային յառաջադիմութեան և մտաւորական բարգաւաճանքի մէջ միաբան են և մեր հետ, այդ ևս շատ թոյլ օրինակ է Հայի կենաց համար: Նրանք կապուած են միմեանց հետ թ ազգային օրէնքներով. միացած են ազգային փառաց հրապարանքով, կենարոնացած են գլխաւորապէս իրանց հայրենի երկրում, հովանաւորուած են իրանց ազգային պետութեանց կամ խնամակալութեանց գայխանի տակ, ունեն հասարակաց տնտեսական պատուէրներ, ունեն ամեն հայրենակցաց մէջ գրած գրուած ազգային լեզու. իսկ թագաւորութիւն, երկիր և հայրենիք կորցրած Հայն, օտարների կլանող խնամքին ապաստան եղած Հայն, պանդխտութեան և ստրկութեան մէջ յետաչքուած ու փոփոխուած Հայն, լեզու և ազգութիւն կորցրած Հայն, որ հայրենիք և ազգութիւն ամփոփում է միայն իրան Եկեղեցու մէջ, ինչպէս կարող է հաւասարել Գերմանացուն կամ Անգլիացուն, երբ որ իրան եկեղեցում մնացած ազգայնութիւնով է միայն ճանաչում իրան եղբօրն և նրանով է յուսադրվում վերականգնելու. իսկ մեւս վտանգ ու պարծանքն արդէն հոգոց են մատնում»): Ի՞նչ տեղում մենք արդէն խօսել ենք այն մասին, թէ ինչ չափի ճշմարտութիւն է պարունակում իր մէջ մեր պահպանողականների այն պնդումը, թէ հայ եկեղեցին է պահպանել ազգի գոյութիւնն և ինքնուրոյնութիւնը: Այդ պնդումը մեզ թուացել է անհիմն յաւակնոտութիւն: Եկեղեցին չկարողացաւ ար-*

---

*) «Կռունկ Հայոց Աշխարհին». 1860. Հոկտեմբեր. էջ 839 և 841.
Գ. Մուրադեանց՝ «Նկատումներ».

դիլք լինել հայերի մասամբ օրենսդիր և թրքաց դատնալուն. Եթէ հայը դատի ծանր փորձանքի մէջ անուամնայնու չկարցրնց իր նկարագիրը, այդ մենք պատճառն ենք մահմեդական երկրների մէջ և վրաստանում սիրով փակ անուամնելանը և մեծ չափով այն բանին, որ հայ ժողովրդի մէջ գոյութիւն ունէին երկու հասարակութիւններ—դիւղում համայնքը, քաղաքում համքարութիւնը: Ձենք բացատրում, նկարագին էլ իր դերն է ունեցել, բայց նա առաջին դերակատարը չի եղել: Գաբրիէլ Մուրադեանը, առարկելով Ս. Նազարեանցին, այսպէս չէր նայում խնդրին: Նրա համար նկարագին ազգային գոյութեան միակ հիմնաքարն էր: Դա պահպանողականների այն դատանանքն էր, թէ արտաքոյ Հայաստանեայց առաքելական սուրբ նկարագրոյ չկը հայութիւն: Սակայն Մուրադեանն և պահպանողական նոր սերունդը հին ինքնապահպանելու հրաժարվում էին տալ: Եթէ նկարագրը դերն այդքան մեծ է եղել անցեալում, եթէ նա է հայերի յուսացումների յենարանը, ապա և նրա պաշտպանելու անհրաժեշտութիւնը չի կարող քարանալ հին դիրքում. նա էլ պիտի վերածնուի նոր պայմանների համեմատ, որ չրկրի ժողովրդի և հոգևոր դասի մէջ եղած ներդաշնակութիւնը:

Գ. Մուրադեանը բացառութիւն չէր կազմում իր աշխարհահեացքով: Մեր ժողովրդական գրող և մանկավարժ Ղ. Ալիշանը, որ յետագայում բուռն համակրութիւն էր ցոյց տալիս սոցիալիզմին, 1869 թ. անցանկալի երևոյթ էր համարում, որ կրթութիւնը դառնում է աշխարհականների սեփականութիւն և դրա դիմաց հայ հոգևորականութիւնը չի կամենում ինքն էլ չարժուել ժամանակի պահանջների հետ: Ղ. Ալիշանը ոչնչացնում է Գէորգ IV կաթուղիկոսի ջանքերը ստեղծելու և կրթուած հոգևորականներ պատրաստելու: Նրա դիտողութեամբ առանց կրթուած հոգևորականների աշխարհին դասերը կարող են զատուել ազգի մարմնից և վերից վար նայել ոչէ հոգևոր իշխանութեան վրայ: Դա Ղ. Ալիշանի անտակէտ ազգային գործունեան դէմ ուղղուած մի հանգամանք կլինէր, որովհետև «այս օրուան օրս մեր ազգութիւնը քաղաքական չէ, այլ բարոյական: Այսպիսի դրութեան մէջ ինչ անատակ մարդոց մէջ աւելի կարօտութիւն ունինք մենք, եթէ ոչ բարեկիրթ,

ժրաջան, ողջամիտ և անձնանուէր հոգևորականների մէջ։ Երբէք պատահած չէ, որ մի ազգ ունենալով լուսաւոր և գիտնական հոգևորականներ, նա թշուառութեան մէջ լինի եղած, և սրա հակառակ, երբէք պատահած չէ, որ մի ազգ երջանիկ լինի, եթէ նորա հոգևորականներից բաղկանում է մի ամբոխ և խարեբայ պատակալուխ։ Մարդկութեան պատմութիւնը ակնհայտ ցոյց է տալիս, որ խարանչիւր ազգ իւր հոգևորականների բարոյական և մտաւոր կրթութեան համեմատ ունեցել է և ունի իւր կառավարութիւնը։ Ահա այսպէս է նայում հարցին հայ կրթուած հոգևորականներից մէկը՝ Վահան վարդ. Բանտամնաները։ «Ամենայն ազգ, գրում է նա, իւր համակրութիւնը միշտ ցոյց է տուել առաւելապէս հկեղեցական դասին, առաւելապէս յոյսով սպասել է և միձապուհ պատրաստութեամբ ու յօժարութեամբ ընդունել է նորանից իւր բարոյական և մտաւոր կրթութիւնը։ Մանաւանդ մի ազգ, որը կորուսել է իւր ամբողջութիւնը, որը ենթարկուել է բազմաեսակ ճնշողական ազդեցութիւններին, ոչ այլապէս կարող է պահպանել իւր ինքնուրոյնութիւնը և ազգութիւնը, եթէ ոչ հոգևորականների ձեռքով և նոցա գործունէութեամբ։ Այժմ մենք Հայերս, գրուած լինելով բոլոր տիեզերքի երեսի վերայ, չունինք ոչ ամբողջութիւն, ոչ հայրենիք, ոչ պետութիւն, ոչ հարստութիւն, ոչ ինքնակառավարութիւն. զուրկ ենք բոլորից, կորցրել ենք այս բոլորը, և

*) «Արարատ». 1869. Քիւ Բ. Ցունիս. էջ 30.

մնացել են միայն եկեղեցին և լեզուն։ Եկեղեցին պէտք է միաբերել մեզ այսոխան սխատը և տրաւլի ժամանակ, եկեղեցին է մեր յոյսը, մեր փրկութեան դեկը։ Եւ ինչ տրանից աւելի հաստատ դեկ, աւելի՝ ամուր նեցուկ. Ինքն Ամենակարող և Ողորմած Աստուածն է պահապան և պաշտպան իւր սուրբ Եկեղեցւոյ։ Միայն եկեղեցին կարող է պահպանել Հայութիւնը, ինչպէս պահպանել է մինչև այսօր. միայն եկեղեցին կարող է նորոգել ազգութիւնը. տալ մեզ միութիւն, հաստատութիւն, երջանկութիւն, փառք. իսկ լեզուն պէտք է լինի հաստատ գործիք ծանր ու դժուար գործակատարութեան։ Բայց ինչպէս կարող է եկեղեցին կատարել այս ծանր պարտաւորութիւնը, հասնել այս բարձր նպատակին, եթէ չունենայ արժանաւոր գործակատարներ, ուսումնական, առաքինի, ջերմեռանդ, հաւատարիմ, աստուածասէր և ազգասէր պաշտօնեաներ՝ քահանաներ, վարդապետներ և եպիսկոպոսներ» *)։

Մի ուրիշ պահպանողական մասնագ գրում է. «Հատարտուեթեան աշխարհական դասը Աստուց սիրտպետութեան շնորհիւ մինչև դասու պետական վարժարաններում կրթուելու և իւր զարգացմամբ եկեղեցական դասից շատ և շատ աւելի յառաջ անցնելու. այսպէս եղաւ և Օսմանեան Հայաստանում, ուր աշխարհականների որդիք Եւրոպա կրթուել յարմարութիւններ ունէին։ Հին եկեղեցական սերունդը չվերանորոգուեցաւ նորակրթ տարրերով. մինչև անգամ յարտանից մասնը անշարժութեան մէջ։ Հետևեալ աշխարհականի և եկեղեցականի մասնը զարգացման և աշխարհահայեցողութեան կերպարանքը այնպէս տարբերուեցան իրարից, որ այլ ևս նոսկին սերտ կապը և պատմական առնչութիւնը կարծես մոռացուեցաւ. դի դերերը փոխուեցան. նոսկին առաջնորդն այժմիկ ոտիպատած էր մանել առաջնորդական հովանաւորութեան տակ, եթէ ոչ պաշտօնապէս դէթ բարոյապէս և նիւթապէս։ Պարզ է, որ առաւ կարող էին յառաջանալ մէկ կողմից՝ մի սեռակ անբացատրելի առնութիւն դէպի եկեղեցական կոչումը և միւս կողմից՝ մի խոր տրտունջ կամ դժգոհութիւն աշխարհականների դէմաց։ Ոչ այն

*) «Արտաւ» 1872. թիւ Դ. Ապրիլ. էջ 143.

և ոչ այս չուննն, և հարկէ, ճշմարիտ հիմք պատմութեան մէջ և իբրև ժամանակաւոր երևոյթներ տեղի տիտ տան և վերջոյ մի տեղ համերաշխութեան հոսի և հալուի մէջ։ Չի միակ ճշմարտութիւնն այն է, որ Հայոց Եկեղեցին և իւր հօտը չին ունեցել երբէք տարբեր շահեր և ձգտումներ, այլ եղել են միշտ երաբեց անբաժան իրերն մի հոգի մի մարմնի մէջ» *)։ Այս հեղինակը անշուշտ սխալւում է, երբ դրսից ներմուծած կրթութեամբ է բացատրում աշխարհականների և հոգևոր դասի մէջ եղած համերաշխութեան խախտումը։ Բուն հայ միջավայրում ուրիշ կերպարանք էին ընդունել հատարակական փոխյարաբերութիւնները և հոգևոր դասը պատուար էր կանգնում մեր յառաջադիմութեան դէմ։ Եւ երբ նա տեսաւ ու զգաց, որ իր գիմադրութիւնն իր կործանն է՝ փոխեց վերաբերմունքը, չանաց համակերպուել ստեղծուած կացութեան հետ և վերականգնել նախկին ներդաշնակութիւնը։ Այսանդ հայ հոգևոր դասի մէջ խօսում էր ինքնապահպանութեան զգացումը, իսկ ներսանը, որ գիտութեամբ կամ անգիտութեամբ նպաստում էին խախտուած հատատարակչռութեան վերականգմանը՝ մտահոգում էին եկեղեցու ջլատուած ազգրատի միջոցով հատքել հայութիւնը, այդ հայութեան ծոցում առաջնութիւնը նորից յատկացնել եկեղեցականներին և այդպիսով ազգը վրկել օտարացման վտանգից։ Դա մի գործելակերպ էր, որ ցոյց էր տալիս աշխարհական ոյժերի թուլութիւնը, նրանց անզօրութիւնը սեփական ուժանդով և աշխարհիկ հատատատութիւններով ազատուել մեր ինքնուրոյն դոյութիւնը։ Եւ այդ գործելակերպը մի հանգամանք էր միայն. հայութիւնը միշտ պահել կրօնական հոգեոյցի դերում։ Հայ պետականութիւնը այս խնատութիւնն ընդդիմից 60-ական թուականների վերածնութեան ետ ու գնից։ Եւ իր այդ դատաստի մէջ նա մնաց միշտ հետևողական։

Ընդհակառակը, յառաջադիմական բանակի մէջ երևոյթներն անպակաս էին։ Նպաստնանցի հրատարակչութիւնը

*) Կ. Պատկանեանց՝ «Հայոց վանքերը». Մոսկով, 1886. էջ 92—93.

„Հիւսիսափայլի“ հետ ընդմիշտ մարեց 1864 թ.։ Նրա քարոզած սկզբունքներից շատերը յետագայում այրուրնական ճշմարտութիւններ ճանաչուեցին, ինչպէս օրինակ լեզուի բարեփոխման անհրաժեշտութիւնը, աշխարհիկ կրթութիւնն և այլն։ Անփոփոխ նրա հասարակական-անհատական դաւանանքը, «ինքնասաց» հարուստ թեան սկզբունքը, «հասարակի» բարեկեցութեան պահանջը։ Նպարեանցը մենակ չէր «Հիւսիսափայլի» մէջ։ Գիտենք արդէն, որ նրա հետ էր Մ.Ք. Նալբանդեանը։ Գային և ուրիշ գինակիցներ՝ Յակոբ Մելիք-Յակոբեան (Բաֆֆի), Սմբատ Շահազիզ, Միքայէլ Միանուարեանց, Գէորգ Բարխուդարեան, Մանուկ Սպատեթեան, Ստեփան Ստեփանէ (իշխ. Բագրատունի, Խորէն Ստեփանէ), Բժ. Անանիա Սուլթան-Շահ, Բժ. Գաբրիէլ Տէր-Յովհաննիսեան (Քաջբերունի), բժ. Դաւիթ Ռասամեանց և այլն։ Այս մարդիկ ձեռնամուխ էին լինում Նպարեանցին թէ գրչով և թէ գործով, սակայն բոլորն էլ նրա պէս չէին ըմբռնում ժամանակի հարցերի էութիւնը, նրա ձգտումներն ու պահանջները չէին առաջադրում։ Դրանից ամեն օտաակար հանդիսացան մեր նոր լեզուի մշակման գործում, ամեն գրչարուեստական-կրթական խնդիրներում և մէկը միայն, Բաֆֆին, յետագայում գործաւ ուրոյն աշխարհայեացքի և գաղափարների մակնիռիկ։

Նպարեանցի և Նալբանդեանի գունաւոր հրապարակախոսութեան մարելուց յետոյ՝ հրապարակում նոր խօսք լսուեց միայն Գր. Արծրունու օրով։ Սակայն Արծրունին ապարէզ իջաւ նոր անհատական-հասարակական պայմաններում, որոնք գոյութիւն չունէին 50-ական թուականներին։ Բանը նրանումն է, որ Անդրկովկասի քաղաքներում կապիտալիստների և փոքրաքանակ բուրժուաների խաւը միանգամայն յաղթահարել էր արհեստաւոր ու մանր-բուրժուական խաւերին և լուծել նրանց կազմակերպութիւնները, այնինչ համքարութիւնները։ Կապիտալիստներն ու փոքրամասնած բուրժուաները կապիտալի նախնական կուտակման կամ հէնց առևտրական կապիտալի ներկայացուցիչներն էին, որ հարստութիւն դիզելու անզուսպ ցանկութիւն էին կրում իրենց մէջ և այդ նպատակի համար ոչ մի միջոցի առաջ կանգ չէին առնում։ Խարդախութիւնը, կեղծութիւ-

նը, ուրիշին պրկելը, մաթի միջոցները նրանց ուռճացման զէնքերն էին։ Բաւական է կարդալ ժամանակի կենցաղագիրը, դրամատուրգ Գաբրիել Սունդուկեանի կատակերգութիւնները, որպէսզի պարզ լինի, թէ ինչ հերոսներ էին վխտում հայ միջավայրում։ Նրանք բոլորը լայն հասարակական բնագրնևրից դուրս ապրածնևր էին, կապրնևրի պատրանքներով ապրած ճառականներ, որոնք սանակոխ էին անում խնդճ արհեստաւորին, ծխծաղում էին կրթուած մտաւորականի վրայ և այլն։ Հէնց Գ. Սունդուկեանի նկարագրած հերոսներն էին, որ դրամի տէր դարձած՝ իշխում էին հրապարակի վրայ։ Նաղդաեանցը ապրում էր դրանց ձեռքից դրկուած մասանների դոյութիւնը։ Գրիգոր Արծրունին դուրս նկաւ այդ դակահասարակական բնագրնևրով օժտուած մարդկանց դէմի համակնկռոտութիւն և երազականութիւն հրաւիրելու։ Պէտք է ժամանակի նշան համարել, որ այդ նակ ժամանակնևրում, այսինքն 60-ական թուականների կէսում, ձևնարկում է «վաճառական» թևրթը, որի գլխաւոր աշխատակիցն էր Ակէքսանդր Երիցեանցը։ Թևրթը լցնում էր քաղաքականութեան վերաբերեալ յօդուածնևրով։ Հայ վաճառականութեան անգիտութիւնը չուկայի, ֆինանսական անցուդարձերի և նման խնդիրների մասին համարում էր դառապարտելի և անհանդուրժելի երևոյթ։ Լրագիրը հրաւիրում էր ընթերցողներին հրաժարուել պապենական գործելակերպից և նոր հմտութիւններով վարել առևտուր-արդիւնաբերական գործը։

Գրիգոր Արծրունու նոր խօսքը, դուէ այն չափով, որ չափով նա արտայայտուել է մինչմշակման յօդուածնևրում՝ հէնց առևտուր-արդիւնաբերական նոր գործելակերպին է վերաբերում։ «Հայի բնաւորութեան մէջ, ասում է նա, կայ մի նշանաւոր յատկութիւն. ձգտողութիւն դէպի հարստութիւն... սա հայի արժանաւորութիւններից մէկն է։ Շատերը մեղադրում են հային, թէ նա հարստութեան հասնելու համար շատ անգամ աններելի միջոցները գործ է դնում... Բայց մենք ուրիշ ազգերի մէջ հարստութիւնների աղբիւրները միշտ անպարսաւելի են... Երկար ժամանակ ամբողջ Եվրոպան պատերազմական դաշտ էր ներկայացնում։ Հայերը հարստանում էին,—ինչպէս կարող էին, այսինքն կամ ծառայելով, կամ զօրքի պաշարի յանձնառու (կա-

պատուհաս) դառնալով։ ... Այս խաղաղության համար չպետք է անհամ նոցա առաջ մի «լայն և դիւրին ասպարէզ պիտի աշխատանքով հասնելու հարստության»։ ... Հասկանանք վիճաբանչէս, որ մեր գիտական ձգտողությունը պէտք է լինի մեր երկրի կենդանիների, բույսերի և միներալների հարստությունից օգուտ քաղել։ Այս նպատակով պարտաւոր է մեր հայրենակիցներին գրական վիճաբանության և գրծնական աշխատանքին տեղեակ մարդիկներ, որոնք վերադառնալով հայրենիք, կարող էին մեզ օգնել երկրագործության, գիներագործության, շերամապահության, անասնապահության գրությունը իւրեանց բոլոր ճիգերով բարւոքել, և նոր, մեզ անյայտ, բայց Եւրոպայում վաղուց ընդունած միջոցներ մտցնել։ ... Հասկանանք վիճաբանչէս, որ դեռ երկար ժամանակ Կովկասի և Հայաստանի գործը պէտք է լինի անմշակ արդիւնք ծնել»*)։ Դարձեալ նա գրում է. «Մենք հայերս ոչ մի բանից օգուտ չենք իմանում քաղել։ Մեր մասին ասում են, որ մենք վաճառական ազգ ենք,—բայց գա ուղիղ չէ։ Այո, մենք վաճառականութեամբ ենք պարապում, մենք առնում ենք և ծախում ենք, վաճառականութիւնից չենք հասկանում ենք,—բայց մեծ մի այնպիսի ազգին, որ միայն առնում է ծախում է, իսկ ինքն ոչինչ չէ արդիւնաբերում, կարելի է վաճառական ազգ անուանել» **)։ Առաջ բերելով տարոնի առևտրի մէջ տեղի ունեցած անյաջողությունները ու անհաջողությունները նա շարունակում է. «Գլխաւոր պահանջմունք է մեզ համար ուրոնն տարածել գիտութիւն մեր մէջ, գործնական աշխատանք օրինաւոր կերպով կատարելու համար։ Եթէ ոչ, երբ կըշինվին մեր երկրում երկաթուղիներ, երբ մեր երկիրը առնի յայտնի կըլինի եւրոպացիներին,—նոքա կըգան մեր երկիրը, կըհիմնեն գործարաններ, և գիտական մարդիկ լինելով, իւրեանց գործարաններ մեզանից լաւ կառավարել գիտենալով, մեր բնական արդիւնքները կըպատրաստեն առևտուր մեծ քանակութեամբ, առևտուր մաքուր, առևտուր առողջ, վաճառաշահութեան առևտուր յար-

---

*) Գրիգոր Արծրունու աշխատութիւնները, հ. I, 1865--1871, Թիֆլիս, 1904, էջ 274, 275, 280—281.

**) Անդ, էջ 170.

մաբ ապրելակերպը։ Այսպէս որ հայերին խնդրակցութիւն (մրցում—Դ. Ա.) կանեն, հայերի ձեռից գումարներ կընկնեն։ Հարկաւոր է ուրեմն աշխատել հայերի մէջ գիտութիւն տարածելու, գործնական աշխատանքին ընդունակ մարդիկ պատրաստելու» *)։ Այստեղ Արծրունին մի ծանօթութիւն է դնում իր յօդուածի տակ, թէ «ինչ որ ամէնքին օգուտ է բերում,—երկաթուղիները,—հայերին, նոցա ազնուութեան պատճառով, վնաս կըբերէ»։ Ահա այս նոր խօսքը հնչեցրեց Արծրունին։ Եւ սա նշանակում էր, որ աստանդական հայ կապալառուն, օտարի արտադրած ապրանքները տարածող հայ վաճառականը պէտք է ցտեսն հողի վրայ, այնինչ պիտի դիմեն գործարանային արդիւնաբերութեան։ Հակառակ դէպքում Անդրկովկասը միշտ շուկայ կըմնար, որ առնում է մշակուած ապրանքներ և փոխարէնը հում նիւթեր վճարում։ Արծրունին ուսանում էր, որ հայ վաճառականութեան մէջ դրամագլուխներ կան կուտակուած։ Դրանք վաշխառուական գիշատիչ և քայքայող դրամագլխի ընոյթ ունէին և ուռճանում էին ոչ «ազնիւ աշխատանքով»։ Այդ դրամագլուխների տէրերը հետ էին կըրճ լինելուց, նրանց համար հասարակական մտահոգութիւններ գոյութիւն չունէին։ «Հայը, գրում է Արծրունին, հասարակական էակ չէ։ Նրա համար հասարակութիւն չկայ, նա հայ է կանչում իրան միայն պատճառով, որ նա հայ գաւանութեան է պատկանում։ Նրա ամբողջ կեանքի և գործունէութեան առաջնորդող զգացմունքը եսականութիւնն է։ Նա հասարակութեան համար չէ հոգում, նա չգիտէ նուիրել հասարակութեանը իր բարոյական աշխատանքը։ Նա հոգում է իր անձի մասին, նա ապրում է իր համար։ Ինչպէս հոգևոր հանգստութեանը, կեանքի բաւականութեանը հասնելու համար, նա իր ընտանիքի մէջ ապրում է կեանքը, ոչնչացնելով կնոջ և երեխաների անհատականութիւնը, այնպէս և նիւթական անկախութեանը հասնելու համար նա չէ վախենում իր նմանների իրաւունքները առնակոխ անելուց» **)։

---

*) Անդ, էջ 175.

**) Անդ, էջ 395—396.

Մ[illegible]թէ ամեն հայ այս նկարագիրն ունի։ Ինքն Արծրունին սրան բացատրութը է պատահանում։ Նա Սունդուկեանցի «Պէպօյի» առիթով գրում է. «Մեզ մնում է շնորհաւորել հեղինակին, որ նա մեր աճիւռաարակական տարրի մէջ մի հատարտական նկարագիր է գտել, մի հատարտական գործիչ է նկարագրել» *)։ Ո՞վ է այդ հատարտական գործիչը։ Թիֆլիսի ամեն մի ձկնորսը, հայ վաճառականի գոհը։ Իսկ «անհատարտական տարրը» հայ առևտրական խաւն է, որ ըստ Բաֆֆիի մի „մահլ դատակարգ" է, թէ նորը՝ իր ընտանեկան յարկի տակ, թէ դուրսը՝ հատարտութեան մէջ։ Արծրունին հրաւիրում է, այդ «մահլ դատակարգին» հրաժարուել առևտրական գործերակերպից, հրաժարուել վաշխառուական չահատակութիւններից և թէ դրան վտանգի առաջ, թէ հատարտական բարգաւաճման առակէտից արդիւնաւորել դիւած դրամագլուխները. արդիւնաբերական կեանք առնծել, գիտական և նպատակայարմար հիմունքների վրայ դնել երկրի անասունութիւնը։ Այսպէս գործելակերպից նա սպասում է նոր հատարտական կեանք, երկրագործական լուսաւորութեան տարածում և բարեկեցութիւն, մանաւանդ անհատի ազատագրումն հայ ընտանիքի դիմազուրկ գարձնող լծից։ Այս աշխատասիրութը արդէն լրիւ յալիզմի տարրեր ունի իր մէջ։ Եւ մեր յառաջադէմ հատարտական մտքի գարգացումն որոշ երեսոյթներից յետոյ 70-ական թուականների սկզբին յանգից Գրիգոր Արծրունու ինքնուրոյն լրիւ յալիզմին։

Եթէ այժմ պահ մի աչք գոցենք մեր նկարագրած հայ հոգևոր աշխարհի երկրորդական տարրերութիւնների վրայ և կամենանք գտնել և ցուցահանել այն ընդհանուրը, որ բոլոր հատանքների կողմից խոստովանում էր լուսաւոր և հիմք համարում ազգաշինութեան,—ապա պիտի տանք, որ այդ ընդհանուրը խաղաղ կուլտուրական գարգացման չատապովութիւնն

---

*) Գրիգոր Արծրունու աշխատութիւնները, հ. I, 1865—1871 Թիֆլիս 1904, էջ 338.

էր: Մեր ուսումնասիրության ենթակայ շրջանի հայ հասարակական միտքը քաղաքական ոչ և ծրագիր չէր որոճում Ռուսաստանի սահմաններում. այդ միտքը գերազանցապէս ապրիլ էր, խուսափող քաղաքական ձգտումներից ու պայքարից: Այսպէս համերաշխ էին թէ Ս. Նազարեանցը ու Գր. Արծրունին, թէ ինքնագոհ հայամոլներն ու չափաւոր պահպանողականները: Կուլտուրական խաղաղ զարգացում—դպրոց, գրականութիւն, թատրոն, լուսաւորական—բարեգործական ընկերութիւններ, ազգ անհատական բարգաւաճում և ազգային ինքնօգնութիւն,—ահա այն կռուանները, որոնց վրայ պիտի ամրանար և ծաւալուէր հայութեան հաւաքումը: Եւ մի յիսադարձ հայեացք ձգելով այն նիւթական ու բարոյական միջավայրին, որի մէջ շնչում և գործում էր մեր մաւուրականութեան առաջին սերունդը՝ պիտի ասենք, որ նա հասարակական վարմունքի ուրիշ գիծ չէր կարող ունենալ, որ նա անպարտ է պատմութեան առաջ: Այդ սերունդի կատարած հասարակական գործը, նրա արծարծած գաղափարները հիմնաքար դարձան յաջորդ սերունդների ձեռքով կառուցուելիք հայութեան համար, յաջորդականութեան սկիզբը հանդիսացան յետագայ հասարակական հոսանքներին: Հին ուխտի մաւուրականները կարող են անդորը հանգչել իրենց չիրիմների մէջ. նրանք ապարդիւն չեն ապրել ու գործել. նրանց մահկանացուների առաքեան հայութեան հաւաքական գոյութիւնն ու երջանկութիւնն էր, որ այսօր պահպանում է իր այժմէականութիւնը և հրահրում դէպի հարատևական պայքար և զոհաբերութիւն: Սակայն ինչպէս հին ուխտի մաւուրականները տարբեր կերպով էին կառուցանում հայութիւնը, տարբեր բովանդակութիւն էին դնում հասարակական հայութեան մէջ, այնպէս էլ նոր ուխտի հայ մաւուրականները ազգային մարմնի մէջ ձգտում են գերիշխող տեսնել իրենց ներկայացրած հասարակական դասակարգին: Ձևը մնում է հինը, իսկ բովանդակութիւնը առդրում նոր հասարակական հեռանկարներով:

Փակենք մեր խօսքը հին գործիչների մասին՝ գլուխ խոնարհելով նրանց յիշատակի առաջ: Նրանք մեր «անհատարակական» հասարակութեան մէջ հանրական շահերի մարտիկներ

են եղել, նրանք պլուխ են յոգնեցրել և սիրտ մաշել մեծ-ձաւորի համար երկնած խորհուրդների ծաւալման խնդրում և դրա համար արժանի են մեր խորին երախտապարտութեան:

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ՊՈՒՀ. ՄԻՒԶԵՈՒՄ
ՀՍՍՀ-ում-ՍՍՀ Ա
Ա. ՅՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ·

	էջ.
Ցառաջաբան . . — .	I—IV

Ա. Ո Ա. Ջ Ի Ն Մ Ա Ս.

I. *Տարբեր կուլտուրանեըի բախում* . . . 1
II. *Հայերը Վրաստանում. նրանց քանակն ու իրաւական կացութիւնը* 6
III. *Պահպանուի պետականութեան էութիւնը* . 18
IV. *Խնամական կառավարութիւն. ասիկանութիւն, դաստարան և զօրք* 22
V. *Խնամական կառավարութիւն. հայ մելիքները. հայ դիւղական համայնքը. մելիքների և դիւղացիների փոխյարաբերութիւնները. քաղաքի հայութիւնը* 31
VI. *Խնամական կառավարութիւն. հողային պայմանները. դասերի փոխյարաբերութիւնները հողի շուրջը. դիւղացիութեան աստիճանաւոր կարգերի* 47
VII. *Խնամական կառավարութիւն. խնամական անտեսութեան անցյին բնոյթը. դրամի պաշտամունքն ու դէպի վաճառականները և արհեստաւորները նոած վերաբերմունքը. անուղղակի հարկեր՝ մաքսային քաղաքականութիւն. մինաչնորհներ և կապաններ. ուղղակի հարկեր բնիքներով և դրամով. հարկահաւաքութիւն* . . . 61

VIII. Ազգային եկեղեցին. պատմական դերի մասին. Նրա անմխիթար դրութիւնը դարի սկզբում. Էջմիածնին հասոյթի աղբիւր խանների համար. Նրա հոգևնականութեան և կազմակերպութեան չհասկացումը. Նուիրակութիւն. Նիւթական միջոցները. Իրաւական դրութիւնը. Կրթական դերը 76
IX. Հաւաքական հայութիւնը 101

ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ.

I. Նոր տիրոջն ու նրա յեղափոխիչ դերը . . 111
II. Յարաբերութիւնները հոգի չուրջը. (ազնուականութիւն և վիպագիրութիւն) . . . 118
III. Քաղաքային դասեր՝ արհեստաւոր և առևտրա-արդիւնաբերական 178
IV. Ազգային եկեղեցին. (Նրա կազմակերպութեան հաստատումը. հասարակական և կուլտուրական դերը) 256
V. Հոգևոր միջավայրը. (մատուռական խաւը. հայ պարբերականն ու գիրքը. տիրող մտայնութիւնը.) 313
VI. Հայութեան հաւաքումը. (Խ. Արովեան. Ռ. Պատկանեան, Ս. Նազարեան. Մ֊ք. Նալբանդեան. ինքնագոհ հայամոլութիւնը և նրա յետագայ կերպարանաւորումը. Գր. Արծրունին «նոր խօսքի» ազդարար: Եզրափակում) . . 335

ԳԻՆԸ 2 Ր. 50 Կ.



Գիրք՝ Գրավաճառների
Պահեստ՝ Բազմ., Գրավաճառանոց „Посредникъ".